



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ԳԱԲՐԻԷԼ ԼԱԶԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՒ

ՀԱՅ ԴԱՏԸ

Հայնուս յարաբերութիւններու լոյսին տակ

Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Ք

Այս գրքի վերահրատարակումը հայրենիքում հարգանքի տուրքի
վեր համեստ բաժինն է 1918-ի Մայիսի 28-ին հիմնադրված Հայաստա-
նի Հանրապետության 78-րդ տարեկիցին:

1941ին լոյս ընծայեցին «ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԴԱՏՐ ըստ դաշ-
նագրերու», իսկ 1946ին՝ «ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԴԱՏՐ — վաերագը-
րեր»: Ինչպէս նախորդները, նաեւ ներկայ գիրքը ամբողջութիւն մը կը
կազմէ, ոչ թէ շարունակութիւնն է նոյն նիւթին: Այս անգամ ենթախո-
րագիր դրինք «Հայելուս յարարութիւններու լոյսին տակ»:

Հարաւի հետ մեր ունեցած արիւնտ ալայֆորին ծանօթ է ամ-
բողջ աշխարհ եւ ասոր հետեւանձով Հայաստան եւ հայ ժողովուրդ
նկատուած են Ռուսաստանի արբանեակ: Այսպէս մտածած են մասնա-
ւորապէս օտարները:

Մոռացութեան տրուած է, անտեսուած է այն դիմադրութիւ-
նը, որ հինէն ի վեր մեր ժողովուրդը յայտնաբերած է Հիւսիսի նկատ-
մամբ. ներսէս Աշտարակեցիի օրերէն սկսեալ: Մեր ներկայ հատորին
մէջ այդ դէպքերն են որ կը ներկայացնենք ժամանակագրական կար-
գով՝ 1827էն մինչեւ մեր օրերը:

Փոխանակ երկար խորհրդածութիւններու, մեր մտահոգութիւ-
նը եղած է ընթերցողին տակ փաստեր, վկայութիւններ, որպէսզի ան-
նախապաշար կերպով խորհրդածէ եւ յանգի կգրակացութիւններու:

Դէպքերը եւ վկայութիւնները շաղկապելու նպատակով
տուած ենք բացատրութիւններ, լուսարանութիւններ: Այնքան ալ դիւ-
րին չէ ըմբռնել քաղաքական բարդ խոսքերը, որոնք կատարուեցան եւ
դեռ պիտի կատարուին մեր հայրենիքին շուրջ: Հայաստան՝ իր աշ-
խարհագրական դիրքով, հայութիւնը՝ իր անընկճելի նկարագրով քա-
ցառիկ տեղ մը զբաւած են Մերձար Արեւելի ռազմական, քաղաքա-
կան, դիւնազնական պատմութեան մէջ:

Վերջին տարիները հ. Հայաստանի մէջ հրատարակուեցան քա-
նի մը տասնեակ մեծ ու փոքր ուսումնասիրութիւններ հայ ժողովուրդի
պատմութեան նորագոյն շրջանի մասին, ասպացուցանելու համար հայե-
բու հաւատարմութիւնը դէպի ուս մեծ ժողովուրդը եւ ռովետական
կարգերը...:

Քարոզչական մեքենան այնքան կատարելագործուած է, որ
իշխանութիւնը միշտ պատմութիւնը խորդախելու դերին մէջ է: Այդ-

պէս պիտի շարունակուի. ինչքան ասան որ տպագրական մեքենայի գործածութիւնը մեծացնորի կը մնայ կոմունիստներուն, եւ խօսքի ազատութիւնը արգիւտած է խորիւրդ Միութեան սահմաններու մէջ:

Հայրենիքի սէրը կը հարկադրէ մեզ՝ դիմադարձել, բարձրադասակ յայտնել նշմարտութիւնը, մերկացնել բռնակալներու սուտը եւ կեղծիքը: Հայաստան եւ Սփիւոք հաւասարապէս պէտք ունին անվերապահ, անկաշկանդ, ազատ խօսքի: Մեր հակառակորդները երէ ի վիճակի են, բող հերքեն այն բազմաթիւ վկայութիւնները, վաստերը, գորս կը ներկայացնեն այս գործին մէջ:

Ընտրած - ցարական թէ բոլշեւիկեան - միշտ հայերուն ներքեւ յացած է իբրեւ «փրկիչ» հարաւի գէւ: Մոռացութեան տրուած է-ինքն եւ նոր սերունդներու յաջորդական դիմադրութիւնը որս տիրակալութեան, ձուլումի բազանակալութեան դէմ: Մանաւանդ անգլիացացած ենք այժմ նեղապարտ մասնակցութիւնը, որ ուսական իշխանութիւնները ունեցան թրքական հարածաններու ընթացքին՝ Սուլթան Համիտի ժամանակէն մինչեւ իր թիկառակները եւ քեմալականները:

Որոշիմ այդ գործակցութիւնը մոռացութեան տալու համար, ամէն ջանք քափած են քաղաքականապէս վարկաբեկելու հայ գործիչները, հայ յեղափոխականները: Միամիտներուն յաջողած էին հաւատացնել, թէ խորհրդային բռնակալութեան դէմ կռիւը Հայաստանի մէջ խումբ մը «արկածախնդիր»ներու գործն է- իսկ արտաոտոհմանի մէջ՝ Ահաբաններ, խաւիսներ, Ջամալներ, Ռուբէններ, Համեներ, Գրոնեղ եւ Նասաարգեաններ իրենց նախարարական, պետական աշտները վերազանցութեամբ անճանակ շահու եւ փառքի համար կը սպայաբերէն հայրենիքի դէմ:

Մեզմէ յաւէտ բաժնուած են Հայ-Դատի այդ պիտոյեանները. իսկ երկրի մէջ բոլորովին նոր սերունդ մը մէջտեղ եկած է: Սակայն նորագոյն դեպքեր վկայեցին, թէ հայ ժողովուրդը իր բոլոր գասակարգերով աւելի քան երբեք դէմ է բռնակալութեան: Հայ զանգուածներուն մէջ միս ու ոսկոր դարձած է անկախութեան գաղափարը:

Բնիշխիզմի եւ Դաշնակցութեան միջեւ պայքարը պարզապէս մէկ երեսն է. արտայայտութիւնն է այն մեծ բախումին, որ յայտատուրէն տեղի-վանեցայ եղջ գանգուծանքս կողմէ: Բնիշխիզմ կարկիք բռնապետութեան, Հագեբանական սխալ մը պիտի-բիւր շեշտը դնել երկու կուսակցութիւններու, երկու հոսանքներու տարակարծութեան վրայ:

Համաժողովրդական, համահայեան ընդվզում մըն է պատահածը. վկայ՝ հորէն կաթողիկոսի, կոմկուսի երբեմնի քարտուղար Խանջեանի, պրոլետարական գրող Չարենցի ողբակիցումը: վկայ՝ հո-

լածական հարիւրաւոր մտաւարականները, պետական գործիչները (քանկը տեսնել այս գրքի վերջաւորութեան). վկայ՝ հազարաւոր հայ աւտորականները, որոնք բնուած են Հայաստանէն դէպի Սիւպերիա. վկայ՝ այն պատուարը, հաստատմանութիւնը, որ հաստատուած են Սփիւոքի եւ Հայաստանի միջեւ:

Հայրենիքի մէջ անտարակոյս կայ շինարար աշխատանք, որուն մէջ մասնակցութիւն չունի Բոլշեւիզմը, ան պարզապէս կը դժուարացնէ մեր ժողովուրդին ինքնայատուկ կենսունակ ոգիի տեղադրութիւնը: Կ'արժէ կարգաւ քաղաւած մը Լինչի «Հայաստանէն (տես այս հատորին մէջ, էջ 96). 1897ին, ուստրու կողմէ Հայաստանի գրատուէն 70 տարի ետք, Երեւանի բնակչութիւնը 15 հազար հոգի էր, որուն միայն կէսը հայեր էին...:

Միատարր Հայաստանը կազմուեցաւ եւ իր մայրաքաղաք Երեւանը 80 հազար բնակիչ ունեցաւ, բացառապէս հայ գէնքի յաջողութեամբ, երբ կործանեցաւ ուսական կայսրութիւնը եւ փոքր ազգեր գտան իրենց ազատութիւնը:

Այս հատորին մէջ կը ներկայացնենք հայ ազատագրական շարժումը 1827էն 1957, միշտ վաւերագրերու լուսին տակ, յիշելով հայ եւ օտար աղբիւրներ: Տարիներու պրպտումներէ ետք կուզանք հաւատաւելու, որ Հայ Դատի պատմութիւնը դեռ կը մնայ անձանք իր շատ մը երեսներով: Ազատ եւ Անկախ հայ պետութիւնը միայն օր մը պիտի կարողանայ զայն տալ լրի կերպով:

Մինչ այդ՝ մենք մեզ բաւարարուած կը զգանք, եթէ յաջողեցանք ընթերցողին ուշադրութիւնը կեդրոնացնել հարցերու վրայ, որոնք այսօր կը կազմեն Հայաստանի եւ Հայ Դատի էութիւնը:

ԱՂԲԻԻՐՆԵՐ

- Վ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ՝ «Ա. Ս. Գրիբոևդովը և հայ-ուսական յարաբերութիւնները», 1947, Երևան:
- Ա. Գ. ԵՐԻՑԱՆԾ՝ «Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և կովկասի Հայք 19րդ դարում», 1894, 1895, Ա. և Ն. մաս:
- Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ՝ «Հայկական շարժման նախապատմութիւնը», 1912, Ժընև:
- Մ. ԱՐԲ. ՕՐՄԱՆԵԱՆ՝ «Ազգապատմութիւն», Գ. հատոր, Երուսաղէմ, 1927:
- Ն. Յ. Պ. ԼԻՆՁ՝ «Հայաստան», Երկհատոր, թրգ. Լ. Լարենց, Կ. Պոլիս, 1913:
- Գ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ՝ «Recueil d'actes internationaux de l'Empire Ottoman», չորս հատոր, Փարիզ, 1900-1903:
- Խ. ԱՐՈՎԵԱՆ՝ «Երկերի ժողովածո», Երևան, Լեթր հատոր, լոյս տեսած է 1948-1957:
- Պ. ՅԱԿՈՒԲԵԱՆ՝ «Յաջատուր Արովկանի Վերջ Հայաստանի վկայի սուղղծագործական պատմութիւնը», 1955, Երևան:
- Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ՝ «Ամբողջական Գործեր», չորս հատոր, Երևան, 1945էն 1949:
- ԵՐ. ՇԱՀԱՋԻՁ՝ «Գիւան Միքայէլ Նայրանդեանի», 1932, Երևան:
- ՍԱՐՈՒԽԱՆ՝ «Հայկական Խնդիրը և Ազգ. Սահմանադրութիւնը», Քիֆլիս:
- Paul Cambon : Correspondance, 1870-1924, Grasset, 1940.
- Ի. ԱԿՆՈՒՆԻ՝ «Կովկասեան Վերջեր», Ժընև:
- ՄԵՆՔԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ՝ «Հայերը Ռուսաստանում», Վաղարշապատ, 1906:
- ԼԷՕ՝ «Անցեալից», 1925, Քիֆլիս:
- ԼԷՕ՝ «Թիւրքահայ յեղափոխութեան զաղափարաբանութիւնը», Երկհատոր, 1934, Փարիզ:
- Ա. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ Խմբագրութեամբ «Հայաստանի Անտոնովիան և Անտանտան», Երևան, 1926:
- ԼԵՆԻՆԻ, ՍՔԱԼԻՆԻ ամբողջական գործերու հայերէն թարգմանութիւնները:
- Ս. ՎՐԱՑԵԱՆ՝ «Հայաստանի Հանրապետութիւնը», 1928, Փարիզ:
- Ա. ԽԱՏԻՍԵԱՆ՝ «Հայաստանի Հանրապետութեան ծագումը և զարգացումը», 1930, ՍՔԷԷ:
- ԶՕՐ. ԱԼԻ ՃՈՒԱՏ՝ «Մոսկուա Հաթրալարի» (Թուրքերէն), Երկու հատոր, 1955, Պոլիս:
- Ա. ՊԱՐՏԻՉԵԱՆ՝ «Հայ Եկեղեցւոյ տաղնապը և անոր պատասխանատուները», 1936, Պոթըն, էջ 39:
- Ա. ԱԲԵՂԵԱՆ՝ Դաշինքներ Վէճի և «Յուսարեր»ի մէջ:
- Վ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ՝ «Ռուլեիզմը և Դաշնակցութիւնը», 1940, Գահիրէ:
- Անդլիական կապոյտ գիրք. Ճրանսայի արտաքին նախարարութեան հրատարակութիւններ, հայերէն պարբերականներէն «Գրօչակ»ի, «Անահիտ»ի, «Հայրենիք» ամսագիրի, «Վէճի», «Նորք»ի (Երևան) և «Յուսարեր» օրաթերթի հասարածոները:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Ե Ի

Հ Ա Յ Դ Ա Տ Ը

**ՌՈՒՍԵՐՈՒ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏ ՄՈՒՏՔԷՆ
ՄԻՆՋԵՒ Ա. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԻՌԻՄԸ ՌՈՒՍԵՐՈՒ ԿՈՂՄԷ

Նախ քան 19րդ դարը, Իսրայէլ Օրի, Դաւիթ Բէկ, Յովսէփ Էմին, Մովսէս Բաղրամեան, Շահամիր Շահամիրեան դիմումներ եւ ձեռնարկներ կատարած էին, ապահովելու համար ռուսական օգնութիւնը՝ ի նըպաստ Հայաստանի ազատագրութեան: Բայց այդ բոլորը մնացած էին լոկ ցանկութիւն, որովհետեւ ռուսերը հեռու կը գտնուէին Կովկասէն:

1804-1813 տեղի ունեցաւ ռուս-պարսկական առաջին պատերազմը, որ վերջացաւ 1813ին եւ կնքուեցաւ Գիւլիստանի դաշինքը^(*): Այս ատեն գրաւուեցաւ Ազրպէյջանի կարեւոր մասը: Նոյն թուականներուն (1801-1813) ռուսերը գրաւեցին նաեւ Հայաստանի մէկ մասը (Շիրակ, Լոռի, Ջանգեզուրի մէկ շրջանը), բայց Արարատեան դաշտը կը մնար Երեւանի խանութեան մէջ, պարսկական տիրապետութեան տակ:

19րդ դարու սկիզբն է, որ ռուսերը կը մտնեն Հայաստանի: Հայ ժողովուրդը, որ կը կեղեքուէր պարսիկ խաներու եւ թուրք փաշաներու կողմէ, իր փրկութեան յոյսը կապած էր Ռուսաստանին:

Հայ աղգային գործիչներ կը յուսային ոչ միայն ազատագրուել պարսկական եւ թրքական լուծէն, այլեւ վերստեղծել Հայաստանի անցեալ փառքը, դառնալու համար ազատ ու անկախ պետութիւն:

Այդ երազով խանդավառուած էր նաեւ Թիֆլիսի Առաջնորդ Ներսէս Աշտարակեցին, այդ ժամանակաշրջանի մեր մեծագոյն դէմքը:

(*) Տես «Հայաստան եւ Հայ Դատը ըստ դաշնագրերու», էջ 7:

Ներսէս Աշտարակեցի ուղղափառն էր շրջապահական մը հրատարակեց 1826 Յուլիս 29 թուականով, ուղղուած՝ Թիֆլիս, Գանձակ, Արցախ, Նուխի, Շամախի, Բագու եւ Դերբենդ բնակող ուսանալատակ հայերուն:

Աշտարակեցի կը գրէր. «Դիմագրեցեք բնամունց եւ սորա արքանակներին, կա՛մ ուսաց գործերի հետ միասին եւ կամ քէ մի ուրիշ կերպ, որ աւելի յարմար կը լինի ներկայ աւագակորէն յարձակմանց միջոցին, իսկ թէ հարկ լինի, մի՛ խնայէք ձեր արեան վերջին կաթիլը»:

Կամաւորական ջոկատներ կը կազմուէին Ղարաբաղի, Թիֆլիսի, Շամազդինի, Դիլիջանի եւ Լոռի-Փամբակի մէջ: Ամէն կողմ կը տիրէ մեծ խանդավառութիւն: Այս մասին Թիֆլիսի գլխավորական նահանգապետ զօրավար Սիպեակինը 1827 Մայիս 27ի իր կոչին մէջ կը գրէ.

«Հայերը ցնծութեամբ դիմաւորեցին իրենց ուղղուած կոչը: Յայտարարութեան երրորդ օրը ես տեսայ զԵմֆի տակ հաւաքուած հայկական առաջին դրուժինան: ... Հայ ժողովուրդի նուիրուածութիւնը Ռուսաստանին՝ անխախտելի է: Պարսիկների ներխուժման դէմ ընդհանուր պաշտպանութեան մէջ առաջինը հայերը օրինակ ցոյց տուին. նրանց միացան նաեւ վրացիները»:

1827 Մայիս 12ին զօրավար Պասկեւիչ իր բանակով կը շարժի դէպի Երեւան: Այս բանակին կ'ընկերանայ նաեւ համբաւուոր ուսուցիչը եւ դիւանապետ Գրիբոնդովը: Ռուսական զօրամասը Յունիս Տին կը հասնի Էջմիածին, ուր նախապէս ժամանած էր Ներսէս Աշտարակեցի: Ասոր գլխավորութեամբ Էջմիածինի եկեղեցականները կ'ողջունեն ուսական բանակը, մինչ կը ղօղանջեն Մայր Տաճարի զանգակները:

Երեւանի բերդը գրաւելու համար դժուարութեանց հանդիպելով, Պասկեւիչ պաշարումի կ'ենթարկէ զայն եւ կը յառաջանայ դէպի Նախիջեւան, Երեւանի շրջանի ղեկավարութիւնը յանձնելով Ներսէս Աշտարակեցիին: Այդ օրերուն յարձակման կ'ենթարկուի Էջմիածին, ուր Աշտարակեցի անձամբ կը կրակէ վանքի պարիսպներուն վրայ դրուած թնդանօթներէն: Ռուս օգնական ոյժեր հարակէն կը վերադառնան, նախ կը գրաւեն Սարղարապատը, իսկ Սեպտ. 25ին կը սկսի Երեւանի բերդի ուժակոծումը: Աշտարակեցի նոր կոչեր կը գրէ Էջմիածին, Օշականի եւ Աշտարակի հայ դիւլապիներուն՝ անյապաղ օգնութեան հասնիլ ուսուցիչին: Հայեր խումբերով կուգան եւ կը մասնակցին յարձակումին:

Հինգ օր ետք, Հոկտեմբեր 1ին, բերդը կը գրաւուի զօր. Պասկեւիչի կողմէ. Աշտարակեցի եւ ուրիշներ մեծ շուքով կը մտնեն Երեւան: Պարսիկ խաներ Երեք հազար զինուորներով դերի կ'իյնան. կը գրաւուի մեծաքանակ սուր:

Աշխարհի բոլոր անկիւններէն հայեր շնորհաւորական խանդավառ նամակներ կը գրեն Աշտարակեցիի: Մանօթ գրող Մեսրոպ Թադիագեան կը գրէ. «Իմ լաւ քաղաքացիք, էսպէս երջանիկ բախտի որ դուք էք պատահել, կարծեմ որ մեր նախնիքն եւ Արշակունի քաղաւորութեան ժամանակումն էլ չէին պատահել, զիրա թէպէտ եւ քաղաւորութիւնը իւրանցն էր. սակայն բարբարոսութիւն եւ գուլումն պակաս չէր...: Վերջապէս երբ որ լսեցի ներկայ մեր աշխարհի ազատութիւնը, սիրտս ուրախութեամբ վառուեց»:

Երեւանի գրաւումէն ետք, ուսական բանակը կը շարունակէ իր արշաւանքը դէպի հարաւ եւ Հոկտեմբեր 13ին կը գրաւէ Թաւրիզը:

1828 Փետր. 10ին Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ կը կնքուի Թիւրքմէնշայի դաշնագիրը:

Պարսկաստան այս դաշնագրի 3րդ յօդուածով Ռուսաստանի սեփականութիւն կը նկատէ Երեւանի եւ Նախիջեւանի նախկին խանութիւնները, իսկ 5րդ յօդուածով կը հրաժարի ամբողջ Կովկասէն: Ըստ 15րդ յօդուածին, Պարսկաստանի տիրապետութեան տակ գտնուած հայերուն իրաւունք կը տրուի՝ իրենց ընտանիքներով եւ շարժական գոյքերով գալթել ուսական տիրապետութեան ենթակայ հողամասը:

Դաշնագրի պատրաստութեան եւ այս առթիւ կատարուած բանակցութիւններուն մէջ կարեւոր դեր կատարեց Գրիբոնդովը, որ լաւ տրամադրուած էր դէպի հայերը: Ան հետագային դեսպան նշանակուեցաւ Պարսկաստան եւ հոն սպաննուեցաւ մոլեռանդ խուժանին կողմէ:

ԿՈՉԱԿՆԵՐ ԹԷ ՀԱՅԵՐ ԶԵՏԵՂԵԼ...

Երեւանի եւ Նախիջեւանի շրջաններու գրաւումէն ետք, կենսական նշանակութիւն ունէր այդ վայրերուն մէջ բնակչութիւն հաստատելու հարցը: Մեծն Պետրոսի եւ Եկատերինայի օրերէն ի վեր հայերը մեծ յոյսեր ունէին ազգահաւաքման մասին:

Բայց Ռուսաստան պահ մը խորհեցաւ Հայաստանի սահմանամերձ շրջանները բնակեցնել ուսուցիչներ, ստեղծելով Արաքսի կողակութիւն(*): Այս նպատակով ալ 1827ին Կայսեր գլխավոր սպայակոյտի պետ զօրավար Պետր Տոլստոյի նախագահութեամբ կը կազմուի

(*) Վ. Ա. Պարսմեան, «Ձաբիղի գաղութային քաղաքականութիւնը Հայաստանում»:

մասնաւոր յանձնախումբ մը, Պարսկաստանի սահմանները 80,000 մալուս կողակներ բնակեցնելու համար: Պիտի կազմակերպուէին 10 օկրուղներ, իւրաքանչիւրը 200,000 գեսեստին հող պիտի ունենար եւ 8,000 հօգի: Այս ծրագրի մասին, 1827 Ապրիլ 27ին, յանձնախումբը կը յայտնէ. Ա.— Ապահովել պարսկական սահմանի պաշտպանութիւնը. Բ.— Սանձահարել այդ տարածութիւններուն վրայ դոնուոյ ասիական ցեղերը. Գ.— Աւելի եւս մօտենալ հայերուն, որոնք կրօնքով եւ դէպի Ռուսաստան ունեցած համակիր վերաբերմունքով խորթ չեն մեզի. Դ.— Պարսկաստանի սահմանամերձ վայրերու մեր զօրքերէն մահացածները փոխարինել, ժամանակի ընթացքին տեղական կլիմային վարժ մարդոց մով. Ե.— Մալուսուս աղքատ կողակներու համար բարեկարգ կացութիւն ստեղծել եւ Զ.— Մալուսուսի ազատել աւելորդ բնակիչներէն, հոն մնացողներու տնտեսութիւնը բարելաւելու համար:

Այս ծրագրին զուգահեռ, նախքան Թուրքմէնչայի դաշնագիրը, ներսէս Աշտարակեցիի գլխաւորութեամբ հայ գործիչներ առաջարկներ ներկայացուցած էին Պարսկաստանէն հայեր զաղթեցնելու համար նոր գրաւուած վայրերը:

Ինչպէս կ'երեւի 80 հազար մալուսներ գրաւուած վայրեր բնակեցնելու ծրագիրը նիւթական աւելի մեծ զոհողութիւններ կը պահանջէր, այդ պատճառով ալ անմիջապէս նկատի չառնուեցաւ: Հետագային Կովկասի շատ մը վայրերու, նաեւ Հայաստանի մէջ աստիճանաբար զետեղուեցան ուս մալակներ:

Թուրքմէնչայի դաշնագրին մէջ նկատի կ'առնուի հայերու արտագաղթը Պարսկաստանէն: Գաղթի պեկալարութիւնը կը յանձնուի ղեղապետ Ղազարոս Լապարեանին: 1828ի գարնան կը սկսի զանգուածային ներգաղթը. երեք շորս ամսուան ընթացքին աւելի քան 80 հազար հայեր Թաւրիզի, Մակուի, Մարագայի, Սալմաստի, Ուրմիայի եւ Խոյի զաւառներէն կը մեկնին Երեւանի եւ Նախիջևանի շրջանները:

Ներգաղթի գործը լաւ կազմակերպուած չէր եւ դոյն վարող յանձնախումբերը զուրկ էին նիւթական միջոցներէ: Կր տեղեկացուի, թէ «տասնեակ հազարաւոր գաղթականներ քալիուել էին Երեւանի ու Նախիջևանի գաւառները, բաց երկնքի տակ, առանց սննդի, առանց բնակարանի, առանց հողի ու քրի»:

Հայ ներգաղթողներու եւ տեղացի թաթար զիւզացիներու միջեւ կը ստեղծուին վէճեր, որոնք մեծ զժուարթութեամբ կը հարթուին:

Աւելի ետք, 1828ի ոտսեթուրք պատերազմին հետեանքով, էրզրումի եւ Պայաղիտի շրջաններէն մօտ 100 հազար հայեր եւս կը գաղթեն եւ կը հաստատուին Ախալցխա, Ախալքալաք, Ալեքսանդրապոլ

եւ Սուրմալու: Հայաստանի ճակատագրին համար անտարակոյս մեծ նշանակութիւն պիտի ունենային հարաւէն եւ արեւմուտքէն կատարուած ներգաղթի այս զոյգ շարժումները:

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Մ Ա Ր Զ Ը («Արմեանսֆա Օպլասք»)

Երեւանի գրաւումէն անմիջապէս ետք, զօր. Պասկեւիչ հաստատած էր «Երեւանի Մարզի ժամանակաւոր Վարչութիւն», զօր. Կրասովսկիի նախագահութեամբ եւ ներսէս Աշտարակեցիի ու փոխ զնիւսպետ Բորոգինի անդամակցութեամբ:

Թուրքմէնչայի դաշնագրի կնքումէն ետք, խնդրոյ առարկայ էր ստեղծել մնայուն կազմակերպութիւն մը: Ցարական կառավարութիւնը եւ զօր. Պասկեւիչ տրամադրութիւն չունէին նկատի առնելու հայկական բազմանընդմեջ: Բայց սկսած էր ոտսեթուրք պատերազմը եւ ժամանակը չէր դժգոհ ձգելու հայերը: Նիկոլա Ա. Կայսրը 1828 Մարտ 26ի հրովարտակով, Երեւանի եւ Նախիջևանի խանութիւններէն կը կազմէր Հայկական Մարզը. ահա այդ փաստաթուղթը:

«Պարսկաստանի հետ կնքուած դաշինքի համաձայն, կը հրամայեմք Պարսկաստանէն Ռուսաստանին միացուած Երեւանի եւ Նախիջևանի խանութիւնները այսուհետեւ ամէն առեւ կօչել Հայկական Մարզ («Արմեանսֆա Օպլասք») եւ մուծանել այն մեր տիրոջս մէջ: Այս Մարզի բարեկարգման ու կառավարման մասին կառավարող սեմաւոր պատշաճ հրաման կը ստանայ իր ժամանակին»:

Հայ ժողովուրդը շատ մեծ գոհունակութեամբ ընդունեց այս որոշումը: Երկար դարերու ընթացքին առաջին անգամ էր, որ Հայաստան կը վերակենդանանար հայոց մտածողութեան մէջ:

Քիչ ժամանակ ետք, յուսախաբութիւնը պիտի սկսէր, որովհետեւ ուս պետութիւնը երբեք նպատակ չունէր քաջալերելու իրական Հայաստանի մը ստեղծումը:

Այս շրջանի դէպքերուն անդրադառնալով, 1947ին Երեւանի մէջ լոյս տեսած «Ա. Ս. Գրիբոեդովը եւ հայ-ռուսական յարաբերութիւնները» իր գործին մէջ, Վ. Ա. Պարսամեան ճիշդ կերպով դիտել կուտայ (էջ 138).

«Վերջապէս Հայկական Մարզի ստեղծման հետ հայ ժողովուրդը կապում էր իր հայրենիքի ազատութեան ու անկախութեան վերականգ-

ման գաղափարը: Բայց հենց այստեղ էր, որ ինչպէս մեր ժողովուրդն է ասում, խօփը առնում էր ֆարին, բաժանում էին ժողովրդի ու կառավարութեան ճանապարհները:

«Ցարական կառավարութիւնը Հայկական Մարզի ստեղծման հետ բնաւ չէր կապում ոչ «անկախ», ոչ «աւտոնոմ» Հայաստան եւ ոչ Ռուսաստանի հարաւում «բուֆերային մի պետութիւն» ստեղծելու նպատակը. նա բոլորովին էլ մտադիր չէր իր հսկայ պետութեան մէջ նոր պետութիւն ստեղծել, այն էլ օտարագրի: Դա հակասում էր նրա պետական սիստեմին, նրա դասակարգային եւ ազգային ֆաղափականութեան եզրին:

«Հայկական Մարզի վրայ ցարական կառավարութիւնը նայում էր որպէս կայսրութեան մէջ մտնող տերիտորիալ մի միաւորի վրայ, եւ՝ թակայ թագաւորի իշխանութեանը, գուրկ ազգային ինֆուորոյն պետական իրաւունքներին»:

ՀԱՆՏԱՆՔ՝ ԱՇՏԱՐԱԿԵՑԻՒ ԴԵՄ

Ռուսական բանակի կողմէ Հայաստանի գրաւումէն ետք, շատ բնական էր, որ Ներսէս Աշտարակեցի ակնկալութիւններ ունենար իր ժողովուրդի ազատ ու անկաշկանդ զարգացման ու յառաջդիմութեան համար:

Ընդհակառակն, զօր. Պասկեւիչ կը հետապնդէր Հայաստանի ռուսացումը: Իր այս ծրագրին խոչընդոտ նկատեց Աշտարակեցիի ներկայութիւնը. ուստի՝ ամէն կերպ ջանաց հեռացնել զայն երկրէն զանազան պատրուակներ ներկայացնելով Փեթրսպուրկի կառավարութեան: Ահա Պասկեւիչի ներկայացուցած «ամբաստանութիւնները Աշտարակեցիի մասին.

«...Նա ոչ միայն հոգևոր, այլև աշխարհական գործերում կամենում է անսահման ինֆինիշխանութեամբ գործել:

«...Չբաւականանալով հայոց եկեղեցւոյ վրայ ունեցած ազդեցութեամբը, Ներսէս արեւելիսկոպոս կամենում է տարածել այդ ազդեցութիւնը նաև աշխարհական գործերի վրայ, ձգտելով մերկայացնել իրան որպէս գլուխ եւ պետ ընդհանուր հայոց ազգի: Նորա փառասիրութիւնը այս մասին-այնտեղը հասաւ, որ նա սկսեց ազգարարութիւններ հրատարակել առ արտասահմանի հայքը եւ յարաբերութիւններ սկսեց դրացի տանիկ մեծաւորների հետ:

«...Ներսէսը հենց սկզբում տեսաւ իմ հոգացողութիւնը, որ ես յստիւ կերպիւ կը դիմադրեմ նորա մտադրութեանց՝ սեփականացնել հայոց եկեղեցւոյն այնպիսի կալուածներ եւ եկամտներ, որ իսկապէս նոճան չեն պատկանում»:

Պասկեւիչ կը մեղադրէ Նաև Աշտարակեցին որ Կողբի աղահանքերուն նկատմամբ Աշտարակեցին ակնկալութիւններ ունեցած է: Թէև «նորա կողմից տէրութեան դէմ որեւէ վնասակար ձեռնարկութիւն սպասել կարելի չէ» գրելով հանդերձ, Պասկեւիչ կ'աւելցնէ.

«Բայց միեւնոյն ժամանակ, որքան յայտնի են ինձ նորա յատկութիւնները, պատիւ ունիմ ներկայացնել ձեր բարեհայեցողութեանը, թէ ինչ հետեւանքներ կարող են առաջ գալ, եթէ Ներսէսի փառասիրութիւնը եւ նորա անտեղի կողմնապահութիւնը հայոց գործերում նեցուկ կամ պաշտպանութիւն գտնեն այս ազգի (Հայոց) միւս նշանաւոր անձանց խորամանկութեանց մէջ. — մի ազգի, որի հաստատապէս ձգտումն էր եղել է եւ է՝ որքան կարելի է խոյս տալ մեր օրէնքների ազդեցութիւնից եւ ներգործութիւնից: Եւ ինչ դրութեան մէջ կը լինի այստեղի գլխաւոր վարչութիւնը, որը պիտի ստիպուի անդադար դիմադրել բոլոր խորամանկութեանց եւ նեցուկութեանց, որոնց միայնակ նպատակն է՝ դարձնել այդ ազգը, որի բոլոր բարօրութիւնը կախուած է Ռուսիոյ զօրութիւնից եւ հովանաւորութիւնից, — դարձնել, առում եմ, այդ ազգը առանձին արտօնութեանց տէր մի դասակարգ, որ ամէն կերպ օգուտ լինի ֆաղում մեր վարչութիւնից, բայց միեւնոյն ժամանակ չլինի կամենում ստորադրուիլ ոչ Ռուսիոյ ընդհանուր կանոնադրութեանցը, ոչ էլ այն պարտաւորութեանցը, որ կատարում են Ն. Կ. Մեծութեան միւս հպատակները...»: («Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի Հայք 1907 զարում», Ա. Դ. Երեցանց, 1894 ժամ Ա., էջ 375):

Զօր. Պասկեւիչ այնքան թշնամական վերաբերում ունէր դէպի հայերու ազգային ձգտումները, որ ամբաստանազիր կազմեց գնդապետ Լազարեանի դէմ, որովհետեւ ան թղթակցութիւն պահած էր Աշտարակեցիի հետ. այս առթիւ յիշատակած էր անոր՝ Լազարեանի՝ կատարած դերը պարսկահայերը Հայաստան գաղթեցնելու գործին մէջ: Պասկեւիչ հրահանգեց Թիֆլիսի նահանգապետին. «Առաջարկում եմ քեզ, որ եթէ հակառակ բազմիցս կրկնած իմ հրամանների, զնդապետ Լազարեանը դեռ ես չէ դուրս գնացել (Թիֆլիզից), կարդալ նորան այս եւ անմիջապէս դուրս բշել (Կովկասից)»:

Ա. Դ. Երեցանց կ'եզրակացնէ.

«Սպասած պարգեւների փոխարէն այսպէս վարձատրուեցաւ Լազարեանի ցոյց տուած ծառայութիւնը պարսկահայոց գաղթականու-

քեան գործում եւ գնդապետը վերադարձաւ Փեթրասպուրկ, ուր ապա հրածեշտ տուեց պետական ծառայութեանը»:

Ներսէս Աշտարակեցիի դէմ Պասկելիչի հալածանքը տուաւ իր արդէնքը. պարտադրուեցաւ անոր՝ հեռանալ Հայաստանէն եւ մեկնել Պետրասպուրկ, իրբւեւ առաջնորդ այդ թեմին. իր այդ պաշտօնին մէջ մնաց ամբողջ 15 տարի:

Կասկած չկայ, որ այս հեռացումը անձնական պատճառներէ առաջ չէր դար, ուստի կանուխէն ուզեցին ի դերեւ հանել հայկական ակնկալութիւնները եւ զգացնել իրենց տիրապետութեան հաստատումը Հայաստանի մէջ:

Միքայէլ Վարանդեան Աշտարակեցիի աքսորի մասին կը գրէ():*

«Հարուածն իջաւ 1827ի օգոստոսին, երբ դեռ այնքան քարմ էին յուշերը Ներսէսի հերոսական եւ անճնուէր քրիչքներին: Եւ ահա մեր վեղարար Քարիպալտին — ախորի մէջ... Առաջնորդական պաշտօնի սին պատրուակով՝ խուլ ու օտար Բեսարաբիայի մի անկիւնում — կիշնւ... Բոլոր սև ուժերը միացան այդ մեծ հայի, մեծ մարդու դէմ: Եւ նա միմակ, գրեթէ միմակ, հայ ժողովրդի զպալուած բարկութեան եւ թշնամիների ցնծութեան ռոնոցների մէջ նա գնաց ամբողջ 15 տարի քաղաւելու այդ օտար, անհիրընկալ անապատում: Գուցէ նոյն լեզունդակաւ «սեւ կառն» էր տանում նրան որ պիտի տանէր Արովեսանի գէպի խորհրդարար անյայտութիւն ու Միքայէլ Նալբանդեանին՝ դէպի դաժամ Պետրասպուրկ, իսկ այն տեղից՝ դէպի գերեզման...»:

Ռուսերը սկիզբէն իսկ աշխատեցան էջմիածինը պահել իրենց քաղաքական ազդեցութեան տակ: Ահա թէ ինչ կը յանձնարարէր կոմս Պասկելիչ պաշտօնակատար զօր. Պանկրատիեւի ուղղուած իր զաղտնի հրամանագրին մէջ:

«Յանձնելով ձեր գերագնացութեանը Անդրկովկասեան գործերի դճկավարութիւնը, ես ընդ սմին անօգուտ չեմ համարում հաղորդել ի գիտութիւն ձեր բանի մի մանրամասնութիւններ ձեր ձեռք անցնող ամենանշանաւոր գործերից մէկի վերաբերմամբ, այն է հայոց հոգեւորականութեան գործի մասին: Այն հանգամանքները, որոնց պատճառով ես այդ գործը ամենակարեւորներից մէկն եմ համարում, սոքա են:

«Հայքը, որոնք վաճառականութեան մէջ վերին աստիճանի ընդունակ մի ժողովուրդ են եւ այդ պատճառով տէրութեան համար օգտաւէտ կարող էին լինել, ցրուած լինելով ամենաշատ թուով Ռուսաստան»:

(*) «Հայկական շարժման նախապատմութիւնը», 1912, Ժընեւ, Ա. Մաս.

նում, Տանկաստանում եւ Պարսկաստանում եւ չունենալով բազմական անկախութիւն, միմեանց հետ կապուած են միայն կրօնով: Նոքա միայն մի ընդհանուր իշխանութիւն ունին, այն է հոգեւոր իշխանութիւն, որ շատ մեծ ազդեցութիւն ունի նաեւ նոցա աշխարհային գործերի վրայ: Հայոց հոգեւորականութեան պետը է էջմիածնի կաթողիկոսը: ՎԱՍՆՈՐՈՅ ՊԱՏՐԻԱՐԿ ՆՇԱՆԱԿԵԼ ԱՅՆՊԻՍԻ ՄԻ ՄԱՐԴՈՒ, ՈՐ ԱՆՁՆՈՒԻ ԼԻՆԻ ՌՈՒՍԻԱՅԻՆ, ԵՒ ՀԱՅՈՑԸ ԴԵՊԻ ՄԵՉ ՔԱՇԵԼՈՒ ՄԵՐ ՑԱՆԿՈՒԹԻՒՆԸ — ՊԱՏՃԱԹ ԵՆ ԵՂԱԾ, ՈՐ ՄԵՐ ՏԵՐՈՒԹԻՒՆԸ ԱՄԱՋՈՒԱՅ ԺԱՄԱՆԱԿԵՐՈՒՄՆ ԷԼ ՄԻՇՏ ՓՈՔՐ Ի ՇԱՍԷ ԽԱՌՆՈՒԵԼ Է ՊԱՏՐԻԱՐԿԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՄ:

«...Այն օրից, երբ Ռուսիայի հետ միացաւ Երեւանի նահանգը եւ սրա հետ էլ պատրիարքական Աթոռը, ես ստանձին ուշադրութիւն դարձրի հայոց հոգեւորականութեան գործերի վրայ» (Դ. Երեցանց, Ա. հատոր, էջ 654):

Կոմս Պասկելիչի նման, ցարական կառավարութիւնը «տանձին ուշադրութիւն» դարձուց էջմիածնի կաթողիկոսութեան վրայ եւ մանրակրկիտ ուսումնասիրութիւններէ ետք պատրաստեց ու պարտադրեց «Պոլոժենիան», որով ապահովուեցաւ Փեթրասպուրկի հակակշիռը Հայ. Եկեղեցիի կազմակերպութեան վրայ:

Պ Ո Լ Ո Ժ Ե Ն Ի Ա

«Բարձրագոյն կարգադրութիւն յազազ կառավարութեան գործոց լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ի Ռուսաստան». այս է խորագիրը այն կանոնագրութեան, որ պատրաստուեցաւ ցարի կառավարութեան կողմէ 1836ին եւ որ ծանօթ է ՊՈԼՈՒՅՆԻԱ անունով:

Այս կանոնագրութիւնը ունի 141 յօդուածներ, բաժնուած 10 գլուխներու վրայ հետեւեալ կարգով. Ա.— Ընդհանրական իրաւունք եւ արտօնութիւնք. Բ.— Կաթողիկոս. Գ.— Սինոդ. Դ.— Թեմակալ առաջնորդք. Ե.— Հոգեւոր ատեանք եւ հոգեւոր կառավարութիւնք. Զ.— Մենաստաններ. Է.— Ամուսնաւոր եկեղեցականք. Ը.— Հոգեւոր դպրոցներ. Թ.— Կայից կառավարութիւն. Ժ.— Եկամուտք եկեղեցական պաշտօնէից:

Մաղաքիա արքեպս. Օրմանեան, այս կանոնագրութեան շուրջ մանրամասնութիւններ տալէ ետք, կ'ըսէ.

«Հայ. Եկեղեցւոյ ուղղութեամբ հետ համեմատութիւնը նկատի

առած ատեննիս, ամենէն աչբի գարնոյ կէտ մը կը գտնենք՝ աշխարհական տարրին կատարելապէս հեռու պահուիլը: Հայոց մէջ հայ եկեղեցականութիւնը եկեղեցւոյ բացարձակ տէրը չի նկատուիր. Եւ խորհրդակատարութիւններէն դուրս ընտրութեան եւ վարչութեան, մատակարարական նիւթերուն մէջ ընդարձակ տեղ կուտայ աշխարհականներուն: Իսկ Պոլսոյ մէջ մտապարարական հիւղերուն մամուլը աւելցնելով իր լիարժեքութիւնը, եւ աշխարհականը կը յիշուի միայն կաթողիկոսի եւ ոչ իսկ առաջնորդներու ընտրութեան մէջ, հոն ալ թիւի գերակշռութիւն տալով եկեղեցականութեան: Իսկ մատակարարութեան մէջ միայն եկեղեցական մը կայ, նա ալ եկեղեցական իշխանութեան ներքին դրուած: Մնացեալից մէջ ընտրութիւն, վարչութիւն, մատակարարութիւն, դատաստան, կրթութիւն, ոչ միայն հայրապետական, այլեւ առաջնորդական շրջանակներու մէջ, ամբողջովին եկեղեցականներուն յանձնուած են» («Ազգայագաւորութիւն», Գ. Հատոր, էջ 3696):

Ինչպէս կոմս Պասկելիչի արդէն յիշատակուած մտածումները, նաև հետագային մեր ներկայացնելիք սերիչ վաւերագրեր եւ իրողութիւններ ցոյց կուտան, որ ցարական կառավարութիւնը ամէն ջանք թափած է աշխարհականներու ազդեցութիւնը չկտրուցնելու եւ իշխանութիւնը կեդրոնացնելու համար եկեղեցականներու ձեռքը: Այս գործելակերպով աւելի զիրաւ որս իշխանութիւնը կրնար խեղդել հայ ժողովրդի ազգային բազմաճիւղները, որոնք պիտի ներկայացուէին հայ եկեղեցական կազմակերպութեան խողովակով: Ռուսերը միշտ աշխատեցան այդ կարեւոր ազգակը օգտագործել իրենց պետական շահերուն համար, սակայն բախեցան հայ ժողովուրդի տեսական ընդդիմութեան:

«Պոլսոյ մէջ»ի մասին Ն.Ճ. Պ. Լինչ «Հայաստան»ի Ա. Հատորին մէջ (Թրգ. Լ. Լարենց, Կ. Պոլիս, էջ 163) կը մատնանչ կարեւոր կէտեր:

«ՊՈԼՍՏԵՆԻԱՆ կը շեշտէ եւ կ'ընդարձակէ այս մարմնին (Սինոդին) սահմանադիր իշխանութեան կարեւորութիւնը, եւ գայն կը դնէ Լոյսեր պատուակալ նախագահութեան տակ: Սինոդին հրամանագիրները սպառնալով կը սկսին. «ՌՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐ ՀՐԱՄԱՆՈՎ...»: Անոր որոշումները կ'ենթարկուին որս պրոկուրորին, որ կ'ըմբռնէ մէջ կը բնակի եւ կը վաւերացնէ այդ որոշումները, եթէ օրինաւոր գտնէ: Չուտ վանքին յատուկ հարցերուն վերաբերմամբ Սինոդն է որ օրէնսդրական խորհրդակցի, բայց հարկադրուած չէ անոր յանձնարարութիւնները ընդունիլ: Իսկ եկեղեցւոյ ընդհանուր գործերուն մէջ, ինչպէս նաեւ վանքին յատուկ հարցերուն վերաբերմամբ Սինոդն է որ օրէնսդրական իրաւունք կը վայելէ, ներքին գործոց նախարարէն վաւերացնել տալու պայմանաւ իր որոշումները: Ուրբ անդամներէ բաղկացած Սինոդին

մէջ կաթողիկոսը մէկ քուէի իրաւունք միայն ունի: Արդարեւ, անկախ կրնայ կոնգրակ հրատարակել, բայց եթէ Սինոդին որոշումներուն հակառակ կոնգրակ մը հրատարակէ կաթողիկոսը յեղափոխական արարք մը գործած չլլալու ամբաստանութեան տակ կ'իյնայ: Ահա այս կերպով կաթողիկոսը կապուած է այնպիսի քեղերով, որոնց ծայրը նեվալի ամանց (Ս. Փեթրասպոլի) վրայ գտնուող պաշտօնատարներուն ձեռքին մէջն է, ու ասոնք օրը օրին տեղեկութիւն կ'առնեն իրենց յայտնի լրատուէն:

Այս երկասյրի գործիքին միւս տրամագրութիւններն ալ բաւսան չեն թափեր եկեղեցւոյ պետին վիրաւորուած արժանապատուութեան վրայ: Կայսրն է որ կը նշանակէ Սինոդին անդամները, բլէս կաթողիկոսին տրուած է կարեւոր երկու ընտրելիի տնուն ներկայացնելու կայսերական համար: Հայոց Հայրապետը իրաւունք չունի Սինոդի անդամ մը պատժելու, առանց կայսերական հաւանութեան: Միեւնոյն բարձրագոյն հրամանը անհրաժեշտ է եպիսկոպոս մը պաշտօնէն դադարեցնելու համար: Կաթողիկոսը չի կրնար 4 ամիսէն աւելի հեռանալ վանքէն, եթէ Ձարէն մասնաւոր արտօնութիւն չէ առած: Երբ եպիսկոպոսական թեմ մը թափուր կը մնայ, կաթողիկոսը կայսեր կը ներկայացնէ քեղեմածուներու անուններ, որովհետեւ ա'ն է որ ընտրութիւնը պիտի կատարէ: Եթէ եպիսկոպոսը փափաքի 4 ամիսէն աւելի ժամանակամիջոցի մը համար արտասահման երթալ, դարձեալ Ձարին պէտք է դիմէ:

Բայց թերեւս ամենէն լուրջ եւ ամենէն նեղամիտ զենքը՝ ազգային եկեղեցւոյ անկախութեան դէմ, սա տրամագրութիւնն է թէ տարի մը պէտք է անցնի կաթողիկոսի մահուրէն մինչեւ նոր կաթողիկոսի ընտրութեան թուականը: Այս յոդուածը ընդունուեցաւ, հեռատեսութեան եզական բացակայութեամբ մը, այնպիսի ժամանակ մը, երբ նախորդութեան միջոցները շատ աւելի դանդաղ էին քան այսօր, եւ երբ դժուար էր Թուրքիայէն եւ Պարսկաստանէն պատգամաւորներ համախմբել մէկ տարիէն պակաս ժամանակամիջոցի մէջ: Իրականութեան մէջ նոր կաթողիկոսին համար դիւրին չէ գործի ձեռնարկել, մինչեւ որ բաւական ժամանակ չանցնի իր ընտրութեան թուականին վրայէն, եւ եթէ կառավարութեան շահուն համապատասխան ըլլայ Աթոռին թափուր մընալը, Ձարը միշտ կրնայ յետաձգել նոր կաթողիկոսին վաւերացումը: Եւ ահա այսպէս, Աթոռին պարապ մնացած տոտներ, երկարատեւ ու միջանկեալ իշխանութիւն մը ծնունդ կ'առնէ, որու միջոցին կառավարութիւնը մէկ կուսակցութիւն միւսին դէմ կը յարէ ու կը յաջողի կորզել բոլոր այն զիջումները, որոնց ընդդիմացած էր նախորդ կաթողիկոսը»:

ՀԻՒՆՔԵԱՐ ԻՍԿԷԼԵՍԻԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ԳԱԶԱԶ ԱՐԹԻՆ ԱՄԻՐԱ

Եղիպտոսի խաբա Մոհամէտ Ալի 1833ին բմբոստացաւ Սուլթան Մահմուտի զէմ: Ստիւի որդին՝ Իպրահիմ Փաշա մեծ բանակով մը յառաջացաւ Սուրիոյ եւ Անատոլիոյ մէջէն, հասնելով մինչեւ Պրուսայի ստեղծ:

Սուլթանին համար խիստ տաղանդաւորի կացութիւն մը ստեղծուած էր, եւ ան ղրմեց Գազաղ Արթին Ամիրայի խորհուրդին: Ամիրան յանձնարարեց ուսեւրը կանչել օգնութեան: Ճակատագրական պահու մը, հայ մը միջնորդ կը դառնար ուսեւթուրք բարեկամութեան:

Այս ղէպքի մասին Օրմանեան արք. «Աղղապատում»ի մէջ կը գրէ.

«Յետին պարագային մէջ նորէն Պէգեանի խորհուրդին դիմեց Սուլթան Մահմուտ, որուն քանիցս փորձն առած եւ օգուտը վայելած էր: Պէգեանի խորհուրդն եղաւ ուսական օգնութեան դիմել, որ Աղղիանուպոլսոյ դաշնագրին վրայ Թուրքիոյ բարեկամ էր դարձած: Խուսրէվ Մէհմէտ փաշա հիմնաւորց խորհրդական, առաջարկին միացաւ, գիրեր գրուեցան եւ սուրհանդակներ մեկնեցան, մինչ միւս կողմէ Իպրահիմ Իկոնիոնի նախատամարտէն ետք հանդարտաբայ կը յառաջանար ու հետզհետէ կը գրաւէր Իկոնիոն, Սիս, Ատանա, Էնկիւրի, Մազնիս, Այսրն, Պալքեսիւր եւ Քէօքահիա, մինչեւ Պիլէնիկ եւ մինչեւ Պրուսայի ստեղծը: Տասն հազարի ուսական բանակ մը եւ 18 նաւերու տարմիդ մը, Օրլով գորավարի հրամատարութեամբ Վոսփարի վրայ երեւցաւ 1833 Փետր. 7ին եւ բանակը գետեղուեցաւ Ասիական Հիւնքեար Իսկէլէսի դաշտավայրը: Իսկ Իպրահիմ կամգ առաւ Կուտիմ կամ Քէօքահիա, ուր կը գտնուէր» (Օրմանեան, «Աղղապատում», Գ. Հատոր, էջ 3638):

Անգլիա եւ Ֆրանսա, խիստ մտահոգ ուսական միջամտութեան, իրենց նաւատորմերը ղրկեցին Եգիպտոս եւ յաջողեցան Հաշտութիւն կնքել տալ Սուլթանին եւ Մոհամէտ Ալիին միջեւ: Վերջինը դուհացաւ Սուրիոյ մէկ մասին վրայ իր իշխանութիւնը հաստատելով:

Ռուսական նաւատորմը Կ. Պոլսէն մեկնելէ երեք օր առաջ, 1833 Յուլիս 8ին, զօր. Օրլով յաջողեցաւ Թուրքիոյ եւ Ռուսաստանի միջեւ կնքել տալ Հինքեար Իսկէլէսի դաշինքը, որ նշանաւոր եղաւ դիւանագիտութեան պատմութեան մէջ: Այս դաշինքով Չար Նիկոլա դիւանագիտական նոր յաղթանակ մը կը շահէր, աւելի նշանակալից, քան

Աղղիանուպոլսոյ Հաշտութիւնը, որովհետեւ այս անգամ առանց պատերազմի, միայն ճարպիկութեամբ կը յաջողէր:

Ռուսաստան եւ Թուրքիա յանձն կ'առնէին իրարու օգնել, ծովի եւ ցամաքի վրայ՝ ընդդէմ երրորդ պետութեան մը: Պայմանադիր կողմերը պարտաւորութիւն կը ստանձնէին օգնել իրարու ներքին խռովութիւններու պարագային: Թուրքիա յանձն կ'առնէր ռազմանաւերու առջեւ փակել Տարտանելը, եթէ Ռուսաստան պատերազմի մտնէր ուրիշ պետութեան մը հետ: Բայց Տարտանելը բաց պիտի մնար ռուսական նաւատորմին առջեւ, բոլոր պարագաներու մէջ: (Histoire de la Diplomatie, Vladimir Potiemkine, 1946) :

Հինքեար Իսկէլէսի դաշինքով(*) Ռուսաստանի ստանձնած բացառիկ դիրքը խախտեցաւ 1841 Յուլիս 10ին. Լոնտոնի մէջ կնքուած դաշինքով, որ Օսմանեան կայսրութեան իրաւունք կուտար արդիւնու բոլոր պետութիւններու ռազմանաւերուն անցքը նեղուցներէն:

Խ. ԱՐՈՎԵԱՆ ՀԻԱՍԹԱՓ
«ԽԱԶԱՊԱՇՏ» ՌՈՒՍԱՍՏԱՆԷՆ

Սորհրդային քարոզչութիւնը մամուլով, հրատարակութիւններով, շարժանկարով տեսապէս կ'օգտագործէ մեծ հայրենասէր Խ. Արովեանի «Վէլքը Հայաստանի»ն, որովհետեւ այդ գործին մէջ Արովեան կը ներկայացնէ պարսկական լուծին տակ տառապող հայ ժողովուրդը եւ կը փառաբանէ ազատարար Ռուսաստանը:

Հայաստանի խորհրդային իշխանութիւնը թէեւ տարիներէ ի վեր կը յայտարարէր, թէ պիտի հրատարակուի Արովեանի «Երկերի Լիակատար Ժողովածուն», ութ հատորով, սակայն 1947 եւ 1948ին լոյս տեսան միայն չորս հատորները եւ ընդհատուեցաւ հրատարակութիւնը: Եթէ տարի ետք հրատարակուեցան երեք հատորներ եւս, դեռ կը պակտի վերջինը՝ ութերորդը, ուր հաւանաբար գտնուին նիւթեր՝ աւելի լաւ ճանչնալու համար մեծ հայրենասէրին քաղաքական ըմբռնութեանը եւ յուսաբարութիւնները ուսելուն: Հարց է, թէ խորհրդ. իշխանութիւնները թոյլ կուտան հրատարակիչներուն օգտագործելու Արովեանի արխիւը լրիւ կերպով:

(*) Դաշինքին ամբողջութիւնը հրատարակուած է Գարրիէլ Նորատուկեանի «Recueil d'actes internationaux de L'Empire Ottoman», Բ. Հատոր, էջ 229:

Սակայն այս ուղղութեամբ մենք նիւթեր դառնք 1955ին Երեւանի մէջ յոյս տեսած Պ. Յակոբեանի «Որոշատուր Արովեանի Վերջ Հաստանի վէպի ստեղծագործական պատմութիւնը» հատորին մէջ:

Ուշադրութեամբ կարդացինք այլ գիրքը ու հոն գտանք կարգ մը քաղուածքներ Արովեանի մտածումներէն, որոնք ցոյց կուտան անոր հիասթափութիւնը «խաչապաշտ» Ռուսաստանէն եւ որոշ չափով կը հերքուի անոր վերագրուած պաշտամունքը Ռուսաստանի հանդէպ:

Պ. Յակոբեան իր գրքին մէջ այս մասին կը գրէ.

«Արովեանը չէր կարող չնկատել, որ վատ էր հայ աշխատաւորութեան վիճակը. նրանք ննչուում էին ցարական աստիճանադրներից ու տեղական հարստահարիչներից: Ինչպէս ժամանակակիցներն են պատմում, հայկական մարզի կառավարիչ Բեհրուտովը իր անփառունակ գործունէութեան տարիներին (1830-1838) ժողովրդին ննչուում ու քալանում էր անելի դաժան, քան որեւէ փաշա կամ սարտար (Wagner, Reise nach dem Ararat..., s. 81): Նրան յաջորդել է գեներալ Պացովոկին: Սրա օրով էլ կեղեքումներին վերջ չկար: Արովեանը վկայում է, որ ժողովրդի վիճակը համեմատաբար լաւ էր Գէորգ Սմբատեանի կարգադրելու կառավարչութեան շրջանում. բայց նա էլ հեռացում է ասպարէզից: Յայտնի է, որ պարսկական լնից Արեւելեան Հայաստան ազատագրութեան ժամանակաշրջանում ժողովրդի մէջ սրամաղորութիւն էր առաջ եկել Ռուսաստանի հովանաւորութեան տակ հայրկական պետականութիւնը վերականգնելու մասին, բայց այդ էլ ի դերեւ ելաւ: 1840 թուի Ապրիլի 10ի օրէնքով վերացուեց Հայկական Մարզը, իր հետ խորակելով շատերի երազանքը: Ռազմական դիկտատուրային փոխարինեց պաշտօնէութիւնը: Սահմանափակում էին հայ եկեղեցու իրաւունքները (Պոլս-ժեմիայի համաձայն), ցարական կառավարութիւնը ծայրամասերում իր իշխանութիւնը պահելու համար մեծ արտօնութիւններ էր տալիս տեղական հողատէրերին: Այսպիսի պայմաններում Արովեանը կորցնում էր իր դեմոկրատական-լուսաւորական ծրագիրն իրականացնելու յոյսերը:

«Մտայլ էին նաև Արովեանի անձնական հասարակական գործունէութեան հետաճկարները: Նրան մերժեցին կազանի համալսարանի հայոց լեզուի ամպիոնը, Գիտութիւնների ակադեմիան մերժեց նրա առաջարկութիւնը՝ աշխարհաբարը դպրոցները մտցնելու մասին: Արգիլուեց «Նախաշարիդի» գործածութիւնը եւ գրքի տպագիր օրինակները դատաւարտուեցին «փառիների ու փտման գոհ դատնալու» (*), շարունակական արգելքները հնարաւոր չէին դարձնում նրա մասնաւոր պանսիոնի (անհատական վարժարան. Գ.Լ.) ազատ ու անկաշկանդ գործունէութիւնը.

(*) Ս. Արովեան, Երկերի Լիակատար Ժողովածու, հտ. V, էջ 188:

Արովեանը չէր կարող համբերել նաեւ ցարական աստիճանադրներից կըրած վիրաւորանքներին»:

Հայրենասէր Արովեանի հիասթափութիւնը եւ յուսահատութիւնը շատ յստակ է իր հետեւեալ տողերուն մէջ.

«Էս ա տասնը հինգ տարի ա, որ տանից, տեղից, սիրելուց, բարեկամից. պատուից, փառքից ձեռք եմ վերցրել, հեռացել, աշխարհէ աշխարհ ընկել, գլուխս քարէ քար տուել, որ իմ ազգին պէտքը գամ, մէկ հարիր ազգատ երեխայի ձեռքից բռնեմ, ինչ գիտեմ, նրան սովորցնեմ, նրանց սիրտն ու հոգին բանամ, իմ սրտիս տարտերը բոլոր մէջն ածեմ, ազգին ինչ ա հարկաւոր, նրանց տամ, գեղեր, քաղաքներ ուղարկեմ, որ գնան, իրանց բարի սերմը մեր բարի ազգի բարի երեխանց սրտումը ցանեն, նրանց էրւած սիրտը հովացնեն, բերանները լեզու դնեն, սրտներումը զվար». որ հասնողը նրանց գլխին չտայ, ինչպէս մինչեւ էս օր տուել են, ու յետոյ, այժմ յետոյ գերեզմանը մտնեմ, յետոյ աչքս խփեմ, հոգիս հովանայ, մարմինս դիմազանայ: Էս ա իմ ՄՈՒՐԱԶԸ... Էս օր էլ որ միտք եմ անում, քէ ես հաց ուտելիս, տաք տեղ նստելիս, հագարաւոր հայ ո՛չ հաց ունին, որ ուտեն, ո՛չ շոր ունին, որ տաճանան, սիրտս պատուում ա, օրս խաւարում» (*):

Արովեան կանգնած էր «իրականութեան եւ իր երազանքների հակասութեան առաջ եւ կարծես ելք չէր գտնում», արդար կերպով դիտել կուտայ Պ. Յակոբեան: Արովեան կ'ապրէ հոգեկան խռովայտ զիջակ. «Էսպէս բաները մտածելով, օրս ու ուժերս մաշուել էր: ՇԱՏ ԱՆԳԱՄ ՈՒՋՈՒՄ Է՛ ԳՆՈՒՆՍ ՄԱՀՈՒ ՏԱՄ (ընդգծումը մեր կողմէ Գ.Լ.): Զէի իմանում՝ քէ սրա շարէն ի՞նչ կ'ըլի: Թող լսողը չհաւատայ, ամա էս ցաւն էնպէս էր սիրտս առել, որ շատ անգամ գծուածի պէս ընկնում էի սար ու ձոր. ման գալիս, մտածում, էլ էդ սիրտս լիքը տուն գալիս»:

Արովեանի հիասթափութիւնը «խաչապաշտ» Ռուսաստանէն՝ անելի չէլտուած է հետեւեալ տողերուն մէջ.

... Հիմիկ մէկ խաչապաշտ էր
Մեր խեղճ ազգի հետն ընկած ման ա գալիս
Որ արիւնը ծծի ու հոգին հանի (**):

«Այս միտքը. — կը գրէ Պ. Յակոբեան, — անելի զգոյշ ձեռով անցել է նաև «Վերք Հայաստանի» յաջորդ վարիանդին, ուր անանուն հերոսի բերանով քննադատուում է «Հիմիկուան քազաւոր, կայսրը»՝ հայ ժողովրդին տանջելու, չարչարելու համար» (էջ 75):

Արովեան դժգոհ մնացած էր նաեւ «Պոլս-ժեմիայի» հրատարակու-

(*) Ս. Արովեան, Երկերի Լիակատար Ժողովածու, հտ. IV, էջ 45:

(**) Ս. Արովեան, Երկերի Լիակատար Ժողովածու, հտ. II էջ 85:

թննէն, որ կը սահմանափակէր հայ եկեղեցականութեան իրաւունքները: «Տ. Բողեմշտեղը վկայում է, որ ցարական գեներալներէից մէկը յայտարարել էր. «Եթէ ՀԱՅԵՐԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԵԼ՝ ԹՈՂ ՌՈՒՍՔԻՆ ՍՈՎՈՐԵՆ ԵՒ ԵԹԷ ԿԱՄԵՆՈՒՄ ԵՆ ԱՂՕԹԵԼ՝ ԹՈՂ ՌՈՒՍԵՐԷՆ ԱՂՕԹԵՆ» (էջ 124):

«Ուղեորութիւն դէպի Անիի աւերակները» իր երկին մէջ (1847) Արովեան կը պատմէ, որ Թիֆլիսի գիմնազիայի աւագ ուսուցիչ Ֆիլատելֆինը իրեն ըսած է. «ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՈՉՆՁԱՑՆԵԼ ՏԵՂԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ, ԻՍԿ ԴՈՒՔ ՈՒԶՈՒՄ ԷՔ ՆՐԱՆՑ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՆԵԼ ՈՒ ԱՄՐԱՊԵՆԵԼ» (էջ 124):

Որքան ուշադրաւ է, որ Ա. Արովեանի «Վերջ Հայաստանի» սեւազրուեցեան մէջ գտնուած հետեւեալ ուսասիրական արտայայտութիւնները փոխադրուած չեն մաքուրին մէջ.

«ԱՍՏՈՒԱԾ ՕՐԸՆԻ՝ ՌՍԻ ՀՈՂՆ ՈՒ ԶՈՒՐԸ» — 325: «ԲԱՅՑ ԿԱՅ ՁԵՐ ՕՐԻՆ... ԹԵ... ՌՍԻՆ ԳԼԽՆԵՐԻՎ ԴՈՒՔ ՂՈՒՐԲԱՆ ԶՏԱՔ, ՆՐԱ ՀԵՏ ՍԻՐՈՎ, ՍՐՏՈՎ ԶՄԻԱՆԱՔ» 302: «ՏՈՒՆ ՈՒ ՏԵՂ ԹՈՂԱՆ, ՌՍԻ ՄՕՏ ՓԱՅՁԻՆ: ՌՍԻՆ ՊԱՇՏԵՆ, ՆՐԱ ԸՄԲՐԻՆ ՄԵՌՆԻՆ, ՈՐ ԷՍՊԷՍ ՏԵՂԸ ԷԼ ՆՐԱՆՔ ՀԵՉ ԶԸՆԿՆԻՆ» — 302: Խօսքը խղարաւորութեան բրիտանացիներէի ձեռքով գրեցարքիւ մասին է (էջ 131):

Ի այն եւ այնպէս «Վէրջ Հայաստանի» ի հրատարակութեան մէջ լայն տեղ տրուած է ուսասիրական զգացումներու: Հատորին մեկեւեակը եղած է Հայկական Մարզի վերջին կառավարիչ Գէորգ Սմբատեանը, ուրիշ խօսքով՝ պետական պաշտօնեայ մը, որ յետոյ յոյնպէս անբարեյոյս նկատուեցաւ ցարական իշխանութեան կողմէ: Պէտք է եզրակացնել, որ Արովեանի ուսասիրական տողերը առաջին շրջանի խանդավառութեան արդիւնք էին, իսկ աւելի ետք մեծ հայրենասէրը բողոքովին հիասթափ եղաւ ուսերէն եւ, անոնց ստեղծած դժուարութիւններուն եւ հալածանքներուն հետեւանքով կեանքէն ալ յուսահատ, անհետ կորսուեցաւ:

Եւ այդ պատճառով ալ Արովեանի անյայտացումը, խորհրդաւոր մահը եթէ ոչ ուղղակի, զոնէ անուղղակի արդիւնք պէտք է նկատել «խաչապաշտ» ուսերուն Հայաստանի մէջ ստեղծած անշնչելի մթնոլորտին, ինչ որ յուսահատութեան մղեց Արովեանը: Հայրենասէր տաղանդաւոր գրագէտը պէտք է համարուի ոչ թէ ուսասէր, այլ ընդհակառակն, առաջին մեծ գոհը ուսասիրան տիրապետութեան եւ հալածանքներուն Հայաստանի մէջ:

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ԱՔՍՈՐԸ ԵՒ ՄԱՀԸ

Հայ ազատագրական շարժման ռազմականներէն է Միքայէլ Նալբանդեան: Դիպուածի արդիւնք չէ, որ Նալբանդեանի «Մեր Հայրենիք» դարձաւ ամենէն ժողովրդական ազգային երգը եւ ապա՝ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան շրջանին՝ պետութեան պաշտօնական քայլերը: Ազատատենչ հայութիւնը հարիւր տարիէ ի վեր խանդավառութեամբ կ'երգէ «Մեր Հայրենիք»:

Որհնդային իշխանութիւնը ի զուր փորձեց իւրացնել Մ. Նալբանդեանի գործը, որովհետեւ Նալբանդեան, յառաջադէմ գաղափարներով տողորուած, զրած էր «Երկրագործութիւնը որպէս ուղիք ճանապարհ», ուր կը քարոզէր հաւաքական աշխատանք: Այս երկը Նալբանդեան տպագրեց 1862ին արտասահմանի ազատ պայմաններուն մէջ, երբ այցելեց Կ. Պոլիս, Փարիզ, Լոնտոն եւ Հնդկաստան: Լոնտոնի մէջ յարաբերութիւններ հաստատեց ուսուսարարի յեղափոխականներու հետ:

Նոր Նախիջևանի գաղութին համար հնդկահայերուն կողմէ եղած կտակի գործով է որ Նալբանդեան արտասահման դառնաւ էր 1860 Յունիսէն 1862 Մայիս: Հաղիւ իր առաքելութիւնը աւարտած՝ նոր Նախիջևան կը հասնէր, ուր եւ ձերբակալուեցաւ ուսուսարիկանութեան կողմէ: Փեթրսպոլի մէջ բանտարկուեցաւ ու դատուեցաւ: Ռուս յեղափոխականներէն Բակունինի գրած նամակը առիթ տուած էր ձերբակալութեան: Նալբանդեանի մօտ գտնուած էր նաեւ Կ. Պոլսոյ «Մեղու» թերթի խմբագիր Յարութիւն Սվաճեանի նամակը, ծածկագիր բառացուցակով միասին:

1862 Յունիս 14էն մինչեւ 1865 Մայիս 14 Փեթրսպոլի բանտարկուելէ ետք, Մ. Նալբանդեան կ'աջորդուի Սիպիւր՝ Սարատով նահանգի Կամիշին քաղաքը եւ հոն կը մնայ ոստիկանութեան խիստ հսկողութեան տակ:

Մ. Նալբանդեանի առողջութիւնը խանգարուած էր արդէն. թափախտէ մեռաւ 1866 Մարտ 31ին (հին տոմար) Կամիշինի մէջ:

Թոյլատրուեցաւ, որ անոր մարմինը փոխադրուի իր ծննդավայրը՝ Նախիջևան: Այդ առթիւ, ուսուսարիկանութիւնը կը տեղեկագրէր.

«Նախիջևանում դագազը դիմաւորել են արտասովոր յաղթահանդէտով ու յարգամբով, սուրբերի պատկերներով, խաչվառներով, երաժշտութեամբ՝ քաղաքի համարեա թէ ամբողջ բնակչութեան մասնակցութեամբ: Ապա դիակը փոխադրուած է հայոց Ս. Խաչ վանքի՝ քաղաքից հինգ վերստ երաւորութեան վրայ, եւ այնտեղ քաղաւած,

թէն այդ վաճառում ոչ ոքի չեն քաղում: Վանքի վարդապետը դամբա-
նական ճառում հանգուցեալին անուանել է անմեղ նահատակ:

«Նախիջեանի նախկին քաղաքագուլիս ծերունի հայրնովը (Յա-
րուքին հայրեան, Նալբանդեանի կատարի հակառակորդը. Գ.Լ.) որի
հետ ես խօսակցութիւն բաց արի, գտնում է, որ նրա անիւնին մատու-
ցած մեծարանքը ցոյց է կառավարութեան դէմ»:

*Մ. Նալբանդեան նկատուեցաւ առաջին յեղափոխական Նայ
գործիչը, որ կը նահատակուէր ռուս բռնակալութեան կողմէ: Իր աքսորն
ու մահը ունեցան խորհրդանշական ընոյթ:*

Իբրեւ օրինակ յիշենք Թիֆլիսի նահանգապետի դիւանատան
գաղտնի բաժնին 1874 Մայիս 1ի թղթածրարէն հատուած մը՝ ուր կը
խօսուի Հայ ժողովուրդին մէջ տարածուած Նալբանդեանի լուսանկար-
ներու մասին. «Թագաւոր մեծ իշխան փոխարքայի ականջն է հասել, որ
վերջին ժամանակներս Երեւանում ստացում են երիտասարդ հայերի
անունով հայ գրող Նալբանդեանի լուսանկարները, որ յիսնական քուա-
կաններին իր ազատամիտ հակապետական գրուածների համար ահար-
ուած է եղել Սարատովի նահանգի Կամիշին քաղաք, որտեղ եւ շատ
ժամանակ չէ, որ վախճանել է, որ այդ լուսանկարներն ամբողջովին
գրոտած են դրուատական մակագրութիւններով Նալբանդեանի մասին,
օրինակ. այսպիսի բովանդակութեամբ. «Հայրենիքի Փրկիչ» եւայլն, եւ
որ դրանք գտնուել են Էջմիածնի վանքի վարդապետների խցերում, իսկ
Թիֆլիսում դրանք Բրի բաժանում են երիտասարդներին եւ դպրոցնե-
րում շրջանաւարտ հայ աշակերտներին եւ որ միաժամանակ այդ լու-
սանկարների հետ միասին Երեւան են եկել երիտասարդների ձեռքին
քաշկիմակներ Հայաստանի երախտաւորների պատկերներով — Զար-
մայրի, Տիգրանի, Երուանդի, Վահէի, Վահագնի, Հայկի ու Արտաշէսի:

«Խոնարհաբար խնդրում եմ Ձերդ գերազանցութիւն, եթէ ճիշդ
է, որ Թիֆլիսում գտնուել են վերոյիշեալ առարկաները որոնք «տեղեկե-
ցիւն (ձգտումնաւոր) նպատակներ» ունին, վարուել նրանց վերաբերմամբ
օրէնքի համեմատ եւ հետեւանքի մասին տեղեկ կացուցանել ինձ (*):

*Մ. Նալբանդեան Կ. Պոլիս այցելած ատեն մտերմութիւն հաս-
տատած էր Հայ ազգային գործիչներու, մասնաւորապէս «Մեղու» խմբ-
բազրի Յարութիւն Սվաճեանի հետ: Այս թերթը, Նալբանդեանի ձերբա-
կալութեան մանրամասնութիւնները տալով (1862, Մեղու, թիւ 172, էջ
197-199), կը թուէր անոր արժանիքները եւ կ'աւելցնէր. «Ոչ ոք գիտէ
Պ. Նալպանդեանի յանցանքը. բայց մենք կը կարծենք թէ գիտենք անոր*

յանցանքը չափազանց եւ եռանդագին ազգասիրութիւնն ու ճշմտրտախօ-
սութիւնն է. և ասոր համար չենք կարծեր որ արդարութիւնը գտնի պատ-
ժապարտ վնտէ. բայց եթէ արդարութեան բացակայութեանը Պ. Նալպան-
դեանը դատուի ու դատապարտուի, անոր անմեղ արիւնը ի վրէժ պիտի
կոչէ ամէն ճշմարիտ եւ ազգասէր հայերը. եւ այն ատեն, բացարձակ
ըսեմք, Ռուսիոյ կառավարութիւնը անոր կորստեամբ մեծամեծ կո-
րուստներ ալ պիտի ընէ»:

*Յ. Սվաճեան մօտէն ծանօթ էր Նալբանդեանին եւ միասին
ստեղծեց արեւելահայ ու արեւմտահայ յառաջադէմ մտաւորականու-
պելու համար: Ռուս ոստիկանութիւնը երբ ձերբակալեց Նալբանդեանը,
անոր քով դտաւ Սվաճեանի նամակը ուր կը խօսուէր Տաւրոսի ըմբոս-
տութեան մասին:*

*Մ. Նալբանդեան եղաւ առաջին Հայ գործիչը, որ սերտ կապ
ստեղծեց արեւելահայ ու արեւմտահայ յառաջադէմ մտաւորականու-
թեան միջեւ: Անոր այցելութիւնը կը զուգարդիպէր Ազգային Սահմանա-
դրութեան շարժումին՝ ընդդէմ պահպանողական ու կղերմիտ հոսան-
քին: Արեւմտահայ դրականութեան մէջ, այս թուականներուն է, որ Մ.
Պէշեկթաշլեան կը գրէր իր հայրենասիրական տաղերը. իսկ Երեւանը՝
իր ազգային վէպերը, ոգեկոչելով Կիլիկիոյ անկախութիւնը:*

*Հայաստանի խորհրդայնացումէն ետք, Մ. Նալբանդեանի նուիր-
ուած ուսումնասիրութիւններ հրատարակուեցան, իսկ 1940-1949, չորս
հատորներով լոյս տեսաւ անոր «Երկերի Լիակատար ժողովածուն», որ,
բոլորովին սպառած ըլլալով, 1953ին տպագրուեցաւ 683 էջոց գիրք
մը՝ «Հնտիք Երկեր» խորագրով:*

*Մ. Նալբանդեան մեռաւ աքսորի մէջ եւ, ինչպէս ռուս գաղտնի
ոստիկանութեան տեղեկագիրը կ'ըսէ, աւելի մեծ ժողովրդականութիւն
շահեցաւ իր մահէն ետք: Սերունդներ երգեցին անոր «Մեր Հայրենիք»ը
եւ խանդավառութեամբ արտասանեցին «Ազատութիւն» քերթուածը,
որուն ոգին կուզար հայոց դարաւոր պատմութենէն.*

— Ազատութիւն, — գոչեցի, —
Թող որտան իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դու դնէ քշմամին,
Ես մինչ ի մահ, կախազան,
Մինչեւ անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար ազատութիւն:

(*). Դիւան Միքայիլ Նալպանդեանի, Երուանդ Շահադոյ, Երեւան, 1932.

ՀԱՅՅԵՒՌՈՒՍ ԴԱԽԱՆԱԿԱՆ ՎԷՃ

Ռուս օրթոդոքս եկեղեցին ծանօթ է իր մոլեռանդութեամբ: Ռուսերը Հայաստանի տիրապետելէն ետք, հաշտ աչքով չէին դիտեր Հայաստանեայց Եկեղեցիին անկախութիւնը, իր կազմակերպութեամբ ու գաւառնաճգով:

Յաճախ վիրաւորական արտայայտութիւններ տեղի կ'ունենային կրօնական գետնի վրայ հայոց հանդէպ: Այսպէս, մէջբերումներ կ'ընէին Քիւրի ուսաց մետրապոլիտ Կիպրիանոսէն (1376-1406), որ ազգութեամբ սերպ էր: Ան իր հեղինակութեան մէջ րսած էր. «ՀԱՅՈՑ ԱՂԱՆԴԸ (ԴԱԽԱՆՈՒԹԻՒՆԸ) ԱՄԵՆԱԳԱՐՇԵԼԻՆ Է ԲՈԼՈՐ ԱՂԱՆԴՆԵՐԻ ՄԷՋ. ԱՅՅ ՊԱՏՃԱՌՈՎ ՈՒՂՂԱՓԱՌ ԲՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՐՈՒՆ (ՌՈՒՍԵՐՐՈՒՆ) ՁԻ ՎԱՅՅԵԼԵՐ ՈՐԵՒԷ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՆՈՅԱ ՀԵՏ» եւայլն:

Այս առթիւ Աղեքսանդր Դ. Երիցանց իր «Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը եւ Կովկասի Հայք 19րդ դարում» գրքի Բ. մասին մէջ (էջ 526) կը գրէ.

«Հեշտ չէր մէկ անգամից արմատախիլ անել ուսաց հասարակութեան թերի կարծիքները Հայոց եկեղեցւոյ ուզիզ վարդապետութեան մասին, եւ անա ժամանակ առ ժամանակ, երբ ուսս հեղինակները բանակոխէին սկսում իւրեանց ազգի հերձուածոզների հետ եւ տնում էին ապացուցանել նոցա մոլորութիւնը երկմատեայ խաչակնքելու վերաբերութեամբ, իսկոյն շոշափում էին հայոց դաւանութիւնը որպէս, իբր թէ, սկզբնապատճառ նոցա մոլորութեան եւ անխնայ անուամարկում մեզ որպէս Արիստական եւ հերետիկոս:

«Փեթքերսպուրկում 1839 թուին լոյս տեսաւ ուսերէն (լրացուցիչտեղեկութիւններ յապացուցութիւն երեք մատով խաչակնքելու հնութեան մասին) գիրքը, որ ըստ երեւոյթիմ պաշտօնական հրատարակութիւն էր: Այդ գրքին մէջ նշատակ ունենալով համոզել ուսս հերձուածոզներին՝ թէ սխալ է նոցա երկմատեայ խաչակնքելու սովորութիւնը, եւ բացատրելով այդ սովորութեան ծագումը, 8-րորդ երեսում ծանր ծանր ամբաստանութիւններ են արուած հայոց եկեղեցւոյ մասին, կոչելով սորան Արիստական եւ հերետիկոս, ինչպէս կը տեսնենք ստորեւ:»

Փեթքերսպուրկի եւ Մոսկուայի հայերը մեծ վրդովումի կը մատնուին եւ կը դիմեն Սմենայն Հայոց Յովհաննէս Կաթողիկոսին, որ 1841 Յուլիս 31ին, ներքին գործերու նախարարութեան միջոցով, Կայսեր կը գրէ հետեւեալը:

Օգոստոսիան Կայսր,

Ամենաողորմած Թագաւոր,

Ձեր անձնական նախնի Մեծն Պետրոսի ժամանակներից սկսած Հայոց ազգը բազմ ունի օգտուելու Ռուսիոյ Օգոստոսիան Թագաւորների առանձին շնորհարարութիւններով. բայց Ձերը Կայսերական Մեծութեան Փառաւոր Թագաւորութեան հետ իջմիածնական Աթոռը կցորդելուց յետոյ՝ սորա համար մի նոր դարազուլութիւն բացուում: Մահտական լծից ազատուած Հայաստանեայց Եկեղեցին, ցնծալով իր հզօր պաշտպանի շնորհալի հովանաւորութեան ներքոյ, փառարանում է Ձերը Կայսերական Մեծութեան Օգոստոսիան անունը: Ի թիւս բազմաթիւ ոլորտութեանց, որ բարձրագոյն շնորհուած են Ձեր հաւատարիմ հպատակ Հայոց ազգին, ի հարկէ նշանաւոր տեղ է բռնում Ձերը Կայսերական Մեծութեան պարգեւած Պոլսեան (կանոնադրութիւնը) Հայ լուսաւորչական եկեղեցւոյ գործերը կառավարելու մասին: Այդ Պոլսեան մի նոր ապացոյց է ոչ միայն Ձեր Կայսրութեան մէջ տիրող կրօնական թոյլատուութեան (ազատութեան) հողոյն, այլ եւ այն բարձր պաշտպանութեան, որ Ձերը Կայսերական Մեծութիւնը բարեհաճէ ցոյց տալ Ռուսիոյ մէջ բնակուող ամէն ալակրօններին: Ձեր բարեբար ցանկութեանց նպատակն այն է, որ Ձեր հզօր իշխանութեան ներքոյ եղած բոլոր ազգութիւնները կարելոյն չափ բարօրութիւն վայելեն եւ որպէսզի ոչ ոք Ձեր հպատակներից ոչ միայն անմեղ տեղը չպատժուի, այլ եւ առանց պատճառի շանարգութիւն ոչ թաղաքական իրաւանց վերաբերութեամբ, ոչ էլ իւր դաւանած կրօնի համար:

Ահա այդ իսկ է, որ համարձակութիւն է տալիս ինձ, որպէս գլխոյն Հայաստանեայց Եկեղեցւոյ, արկանել առ ոտս Ձերը Կայսերական Մեծութեան մի հանգամանք, որ Ձեր հաւատարիմ հպատակ Հայոց սրտերը խորն խոցած է դառնալոյն անպատուութեամբ:

Ամենահին ժամանակներից ի վեր յոյները, թաղաքական պատճառներով, շարունակ թշնամութեան մէջ են եղած Հայոց հետ: Յունաց այդ թշնամական ոգին ոտնահարում էր ոչ միայն Հայոց ազգային բոլոր յատկութիւնները, այլ մինչեւ անգամ չէր խնայում մեր դաւանութեան ամենասուրբ ճշմարտութիւնները եւ կուտակում նախատական առասպելներ: Այդ պատճառով յունաց հին գրիքներից շատերի մէջ ընթերցողներն այնպիսի առակներին են հանդիպում, որ, առողջ դատողութեամբ անպատեհ համարուելով հանդերձ, այնուամենայնիւ անարգում են մեր անարատ եկեղեցին:

Այդ առասպելները եւ առակները, որ դժբախտաբար կրկնած են այլեւ ոմանք թեթեւամիտ եւ անփորձ պատմաբաններից, վերջին ժամանակներում յունական զրքերի հետ միասին մուտք են դործել եւ Ռուսաստան, ուր պարզամտութեամբ ճշմարտութեան տեղ ընդունուելով, ցայսօր չեն ենթարկուել խիստ ջննութեան եւ ժամանակ առ ժամանակ, դժբախտաբար, արժապանք են տալիս յունաց առ մեզ ունեցած դաւաւոր թշնամութեան:

Այլեւ լքուելով այն բազմաթիւ այդ տեսակ գրուածները, որոնք ժամա-

նակ առ ժամանակ լոյս են տեսած Ռուսաստանում, եւ համարակութիւն եմ առնում ժամանացոյ առնել մանաւանդ մի զբնի վրայ՝ «Լրացուցիչ տեղեկութիւններ յապացուցութիւն երեք մատով խաչակնքելու հնութեամ մասին» անունով, — մի զբնի, որ լոյս է տեսած 1839 թ. այսինքն մի այնպիսի դարում, որ պարծնում է իւր բարձրագոյն լուսաւորութեամբ եւ ճշմարտ կրթութեամբ, մի այնպիսի դարում, ասում եմ, երբ ամենայն ինչ անաշտ քննութեան ենթարկուելով, մենք օգնում ենք մեր նորինաց պատմական ակադեմիաները մաքրել տգիտութիւնց յառաջացած կոշտ անհեթեթութիւններէ:

Այդ զբնի մէջ, որ իսկապէս գրուած է բարի նպատակաւ, այն է համոզել (ուսու) հերձուածողներին նոցա ընդունած երկմտեայ խաչակնքելու սովորութիւնը, իբրեւ զխաւար կէտի հերձուածողաց իմաստակութեան, ի թիւս այլոց ասուած է:

«Երկմտեայ խաչակնքելը սուրբ եկեղեցին ընդունում է իւր հայոց ականջութիւն, իսկ որովհետեւ յայտնի է՝ որ հայք նոյնատեսակ հերետիկոսներ են, որպէս եւ Արիոսականք, այն է՝ ինչպէս Արիոսը սաստնալի թելադրութեամբ համարձակեցաւ չփոթել Որդւոյն Աստուծոյ Աստուածութիւնը, անուանելով մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսին արարած է ոչ Արարիչ, եւ այդպէսով նա առաջինն սկսեց չփոթել, Սուրբ Երրորդութեան անձնաւորութեանց համապատիւ լինելը եւ նման գայլի խուփեց Քրիստոսի բանաւոր հօտը — այնպէս եւ հայք ուղղափառութեամբ չեն դաւանում Ս. Երրորդութիւնը եւ հակառակ զբիստոնէական Սուրբ Եկեղեցւոյ՝ ոչ միայն երեք մատով խաչակնքելու փոխարէն երկու մատով են խաչակնքում, որին եւ հերձուածաւէք են հետեւում, այլեւ չեն համաձայնում սուրբ եկեղեցւոյ հետ թէ խաչ հանելու կերպին մէջ եւ թէ «Սուրբ Աստուածի», ինչպէս ստարոօրթնալէցները (հնադաւան անուանեալ ուս աղանդաւորներ) ճալլուիայի» մէջ: Ի յիշատակ Քրիստոսի չարչարանաց եւ թաղման ուղղափառ զբիստոնեայքը Աւագ Եարաթ օրը պաս են պահում, նմանապէս, ըստ սահմանադրութեան սուրբ հարց, Փարիսեցւոյ եւ մաքսաւորի անուանեալ շարաթում աշխարհականացը թոյլ է տրուած ուտել միս, պանիր եւ ձու ամէն օր, մինչեւ անգամ նոյն իսկ չորեքշաբթի եւ ուրբաթ օրերն էլ. իսկ հայք, ներհակութեամբ սուրբ եկեղեցւոյն, նայն շարաթում որոշել են Արցիվուրեաց (Առաջաւորաց) անուանեալ պատը, որ սահմանել է նոցա համար կատարել հայոց հերետիկոսապետ Սկրիին (Սարգիսը) ի պատիւ իւր շան, որ կոչուած է արցիվուրի: Առաջին ժողովը վիճեց (արտաքսեց) Քրիստոսի եկեղեցւոց անմիտ Արիոսին եւ նորան իւր համարտակներով անաթեմայի ենթարկեց, որոնք մինչեւ այսօր նշովաւ են անուանում. իսկ հայք՝ իւրեանց զարչելի նորածնութեանց համար եւ Քրիստոսի եկեղեցւոյն ներհականալու պատճառով կոչուած են նշովաւս:

Թանգ զնահատելով Ձերդ կայսերական Մեծութեան բարձր ուղղորութիւնը, քանի որ Ձեզ համար ամէն մի բոպէն, որ նուիրած էք յօգուտ միլիոնաւոր հպատակներին, շատ թանկագին է, եւ այդ պատճառով, առանց առարկայիս մանրամասն քննութեան մէջ մտնելու, ես կը շատանամ միայն պատմութեան եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութեան հիմունքների կարծօրէն տեսութեամբ, որից պարզապէս կ'երե-

ւայ, թէ որ աստիճանի արգարացի են այն զբարաբարութիւնները, որոնցմով անարդու են նորան:

Քրիստոնէական հաւատոյ վէճը Հայաստանում գրուած է 34 թուին Մենդեան Փրկիչ Թաղուս եւ Բարթողիմէոս առաքելների ձեռքով: Այս ժամանակներից սկսած մինչեւ Դ. րդ դարու սկիզբը Հայաստանը կոպալաշտ թագաւորների իշխանութեան ներքոյ էր եւ այդ պատճառով զբիստոնէութիւնն այստեղ սաստիկ հալածանաց էր ենթարկուած: Սուրբ Գրիգոր Մեծ նահատակն, 302 թուականին, Հայոց արքայ Տրդատին մասնակից անելով սուրբ մկրտութեան. ընդ նմին եւ ամբողջ տէրութիւնը դարձրեց ուղղափառ զբիստոնէութեան: Այդ ժամանակ Հայոց եկեղեցւոյ ծէսերն ըստ ամենայնի համաձայն էին յունական եկեղեցւոյ ծէսերին: Երկու եկեղեցեաց այդ կապն աւելի եւս ամրապնդեց մեր սուրբ Լուսաւորիչը արքեպիսկոպոս ձեռնադրուելով յունաց Ղեւոնդիոս արքեպիսկոպոսից: Այնուհետեւ նորա որդիքը եւ յաջորդները շարունակ կապ եւ յարաբերութիւններ ունէին Կ. Պոլսոյ Պատրիարքների եւ Տիեզերական սուրբ ժողովների հետ: Այդպէս ահա սուրբ Լուսաւորիչ որդի եւ յաջորդ Արիստակէսը 325 թուին ներկայ էր Նիկիոյ առաջին ժողովում, որ ընդդէմ Արիոսի, եւ ժողովի որոշումները մտցրեց մեզ եկեղեցւոյ մէջ (*): Երկրորդ Տիեզերական ժողովում 381 թուականին, հայերից մասնակցեց Մեծն Ներսէս հայոց առաջին պատրիարքը եւ հաւատոյ կանոններն ու նոյն ժողովի վճիռներն ընդունեց եւ մտցրեց մեր եկեղեցւոյ մէջ: Թէեւ Նեստորի դէմ հղած երրորդ Տիեզերական ժողովում հրաւիրեց ստացած Սահակ պատրիարքը, պարսից թագաւոր Դոանն արգելուած լինելով, չկարողացաւ մասնակցել, բայց այդ ժողովին վճիռները յետոյ հաղորդուեցին իւրեան եւ նա, ընդունելով այն, կրկին ժողով գումարելով նշովեց Նեստորին: Հիգեբորդ դարու կիսին ժողովում է քաղաքական հանգամանքներից յառաջացած յունաց եւ հայոց թշնամութիւնը, որ պայծառ եղաւ այդ երկու եկեղեցեաց արտաքին բաժանման: Այդ բաժանման շարժառիթը եղաւ Քաղկեդոնի ժողովը, որին չկարողացան մասնակցել հայք՝ զբողուած լինելով պարսից Սափոր (Յազկերտ Բ.) դէմ մղած պատերազմով, որ ցանկանում էր նորից ընկղմել Հայաստանը կոպալաշտութեան խաւարի մէջ: Այս բացակայութիւնը, երկու ազգերի միջեւ ծագած թշնամութիւնը, սխալ թարգմանութիւնը (Քաղկեդոնի ժողովի) որոշմանց եւ այդ պատճառով այդ որոշմանցը տուած թիւը մեկնութիւնը պատճառ եղան, որ հայոց մի մասը չէր կամենում ընդունել Քաղկեդոնական ժողովի վճիռները: Ապացոյց այն բանին, թէ այդ ընդունելը միայն արտաքսուած էր եւ յառաջացած թարգմանչի թիւրիմացութիւնից, կարող է լինել այն, որ ինչպէս յոյները եւ լատինները հաւատում եւ դաւանում էին այդ ժողովում Յիսուսի Քրիստոսի մէջ երկու բնութիւն որոշելով, նոյն տեսակ դաւանում էին եւ բաժանուած կարծեցեալ

(*) Այս մասին յիշուած է Nova Collectio Conciliorum, Հատոր II, եր. 1136. Բարձրի ժամանակադրական ստորագրութեան մէջ 325 թ., Չորիս պատրիարքի թղթում առ Հայոց Չաբարիա կաթողիկոսն եւ յունաց ու լատինացւոց ուրիշ բազմաթիւ շարադրութեանց մէջ: (Ծանօթ. Յովհաննէս կաթողիկոսին):

Հայք, Հաւասարով թէ Յիսուս Քրիստոս էր կատարեալ Աստուած եւ կատարեալ մարդ եւ կամ թէ Նորա մէջ էր կատարեալ Աստուածութիւն եւ կատարեալ մարդկութիւն, վրած որոյ եւ խոստովանուած են Յիսուս Քրիստոսի մէջ երկու բնութիւն առանց խառնման եւ առանց Աստուածութիւնը ի մարդկութիւն վերածելոյ եւ կամ մարդկութիւնը յԱստուածութիւն, եւ թէ երկուց բնութեանց, այսինքն Աստուածային եւ մարդկային, յաստուածութենէրը մնացին ամբողջութեամբ եւ անփոփոխ: Ընս սմին Հայաստանեայց Եկեղեցին, ընդունելով 5. Յ եւ 7րորդ Տիեզերական Ժողովները, որոնք, որպէս յայտարար է, ընդունեցին եւ Հաստատեցին Քաղկեդոնական Ժողովի վճիռները, զորանով իսկ բնականապէս ընդունած է եւ յիշեալ Ժողովը:

Բոլոր վերոգրեալներէց պարզ երեւում է, որ Հայաստանեայց Եկեղեցին, Հետեւելով եօթն Տիեզերական Ժողովների որոշմանց, որպէս մաքուր Հաւատոյ սկզբունքների, բոլորովին Համաձայն է յունական եկեղեցւոյ Հետ եւ նորա Հետ միասին պատուելով եւ ճանաչելով եկեղեցական Հանդիսաւոր աստիճանը եւ օրերը, նորա Հետ միասին էլ անաթեմայի է ենթարկում (նշողում է) Արիոսին, Մակեդոնին, Նեստորին, Եւտիքէսին, Սիււաւոսին, Մոնոֆիզիտներին եւ բոլոր մնացած Հեքատիկոսներին, որոնց դատապարտած է Հայոց եկեղեցին. եւ ուրեմն վերջիշեալ զբոլոր այն կարծիքը, թէ Հայք իբր թէ Համաձայն են Արիոսի սուտ վարդապետութեան Հետ, Հաստատ Հիմք չունենալով, մուրեցնում է միայն մեր եկեղեցւոյ Հետ ծանօթ չեղողներին եւ ստիպում է նոցա մեր դաւանութեան եւ ազգի մասին սուտ եւ վիրաւորիչ եզրակացութիւններ անել:

Այդ պատճառով, եւ որպէսզի ապագայ ժամանակներումն էլ մեզ Համար աշխարհի վշտալի Հանգամանքների առաջն անուամ լինի, ես զբողւում որպէս իմ սրբազան պարտաւորութիւնից, նոյնպէս եւ մեր ուղղափառ եկեղեցւոյ անարգում զաւակների արգարացի ցանկութիւնից, ներկայացնելով այս գործը ի բարեհայեցողութիւն Ձերդ Կայսերական Մեծութեան, Համարձակում եմ ամենապատակօրէն խնդրել Ձեզանից, Ամենաողորմած Արքայ, հրամայել՝ որ այլևս չուպուին Հայ Լուսաւորչական դաւանութեանը վերաբերեալ զբոլոր կամ յօղուածներ առանց կանխապէս բանակցելու այդ մասին յիշեալ դաւանութեան հոգեւոր բարձր իշխանութեան Հետ եւ ստանալու սորանից զբուածի մասին ճիշդ տեղեկութիւններ կամ բացատրութիւններ. կամ թէ պարտաւորացնել ուսաց զբաճնիչներին շթոյլատրել զբուածներ, որոնք շօշափում են այնպիսի անդին եւ խորհրդաւոր զգացմունքներ, որպէսիք են կրօնական զգացմունքները, որ անմեղ տեղն անարգում են մի ազգ, մի ազգ — որ զարուց աւելի իւր շարունակ Հաւատարմութեամբ բազմ ունի զարձնելու իւր վրայ Ռուսիոյ Օգոստոսափառ Գահակալների սղորմած ուշադրութիւնը:

Մի այսպիսի միջոց՝ հրամանագրուած լինելով ճշմարտապէս Ինքնակալի Հայրական Հոգատարութեամբը առ բարին իւր պաշտող որդւոց, — կը լինի մի նոր զբաւական այն բարձր հովանաւորութեան, որից Ձեր Հաւատարիմ Հպատակ Հայք, Ամենաողորմած Արքայ, շարունակ օգուում են իւրեանց նոր հռչակաւոր հայրենիքում:

Ամենաողորմած Արքայ՛,

Ձերդ Կայսերական Մեծութեան Հաւատարմագոյն ծառայ եւ անմենալիքմեանս աղօթարար Յովհաննէս Մայրազոյն Գատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց ազգի՛:

31 Յուլիս 1841 թ.

Էջմիածին

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՍՈՒՐԲ ՎԱՅՐԵՐՈՒ ԽՆԴԻՐ

Խ Ր Ի Մ Ի Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Փ Ա Ր Ի Ջ Ի Դ Ա Շ Ն Ա Գ Ի Ր

Ռուսաստան կանուխէն Գայնարճայի դաշինքով(*) (1774 Յուլիս 10) իրաւունքներ ձեռք ձգած էր իբրեւ քրիստոնեայ եկեղեցիներու պաշտպան:

Նրուսաղէմի Սուրբ Վայրերը, դարերու ընթացքին, լատին եւ օրթոտոքս եկեղեցիներուն միջեւ պայքարի առարկայ դարձած էին: Պալիֆաները երբեմն լատիններուն և երբեմն օրթոտոքսներուն իրաւունքները պաշտպանած էին: Հայ. եկեղեցին իր կարգին յաջողած է հինէն ի վեր կարեւոր իրաւունքներ ձեռք բերել Նրուսաղէմի Սուրբ Վայրերուն մէջ:

1808ին յոյները, պաշտպանութիւն գտնելով Ռուսաստանէն, Սուրբ Գերեզմանի եկեղեցին այրել է ետք նորոգեցին եւ նոր տեղեր գրաւեցին: Իսկ 1851ին Լուի Նափոլէոն Բ. դրան մօտ դիմումներ կատարեց եւ յաջողեցաւ լատիններուն իրաւունքները եւս ճանչցնել:

Ռուսիոյ Նիքոլայ Կայսրը, մեծ յաջողութիւններէ ետք, յունական եկեղեցիի միջոցով ուղեց իր ազդեցութիւնը տարածել Օսմ. Կայսրութեան վրայ. արտակարգ դեպքան մը՝ իշխան Մենչիքոֆ՝ Պոլիս դրկեց եւ, Գայնարճայի դաշնագրի հիման վրայ, պահանջներ ձեւակեր-

(*) Քիւլիւք Գայնարճայի դաշինքին յօդ. 7 ճԲ. Գուրը կը խոստանայ պաշտպանել քրիստոնեաներու կրօնը եւ անոնց եկեղի-իւները: Նաեւ կ'արտօնէ Ռուսիոյ որեւէ ատեն դիմումներ կատարելու թի՛ Պոլսոյ նոր եկեղեցիին եւ թէ անոր պաշտօնեաներուն համար, խոստանալով զանոնք նկատի առնել՝ իբր զբացի եւ անկեղծօրէն բարեկամ պետութեան մը կողմէ ներկայացուած» (Recueil d'actes internationaux de l'Empire Ottoman, Tome premier, 1897, page 323) :

պեց, որպէսզի Սուրբ Վայրերու մէջ յունաց եկեղեցին գերակշիռ դիրք ունենայ:

Փուրջիա, քաջալերուած՝ Ֆրանսայի եւ Անգլիոյ կողմէ, մերժեց ռուսական վերջնագիրը: 1853 Յուլիս 3ին ռուս բանակը անցաւ Փրուք գետը, իսկ Նոյեմբեր 30ին ռուս նաւատորմը Սինոպի առջև թրջական նաւեր ընկղմեց: Անգլիա եւ Ֆրանսա 1854 Ապրիլին դաշինք մը կնքելով՝ ձեռնարկեցին Խրիմի պատերազմին որուն աւելի ետք իրենց մասնակցութիւնը բերին Աւստրիա եւ ապա Սարտենիա:

Պատերազմը վերջացաւ Ռուսաստանի պարտութեամբ, բայց դաշնակիցներն ալ մեծ զոհեր տուին: 1856 Մարտ 30ին Փարիզի մէջ կնքուեցաւ դաշնագիր մը, ըստ որուն կողմերը իրենց զբաւած վայրերը կը վերադարձնէին: Կարսը, որ զբաւուած էր ռուսերուն կողմէ, պարպուեցաւ:

Օսմանեան Կայսրութիւնը ամբողջովին տէր դարձաւ Վոսփորի եւ Տարտաննիի հակակշիռին: Այս զոյլ նեղուցները գոց պիտի պահուէին պատերազմական նաւերուն առջև:

Դաշինքին յողուած Ծով(*) Սուլթանը բարենորոգումներ կը խոստանար առանց ազգի ու կրօնի խտրութեան, բայց ոչ մէկ պետութիւն իրաւունք պիտի ունենար այդ մասին միջամտութիւններ կատարելու:

Այսպէսով Ռուսաստանէն կը խլուէին անցեալին իր ստացած այն իրաւասութիւնները, որոնց հիման վրայ, իրրեւ քրիստոնեաներու պաշտպան պետութիւն, կրնար միջամտել Օսմ. Կայսրութեան գործերուն:

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՈՒԻՐԱԿԸ

Խրիմի պատերազմէն եւ Փարիզի դաշնագրէն ետք, Ռուսաստան երբեք չհրաժարեցաւ այս կամ այն կերպ միջամտութիւններ կատարելէ, իրրեւ թէ Փուրջիոյ քրիստոնեաները պաշտպանելու համար:

1868ին վէճի առարկայ դարձաւ Էջմիածնի Գէորգ Դ. Կաթողիկոսին կողմէ իրրեւ պատուիրակ Կ. Պոլիս զրկուած Սարգիս Զալալեան արքեպիսկոպոսի առաքելութիւնը:

(*) Փարիզի դաշնագիրը. «Հայրասան եւ Հայ Դատ, Վաւերագրեր», 1946,

Գէորգ Դ. Կաթողիկոս Կ. Պոլսեցի մտածեց օգուտ՝ քաղել անցեալին օսմանեան պաշտօնատարներու հետ իր ունեցած ծանօթութիւններէն եւ իր ներկայացուցիչը զրկելով ուղեց օգուտիլ Սիսի կաթողիկոսութեան շուրջ ստեղծուած վէճէն:

Բայց մինչեւ այդ ատենները Էջմիածնի նուիրակները Կ. Պոլիս միայն միւսոն բերած եւ նուէրներ հաւաքած էին:

Սարգիս Զալալեան արք.ի առաքելութեան դէմ դժգոհութիւն ծայր տուաւ: Օրմանեան այս մասին կը յայտնէ. Այս գործին մէջ նախաձեռնարկ դեր մը ալ կը վերագրուի գաղղիական պետութեան եւ առ հատարակ կաթոլիկ հանրութեան, որքեմ լաւ աչքով չտեսան Էջմիածնի ներկայացուցիչի մը Հայոց կեդրոնին մէջ գտնուիլը. զի Էջմիածնայ Աթոռը բոլորովին ռուսական ազդեցութեան ներքեւ ինկած էր, եւ Էջմիածնի միջնորդութեամբ կրնար ռուսական ազդեցութիւնը ընդարձակուիլ եւ ամրապնդուիլ Տանկաստանի մէջ եւ Տանկաստան վրայ, որով մրցակից մը կը գորանար Գաղղիոյ դէմ, որ ուղղակի կաթոլիկութեան եւ անուղղակի քրիստոնէութեան պաշտպան էր կանգնած եւ անով կ'աշխատէր իւր ազդեցութիւնը ընդարձակելու եւ ամրապնդելու թուրքիոյ մէջ: Բարձրագոյն Դրան վրայ ազդեցութիւն բանեցնող միայն գաղղիական դեսպանատունը չենք սիրեր կարծել, հարկաւ հայ մեծամեծներն ալ պակաս չեն ըրած իրենց կողմէն թելադրութիւններ ընել, եւ այս երկուքին խօսքերէն աւելի պետական դրամ վրայ կը ծանրանար ռուսական միջամտութեան գաղափարը, որուն հանդէպ միշտ կասկածոտ էր օսմանեան քաղաքականութիւնը, եւ ոչ մի կերպով չէր կրնար հանդիպել անոր ընդարձակուելուն» («Աղղապատում» Գ. Հատոր, 1927, էջ 4156):

Կաթողիկոսը Եպարքոս Ֆուադի պաշտօնագիր մը զրկած էր նուիրակի մասին: Արտաքին գործոց նախարար Սաւֆէթ Փաշա կը պատասխանէ այդ գրութեան: Կայսերական կառավարութեան հայ կրօնին նկատմամբ ունեցած մասնաւոր համակրանքը յայտնելէ ետք, կ'աւելցնէ թէ ասկէ առաջ նուիրակներ միայն միւսոն կը բերէին, թէ Հայոց եկեղեցւոյ ներկայացուցիչը Կ. Պոլսոյ պատրիարքն է. թէ նուիրակին յատկացուած դերը պատիարքին ունեցած նուիրական պաշտօնն է. թէ նուիրակին ներկայութիւնը անվրէպ գաւալի հետեւամեծներ յառաջ պիտի բերէ. թէ ինք կաթողիկոսն ալ պատրիարքութիւն վարած ըլլալով՝ այդ կէտերը լաւ գիտէ եւ կ'եզրակացնէ, թէ Բարձրագոյն Դուռը իր աւանդութեանց հաւատարիմ մնալով՝ պարտք կը համարի բնաւ որեւէ պաշտօն չհանձնալ իրրեւ նուիրակ եկող Զալալեանի անձին մէջ: Այսպէս կտրուի կերպով մերժուած է կաթողիկոսական նուիրակի մը Կ. Պոլիս մնալուն խնդիրը եւ Գէորգի ծրագիրը ձախտած»:

Սարգիս Զալալեան արք-ի առաքելութիւնը ձախողեցաւ, եւ արք-ը ստիպուեցաւ վերադառնալ էջմիածին:

1877-78ի ՌՈՒՍՅԻԹՈՒՐՔ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԷԻՆ

Ռուսերը աստիճանաբար իրենց ազդեցութիւնը տարածեցին Պալքաններու քրիստոնէայ ազգերուն վրայ: 1877ին պուլկարներու եւ հերսէք պոսնիացիներու քաղաքական պահանջները իրենց անդրադարձումը կ'ունենային հայկական շրջանակներուն վրայ: Մեր ազգային զարթօնքի շրջանը սկսած էր Պոլսոյ մէջ: Զարմանալիօրէն, այդ թուականներուն Բ. Դուռը եւ Միտհաթ Փաշա բարեացակամ էին դէպի հայերը, նոյնիսկ զանոնք կը քաջալերէին, յուսալով դիւանագիտական դեմոնի վրայ վիժեցնել սլաւ տարրին ի նպաստ կատարուած ձեռնարկները:

Այդ քաղաքականութիւնը հասկնալի կը դառնայ հետեւեալ վաւերագրով, ուր տրուած է Կ. Պոլսոյ անգլիական դեսպան Սրբ Էլիոթի տեսակցութիւնը Հայոց Պատրիարք Ներսէս Վարժապետեանի հետ (կապոյտ գիրք, Թուրքիա, թիւ 2, 1877, էջ 34)։

«Հայոց պատրիարքը երէկ ինձ մօտ եկաւ: Անոր գալու նպատակն էր՝ յանուն այն ստուարաթիւ քրիստոնէայ ժողովուրդին, որուն պետն է ինքը, յոյս յայտնելու որ դեսպանախորհուրդը պիտի չպնդէ Բ. Դրան մօտ, թէ ապստամբած նահանգներուն տրուին առանձնաշնորհումներ, որոնցմէ գուրկ պիտի մնան միւս նահանգները, որոնք հանդարտ մնացեր են, բայց իրաւունք ունին, որ իրենց վիճակը եւս նկատի առնուի:

«Ես գգուշաւոր կերպով պատասխանեցի, թէ դեսպանախորհուրդի նպատակը միայն խաղաղեցնել է այն նահանգները, ուր ապստամբութիւնը կը սպառնար ընդհանուր խաղաղութեան, եւ իմ կարծիքով, պիտի չգրադուի ամբողջ օսմանեան կայսրութեան վարչութեան բարեկարգութեան հարցով:

«Պատրիարքը պատասխանեց, թէ իր ժողովուրդը շատ գրգռուած է եւ երէտ երոպական պետութիւններու համակրութիւնը գրաւելու համար հարկաւոր էր ապստամբիլ, ամենեւին դժուար չէր այդպիսի շարժում մը յառաջ բերել:

«Ան բողոքեց նոյնպէս երոպաբնակ չեքեքները Ասիա տեղափոխելու առաջարկութեան դէմ որ յօգուտ սլաւներու է, բայց ի վնաս

հայերու: Արաբիայի հեռուոր մասերէ դուրս, ուր անկարելի է էջել հիւսիսային կլիմային վարժուած մարդոցը, Փոքր Ասիոյ մէջ չկայ տեղ մը, ուր բազմաթիւ հայեր չընակուին, եւ պատրիարքը յոյս ունի, թէ հայերը չեն յանձնուիր՝ իրենց բնակավայրերէն հալածուելու պատճառով գայրացած չեքեքներուն ձեռքը»:

× Կ. Պոլսոյ անգլիական դեսպանը 1876 Սեպտ. 11/23ին կը հեռագրէր Լոնտոն.

«Հայերու մէջ դժգոհութեան շարժում մը արտայայտուեցաւ, որ կարող է լուրջ կերպարանք ստանալ: Անոնք իրենց զանգատները ներկայացուցին Բ. Դրան (ակնարկութիւնը հարստար. տեղեկագրի մասին է) վը լսեմ թէ մտածեք եմ նոյնիսկ սուլթանին դիմել»։ Այս դանդաղտներուն արդար ըլլալը հաստատելէ վերջ դեսպանը կը շարունակէ. «Բարձրաստիճան հայ անձնաւորութիւն մը որ երբեք կապ չունի կառավարութեան հետ, այսօր ինձ յայտնեց, որ թէպէտ Բ. Դուռն է սկզբնական պատճառն իր ազգակիցներու (հայերու) ներկայ դժգոհութեան, բայց տարակոյս չկայ, որ ներկայ յուզումը ռուսական գրգռանքներու արդիւնք է: Ան կրկնեց, ինչ որ արդէն ես ըսեր էի, այն է, որ հայերու ուսեալ դասակարգի մեծամասնութիւնը իսիստ կերպով հակառակ է Ռուսաստանին, բայց ժողովուրդը, բազմութիւնն, որոնք իսկապէս կը տանջուին այդ հարստահարութիւններէն, այդպէս չեն եւ հաւատացած են, որ եթէ փոփոխութիւն ըլլայ (այսինքն եթէ ռուսական տիրապետութիւնը գայ) աւելի լաւ կ'ըլլայ»։ (Կապոյտ գիրք, Թուրքիա, թիւ 1 1877, էջ 375)։

ՍԱՆ ՍԹԵՖԱՆՈՅԷՆ ՊԵՐԼԻՆ

1828/29 ռուս-թրքական պատերազմին, օսմանեան բանակը, պարտութեան մատնուելով, նահանջեց եւրոպական ցամաքամասին վերայ՝ մինչեւ Ազրբայճանուպոլիս, իսկ Ասիոյ կողմը՝ մինչեւ Էրզրում:

Պարտուած Թուրքիա, 19 Փետր. 1878ին, Սան-Սթեֆանոյի դաշնագրի 16րդ յօդուածով, յանձն կ'առնէր.

«Նկատելով, որ ռուսական բանակի Հայաստանի մէջ գրաւած, բայց Թուրքիոյ վերադարձուելիք տեղերէն մեկնիլը կրնայ կոխներու եւ երկու պետութեանց բարեկամական յարաբերութիւններուն վնաս բերող կնիքներու ծնունդ տալ, Բ. Դուռը պարտաւորութիւն յանձն կ'առնէ տեղական պետներու պահանջած բարուումները եւ բարեկոր-

գութիւնները առանց այլեւ յապագիւել գործադրել եւ փերտերուն ու չերէզգնեբում դէմ անոնց ապահովութիւնը երաշխաւորել»:

Եւրոպական պետութիւնները եւ մասնաւորապէս Մեծն Բրիտանիա կողմնակից չէին Ռուսաստանի ծաւալումին: Նախ քան Պերլինի խորհրդատողովը, 18/30 Մայիս 1878ին, Լոնտոնի մէջ կնքուած համաձայնութեամբ մը Ռուսաստան զիջումներ ըրաւ Մեծն Բրիտանիոյ. Յօդ. 7ը կ'ըսէր. «Սան-Սթեֆանոյի նախնական դաշնագրով ՀԱՅԱՍՏԱՆի մասին տրուած խոստումը պէտք է որ բացառապէս Ռուսաստանի վերաբերի, այլ նաեւ Անգլիոյ»:

Անգլիա նոյն ատեն Թուրքիոյ հետ համաձայնութիւն մը կը կնքէր 4 Յունիս 1878ին (Ն.Տ.), ըստ որուն Կիպրոսը կը գրաւուէր Անգլիոյ կողմէ, իսկ Անգլիա կը խոստանար պաշտպանել Օսմ. Կայսրութիւնը Ռուսաստանի դէմ:

Ասկէ ետքն է, որ տեղի պիտի ունենար Պերլինի վեհաժողովը, մասնակցութեամբ Ռուսաստանի, Գերմանիոյ, Աւստրիա-Հունգարիոյ, Ճրանսայի, Մեծն Բրիտանիոյ, Իտալիոյ եւ Թուրքիոյ: Այս վեհաժողովին մէջ 1/13 Յունիս 1878ին կնքուած դաշնագրի 61րդ յօդուածը կ'ըսէր.

«Բ. Դուրը կը պարտաւորուի առանց աւելորդ յապագման իրականացնել այն բարենորոգումները, զորս տեղական պետքերը կը պահանջեն հայոց բնակած գաւառներուն մէջ, եւ անոնց ապահովութիւնը երաշխաւորել չերէզգնեբում եւ փերտերում դէմ: Այս նպատակով ձեռք առնուած միջոցները պարբերաբար պէտք է ծանուցանել տէրութեանց, որոնք անոնց գործադրութեան պէտք է հսկեն»:

Այսպիսով Հայաստանի բարենորոգումներու իրականացումը կը վստահուէր Թուրքիոյ, որ երբեք պիտի չգործադրէր զանոնք:

Ռուս պատուիրակ Կոմս Շուալով, նախ քան դաշինքի կնքումը, իրեն ներկայացող Հայ պատուիրակութեան յայտնած էր. «ՇԱՏ ԼԱԻ ԳԻՏԵՄ, ՈՐ ՌՈՒՍԵՐՈՒՆ ՄԵՇ ՄԱՍԸ ՀԱԿԱՌԱԿ Է ԵՒՐՈՊԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԵՒ ՆԱԽԱՄԵՇՄԱՐ ԿԸ ՀԱՄԱՐԷ, ՈՐ ԲԱՐԵՆՈՐՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՒԻՆ Բ. ԴՐԱՆ ՁԵՌՔՈՎ» (Մ. Չերազ, L'Arménie, Թիւ 54):

ՄՏԵՓԱՆ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՕՐԱԳԻՐԸ

(Գ Ա Ղ Ո Ի Ա Ծ Գ Ն Ե Ր)

1878ի Պերլինի վեհաժողովին համար Պոլսէն ղրկուած պատուիրակութեան մաս կը կազմէին Որիմեան Հայրիկ եւ Նար-Պէյ, իբրեւ խորհրդական ունենալով Մինաս Չերազը:

Պատուիրակութեան կազմը զօրացնելու եւ Որիմեան Հայրիկի ու Նար-Պէյի միջեւ ներդաշնակութիւն հաստատելու համար, Պարիսը Ներսէս Վարժապետեանի կողմէ Պերլին կը ղրկուի նաեւ Ստեփան Փափազեան:

Փափազեանի օրագրութիւնը կազմուած չէր իր ատենին հրատարակուելու համար, օրը օրին արձանագրուած նոթեր են բոլորովին անկողոծութեամբ եւ մեծ չափով կը նպաստեն հասկնալու համար Հայ պատուիրակներու ունեցած դժուարութիւնները Հայ Դատի լուծման մէջ, նոյն ատեն մեր պատուիրակներու ներքին տարակարծութիւնները: Նար-Պէյ կը նկատուէր ռուսերու կողմնակից, Նուպար փաշա առանձին ծրագիր մը ունէր՝ զոհանալով Հայ կամ եւրոպացի կուսակալի մը նշանակումով, իսկ Ներսէս Վարժապետեան եւ Որիմեան Հայրիկ կը փորձէին պահպանել Սան-Սթեֆանոյի դաշինքով ձեռք բերուած յանձնառութիւնները՝ իրական բարենորոգումներ մտցնելու համար Հայաստանի մէջ:

Փափազեանի օրագրութիւնը լոյս տեսած է առաջին անգամ Ա. Չօպանեանի «Անահիտ»ի Բ. Գ. Գ. եւ Թ. տարիներուն մէջ:

25 Մայիս 1878.— Երէկ մինչդեռ խորհուրդ կ'ըլլար Օտեան էֆէնտի տանը մէջ ազգին ներկայ խնդրոյն վրայ եւ աշխարհական ձեռնհաս անձի մըն ալ, որ հմուտ ըլլար նաեւ քաղաքականութեան, Եւրոպա զրկուելուն հարցը կը ներկայանար, յանկարծ Ն. զիս առաջաբեկ, որուն ձայնակցեցան Օտեան, Ներսէս պատրիարք եւ ապա Ս., ու անմիջապէս պատուիրակներին ինձ 24 ժամուան մէջ պատրաստուել ու աջ ոտուան շողեակուով մեկնել յՕտեսա եւ անկից ի Պերլին մասնաւոր հրահանգով:

Արդ այսօր որ է տօն Համբարձման կը ձգեմ Պոլիսը ժամը 3ին եւ «Ալեքոսանդր» շողեակուով կը մեկնիմ ի Սեւ Մովս:

(27 Մայիսին կը հասնի Օտեսա, իսկ 28ին՝ Աւստրիայէն անցնելով՝ Գերմանիա):

«Գերմանիա մշակեալ եւ գործարաններով լի երկիր մ'է. քաղաքակրթութիւնը հսկայ ըրնը զբաժնէ. ամէն կողմ տեսնուած գործունէութիւնը, զեղեցկութիւնը, դիւզացոց ծանրաբարոյութիւնը եւ կրթութիւնը կը ցուցնեն թէ մեծ ազգ մ'է զերմանացին եւ արժանի է որ այնպիսի ազգ մը Միջերկրականի ալ իւրի, ուրիշները հաստատակալու համար»:

1-13 Յունիս.— Երեկոյեան Խրիմեան եկաւ Չերազի եւ Տ. Պ. Ի Հեա. Խրիմեան երկրորդ յարկը իջաւ, իսկ մնացեալները երրորդ յարկը: Խրիմեան երկար բալթո ժը հազած է եւ երկար լիւթարկ դրած. սեզանին վրայ Խրիմեան ըսաւ. «Խրիմեան, Փափազեան, եւ Պերլին, շատ բան կը նշանակէ այս»: — Այո՛ ըրի, այս է որ պիտի զարմացնէ շատերը:

2-14 Յունիս.— Չերազի Հեա Կրկար տեսութիւն մ'ըրի առաւտեան. ապառապալի կենսակցութիւն մ'ունեցեր է Խրիմեանի Հեա, որ միշտ Պալտոյ Հրահանգներուն շնորհակալու եւ իր խելքին ու զիջ մ'ալ ուրիշներու անսալու եւ նոյնիսկ երբեմն ալ հեղաշալու՝ արմատազրուութիւն ցոյց կուտայ եղեր, որոնց դէմ Չերազ դառնապէս ինձ դանդաղեցաւ:

Յետոյ Խրիմեանի Հեա տեսնուեցայ երկարօրէն եւ նա բացարեց ինձ՝ ըրած ձեռնարկները, Պիտոնֆիլտի եւ Անգլիոյ Թազուհուրի շնորհայնանալուն պատճառները. առաջինին փորձեր է, բայց երկրորդին՝ ոչ (Չերազ պատմած էր ինձ՝ լըսելեայն պահելու պայմանով՝ թէ Պիտոնֆիլտէն ընդունելութիւն խնդրելու համար ինչ խնդրազէր մատուցեր է. Գ. Փ. ալ իր կողմանէ նոյնը ըրեր եւ Կ. Յակոբեան ալ միեւնոյնը, իբարու ետեւէ երեք հաս առանց մէկմէկու զիտութեան. այդ ամբարտաւան անձն ալ պատասխաներ է թէ Սոլզպէրիի Հեա տեսներ է, բաւական է):

— Երեկոյեան Նար-Պէյ հասաւ ի Պերլին: Գիշերը ժողով ըրինք եւ Նար-Պէյ լսեց Խրիմեանի եւ Մ...ի ձեռնարկութիւնները եւ պատմութիւնները. առաջարկեց մի նոր յիշատակազէր պատրաստել. ես ալ որպէսզի ի սկզբան ընդգրկութիւն ցոյց չտամ, իրեն յանձնել առաջարկեցի որ աշխատի այդ մասին:

(Ստ. Փափազեան Նար-Պէյի կը յայտնէ, թէ Չերազ միշտ ընկերանալու է Խրիմեանի, ջտնի որ անոր Թարգմանն է, նախ ան պէտք է խօսի եւ յետոյ՝ Նար-Պէյը):

— «Յետոյ դուրս ելնելու միջոցին Նար-Պէյ Չերազի սպանուցեր է ձգել երթալ. Չերազ ինձ լուր տուաւ. զինք հանդարտեցուցի, ըսելով թէ նա տեղ չ'երթար»:

5-17 Յուն.— Պալտէն Հեազէր եկաւ յանձնարարող թէ Պիտոնֆիլտի Հեա տեսնուելու միջոցը դանձնք եւ այս մասին զիմենք Մ. Խ. (Մեկտն Խան)ին. այցելինք նաեւ մերիներուն (Թուրք լիազոր պատուիրակներուն):

6-18 Յունիս.— Մ. Խ. (Մեկտն Խան) եկաւ. բաւական տեսնուեցանք, խոստացաւ օգնել. բայց զազանարար:

— Խրիմեան եւ Նար-Պէյ այցելեցին Պիլտովի եւ Սաստուլլահի:

(Ա. Օ. Ի եղբայրը Ստ. Փափազեանը խաղով ժը կը տանի որճարան ժը՝ ըսելով՝ Հիմա պիտի դամ: Յետոյ կ'երթայ պանդոկ եւ իր եղբոր կողմէ կ'ըսէ հայ պատուիրակներուն). «Թուրք դեսպանին ըսեն որ հայ վախ ժը կ'ուզեն Վիլյալթի ժը մէջ եւ անով գոհ կ'ըլլան, որով Թուրքի հայերն ալ հոն կուզան եւ աւելցուցեր են թէ Նուպարի կարծիքն ալ այս է»:

«Մերիները առանց խորը մտածելու Թուրքի պէս կրկնէր են այս խօսքերը, իսկ Սաստուլլահ պատասխաներ է. «Եթէ ուզածնիդ վալի մ'է, Հիմա կու-

տանք եւ ես դարձնէմ, սակայն բարեբախտարար մերիները չեն ժողոկոսը հին նշանաբաննիս եւ աւելցուցեր են, թէ եւրոպական երաշխաւորութիւնն ալ կ'ուզեն, որով վրայ Սաստուլլահ երեսը Թիւրքուցուցեր է»:

— Պիլտովի տեսակցութեան մէջ Նար-Պէյ օգիւրտարին խօսքը ըրեր է, զոր արդիւնեցինք արտասանել ուրիշ անգամ:

— Նար-Պէյ եւ Չերազ զացին քարթ ձգելու բոլոր լիազորաց, իսկ Պիտոնֆիլտի եւ Անդրասիին նամակ գրուեցաւ:

Մածկազիբ Հեազէրին մէջ նոր փոփոխութիւններ մացուցինք որ ապահով ըլլանք. վասն զի Հեազէրները զիտմամբ սխալ գալ սկսան որ շուտերիք:

— Թուրք դեսպանատան մէջ ըսեր են թէ Նար-Պէյ առաւական ժարգ, Խրիմեան Թուրքի ժարգ եւ Փափազեան եկած է դանձնք ժխցնել:

Խրիմեան կը կարծէ եղեր թէ մեր վիճակագրութիւնը ամբողջ Սալտմէնէն առած ենք. արդէն զիջ հաստաց ունէր. Հիմա ա'լ բոլորովին Թերահաւատ գործեր է: Դանազ է, վեհերոտ է. միանգամայն յուսահատ, մեծ դժուարութիւն կը կրճմ իրեն զործել տալու. եւ եթէ սպանալից ընթացք ժը շրոնուի իրեն հանդէպ՝ անկարելի է բան ժը ընել տալ. թէեւ զիս բնաւոր կ'անուանէ վեհական եւ կարուկ ընթացքս վրայ:

Խեղճ Չերազ այնքան տազնապիւր է որ ուրախութեան մէջ է այժմ եւ համարիս, ազատեցայ, կ'ըսէ, արմատաբէ եւ պատասխանատուութիւնէ:

— 8-20 Յուն.— Պալտէն կը Հեազէրին որ Թուրք դեսպանաց այլ եւս չերթանք եւ անուղակի կերպիւ ակնաշին ձգենք թէ պատրիարքը պիտի գայ:

— Պիտոնֆիլտէն Օսթրիի անուն անձը եկաւ. կը ցաւի որ շատ զբաղած ըլլալուն համար չ'ըրար հայ պատգամաւորները ընդունել. կ'ուզէ որ գրով հազորդութիւն իրեն խնդրենք:

— Այսօր վերջապէս քարտէսի որոշումը տունիք ժխմայնութեամբ: Փոքր սահմանը ընդունեցինք եւ աւելի համառօտեցինք. Տրապիզոն եւ Կիմիլիյաննէ զուրս ձգեցինք ու միայն Բիզանի ծովեկերքը առինք. միւս Բալթերը անոր համեմատ սրբազրեցինք ու յետոյ լիազորաց դիր ժը պատրաստեցինք:

— 9-21 Յունիս.— Պալտէն Հեազէր, որ կը պատուիրէ մտնալ Նուպարի անուն անգամ:

— Նուպարի մասին Հեազէրին վրայ բարկացաւ. Հայրիկ եւ յայտարարեց ինձ թէ զպատրիարք եւ զու պատասխանատու էք, այսուհետեւ ես չեմ պատասխանատու, ինչպէս կ'ուզէք, այնպէս ըրէք: Չերազ ներկայ էր:

10-22 Յունիս.— Ներկայացան կայսրօրդոյն որ մեզ պատուով ընդուններ է զիրենք համազրեխտով եւ պատուանշաններով:

— Նար-Պէյ իր անձին համար շուտարար Ծախելուն եւ ուսելիքի մասին խնայողութեամբ չ'երթալուն Խրիմեան դանդաղեցաւ: Խնդրեցի իրմէ որ այդ կարգի խնդիրներ չ'յարուցանէ եւ սա գործը վերջացնենք առանց կուռի եւ աղմուկի: Իբրեւ է թէ Նար-Պէյ չ'ափազանց կը Ծախել իր անձին պշտուեցին համար, սակայն Խրիմեան ալ այնքան անհոգ է այս մասին որ մէկուն չ'ափազանց զարգը միւսին պար-

զատրուութիւնը կը շարունակուի: Սակայն Երեւանի միաջը ուրիշ է. կ'ուզէ որ Նար-Պէյ
տակից երթայ կամ Հանուի:

— 14-26 Յունիս.— Նար-Պէյ եւ Պ. Եան սկսան շրջաբերականներ գրել:
Զերազ Վասիկիթոնէն լուր բերաւ թէ Հաւանքը է մեր բոլոր թղթերուն եւ ամենուն
ալ շուտ զրկել պատուիրէր է: Ասոր վրայ ամենքն ալ լսեցին. տեսնելու է Երեւանի
վիճակը. ինչ սկսու կարգադրութիւններու ելնել, այն ժամը որ Հայաստան թող մնայ
կ'ընէր ամէն ատեն:

— Զերազ տարաւ Պիլմարքի, Անտրասիի, Պիլոնաֆիլտի եւ Բորթիի նա-
մակաց ծրարները: Պիլմարքիին մէջ պատրիարքին դիրն ալ կար:

— Գիւրը Անտրասիոյ ղեկավարական երեկոյթին զացին: Երեկոյթին մէջ,
Մ., Հոսէնուհէ Երեւանի ժող Նուպարի Հոս գալը կարեւոր դատեր է. Զերազ Հար-
ցուց ինձ թէ ինչ պիտի ընենք եթէ զայ. Հանոր ալ զիւրին ճամբան կը գտնենք՝ ըսի
եւ որոշեցինք զրեւ է Պոլիս:

— Մ. Խորհուրդը տուաւ որ Պիլոնաֆիլտի առանձին նամակ մը գրուի,
որուն մէջ ոչ սլաւ տարք մը ըլլալնիս, ցարդ Ռուսիոյ նկատմամբ ընդդիմանալնիս յի-
շատակուի եւ ի վերջոյ սպասուալիքի ձեւ բան մ'ընել, Հաւանեցայ եւ սկսանք պատ-
րաստել:

— Օ. եկաւ կրկին. քանի մ'անգամ է որ կուզայ եւ ձօնել ու Հեռուէն
հրահանգներ կուտայ. Հայ վալիով մը բաւականանալ կը յորդորէ եւ աւելին պա-
հանելու համար հարկ եղած պաշտպանը լուսնանալնիս կը յայտնէ:

— 15-27 Յունիս.— Նուպարի յիշատակադիրը եկաւ:

— Հրաւէր եկաւ զահաժտանալէն ճաշի վաղը ժամը 5ին ի Բոցտամ:

— Հրաւէր եկաւ Անգլիոյ ղեկավարականներու երեկոյթի համար:

— Գարաթոտորի Երեւանի ըսեր է թէ Հայ վալի չըլլար, ինքն ալ հաւատա-
ցեր է եւ իբր կարեւոր բան կ'ուզէ Հեռագրել ի Պոլիս որ Հայ վալիով բաւականանալ
համարուին. վասնզի Նուպարի Խորհուրդն է որ Նուպար ինքը վալի ըլլայ տէ՛ ինչ
կ'ըլլայ ըլլայ Հայ ազգը. այս ժամին զրեցինք ի Պոլիս որ արթուն կենան եւ եթէ դուռը
այդ կարգի որոշում մ'ընէ դէմ ելնեն այս անձին որ կ'երեւի թէ Բարիզի թուրք
ղեկավարին եւ թերեւս այլոց Հեռ ալ Խորհրդակցութիւն ունի Հայոց խնդիրը թեթե-
ցնելու եւ պատահութիւնը կորսնցնել տալու համար:

(Ստ. Փափագեան վէճ կ'ունենայ Երեւանի Հեռ Նուպարի յիշատակադիրը
ներկայացնելու ժամին: Ստ. Փափագեան Զերազին պատրաստել կուտայ Հեռագիր մը
Նուպարին ուղղուած թէ ինչ ուշ մնացած է):

Նար-Պէյ ալ կը ջանայ որ պատգամաւորութիւնը առանձին իրեն սեփական-
նէ եւ Երեւանը մէկ կողմ նետէ:

Իսկ Երեւանը գողտնի եւ յայտնի (ինձ ըսելով) կը ջանայ Նար-Պէյը Հե-
ռացնել տակից. Վիստակար է, կ'ըսէ, մեր Խորհուրդները Ռուսաց կ'իմացնէ. դր-
կենք զինք Բարիզ կամ Լոնարաջ:

— Վնչ կ'ըսես, Հայրիկ, Պոլիսը ինչ ընենք:

Հարկ է այս երկուքը միացնել մէկ կողմէն, էնթրիկներուն վէճը առնել, եւ
միւս կողմանէ գործը հողալու է, աշխատելու է: Զերազ ու ես կ'աշխատենք. իրենց
ի՞նչ գործ ունին, բացի արգելք կամ դժուարութիւն հանելէ:

16-28 Յուն.— Երեւանի տխուր եւ լուռ է, Նար-Պէյ ալ տկար եմ ըսելով
պառկած է. բռնի հանցի զինքը որ Անգլիոյ ղեկավարական զրեքը գրէ:

Յանկարծ Միլիթոֆ զօրապետը եկաւ. ուրախութեամբ շրջապատեց ինչպէս:
զի՛ մը ժամբական խօսքերէ յետոյ խնդրեցինք որ բարեխօսէ մեր գործոյն համար
կորչալոֆի ժող: Վիտի դնամ, կը խօսեմ, ըսաւ, բայց ես զինուորական եմ, զուգ
գործեցէք եւ կառավարութեանց մէջ խորութիւն մի չէ՛ք. ամենէն օգուտ քաղել
ջանացէք. Յ զար է որ Հայ ազգին այսպիսի մի բարեպատեհ առիթ չէր պատահած,
օգուտ քաղելու է: Միքթ Փրանսիացիներն եւ մերթ Հայերէն կը խօսէր շատ սիրալիր
կերպիւ:

Յետոյ Նար-Պէյի Հեռ ներքին սենեակն առանձնացաւ ու ապա մեկնեցաւ:

— Ժամը Ծին Բոցտամ զացին:

Նար-Պէյ եւ Երեւանի վերադարձն ու նկարագրեցին ընդունելութիւնը:

Նար-Պէյ գանգատեցաւ թէ զինքը մարդու տեղ դնող չկայ. ամէն բան
Երեւանի անունով կուզայ եւ կ'երթայ. «Ըրածդ բնախնդրութիւն է ըսի, գուգ
մի էք եւ ոչ երկու. ուստի անուն պահանջելը տղայութիւն է»:

Երեւանի ծանրութիւնը Նար-Պէյի ժող եւ Նար-Պէյի բարեձեւութիւնը
Երեւանի ժող կը պակսին. այս երկու յատկութիւնները ներսէսին վրայ կան. եր-
նի թէ ան միայն եկած ըլլար եւ այս ոգեմաշ վիճակին մէջ չէինք գտնուիր. երկու-
քը իբրբու Հեռ, երկուքը մէկէն եւ առանձին ինձ Հեռ եւ Զերազի Հեռ Հաշտ պահել
պէտք է եւ գործին ալ ետեւէն ըլլալու է: Ամէն բան մենք պիտի ժամանեք, պատ-
րաստենք որ իրենք կ'մ ստորագրեն եւ կ'մ կառքը նստին եւ երթան: Պոլիս նա-
մակ զրեւու անգամ կը դժուարանան:

17-19 Յունիս.— Նար-Պէյ Լորիս Միլիթոֆին այցելութիւն տալով վերա-
դարձին ըսաւ թէ ուստական ղեկավարականներն շատ վերաուրուրեր են որ իրենց այցե-
լութեան չեն զացեր:

Դիտել տուի իրեն թէ Ռուսաց կողմէն, մանաւանդ Գորչալոֆի կողմանէ
մեր քարթին իբրեւ պատասխան ոչինչ եկաւ. ստի անգամ մըն ալ ըսած էի իրեն եւ
ինքը միշտ առանձին դուրս ելնելէն եւ վերադառնալէն յետոյ, Վէժովներն տեսայ,
Յուվանօֆը տեսայ՝ կ'ընէր եւ խնդրած էի միջոց գտնէ պատահողը հասկնալու. որ
մ'ալ պատասխան բերաւ թէ Ռուսերը զմեզ խնայելու համար Հեռուները կը պաշտին,
որպէսզի Անգլիոյ բարեկութիւնը չչարժեն. Նորհակալութեան արժանի քաղաքականու-
թիւն մը համարեցինք եւ լսեցինք, մինչդեռ այսօր հակառակը կը լսենք, ուստի ըսի
իրեն թէ կամ առաջին տեղեկութիւնները չի՛նձու էին եւ կամ այս:

Նար-Պէյ վրասցաւ եւ իբր արեւիկակողմաւորութիւնը յառաջ քշեց ի վկա-
յութիւն ճշմարտախօսութեան:

— Նար-Պէյ ուզեց զիւրքը ժամը 10ին Միլիթոֆի երթալ Հանկովէ եմ ըսե-

լով, շքազարդի, այլ սարկեցի որ Քրտնապան երեկոյթին երթայ Երբժեանի Հեռ. Երբժեան առաքելից որ Քրտնաբերէն չգիտնալուն իր երթալը ոգուա չուսի, Հետեւա-
բար մերժեց:

— Նար-Պէյ եւ Չերազ պոցին եւ ի՞նչ զեղեցիկ արդիւնք... Մ.ի միջոցաւ
Պրտնափրկի ներկայացնոք են, պայմանաւ որ թողաքական ներքի վրայ շոտուի, շատ
մարդավարութեամբ ընդունեն է. ներկայացնոք են նաեւ Անդրառի որ խոստացեր է
ընդունիլ զիրենք՝ երբ կարգը Հայոց խնդրոյն պայ:

— Չերազ սուսուր է թէ ուսու դեպքանաան բարթերը տեղը չեն դացած:
Ուրեմն, ըսի, վաղը անպատճառ անձամբ երթալ պէտք է, զի Պուխ երբեք Ռուսաց
զէմ փոքրիկ զգուսութիւն մը չուսի, ընդհակառակը զո՛ւ եւ չնորհակալ է:

— 18-80 Յունիս.— Օ. եկաւ. կ'ըսէ որ թղթերէն ասեք թուրք դեպքանաց.
ըսինք թէ արդիւնում ենք. կայսրուհին ունկնդրութիւն խնդրելու խորհուրդը տուաւ
եւ Չերազին մէկ քանի թերթի թղթակից ցոյց տուաւ: Այցելութեան պոցին դեպքա-
նաց, եւ ուսու դեպքանին Հեռ անսուսեր են:

— Մ...ի Հեռ առանձին անսուսեցայ, զքեր է Նուպարին որ դայ. Երբժ-
եան Նուպարին վախութեան համար կ'աշխատի եւ իր թողաքականութիւնն ալ հա-
կառու երեւան է:

19 Յունիս.— Ռուս թերթի մը թղթակիցը Հայոց զէմ գրուած յօդուածը
բերաւ: Չերազ եւ Նար-Պէյ շանացին համոզել զինքը եւ Հայաստանի կազմութիւնը
Քուսիոյ լահերուն հակառակը ըլլալը հերքել:

— «Տէպոսթի թղթակիցն ալ կ'ըսէ որ Ռուսերը նեղացած են Հայերուն եւ
ուսու թերթերը Հայոց զէմ կը գրեն:

Կա՛մ պատճառաբանութիւն է այս Ռուսաց կողմէն եւ կամ ձեւ. եթէ առա-
ջինն է՝ զէն եւ եթէ երկրորդը՝ նոյն ասան լաւ է մեզ համար:

Մենք ամէն հարաւորութիւն գործ զննելու ենք այս ուսու եւ անգլիական
ազգերուն մէջ չնկարծանալու. ոչ միայն ասելութիւնը եւ ոչ ալ միւսին նախանձը
զրգանելու ենք. մեռքի սակէ աշխատելու ենք երկուքն ալ առանձին իրենց շահուց մա-
սին համոզել եւ մին միւսին նախամեծար բռնելու միտում երբեք չունենալ:

Նար-Պէյ ի՞նչ լաւ գերմանով կապեր է Ռուսաց կողմը:

21 Յունիս.— Երբժեան կը հարցնէ թէ կանանազրին մէջ զօրքին խնդրը
ինչպէ՞ս նշանակած են:

«Իրմամբ դուրս եւ անորոշ ձգած են այդ մասը» պատասխանեցի:

Կ'ուզէ որ քրիթը ընէ եւ կանանազրիք թերի ու անյարմար ցոյց տայ.
«Մէկ գիշերուան մէջ գրուած է, կ'ըսէ, ուստի եւ աղէկ պատրաստուած չէ»:

«Ընդհակառակը, ըսի, 10-15 որ աշխատուած է վրան եւ ես 17 դիտողու-
թիւններ ունեցայ վրան, որոնց մէկ մասը ընդունեցին եւ մէկ մասն ալ չընդունեցին
եւ զիս համոզեցին»:

24 Յունիս.— Նար-Պէյ սիվիլ հազուած եւ բրէնտութեան նշանը որ առաջ
ալ կ'ըզը կը գնէր, հիմա մախը գրած, դուրս եկաւ:

(Ս. Փափազեան եւ Երբժեան կը խօսին վախութեան հայ թեմանուներու
մասին. վերջինը կը պաշտպանէ Նուպարը, «Յասեալը բանաստեղծ, գանգալ ու զթա-
սիրտ է», «Անբովելէն ալ էլխանական մարդ է» կ'ըսէ):

— 24 Յունիս.— Կարաբաղի այցելութեան պոցին մամը 11ին եւ մամը
4ին ալ կայսրուհուին ներկայացան:

— Եկան եւ միայն Տուվալութին յաղաքը են. Գարաթառորէն ալ Նար-Պէյ
ունկնդրութիւն խնդրեց է:

— 26 Յունիս.— Այցելութիւն ասին Գարաթառորի, Սասունաւոր, ժե-
մենիին եւ Տէլեանիին:

Երբժեան որ մերթ յաւատաւ եւ զիչ անգամ յաւատից է, այսօր ամենա-
մեծ ճշմարտութիւն մը խոստովանեցաւ. «Մարդ ինքեմբէն պէտք է աշխատի որ
փրկուի» ըսաւ:

— «Շատ ուշ մտցինք, ըսի, շատ պարզ բաներով մամանակ անցուցինք,
անձնակախութիւններով պարագայեանք, զէթ սակէ ետքը աշխատինք, բոլոր ուժերին
Հայաստան ամփոփենք. ամէնք պէտք է գիտենք Հան, եթէ կ'ուզենք զայն կենդանա-
ցնել, եւ այսօրուան աշխատութիւններուս նպատակն ալ Հայաստան տնայնոյս վի-
ճակի մը մէջ գնել է որ կարենայ զազթած Հայերուն կենաց, աշխատաւորեան, ինչքի
եւ պատուոյ ապահովութիւն առթել, որպէսզի Հան վերագաճան. միւս կողմէն՝ Եւ-
րոպայի մէջ մեծ ոյժ եւ գործունէութիւն ունենալու է, զի պէտք է որ Եւրոպայի
մէջ լաւ ճանչցուինք, ինչ որ ալ ըլլայ մեր մէջ եկած անհամամարտութիւնները,
մէջընդմիջ մատու են, դուրս հանելու չէ, եւ ազգային խնդրին առջև բոլորովին
մոռնալու է, ինչպէս որ այսօր ասոր մէկ զեղեցիկ օրինակը կուտանք. չորսերին ալ
իրարու անհամամարտութիւն արբեր էինք եւ ենք սակաւին ինչ ինչ անսովորութիւններով ու
հիմա միասին եկեր միարանք. եւ մէկ սիրտ եկած այս մեծ գործին համար կ'աշ-
խատինք»:

— Գիշերուան Անգլիոյ երեկոյթին երթալ չուզեց Երբժեան. պոցիցինք որ
երթայ, վասն զի վաղը Գոնկրէն Հայոց խնդրով պիտի գրառէր եւ իր ներկայութիւնը
հարկուար էր. կրկին մերժեց. սակայն բարեբախտաբար Մ. եկաւ որ հարկ գտանց
երթալ, եւ մեկնեցաւ. ասոր վրայ ելաւ հազուելու եւ երբ վար իջած պահուն ան-
ուս որ Նար-Պէյ յանք վերաբարձուր ու նշաններովը զարգարուած է, զարմացու եւ
զեւ չեմ երթար» ըսաւ, յանուն ազգին խնդրեցի որ զժուարտութիւն չհանէ. «Յանուն
ազգին կը յայտարարեմ որ չեմ երթար, պատասխանեց, իմ երթալու ոգուա չուսի,
այլ անոնց երկուքին ալ վնաս»:

Պը զգայի որ սրանեղութիւնն կ'ընէ այս ամէնը, եւ վաղը՝ եթէ գործը
չյաղաքի՝ մեռըր սակի փաստ մ'ունենալու համար ինքը իրոյ կուտայ երթալէ. բայց
կ'ուզէ որ մեր հանութեամբ ալ ըլլայ, որպէսզի վերը մեղքը մեր վրայ ձգէ. ինքեմբէ
չքեղ հանելու միջոցները այժմէն կը խորհի:

— Հայքեկ, ըսի, մենք ազգին առաջ պատասխանատու ենք, մեռքերնուս
եկանը պէտք է ընենք, ասիքը պէտք չէ փախցնենք, պէտք է որ երթաւ:

Մտիկ չբացաւ եւ սննեակը ելաւ, այն ասնն ես ալ Նար-Պէյի ըտի որ ինքն ալ չբթայ, եւ պատասխանատուն Խրիմեանը ծնայ:

Զերազ զանգատեցաւ այս ժամին, ես ալ պատասխանեցի իրեն թէ Խրիմեանն այս պատգամաւորութեան մէջ նշանակուելուն անշուշտ պատճառ մը կայ, հակառակ իրեն լեզուագետ լըլլալուն. արդ, որովհետեւ Հայոց խնդիրը նկատողութեան պիտի առնուի, հարկ է որ ինքն ալ ներկայ ըլլայ երկուներէ մէջ զտնուող այսպիսի գիշեր մը. Անգլիոյ երեկոյթին, այս մեծամիտ ազգին:

Յետոյ, հասնել տուինք Նար-Պէյի վերաբերուն եւ նշանները եւ Խրիմեանի վրայ խրկեցինք որ համոզէ եւ երթան:

Անոնց երթալէն յետոյ ես ու Տանտ նստանք եւ չըջարեական մը պատրաստեցինք որուն մէջ ըտինք. «Եթէ թուրքին մեզը պիտի թողուք զմեզ, շատ գէշ պիտի ըլլանք», եւ սպասեցինք վերադարձուն:

Վերադարձան շատ վնասած կերպիւ. Խրիմեան ներս մտնելուն ըսաւ. «Յո ի՞նչ պիտի, ա՛լ գի՛ր բան պէտք չի». Նար-Պէյ կ'ըսէ. «Զամէն բան լմացեր է, մեզք եզաւ մեր այսքան աշխատութեան»: Զերազ, որ փոքր բաներու մէջ անգամ կը յուսահատէր, լուռ ու մունջ կը մնար եւ բաւ մը չէր կրնար արտասանել:

Հագրե կրցայ ինքզինքս բռնել եւ զսպել, կարծես պիտի նուազէի. քանի մը վայրկեան յետոյ՝ սա բացատրութիւնը տուին ինձ:

Անգլիոյ բոլոր Ասիոյ պիտի պաշտպանէ. Կիպրոսը պիտի առնէ (Նար-Պէյի մեծ արամութիւնը հոս է եղեր. զի այս օրերս Լուսինեան ըլլալու յաջողութիւն է, բրէնս Տը Լիւսինեան... բըտէնկոթին վերի ծայրը կարծիր լաթ մը զնել սկսած էր եւ Կիպրոսի մէջ ունեցած ժառանգութիւնը պահանջելու ետեւէ ըլլալուն — որուն համար օրը ութ ասոց նամակ կը գրէր — հիմա անգլիացուց անցնելուն վրայ տխուր, ինքզինք կորսնցուցեր է) եւ Հայաստանի խօսքն անգամ չկայ: Քարաթուրքի ըսեր է որ թուրքը պիտի ընէ պէտք եղած բարեկարգութիւնները, բայց կանխաւ իմացնելով Եւրոպայի: Ուրիշ կողմանէ ալ իմացեր են որ Սալզպերի Փորմիւլ մը պիտի ներկայացնէ վաղը Քոնկրէնի Հայոց խնդրոյն համար. Վասիլիթոն ալ ըսեր է որ վաղը գուցէ ներկայանայ մեր խնդիրը:

Շատ մը հեռագրերնք պատրաստեցինք եւ մանրամասնաբար իմացուցինք ի Պոլիս:

27 Յունիս.— Պոլսէն հեռագիր ստացանք որ Քարաթուրքիին մեզ ըսածը կը հաստատէր եւ Վասիլիթոնին եւ Սալզպերիին դիմել կը պատուիրէր: Վասիլիթոնին դիմելու որոշում ունեցինք, լուռ մը գրեցինք, եւ Զերազ տարաւ անձամբ առաւ նաեւ մեր Փորմիւլը, յետոյ Սալզպերիին գրեցինք եւ միասին տարինք, սակայն Սալզպերիին Քոնկրէնի քացած ըլլալուն՝ Զերազ անմիջապէս իխան Պիզմարքի տունը տարաւ եւ դեռ Քոնկրէն սկսած ըլլալուն՝ յանձնեց ի Սալզպերիին ծառային որ ներս տարեր է:

Սա ու Զերազ երկու երեք անգամներ ժամախոս եւ յուզուած՝ սկսանք պաշտել Քոնկրէնի տանը առաջ, խնդրեցինք Աստուծոյն որ ողորմի բերաւոր անձեզ զս-

հերու արևելին եւ միլիոնաւոր հայերու ազագակին եւ ապա աչքերնիս արցունքով լի տուն դարձանք:

28 Յունիս.— Այս առաւուս Խրիմեանի հետ առանձին տեսնուեցանք մեր խնդրոյն վրայ. երկուքեւս ալ կարծեքք սա կէտին յանգեցաւ թէ՛ իբրց պարզաները, ժանաւանդ եւրոպական մեծ անբութեանց շահերը արգիւղ եղան մեր խնդրոյն ամբողջ կատարմանը. սակայն Սան-Սթեֆանոյի դաշնագրութիւնը առաջին քայլն էր, Քոնկրէնի որոշումը երկրորդ քայլը պիտի ըլլար. վհասելու չէ, այլ աշխատելու է որ նպատակնուս հասնինք:

Քերեւս այս նպատակին շատ շուտ հասնինք, զի միջոցներ կրնան մեզ օգնել, Քոնկրէնի թուրքիոյ Քոլուց Հայաստանի բարեկարգութիւնը, ուստի թուրքին պէտք է պահանջենք, ժանաւանդ նա զմեզ դո՛ւ ընելու պարտաւոր է եւ հոգ պիտի տանի եւ միշտ համար պիտի տայ Եւրոպայի որուն հսկողութեան տակ կը դառնանք:

...— Պոլսէն երկար հեռագիր մը եկաւ որ կը յանձնարարէ բողոքել՝ Քոնկրէնի մեր խնդիրը նկատողութեան շտանելուն համար:

— Երեկոյթին՝ Մ. Խ. (Մեկըն Խան) եկաւ եւ ստոյգ տեղեկութիւններ հաղորդեց թէ Անգլիոյ զՏանգիտան իր պաշտպանութեան տակ առած է, թէ դո՛ւ պէտք է ըլլալ, եւ արդէն շատ լաւ եղաւ, որ Պոլսոյ հրահանգին՝ բողոքին՝ անպէտ ըլլալու հասկացուց: Ասկէ զատ հաստատեց այն մասը թէ Գուլը պարբերաբար համար պիտի տայ կառավարութիւններուն, եւայլն:

Մանրամասն հեռագրեցինք Պոլիս եւ բողոք յետաձգելին ալ ըտինք:

— Գիշերը Աւստրիոյ երեկոյթին քացին Նար-Պէյ եւ Զերազ եւ վերադարձան պատմեցին թէ Օթթոմ Բընըլ հարցուցեր է թէ արդեօք պատգամաւորութիւնը միտք ունի՞ ի Նոտոն վերահանդիպել: «Կը յուսանք ըսեր են մերինները:

— Քոնկրէնի արդեւեքին վրայ երկուշաբթիին ի վեր շատ յուզեալ ենք, տխուր եւ ժառնգ. գիտէինք թէ մեր ուզածը պիտի ըլլար, զի Եւրոպացուց մեծ շահերը մեզի տեղ չթողուցին եւ երես չունեցան մեզի համար ալ բաժին հանել: Բայց անհնար կ'ըլլայ միտթարուիլ կարծելով թէ կարելու ու պատահ առիթ մը կորուսինք եւ եթէ թէ մը խիղճ ունենային եւրոպացիք, թէ մը իրենցը հազարով զմեզ ալ կրնային հոգալ:

Խրիմեան անելի ուրախ երեւցաւ այսօր եւ ուզեց մեզ ալ սփոփել: «Անգլիոյ պաշտպանութիւնը լաւ հասաւ, ըսաւ, զքեզ եւ զմեզ պրծեց պատասխանատուութենէ»:

— Նար-Պէյ կ'ուզէ ինք երթալ Մանչեսթըր եւ կը խնդրէ ինձմէ որ իրեն օգնեմ:

29 Յունիս.— Այսօր ալ յուզեալ վիճակ մը եւ անհանգիստ սիրտ մ'ունեցայ Քոնկրէնի արդեւեքին վրայ: Զերազի հետ կ'ուն խօսեցայ, որ այսքան տեսակցութիւններ ունենալէ ետք, այսօր միջոց չունի տեղեկութիւններ առնելու:

— Մ. Խ. յորդորեց զմեզ որ գ.հ ըլլանք Քոնկրէնի որոշումէն եւ գի՛ր գրեցինք սա Պիզմարքիւս ուրախութեան եւ շնորհակալութեան համար: Զերազ ընգ-

գիմացու առարկելով թէ Պուլիս բողոքել պատուիրեց, եւ առաջարկեց հարցնել Պատրիարքին:

... 30 Յունիս.— Կրկին հեռագիր Պուլիսէն, որ կը պատուիրէ բողոքել:

— Օ. եկաւ եւ յանձնելու շնորհը ըրաւ մեզ Քոնկրէնի մեր խնդրոյն նկատմամբ առած որոշման բնագիրը, զոր երկու օրէ ի վեր զբաղանքն մէջ պահած է եզեր, ինչ փութիկս մարդ...:

— Պուլոյ հեռագրին վրայ՝ Զերազ գնաց առ Վատինկթոն որ զարձակ չէրցաւ ընդունիլ: Ժշտ ամենքն ալ երեսնին կը պահեն մենէ, դուցէ ամշնաշուն, մեր քովն ալ լա՛ւ պնդերեսութիւն կայ: Խրիմեանի համար ասոնք պարապ բաներ են եզեր: Կանուխէն ինչ ըրաւ: Ամօթ որ Պուլիս մեզ կ'իմացնէ թէ Հայաստան բառը չկայ Քոնկրէի որոշման մէջ, եւ մենք միջոց չենք ունեցած անոնցմէ առաջ իմանալու: Թփոս'ս որ իմ լեզուագիտութիւնս զօրաւոր չէր որ զիմուսներուն մէջ եւ ալ դանուկի, որով դուցէ եւ կը յաջողէի լուսաբոյն յարարութիւններ ունենալ եւ տեղեկութիւններ ստանալ:

— Նամակ գրեցինք առ Վատինկթոն Հայաստան բառը դնելու եւ մեր կանոնագիրը Դրան յանձնարարելու մասին, եւ խնդրեցինք որ դոնէ այս մասին հոյ աստի: Իրաւ է թէ օգուտ չունի, սակայն մենք պէտք է մեր պարտականութիւնը կատարենք:

— Այսօրուան հեռագրիներուն վրայ՝ աւելի տխուր եմ: Նար-Պէյ հրահաղ, Խրիմեան իր թէ՛քը կը գարնէ, Զերազ միայն կը ճմլի, զի գիտէ ու կը զգայ:

— ԳրեանՖիլիտի գրուելիք գիրը եւ թողուցաւ:

— Օ. եկաւ եւ կտոր-բրդուծ խօսքեր սկսաւ ընել, ճես չըսի՞ մի քեզի, մենք պաշտպան չունինք, ասանկ կ'ըլլայ, ասանկ եղաւ, ցաւալի՛ վիճակ...:

1-18 Յուլիս.— Զերազի հետ զացինք ցրուել բողոքագիրը առաջուց: Երկու ժամ վերջը վերջին Քոնկրէն եղաւ:

— Կէսօրէ յետոյ ժամը Յին կայսերական պալատ ճաշի՛ հրահրուեցան Խրիմեան եւ Նար-Պէյ:

— Պուլիս սասցանք երկու հեռագիր, որոց միով — Թուանշանագրեալ — կը պատուիրէին բողոքելն մէյմէկ օրինակ անպիսկան երեսելի անձանց զրկել եւ միւսով կը պատուիրեն շնորհակալ ըլլալ Պիւլոյին եւ Պուլիս դառնալ:

— Մ. Խ. (Մելքոն Խան)ի զացինք մեաք բարովի, ըսի բողոքին: «Հարկ չէր, ըսաւ, դուք անկախութիւն կ'ուզէիք թէ բարեկարգութիւն եւ յառաջդիմութիւն: ասոնք հիմա ապահովեալ են: շատ աղէկ եղաւ, շատ երջանիկ պիտի ըլլայ աղղը, Անգլիոյ պաշտպանութիւնէն շատ օգուտ պիտի քաղէ, եւ մեր ուզածը Անգլիոյն պիտի ստանաք, բայց պէտք է զիմէք անոր, առաջին անգամ որ զիմէք՝ շատ լաւ կ'ընէք: Պուլիս եթէ երթաք, ըսէք ասոնք իրենց որ չվարանին Անգլիոյ համակրութիւնը զբաւելի:

3-15 Յուլիս.— Խրիմեան թթուած է այսօր, եւ կտակած յայտնեց որ շատ

բան մեր ուզածին զոյնովը պիտի ներկայացնենք ի Պուլիս: Հասկայն, ըսաւ, ես մեր ամէն խօսքերը յօշու կը ցնդեմ:

4-16 Յուլիս.— Մեկնելու խնդրոյն վրայ շատ խօսելէ յետոյ, ես ի Լոնտրոն մեկնելու պատրաստուեցայ, Նար-Պէյ ի Փարիզ, Խրիմեան Զերազի հետ Պերլին պիտի մնար մինչեւ հինգշաբթի երեկոյ, սպասելու համար հեռագրին, որով եթէ զինքը Լոնտրոն կանչէ՞՛ համարայ պիտի ելնէր, եթէ ոչ Լայբցիկի համարով վիեննա եւ անկից Ռուսմանիս պիտի անցնէր:

Նար-Պէյ ալ ի Փարիզ իմ հեռագրին պիտի սպասէր:

Երեկոյին Պերլինէն մեկնեցայ ի Լոնտոն՝ նոյն տեղի ազգայինները տեսնելու եւ Անգլիոյ հետ բռնելիք քաղաքականութեան եւ զրկուելիք նոր պատգամաւորութեան վրայ խորհրդակցելու: Զերազ ալ ուժ տուաւ այս գաղափարին:

7-19 Յուլիս.— Ս., Ս., Ս. եւ Է., հաւաքուեցանք: պատմեցի Պերլինի մէջ ըրածներս: Ա. ի եւ Ս. ի հետ վիճարանեցանք թէ բուլղոզի՞ն թէ պայմանաւ պէտք է յանձնուելիք Անգլիոյ, յետոյ Է. եւս միացաւ վիճարանութեան. եւ համաձայնեցանք սա բանաձեւով, ըսել Անգլիոյ թէ՛ «Հայերը զոհ ըրէ՛, եւ քեզ պիտի պաշտեն՝ եթէ բուլղոզին քուկդ ընես եւ գոհ ընես»:

Ս. հարցուց թէ՛ եթէ բան իմոյզ գոն կ'ըլլա՞նք, այն ասան պատասխանեցի: ճիշդագիտութեամբ, բայց պայմանաւ որ եղանակը Պուլիս տայ:

8-20 Յուլիս.— Հեռագրեցի Խրիմեանի որ Զերազի հետ Լոնտրոն դայ, ներկայութիւնը կարեւոր է:

8-21 Յուլիս.— Է. ի հետ խորհրդակցեցայ մեր բռնելիք եւ բռնած ընթացքը վրայ, երկար բանակցութենէ յետոյ եղած արդիւնքը դո՛ւսացուցի զտաւ: «Հայաստանի բարեկարգութիւնը առաջին խնդիրն էր, ըսաւ, յետոյ կուզայ ինքնավարութիւնը: Բայց ամէն բանէ առաջ ստակ վասակելու է հ: զուակնիս Անգլիոյ դրութեամբ կըթելու ենք: Երբ Պուլիս երթաք, ըսէք որ անգլիներէն լեզուն մացնեն վարժարաններուն մէջ, բանաստեղծական բաները վերցնել եւ իրական ու զորքի մարդիկ պատրաստեն»: Ընդունեց նոր պատգամաւորութիւն մը զրկելու եւ նոր ընկերութիւն մը կազմելու գաղափարը եւ յետոյ հետեւեալ կէտերը որոշեցինք:

- 1.— Անգլիոյ հետ լաւ վարուելու եւ անոր համակրութիւնը շահել՝ անկէ խնդրելով որ գմեղ գոհ ընէ, եւն.:
- 2.— Նոր պատգամաւորութիւն մը գայ ի Լոնտոն, եւ այս մասին յարժար դատուեցաւ Մ. (Գ) որ պէտք է նախ եպիսկոպոսանայ եւ հասնի խորհրդարանի բացուելուն:
- 3.— Ղեկնոյ վարդապետ Մանչեսթըր պահել:
- 4.— Գրել որ Տ. Մ. եւ Գար. Սրուանմանեց անգլիներէն սորվին:
- 5.— Գաղթականաց ընկերութիւն մը կազմել ի Պուլիս, պանդուխտները իրենց երկիրը զրկելու եւ Փոքր Ասիոյ ժողովուրդը կեդրոնացնել Կիլիկիոյ մէջ:

(Գ) Մեկնելու Մուրաբան:

- 6.— Վիճակագրական աշխատութիւնները շարունակել եւ ճշգրիտ ծարձա-
ւամար մ'ունենալ որքան կարելի է:
- 7.— Յաւերնիս նախ Անդլիոյ եւ սպա Սերպայի յայտնել:
- 8.— Գուստնեբու մէջ կրօնքի խնդիր չհանել:
- 9.— Դաստիարակութեան հոգ տանել ու անդլիերէն լեզուն մտցնել բոլոր
վարժարաններու մէջ:
- 10.— Արդի գոմիթէն շարունակել եւ Անդլիոյ գոմիթէին հետ յարաբերութեան
գնել:
- 11-23 Յուլիս.— Փարիզ հասալ, տեսնուցալ Նար-Պէյի հետ որ Պուլէն
նամակ տակ է Գասկանանի գործը կարգադրելու համար: Ինքն ալ հետագրով հրա-
ման խնդրեր է փեթրպուրդ երթալու եւ խնդիրը վերջացնելու:
- 17-29 Յուլիս.— Փարիզէն կը մեկնիմ Վիեննա եւ անկից Ռուսմանիոյ ճամ-
բով 30 Յուլիսին կը հասնիմ ի Պուլիս:

Ստեփան Փափագեան

ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՑԻ ԾՐԱԿԻՐԸ

Գերլինի Վեհաժողովին անշուքեամբ յաճախ յիշատակուած է Նուպար Փաշայի ծրագիրը, զոր նկատի չառաւ հայ պատուիրա-
կութիւնը:

Հետագային Արշակ Զօպանեան, Մինաս Զերագի հետ ունեցած վիճարանութիւններու ընթացքին, քանիցս մեղադրեց պատուիրակու-
թիւնը այդ անտեսումին համար: Խրիմեան Հայրիկ կողմնակից էր Նուպար Փաշային եւ դժգոհ՝ Ներսէս Գատրիարք վարժապետեան-
Օսեան խմբակէն:

Կը կարծուի, թէ անդլիացիներու կողմէ ներշնչուած էր Նու-
պարի ծրագիրը, որ շատ համեստ կը նկատուէր իր պահանջներուն մէջ:

Արշակ Զօպանեանի եւ տարիչներու կարծիքով՝ եթէ Գերլինի
մէջ ներկայացուէր Նուպարի ծրագիրը, աւելի գործնական արդիւնքի մը
պիտի հասնէր բարենորոգումներու հարցը: «Անահիտ» 1899 Մարտ-
Ապրիլի թիւին մէջ լոյս տեսած է այդ ծրագիրը, զոր կուտանք ստորեւ
(Հայ պատուիրակութեան ներկայացուցած ծրագիրը հրատարակած
ենք «Հայաստան եւ Հայ Դատը — Վաւերագրեր» հատորին մէջ, էջ 86):

Եւրոպական պետութիւնները, փափաքելով որ Արեւելքի մէջ տեւականու-
թեան հանգամանք ունեցող իրերու վիճակ մը հաստատուի, իրենց ուշադրութիւնը
գարձուցին, ինչպէս Պալքանեան նահանգներուն, Նոյնպէս եւ Փոքր Ասիոյ այն մասին
վրայ որ օրբանն է հայ ցեղին: Բ. Դուռը ինքն իսկ հարկը զգացած էր այդ ճար-
տարագրով, աշխատասէր եւ ուշիմ ազգութիւնը չգնչուէ այն ողորմելի վիճակին
մէջ ուր կը գտնուի, հնուս Եւրոպայէն եւ անոր ներկայացուցիչներէն: Անօգուտ է
խօսիլ հոս իրենց հայրենիքին մէջ մնացող հայերուն կացութեան վրայ. անօգուտ
մանաւանդ անոնց այդ կացութիւնը բաղդատել իրենց կովկասի մէկ միլիոն ազգա-
կիցներուն հետ: Բ. Դուռը, քանի որ Սան-Սթեֆանոյի դաշնագրին մէջ յանձն առած
է բարելաւութիւններ մտցնել հայոց վարչութեան մէջ. քանի որ այդ ժողովուրդը
քիւրդերուն դժմ պաշտպանելու ստիպողականութիւնը ընդունած է, հաստատած եւ
խոստովանած է ուրեմն այն յոռի վարչութիւնը որուն տակ հայերը զը հեծնն եւ այն
լքեալ վիճակը ուր կը գտնուին քիւրս ցեղերուն հանդէպ:

Հայերը քաղաքական գոյութեան մը, քաղաքական անկախութեան մը աչք
չունին. քաղաքային (civil) ազատութիւններ կ'ուզեն որոնք երաշխաւորեն իրենց ազա-
նովութիւնը, իրենց ինչքերը, իրենց կիներուն եւ աղջիկներուն պատիւը, իրենց կեան-
քի իրաւունքը՝ վերջապէս:

Եթէ այս քաղաքային ազատութիւնները, որոնք 1840էն ի վեր հանդիսա-
ւորապէս խոստացուած են Կիւլշանէի Հաթթի Շերիֆին մէջ եւ յաջորդող Հաթթերով
չեղուած են, իրականապէս գործադրուած ըլլալին, այդ աշխատասէր հայ ցեղը,
չատ տարիներէ ի վեր իր երկրին կերպարանքը փոխած կ'ըլլար: Երեսանի ուսու-
հայկական նահանգին ժողովուրդը երեսուն տարուան ընթացքին մէջ կրկնա-
պատկուած է:

Հայ ազգը կը խոստովանի Ն. Վ. Սուլթանին եւ անոր մեծանուն նա-
խորդներուն վեհանձն դիտաւորութիւնները: Եթէ այդ դիտաւորութիւնները ապար-
դիւն մնացած են, եթէ հրովարտակուած բարենորոգումները մեռած տառի մեւը պա-
հած են, պատճառը այն է որ անոնց գործածութիւնը յանձնուած է կարգ մը պաշ-
տօնեաներու որոնք անոնց նշանակութիւնը չէին հասկնար, որոնք անոնց հակառակ
էին կրօնական համոզումներով կամ անձնական շահի նկատումներով:

Ինչ բնութիւն ալ որ ունենան՝ այն բարենորոգումները զոր պետութիւնները
հարկաւոր պիտի նկատեն շնորհել այդ ուշիմ ցեղին որ Արեւելքի եւ Արեւմուտքի
միջեւ բնական միջնորդն է, առաջին նկատողութիւնը զոր պէտք չէ աչքէ հեռացնել
եւ առանց որուն որեւէ բարենորոգում ընդունայն պիտի ըլլայ, ընտրութիւնն է այն
անձերուն, այն պաշտօնեաներուն որոնք զայն իրադրութիւնը պիտի կոչուին: Արդ,
որովհետեւ պաշտօնեաները միջեւ հիմա ընտրուած են մասնաւոր ու առանձնա-
շնորհուած դասակարգի մը մէջէն, նոր հաստատութեանց համար յաջողութեան էական

պայմանը այն է որ անուանուի ընդհանուր կառավարիչ ժը, պաշտօնականներու ուրիշ կարգէ ժը ընտրուած, այսինքն քրիստոնեաններու մէջէ, եւ քանի որ խնդիրը Հայաստանի վրայ է, Ընդհանուր կառավարիչը հայ ժը ըլլայ:

Ինչ ալ ըլլայ այդ բարձր պաշտօնատարին ազգութիւնը կամ բարոյականը, աւելորդ է կարծել թէ անիկա պիտի կարենայ այդ դժուարին գործին ձեռք գտրնել, եթէ ամէն օր ինքզինքը ենթակայ զգայ յանկարծական պաշտօնանկութեան ժը: Ն. Վ. Սուլթանը, իր գահակալութեան ճառին մէջ, իր կայսրութեան շարիճներուն աղբիւրներէն մէկը համարած էր այն դիւրութիւնը որով պաշտօնականները կ'անուանուին կամ կը հրաժարեցուին: Ն. Կ. Վեհափառութիւնը, իր հպատակներուն բարոյն համար, կրնար շնորհել իր հայկական նահանգներուն՝ կառավարիչ ժը որ ապահով ըլլայ վեց կամ եօթը տարուան շրջանի ժը համար իր պաշտօնին գլուխն ըլլալու:

Ընդհանուր կառավարիչ ժը ընտրութիւնը որեւէ բարենորոգման կական պայմանը ըլլալով, Պետութիւնները, հիմնուելով Սան-Սթեֆանոյի սկզբնական դաշնագրին վրայ (Ժ Զ. յօդուած), հետեւաբար առանց զպշխու Ն. Կ. Վեհափառութեան դերագոյն հեղինակութեանը, կրնան իրենց հասանութեամբ գործակցել այդ ընտրութեանը, ինչպէս որ կ'ըլլայ Լիբանանի կառավարիչն ընտրութեան համար, եւ այսպէսով այդ ընտրութիւնը պաշարել ամէն բազմալի երաշխաւորութիւններով:

Ընդհանուր կառավարիչը, այս պայմաններուն մէջ ընտրուած եւ Ն. Վ. Սուլթանէն պաշտօն ստացած՝ գործադրութեանն ու ընթացավարութեանը հսկելու այն բարենորոգումներուն զոր Ն. Վեհափառութիւնը պիտի հրովարտակէ, պէտք է որ պաշտօնապէս ստանայ հարկաւոր հեղինակութիւնը՝ այդ զորքը կատարելու համար իր պատասխանատուութեան սակ:

Բայց որո՞նք են այդ բարենորոգումներն ու բարեփոխումները: Հայ ազգը կը կարծէ թէ կարելի պիտի ըլլայ դիւրաւ զանոնք սահմանել, երբ շարիճին աղբիւրները մէկիկ մէկիկ մատնանիչ ըլլան:

Առաջինը, յայտնապէս քիւրտերուն արշաւանքներուն ու աւաբառութեանց խնդիրն է: Պէտք է զուգել, սանձել անոնց ջոկերը: Մինչև ցարդ այդ բանը չեն բրածու եւ ստիպոյն ունիլ աւելի դիւրին էր զօրագունդերու հրամանատարներուն համար. կամ միջոցները պահած են եւ կամ թէ կամքը: Ժողովրդին ապահովութիւնը ամէն վճարանքէ զերծ կացուցանելու համար, ստիպողական եւ իմաստօրէն հետադառն զորք ժը չէ՞ իրեն յանձնել ինքզինքը պաշտպանելու հոգը: Քրիստոնեայ թէ՛ մահմետական, իրենց առաջին պէտքը ապահովութիւնը չէ՞ միթէ:

Ընդհանուր կառավարիչը իշխանութիւնը պիտի ունենար ուրեմն պահակազօրքի մարմին ժը կազմակերպելու, որուն պաշտօնը պիտի ըլլար հսկողութիւն ընել եւ հանրային հանդարտութեան ամէն խանդարիչներուն դէմ երկիրը ապահովել: Այդ մարմինը պիտի բազմանար՝ առանց խորութեան, մահմետականներէ եւ քրիստոնեաներէ, որոնք առաջուց դիւրաւ սահմանելի գրութեան Վը համեմատ պիտի ընտրուէին: Այդ մարմնոյն պետերուն անուանումը ընդհանուր կառավարիչն կախում պիտի ունենար, որովհետեւ ան է Ն. Վ. Սուլթանին առիւ պատասխանատու ծա-

նակին բարեկարգութեանն ու անդորրութեանը: Մահմետական եւ քրիստոնեայ տարբերուն միացումը կազմակերպելու մարմնոյ ժը մէջ՝ պաշտպանութեանն ու ապահովութեան միեւնոյն շահուն համար, բնութիւնը կ'ունենար երկու տարբեր իրարու ժակցելու: Մերձեցում որ Հայաստանի մէջ շատ աւելի դիւրին է, որովհետեւ գրեական ժողովուրդը, թէ՛ համանման ծագմանը, թէ՛ հաւատարմապէս կրթուած թշուառութեան պատճառով, միեւնոյն պէտքերը ունի, հետեւաբար միեւնոյն բազմանքները:

Առկից զատ, կայսերական դուռներու հրամանատարները, հանրային ապահովութեան վերաբերելու ամէն տեսակ խնդիրներու համար, պէտք էր որ հնազանդէին Ընդհանուր կառավարիչն եւ ոստիկանական մարմնոյն օգնէին իր գործը զբուրելու հանելու համար:

Նիւթական ապահովութիւնը այսպէս հաստատուելէ յետոյ, հարկաւոր պիտի ըլլար զբաղել գործառնութեանց ապահովութեամբ, պաշտօնականներու եւ ժողովրդին միջեւ յարաբերութեանց ապահովութեամբ, այսինքն Արշարութեան կազմակերպութեամբ: Արշարութեւ, առանց դատարանական կազմակերպութեան, գործառնութեանց համար ապահովութիւն չկայ պաշտօնականներուն սովորութեանց եւ զործելու կրտուրակ եղանակներուն դէմ, հետեւաբար երաշխաւորութիւն չկայ բարենորոգմանց եւ բարեփոխմանց տեսակներուն եւ լրջութեան համար: Դատերը կը տեսնուին ալժմ վարչական Մեծիկներուն կողմէ որոնց անդամները, հարկահաւաքները կամ ատոր նման մարդիկ են, վարչութեան գործերուն ուղղակի կամ անուղղակի կերպով խառնուած, եւ սակից զատ, Դատավարութեան Օրինադիրքին եւ օրէնքներուն նախական տարբերն անգամ հասկնալու անկարող. այս կերպով, այդ Օրինադիրքը իրենց ձեռքը գործիք ժը կը դառնայ օրինական կամայականութեան, որ կը կիրարկուի ժողովրդի ժը վրայ որ անոնցմէ աւելի անկարող է զայն հասկնալու:

Շատ փափուկ զորք ժը պիտի ըլլար որոշել առաջուց թէ ի՞նչ բնութիւն պէտք է ունենայ դատարանական կազմակերպութիւնը զոր պատշաճ է հաստատել ժողովրդին քաղաքային եւ առեւտրական յարաբերութիւնները կանոնաւորելու համար: Այդ կազմակերպութիւնը որչափ ապահովութեամբ պաշարուի՝ քիչ է, վստիպան է րովանդակ վարչութեան կանոնաւորիչը: Բայց ինչ որ առաջուց կարելի է հաստատուել, այն է որ հիմնուելիք դատարանները, պէտք չէ որ հիմնական Մեծիկներուն պէս վարչութեան գործերուն մէջ ոչ մէկ կերպով մասնակցութիւն ունենան: Ընդհանուր կառավարիչը պէտք է որ ուսումնասիրել խնդիրը եւ զայն ուսումնասիրութեանը յանձնել ձեռնհաս անձերու յանձնատուրով ժը եւ այդ ուսումնասիրութեան արդիւնքը ներկայացնել անոր գործադրութիւնը հրամանագրելու պաշտօն ունեցող իշխանութեան: Այս կերպով, կարելի է վստահ ըլլալ թէ արդարութեան կազմակերպութիւնը պիտի համապատասխանէ, որչափ որ հնարաւոր է, երկրին մտաւորական եւ ընկերային վիճակին: Որովհետեւ արդարութիւնը պիտի ծառայէ իր վարչութեան սանձիչ ու վերատուգիչ: Ուսումնասիրութեանց յանձնատուրով պիտի որոշէ զատական իշխանութեան ձեռնհասութեան սահմանները եւ սա կէտը մանաւանդ թէ

պատարանները ո՛ր ստիճան կարգու-թիւն պիտի ունենան դասելու պաշտօնեաները՝
իրենց պաշտօնավարութեանց մէջ գործած զեղծումներուն համար:

Ընդհանուր կառավարիչը պէտք է որ արտօնութիւն ունենայ օտարազգի
տարրը իրեն օգնութեան կանչելու Արդարութեան կազմակերպութեան այդ այնքան
հազան գործին մէջ: Ինչը պիտի որոշէ թէ ինչ չափով պիտի ընէ այդ բանը: Հայե-
րը կը մտածեն որ եթէ այդ տարրը՝ որ է նկարագրի անկախութիւն եւ դիտութիւն,
՛նէն որեւէ չափով, Բարձրագոյն Ատեանի մը կազմութեան մէջ, երկրին ընկերա-
կան վիճակը չի հակառակի որ դատարաններուն ձեռնհասութիւնը տարածուի պաշ-
տօնեաներուն վրայ՝ առնց գործած զեղծումներուն համար, եւ թէ ընդհակառակը
ստով այդ ընկերական վիճակը պիտի զարգանայ այս վերաստուգմամբ:

Ասկից զատ կը մտածեն թէ բարենորոգմանց լուրջ իրազորումը այդ ըն-
դարձակուած Արդարութեան մէջ պիտի գտնէ իր ճշմարիտ հիմն ու նեցուկը:

Անգամ մը որ ժողովուրդին ապահովութիւնը երաշխաւորուի Պահակա-
գօրքի (gendarmarie) եւ Արդարութեան կազմակերպութեամբ, ուշադրութիւնը կը
դառնայ ուրիշ շարժիչ մը վրայ զոր Արեւելքը ճանչցող ամէն մարդ մտանանիչ ըրած
է արդէն, այն է կալուածական տուրքին ձեւը, տասանորդը, եւ տասանորդ հա-
ւաքելու եղանակը, անհրաժեշտ է որ այդ տասանորդը փոխուի հողին տարածութեան
եւ որակութեան համեմատութեամբ վերցուած տուրքի մը: 28 տարուան մէջ Պոստիւլի
նահանգին երկրաբանական հարստութիւնը կրկինէն աւելի անցաւ, տասանորդին
հողատուրքի փոխուելուն պատճառով: Իրաւ է որ Հայաստանը կալուածատուր
չունի, բայց կարելի է կալուածատուրքի պակասը որեւէ կերպով լրացնել, ինչպէս
որ ըրին Հնդկաստանի կամ ուրիշ երկիրներու մէջ ուր այդ այլափոխումը տեղի
ունեցած է:

Այս երեք բարենորոգումները, եթէ լրջօրէն ձեռնարկուին եւ գործադրուին,
կը բաւեն երկիրը զարգացնելու, զայն կերպարանափոխելու, բայց անոնց գործա-
դրութիւնն ու կանոնաւոր ընթացքը ապահովելու համար, Ընդհանուր կառավարիչը
պէտք եղած նիւթական միջոցները ունենալու է:

Հայերը, ինչպէս արդէն ըսուեցաւ, աչք չունին ոչ քաղաքական անկախու-
թեան մը, ոչ օսմանեան պետութիւնէն որեւէ բաժանման. իրենց նպատակը բոլորովին
հակառակն է: Յաւակնութիւնը չունին որ իրենց երկրին հասոյթները իրենց ուզածին
պէս եւ միմիայն իրենց պէտքերուն համար գործածուին: Իրենց համար ուրիշ բան
չեն ինչորեք եթէ ոչ իրաւունք ունենալ իրենց իրենցմէ տուրք ժողովելու՝ ընդհանուր
տուրքերը կայսերական զանձուն յատկացնելէ յետոյ, որպէսզի այդ կերպով մաս-
նաւոր հասոյթներ ստեղծեն նահանգին մասնաւոր ծախքերուն համար, ինչպէս են
Պահակագօրքի, Արդարութեան, ամէն ազգի դպրոցներու եւ կրօնական հաստատու-
թեանց, հանրօրուս շինութեանց եւն.:

Մէկ կողմէ, հայերը կը կարծեն թէ իրենց մասնաւոր եւ տեղական պետ-
քերուն համար իրենց իրենցմէ տուրք հաւաքելու այս իրաւունքը պիտի օգնէ հրա-
մանադրուած բարենորոգմանց ու բարեօգմանց իրազորման, որովհետեւ պիտի ապա-

հոյէ ծախքը վարչութեան զանազան պաշտօնէութեանց որոնք պիտի կոչուին այդ
բարենորոգումները գործադրելու եւ անոնց կիրարկմանց վրայ հսկելու. այդպէսով
այդ պաշտօնէութեանց վճարումները կախում պիտի չունենան որեւէ իշխանութիւնէ
որ կրնայ տեղական պէտքերուն եւ բարենորոգմանց իրազորման համար անոնց չափ
հոգածութիւն եւ շահագրգռութիւն չունենալ: Միւս կողմէ, կայսերական կառավա-
րութեան շահը Ն. Կ. Վեհափառութեան հպատակներուն շահերուն ամբողջութեանը
հետ համանման ըլլալով, կայսերական կառավարութիւնը իմաստուն վարչութեան
մը սկզբունքներուն համաձայն պիտի գտնէ որ երկրէն հաւաքէ միայն այն տուրքերը
որոնք հարկաւոր են պետութեան ընդհանուր ծախքերուն համար եւ տեղական վար-
չութեանը տալու մասնաւոր ու տեղական պէտքերուն համար բաւականաչափ հա-
սոյթներ:

Իր սեփական վարչութիւնը ծախքերուն յատկացեալ այդ հասոյթները գտն-
ածելու համար նահանգին կողմէ ձեռք առնուելիք եղանակը հետեւեալ կերպով կրնար
կարգադրուիլ: Ընդհանուր կառավարիչը, եւ անոր հրամաններուն համեմատ, այնե-
ւայլ գաւառակներու կառավարիչները, իրաւունք կ'ունենան, իւրաքանչիւր գաւա-
ռակի գլխաւոր քաղաքին մէջ՝ տեղին երեւելիներէն բազկացեալ ժողով մը գումարել:
Այդ գանազան ժողովներուն կազմաւորման ձեւը այժմէն պէտք չէ որ որոշուի.
սկիզբները, Ընդհանուր կառավարիչը եւ գաւառակներու կառավարիչները իրենց իսկ
պէտք է ընտրեն անձամբը՝ այդ երեւելիներուն ու ամենէն աւելի վտանգութիւն
ներկնող անձերուն մէջէն. ընդհանուր ժողովը որ պիտի գումարուէր նահանգային
գլխաւոր քաղաքին մէջ, պիտի բաղկանար պատգամաւորներէ զոր պիտի անուանէին
գաւառակներու ժողովները:

Այդ ժողովները կամ մասնաւոր այդ ընդհանուր ժողովը միակ իշխանու-
թիւն մը պիտի ունենար, այն է այլ եւ այլ պաշտօնէութեանց ծախքերուն համար
պէտք եղած տուրքեր սահմանել: Այդ ժողովները կամ խորհուրդները ոչ մէկ կեր-
պով պիտի միմիայն ու Արդարութեան վարչութեան, ոչ նոյնինքն վարչութեան
մէջ: Ապագային, փորձառութիւնը եւ երկրին ընկերական վիճակին զարգացումը պի-
տի նշանակին վերջնական եղանակ մը այդ խորհուրդներու անդամներուն ընկերու-
թեան եւ անոնց շնորհուելիք իշխանութեանց ընդարձակմանը համար: Բայց մեզ
այնպէս կը թուի թէ սկիզբները, որպէսզի շփոթութիւն առաջ չգայ, ինչ որ ան-
խուսափելի է, ժողովրդի մը մէջ որ իր սեփական շահերը վարելու գործին բոլո-
րովին օտար մնացած է, անոնց իշխանութեան սահմանաւորումը խոհեմ եւ իմաստուն
բան մըն է:

Հայաստանի նահանգին կազմակերպութիւնը, որպէս իր ընդհանուր դժեբով
պատկերացուած, կարող է բարօրութիւնը ապահովել նահանգին բոլոր բնակիչնե-
րուն, մասնատական թէ չբխտոնեայ, ամէնքն ալ հպատակ Ն. Կ. Վեհափառութեան,
ամէնքն ալ վարչութեան մը մէջ հաստատարպէս շահ ունեցող: Այս կազմակերպու-
թեան նպատակն է ամենուն բարօրութիւնը ապահովել. հետեւաբար, մասնատական եւ
ջրխտոնեայ հասարակութիւններուն թուոյ փոխադարձ համեմատութիւնը երկրոր-

զական կարեւորութիւն ժը կը ստանայ: Ոչինչ պիտի փոխուի զազաբան կացութեան մէջ: Ժխտի վարչութեան մէջ նոր պաշտօնեաներ պիտի գրուին, որոնք, մէկ քանի հարաստութեանց ու ժամանակ Արդարութեան կազմակերպութեան շնորհիւ պահպանուած, պաշտօն պիտի սնննան զործազրիւ այն բարենորոգումները զոր Ն. Վեֆուտութիւնը հրամանազրիւ պիտի բարեհաճի, եւ շնորհիւ որ անոնք մեակալ տառի մեկն մէջ մտն, ինչպէս մինչեւ ցարդ խոստացուած բոլոր բարենորոգումները(*):

Փոքրիկ, 1878

Նուպար Փաշա

ՆԵՐՍԷՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Սան-Սթեֆանոյի (1878 Փետր. 19) եւ ապա Պերլինի դաշնագրի (1878 Յուլիս 1-13) պատրաստութիւններու շրջանին, հայ պատուիրակները ղեկավարող եւ անոնց ուղղութիւն տուող գլխաւորապէս եղաւ Կ. Պոսոյ Հայոց Պատրիարք Ներսէս Արք. Վարժապետեան:

Իր կողմէ հետեւեալ նամակը գրուած է Պերլինի խորհրդատու զովի նախորէին, Մանչեստր գտնուած իր հայ խորհրդականին՝ օգնելու համար Խրիմեանի կատարելիք դիմումներուն: Այս նամակին մէջ յտակօրէն բանաձեւուած են Վարժապետեանի քաղաքական մտածողութիւնը եւ ակնկալութիւնները:

Նամակը լոյս տեսած է Սարուխանի «Հայկական խնդիրը եւ Ազգ. Սահմանադրութիւնը» գործին մէջ:

Վարժապետեան կը գրէ.

«Եթէ պէտք ըլլայ բոլոր ազգը մէկտեղ աշխատիլ, ամէնքը պատրաստ են աշխատելու: Այդ գործողութեան մէջ ինչ որ պահելու համար պարտաւորուած եմ հոս յիս ամփոփելու անհրաժեշտ աշխատութիւն ու պատասխանատուութիւն:

«...Վստահութեամբ դիմեցէք ինձի. վստահութիւն ունեցէք կատարելու մեր Սրբազան եղբորը, Խրիմեան Հայրիկին, որ այժմ ի Լոնտոն Ձեր բով կը գտնուի: Քաջալերեցէք զինքը. օգնեցէք իրեն. ինչ որ անոր ընէ՛ք՝ բոլոր ազգին, մեր սիրելի ու կարօտ հայրենեաց ըրած պիտի ըլլաք: Այս խօսքերն ոչ միայն Ձեզի կ'ուղղեմ, այլ՝ ի Ձեզ ե'ւ

(*) Այս ծրագրին անդիւրէն Թարգմանութիւնը հրատարակուած է «Նայ-նախնթ» սեղծիւրի ամսաթերթին 1878 տարուան Սեպտեմբերի թիւին մէջ:

Ձեր ազնիւ ու հոյրեմատեր ընկերաց, որ միեւնոյն ոգուով կ'աշխատեն մեր ազգային դատին համար»:

«Մեր հոս կարծիքն ու յոյսն այն է, որ Դեպքամտազուր (գաւկրէսն) պիտի գումարուի: Եթէ այս ըլլայ՝ թէ մեմք հոս, եւ թէ դուք հոս մեր ցամփերը կրկնապատկելու եմք: Դեպքամտազուրին մէջ մեզի ի նպաստ ձայներ պիտի բարձրանան, բայց առաջադիւթիւնը պէտք է Անգլիայէն գայ: Անգլիան որ ուզէ՝ Հայաստանը փրկուած է»:

«Հայաստանը, կամ ինչ որ մեաց Հայաստանէն, կամ բոլորովին Ռուսաց ձեռքը պիտի անցնի կամ չէգոք երկիր մը պիտի ըլլայ, այն ինքն» ինքնօրէն կառավարութիւն մը: Ո՞րն աւելի յարմար է Անգլիայի շահուն: Այս կէտը լաւ բացատրած էք եւ դուք Ձեր յիշատակագրին մէջ, որն որ կը ցաւիմ որ անկարելի է հիմայ ազգին կողմէն տարի պաշտօնակամ կերպով, զի արդէն կառավարութեանց մատուցեմք մեր պաշտօնակամ յիշատակագիրը: Բայց մտնաւմդ կրնայ տրուիլ եւ օրագրաց մէջ հրատարակուիլ ոչ թէ ազգին, այլ Լոնտոնայի ազգայնաց կողմէն»:

«Հիմակ մի առ մի պատասխանեմ Ձեր գաճազան ծարցամաց.

«Ա. — Մեր ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ Է ՌՈՒՄԻՈՑ ԵՐԱՆՏԱԳԻՑ ԸԼԼԱՆՈՎ՝ ՅՈՒՍԱԼ ԵԱՆԳՂԻԱ ԵՒ ԵԱՆԳՂԻՈՑ ԾՆՈՐՀԻՒ ԱՊՈՒՄՈՎ ԵՎ ՄԵՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՆԻԹԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹԻՒՆԸ: Այս բարեկեցութիւնն ուրիշ կերպով ձեռք չեմք կրնար բերել, այլ միայն ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՐԻՆՈՒԹԵԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ: Այլ որպէսզի այս բառը չի խրոչեցնէ գոման, անաստիկ մեր formule-ը Administration de l'Arménie par les Arméniens»:

«Բ. — Խորէն Սրբազանը, որ Բեթրապուրի է, մեր քաղաքականութեան առաջին մասին կը ծառայէ, ինչպէս Խրիմեան Սրբազանն ալ ի Լոնտոն՝ երկրորդ մասին:

«Գ. — Երբ Դեպքամտազուրին գումարման որոշում ըլլայ, ազգին կողմէն անպատեալ պատգամաւորութիւն մը պիտի գտնուի հոն: Խրիմեան Սրբազանն այդ պաշտօնն ունի Երազայի մէջ:

«Դ. — Գերմանիոյ եւ Իտալիոյ բով պէտք եղածը ըրած եմք արդէն, եւ այս երկու տէրութեանց համակրութեանց եւ օժանդակութեանը վրայ բոլորովին վստահ եմք: Գաղիոյ բով ինչ որ այստեղի դեպքանին ձեռքով կրնայինք ընել, ըրած եմք: Ինչ որ Խրիմեան Սրբազանը պիտի ընէր ի Փարիզ, գայն չգիտեմք թէ ըրա՞ւ եւ ո՞ր աստիճան յաջողեցաւ. նմանապէս չգիտեմք թէ ի՞նչ ըրաւ Աւստրիոյ համար, վստահ զի Փարիզէն նմանկ չգրեցին մեզ...»:

«Եւ ես Ձեզմէ յանուն ազգին կը խնդրեմ, որ ամէն ցամք ու գոհազուրիւն ընէք որչափ որ կարելի է ամէն օր մշտնէկ բան գրել տալու

համար Լոնտոնի լրագրաց մէջ Հայոց համար: Կառավարութիւնները բաւական արթնացան մեզի համար, բայց հասարակաց կարծիքն՝ ոչ: Ուստի հրատարակութեան տալու է հարստահարութեանց տեղեկագրերն եւ Քիւրտերու ըրած նորանոր բռնութիւնները, որոնք հրիմեան Հայրիկի քով կան, ինչպէս նաեւ ընդհանուր տեղեկութիւնք Քրտաց կեանքին և այլն վրայ, գործնք յիստ լաւ գիտէ հրիմեան Սրբազանք»: (*«Մարտի 2-ի Հայ Գաղութը», Պոսթընի «Ազգ» էն*):



Պերլինի Վեհաժողովի որոշումը զո՛ւ չձգեց Հայերը: Իսկ Ներսէս Վարժապետեան յուսահատած չէր եւ կը հետապնէր Հայկական Հարցին լուծումը: Պերլինի դաշինքին ստորագրութենէն քանի մը օր ետք, 1878 Յուլիս 5-17ին, Վարժապետեան կը գրէ Լոնտոն՝ Յ. Փափազեանին.

«...Գոնկրէի (Վեհաժողովին) որոշման ազդեցութիւնը աւելի հալածող վրայ, որ սկսան ամէնքը մտածել թէ արդեօք Ռուսիոյ պէտք չէ՞ դարձնել մեր աչքն ու յայտը: Մինչեւ հիմա թուրքիոյ մէջ, որ ազգ որ յառաջացաւ, զատ մարմին կազմեց, եւ մինչեւ յանկախութիւն ելաւ, բոլորը Ռուսիոյ պաշտպանութեան շնորհիւ եղաւ — այս ազգերը ցնդակից եւ կրօնակից ու զոնէ միայն կրօնակից են Ռուսիոյ: Ասկէ ահա ինչ հետեւութիւն կը հանեն ունենք, կրնաք մակարեք: Չեմ հասկնար Անգլիան ի՞նչ պիտի շահի, Ասիոյ մէջ մէկ քանի միլիոն հայերը Ռուսաց գիրկը նետելով: Ինձի այնպէս կը թուի, ազնիւ սիրելի, որ դեռ պարտ ունինք եւ կրնանք աշխատիլ Անգլիոյ հասարակաց կարծեաց քով: Թուրքեանցիական դաշնագրութեան ուժով Ասիոյ քրիստոնէից համար ըլլալիք բարեկարգութիւնները Անգլիան եւ թուրքիան համաձայնութեամբ պիտի որոշեն, այսինքն, Դուռն եւ դեսպանը: Լսածիս նայելով Լոյսարտ, որուն զացի դառնապէս գանգատեցայ, հայոց համար կանոնագիր մը խմբագրելու վրայ է, այս պարագային մէջ մեծ ծառայութիւն կրնաք ընել դուք որ ի Լոնտոն էք, ու Ազգին ու հայրենեաց արեւ խարշ ձայնովը կոչուի կ'ընեմ ամենուր ալ ազգասիրութեանը»:

Վարժապետեան իր նամակին յետ գրութեան մէջ կ'ըսէ.

«Հարկ չէ նշանակել ձեզի որ Գոնկրէի որոշած յօդուածին մէջ ոչ Հայաստան բառ կայ, ոչ Հայ գաւառ, եւ ոչ ալ մէկ երկու հիմունք բարեկարգութեան: Եւրոպացիք չհասկցան տակաւին թէ միմիայն բարեկարգութիւն Տանկաստանի մէջ, լաւ պաշտօնատարաց ընտրութիւնն է եւ բարեկարգութիւն անկարելի է տանիկ պաշտօնատարներով»:

Պերլինի դաշնագրի ստորագրութենէն ետք, 1878 Յուլիս 21ին,

Ազգային Ժողովի մէկ նիստին մէջ, Ներսէս Վարժապետեան հետեւեալ ձեւով կը մեկնարանէ դաշնագրի 61րդ յօդուածը.

«Որչափ ալ անշահատէ՛ր ըլլար եւ հայատէ՛ր միայն՝ այն ըզգացումը որ 16րդ յօդուածին խմբագրութեանն առաջնորդած էր, Անգլիան պիտի տեսնէր այդ յօդուածը եփրատայ հովիտին մէջ որ քաղաքական վիճակ մը կը պատրաստէ՝ որ կրնայ մասնաւոր կերպով զայն ստորագրող տէրութեանց միայն քաղաքական շահուց տեսակէտին պատասխանել: Անգլիա պիտի չընդունէր զայս: Կա՛մ յօդուածը վերճճուի Նեկոնի պիտի աշխատէր, կամ փոխելու: Դիտմամբ կ'արտատանք վերցունել բառը, զի եղան քաղաքացիաց շքունք՝ որ հնչեցին այս բառը, այլ անկարելի էր վերցունել, զի անմարդասիրութիւնն ու խժգժութիւնը անկարելի է Անգլիոյ ազատամիտ ազգին համար: Կը մնար միայն բարեփոխել յօդուածը այն կերպով՝ որ յօդուածը մնայ իբրեւ հայոց համար խմբագրեալ յօդուած. Հայաստանը բարեկարգի Հայաստանի համար, եւ Հայկական հնդկիրը չեզոքանայ, այսինքն՝ լակ Հայկական հնդկիր ըլլայ» (Լէօ, «Հայոց Հարցի Վաւերագրերը», 1915, Թիֆլիս, էջ 123):

Ա Ն Գ Լ Ի Ո Յ Վ Ե Ր Ա Պ Ա Հ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Պերլինի դաշինքի կնքումէն անմիջապէս ետք, Հայ շրջանակներու մէջ ստեղծուած հրաւիրութեան զուգահեռ, շարժում մը սկսաւ Խրիմեանի, Վարժապետեանի գլխաւորութեամբ ի նպատակ Հայաստանի ինքնավարութեան:

Կ. Պոլսոյ անգլիական դեսպան Լայարդ արամազէր չէր քաշալերելու այդ շարժումը, նախատեսելով Ռուսիոյ ընդդիմութիւնը:

1880 Ապրիլ 27ին (Կապոյտ Գիրք) դեսպան Լայարդ կը գրէ Անգլիոյ նախարարական կադաւրինին():*

«Հայերը, խրախուսուած այն համակրութեանցն որ ընդունեցին Անգլիոյ մէջ եւ վստահելով այն փոփոխութեանը որ կը հուստան անգլի ունենալու մօտ է Անգլիոյ քաղաքականութեան մէջ թուրքիոյ նկատմամբ, կը նային մի իմեօրէն, եթէ ոչ անկախ, Հայաստանի ստեղծման: Այս նպատակաւ ծրագիրներ կը բոլորեն գլխաւորապէս կ'ունենան»

(*) Այս նամակի թարգմանութիւնը Պ. Տոնապետեան իր խորհրդածութիւններով միասին լոյս ընծայած է «Հայ փարիզի» 1948 Յունուար 5ի թիւին մէջ:

բէ, հայ մամուլի մէկ մասէն, եւ Կ. Պոլսաբնակ եւ Եւրոպայեան ազդեցիկ Հայեր: Ոնեւ փորձ դէպի ամոր իրականացումը, արդի պարագանքում մէջ, կարող է առաջնորդել յայժ Ժանք հետեւամտներին եւ ազդեցիկ բուն իսկ ի կարուստ հայ Ժողովրդեան: Պէտք չէ մտաւարտի թէ ամենք կը կազմեն երկրի բնակչութեան փոքրամասնութիւնը, եւ շատ գաւառների մէջ յայժ չնչին փոքրամասնութիւնը: Յիմարական է եւ վտանգաւոր մզնիլ հերքելու այս փաստն՝ անգիտակալով Քիւրդերը: Փոքր Ասիոյ մահմեդականներն տեղեակ են Եւրոպական Թուրքիոյ ինքնօրէն քրիստոնեայ մահմեդների մէջի իրենց եղբայրների մահատագրիմ: Անոնք տրամադիր չպիտի լինեն ենթարկուելու նման մահատագրի առանց ընդդիմութեան: Մի պահանջ ինքնօրինութեան համար Հայաստանի մէջ կարող է առաջնորդել կոտորածներին եւ այսու ի գլուխ բերել Ռուսիոյ անմիջական միջամտութիւնն եւ անոր անխուսափելի հետեւամտները: Եւ ոչ եւս հաւանական պիտի լինի, մայնիսկ եթէ յաջողի պահպանել այն ազգութիւնն որով Հայերն այնքան հրատարտ են: ՌՈՒՍԻԱ ՀԱՒԱՆՕՐԷՆ ԵՐԲԵՔ ՊԵՏԻ ԶԻՈՅԼԱՏՐԷ ՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՕՐԷՆ ԿԱՄ ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ, ԵՒ ՈՇԵԼՇ ՓՈՐՁ ԿԱԶՄԵԼՈՒ ԱՅԿՊԵՍԻ ՄԻ ԲԱՆ ՊԵՏԻ ՎԵՐՁԱՆԱՅ ՀԱՅՈՑ ԿԼԱՆՈՒՄՈՎՆ ՌՈՒՍ ԿԱՅՍՏՈՒԹԵԱՆ ՄԵՋ, եւ այս հին ազգի եւ նորա լեզուի եւ հաւատքի վերջին շիջումով: Ինչի որ Հայերը համարելի են, եւ ինչ որ մեր անտարակուսելի իրաւունքն է պահանջել նոցա համար, է լաւ կառավարութիւն եւ նոցա արդար եւ անաչառ բաժինը Տեղական վարչութեան մէջ, եւ խոստացեալ բարեկարգումների անմիջական եւ իսկական ներմուծումն այն մահմեդների մէջ ուր անոնք կը բնակին»:

Ապրիլ 27, 1880 Կապոյտ Գիրք

ԳԺԳՈՀՈՒԹԻՒՆՆԵՐ ԷԶՄԻԱՄՆԻ ԴԵՄ

1870 Յունուար 2ին Գէորգ Դ. Կաթողիկոս կոնդակ մը ղրկելով, այս անգամ փորձեց ուղղակի իր ազդեցութեան տակ առնել Կիլիկիոյ եւ Ալթամարի կաթողիկոսութիւնը եւ Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը: Կ. Պոլսոյ պատրիարք Նրիմեանը լաւ տրամադրուած էր դէպի էջմիածին եւ նախապէս զիր մը յղած էր կաթողիկոսին, յայտնելով «զջերմեռանդութիւն եւ գորդիական հնազանդութիւն առ Մայրաքառն»:

Գէորգ Կաթողիկոս առիթէն օգտուելով կարգ մը պահանջներ դրաւ: «Մայրաքառաքին եւ ժողովականներուն եւ լրագիրներուն մէջ

առաջին ժխտի մը առիթ տուին այդ կէտերը եւ մանաւանդ մէջտեղ կը դրուէին Գէորգին մասնակցութեամբ, որ գայն բացարձակ հակասութեան մէջ կը դնէին, ԵՐԲ Կ. ՊՈԼՍՈՑ ԵՒ ԿԻԼԻԿԻՈՑ ԵՒ ԱԼԹԱՄԱՐԱՑ ԱԹՈՒԱԿԱԼՆԵՐՈՒՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԻՐ ԶՆՈՒՄՆ ԱՆՏՆԵԼ ԿՈՒՂԵՐ, ՄԻՆՁ ՊՈԼՈՑԵՆԵՍԵՒ ԴՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՈՉ ԱՄԱՋՆՈՐԴ ՄԸ ԿՐՆԱՐ ԸՆՏՐԵԼ ՌՈՒՍԱՀԱՅ ՎԻՃԱԿՆԵՐՈՒՆ ՎՐԱՑ, եւ Մայրաքառին կատարեալ իրաւասութիւնը կը պահանջէր Տանկահայոց վրայ, մինչ Ռուսահայոց վրայ իսկ ամբողջական իրաւասութեան գաւրկ կը գտնուէր, եւ այդ մասին լուս եւ անհոգ կը մնար: Բոլորովին տարբեր էր մայրաքառաքին մէջ տիրող մտայնութիւնը, պատրիարքին ալ դուրս չբողբելով, ուր սաստիկ էր Պալոմենիայի հակառակ կարծիքը, գոր իբր Հայոց եկեղեցւոյ կործանիչ կը նկատէին, եւ Գէորգն ալ ժամանակին համար խոս գտնուած էր այդ կարծիքին, մասնաւոր կաթողիկոսներու համար հակաքոտութեան անուր չէին ընդունիր, եւ զանոնք կաթողիկոսական իրաւունքներու օրինակ տէր կը ճանչնային, եւ անոնց կատարեալ պահպանութիւնը անհրաժեշտ կը նկատէին, նոր Պալոմենիայի դէմ բողոք եւ ռուսական ռոմագութեանց հակակշիռ, եւ ՍԻՍԸ ԷԶՄԻԱՄՆԻ ՀԱՄԱՐ բանաձեւը մշտնաբան էր դարձած: Իրենց տեսութեամբ բաւական էր որ Կ. Պոլսոյ Աթոռը իբր բովանդակ Թուրքիոյ պատրիարքութիւն, մէկ կողմէն իբր ստորագաս՝ էջմիածնի իրաւասութիւնը ճանչնար, եւ գերադաս՝ Կիլիկեան ու Ալթամարն ու Երուսաղէմը իրեն հետ կապած պահէր, եւ ասկից աւելի կապեր չէին կրնար ստեղծել»:

Այս պատճառով ալ կաթողիկոսի կոնդակը նկատի չառնուեցաւ, չկարգացուեցաւ ո՛չ եկեղեցիներու եւ ո՛չ ալ ժողովին մէջ:

Մաղաքիա Օրմանեան այդ տեղեկութիւնները տալով, կը շարունակէ իր խորհրդածութիւնը. «Իրաւ ալ Գէորգ Կաթողիկոս անմեկնելի միգրու եւ թիւրիմացութեանց մատնուած կը տեսնուի, երբ Ռուսահայոց վրայ չունեցած իրաւունքները Տանկահայոց վրայ գործադրել կը պնդէ, եւ յայտնի հակասութեան մէջ կ'իյնայ երբ Տանկաստան եղած ատեն Կիլիկիոյ եւ Ալթամարի համար ընդունուած ձեւերը էջմիածին գացած ատեն արեւու կ'աշխատի: Ինքն պատրիարք ալ եղած ըլլալով պէտք չէր անգիտանար օսմանեան կառավարութեան նկատումները, եւ պէտք չէր այնպիսի ձեւերու ստիպէր Տանկահայերը որ իբր թէ Ռուսիոյ ազդեցութեան ներքեւ ինկած ըլլան: Պէտք չէր նաեւ անգիտանար թէ առաջին ժամանակներու մէջ ալ հաշատուր Սեբաստացի եւ Մատթէոս Կեսարացի էջմիածնի եպիսկոպոսներ՝ 1658ին, 1694ին, Սոսոյ կաթողիկոս եղած էին, եւ Տիրատուր Ստեփ եւ Ագարիա Զուգայեցի Սոսոյ կաթողիկոսներ 1561ին եւ 1591ին Կ. Պոլսոյ պատրիարք եղած էին: Եկեղեցական սկզբունքով ալ եկեղեցւոյ միութիւնը ապահովելու համար

բաւակամ էին դաւանութեամ եւ ծէսի եւ գերիշխանութեամ միութիւն-
մեքը, եւ ԱՌՁԵՌՆ ՎԱՐՁԱԿԱՆ ԵՒ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՄԻԱՒՈՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐԸ ԷԱԿԱՆ ՁԵՆ»:

Էջմիածնի կաթողիկոսը Կ. Պոլսոյ պատրիարքին եւ Սիսի Կա-
թողիկոսին ստացած պատասխաններէն զԺողո՛ 1872 Ապրիլ 18ի զրու-
թեամբ չկը սկսի կշտամբել պատրիարքը եւ ժողովական եպիսկոպոս-
ները» որ իրենց ձեռնադրութեան ատեն հաւատարմութեան ուխտ րրած
էին, չհրձ Թէ ԱՅՆ ՈՒԵՏԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՆՁԻՆ ՀԱՆԴԵՊ ԱՆՊԱՅ-
ՄԱՆ ՈՒԵՏ ԵՂԱԾ ԸԼԼԱՐ, ԵՒ ՈՁ ԹԷ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՈՒԵՏ ՄԸ ԵՒ ԵԿԵ-
ՂԵՑԻՈՅ ԿԱՆՈՆԱՅ ԵՒ ՕԳՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՄ ՍՏԱՆՁՆՈՒԱԾ
ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ»: Հեզնանքով կ'արձանագրէ Օրմանեան եւ կ'ա-
ւելցնէ. «...Էջմիածնի Աքտըր ամէն մանր գործերու մէջ մտցնելով
Կ'ՈՒՁԷ ՏԱՃԿԱՀԱՅԵՐԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԵԼ, ՆԸ-
ԿԱՏԵԼՈՎ ԱՅՆ ԵՐԿՄԱԳԻՐԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՁՈՐՄ
ԻՆՔՆ ԸՆԴՈՒՆԱԾ ԷՐ Ի ՊՊԱՍՏ ՏԷՐՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱՅ»: («Ազգապա-
տում», Գ. հատոր, էջ 4275, 4277):

Այս մէջբերումները կը բաւեն ցոյց տալու համար, թէ Կ. Պոլ-
սոյ Ազգ. ժողովը եւ բարձրաստիճան եկեղեցականները ինչքան նա-
խանձախնդիր էին՝ թոյլ չտալով որ Ռուսաստան էջմիածնի խողովակով
իր ազդեցութիւնը տարածէ, միջամտութիւններ կատարէ արեւմտա-
հայրութեան եկեղեցական կազմակերպութիւններու կեանքին մէջ:

Շրքեմն լուռ, երքեմն հրապարակով եւ պաշտօնապէս այդ պայ-
քարները եղած են, ընդդիմութիւններ պատահած են ռուսական ոսմիճը-
զութիւններուն դէմ, երբ Դաշնակցութիւն դեռ գոյութիւն չունէր...:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՇԱՀԱԳՐԳՌՈՒԹԻՒՆԸ ԷՋՄԻԱԾՆԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԸ

Գէորգ Կաթողիկոսի մահէն ետք, 1883ին, Փեթրպոլսկի կա-
ռավարութիւնը պաշտօն տուաւ Կովկասեան փոխարքայի ղիւանատան
նախկին տնօրէն Պառոն Նիքոյլային՝ տեղեկագիր մը պատրաստել կա-
թողիկոսական խնդրին մասին: Ներկայացուած այդ տեղեկագիրը
խիստ շահեկան է՝ ըմբռնելու համար Ռուսաստանի վարած քաղաքա-
կանութիւնը Կաթողիկոսի անձին եւ ընտրութեան ատեն արտասահմանի
հայ պատգամաւորներու մասնակցութեան հարցին մէջ: Է. Ակնունիի

«Կովկասեան Վէրքեր» հատորէն (էջ 153-180) կ'առնենք այդ տեղեկա-
գիրը:

ԳԱՂՏՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐ

«Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահը 1882 թուի Դեկտեմբեր 6ին եւ այս
դէպքի պատճառով Ամենայն Հայոց Հայրապետի ժող պապագայում Կատարուելիք
ընտրութիւնը, անհրաժեշտ է կացուցանում հասուն քննութեան ենթարկել՝ պետա-
կան բարձր շրջաններէ մէջ՝ հետեւեալ երկու շատ կարեւոր խնդիրները.

ա) Թէ զործողութեան ի՞նչ եղանակի պէտք է հետեւի մեր կառավարու-
թիւնը կաթողիկոսական առաջիկայ նոր ընտրութեան ժամանակ:

բ) Որպի՞տ՞ դիրք պէտք է բռնի մեր կառավարութիւնը նոր Կաթողիկոսի
վերաբերմամբ՝ նրա հաստատուելուց եւ իր բարձր պաշտօնավարութեան մէջ ժամեւուց
յետոյ:

«Այս երկու խնդիրներէ նախօրօք քննութեան եւ լուծման ստիպողական
հարկը այն հանգամանքից է առաջ դաշխ, որ 1857ին, երբ Ներսէս Կաթողիկոսի
մահից յետոյ մի նոր հայրապետ պիտի ընտրուէր, մեր կառավարութիւնը հարկ
համարեց հետեւիլ մի նոր, մինչև այն ժամանակ ի կիր չառնուած քաղաքականութեան:
Այս քաղաքականութիւնը արտայայտուեց առաւել թուրքիայի քան թէ Ռուսաստանի
հայոց բարձր հոգեւորականների դասից կաթողիկոս ընտրելու գաղափարին ընծայ-
ուած նախածեմարութեան մէջ, որի նպատակն է՝ գրաւել առաւել ժիր մասնակցու-
թիւն կաթողիկոսի ընտրութեան զործում թիւրքահայ հասարակութեան կողմից: Այս
կերպ զործելու առիթ ստուգը՝ այն ենթադրութիւնն էր, թէ հայ-լուսաւորական
եկեղեցու հովուապետի ընտրուելը թիւրքահայ հոգեւորականների դասից՝ կը նպաս-
տէր ամբապնդելու էջմիածնի Աթոռի եւ Թիւրքիայի բազմաթիւ հայ ժողովուրդի
կապերը, վերականգնելու այս աթոռի գլխաւորութիւնը աշխարհի հոգեւոր վիճակ-
ների վրայ, որ շատ նուազել էր վերջերում, եւ այսպիսով զօրացնելու մեր քաղաքա-
կան ազդեցութիւնը թուրքիոյ հայերի վրայ: Այն ժամանակ այս ենթադրութիւնների
իրագործումը հաւանական էր թւում այն պատճառով, որ էջմիածնի Աթոռի նախ-
ընթաց պատմութիւնը չէր աւալիս նրթեր՝ այդպիսի խնդիր վճռելու համար՝
հիմնուել իրական փորձի վրայ: Այժմ, 25 տարի անցնելուց յետոյ, երբ Հայրապե-
տական Աթոռի վրայ երկու անգամ բազմեցին թուրքիոյ հայ հոգեւորականութեան
պատկանող անձինք, մենք կատարեալ միջոց ունենք վերադառն քննելու այդ հարցը եւ
արդէն ոչ թէ ենթադրական յոյսերի վրայ յենուելով, այլ կանգնած իրական հողի
վրայ, եւ միւս կողմից կռուելու՝ թէ մինչև ո՞ր աստիճան արդարացան 1857 թուի
յոյսերը, եւ թէ էջմիածնի Աթոռին վրայ թիւրքահայտակ հոգեւոր պետերի բազ-
միջ ի՞նչ ազդեցութիւն ունեցաւ նրա յարաբերութեան վրայ դէպի մեր զահը եւ դէպի
մեր հոգեւորականութիւնը, նամանաւանդ դէպի մեր ներքին քաղաքականութիւնը
ռուսահայերի նկատմամբ...»:

«...ՍԲԷ զբանից յետոյ աչքէ անցընելու լինե՞ք այն ազգեցութիւնը, որ վերջի երկու հարազատներէ զործուծելութեան եղանակը ունեցել է անըզկովկասեցի աշխարհական հայ հասարակութեան վրայ, ապա անկարելի էր լինի շքեղութիւնը, որ նրանք իրենց նպատակին չհասան, այն է, հայ հասարակութիւնը իրենց ազգեցութեան ենթարկել չկարողացան: Լուսուորչական հայերի գրեզարնակ բազմութիւնը սակաւ համակրում է իր հոգեւոր իշխանների տեսական խորհուրդներին, բայց եւ այնպէս այդ ժողովուրդը պահուած էր մի զոց ազգային շքեղանկի մէջ, հոգեւորականութեան շանքով, որը ձգուած էր պատասպարել նրան ուսուական զարոյցի ազգեցութիւնից: Իսկ ջաղաքարնակ՝ առուել կրթուած հայ հասարակութիւնը, որի պարագլուխը հարկու Քիֆլիսի հայ ժողովուրդն է, այնքան սողորուած է արդէ զբական ուղղութեամբ եւ այնքան զին յարգանք էր զգում զէպի իր եկեղեցու իշխանների անձնուորութիւնը, որ չէր կարող նպաստել էջմիածնի քահանայապետների փառամուլ դիտումներին: Սակայն այս հասարակութեան մէջ էլ սակաւ չէին զարգացել ազգային ինֆնուրայնութեան միտումը եւ անու ազգութեան տարրի մէջ լուծուելու շլամուրիւնը: Այս տեսակէտից՝ եւ համարելու էր հանդիսանում կաթողիկոսների հետ, համակրելով նրանց ճիշդերին՝ իրենց անկախութիւնը հաստատելու, եւ նեցուկ գտնելով նրանց մէջ՝ ազգային անջատման համար: Քէեւ այս ուղղութիւնը չէր արտայայտուած ոչ մի ապօրինի զործողութեան մէջ եւ չէր ներկայացնում ոչ մի ջաղաքական վտանգ, այնուհանդերձ չէր կարող համապատասխանել մեր կառավարութեան ընդհանուր նպատակներին:

Հայոց եկեղեցու եւ մեր սահմանների մէջ սպրոզ հայ ազգարնակութեան վերարթմամբ՝ նախկին Քիւրքանպատակ կաթողիկոսների հայրապետութեան արդիւնները այնպէս էին: Այստեղ զժողովուրդը պատկերը դժուար թէ անստոյգ երեւի տեսչառ քննողին: Սակայն մեր կառավարութիւնը յայտնապէս նպատակով Մասթիսոսի ընտրութեանը եւ նաեւ չի համակրելով Գէորգի բազմելուն Ս. Գրիգորի աթոռի վրայ, առուելապէս հետեւում էր արտաքին ջաղաքականութեան նպատակներին, — եւ յայտնապէս՝ այդ միջոցով վերահաստատել էջմիածնի թուլացած ազգեցութիւնը Քիւրքանյի հայ եկեղեցու վրայ եւ սրա միջնորդութեամբ զօրացնել մեր բազմապիսի ճանապարհները Օսմանեան կայսրութեան մէջ սպրոզ հայ բնակիչների շրջանում: Արդեօք իրազորուած է որեւէ շափով յիշուլ նպատակը: Հարկաւ այդ առուել յայտնի պիտի լինի արտաքին զործերի նախարարութեան: Սակայն Կովկասի նախկին փոխարքայի գլխուար գրեական մէջ գտնուած տեղեկութիւններին նայելով՝ հարկու թէ կարելի լինի դրական պատասխան տալ: Տարակոյս չկայ, որ Կաթողիկոսները կամենում եւ ձգտում էին իրենց իշխանութեան ենթարկել Քիւրքանյի հայ լուսուորչական թեմերը, բայց եւ այդպէս վարուելով՝ նրանք հարկաւ ի նկատի չունէին ծառայութիւն ժառանգանել մեր ջաղաքական շահերին, այլ բացառապէս հետեւում էին իրենց փառամուլ դահարութեան շահերին: Նրանք ոչ թէ ուզում էին զործիք դառնալ մեր կառավարութեան ձեռքում, այլ դրանից անկախ եւ թերեւս դրան ներհակ՝ անօրէններ Քիւրքանյում բնակազ իրենց հօտի հակառակը: Նրանց փորձերը այդ ուղղութեամբ՝

երեւան ելան, ի միջի այլոց, Գէորգի շանքերի մէջ՝ Կ. Պոլսում էջմիածնի Աթոռի փոխանորդութիւն (վիկարիա) հաստատելու մասին: Սակայն յայտնի է, որ այս գործում եւ յաջողութիւն չունեցաւ, պատճառ որ օսմանեան դուռը հակառակից այդ ձգտման, եւ բացի դրանից՝ Կ. Պոլսի հայ հոգեւորութիւնը ոչ մի համակրութիւն չընծայեց նրան: Ի նկատի առնելով այդ պայմանները, որոնց մէջ գտնուած է այսօր Կ. Պոլսի հայոց ազգային վարչութիւնը, հարկու թէ կարելի լինի սպասել, որ Կ. Պոլսի պատրիարքութիւնը կամաւ հրաժարուի իր՝ հնութեամբ նուիրադրուած իրական անկախութիւնից էջմիածնի Աթոռից, եւ աշխարհական դատակարարն ալ կամենայ ենթարկուել Թուսաստանի սահմանների մէջ բազմազ հոգեւոր պետի ազգեցութեան:

Դեռ 1865 թուին, Գէորգի ընտրութիւնից առաջ՝ ներքին նախարարը կարծիք յայտնեց թէ՛ ձմեր կառավարութեանը հարկ էր ուշադրութիւն դարձնել ոչ այնքան Կ. Պոլսի հայերի վրայ, քանի որ նրանք ենթարկուած են այլ եւ այլ՝ մեզ թշնամի ազգեցութիւնների, որոնց ղէմ մաքառուլ մեզ դժուար է, ինչքան Ասիական Քիւրքանյի հայ ազգարնակութեան վրայ:

«...Ներքին է մտածել, թէ հանգուցեալ Ֆելմարաշխա Իլիան Քարիտախու 1857 թուին յայտնած կարծիքով, թէ էջմիածնի Հայրապետական Աթոռը ունենալով Քիւրքանյի հայ հոգեւորական դասից ելած գահակալ, կարող էր մի յեռակէտ դառնալ մեր ջաղաքական ազգեցութեան համար Արեւելքում, — ոչ այլ ինչ էր, բայց եթէ մի ցաւալի ժողովութիւն, թէ՛ այն պատճառով, որ յիշուլ Աթոռը այսպիսի պայմաններէ մէջ՝ երբեք չի լինի մի հլու զործիք մեր ձեռքում եւ թէ այն պատճառով, որ Փոքր-Ասիայի հայերի միտումը ղէպի մեզ՝ ոչ այնքան առ էջմիածնի ունեցած կրօնական հակամար է պահպանուած, ինչքան լոկ աշխարհական յոյսերով հզօր հովանաւորութեան վրայ... Տառապեալ հայոց աչքերը ոչ թէ ղէպի էջմիածնի են ուղղուած, այլ ղէպի ջաղաքական զօրութիւնը:

ՉՅալով միւս նպատակին, որ նկատի էր առնուած 1857 թուին, այսինքն վերահաստատութիւն էջմիածնի Աթոռի նուազած ազգեցութեան Քիւրքանյի հայ եկեղեցու վրայ, — 25 տարուայ փորձը հարկու թէ ցոյց առայ մի որեւէ աշակցութիւն այդ կողմից: Սիտի Կաթողիկոսական Աթոռի անկախութեան առիթով ծաղած՝ եւ Մասթիսոսի վախճանելուց յետոյ տաք տաք շարունակուած վէճը տեղի ունեցաւ Կ. Պոլսի եւ Սիտի միջեւ, մեկուսի թողնելով էջմիածնի: Կ. Պոլսի պատրիարքները ընտրուած, հաստատուած եւ արձակուած են առանց որեւէ ժամանկցութեան կաթողիկոսի, եւ եթէ սրա անունն յիշատակուելիս էլ լինի հայ եկեղեցիների մէջ, — պատճական աւանդութիւններին ընծայուած մեծարանքի այդ պատասխան հարկն է, կարծում ենք, այն միակ արդիւնքը, որ ստանում է կաթողիկոսը...

ՉՀասել է ժամանակը, երբ անհրաժեշտ է սահմանել որեւէ որոշ ուղղութիւն մեր ապագայ զործունելութեան եղանակի նկատմամբ: Ակնհերեւ է, որ մեր կառավարութիւնը չէ կարող չեղուել ընտրութեան չմիջամտելու սկզբունքից, որ հուշակած է էջմիածնի վերջին ընտրութիւնների ժամանակ, եւ անհրաժեշտ է յարգել

ընտրութեան այն սպասութիւնը, որ սրբազործուած է մեր իսկ պետութեամբ: Ամէն մի բացայայտ խոտորում այդ սկզբունքից, արդար տեղիք կը տար գանգատելու՝ ոչ միայն օտարակառուակ, այլա եւ մեր հայ ժողովուրդին: Այսպիսի մի միջամտութիւն չէ արգելում հարկաւ, որ Կ. Պոլսի մեր դեսպանատունը եւ մեր բոլոր գործակալները Քիւրքեիայում արժուն կերպով դիտեն հայ հասարակութեան մտքերի տրամադրութիւնը՝ նոր կաթողիկոսի ընտրութեան վերաբերմամբ: Բայց ամենակարեւորը մեզ համար այն խնդիրն է, թէ արդեօք պէ՞տք է մեզ կուրորէն համաձայնել, որ էլժիածնում կատարուելիք յառաջիկայ ընտրութեան մէջ էլ Կ. Պոլսի հայ ժողովուրդը Քիւրքեական հայ թեմերի բոլոր զուէները յափտակէ:

«Բացայայտ է, որ քանի հանդուրժուի այսպիսի մի կարգ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնը ոչ թէ էլժիածնում կը կատարուի, այլ Կ. Պոլսում: Միակ զննքը, որով սպասադիմուած է մնում մեր կառավարութիւնը՝ բարձրագոյն իշխանութիւններին այն իրաւունքն է, որով նա կարող է չհաստատել այդպէս ընտրուած կաթողիկոսին: Սակայն զննքի գործածութիւնն էլ փոքր ինչ սնյարմար է...»:

«...Այս շատ ճշմարիտ գաղափարի իրագործման միակ միջոցը, որքան որ դա վերաբերում է էլժիածնի խնդրին, այն կը լինէր, որ կաթողիկոսի ընտրութեան ուղղակի մասնակցելու հնար տրուէր այդ ժողովուրդին: Կարելի է հաստատ յուսալ, թէ այդ մասնակցութիւնը չի արտայայտուի մեր դիտումներին եւ շահերին հակառակ գործողութիւններէ մէջ: Այսպիսի մի նորմաձեւութիւն, անտարակոյս, դժգոհութիւն, եւ թերեւս եւ բացարձակ բողոք կը յարուցանէ Կ. Պոլսի հայ հասարակութեան կողմից: Բայց կասկած չկայ, որ երբ յիշեալ նորմաձեւութիւնը կարողանայ անդամաւորեն յայդ հասարակութեան վճռող ազդեցութիւնը կաթողիկոսի ընտրութեան գործում եւ վերահաստատել մի որեւէ կապ էլժիածնի եւ Փոքր-Ատիայի թեմերի միջեւ — այն ժամանակ եթէ Կ. Պոլսի հայերն հրատարակէին անդամ մասնակցել էլժիածնի Կաթողիկոսի ընտրութեան, դա մեզ փոյթ չէր լինել: Ձէ կարելի անտես թողնել, որ կաթողիկոսի ազդեցութեան վերականգնումը Փոքր-Ատիայի հայերի վրայ՝ միայն նրանով է հնարուեր, որ նա անմիջական հաղորդակցութիւններ ունենայ հայերի հետ: Իսկ այդպիսի հաղորդակցութիւն այն ժամանակ միայն առաւ կը գայ, երբ նրա ընտրութեան մէջ եւս մաս ունենան այդ երկրի հոգեւոր եւ աշխարհական դասակարգերը: Գանի որ էլժիածնի եւ մեզ սահմանակից զաւառների հայ ազգաբնակչութեան միջեւ կանգնած կը լինեն Կ. Պոլսի պատրիարքը եւ Կ. Պոլսի հայ հասարակութիւնը, — ու նայն կ'անցնեն մեր բոլոր ջանքերը՝ վերահաստատելու ամբողջ հայ ազգի աշխուժ Ս. Գրիգորի Աթոռի վերակշռող նշանակութիւնը, եւ մենք՝ ընկնելով սոսուերի ետեւից, առաւել եւ առաւել կը վնասենք մեր ներքին շահերին եւ կը մտաննեք դրանց մեզ թշնամի ուժերի մեջը»:

«Վերոյիշեալ բոլոր կշռադատութիւնների հիման վրայ, կարծես անհրաժեշտ պիտի թուէր»:

«Այժմէն իսկ պաշտօն յանձնել Կ. Պոլսի մեր դեսպանութեան որ նա պահանջէ՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքից հիշաւ անդեկութիւններ՝ օսմանեան պետութեան մէջ

կզած հայ լուսաւորչական թեմերի մասին, իւրաքանչիւր թեմի հողային տարածութեան որոշումով հանդերձ. իսկ ստացուելիք անդեկութիւնները վերատուգելու համար, եթէ հարկ լինի, դիմել մեր հիւպատոսներին եւ հարցնել թէ քանի՞ հաս են յասակապէս այն թեմերը, որոնք կազմում են որոշ քանակութեամբ բնակիչ բովանդակող հոգեւոր վարչական միութիւններ:

Կաթողիկոսի ընտրութեան մասնակցելու իրաւունք ունեցող անհայել միայն այնպիսի թեմեր, որոնց մէջ կարող է ընտրուի մի անկախ աշխարհական պատգամաւոր:

«Յասակացի Կ. Պոլսի ժողովին միայն մի աշխարհական պատգամաւոր ունենալու իրաւունք՝ էլժիածնի ընտրութեան գործում, եւ պահանջել, որ իւրաքանչիւր թեմ կամ իր աշխարհական պատգամաւորն ընտրէ կամ թէ դրաւոր կարծիք յայտնէ՝ իր ցանկութեան յիշատակութեամբ հանդերձ...»:

«...Տարեկոյս չկայ, որ եթէ այսպիսի կարգ պահպանուել լինէր, նոր կաթողիկոսի ընտրութիւնը՝ ներկայ թուականի (1883) վերջն կամ յաջորդ տարուայ սկիզբին, ամենայն հաւանականութեամբ, մեր կառավարութեան կամքի համեմատ կը կատարուի: էլժիածնի մէջ շատ աւելի հեշտ կը լինի առանձին Քիւրքեական թեմերի պատգամաւորների ձայները հաճելի անձնաւորութեան վրայ ուղղել, քան թէ մեզ յանկուցանել Կ. Պոլսի հայերին, եթէ նրանց ընտրելին կարող չլինէր հաւանութիւն գտնել մեր կառավարութեան կողմից: Ահհար է յխոտտվանել, որ այս անգամ մեր հոգեւորականների դասից մի անձի բարձրանալը Կաթողիկոսական Աթոռի վրայ, շատ ցանկալի կը լինէր, որպէս թէ մեր լուսաւորչական հայ հոգեւորականութիւնը իրեն իսպառ մերժուած չհամարէր այդ աթոռից, — ինչ որ շատ դառն եւ լքող ապաւորութիւն կը գործէր նրա վրայ, — եւ թէ մանաւանդ նոր կաթողիկոսը մեր կառավարութեան անմիջական ազդեցութեան տակ գտնուէր, աւելի շատ եւ աւելի լաւ անձուէր լինելով իր եկեղեցու եւ հօտի այն շահերին, որոնք իր պիտաւոր պարտաւորութիւնն են կազմում, եւ որոնք, դժբախտաբար, ջիչ էին ճանաչուած վերջին երկու հայրապետներից»:

«Հարկաւ, դժուար է մեր բարձրաստիճան լուսաւորչական հայ հոգեւորականները չըջանում մտածացոյց անել մի այնպիսի անձնաւորութեան վրայ, որը իր կրթութեամբ եւ բարոյական արժանիքներով՝ համապատասխան հանդիսանալ այն գործին, որ սպասում է իր պետից՝ հոգեւոր եւ բարոյական նկատմամբ՝ աստապեալ հայ եկեղեցին: Սակայն, ՉՏ տարուայ տխուր փորձը շատ բացբոշ ապացուցեց, որ Քիւրքեիայի հայ հոգեւորականութիւնն էլ ապիկար է դուրս բերելու իր շարժերից այդ իդէալին մերձեցող մի կաթողիկոս: Թուստատանի հայ հոգեւորականների դասից ընտրելի հայրապետը գտնէ չի մտցնի էլժիածնի մէջ այն աղէտալի ազդեցութիւնները, որոնք գալիս են վնասփորի փոքրից»:

«Բայց որովհետեւ, շնայելով ոչ մի զգուշութեան՝ վերջ ի վերջոյ դարձեալ Քիւրքեիայի լուսաւորչական հայ հոգեւորականներից մէկը կարող է նստել Հայրապետական Աթոռի վրայ, որ կը խորէր մեր յոյսերը, ինչպէս որ խորքին հան-

դուցեալ Մատթէոսն եւ Գէորգը, — ուստի աւելորդ չի լինի ժամ առաջ որոշել մեր գործողութեան եզանակի այն էական հիմքերը, որոնց որ Հետեւելու է մեր կառավարութիւնը, էջմիածնի Աթոռի Հետ ունենալիք իր յարաբերութիւններէ մէջ: Գործողութեան այդ եզանակը սահմանուած էր Կ. Պոլսի մեր նախկին ղեկավանից, նրա հետադրի մէջ 7-10 Յունիսի, Հետեւեալ խօսքերով.

Il serait opportun que l'administration du Caucase eût soin d'agir, dès l'installation du nouveau patriarche, afin de le maintenir dans les dispositions correctes.

(Թարգմ. — Եպատակաբար է, որ Կովկասի վարչութիւնը ջանք չործ դնէր, կաթողիկոսի հաստատուելուն պէս, ուղիղ արժամադրութիւններէ մէջ պահելու նրան):

Կովկասի ղլխաւոր վարչութիւնը ընդունեց գործողութեան այդ հիմնադիրը եւ Հետեւում էր գրան, առանց երբեք շեղուելու յարգութեան եւ ակնածութեան այն մեկերից, որոնք պահանջուած էին կաթողիկոսի կողմէր կրող անձնաւորութեան Հետ բանակցելու. բայց եւ այնպէս նա Հարկ էր դատում աղբու կերպով դիմադրել նրա բոլոր ձգտումներին՝ ապաստել մեր օրէնքներէ եւ մեր կառավարչական հրահանգներէ հնազանդութիւնից: Այս մասին բաւական վկայութիւն կարող են տալ Կովկասեան նախկին փոխարքայի ղլխաւոր վարչութեան բանակցութիւնները ներքին գործերի նախարարութեան Հետ. մեր վարչութիւնը անպատահ էր Համարում զիջողութիւններ բանեցնել վարչական ծանցակէտ նշանակութիւն ունեցող կարեւոր խնդիրներէ մէջ: Սակայն այս տեսակէտը նեցուկ չէր գտնում կենտրոնական բարձր կառավարութեան կողմից: Այս վերջինը, կարծես, առաւել կարեւոր էր դատում յամենայն դէպս հաշտ ընթացքի Հետեւել շանդուցեալ Հայրապետի Հետ Հազարակցեցիլս՝ առանց պնդելու, որ նա անպայման կատարէր օրէնքի պահանջները, — այն յոյսով անշուշտ, թէ այդպիսի եղանակով կաթողիկոսի յամառութիւնը կ'ամբողջէր, եւ երկու կրելով թերեւս, թէ նա՝ բուն վարժունքից՝ մի անհաւոյ թշնամական քալլ գործելու կը ստիպուէր: Սակայն հետեւանքները այդ յոյսը չարդարացրին, իսկ երկուները Հարկ թէ հիմնաւոր էին: Հանդուցեալ Գէորգ Կաթողիկոսը, իբրև, առում էր զարացման ժամանակ, թէ կը թողնէ էջմիածինը եւ Թիւրքիա կ'երթայ, սակայն դժուար թէ Հարկ լինէր կարեւորութիւն ընծայել այդ սպասանալիքներին, մի կողմից այն պատճառով, նա չէր հրժարուիլ էջմիածնի վանքին մէջ վայելած նիւթական օգուտներէ, միւս կողմից էլ այն պատճառով, որ նա չէր կարող չզիտնուլ թէ վերջ ի վերջոյ առաւել մեծ նշանակութիւնը Հաւանօրէն կը մնար սեփականութիւն ոչ թէ կաթողիկոսի կողմէր կրող անձին, այլ նրա կեցութեան սեզին, որ գտնուած է Ս. Գրիգորի գերեզմանի վրայ: Յամենայն դէպս՝ ոչ մեր կառավարութեան արժանապատուութիւնը, ոչ ալ մեր ներքին քաղաքականութեան շահերը թայլ չեն տալիս, որ կաթողիկոսը մտնար, թէ նա ուստայ կայսեր հպատակն է եւ ուստայ օրէնքներէ նեթակայ: Նրա մէջ այս համոզումներ հաստատուել վարչապետութեան պատշաճի մեկերը լիովին յարգելով, թերեւս աւելի կարեւոր եւ էական է, քան թէ առաւել կամ

ուսազ յայտեր գնելը նրա ժամակցութեան վրայ՝ ի նպատակ մեր արտաքին քաղաքականութեան շահերին: Ամենայն Հայոց ապագայ կաթողիկոսի Հետ՝ մեր կառավարութեան ունենալիք յարաբերութիւններէ իրբու նշանաբան պէտք է ընդունել՝ սուսակցիք ին մասո, ֆորտեքս ին թէ (մեկերէ մէջ փափուկ եղբր, գործի մէջ անհաշտ):

ՐԱՐՈՆ ՆԻԿՈՒԱՅԻ

Կառավարիչ կովկասեան նախկին փոխարքայի գիւսմատան

* * *

Ամենայն Հայոց Կաթողիկոսի քաղաքական արժէքի մասին արտայտուած է նաեւ Կ. Պոլսոյ նախկին ուսու ղեկավան Իկնատիւն որ Սան Սթեֆանոյի դաշինքի կնքումին առթիւ կը գրէր իր երկրի արտաքին գործերու նախարար իշխան Կորչաքովին.

«Լերդ յօգուածով լիակատար բաւարարութիւն տրուած է հայ ժողովուրդին: Առաջին անգամ ըլլալով՝ Հայաստան անուրը կը յիշատակուի միջազգային դաշինքի մէջ, եւ այն յանձնառութիւնները, որ Բարձրագոյն Գուրը առած է իր վրայ, մեզ իրաւունք կուտան մեր խրմամատարութիւնը տարածելու Փոքր Ասիայ քրիստոնեայ ազգաբնակչութեան մեծամասնութեան վրայ: Այդ յօգուածը ցոյց պիտի տայ Եւրպայի, որ Ռուսիա մտահոգ է ոչ թէ բացառաբար վիճակովը սլաւներու, ոչ իսկ վիճակովը միայն իր հաւատակիցներու, այլ որ Ռուսիա առաջնորդուած մարդասիրութեան, նպատակ ունի ապահովել բարեկեցութիւնը Թուրքիոյ բովանդակ քրիստոնեայ ազգաբնակչութեան: Եւ որովհետեւ թուրք լիագործերը յամառաբար եւ սաստկօրէն կ'ընդդիմանային յիշատակութեանը դաշինքի մէջ էջմիածնի կաթողիկոսի անուան՝ իբրեւ կրօնապետ Ամենայն Հայոց՝ ուստի ուսու լիագործները զգուշութիւն մկատեցին չյիշատակել այդ մասին»:

Նոյն գրութեան վերջաւորութեան կոմս Իկնատիւն կ'ըսէ.

«Եւ իսկապէս, միջազգային շատ մեծ կշիռ տալով կաթողիկոսին՝ մեզ կրնայինք մեզ համար իսկ վարչական որոշ գծաւարութիւններ ստեղծել Կովկասի մէջ եւ միջուի իսկ որոշ փափաքներ եւ ձգտումներ իրաւրելի հայոց մէջ, անյարիր մեր շահերուն»:

Այս մտահոգութիւնները աւելի յստակ կը բացատրէ Բ. Բորեան իր երկնատոր «Արմենիային մէջ».

«Կաթողիկոսը, իբրեւ ներկայացուցիչը հայ ժողովուրդի, անհրաժեշտ էր ցարակամ Ռուսիոյ իր միջազգային գիւսանագիտական յարաբերութեանց մէջ՝ աւելի յաջողաբար տանելու համար՝ ուստական արտաքին քաղաքականութիւնը Արեւելի մէջ, սակայն այս նախադրու-

մը կրճար անդրադառնալ Ռուսիոյ նաեւ ներքին ֆազաֆականութեան վրայ: Եւ եթէ ցարական Ռուսիոյ արտաքին ֆազաֆականութեան շահը կը պահանջէր բարձրացումը կաթողիկոսի արժէքին, անդին նոյն Ռուսիոյ ներքին ֆազաֆականութեան շահը հակառակը կը պահանջէր: (Հիշելու էր եւ Դաշնակցութիւնը, Վ. Նաւասարդեան, էջ 632):

Կ. ՊՈԼՍՈՑ ԱԶԳ. ԵՐԵՍՓ. ԺՈՂՈՎԻ ԸՆԴՊԻՄՈՒԹԻՒՆԸ

Էջմիածնի կաթողիկոսի ընտրութեան եղանակին շուրջ ռուս կառավարութեան գաղտնի տեղեկագիրը յստակօրէն կը պարզաբանէ այդ պետութեան նկատմաները: Ռուսերու ազդեցութեան տակ էջմիածնի Սինոդը փորձեց կիրարկել կաթողիկոսական ընտրութեան նոր եղանակ մը եւ 1883 Սեպտ. 30ի պաշտօնազրոյց ուղեց ուղղակի հրակէր տալ Թուրքիոյ հայոց 43 վիճակներուն:

Այդ թուականներուն Կ. Պոլսոյ Ազգ. Երեսփ. Ժողովը բուռն ընդդիմութիւն ցոյց տուաւ: Ստորեւ կը ներկայացնենք քաղաածք մը, տեղեկաբեր Յ. Նուրեան էֆ. ի ղեկուցումէն: (Տես Ատենապարտութիւնք Ազգ. Ժողովոյ, 10 Փետր. 1884, նիստ ԺԹ):

Տեղեկաբերը նախ կը շեշտէ հարցին կարեւորութիւնը. «վասն զի պէտք է մոռնալ թէ այս խնդրէն կախումն ունի Հայաստանեայց Եկեղեցւոյ Միութիւնը»: Ապա կը յայտնէ, որ Կ. Պոլսոյ ռուսական դեսպանատան խորհրդական պ. Օնուի միջոցով ստացած է էջմիածնի Սինոդին ղրկուած գրութիւնները:

«Արդ, այս տեղեկութեամբ վրայ, Ս. Պատրիարք Հօր կարգադրութեամբ Յանձնաժողովս նիստ ըրաւ ի Բերա Էստեանց տան մէջ եւ Պ. Օնու թարգմանի մը հետ գալով հանձնեց թղթեր յանձնեց եւ բերանացի յայտարարութիւններ ալ ըրաւ. թղթոց մէկն էջմիածնի Սինոդէն ուղղեալ էր առ Ս. Պատրիարք Հայրն, իբրեւ առաջնորդական վիճակ մը՝ ընտրութեան մասնակցելու համար եւ միւսներն էին Ս. Պատրիարք Հօր թղթոյն համախառն շրջաբերականով՝ յանուց 43 վիճակաց Թուրքիոյ, գորս իրենց տեղերն հասցնելու յանձնարարութիւն եղած էր Նորին Սրբազնութեան, եւ այդ թուրքերն կը կրէին 1883 Սեպտեմբեր 30 թուականն եւ հինգ Սինոդականաց ստորագրութիւնով:

Բայց որովհետեւ Ձեր Յանձնաժողովն նոյն օրը առանց խորհրդակցութեան անմիջապէս չէր կրնար պատասխանել Պ. Օնուի, օր մ'ետքը վերստին գումարուեցաւ եւ այդ նստին մէջ կաթողիկոսական

ընտրութեան մասնակցութեան խնդիրն ըստ ամենայնի ետազօտել է խորհրդակցելու յետոյ, հետեւեալ օրն Ամեն. Ս. Պատրիարք Հայրն, Նար-Պէյ եւ Իզմիրլեան Սրբազանք եւ ես Ռուսական Դեսպանատանն երթալով բացատրութիւն տուինք վսեմ. Դեսպանին, յայտնելով թէ Ամենայն Հայոց կաթողիկոսին ընտրութեանն համար Թուրքիոյ Հայոց պահանջած մասնակցութեան եզանակն նոր չէ եւ 1866էն չ'սկսիր, այլ դարաւոր կարգաց ու աւանդութեանց վրայ հաստատեալ է, թէ՛ երբեք Թուրքիոյ Առաջնորդարանք ուղղակի մասնակցած չեն, այլ միշտ Պոլսոյ Պատրիարքարանին միջոցաւ ուղղակի եւ Ընդհ. Ժողովներով. թէ Հայոց Ազգ. Ժողովն՝ Թուրքիոյ Հայոց օրինաւոր ներկայացուցիչն է, բոլոր Թուրքիոյ հայերէն ընտրուած լինելով ըստ ազգային օրինաց. թէ՛ Կիլիկիոն վիճակն Իբրեւ ՊԱՐՁ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԸ ՆԿԱՏԵԼ ԿԱՐԵԼԻ Զէ, քանի որ բազում վիճակներէ կը բաղկանայ, եւ ուրիշ անգամներ իւր բոլոր վիճակներովն մասնակցած է եւ հետեւաբար Թուրքիոյ հովուական վիճակաց թիւն չէ թէ 44, այլ 65 է, եւ դիտել տուինք թէ՛ թէպէտ կարսի վիճակն վերջի պատերազմէն ետքը պակասած է, սակայն Պիլեհիկի վիճակն աւելցած է նորա տեղ եւ հանգուցեալ Հայրապետն ալ յատկապէս նորա համար նպիսկապօս ձեռնադրած է. եւ թէ՛ Թուրքիոյ Պատրիարքութիւնն, ըստ որում միանգամայն Ամենայն Հայոց Հայրապետութեան Փոխանորդութիւնն է, եւ իւր ներքեւ ունի ո՛չ միայն Թուրքիոյ Առաջնորդութիւններն, այլ եւ մասնաւոր կաթողիկոսութիւններն, Սինոդն պարտ էր ըստ հնաւանդ կարգաց եւ աւանդութեանց վարուիլ նորա հետ եւ ոչ թէ իբրեւ պարզ Առաջնորդութիւն մը համարել:

Արդ, մեր այս բացատրութիւններն վսեմ. Դեսպանին վրայ լաւ տպաւորութիւն ըրին եւ յստացաւ ի Բեդրասպուրկ հեռագրել գայնս:»

Այս բացատրութիւններէն ետք Ազգ. Ժողովին մէջ կը կարգացուի Սինոդի պաշտօնագիրը եւ անոր համար պատրիարքին անուանով խմբագրուած պատասխանը Նար-Պէյ եւ Իզմիրլեան եպիսկոպոսներուն կողմէ:

Բոլոր երեսփոխանները կ'ըսեն. «Շատ լա՛ւ է. կը շնորհաւորենք յանձնաժողովոյ այդ ընտիր աշխատանքը»:

Մ. Աղաբէկեան դիտել կուտայ, թէ փոխանակ պնդելու կաթողիկոսական ընտրութեան 1866ին ընդունուած ձեւին վրայ, «Թուրքիոյ Հայոց Ազգային Ժողովը պէտք է, որ նախ քան գամենայն, ամենայն Հայոց Հայրապետին ընտրութեան համար ընդհանուր օրէնք մ'առաջարկէ, եւ Պոլսոյնիայի մէջէն պէտք եղած բարեփոխութիւնք լինելով՝ Հա-

յատուցմանց Ս. Եկեղեցւոյ անկախութիւնը բոլորովին ամփաք պահելիս:

Իզմիրեան եպիսկոպոս կը պատասխանէ. «Պէտք է յիշել, Ազաբեգեանց էփէմոսի, թէ՛ 66ի ընտրական եղամակն մոր չէ՛ այլ Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնն հաստատուելէ ի վեր, 400 տարուամբ դրութիւն մէ՛»:

Իսկ Սինոդի շուրջ վիճարանութեան ընթացքին, երեսփոխան Ք. Ղազարոսեան կ'ըսէ. «Այո՛, ես էի անցեալ միսոսին ըսողն թէ՛ Սինոդն սուրբ չէ, զի օտարէն ընտրուած է այն...»:

Ի վերջոյ քուէի կը դրուի եւ միաձայնութեամբ կը վաւերացուի Սինոդին զրկուելիք պատասխանը: Ձեռնպահ կը մնայ Գ. Նորատուհեան, որ առաջարկած էր Սինոդին հետ եղած սարակարծութիւնը հարթել:

Երկու ամիս ետք, 2 Ապրիլ 1884ի Ազգ. Ժողովի նիստին մէջ Կաթողիկոսական Յանձնաժողովը կը բերէ նոր առաջարկութիւն մը. Թուրքիոյ Հայոց եկեղեցական ժողովի համազումարը, պատրիարքութեան ենթակայ բոլոր առաջնորդութիւններու կողմէ կը քուէարկէ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան երեք թեկնածու եկեղեցականներու անուններ, առոնց ստացած քուէներուն ցուցակը «մտամէ ի ֆուէտուսիս ֆուէարկութեան որ կը կատարուի ի կաթողիկէ Տանարիս Սրբոյ էջմիածնի»: Այս առաջարկութիւնը կ'ընդունուի 62 քուէով (30 դէմ եւ 8 ձեռնպահ):

Ասկէ ետք կը կարգացուի 7500 վանեցիներու ստորագրութեամբ հանրագրութիւն մը, ուր կը շեշտուին Որիմեան Հայրիկի արժանիքները, մատուցած ծառայութիւնները եւ կ'առաջարկուի անոր թեկնածութիւնը իբրեւ կաթողիկոս:

Երեսփ. Ժողովը, ոտքի վրայ, «Եկեղեցական դասն ըստ օրինի կ'երգէ շնորհածիս ի ձորէ» շարականն հանդէպ Ս. Տանարիսն:

Ապա կը կարգացուի Եկեղեցական Համազումար Ժողովի տեղեկագիրը, երեք թեկնածու եպիսկոսներու անունները եւ կը կատարուի քուէարկութիւն: Ներսէս Արք. Վարժապետեան կը ստանայ 62, Մկրտիչ Արք. Որիմեան 50, Մելքիսեղեկ Արք. Մուրատեան 42 քուէ:

Կաթողիկոս կ'ընտրուի Ներսէս Վարժապետեան, բայց իր հիւանդութեան պատճառով կը հրաժարի, դեռ ընտրութիւնը Յարին կողմէ չվաւերացուած:

Ներսէս Վարժապետեանէն ետք Հայ ժողովուրդի գլխաւոր թեկնածուն Որիմեան Հայրիկը եւ Մելքիսեղեկ Մուրատեանն էին (Իզմիրի Աւաջնորդ): Բայց ուսու կառավարութեան համար վստահելի նկատուե-

ցաւ Մակար եպիսկոպոսը (Քիչնեւի Առաջնորդը) եւ Սինոդի վրայ դուր ծաղրուած ազդեցութեան շնորհիւ, 1885 Ապրիլ 21ին կաթողիկոս ընտրուեցաւ Մակար եպիսկոպոսը: Այս նկատմամբով ալ ան երբեք ժողովրդականութիւն չհասցաւ, իբրեւ ուսերու կողմնակից:

Մակար Կաթողիկոսի օրով, 1887ին, էջմիածնի ձեմարանին մէջ ուսուցչական պաշտօն կը ստանանէ Մաղաքիա եպիսկ. Օրմանեան, բայց տարի մը ետք ուսու կառավարութեան կողմէ կը հեռացուի իբրեւ անբաղձալի («Ազգապատում», Գ. հատոր, էջ 4579):

Հայ Ժողովուրդի արեւելահայ եւ արեւմտահայ երկու հատուածներուն մէջ հաւասարապէս մեծ համակրանք չհասած էր Որիմեան Հայրիկ եւ երկու անգամ ընտրութիւններու ընթացքին անոր թեկնածութիւնը դրուած էր, ի վերջոյ Մակար Կաթողիկոսի մահէն ետք, 1892 Մայիս 3ին կաթողիկոս կ'ընտրուի Տ. Մկրտիչ Ա. Վանեցին: Էջմիածնի Սինոդը պատակտուած էր եւ Փեթրսպուրկի կառավարութիւնը այս անգամ դժուարութիւն չստեղծեց ընտրուած կաթողիկոսի վաւերացումին համար: Որիմեան նախ այցելեց Յարին եւ այս ճամբորդութեան ընթացքին ամէն տեղ ընդունուեցաւ ժողովրդական մեծ ցոյցերով:

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ» ԱՌԱՋԻՆ ԿՈՉԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը հիմնուեցաւ 1890ի ամառուան վերջերը: Անոր կազմութենէն քանի մը ամիս առաջ, 1890ի գարնան, լոյս տեսած է կոչ մը «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն» ստորագրութեամբ:

Այս կոչէն ոչ մէկ օրինակ մնացած էր, երբ 1917 Փետրուարեան ուսու յեղափոխութենէն ետք, Ռոստոմ Ս. Փեթրսպուրկի ոստիկանական բաժանմունքին մէջ զտաւ օրինակ մը այդ կոչէն որ ի պահ կը մնայ Հ. Յ. Դ. Թանգարանը: Ռոստոմ իր ձեռագրով հետեւեալ ծանօթութիւնը ձգած է կոչին տակ.

«Դաշնակցութեան առաջին մանիֆեստն է, 1890 թ. գարնանը հրատարակուած: Այ մի տեղ չէր նարում. գտնուած է Պետրոգրատ, գաղտնի բաժանմունքի թղթերի մէջ, ուրիշ կարեւոր հազուագիտ տուկումէնտներ չկան:

Որքան յիշում եմ այս կոչը խմբագրել է Քրիստափորը: Ռ.»: Իր պատմական արժէքին համար կուտանք այդ կոչը:

«Հայեր,

Այսօր հայոց հարցը նոր շրջանի մէջ է մտնում: Դարերից ի վեր ստրուկ թիրախահայաստանը ազատութիւն է պահանջում:

Հայը, որ դեռ երէկ շիմքը ծածկ Եւրոպայից օգնութիւն էր ապրում, այսօր համազօւելով, որ օտարի վրայ դրած յոյսը ցնորֆ է, վնաս է իր ձեռքով պաշտպանել իր իրաւունքը, իր կայքը, պատիւը, ընտանիքը...

Դարերով մնշուել է հայ ժողովուրդը թուրք բռնապետների լծի տակ: Դարերի ընթացում ցանկ է, բայց պտուղը երբեք չի վայելել. առաջակ տիրողը յափշտակել է:

Դարերի ընթացում անարգել են նրա սրբութիւնները, բայց հայը կրել է այս բոլորը, կրել է համբերութեամբ, շարունակելով ողորդել հայրենի հողը իր քրտինքով... Դարերի ընթացում հայը կարծէք է կամեցաւ ապացուցանել մարդկութեան, թէ կարելի է ազատութիւն ձեռք բերել կուլտուրական նահապարհով: Քաղաքակիրթ Եւրոպան խոստացաւ վերջ տալ թուրքերի բարբարոսութիւններին Հայաստանում:

Սակայն, անցան տարիները տարիների յետեւից եւ հայերի դրութիւնը իրենց հայրենիքում ոչ թէ միայն չլաւացաւ, այլ անլի ծանրացաւ եւ այժմ միանգամայն անտանելի, դժոխային է դարձել: Հայի պէս համբերող ազգն անգամ անկարող է շարունակել իր գոյութիւնը այդպիսի երկրում:

Բայց համբերութիւնն էլ ունի իր սահմանը: Գագաթնակէտին հասցրած հալածանքները վերջապէս սքափեցրին հային. այսօր նա վնաս է կամ մեռնել կամ ազատուել: Եւ անհ էրզրումը եւ ապա Կ. Պոլիսը աներկիւղ բողոքում են անիրաւութիւնների դէմ. հայը այլեւս չէ խնդում, այլ պահանջում է, եւ պահանջում է զենքը ձեռքին:

Սուլթանը սարսափահար է. թուրք կառավարութիւնը գլուխը կորցրել է:

Այսօր Եւրոպան իր առաջ տեսնում է մի ամբողջ ժողովուրդ, մի ամբողջ ազգ, որ սկսել է պաշտպանել իր մարդկային իրաւունքները:

Այդ ժողովուրդը հասկացել է, որ իր ոյժը իր մէջ է. երէկուայ ստրուկ, համբերող հայաստանցին այսօր յեղափոխական է դարձել:

Հայոց հարցի յետաձգելը այլեւս անկարելի է: Այսպիսի մի պատմական նգնաժամի միջոցին, առաջին հարցը, որ պէտք է զբաղեցնի ամէն մի լուրջ հայրենասէրի, — այդ յեղափոխական ուժերի միութեան եւ դաշնակցութեան հարցն է:

Հայ յեղափոխական գաղափարի դրօշակակիրն է «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը», որ ստրանով դիմում է բոլոր հայերին եւ հրաւիրում է կանգնել մի դրօշակի տակ:

«Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը» թէեւ նոր է համդէս գալիս իրրեւ կազմակերպութիւն, բայց նա վաղուց գործող խմբերի միութիւնն է. խմբերի, որոնք նոյն իսկ հայ ժողովրդի ձգտումների ծրուովն են: «Դաշնակցութիւնը» ձգտելու է միացնել բոլոր ուժերը, կապելով իր հետ բոլոր կենտրոնները: Եւրոպայի դեմքով Թուրքաց-Հայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատութիւնը. «Դաշնակցութիւնը» մտել է այն կռուի մէջ, որ սկսել է ինքը ժողովուրդը տանկաց կառավարութեան դէմ, ուխտելով մինչեւ արեան վերջին կաթիլը կռուել հայրենիքի ազատութեան համար:

Միանա՞նք ամէնֆս ժողովրդի հետ, որ բարձրացրել է ազատութեան դրօշակը. նա ով երես կը դարձնի ժողովրդից եւ չի հետեւի նրան, նա այդ ժողովրդի հակառակորդն է, նրա թշնամին է...

Ուրեմն, եղբայրներ, միանա՞նք յամուս սուրբ գործի ընդհանուր թշնամու դէմ:

Եւ դուք, երիտասարդներ, միշտ եւ ամէն տեղ վսեմ գաղափարների պաշտպաններ, միացէ՛ք ժողովրդի հետ:

Եւ դուք, ալեգարդ ծերունիներ, ոգեւորեցէ՛ք ձեր որդոց եւ օգնեցէ՛ք նոցա ձեր բազմամեայ փորձառութեամբ:

Եւ դուք, հարուստներ, բաց արէ՛ք ձեր քանկները, զէնք հայբայթելու ժողովրդին, որ նա կարող լինի պաշտպանել իր կուրծքը, որ բաց է արել թշնամու դէմ:

Եւ դու, հայ կին, ոգի ներշնչիր գործի մէջ:

Եւ դու, հայ հոգեւորական, օրհնիր ազատութեան զինուորներին...

Սպասելու ժամանակ չէ...

Համախմբուենք, հայեր, եւ քաղաքամբ առաջ տանենք հայրենիքի ազատութեան սուրբ գործը»:

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ»

Հ. Յ. Դաշնակցութիւնը, Հրատարակելով այս թերթը, յայտնում է որ ժողով ակադարյում կ'ունենայ իր օրգանը «ԴՐՕՇԱԿ» անունով, ի մէջի այլոց, կը պարզարանվի դաշնակցութեան ծրագիրը:

Կ Ռ Ի Ի Ը Ս Կ Ս Ո Ի Ա Մ Է

Կռիւ ազատութեան համար, կռիւ գոյութեան համար:

Մի կողմից դարբերով տանջված հայ ժողովուրդը, միւս կողմից, ոսից ցգուխ ապականված, քայքայվող բուրք կառավարութիւնը, ահա կուռնեն:

Սարսափելի կռիւը այժմեանից յուսահատեցնում է քերահաւատներին: Նոքա հարցնում են. «Ի՞նչ կարող է անել հայը, ոչ բնդանօք ունի, ոչ գորք, ոչ պաշտպան»:

Աւելորդ քերահաւատութիւն: Ժողովրդական կռիւ ժամանակ՝ բնդանօքը — ժողովրդի գգացմունքն է, գորքը ինքը ժողովուրդը, պաշտպանները — ժողովրդի միութիւնը:

Երբ ժողովուրդը միացած է եւ պատրաստ կուելու ոգեւորված միեւնոյն վեհ գգացմունքով, — այլ եւս ոչինչ կ'արժէ ոչ թշնամու գորարանակը, ոչ թնդանօքը, եւ ոչ օտարի պաշտպանութիւն:

Ապստամբուած ժողովուրդը առասպելական եօթգլխանի վիշապ է: Կը կտրես նրա մի գլուխը, տեղը կը բուսնի երկուսը: Ժողովրդական ազատութիւնն ճնշելը՝ հրդեհ հանգցնել չէ: Կը ճնշես ապստամբութիւնը մի տեղ, նա կը պայթի մի ուրիշ տեղ: Իսկ երկբարդ օրը՝ թէ այստեղ եւ թէ այնտեղ: Ահա թէ ինչու այդ շարժումը յուսատու է մեզ համար, վտանգաւոր՝ թշնամու համար:

Հայ ժողովուրդը սկսել է մի մեծ, սուրբ կռիւ: Այդ կռիւ մէջ մտնում էամբողջ ազգը: Թշնամին պատրաստվել է: Մի կողմից ճնշումն է սաստկանում, իսկ միւս կողմից՝ ժողովրդի դիմադրութեան ոգին: Ահա փաստերը:

— Թիրբաց կառավարութիւնը լսել չի ուզում հայերի պահանջները. նա շարունակ բանտարկում, ճնշում, ահարում եւ նեղում է ամէն մի հայի: Պոլսից սկսած մինչեւ վան, Բագուից մինչեւ Թարսիզ հեղեղել է իր լրտեսներով. լրտեսներ հայ հոգեւորականի շորերով, լրտեսներ բանտարում հայ քաղաքական յանցարարների դիմակի տակ: Նա գինում է քրդերին եւ թուրքերին հայերի շարժումը արմատախիլ անելու համար: Նա ահարում է երիւնդներին. դժուարացնում է ամէն մի

օտարահպատակի համար Թիրբիա մտնելը: Նա գոռով ստիպում է հայերին շնորհակալական ուղերձներ ստորագրել: Նա պաշտպաններ է որոնում թէ օտար տէրութիւնների եւ թէ հայերի մէջ: Յիշենք, օրինակ այն լուրը, որին դժուարամուտ ենք հաւատալ, թէ ուս կառավարութիւնը համերաշխ է Թուրքիայի հետ. յիշենք դաւանան պատրիարքին, Պոլսոյ Էփէնդիներին ուղերձը, Մամբրէ վարդապետի մատնութիւնները. չըմտնանք եւ Արփիարեանի գարշելի մեղան:

Սակայն չը մայելով այդ բոլոր անյայտ պայմաններին եւ քիրբաց կառավարութեան կողմից սաստկացող ճնշումներին՝ շարժումը չի կանգնում եւ աւելի ու աւելի խոր արմատներ է ձգում հայ ժողովրդի մէջ, որի ոգեւորութեան չափի մասին գաղափար են տալիս հետեւեալ փաստերը:

— Վաճում ընդհարումն է պատահել հայերի եւ թուրքերի մէջ: Մեզ գրում են, որ երկու կողմից մօտ 30 հազի սպանվել են: Թուրք կառավարութիւնը ստկում է այդ տեսակ ընդհարումներից, որովհետեւ կարծում է թէ դա ընդհանուր հայկական ապստամբութեան սկիզբն է:

— Մեր ներկայացուցիչները տեղեկացնում են մեզ, որ Վաճում փորձ փորձեցին սպանել մի հայի, որ առաջ վարժապետ է եղել եւ այժմ ոստիկան լինելով, սկսել է լրտեսութիւն անել: Վէրքը մահացու չէր: Վնասած է անպատեհա սպանել նրան եւ նրա հետեւորդներին:

— Մեզ հաղորդում են Կ. Պոլսից. «Դաւառացի հայերը, համալները, կը պատրաստվին մի բազմ ներկայացնել Պատրիարքին, որ նա յետ առաւ իր երաժարական, ունեւիտ ընելով ազգային ժողովի իրաւունքները եւ պատիւը: Հարկ կայ Պատրիարքին յիշեցնելու Գում-Գափուի դէպքը, ըստ որում, ինչպէս կը տեսնուի, նա թոյլ յիշողութիւն ունի»:

— Ժողովրդի հասարակ դասակարգից ամէն օր կամաւորներ են դուրս գալիս, որոնք հայրենիքի ազատութեան են ուզում ծառայել: Թէ ինչպէս է վերաբերվում ժողովուրդը դէպի այդ կամաւորները՝ գաղափար կարող է սալ հետեւեալը: Սահմանազլխի քաղաքներից մէկում մի կամաւորի թաղումն էր: Եկեղեցում տեղ ցցելու տեղ չը կար: Երբ ներկայ եղողներից մէկը սկսեց ճառ խօսել եւ արտասանեց հետեւեալ խօսքերը. «Հանգուցեալը Հայաստանի ազատութեան կամաւոր գինուր էր», ներկայ եղող բազմութեան ոգեւորութիւնը սաստկացաւ: Դագաղը եկեղեցուց դուրս բերելիս ամենքը միմեանք ձեռքից էին խլում: Ժողովուրդը դագաղին հետեւեց մինչև գերեզմանատուն: Երբ դագաղը պէտք է գերեզման իջեցնէին, մտեցաւ մի արհեստաւոր, որի որդին նայեալ է կամաւոր էր եղած եւ մի ընդհարման ժամանակ սպանուած էր, խնդրեց որ իրեն թոյլ տան իր ձեռքերով դագաղը գերեզման իջեցնելու: Դագա-

զը իջեցնելիս, մէկը առաջարկեց յարգել հանգուցեալի յիշատակը եւ ահագին բազմութիւնը ծունկ չոգեց ձիւնի եւ սառուցի վերայ: Մերերը ջահելներին յորդորեցին օրինակ վերցնել նրանից: Ներկայ եղողները հեռացան. իրանց հետ մի մի բուռ հող տանելով եւ ուխտեցին հետեւել հանգուցեալի օրինակին:

..... մի գիւղով սրանից մի ամիս առաջ անցնում էին մի խումբ կամաւորներ: Գիւղացիները նրան դիմաւորեցին եւ նախապահ գցելիս տալիս էին նոցա(*) եւ այլն: Մի չխառը այրի կին, դիմելով խմբապետին, ասաց. «Ես ոչ փող ունեմ եւ ոչ գէնք. ինչ որ ունեմ, այն եմ տալիս. սա էլ թող լինի իմ նուէրս»: Այս ասելով կինը բռնեց իւր միակ որդու ձեռից եւ տուեց խմբապետի ձեռքը...

— Ամէն օր բերկրալի լուրեր են հասնում մեզ զանազան կողմերից: Շատ տեղ գիւղացիները ծախում են եզները եւ գէնք են առնում: Յաճախ պատահում է, որ կանայք իրանց գլխի զարդարանքները եւ մատանիները տալիս են իրանց մարդոց եւ յորդորում, որ ծախեն եւ գրանով գէնք առնեն: Զմեռային երկար երեկոներին՝ հայ գիւղացու խօսակցութեան նիւթը՝ Հայաստանի ազատութիւնն է: Այդտեղ առասպելական չափազանցութեան հասցրած դէպքեր են պատմում, որոնք արդէն աշըղների երգի նիւթ են դարձել...

— Մի հայ կամաւոր հետեւեալն է հաղորդում. «Վ. գիւղի մէջ սրտանմալի տեսարանի հանդիպեցինք: Մեզ հետ ուզում էին միանալ երկու եզրայրներ: Մեծ եզրայրը ասում էր, թէ ինքը կ'երթայ, իսկ փոքրը ազալում էր որ իրան թողնեն գնալու: Երկու եզրայրները դիմեցին ծերունի հօրը, որ նա վնդի այդ բանը: Մերունին, մի փոքր մտածելով, ասաց. «Դուք կարող է՞ք գնալ, ես չեմ կարող: Երեքիս մէջ չոփ (վիճակ) գցենք՝ ում կը ընկնի, թող նա գնայ»: Վիճակն ընկաւ փոքր եզրօրը: «Ես հայր եմ եւ առանց վիճակի էլ կ'երթամ», ասաց յուզուած ձայնով ծերունին ու միացաւ կամաւորներին:

— Հայաստանի զանազան կողմերից «Գաշնակցութեան» գործակալները ոգեւորիչ լուրեր են հաղորդում: Քաղաքներում եւ գիւղերում պտտող պրօպագանդիստները մեծ համակրութեամբ են ընդունվում: Ժողովուրդը խմբվում է նոցա շուրջը: Կազմակերպութեան գործը արագ կերպով առաջ է գնում: Շատ տեղեր արդէն կապված են միմիանց հետ: Ամէն տեղ ժողովուրդը գէնք է ուզում: Շատերը փողով են գնում:

— Հայաստանի մի գիւղում, ինչպէս յայտնում է «Գաշնակ-

(*) Մեր ձեռքի տակ ունեցած կոչին մէջ կրկու բառեր չեն կարգացուիք, կոչի այդ մասը պատռած ըլլալով:

ցութեան» գործակալներից մինը, տեղի է ունեցել հետեւեալ փաստը: Այնտեղ բոլոր գիւղացիք վնդել են չը ցանել արտերը: Երբ հարցնում են դորա պատճառը, մի ակզարդ, պատկառելի ծերունի պատասխանում է. «Ի՞նչի ցանենք, ի՞նչ ցանելու վախտ է. գարնանը տեսնելու ենք ոչ թէ ոսկեգոյն ցորենի արտեր, այլ արիւնով ներկած ամայի դաշտեր»...

— Գեկտեմբերի 22ին, Սալմաստում տեղի է ունեցել մի արտասովոր սպանութիւն: Սպանուած է հայ կաթօլիկ վարդապետ՝ Հայր Արապեօնը: Սպանողը անյայտ է: Մտնելով վարդապետի բնակարանը, անյայտ մարդը մի փոքր խօսակցում է հայր սուրբի հետ եւ ապա հանելով խանջալը՝ խրում է վարդապետի բերանը, գոչելով. «Այս է մատնիչների վարձը»: Վարդապետը տեղն ու տեղը մեռնում է: Պարսից կառավարութիւնը որոնում է սպանողին, ոչ-չ անյայտացել է: Սալմաստի մէջ այդ վարդապետը յայտնի է եղել իբրեւ մատնիչ:

— Եւրոպայի աշխարհի թող փշելու եւ հայոց խարված պատրիարքի բերանը քաղցրացնելու համար, թիւրքաց կառավարութիւնը նորերս ուզարկեց աշխարհի բոլոր կողմերը հետեւեալ հեռագիրը. «Սուլթանը ներումն շնորհեց քաղաքական հայ բանտարկվածներին»: Երբ այդ լուրը Տրապիզոն հասաւ, վալին բանտից արձակեց քաղաքական յանցաւորներին, եւ հայերը ուրախացած գոհացողական մագթանքներ կատարեցին Սուլթանի կեանքի համար: Բայց այդ ուրախութիւնը երկար չը տեւեց: Շուտով Կ. Պօլսից հեռագիր ստացվեց՝ անմիջապէս նորից բանտարկել արձակվածներին, որովհետեւ ներումն է շնորհած Պօլսի բանտարկվածներին միայն: Գուցէ հայերը փոշմանեցին իրանց ազօթի համար, բայց արդէն ուշ էր: Սակայն Պօլսում խմբուած գաւառացի հայ ժողովուրդը եւ նորա շարժման ղեկավարները որիշ կերպ ընդունեցին կառավարութեան խորամանկութիւնը. այդ ցոյց է տալիս նորերումս Պօլսի քաղերում եւ նոյն իսկ Սուլթանի պալատի մօտ ձգած մի յայտարարութիւն, որից բերում ենք հետեւեալ կտորը.

«ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ, Կ. ՊՈԼԻՍ:

Արթնեցէք, Հայեր,

«Ուշադրութեամբ շփեցէք ձեր աշխարհ եւ տեսէք ինչ երապուրիչ որոգայտներ կը լարուին ձեր շուրջը. մի կարծէք, թէ Սուլթանը շնորհ մը արած լինելու համար արձակեց այն 87 հայ երիտասարդներն որ արդէն անմեղ էին: Այս արձակում մի սարսափելի կեղծաւորութիւն կը նշանակէ, ոչ նպատակ ունի առ ինքն ձգել հայութեան սիրտը: Պէտք է ընենք ամէն ջանք, չը գլանանք ոչ մի աշխատութիւն եւ իրականութիւն դարձնենք Հայաստանի ազատելու սուրբ եւ վսեմ գործը: Այլ բաւ

տանգվեցանք, բարբարոս թուրք կառավարութիւնն ս: բաւ խմեց մեր արիւն: Թոքվեմք ստրկութեան հինգդարեալ տանք բեռը, ջարդելով նորա անուր շոքաններ, որ կաշկանդեր են մեր անուաններն»:

Ահա մի քանիսը այն փաստերից, որոնք միանգամայն մեզ համարձակութիւն, ոյժ, եռանդ են ներշնչում աներկբայ հետեւելու ժողովրդի մարտական հրաւերներին: Այլևս ժամանակ չէ տատանվելու... Հաւատացէ՛ք, հայեր, միացէ՛ք, եղբայրներ, վսեմ կուրի համար: Գուցէ հետու չէ այն օրը, երբ մեր անբաղդ հայրենիքը պիտի պահանջէ մեզ հից մեր կայքը, մեր կեանքը, մեր արիւնը...

Վ. Ի. Ե. Ն. Ն. Ն. «Դաշնակցութեան» Ազատ Տպարան

ՍՈՑ. ԴԵՄ. ՀՆՁԱԿ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ «ՀՆՁԱԿ»Ի ԱՌԱՋԻՆ ԹԻԻԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԸ

«Երբ որ տեսնում ենք, ծանրացած թուրքի անարգ շոքաներով, աշխարհիս մէկ անկիւնում՝ մեռակ ու որբացած, հայ ժողովրդային մասսան, ընդհանրութիւնը դարերի ընթացքում ողբում, ճնշում, հարձուտահարում, հալածում. մի բուն ցանկութիւն, մէկ անկեղծ միտք ծագում է մեր մէջ այդ ժամանակ, առաջացնել հայ ժողովրդի փրկութեան խնդիրը, փաստաբանել ու պաշտպանել այդ խնդիրը եւ պատերազմի այդ խնդրի համար:

«Ունենալ ազատ խօսք, իբրեւ միջոց ազատաբար դիտելու ու քննելու թիրքահայ ժողովրդային ընդհանրութեան կեանքի կողմները, հրապարակ հանելու այն բոլոր թշուառութիւնները, որ վաղուց դարձել են նրա միակ բաժինը եւ մատնանշող անելու այդ ժողովրդի կոչումը, որոշելու այն միջոցներն ու նպատակները, որոնք պիտի տանին նրան դէպի մէկ ապահով կեանք, դէպի մի կեանք, որ միջոց կ'ունենայ ազատ կերպով զարգանալու եւ ծաղկելու. ահա ընդհանուր խօսքերով, այս հրատարակութեան շարժառիթները:

«Լինել միշտ ճնշումի կողմը եւ դէմ ճնշողին, արդարութեան պաշտպանութեան տակ անցնել, մարտնչելով անարդարութեան դէմ, ազատութեան անձնուէր եւ բռնութիւնն հալածող լսող խելի մայրին եւ թշնամի նախապաշարմունքներին, լինել զարգացող ժողովուրդների կողմը եւ դէմ՝ փտած կառավարութիւնների, ահա մեր նշանաբանը, ուղղութիւնը ու պարտականութիւնը:

«Թիրքա-Հայաստանի հայ ժողովուրդի վերաբերութեամբ մենք այն խորին համոզումն ունենք, որ պէտք է անպատճառ շուտով ջարդուի նրան առաջդիմել արգիւյզ ամբապիղծ շոքաները եւ նա ունենայ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ, իբրեւ անհրաժեշտ պայման նրա կեանքի ապահովութեան եւ նրա բազմադիմի գարգացման համար:

«Սակայն ստելով քաղաքական անկախութիւն, մենք դա չենք համարում այնպիսի վերջնական կէտ, որը կարող կը լինի բարարութիւն տալ նրա կեանքի բոլոր պահանջներին, որից աւելին իւր ողջ գոյութեան ժամանակ նա էլ պէտք չունենայ: Ոչ. քաղաքական անկախութիւնը հայ ժողովրդի համար պիտի համարուի լոկ այն անհրաժեշտ պայմաններից մէկը, որի իրագործումից յետոյ միայն բացուած է ասպարէզ հայ ժողովրդի քաղաքական ու սոցիալ-տնտեսական կեանքի մէջ մտցնելու համար մի էրկայն շարք հիմնաւոր, արմատական վերանորոգումներ: Քաղաքական անկախութեան իրագործումից յետոյ հայ ժողովուրդը պէտք է դիմէ դէպի կեանքի այնպիսի կերպերը, որոնց գոյութեամբ ամէնքը եւ իւրաքանչիւրը ազատ լինի, ամէնքն իրար հաւասար ու եղբայր նանաչեն, որոնց գոյութեամբ նշմարիտ ուղի բացուէ եւ հաստատ հիմք լինի ընդհանրութեան մտաւոր, բարոյական ու ափփեկդական լիակողմանի գարգացման համար:

«Թիրքահայերի անկախութեան իրագործումը լոկ ԴՐՍԻՑ չէ կարող լինել՝ այլ լոկ ՆԲՍԻՑ է նա կարող յաջողութիւն ունենալ: Եթէ եւրոպական տերութիւնների միջամտութիւնը ապահովենք եւ մեր ձեռքերը ծալենք, հայ ժողովուրդը առաւել անտանելի թշուառութիւնների մէջ կը խորասուզուէ: Ճիշտ է, որ կարող են առաջանալ քաղաքական մեքենաների այնպիսի իրարանցումներ, որ եւրոպական այս կամ այն տերութեան համար նոյն ժամանակին շահաւէտ կը լինի բարձրացնել հայկական խնդիրը եւ նրա բարար իրագործումն ուղղակի կամ անուղղակի կերպով պահանջել, սակայն այդպիսի առիթները մեզ աւելի կը հասկացնեն՝ ինչպէս արդէն եղել է, որ պէտք էր կանխապէս պատրաստ լինենք՝ դրանից օգտուելու համար: Եւ այդու ամենայնիւ աւելացնում ենք, որ այժմեան քաղաքականութիւնը, դիպլոմատիան, նմանում է քամու ջրաղացին. այսօր այն կողմն է նա շրջում, որ կողմ որ քամին է իր շունչն ուղղում, իսկ վաղը ջրաղացը կարող է նոյն քամու քամու հանդէպով եւ հակառակ կողմը պտտուել:

«Այդպիսի խարխուլ հողի վրայ մենք չենք կարող դնել այնպիսի սուրբ ու ծանրակշիռ գործի աջողութեան հիմքը, որպիսին ժողովրդական գործն է: Այդ գործին հարկաւոր է մի հիմք, որ յենուած լինի հաստատ ու ամուր հողի վրայ. այդպիսի հող նոյն ինքը թիրքահայ ընդհանրութիւնն է, նոյն ինքը թիրքահայ ժողովուրդն է: ԹԻԻԻՔԱ-

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԴՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿՈՒԱՅ ԾԱՆՐ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒՄ ՄԱՍՍԱՑԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ, ԲՈՒՆԻ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ, ԱՊԸՍՏԱՄԲԱԿԱՆ, ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻԳՆԵՐԸ ԹՈՒՐԻՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԵՄ, ՆՊԱՏԱԿԱՑԱՐՄԱՐ ԵՆ ԵՒ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ, ԵՔԷ միայն միլիոնատը ժողովրդի մտալուտ կորուստը սարսափ չէ ազդում նոյն իրեն կոչող հայ ընդհանրութեան եւ գլխաւորապէս հայ կրթութեան ու հասկացող դասակարգի վրայ: Եւ ահա դէպի այդ դասակարգն ենք մենք դիմում եւ առաւելապէս դէպի այդ դասակարգի երիտասարդութիւնը, լինի նա ռուսահայ, թիւրքահայ, պարսկահայ՝ ողջ մէկ է: դրանք ամէնքը եղբայր են եւ մենք դրանց մէջ ոչ մի զանազանութիւն չենք դնում ժողովրդական գործի վերաբերմամբ: դիմում ենք դէպի այդ դասակարգը, յայտնելով որ ժողովուրդն առանց նրա աջակցութեան՝ թէ կազ, թէ կոյր եւ թէ տհաս է իր վսեմ դատը պաշտպանելու համար: դիմում ենք դէպի նրան, կոչելով որ լոկ նրա եռանդը, նրա խօսքը, նրա ոյժը կարող են բարձրացնել թիւրքահայ ընդհանրութեան խեղդուած ոգին եւ ժողովրդի ռոնքերի տակ պատրաստել հաստատուն հող կարեւոր յեղափոխական գործի յաջողութեան համար: Այդ պատճառով իւրաքանչիւր մտածող, ազնիւ ու ժողովրդին սիրող հայի նշանաբանն ու գործունէութիւնը մենք համարում ենք՝ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ, ԺՈՂՈՎՐԴԻՆ ՀԵՏ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ:

«Այս նշանաբանն ունեցող հայերի օրգանը պէտք է լինի սոյն հրատարակութիւնը, որի պարտքն է եւ որոշ ծրագիրը բացատրել ու հաստատել, որ հայ ժողովրդական գործը լոկ յեղափոխականութեամբ է կարող աջող ելք ունենալ, ընտրել գործնական միջոցներ յեղափոխութիւն անելու համար եւ որոշել նրա մտակայ նպատակները:

«Ընդհանրապէս հայերիս այժմեան դրութեան մէջ ազատ խօսքը մէկ անհրաժեշտութիւն, մի պահանջ է եւ միեւնոյն ժամանակ նպատակաշարմար, միայն թէ այդ խօսքն ունենայ կենդանութիւն, թարմութիւն ու լրջութիւն: Մասնաւորապէս ազատ խօսքը մի պահանջ է այն հայերի համար, որոնց կեանքի նպատակը չէ ամենեւին բաւականամալ անձնական կամ մի նեղ շրջանի շահերով ու ապահով կացութեամբ, այլ որոնց սրտում կայ մէկ ուրիշ իդէա, մէկ ուրիշ յափշտակութիւն, այն է՝ գործել ու բանել ժողովրդի մէջ եւ ժողովրդի համար, տանջուի ու չարչարուի ժողովրդի սանջանքով ու չարչարանքով եւ ազատ խօսքը շրթներին՝ պահանջել ժողովրդի բարին, բողոքելով չարի դէմ:

«Այո՛, չարչարուած ու հալածուած գաւակներ, չարչարուած ու հալածուած հայեր՝ մենք, հայերս, ծարաւն ունինք ազատ խօսելու,

ազատ մտածելու, որ դեռ մանկութիւնից յանուն բռնակալի օրէնքին, արգելել են մեզ աշխատելով գրելի մեզ ինքնաւարտութիւնից և դարձնել բռնաւորների ու ճնշողների ոտ լողների: Դժբախտ է այն հայը, որ հասել է այդ վիճակին, բայց նրանք, որոնք այսպէս կամ այնպէս կարողացել են խուսափել այդ թունաւոր պատուաստից, նրանք, որոնք զգալով հայ ժողովրդի ընկճուած դրութիւնը, միանգամայն մտածել են այդ դրութիւնը յեղաշրջելու անհրաժեշտութեան վրայ, դրանք, իբրեւ արթուն, առողջ տարր հաւուքեան, թող բարձրացնեն իրենց ձայնը եւ խառնեն մերիկի հետ, եթէ նրանց ուզողութիւնն ու հայեացքները տարբեր չեն մերանցից: սոյն հրատարակութեան թերթերը բաց են այդպիսիների համար:

«Հայերիս այսօր հարկաւոր են գործ եւ անկեղծ խօսքի մարտիկներ եւ այդպիսիներին ասպարէզ հանելու համար պէտք է նպաստել սոյն հրատարակութիւնը:

«Մենք գիտենք թէ ո՛րպիսի մեծ դժուարութիւններ ու խոչընդոտներ կան եւ դեռ կ'առաջանան մեր հանդէպ այսպիսի հրատարակութեան ձեռք գարնելով: այդ դժուարութիւններից գլխաւորն այն է, որ ազատ խօսք ունենալու համար մենք պատրաստուած ենք հեռու երկրում ձայն տալու եւ այդպիսով այս թերթն իր ազատ ոգու պատճառով ոչ մի բացարձակ մուտք չէ կարող ունենալ ոչ ռուսահայերի եւ ոչ թիւրքահայերի մէջ: Բայց մեր հայրենակիցների ցանկութեամբ ու եռանդով, լիայնջա ենք, այդ խոչընդոտը կ'անհետանայ, որը եւ անհրաժեշտ է:

«Թող «ՀՆԶԱԿ»ն անդադար հնչէ եւ կոչէ՝ եղբայրը եղբորը ձեռք տայ եւ թո՛ղ նրա հնչիւնը թշնամու ակամջին հասցնէ եւ նրան դողացնէ: թո՛ղ նա հնչէ բացարձակ ու խրոխտ կերպով օտար տեղերից, եւ թո՛ղ նա հնչէ, թէպէտ գաղտնաբար, բայց միշտ արդար բարբառով, նայնիսկ հայրենի երկրում, մինչեւ որ հայ ժողովրդի վրայ տիրած խաւարը վառ արշաղոյսին տեղ կտայ»:

1887 Նոյեմբեր — Ժընեւ

ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

«Հնչակչի 1891 Դեկտ. 23, Թիւ 16ի մէջ կայ հետեւեալ պաշտօնական յայտարարութիւնը:

«Սրանով յայտարարում ենք, որ Հնչակեան Յեղափոխական Կուսակցութիւնը պաշտօնապէս միացել է հռչակաւոր Արեւելեան Դաշնակցութեան հետ (Անաթօլիի Օմասպօնդիա — Confédération Orientale), որ կազմուած է մակեդոնական, արաբական ու կրետական յոյն յեղափոխական մասնախմբերից եւ որի նախագահն է նշանաւոր յեղա-

փոխական յոյն գորավար Դիմիտրի Ն. Բոցարիս: Արեւելեան Դաշնակցութեան նպատակն է՝ աջակցիլ բռնապետական լծի տակ հեծող՝ Արեւիլի բոլոր ժողովուրդների ազատման գործին: Նա, դաշնակցելով Հնչակեան Յ. Կուսակցութեան հետ, կ'աջակցէ նաեւ հայ յեղափոխական գործին»:

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒ Շ Ո Ւ Ր Ջ

Պերլինի դաշնագրի ճշրդ յողուածով խոստացուած Հայկական բարենորոգումներու մասին թղթակցութիւններ կատարուած են Մէծն Բրիտանիոյ արտաքին նախարարութեան եւ Կ. Պոլսոյ բրիտանական դեսպանին միջեւ: Այս թղթակցութիւնները լոյս կը սփռեն շահագրգռութեան աստիճանի մասին, զոր ունէին մեծ պետութիւնները դէպի Հայկական բարենորոգումները:

Սուլթան Համիտ որոշապէս կ'օգտուէր անգլիւսուս մրցակցութենէն, չգործադրելով բարենորոգումներ:

Անգլիական Կապոյտ Գիրքին մէջ հրատարակուած նամակներէն կարելորեն կը ներկայացնենք ստորեւ, առնելով բրոք. Կ. Թուրքիոյ «Պատմութիւն Արեւելեան Խնդրոյ» հատորէն.

ԼՈՐՏ ՍԱԼՁՊԸՐԻ՝ ԼՈՐՏ ՀԷՐՊԸՐԹԻՆ(*)

Այս օրուան հեռագիրները ստացայ, որով Սուլթանէն ինձ ուրիշ լուր մը կը բերէ, որ կը զարմանայ իրեն նախկին պատգամին պատասխանը չստանալուն համար, որուն մէջ Ն. Կայսերական Վեհ. վերահաստատած էր իր խոստումները Հայկական Նահանգաց մէջ ներմուծուելիք բարեկարգութիւններու մասին, եւ որ Նորին Վեհ. Թագուհւոյն կառավարութեան օգնութեանը կը դիմէր իր այս գործին մէջ իրեն օգնելու համար:

Ի պատասխանի Ն. Կ. Վեհ. պետք է բացատրէք որ իր վերջին պատգամին տալիք պատասխանս յետաձգած էի, մինչեւ որ անոր մէջ ինձի խոստացածը կատարէ, բարեկարգութեան ծրագրերը նոր իրատեղով մը հրատարակելով: Դուք կրնաք նաեւ հրատարակման յետաձգուելուն պատճառաւ զգացած ցաս եւ յուսախարութիւնս յայտնել իրեն:

(*) Կապոյտ Գիրք, Թիւ 23, 1880, էջ 278:

Դուք Ն. Կ. Վեհ. հաղորդեցէք որ իր դէպի այս երկրը ունեցած բարեկամութեան վստահացումը յարգանք կ'ընդունիմ, նաեւ տեղեկացուցէք իրեն որ Ն. Կ. Վեհ. Թագուհւոյն կառավարութիւնը տակաւին կը փոփոքի օգնել իրեն. բայց թէ անոնք անհրաժեշտ կը սեպեն որ քայլեր առնուին, վերջ մը տալու համար Մահաճապաններու կողմէ Բրիտանիաներու դէմ զործադրուած յարձակումները արգելելու համար, որոնք Օսմանեան Կայսրութեան երբեմն մասերուն մէջ տեղի կ'ունենան: Մեզի հասած տեղեկութիւնները կը ցուցնեն որ Սուլթանը սխալած է իր համոզման մէջ, թէ Հայերը պատճառ տուած են այն անկանոնութեանց: Մեզի տեղեկութիւններէն է որ գրեթէ ամէն տեղ իրազուրիւնը ասոր հակառակ է, եւ թէ շատ տեղեր քրքական իշխանութիւնը եւ գործերը քաջալերած են, նոյնիսկ մասնակցած են խռովութեանց:

Այն իրողութիւնը որ Սուլթանը վերջերս պատճառեան տուաւ պաշտօնատարի մը, զոր ինքը պաշտօնակն ըրած էր իրտ յոսի վարչութեան պատճառաւ, չի քաջալերէր Նորին Վեհ. Թագուհւոյն կառավարութիւնը որեւէ վստահութիւն ունենայ թէ խոստացեալ բարեկարգութիւնները հաւատարմութեամբ զործադրելու մասին Ն. Կ. Վեհափառութեան դիտարկութիւնը լուրջ բան մըն է:

ՍՈՒԼԹԱՆԻՆ ՊԱՏԳԱՄԸ ՊՐՆ. ՀԷՐՊԸՐԹԻՆ

Ինչպէս կ'ըլլայ որ իմ բարեկամական տեղեկագիրներէս եւ իմ բարի նպատակներս յայտնող արտայայտագրերէս վերջն ալ տակաւին ոչ մի պատասխան չեմ ստանար Լորտ Սալզպլըքիէն:

Ես Անգլիայէն օգնութիւն կը սպասեմ եւ կը կրկնեմ որ Անգլիա պէտք է վստահ ըլլայ իմ խոստումները կատարելու մասին ունեցած ջերմ փոփոքին նկատմամբ: Բարեկարգութիւններ չստուած են: Աշխարհի մէջ չկայ պատճառ մը ենթադրելու որ անոնք ի գործ չպիտի դրուին հաւատարմաբար: Իմ եւ այս երկրին շահերը կը պահանջեն որ բարեկարգութիւնները ներմուծուին, եւ քանակաւոր այս մասին մենք մեր շահերը նկատողութեան կ'առնենք: Բարեկարգութեան զործադրումը, սակայն կարգ ու կանոնին վերահաստատումէն կախեալ է, անոնք ազդեցիկ կրնան ըլլալ միայն երբ խաղաղութիւն կը տիրէ:

Հայերը իրենց կնքիկներուն եւ ապստամբութեանց պատճառաւ, ինչպէս նաեւ իրենց անկանոնութիւններուն առիթ տալովը, բարեկարգութիւններու զործադրութեան յետաձգուելուն պատճառ եղած են եւ տակաւին կ'ըլլան: Շաքիր Փաշան իրզրում հասածին պէս սկսաւ քրիստոնեայ ժանտարներ կազմակերպել, ինչ որ սպաքոյց մըն է թէ ես փոփոքեցայ մէկէն զործի սկիւր: Յետոյ խռովութիւններ տեղի ունեցան Երզնկայի մէջ, որուն յաջորդեցին Բարեբրի եւ Իրզրումի խռովութիւնները: Չեմ դիտեր որ Շաքիր Փաշան կարողացա՞ւ, աւելի բան մը ընել, բայց անիկա հոն հասած օրը անմիջապէս զործի սկսաւ, եւ եթէ անիկա շարունակելու անկարող եղած է, խռովութիւններն էին որ զինքը արգելեցին: Մեծ զուգորութեամբ բարձրեալ

զօրքեր հաւաքել հարկադրուեցայ անկարգութեանց վերջ մը տալու եւ ապա ըստ կա-
րելոյն շուտ բարեկարգութիւնները գործադրելու համար, եւ կարծեմ թէ կարող պի-
տի ըլլամ զանոնք կատարելապէս գործադրել նուազ քան երկու ամսուան ժամանակա-
միջոցի մը մէջ, կարգ կանոնը վերահաստատածիս պէս: Այսպէս չեմ կարծեր որ շատ
երկար ժամանակ պիտի անցնի բարեկարգութիւնը կանոնաւոր կերպով գործադրելէ
առաջ:

Այս նպատակս աւելի յառաջանելու համար, վաղը պիտի զրկեմ երկու
փաշաներ՝ Ապտալլահ եւ Սաաւէտտին Փաշաները՝ քաղաքային պաշտօնատարաց հետ,
առաջինը պիտի երթայ Էրզրումի կողմերը եւ երկրորդը Պիթլիս: Իրենց առաջին ջան-
քը պիտի ըլլայ խաղաղափրկական միջոցներով եւ ժողովրդոց ամէն զստակարգին
իրատ տալով կարգ ու կանոնը վերահաստատել եթէ կարելի ըլլայ, աւելի իմ հա-
ւատարմութեան մի ուրիշ ապացոյցն է:

Թող ուրեմն Անգլիա օգնէ ինձի Հայոց լաւ խրատներ տալով, նոյնիսկ սպա-
նալով անոնց, որ ոչինչ կրնան շահիլ իրենց ներկայ ընթացքով, նաեւ ըսելով որ
բարեկարգութիւններ չեն կարելի գործադրել որքան ժամանակ որ իրենք կը շարու-
նակեն զբազան ժողովուրդը եւ խոսովութիւններ ստեղծեն:

Ինչու՞ ուրեմն Անգլիա չի օգներ ինձի: Ձեռ կրնար հասկնալ: Լորտ Սալզ-
պլըրին ինձի օգնել չուզէր. հակառակ իմ բոլոր անկեղծ ջանքերուս կը տեսնեմ որ
Անգլիական թերթերը տակաւին զիս կը դատափետեն: Անոնք չե՞ն կրնար տեսնել որ
ես մեծ եռանդով կ'աշխատեմ եւ կը հետապնդեմ իրերը ուղղութեան բերելու համար:
Ձե՞՞ կարելի բան մը ընել զանոնք դադրեցնելու համար: Կը սպասեմ որ Անգլիա ինձի
մեծապէս օգնէ:

ՊԱՐՈՆ ԼԵՐՊՈՐԹ՝ ԼՈՐՏ ՍԱԼԶՊԼՐԻՆ

Կ. Պալիս, 18 Նոյեմ. 1865

Սուլթանը հետեւեալ պատասխանը յղած է Ձերդ Լորտութեան տեղեկագրին.
«Ձէյթունցիներուն այդ կերպ ընթացք մը ցուցունելէն ետքը, թրքական կա-
ռավարութիւնը զիջողութեան նախաքայլը չի կրնար առնել: Կայսրութեան ամէն կող-
մերը զստուող պիտուորական հրամանատարները արդէն հրաման ստացած են չի վնա-
սելու ոչ ոքին որ չի դիմադրեր իշխանութեան: Նորին Վեհ. հրաման պիտի զրկէ Մա-
րաշ պատրաստ զանուող զօրքերուն եւ թնգանօթներուն որ երկու որ ալ իրենց տեղէն
չի շարժին: Եթէ իրենց Ձէյթուն հասած ատեն ապստամբները հաւանին հպատակիլ եւ
յանձնել իրենց մէջ զանուող ապստամբապետները, նոյնպէս իրենց զէնքերը, իրենց
ոչ մէկ վնաս պիտի հասնի:

Սուլթանը կրկին կը խնդրէ Ձերդ Լորտութենէն, որ հրապարակաւ ծանու-
ցանէք թէ բարեկարգութիւններ Նորին Վեհ. կողմանէ ի դորս պիտի զբռնեն առանց
յապաղման, համաձայն այն կրկնակի խոստումներուն, որք նախորդ տեղեկագրին

մէջ Ն. Կ. Վեհափառութեան կողմէ արուած էին, նաեւ Ձեր մէկ պատասխան տա-
լուն վրայ կը պնդէ:

Մարտանաւերուն կրկնապատկուելուն շուրջ Ն. Վեհ. ազանջը հասած է:
Սուլթանը կը յուսայ որ Ձեր Լորտութիւնը այդ քայլը պիտի չառնէ: Քանի որ անիկա
հանքային զգացումները պիտի զրգռէ, եւ պիտի վրդովէ խաղաղութիւնը, որ ան-
հրաժեշտ է բարեկարգութիւնները գործադրել կարենալու համար:

Ն. Վեհ. նաեւ կը խնդրէ որ Ձերդ Լորտութիւնը ազգու կերպով իրատէ
հայերը, իրենց պատրիարքաբանի միջոցով, որ հանդարտ կենան, եւ նոր խոսովու-
թիւններ չի յարուցանեն:

ՍՈՒԼՈՒՆԻՆ ՊԱՏԳԱՐԸ

«Շատ երախտապարտ եմ Լորտ Սալզպլըրին պատգամի այն օգնութեան հա-
մար որ ինձի պիտի ընէ, եւ ես կը փափաքեմ որ Պարոն Լէրպլըթ հազորդէ իմ ան-
կեղծ շնորհակալութիւններս այն մասին, ինչպէս նաեւ նոյն պատգամին մէջ զտեսած
քմբեկամական արտայայտութեանց համար: Սակայն ես տեսած եմ Լորտ Սալզպլըրի
ըրած բանախօսութեան մը համոռոտագրութիւնը, որուն մէջ սա պարբերութեան կը
հանդիպեմ. «Ես քիչ վստահուիլիս ունիմ որ բարեկարգութիւնները պիտի գործա-
դրուին»: Այս խօսքը ստուգելու մեծ ցաւ պատճառած է ինձ: Քանի որ բարեկարգու-
թիւնները իմ կողմէ որոշուած խնդիր մըն է: Բացի այս, ես փափաքող եմ կարելի
եղածին չափ շուտ զանոնք գործադրել: Ես զայն արդէն քանիցս կրկնած եմ իմ նա-
խարարներուն: Այս այսպէս ըլլալով՝ Լորտ Սալզպլըրին իմ բարի նպատակներուն
վրայ կասկածելու միակ պատճառը այս տեղի մարդոց էնթրիկները ըլլալու են եւ
կամ թէ այնպէս գաղափար մը կազմել տալու համար շարախօսութիւններ եղած են:
Բարեկարգութիւններու գործադրութիւնը բացարձակապէս որոշուած խնդիր մըն է,
բայց հարկ է որ նախ այս երկրին մէջ խաղաղութիւնը հաստատուի: Կարգ ու կա-
նոնը վերապահելու համար ամենէն կատարեալ միջոցներ մեռք կ'առնուին եւ առնուե-
լու վրայ են: Տարակոյս չկայ որ այս քայլերուն արդիւնքը շուտով երեւան պիտի
գայ, եթէ արդէն երեւան եկած չեն:

Օրինակի համար, ժամանակէ մ'ի վեր Տրապիզոնի, Էրզրումի, Պիթլիսի,
Տիարպէզերի մէջ Նորանոր խոսովութիւններ տեղի ունեցած չեն: Սակայն ես կը կրկնեմ
որ բարեկարգութիւնները պիտի գործադրեմ: Ես այդ բարեկարգութիւնները պա-
րունակող թուղթը պիտի առնեմ, զայն առջեւս պիտի դնեմ եւ անձամբ պիտի հսկեմ
որ ամէն մէկ յօդուած գործադրուի: Ասիկա իմ ամենահաստատ որոշումս է, եւ
իմ պատուոյ խօսքը կուտամ: Ես կը փափաքեմ որ Լորտ Սալզպլըրի ասիկա լաւ հաս-
կրնայ, եւ կը խնդրեմ ու կը փափաքեմ որ Նորին Լորտութիւնը, այս յայտարարու-
թեանս վրայ կատարեալ վստահութիւն մը գոյացնելով՝ մէկ ուրիշ քանախօսութիւն
մը եւս արտասանէ այն բարեկամական զգացումներուն համար որ կրած է դէպի ինձ
եւ իմ երկիրը: Իմ այս պատգամին արդիւնքին պիտի սպասեմ ամենախիստ մտահո-

զուժեամբ: Ասկէ զսա պիտի ինչքեմ որ դեպքանասունը ինք իբրտէ Հայերը, նաև հրահանգ սայ իր հնչապատաններուն որ անոնք ալ ամէն ազգու կերպով իբրտեն Հայերը զոհ մնալ եղած բարեկարգութիւններով, ինչպէս Լորտ Սալզպրի իր բանաստեղծութեան մէջ կը յայտնէ թէ անոնք պէտք է զոհ ըլլան եւ հանդարտ կենանք: Անոնց պէտք է հասկնել որ բարեկարգութիւնները չեն գործադրուի որ եթէ խառնակութիւններ յառաջ բերեն:

ՍԸՐ Ֆ. ԲԸՐՐԻՒ՝ ԼՈՐՏ ՍԱԼԶՊՐԻՒՆ

Կ. Պոլս 29 Նոյեմբեր 1895

Այսօր կէսօրէն ետքը Սուլթանին կողմէ մասնաւոր ունկնդրութեան արժանացայ, որ սեւեց երկու ժամ ու կէս:

Նորին Վեհ. խօսք առաւ Քաղաւհիին որպիսութիւնը հարցնելով: Ես պատասխանեցի որ Նորին Վեհ. Քաղաւհին զաշտառջ է եւ ինք պաշտօն յանձնած է իր յարգանքները մասուցանել Սուլթանին եւ շնորհակալութիւն յայտնել այն պատգամին համար զոր իրեն զրկած էր: Նորին Վեհ. Քաղաւհին մեծ ցաւով լսեց այն զեպքերը որ անցեալ քանի մը շաբաթներու ընթացքին տեղի ունեցան Քուրդիոյ մէջ, (այսպէս կան ջարդերը՝ Գ.Լ.) եւ վստահութիւն ունի որ Սուլթանը իր կարողութեան սահմանին մէջ եղող ամէն միջոց պիտի գործածէ անոնց շարունակութիւնը արգիլելու համար:

Նորին Կայս. Վեհ. պատասխանեց թէ՛ ես ինքս անշուշտ անզեկութիւն ունի որ կարգ ու կանոն վերստին հաստատուեցաւ, քանի որ Դուռը հրահանգ ստացաւ իր դեպքաններուն հաղորդելու այն ամէն տեղեկութիւնները որոնք նահանգներէն կ'առնուէին, ինչպէս նաև կարգ ու կանոնի վերահաստատման մասին տեղական իշխանութեան զրկած հրամանագրներու պատճենները: Խառնակութիւններու վերսկսուածը արգիլելու համար նաև ամէն կողմ զօրքեր զրկուած են, եւ արդարև ինչ որ կարելի էր ընել, եղած են: Ամենէն ետքը ըսաւ թէ, ես ալ լսած ըլլալու եմ հնչապատաններէն որ քանի մը օրերէ ի վեր խաղաղութիւնը բոլորովին հաստատուած է:

Ես ըսի որ իմ ստացած տեղեկութիւններս նորին Վեհ. յայտարարութիւնները կը հաստատեն, բայց երբեմն տեղեր խառնակութիւնով տակաւին կը շարունակուին, թէև համեմատաբար փոքրիկ շրջանակի մէջ:

Նորին Վեհ. շարունակելով իր խօսքը ըսաւ թէ տակաւին ցաւալի տպաւորութիւնը կը մնայ թէ ինքը բարեկարգութիւնները ասոնց յայտարարութիւններէն գործադրելու իր փափաքին մէջ անկեղծ չէ: Այսպիսի ծրագիրներ բնական է երկար խորհրդակցութիւններու կը կարօտին: Բայց թէ անգամ մը որ անոր նկատմամբ հաւանութիւն ցուցուցած եւ որոշում տրուած է, ինք մտադիր է զայն իր ամբողջութեամբ ի գործ դնել: Սակայն, ամենէն աւելի պէտք եղած բանը կարգ ու կանոն հաստատելն է որովհետև միայն այն ատեն բարեկարգութեան կարելի է սկսիլ: Այսու ամենայնիւ արդէն սկզբնաւորում մը եղած է: Քանի մը զննելներ ընտրուած են, ինչպէս նաև:

վախեցնելու եւ միւլտարիֆիկացնելու օգնականներ: Շաքիր Փաշա սկսած է քրիստոնեաներէ բազմացեալ ոստիկանապետութիւն մը կազմելու, եւ եթէ խոսովութիւններ չի ծագելին, միշտև հիմա անոնք վեց վիլայէթներու մէջ ալ ներմուծուած էին:

Ես պատասխանեցի թէ՛ Նորին Վեհ. Քաղաւհիին կառավարութիւնը Սուլթանին բարեկարգութիւնները գործադրելու մասին ունեցած հաստատա որոշումը զոհուող նահապետութեան լսեց, բայց զժրատարար վերջին զեպքերը անոնց վստահութիւնը միայն տկարացնելու կը ծառայէին: Բարեկարգութեան ընդունելու յարողեց ամբողջ Հայ Նահանգաց մէջ զարդ ու կոտորած, եւ հազարաւոր հողիներ, որոնք կուրուսած էին իրենց տունները եւ ստացուած քները, անօթութեան պիտի կորուսէին ճրմբան միջոցին եթէ օգնութիւն չի հասնի: Ըսի թէ դեպքանասունէն մեկնեցնա ճիշդ առաջ անզեկութիւններ ստացած էի, որով վստահութիւն մերքեմիլ շատ կեանք իմ, այսինքն թէ շատ հայեր մահուան տպաւորութեամբ բանապատուած էին մահմադականութիւն ընդունել:

Նորին Վեհ. դիտել տուաւ որ ինքը երբեք չի համարէր որեւիցէ մէկու մը որ կրօնափոխ կ'ըլլայ, եւ ես մէջ բերաւ դատական նախարարութեան մէջ զանուոյ բարձրաստիճան եւ հանրածանօթ հայու մը զեպքը որ մահմադականութիւնը ընդունած է: Եւ թէ ինքը այս մարդուն երբեք կարեւորութիւն չի տար: Նա ինչպէս որ յիշած բուն կրօնափոխութեանց մասին իրեն մանրամասնաբար տեղեկագրած: Ես ալ այնպէս ընել խոստացայ:

Վերջը՝ ես հաղորդեցի Նորին Վեհ. որ ես նոյն օրը ստացած էի հետազոյր մը, Նորին Վեհ. Քաղաւհիին կառավարութեան Սուլթանի մէջ զանուոյ զօրհնչապատանն որ կը զրէք թէ Հայերը Պիլիսի մէջ սպանուելիք եւ ասնջանքի ենթարկուած են որպէսզի զանոնք ստիպեն հեռագրելու Պոլսի թէ Պիլիսի մէջ կոտորածը ստանալն անգամ Հայերէն սկիզբ առաւ: Սուլթանը նախ չզիտնալ ձեւացուց՝ ըսելով թէ ո՞վ ստիպած է Հայերը այդպիսի բան մը ընելու: Ես պատասխանեցի թէ տեղական իշխանութիւնները որ կը փափաքէին պատահած զէպքերուն պատասխանատուութիւնը իրենց վրայէն նեղել: Սուլթանը պատասխանեց թէ այդ մասին քննութիւն պիտի կատարէ, եւ հարցուց թէ ի՞նչ ապացոյց կարող էր դիտ համոզել:

Ես ըսի թէ, Նորին Վեհ. ը անշուշտ այնպիսի պաշտօնատարներ ունի, որոնց վրայ կրնար վստահել, որուն վրայ ան առաջարկեց իրբեւ յարմար անձեր Ապտալլահ Փաշան կամ Սասալթին Փաշան. այս յանձնախումբին նախագահը որ վերջերս ստատուած է. բայց ես հրամարեցայ միջամտել զրկուելիք պատճեններու ընտրութեան գործին: Միայն բաւական համարեցի թելադրել որ Նորին Վեհ. Քաղաւհիին փոխհնչապատաններէն մին՝ կատարուելիք քննութեանց մէջ մասնակցութիւն ունենայ: Սուլթանը ասոր հաւանութիւն տուաւ:

Յետոյ ըսի որ, երկու պարագաներ կան որոնց մասին Նորին Վեհ. Քաղաւհիին կառավարութիւնը ցաւով անզեկութիւն ստացաւ: Մին այն է որ ջարդերուն համար տակաւին ոչ ոք պատժուած է, միւրը՝ որ Նորին Վեհ. տակաւին խոստացած հրովորակար չի հանեց:

Սուլթանը միայն վերջոյն պատասխանելով ըսաւ որ զործը աւելի կարեւոր է քան խօսքը եւ հրատարակութիւնը: Նա Դբան միջոցաւ ինծի պիտի հաղորդէ հրովարտակ չի հրատարակելուն պատճառները: Նա կրկին եւ կրկին անգամ ըսած էր որ բարեկարգութիւնները պիտի զործադրէ, ըսելով որ ինքը յամառ մարդ մըն է, անգամ մը որոշում առնէն վերջը անիկա զայն ամբողջովին պիտի կատարէ: Սակայն ես չարանակեցի չեղանկ այն կէտը թէ՛ Նորին Վեհ. Թաղուհիին կառավարութեան զազաւարով՝ հրովարտակին հրատարակումը երեք պատճառներով կարելու էր: Ա. — Պետութիւնները Նորին Վեհափառութեան անկեղծութեանը մասին վստահացնելու համար: Բ. — Հայերը համոզելու համար որ իրենք իրօք բարեկարգութիւններ պիտի վայելեն: Գ. — Համոզելու մասնակցանները որ բարենորոգումները իրենց շահերուն վնասակար չեն: Սուլթանը պատասխանեց թէ ինքը հրահանգ պիտի տայ իր նախարարաց որ այդ Բ. եւ Գ. կէտերու մասին ինծի բացատրութիւն տան. ինքը կը յուսար որ զիս պիտի համոզեն թէ իրեն հրովարտակ չի հրատարակելու արգաւորացի է. Ա. կէտին զաւրով բարենորոգութիւնք արդէն պաշտօնապէս հոշորդուած են դեպքաներուն, որոնցմէ կտրուած ունի իրենց կառավարութիւններուն անկեղծացնել թէ՛ զանոնք զործադրելու համար իր սուած որոշմանը մասին, եւ թէ՛ իրեն այդ նպատակով առած զործնական քայլերու մասին: Յետոյ նա զանաւորով իմ Բ. եւ Գ. կէտերուն՝ ըսաւ որ հակառակ իր բոլոր ըսածներուն ինքը կ'ուզէր զայն քննել ինծի հետ բարեկամարար:

Յետոյ երկու պատմական փնտրութեան մը մտաւ ցուցնելու համար թէ նոր հրովարտակի մը հրատարակութիւնը փուռ քան մըն է: Իր հօրը Կիւհանէի հրովարտակին, եւ Խաթիւն Շէրիֆի մասին ակնարկութիւններ ըրաւ: Վերջինը՝ «ձեզ կողմէն՝ Փրօնտայիներու կողմակից Ալի եւ Յուսաւ Փաշաներու, միւս կողմէն՝ անկախացող կուսակից Բէշիւ Փաշայի մէջակց վէճի նիւթ եղաւ, եւ վերջապէս երբ հրատարակուեցաւ, Շէյխ Իւլ Իսլամի եւ այլ մասնակցան տառաջարկներու մէջ խիստ թշնամական զգացումներ յառաջ բերուաւ, սակայն եւ այնպէս, այս ամենէն վերջը, անոր ալ զործնական արգելազը մեծ չեղաւ: Ինքը երբ զահը բարձրացաւ, իր հօրը հրովարտակին երբեմն պարբերութիւնները ի զործ զբաւ, Պարլամենտ մը հաստատեց, որուն մէջ բուսական թուով ազնաւ եւ ազնամիտ անձնաւորութիւններ զանուկուն դադարեցնել պէտք եղաւ: Ինքը զստատանական վարչութիւնը բարեկարգած եւ նոր օրինակներ մը մտնելու առում է: Ներկայ բարեկարգութիւնները նախ Խաթիւն Շէրիֆին մէջ ուսումնասիրութիւնն են եւ իր զազաւարով պէտք չկար զանոնք հրատարակել մանրամասնարար: Ինք մամուլի միջոցով փոքրիկ ծանուցում մը ընել առաւ, որ երբեմն բարեկարգութիւններ ի զործ պիտի զրուին, եւ այդ բուսական է, աւելի հրատարակում մը ոչ ոք սակէ աւելի պիտի համոզէ: Իր նպատակն է բարենորոգութիւնները զործնականապէս կատարել, եւ այն առան մարդիկ պիտի հասկնան անոնց ինչ ըլլաւ:

Ի պատասխան ես աւելին պնդեցի այն խնդրի մասին եւ ըսի որ ամէն զազաւարկութեան երկիրներու մէջ ի զործ զրուելիք օրէնքները նախ կը հրատարակ-

ուին: Նորին Վեհ. Թաղուհիին կառավարութեան զազաւարով կարելու է որ բարեկարգութիւններու մանրամասնութիւններ ճանչցուին հանրութեան, թէ ամէն ինչ վիւայէթի մէջ պէտք է որ հրատարակուին, նաեւ ամէն հայ զիւղերու մէջ եւ ասաներու առջեւ փակցուին:

Սուլթանը պատասխանեց թէ պարագաները աւելի պիտի բացառէ: Ըսաւ թէ ինք բարենորոգումները հրատարակելու մտադիր էր, անոնք մամուլի յանձնուելու համար մանրամասնարար ընդօրինակուած էին, հանդերձ մտածութեամբ՝ ցուցնելով թէ իւրաքանչիւր պարբերութիւնը վիւայէթի ո՛ր օրէնքին կը պատկանէր: Ես անստարակոյս գոյութիւն ունեցող օրէնքներու թարգմանութիւն մը կարգադրեց ըլլալու հմ, հետեւարար ինձ մտած ըլլալու է որ բարեկարգութեան նպատակը ինչ մէջը նոր քան մը չի պարունակիր:

Ես պատասխանեցի թէ ես այդ մասին անզիւսութիւն ունիմ, եւ Նորին Վեհ. յիշելու առիթ որ քանի մը ամիսներ առաջ երբ ինքը ինծի հարցուցած էր թէ ի՞նչ էին այն բարեկարգութիւնները որոնք մենք առաջարկելու մտադիր էինք, ես ըսած էի թէ անոնք արդէն հրատարակուած օրէնքներուն մէջ չի գտնուող ոչինչ կը պարտաւանկէին: Հետեւարար շատ փափաքելի էր որ հանրութիւնը — թէ՛ զբիտաններու եւ թէ՛ մասնակցաններ — այս գիտնային: Սուլթանը պատասխանեց թէ այս ամէնը զիտանով հանդերձ կրկին չէր համարձակած որեւիցէ հրատարակութիւն ընել: Սակայն կրկին պիտի խորհրդակցի նախարարներու եւ Սոյիս Փաշային հետ հրովարտակի մասին, եւ արգիւնքը ինծի պիտի անզիւսադրէ: Կը յուսար որ ես քիչ մը բանաւոր պիտի ըլլայի եւ հաւատք ընծայէի յառաջ բերուած փաստերուն անկեղծութեանը մասին, միմիայն իսկ եթէ հրովարտակին հրատարակուիլը զարմալ անպատշաճ համարուէր: Եթէ այս խնդիրները լուրջ կերպով քննէի, պիտի տեսնէի որ անոնք մեծապէս օգտակար են քէ Անգլիոյ եւ քէ Քուրթիոյ շահերուն:

ԼՈՐՏ ՍԱԼՁՊԸՐԻԻ ԽՕՍԱՄՆԵՐԸ ԼՈՆՏՈՆԻ ԹՈՒՐԳ ԳԵՍՊԱՆԻՆ(*)

10 Յուլիս 1896

Քիւրթիոյ դեպքանին հետ այսօր ունեցած տեսակցութեան միջոցին շատ մեծ խանդով խօսեցայ Նորին Վեհութեան Հայկական խնդրին նկատմամբ:

Ըսի որ իմ անկեղծ փափաքն էր որ Օսմանեան կայսրութիւնը պահպանուի, եւ թէ Սուլթանին արդար իրաւունքները միջամտութիւններէ պաշտպանուին, բայց թէ ցաւով նկատողութեան առիթ որ Նորին Վեհափառութիւնը Անգլիոյ եւ Եւրոպայի մէջ այս խնդրոյ մասին եղած հանրային կարծիքներուն ճիշդ համապատասխանող ոչ մէկ քայլ չէ առած:

(*) Այս եւ յաջորդ երկու նամակները Լորտ Սալզպլերի կ'ուզէր Պալատ անգլիական դեպքանատունը, Թիւրքիստ Փաշայի հետ ունեցած խօսակցութեանը մասին: Կապույտ Գիրք, Քիւրթիստ, թիւ 1, 1896, էջ 94, 118, 123:

Իսկան ինչի՞րը այն է որ, Հայոց անաշտ կառավարութիւն մը երաշխաւորելու համար միջոցներ ձեռք առնուին: Ինքնավարութեամբ բոլոր գաղափարները մերթօնքի իբրև անտեղի բաներ, եւ ես ինչոքեցի ամոնց համար ոչ մի առամնաշնորհում, բայց միայն պարզ արգարութիւն: Թէ Քրդեր պէտք չէ որ ճնշում բանեցնեն Հայոց վրայ, ոչ ալ Հայեր Քրդերուն: Այս նպատակին համար մասնանիշ ըրի որ, այս ներկայ պարագաներուն մէջ Փոքր Ասիոյ Արեւելեան մասը պէտք է դրուի կառավարիչի մը իշխանութեան տակ, որուն վրայ Եւրոպան վստահութիւն ունենայ: Բաւական է որ անիկա Հաստատմիտ, ուղղապատ եւ հաւատարիմ ըլլայ, իր կրօնը շատ քիչ նկատողութեան պիտի առնուի: Բայց անհրաժեշտ էր որ նա իր վրայ ունենար այս յատկութիւնները եւ ազատութիւն տրուէր իրեն ի պահանջել հարկին զործելու, առանց Կ. Պոլսէն միջամտութիւն կրելու:

Յետոյ, շարունակելով յայտնեցի Ռիւթլէմ փաշային որ ես կը պնդեմ այն պահանջներուն վրայ, որոնք երեք պետութեանց Կ. Պոլսոյ զեապաններուն միջոցով ներկայացուցանեմ, եւ թէ ես պիտի շարունակեմ այն քաղաքականութիւնը զոր ներկայ կառավարութիւնը ժառանգած է իր նախորդ պաշտօնատարներէն:

Ես պնդեցի որ Սուլթանը այդ սկզբունքներով եղած պահանջներէն կարելի եղածին չափ շատերը ընդունելու է: Ես Նորին Վսեմութեան մտքին վրայ ազդու կերպով պատուարեցի այն վտանգալից կացութիւնը, որուն մէջ, ինձ կը թուէր թէ այժմ Օսմանեան Կայսրութիւնը կը զանուէր: Պաշտօնիս նորին հասնելուս զարմանքով տեսայ թէ ան որքան մեծ տեղ մը կորուսած էր անգլիական հանրային կարծիքին մէջ: Ան այլևս այս ինչորոյ մտայն եղած զբոլորում մը չէր, հապա հաստատուն համոզում մը կ'աճէր. թէ ոչինչ կը յուսացուէր թիւրքիայէն բարեկարգութեանց կամ բարեփոխութեանց ճիշտմամբ, եւ թէ միակ ընկ կարեւորաւիք բանը յարաբերութիւնը դադարեցնել էր: Ես մասնանիշ ըրի որ վտանգը չափազանց մեծ էր, եւ եթէ Սուլթանը ժամանակին զգուշութիւններ ձեռք չառնէ, հարուածը գրեթէ անխուսափելի կերպով պիտի իջնէ իր գլխուն վրայ իր ամենէն քիչ սպասած ատենը: Ես աւելցուցի թէ Սուլթանին կառավարութեան ղէմ ամէն կողմէն զանգատներ լսեցի, եւ թէ Եւրոպայի կարծիքը առ Հաստատել իր մասին նուազ նպատակաւ է քան այն ատեն երբ ասկէ ստով պաշտօնի վրայ էի:

Կը ինչոքեմ Ձեր Վսեմութենէն որ հաճեք ինձ տեղեկագրել անմիջապէս, երբ որեւիցէ որոշում մը տաք Սուլթանին կողմէ ի մասին բարեկարգութեան ծրարին այն մասերուն, զոր նա կրնայ ընդունիլ:

Լորտ Սալպարի

7 Օգոստոս 1895

Ռիւթլէմ Փաշան այսօր այդիւնութիւն մը տուաւ ինձ տեղեկագրելու համար այն գիշումներու հանգամանց մասին, զոր Սուլթանը կը պատրաստուէր ընել, ի մասին Հայկական Հարցին:

Ռիւթլէմ Փաշան պնդեց այն իրողութեան վրայ թէ խառնակութիւններ

սկսած էին Հայոց անհանգստութեան եւ կազմակերպելու պատաստմութեան պահանջով, եւ թէ տեղի ունեցած ռճրագործութեանց այնքան Հայերը պատասխանատու են որքան թիւրք զորքերը:

Ես պատասխանեցի որ մեր տեսակետով իր պաշտպանութիւնը բուրոյժին անտեղի էր: Մեր գաղափարը այն է թէ կառավարութիւնը իրեն մասնաւոր պարտաւորութիւնը չէ կատարած, թէ շատ մը նահանգաց մէջ ընկերութեան վիճակը պարզ անիշխանութիւն է: Այս յանցանքներէն արդարանալու համար խօսուած ժամանակ քիչ նկատողութեան կ'առնուի այն հարցումը թէ թշնամութիւններ Հայոց կողմէ թիւրքերու ղէմ եղած են, եւ թէ թիւրքերու կողմէ Հայոց: Ես ըսի որ, իրերու ընթացքին պատասխանատուութիւնը բուրոյժին Սուլթանին վրայ կը ծանրանայ, եւ ես կը վստահեմ որ ան չըջապատուած է այնպիսի խորհրդականներէ, որոնք ճշմարտութիւնը անոր աչքերէն կը ծածկեն:

Ձերդ՝ Սալպարի

21 Օգոստոս 1895

Թիւրքիոյ ղեկավարը այսօր ինձ այնչեղութիւն մը տուաւ եւ շատ ազդու կերպով պնդեց Հայկական բարենորոգումներու առթիւ կազմուելիք Խառն Հոգիչ Յանձնաժողովի մը կազմուելու պահանջին Սուլթանին կողմէ ընդունուելուն անկաշիւթեանը վրայ: Նորին Վսեմութիւնը պարզապէս քրքալեմ քրքալեմով քրքալեմ մը հաւանական փոփոխում մը սպասեց որ զինքը պիտի առաջնորդէ բոլորովին Ռուսիոյ ձեռքը յանձնուելու:

Նորին Վսեմութիւնը այս կերպով մէկ ժամէն աւելի վիճարանցու այս ինչորոյն վրայ. սակայն ոչ մի պատճառ յառաջ բերաւ, որոց մասին Ձերդ Վսեմութիւնը տեղեկ չըլլայ: Այն կէտը, որուն վրայ մասնաւորաբար կը ծանրանար, էր թէ այս տեսակ որեւիցէ զիջողութիւն մը Սուլթանին ազդեցութեան պիտի վնասէ եւ զայն վարկարեկէ յաշտ մասնատական հպատակներու:

* * *

Եւրոպական վեց պետութիւններու՝ Մեծն Բրիտանիոյ, Ֆրանսայի, Ռուսաստանի, Գերմանիոյ, Աւստրիականացիոյ եւ Իտալիոյ Պոլսոյ ղեկավարները, Պիւրիի ղաշնագրի 61րդ յօդուածով խոստացուած բարենորոգումներուն գործադրութիւնը պահանջեցին 7 Մեկտ. 1880ի հաւաքական ծանուցագրով:

Իսկ 1895 Մարտ-Ապրիլին Ֆրանսայի, Ռուսաստանի եւ Անգլիոյ ղեկավարները Բ. Դրան ներկայացուցին յիշատակագիր մը, որ կը պարունակէր բարենորոգումներու ծրարիրը հայաբնակ նահանգներուն համար (*):

(*) Տես «Հայաստան եւ Հայ Դատը ըստ Դաշնագրերու», Գահիրէ, 1941,

Բանակցութիւնները գործնական արդիւնքի չլանգեցան: Ընդ-
Հակառակն, աւելի վատթարացաւ հայերու կացութիւնը: Սուլթան Հա-
միտ, տեղեակ Փեթրսպուրկի կառավարութեան անբարեացակամ վե-
քարերու մին ղէպի հայերը, ջարդեր կազմակերպեց Կ. Պոլսէն սկսելով
մինչև Տրապիզոն եւ արեւելեան նահանգները:

Մտաւորապէս 300 հազար հայեր ջարդուեցան: Ռուսաստան
չարունակեց անտարբեր մնալ. իսկ քանի մը տասնեակ հազար պաղ-
թականներ, որոնք ջարդերէն խոյս տալով Կովկաս անցած էին, հոն
հալածանքներու ենթարկուեցան: Այդ ղէպերուն կ'անդրադառնանք
հետագայ գլուխներու տակ:

«ԴՐՕՇԱԿ»Ի ՄԵՐԿԱՑՈՒՄՆԵՐԸ

1895-1896ի հայկական ջարդերու առթիւ, Հ. Յ. Դ. օրգան
«Դրօշակ», 1896 Յունուարի թիւին մէջ, «Ցարի կառավարութիւնը» խո-
րադրին տակ, կը մերկացնէ ռուս կառավարութեան մեղսակցութիւնը
գործուած ոճիրին մէջ:

«...Օսմանեան պետութեան պատմական ոխերիմ թշնամին նրա
բարեկամը ու հովանաւորոզն է, եւ, մինչեւ իսկ, հայկական սար-
սափի մէջ, նրա խրատն ու սոգը: Պատճառները հասկնալի են:
Չնայած որ ցարի կառավարութիւնը այժմ տիպոյնմտիական տեսակե-
տով աւելի յաջող պայմանների մէջ է գտնուում քան մի որեւէ եւրոպա-
կան պետութիւն, բայց եւ այնպէս նա ոչ մի հնարաւորութիւն չունի
ներկայումս օգտուելու հայկական «խառնակութիւններից»: Ներքին մի
քանի խնդիրներ, ֆինանսական վիճակը, ծայրագոյն արեւելքում տեղի
ունեցող քաղաքական դէպքերը, նրանից պահանջում են «սպառնացող
տակտիկայ չբռնել»: Սուլթանի կառավարութեան վերաբերմամբ: Բայց
մինչդեռ հայկական խնդիրը լուրջ բնաւորութիւն է առել շնորհիւ յե-
ղափոխական շարժումների եւ այսօր միջազգային քաղաքական խնդիր
է, քանի որ 6 պետութիւնները միջամտում են այդ հարցում, եւ, եթէ
այսպէս շարունակուի, նա կարող է ցարի կառավարութեան շահերը
վտանգի ենթարկել, կարող է Տանկահայաստանից բարձրանալ այնպի-
սի պատճէշ, ինչպիսին եղաւ Բալկանեան թերակղզու վրայ»:

«Դրօշակ» շատ ճիշդ կը նկատէր. Ռուսաստան չէր ուզեր որ
Հայաստան մը ստեղծուէր որ կրնար Պուլկարիոյ նման պատնէշ դառ-
նալ ռուսական ապագայ յառաջխաղացումներուն ղէմ: Ահա թէ ինչու

Ցարը եւ իր պաշտօնատարները Պիղատոսի դերին մէջ էին Համիտի կող-
մէ գործադրուած հայկական ջարդերու ընթացքին:

«Դրօշակ» նոյն խմբագրականին մէջ կը գրէ.

«Որ Տանկահայաստանում տեղի ունեցած կոտորածը եղել է
ցարի կառավարութեան հաւանութեամբ եւ աջակցութեամբ, դորանում
ոչ մի կասկած չկայ. փաստերը իրենք են խոսում: Սուլթանի կառավա-
րութիւնը չէր համարձակիլ այդպիսի յանդգնութեամբ իր ժրագիրը ի
կատար ածել, եթէ նա խրախուսող չունենար եւ այդ խրախուսողը կա-
րող էր լինել միայն ցարի կառավարութիւնը:

«Այս հաստատելու համար մենք ունինք շատ փաստեր, որոնցից
յիշենք մի քանիսը. Տրապիզոնի ռուս հիւպատոսը կոպտաբար մերժեց
կոտորածի ժամանակ իր հովանաւորութեան տակ առնել ապաստան
խնդրող տանկահայտակա հայերին, ասելով՝ «դուք արժանի էք»: Կա-
րինում կոտորածը սկսում է ռուս հիւպատոսի Շաֆիր Փաշայի մօտից
դուրս գալուց միայն մի քանի բոպէ յետոյ. իսկ մինչ այդ, նոյն հիւ-
պատոսը գիշերները միշտ Շաֆիրի հետ էր անցկացնում: Իսկ վանի
հիւպատոսը ամենալիար կերպով յայտնում է՝ «եթէ մեր պետութեան
մէջ հայերը այդպէս ապստամբուէին, մենք աւելի խիտ կը վար-
ուէինք»: Բաւարար չե՞ն սրանք, չե՞ն հաստատում՝ որ սուլթանի կա-
ռավարութիւնը խրախուսուել է մինչև իսկ աջակցուել է: Եւ դեռ բաւա-
կան չէ այդ, բաւական չէ, որ նա ունեցել է մեծ բաժին այդ սարսափ-
ներում, բաւական չէ, որ նա նարպիկ մանեօվրայով յաջողացրեց վա-
րագուրել կոտորածը, նա ամենամանաօք կերպով յանցանքը ձգում էր
հայերի վրայ ու վերջիններս է դատապարտում: Կ. Պոլսի դեսպանի
անխիղճ հեռագիրը հայոց կաթողիկոսին եւ նրա արած դիմումները ու
գործ դրած ճնշումները պատրիարքի վրայ, աչք ծակող փաստեր են,
հաստատելու ցարի կառավարութեան գործած անամօքութիւնները»:

• • •

Այս որ Հայաստանի խորհրդայնացումէն անմիջապէս ետք
սկսաւ ռուս կերպով քննադատել հայ յեղափոխական շարժումը,
«Անցեալից» (Թիֆլիս, 1925) հատորին մէջ, անդրադառնալով 1895-1896ի
ջարդերուն, կը գրէ (էջ 111).

«Ցարական կառավարութիւնը այլեւ աւելորդ էր համարում
թգնիի տերուով ծածկել իր լպիրշ մերկութիւնը: Մինչև այն նա ծա-
ծուկ խրախուսել էր սուլթանին դիմադրել Անգլիայի պառնալիներին
հայկական հարցի մէջ, իսկ այժմ խրախուսում էր նրան կոտորել հա-
յերին: Ռուս երապարակախօսներից մէկը (Ամֆիտայտրով) այս մասին
գրած ունի բացարձակօրէն: Նա գրում էր, թէ ռուսաց դեսպան Նալի-

դովը շարունակ ասելիս է եղել Ապտիլ Լամիտին. «Massecrez, Masseslé, massacre» (կոտորեցե՛ք, Ձերդ Մեծութիւն, կոտորեցե՛ք): Այս բացարձակ մեղադրանքը չեն հերքել ոչ Նելիդովը, ոչ Նիկոլայի կառավարութիւնը: Նայնիսկ երէ հերքէին էլ. դարձեալ կը մնային բազմաթիւ փաստեր, որոնք ասպացուցում են ցարի եւ սուլթանի գործակցութիւնը 1895-1896 թուերի կատարածների մէջ, որոնց գոհ գնացին մօտ 300 հազար հայեր: Գլուղստոն իր հրապարակական հատերի մէջ Ապտիլ Լամիտին անուանեց «մարդասպան», բայց աւելցրեց՝ թէ նրանից պակաս չէ ուսաց ցարը. որ իր երիտասարդութեան հասակն արատուորեց հայ ժողովրդի արեան գետերով: 1895ին, մինչդեռ քիւրճաց Լաւաստան արիւնդող էր լինում, կովկասի ուսական բանտերը լցում էին հայ մտաւորականութեամբ. խուզարկում էին տները, կովանաւորում էին դաշնակցականներն էլ. հնչակեաններն էլ:

...Ռուսական ցարիզմի հալածանքն այդ տխուր ու արիւնոտ ժամանակներում այն աստիճանի յիմարութեան հասաւ, որ երբ հայոց կաթողիկոսը կարգադրեց եկեղեցիներում հոգեհանգիստներ կատարել թիրփիւյում խոզխոզուած հայերի համար եւ ազօրքներ կարդալ, որ երկինքը փրկէ կորչող հայ ժողովուրդը, կովկասեան բարձր իշխանութիւնը, յանձին ուսական «երիտաստէր» բանակի զօրավար Շերեմետեւի, արգիլեց դժբախտութեան ձեռքին մնացած այդ միակ, թըշուառ ցոյցերն էլ:

ՌՈՒՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏԻ ՇՐՋԱՆԻՆ

ԳԵՍՊԱՆ ԳԱՆՊՈՆԻ ԿԱՐԾԻՔԸ

Փրանսայի ղեկավար Փօլ Գանպոն Կ. Պոլիս պաշտօն ստանձնեց 1891ին եւ հոն մնաց եօթ տարի, ապա վարեց Լոնտոնի ղեկավարութիւնը մինչեւ 1918. վախճանեցաւ 1924ին Փարիզ: Կարևոր մասնակցութիւն ունեցաւ Փրանսայի արեւելեան քաղաքականութեան մէջ: Իր մասէն կար լոյս տեսան իր գրած բազմաթիւ նամակները. Paul Cambon, Correspondance, 1870-1924, Grasset, 1940 :

Փօլ Գանպոն այդ հատորին մէջ կը խօսի հայկական բարենորոգումներու հարցի ատեն Ռուսաստանի հետեւած բացասական վերաբերմունքին.

«Հայկական հարցը մեր երեսոյթի մը տակ կը ներկայանայ: Խնդիրը Պերլինի դաշնագրին գործադրութեան վրայ է եւ Եւրոպա պիտի ստիպուի ասպարէզ իջնել:

«Կը կարծենք թէ կարելի էր գործերը մինչեւ այս անգիցը չբերել. համոզուած եմ, որ երէ Լորտ Սալգարրի եւ ՄԱՆԱԻԱՆԻ ԻՇԽԱՆ ԼՈՊԱՆՈՅ ԵՐԵՆՑ ԳԵՍՊԱՆՆԵՐԸ ԱԶԱՏ ԹՈՂՈՒԻՆ ԳՈՐԾԵԼՈՒ, ՅԱՋՈՂԱՆ ԿՐԼԼԱՅԻՆՔ ՍՈՒԼԹԱՆԻՆ ԸՆԴՈՒՆԻՆԻՍԱԿ ԲԱԻԱՐԱՐ ԲԱՐՆՆՈՐՈՂՈՒՄՆԵՐԸ: Ռոզպէրի չտապալած, գրեթէ մեր նպատակին հասած էինք: Անգլիական դաշինքին անկումը Սուլթանին ուրախութիւն պատճառեց, բայց այս ուրախութիւնը երկար չտևեց: Տեսաւ որ ուրախութիւնը անտեղի էր եւ սկսած էր նորէն մտիկ ընել մեզի՝ երբ իշխան Լոպանովի ընթացքը իրեն յուսալ տուաւ թէ երբեք համաձայնութիւնը պիտի փայտայ: Իրականութիւնը այն է որ ուս վարչապետը (Իշխան Լոպանով) Փեքրսպարկի օսմանեան դեսպանին այնպիսի լեզու մը կը բռնէր որ Պոլսոյ ուսական դեսպանին՝ Նելիտովի վարկը բոլորովին կը չփանար: Հայկական գործերուն վերաբերեալ բանակցութիւնները թուրքերը Պոլսէն Փեքրսպարկ փոխադրեցին, եւ իմ ուս պաշտօնակիցս, քիչ մը գնած այն դերէն գոր խաղալ կուտային իրեն, այլեւս իրապէս զօրավիզ չէր կրնար ըլլալ մեզի»:

Պօլսոյ Մ. Բրիտանիոյ եւ Ռուսիոյ երկու վարչապետներու փոխարարներութիւններու մասին, կ'աւելցնէ. «Երկուքն ալ մրցակցութեան հին գաղափարներով տագորուած են եւ երկու պաշտօնակիցներու խորհրդապահական յայտարարութիւններէն կը հետեւցնեմ որ ԼՈՆՏՈՆԵՒ ՓԵԹՐՍՊՈՒՐԿ ՓՈՆԱԳԱՐՁԱԲԱՐ ԶԻՐԱՐ ԿՄՄԲԱՍՏԱՆԵՆ ԹԵ՛ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԱՆՁՆԱԿԱՆ ՇԱՀԵՐ ԿՐ ՀԵՏԱՊՆՈՒՆ»:

Փ. Գանպոն եւ Նելիտով կուգան այն եզրակացութեան, «ՈՐ ՄԵՐ ԳՈՐԾԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ԶԵՒՆՔ ՎԱՅԵԼ ԵՐ»:

Փ. Գանպոն միշտ անբարեացակամ տրամադրուած է դէպի Ռուսաստանը: Իր նամակներուն մէջ կը գրէ.

«Պոլսոյ մէջ մեր ասանդական ֆազակականութիւնն է Անգլիոյ հետ համաձայնութիւնը եւ Ռուսիոյ ոտնձգութեանց ընդդիմութիւնը: ...ՖՐԱՆՍԱՅԻ ԱԻԱՆԳԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ ՄԵՋ ԹՇՆԱՄԻ ՈՒՆԻՆ՝ ՌՈՒՍԻԱՆ, ԵՒ ՄԵՋ ԲՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿԻՑ՝ ԱՆԳԼԻԱՆ»:

* * *

Բ. Իշխանեան իր «Տաճկահայ խնդիրը եւ Միջազգային Դիպլոմատիան» 1907ին լոյս տեսած գրքին մէջ կը գրէ.

«Լորանով-Ռոստովսկին — ուս արտաքին գործերի նախարար — ոչ միայն չէր ուզում երկրորդ Պուլկարի ստեղծել յանձնա Տաճկա-

հայաստանի, այլև նրա Պոլսի ներկայացուցիչը՝ Նելիտովը, չարդի ու կոտորածների շնական խրախոյոյ էր կարողում արնախում հրէշին. «Massacre, Majesté, massacrez». չարդեցէք, Վեհափառ, չարդեցէք նշանաբանով»:

Ընկերվարական Եղ. Պերնթաճյն կ'րտէ. «Ռուսաստանը ոչ միայն տրամադրութիւն չունի «Հայկական Պուլկարիա» վերստեղծելու, այլև նա ամենեւին չի շտապում տանկահայերին իր սեփական պաշտպանութեան տակ առնելու: Նրա համար փոյթ չէ, ընդհակառակը անհամեմատ արեւի է քաղցրացնում նրա տրամադրութիւնը, երբ մերք ընդ մերք վրայ է հասնում Թուրքիայում հազարաւոր հայերի գանգուածային նախնիրը, երբ հայ կանայք, աղջիկներ ու մանուկներ, ամենասոսկալի կոպտութեամբ բռնաբարւում, սրածութեան զոհ են գնում: Որովհետեւ իւրաքանչիւր կոտորած արեւի էր սրում Թուրքիայի և Անգլիայի յարաբերութիւնները ու արեւի ամբացնում Ցարին և Սուլթանին շաղկապող օղակը»:

«Դրօշակ» անդլեւոռու այս մրցակցութեան մասին արդար կերպով դիտել կուտար.

«Հիւպատոսական տեղեկագրերը սմեղուկ եւ խպնուկ հետեւութիւններ կը հանեն, հայկական շարժումներուն մէջ ուսական հոտ նշմարելով — ինչպէս Ռուսիա ալ Անգլիոյ ոսկիներուն շխրտուկը կը լսէր Պալոյ դէպքերուն ատեն, գայի հատուտներ — եւ քէ Արաֆսի միւս կողմէն դասալիքներ են որոնք քագուն կը քոնի կուգան Հայաստան ասպատակութիւն ընելու համար, եթէ ճէնթլմէն հիւպատոսները չեն շփոթեր Հայաստանը... Թրանսվալի հետ»: («Դրօշակ», 30 Ապրիլ 1898):

ԻՇԽԱՆ ԳՈՒԼԻՑԻՆԻ ՀԱԿԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Սուլթան Համիտ Էրբ 1895-1896ին կողմակերպեց Հայկական Զարդերը, բոլորովին վստահ էր Ռուսաստանի բարեացակամ չէզոքութեան:

Ահա Կովկասի փոխարքայ Իշխան Գուլիցինի գաղտնի տեղեկագիրը՝ ներկայացուած Փեթրասյուրկի կառավարութեան. հոն որոշապէս կը տեսնուի ուսերու հակահայ քաղաքականութիւնը:

Տեղեկագիրը կ'ստաննք է. Ակնունիի «Կովկասեան Վէրքեր» հատորէն (էջ 77-81), իր խորհրդածութիւններով միասին:

Առաջին Մաս.

ՀԱՅԵՐԸ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆ. — ա) Հայկական միտումներ. բ) կաթողիկոսը եւ էջմիածնի Սինոդը. գ) Հայոց ծխական դպրոցները. դ) Ռուսահայոց մամուլը. ե) Բարեգործական ընկերութիւնները. զ) Գիւղական վարչութիւն. է) Քաղաքական խորհուրդներ:

Երկրորդ Մաս.

1) **ՀՈՂԱՅԻՆ ՕՐԷՆՔԸ.** — ա) Ռուս գաղթականներ. բ) Օտարների հոգատիրութիւնը. գ) Օտար դրամագլուխներ:

2) **ԿՐՕՆԱԿԱՆ ԱՂԱՆԴԱՒՈՐՆԵՐ.** — ա) Ազանդաւորներ եւ Տալսո. բ) Դուխորներ:

3) **ԱՒԱՋԱԿՈՒԹԻՒՆ.** — ա) Պատնառներ. բ) Գիւղական աստիկանութիւն. գ) Սիրիւր ախորուածներ:

(Զեկուցման մեծագոյն մասը նուիրուած է Հայերուն. ունի քաղաքական դոյն եւ այդ պատճառով կը կազմէ դաղտնի հաղորդարութեան կարեւոր բաժինը):

Ք Ա Ղ Ո Ի Ա Մ Ք Ն Ե Ր

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ. — Հայկական շարժումը նպատակ ունի՝ վերականգնել անցեալ Հայաստանի անկախութիւնը: Այդ շարժումը սահմանափակուած է քաղաքներում՝ մտաւորական դասակարգի եւ հայ կղերի մէջ միայն: Գիւղական ժողովուրդը դեռեւս վարակուած չէ: Ապստամբական շարժման առաջին ղեկավարները եղել են՝ հայոց հոգեւորականութիւնը, հայոց մամուլը եւ արտասահմանի հայ յեղափոխական կոմիտէները: Իրերի այս վիճակը պարտ է դնում բարձրագոյն իշխանութեան վրայ՝ հաստատել արեւի կանոնաւոր վիճակ, պաշտպանել երկրի ժողովրդի մնացած մասը՝ հայերի շահագործող ձգտումներից եւ վնասակար միտումներից: Անդրկովկասի հայերի թիւը բազմապատմամբ միւս ազգերի՝ այնքան փոքր է, որ մեծ վտանգ չէ սպառնում երկրի անդորրութեան, եւ տեղական իշխանութիւնը բաւականաչափ ուժ ունի անմիջապէս խեղդելու հայկական խռոնակութեան փորձը:

ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ ԵՒ ԷՋՄԻԱՇՆԻ ՄԻՆՈՒԸ. — «Անցած Սեպտեմբերին, ասում է իշխան Գուլիցին, գնացի էջմիածին՝ այցելելու հայոց կաթողիկոսին, որը նայն տարուայ Դեկտեմբերին ինձ փոխադարձ այցելութեան եկաւ Թիֆլիս: Այս երկու առիթներով ունեցած տեսակցութիւններս համոզեցին ինձ, քէ կաթողիկոսը, իր ծերութեան պատճառով, հարկաւոր չափով անկախօրէն չէ դատում եւ գտնում է իր այն կղերական խորհրդատուների ազդեցութեան տակ, որոնք իրենց անձնա-

կան նպատակները ունին: Դրանց խտէպն է մեծ եւ միացեալ Հայաստանը. դրոշմը են իրենց հայրենակիցներին դէպի անջատական արգտումներ եւ խորհուրդ են տալիս կաթողիկոսին՝ չհամակերպել մեր օրէնքներին եւ օրէնքից զերազատել իր կրօնական հեղինակութիւնը: Այսպիսով կաթողիկոսը մղում է բռնել մի ընթացք, որ համաձայն չէ կառավարութեան տեսակետներին:

«Քացատրեցի Նորին Սրբութեան, թէ էջմիածնի Սինոդի իրաւասութեան պատկանող խնդիրների վերաբերմամբ իր տուած անձնական հրամանները կարող են մեծ շփոթութիւններ արտաբերել իր հօտի աւտոնին գործերի եւ յարաբերութեան մէջ, եւ վեր հանեցի այն կէտը՝ թէ հարկ է իր երանանգները համակերպել օրէնքի պահանջներին:

«Ուսումնասիրելով խնդիրը, եկայ այն համոզման, որ այս ձգտումը, որով փափաքում են պետական հեղինակութեան ազդեցութեան շրջանակից դուրս մի դիրք տալ կաթողիկոսին, ժողովրդի մտքի մէջ պիտի մտցնի այն սխալ գաղափարը, թէ կաթողիկոսը բացառիկ դիրք է գրաւում, եւ իրբեւ դրա հետեւանք՝ պիտի ծնունդ տայ տգէտ մտքերի մէջ այն համոզման, թէ կաթողիկոսը ոչ միայն հայոց եկեղեցու հոգեւոր գլուխն է, այլեւ Անդրկովկասի եւ դրացի Փոքր-Ասիական նահանգների հայերի քաղաքական միացման ներկայացուցիչը:

«Ուստի իմ կարծիքս է, որ ռուս կառավարութիւնը պէտք է ազդու կերպով պնդէ, թէ կաթողիկոսը եւ էջմիածնի Սինոդը պարտական (ԱՆՇՈՒՇՏՏ)» (*) են կէտ առ կէտ գործադրել օրէնքը:

«Իրբեւ ազդարարութիւն, եւ որպէսզի էջմիածնի Սինոդի մէջ անկանոնութիւնների առաջը առնեմ, — պատուիրեցի, որ պաշտօնանկ լինեն Սինոդի անդամներից երկու վարդապետներ, որոնց անունն է՝ Վահան Տէր-Գրիգորեանց և Նահապետ Նահապետեանց, այս երկրորդը՝ անձնական քարտուղար կաթողիկոսի: Խորհուրդ տուի, որ նրանք դուրս հանուեն Կովկասի սահմաններից եւ Ձեր Մեծութիւնը վաւերացրեց այս տնօրինութիւնը»:

ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ԴԳՐՈՑՆԵՐԸ. — Կովկասի հայոց ծխական դպրոցները կրթական նախարարութեան յանձնուիր՝ համաձայն Ձեր Մեծութեան 1897 Յունիս 14ի հրամանագրի՝ վերջին ծայրը կարեւոր է, իրբեւ միջոց՝ պաշտպանելու նոր սերունդը հայ կղերի վնասաբեր ազդեցութեան դէմ: Հայ կրօնաւորները չուզեցին համակերպել նոր կաճոններին: Ուստի եւ Կովկասի բարձրագոյն իշխանութեան հրամանով, 1897ին փակուեցին 320 հայ դպրոցներ: 31 դպրոց միայն բաց մնաց,

(*) **Չակերտուած եւ ընդձուած բառերը այն նկատողութիւններն են, որ Գայր Նիկոլոս Բ. արել է իր սեփական ձեռքով, զնկուցումը կաբուլիս:**

որոնցից մի քանիսն էլ յետոյ փակուեցին, կա՛մ ուսուցիչների անձեռնհասութեան պատճառով եւ կամ նրա համար, որ կղերը՝ կաթողիկոսի տուած հրահանգների համաձայն գործելով՝ չուզեց տալ այդ դպրոցների պահպանութեան համար հարկաւոր դրամը:

«Իրաւ է, 1897ի Յունիս 14ի կայսերական հրամանագրի մէջ բան չէ ասուած հայ-ծխական վարժարանների սեփականութեան փոխանցման մասին, բայց այդ կէտը լռելեայն հասկացում է, որովհետեւ բացուելի նոր դպրոցները անօգուտ պիտի լինէին՝ առանց նրանց պահպանութեան համար հարկաւոր միջոցների: Ահա թէ ինչու համար Ձեր Մեծութեան վաւերացումը խնդրեցի՝ փակուած դպրոցների սեփականութիւնները ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան փոխանցելու մասին, եւ սպասում եմ նոր հրամանի»:

ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ՄԱՄՈՒԼԸ. — «Թիֆլիսի մէջ լոյս տեսնող հայոց պարբերական հրատարակչութիւնները՝ փոխանակ աշխատելու, որ հայերը ձուլուեն ռուսների հետ, ձգտում են աւելի ընդարձակել նրանց մէջ բացումը վիհը: էջմիածնի պաշտօնական թերթը՝ «Արարատ» պէտք է եւնթարկել Թիֆլիսի մամուլի ընդհանուր դրութեան՝ գրաքննութեան, որովհետեւ դիմադրել է դպրոցական նոր կարգադրութեան եւ չէ աշխատել, ինչպէս խոստացուած էր, մերձեցում առաջ բերել հայերի եւ ռուսների միջեւ: Նոյն հակառուսական ոգին եւ վնասակար ձգտումները երեւան են գալիս եւ լրագիրների մէջ, որոնք հրատարակում են հայերի ձեռքով եւ ռուսաց լեզուով»:

Ապա խնդրում է արտօնութիւն տալ իրան՝ հայերի հրատարակած բոլոր հանդէսներն ու լրագիրները, ինչ լեզուով էլ լինեն, ենթարկել մի յատուկ դրութեան, իր անձնական հսկողութեան տակ: Այդ նպատակով առաջարկում է՝ ենթարկել հայոց մամուլը մի որոշ ծրագրի պահանջներին, պատրաստուած կառավարչապետի դիւանում:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — Հայոց բարեգործական ընկերութիւնները զբաղուած են աւելի քաղաքականութեամբ, քան թէ բարեգործութեամբ: Հմարիտ է, յատուկ օրէնքներ են հաստատուած՝ կառավարութեան հսկողութիւնը այս ընկերութիւնների վրայ ապահովելու համար, ինչպէս նաեւ գործադրում է հակակշիռ նրանց գործունէութեան եւ հաշիւների վրայ. բացի դրանից Կովկասի տեղական իշխանութիւնները իրաւունք են ստացել լուծել նրանց՝ երբ կանոնադրութեան ամենափոքր շեղում անգամ տեղի ունենայ, — բայց բոլոր այդ միջոցները մեծ օգուտ չեն տուել: Կովկասի գրեթէ բոլոր մեծ քաղաքները ունեն մասնահիւզեր, ենթարկուած այս ընկերութիւններից մէկին՝ Բարեգործական Ընկերութեան, որի կեդրոնատեղին է Թիֆլիս եւ որի նպատակն է՝ Կովկասի հայոց մէջ դաստիարակութիւն ծաւալել

եւ նիւթապէս օգնել նրանց: Սակայն, այդ ընկերութիւնը զուտ տահ-
մային ընթացումով է լուսաւորութիւն տարածում: Մի էանի տարի
առաջ նա մասնակցեց ռուսահայ մտաւորական դասակարգի անջատա-
կան շարժման, որի ազդեցութեան տակ կլասիֆիկան ճեմարանի տը-
նորէնը թշնամանք կրեց մի հայի կողմից: Յայտնի տեղեկութիւնները
ապացուցին, որ անջատական շարժման շատ կուսակիցներ այդ ընկե-
րութիւնների անդամ են: Նրա դրամները յաճախ յատկացնում են օտար
երկիրների մէջ հայեր դաստիարակելու, — մի պարագայ, որ հակա-
ռակ է ռուս կառավարութեան պետական սկզբունքներին: Առանց ուրա-
նալու այն օգուտը, որ անհատներ եւ մասնաւոր ընկերութիւններ կա-
րող են արտայայտել դաստիարակութեան գործի մէջ, պայմանով՝ որ
կատարւապէս վստահելի լինեն, կարծում եմ, որ այս հայ ընկերու-
թիւնները արժանի չեն վստահութեան, իրենց առանձնայատուկ հան-
գամանքին պատճառով: Եթէ հայերը ուզեցնան հանրային կրթութեան
եւ դաստիարակութեան վերաբերող բուն ռուսական նպատակները քա-
ջալերել, կարող են մասնակցել ռուսական ընկերութիւններին, որոնք
գերթ են ցեղային եւ կրօնական ձգտումներից: Առաջարկում է
կայսրին՝ թոյլատրել իրեն՝ ջնջելու Կովկասի հայոց բարեգործական
հիմնարկութիւնները: («ԼՈՒՐԶ ՈՒՇԱՒՐՈՒԹԻՒՆ ԴԱՐՁՆԵՆ»):

ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ. — Գիւղական վարչութիւնները
շատ պակասաւոր են. կարիք կայ վերակազմելու դատարանները ինչ-
պէս նաեւ վարչութիւնները: Կառավարական հսկողութիւն չկայ Կով-
կասի գիւղերի մէջ. ամէն բան տեղացի գիւղապետների եւ հաշտարարի
ձեռքն է, որոնք չափազանց զբաղուած են եւ անբարար: Բաթումի,
Կարսի եւ Արդուիւնի մէջ գիւղական վարչութիւն չկայ, եւ մի կարգ
կնճռոտ խնդիրներ եւ վէճեր, որոնք առնչութիւն ունեն տեղական սո-
վորութիւնների հետ, լուծման են սպասում: Արտօնութիւն է խնդրում
բոլոր այս խնդիրները լուծել Թիֆլիզի իր խորհուրդի միջոցով, որով-
հետեւ Պետերբուրգի սենատի մէջ եղած ֆննութիւնն ու որոշումը եր-
կար է տեսնում: («ԴՐԱ ԴԵՄ ՈՉԻՆՉ ՉՈՒՆԵՄ»):

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ (Դուժա). — Քաղաքային Խոր-
հուրդների մէջ հայերը գերակշիռ դիրք ունեն, որովհետեւ 1892ի օրէն-
քը գերակշռութիւն է տալիս սեփականատէրներին: Դրա առաջը պէտք
է առնել: Առաջարկում է, որ կառավարութիւնը ինքն ընտրէ քաղաքա-
գլուխները, որոշէ քաղաքային հասոյթներից նրանց տրուելիք ռոնիկը
եւ քաղաքային խորհուրդների անդամները ընտրուեն մի նոր կանոնա-
գրի համաձայն, կառավարութեան հակալիզոի տակ: Առաջարկում
է նաեւ, որ կառավարչապետը իրաւունք ունենայ հրաժարեցնելու քա-

ղաքային խորհուրդի անդամներին, որոնք իրենց պարտքը պատշաճ-
որէն չեն կատարում:

(«ԱՅՍ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԲԱՂՁԱԼԻ ԵՆ ԹԻՈՒՄ ԻՆՉ, ԲԱՅՑ ՆԱԿ
ՊԵՏ Է ԼԱԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՆ»):

Ձեկուցագրի երկրորդ մասն էլ, — նուիրուած հոգային օրէն-
քին, կրօնական ազանդներին եւ աւագակութեան — ներշնչուած է նոյն
նեղ հայեացքով, պետական խնդիրները լուսաբանելու ակնյայտնի
անընդունակութեամբ: Սակայն այդ անընդունակութիւնը սանձա-
հարուելու փոխարէն, հովանաւորութիւն գտաւ, հանդիպեց աջակցու-
ցութեան: Եւ երես առաւ Պետերբուրգի իր գորեղ պաշտպանների ժը-
պիտներին, հազած աստեղագարդ համագեցետը, կրկնապատկած իր
դէմքի յաղթական գծերը, երկու տարի հազիւ անցած, 1901 թուին նա
ներկայացաւ նախարարական ժողովին նոր ծրագրով: Ժպիտներ քաղեց
Գոլիցին եւ դեռ չսկսած պաշտօնական բացատրութիւնները, աւետեց,
որ գտել է, վերջապէս, վտանգաւոր հայ տարրից Կովկասը փրկելու
միակ միջոցը:

Եւ նա եզրակացրեց այդպէս.

«...Կովկասը ռուսացնելու եւ հայկական վտանգաւոր անջատու-
ղականութիւնը մի անգամ ընդմիշտ արմատախիլ անելու միջոցը այս
է — չկայ այլ միջոց — գաղթեցնել հայերին Սիբիր, ազատել այդպիսով
Անդրկովկասը հայկական խռովութիւնների ներկայութիւնից եւ նրանց
տեղ հաստատել ներքին նահանգներից բերած ուղղափառ գաղթական-
ներին»:

Տիրեց լուրսիւն: Դա չափազանց էր արդէն: Ամենաուղղափառ
շրթունքների վրայ անգամ ստոնց ժպիտը: Եւ մինչեւ իսկ գիտութեան
նախարարը, Կուրոպատկին, որ երբեմն, իբր կառավարիչ Անդրկասա-
եան երկրի, բաւական լաւ ճանաչում էր «հայկական սեպարատիզմի»
(անջատողականութիւն) չափը, հարցրեց.

— Ի՞նչ էք կարծում, Ձերդ պայծառափայլութիւն, ռ՞բքան կը
լինի հայ խռովայնների թիւը մի այնպիսի հայաբնակ կենտրոնում,
ինչպէս Շուշին եւ կամ Երեւանը:

— ? ? ?

— Մօտաւորապէս 50 կը լինի՞:

— Այո, համարեա այդքան:

— Ես ընդունում եմ նոյն իսկ, աւելացրեց նախարարը, կրկնա-
պատկել՝ 100: Եւ կարծում եմ, որ ամենալաւ միջոցը՝ «հայկական շար-
ժումը» արմատախիլ անելու, է՝ կալանաւորել այդ 100 խռովայնները,
դուրս բերել երկրից եւ ախտրել Սիբիր: Դրանով դուք կատարելապէս

ագատած կը լինէ՛ք երկիրը վտանգից, առանց ախորհելու մի ամբողջ ժողովուրդ:

— Ի հարկէ, ի հարկէ, կրկնեցին միւս նախարարները:

...Ջուրն ընկաւ բոլոր հայերը գաղթեցնելու ֆալաֆական ծրագիրը, որի վրայ հեղինակը թափել էր իր ամբողջ հանճարը, հայատելութեան բովանդակ թոյնը...

Անպատեհի՛վ վայելան: Բայց և անօգուտ խրատ: Թեւաւորուած ուրիշ աւելի գորեղ պաշտպանութիւնից՝ Գոլիցին շարունակեց նախագծուած նամբան: Նրա համար գոյութիւն չունի կեանքի դասը, փաստերի տրամաբանութիւնը, իրականութեան ձայնը: Նպատակին հասնելու համար նա չի տատանուում ծածկելու քիւրըրը, նոյնիսկ կառավարչական ատեանների հաւաքած փաստերը:

ԼԻՆՉԻ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

Անգլիացի Հայասէր Ն. Տ. Պ. Լինչ Հայաստան այցելած է 1893 Օգոստոսէն մինչև 1894 Մարտ, Երկրորդ անգամ՝ 1898 Մայիսէն Սեպտեմբեր: Որքան հետաքրքրական և թանկարժէք տեղեկութիւններ և տպաւորութիւններ կը պարունակէ իր ARMENIA travel and studies երկհատոր գիրքը, թարգմանուած Հայերէնի Լեւոն Լարենցի կողմէ «ՀԱՅԱՍՏԱՆ, ուղեւորութիւններ և ուսումնասիրութիւններ», 1913ին, Կ. Պոլիս:

«Ռուսական Հայաստան» հատորին մէջ կան պատմական, աշխարհագրական ծանօթութիւններ, նոյն ատեն սուր դիտողութիւններ և ճշգրիտ դատումներ ուսուհայ յարաբերութիւններու մասին.

Ռուսաստանի այս հայկական նահանգներուն մէջ վարչական մեքենան կը կառավարուի ձեռամբ մատի վրայ համրուող ռուս պաշտօնատարներու, բայց շնորհիւ հայերու, որոնք նոյնիսկ բարձրաստիճան պաշտօններու կը գործածուին: Հայը վաղնջական մշակոյթ եւ բնական բարձր կարողութիւններ ունի. ո՛չ բնագոյով եւ ոչ ալ յատկութեամբ իր ռուս մեծաորը գերազանց է, որովհետեւ այս վերջինը, աւելի կառավարական սիսթեմի մը գործիքն է քան թէ ի ծնէ կառավարող, եւ իրեն առ հասարակ կը պակսին նկունութեան եւ անձնական նախաձեռնութեան յատկութիւնները, զորս ֆանդելու կը ձգտին խստադէմ պիւրոֆրաթները: Բաց աստի, ռուս պաշտօնատարը տպաւորութիւնը կը թողու իր կատարած գործէն ննչուած ըլլալու, ինչպէս տղայ մը

արուն դասերը նոր են, եւ երբ կը տեսնես զայն որ կը գործէ հայոց նման ազգի մը մէջ, ինքզինքիդ կը հարցնես թէ ԻՆՉՊԷ՛Ս ԿՐԼԼԱՅ ՈՐ ԲՈԼՈՐ ՅԱՏՎՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՕժՏՈՒԱԾ ՑԵՂ ՄԸ ԿԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԻ ԱՅՍՊԻՍԻ ՓԱՅՏԷ ՄԱՐԴԵՐՈՎ: Անտարակոյս կան յարգելի բացառութիւններ այս ընդհանուր վիճակին մէջ, եւ այս բացառութիւնները պէտք է աւելի փնտել բարձրաստիճան պաշտօնէութեան մէջ:

1886ին հրատարակուած վիճակագրութեան համաձայն Ախալցխա ֆաղաբը 16-116 բնակիչ ունէր, որոնցմէ 10-417ը հայ, միայն 2-730 վերացի, միւսները գանձազան ազգութիւններ:

Իսկ Երեւանի մասին կը գրէ.

Այսֆան բազմաթիւ գետեր ունեցող անեցուն ֆաղաբ մը պէտք է վայելէ բարգաւաճ վիճակ, կամոնուոր կառավարութեան տակ, իբր կեդրոնը Ռուսական Հայաստանի գաւառներուն ամենէն բազմամարդդին, որուն տուած է նաեւ իր անունը: Երեսն արդէն յաւակնութիւններ ունեցող ֆաղաբ մըն է: Բայց բնակիչները ներկայիս 15 ՀԱԶԱՐԷՆ ԱԻԵԼԻ ՉԵՆ, ԿԷՍԸ ԹԱԹԱՐ ԵՒ ԿԷՍԸ ՀԱՅ: (Եթեանհասուն տարի է որ ռուսերը կը տիրապետէին Հայաստանի ու Երեւանի մէջ միայն եօթուկէս հազար հայեր կային... Գ.Լ.):

...Թերեւս, ֆաղաբի մը ժողովուրդը ճանցնալու լուսագոյն միջոցը, անոր դպրոցները այցելելն է: Երեսն լուսագոյն վիճակ մը ունի թէ՛ երկրորդական եւ թէ՛ նախնական կրթութեան տեսակէտով, քան ռուս կայսրութեան հայկական ուրիշ որեւէ նահանգ: Բայց կարճատեւ այցելութեան միջոցին տեսածներու մասին իմ անձնական տպաւորութիւններս արձանագրելէ առաջ կ'ուզեմ ֆոնել վարժարանները կառավարող պայմանները: ԵՐԲ ՌՈՒՍԵՐԸ ՏԷՐ ԴԱՐՉԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԾ ՄԱՍԻՆ, ՏԵՍԱՆ ՈՐ ԱՆԻԿԱ ԱՐԴԷՆ ՈՒՆԻ ՎԱՐԺԱՐԱՆԱԿԱՆ ԴԸՐՈՒԹԻՒՆ ՄԸ, որուն՝ իրենց սովորական յամառութեամբը, ծայր աստիճան նախանձեցան. այդ դպրոցավարութիւնը հաւանօրէն ծագում առած էր հայկական տառերու գիւտի միջոցին, այսինքն Ծ. դարուն: Եկեղեցին երկար դարերու ընթացքին եղած է հայ ազգութեան անկիւնաքարը, ու վարժարաններն ալ միշտ կապուած են եկեղեցիին հետ: Այս պատճառաւ է որ բուն պայմարի մը տարրերը չպակսեցան, եւ ԶԿԱՅ ՈՒՐԻՇ ՀԱՐՑ ՄԸ ՈՐ ԱՅՆՔԱՆ ԹՈՒՆԱՒՈՐԱԾ ԸԼԼԱՅ ՀԱՅՈՑ ԵՒ ԻՐԵՆՑ ՌՈՒՍ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՈՐՔԱՆ ԱՅՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԿՆԴԻՐԸ:

Երեսնի ռուսական կիմնագիտը այդ ատեն ունէր 158 հայ, 67 ռուս, 9 վրացի, 7 լեհ եւ 18 թաթար աշակերտներ: Եթէ նկատի առնենք որ թաթարները Երեսնի բնակչութեան կէտը կը կազմեն եւ շրջավայրերուն մէջ ալ ստուարաթիւ են, նշանակութեան արժանի կը

գտնենք այս կարեւոր վարժարանին մէջ ա՛յնքան քիչուոր ըլլանին: Անոնք հաւանաբար հեռու կը կենան արեւմտեան դաստիարակութենէն, եւ այս իսկ պատճառով անոնք կը թաւին դատապարտուած ըլլալ կլանուելու, իբր ցեղ մը որ անկարող է նոր միջավայրին յարմարելու: Թաթարները սակաւին իրենց ձեռքին մէջ ունին գաւառին ամենէն բերրի մէկ մասը եւ շատերը հարուստ մարդիկ են:

...Երեւանի մէջ չէք տեսներ մէկ հատիկ օտարագրի ճարտարագործ, եւ ուսերենէ գատ ուրիշ թերթ գնել չէք կարող: Մինչեւ իսկ հայերը քաղաքներու շինքները հարկերը շահագործելու համար: Հետեւեալ հարցումը գոր ուղղեցի առաջնակարգ հայ դրամատէրի մը, կրնայ ցոյց տալ իր պատասխանին հետ, մեծութիւնը բնական հարստութեանց անոնց չի շահագործելու պատճառները:

Հարցում. — «Կրնա՞ք ինձի բացատրել թէ ինչո՞ւ չէք շահագործեր ձեր առատ հողերը եւ ջուրը ու բնական բոլոր հարստութիւնները. հիւսիսային կողմը ունիք Սեւանայ լճին մեծ աւազանը, հարաւային կողմը՝ Արախւն, որ կասպից Ծով կ'երթայ յորդահոս առատութեամբ: Մշակելի հողերը կրնա՞ք ապահովարար կրկնապատկել, առանց մեծ ծախսի»:

Պատասխան. — «Ամմշակ հողերը մեծ մասամբ ռուս կառավարութեան ձեռքը կը գտնուին ու չեն ծախուիր եւ ոչ ալ վարձու կը տրուին հայերուն: Ռուսերուն համար կը պահուին այդ հողերը, բայց անոնք ալ եկած չունին. գորավար Շերէմէթիէֆ Արարատի մերձականերէն կրցաւ հող ձեռք ձգել. մենք քանիցս դիմեցինք հող ստանալու եւ գանձման օգուտը, բայց արտօնութիւն տուող չեղաւ»:

Լինչ երկարորէն կանգ կ'առնէ էջմիածնի վրայ եւ հիացմունքով կը խօսի Խրիմեանի մասին.

Ձեմ յիշեր տեսած ըլլալ անիւ սիրուն եւ գրաւիչ դէմք մը. հանոյքի սարսուռ մը ունեցայ, մտածելով որ անոր քովը նստած եմ եւ կը տեսնեմ ժպիտը՝ անտարակոյս իր դիմագիծին սովորական եղող այդ ժպիտը, որ կը թրթռար իր վնիտ եւ թույս աչքերուն շուրջը: Ձայնն ալ շատ քաղցր էր, իսկ վարուելակերպը լեցուն էր մեծամտութեամբ, որուն ետին կը զգաս թէ ոյժ կայ: Ծառաները, գահաւանդը եւ նախասենեակը շուտով մոռցուեցան անոր ներկայութեանը. այդ ձեւակերպութիւնները անհրաժեշտ են պոստիկ մարդոց միայն, եւ թերեւ օգուտակար դառնան իրենցմէ գերադասներուն, թէեւ անոնք միշտ կը վառտեն զիրենք, երբ իրենց քանցքին ծախքներուն տակ չսայթափին: Բարեբախտաբար Ն. Սրբութեան խառնուածքը թշնամի է բռնածներու. կանաձեւ վեղարին վրայ աղամանդեայ խաչը չէի տեսներ. իսկ իր սեւաթոյր մետաքսէ վերարկուն, որուն վրայ կ'իյնար դեռ բոլորովին չնեմկցած

մօրուքը, ռուսական պատուանշանին աստղը չէր կրեր: Այս գարգարանքները բոլորովին անկարող են այդպիսի դէմքի մը վրայ, եւ ամենք բանձաները՝ այս նկարագրին չեն պատշաճիր բնաւ:

Կաթողիկոսին կողմէ տրուած ճաշանդանին ներկայ կ'ըլլայ նաեւ պաշտօնատար Մ. Բրիպիլ, որ յանուն Կայսեր մասնաւոր պաշտօնով մը եկած էր: Ծաչէն ետք Մ. Բրիպիլ հայկական հարցի շուրջ վիճարանելով Լինչի հետ, շնականօրէն կ'ըսէ. Կովկասի ՀԱՐԱՒԱԿՈՂՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ԲՆԱԿՁՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՀԱՅԵՐԸ ՀԱՋԻԻ ՄԷԿ ՀԻՆԳԵՐՈՐԿ ՄԱՍ ԿԸ ԿԱԶՄԵՆ:

Լինչ «Ռուսական Հայաստան» հատորի վերջաւորութեան վեր կ'առնէ հայ ժողովուրդի արժանիքները եւ բացառիկ հիացմունքով կը խօսի ու կարծէք կը գուշակէ անոր ապագան՝ ազգային անկախութիւնը.

Յանձին հայերուն՝ ժողովուրդ մը ունինք, որ մասնաւորապէս ձեռնհաս է նոր տնտեսութեան միջնորդ ըլլալու: Անոնք կը դաւանին մեր կրօնքը, մեր լաւագոյն իտէլներէն մէկ քանին ընտանի են, ու երոպական մշակոյթի իւրաքանչիւր նոր արտադրութիւնը կ'իրացնեն այնպիսի կատարելութեամբ մը եւ անյազութեամբ, որուն չէ կրցած հաւասարիլ Հնդկաստանի ու Միջերկրականի միջեւ գտնուող ռեւէ ցեղ: Այս կարողութիւնները անոնք ի յայտ բերած են մեծամեծ դժուարութեանց տակ, իբր հպատակ ցեղ մը որ իսլամ տէրերու պետերը կը հոգայ: Անոնք լաւ գիտնին թէ իրական քաղաքակրթութեան ամէն մէկ քայլին հետ իրենք ապահովարար ոտքի պիտի կանգնին, ինչպէս որ անկասկած պիտի իյնան, ամէն անգամ որ քաղաքակրթութիւնը ցնցումներ ունենայ:

Ան մտաւորապէս հազար տարիներէ ի վեր հայերը գերութեան մէջ պահուած են. և յիմարութիւն պիտի ըլլար ակնկալել որ անոնց նկարագիրը եղծուած չըլլայ այն անարգ հետապնդումներէն որոնց ենթարկուած են՝ ի հարկէ ստիպեալ: Անոնք բանաներ եղած են, շահագործուած՝ այնպիսի ցեղերէ որոնք յաճախ իրենցմէ ստորադաս են մտաւորական կարողութեամբ. եւ պետք չկայ ծանրանալու այն արդիւնքներուն վրայ որոնք յառաջ եկած են այսպիսի պայմաններէ: ՄԱՐԿ ՄԻՆՉԵԻ ԱՆՎԱՄ ՊԵՏԻ Է ԶԱՐՄԱՆԱՅ ՈՐ ՀԱՅԵՐՈՒՆ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԻՆՉՈՒ ՇԱՏ ԱԻԵԼԻ ԱԶԳԱՌՈՒ ԶԵՆ:

Միւս կողմէ՝ հայերը ունին առաջինութիւններ որոնց մասին քիչ խօսուած է. այն պարագան՝ թէ Թուրքիոյ մէջ անոնց խստօրէն արգիւտած է գէնք կրել, հարեւանցի դիտողներուն անանկ կարծելու ամէն թէ հայերը վախկոտներ են. բայց տարբեր եզրակացութեան մը պիտի յանգնէինք, եթէ երբեք հայերը գէնք կրելու հաւասար իրաւունքներ վայելէին իրենց քիւրտ թշնամիներուն մօտ: Ամէն պարա-

գայի տակ, երբ առիթը ներկայացած է, հայերը չեն վարանած պատերազմիկի յատկութիւններ ցոյց տալու թէ բարձրորէն ռազմագիտական ձեռնարկներու մէջ եւ թէ անձնական ֆազագործութիւններով: Ռուսիոյ մզած 1877ի ասիական պատերազմին մէջ, իր յաղթական հրամանատարը հայ մըն էր Լոռիի գաւառէն — Լորիս Մելիֆօքը: Միեւնոյն պատերազմին մէջ ռուսական բանակի ամենէն փայլուն գորաբաժնի հրամանատարը հայ մըն էր — Տէր Դուկասօֆը (*): Սպայակոյտի ֆաջարի եւ երիտասարդ սպայ՝ Թարնայէֆ, որ ծրագրեց եւ առաջնորդեց իմաստուն յարակուսը Ազիլիէի ամրոցին դէմ, էրզրումի դիմացը, նոյնպէս հայ մըն էր, որ կեանքը վրայ տուաւ ֆաջութեամբ: Դերկայիս, սահմանագլուխի ոստիկանութիւնը, որ պաշտօն ունի տեղւոյն ֆիւրդերը հսկողութեան տակ պահելու, հայոցմէ կազմուած է: Այս օրինակները բաւական են հերքելու համար չարամիտ սուտ մը, որմէ հայերը տուժած են, զոնէ անգլիական հանրային կարծիքին առջեւ, շա՛տ անլի ֆան կարծեցեալ ուրիշ որեւէ թերութեան հետեւանձով:

Եթէ ինձի հարցուէր թէ ի՞նչ յատկանիշներ հայերը կը գտնազանեն միւս արեւելիցիներէն, պիտի պնդէի թէ անոնք ունին յատկութիւն մը որ ժողովրդական բարբառով՝ ԱՆՎԱՆՈՒԹԻՒՆ ԿԸ ԿՈՉՈՒԻ: ԱՀԱՄ ԱՅՍ ՅԱՏԿՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀԻԻ Է ՈՐ ՀԱՅՅԵՐԸ ԿՐՑԱԾ ԵՆ ԻՆՔՊՈՒՆԻՆՔՆԻՆ ՊԱՀԵԼ ԻՐԻ ԱՉԳ, ԵՒ ԱՅՍ ՏԵՍԱԿԵՏՈՎ՝ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՈՅԻԷ ԱՉԳ ԶԻՐԵՆՔ ԶԻ ԳԵՐԱՉԱՆՑԵՐ: Հայերու մտաւարական կարողութիւնները կը սնուցուին ուժեղ նկարագրէ մը, եւ, ոչ նման յոյներուն, այլ նման՝ գերմանացիներուն, իրենք ի բնէ հակառակ են վարկպարագի դրութեանց. իրենց գործերուն մէջ կը մխրճուին եւ զանոնք խորապէս կը գնեն: Մօտաւոր Արեւելի մէջ չկայ ցեղ մը որ անլի արագ ըմբռնում ունենայ ֆան պարսիկները: Այսուհանդերձ, եթէ ձեզի այցելէ

(*) C. B. Norman, որ 1877ի ռուսեթուրք պատերազմի միջոցին Քալմազ քերթի պատերազմական թղթակիցն էր, Հետեւեալը գրած է Լոնտոն Հրատարակուած «Armenia and the Campaign of 1877» անուն գրքին մէջ. — Այն եղանակը որով անլիա (Տէր Դուկասօֆ) ղեկավարեց իր զինուորները Քաղիքի մէջ, Յունիս 18ին, որ ատեն ութը վաշտով կատարելապէս յաղթեց Մուհամմադ Փաշային իր դէմ նախատեսուած տաններու վաշտերուն, այն անյողողող դիմադրութիւնը որով կատարուց Մուխթար Փաշայի արշաւանքը՝ էլէէ Խալիսի մէջ Յունիս 21ին. այն ջոջարի նահանջը, զոր իր կէս զորաբաժինը կատարեց Անձու Փաշայի ջասն երէջ վաշտերուն ղէմը. եւ վերջապէս, իր յանդուգն կողմնապահ զնացը՝ Եկտիբէն Պաշայի, եւ այդ ջողաքին ազատուէր թրքական զորաբանակներուն աչքին առջեւ, որոնք թուական առաւելութիւն ունէին իր զինուորներուն վրայ, բոլոր ասոնք զորաբաժնի առաւելակարգ Հրամանատար մը կը կացուցանեն Տէր Դուկասօֆը:

պարսիկ մը, իր հայազգի ընկերոջը հետ, գիրք մը առէ՛ք ձեր գրագրանէն, լուսազոյն է՝ պատկերագար գիրք մը, եւ անոր հեղինակին վերայ ֆիչ մը խօսելէ յետոյ գիրքը տուէ՛ք անոնց. պարսիկը պատկերներուն պիտի նայի, զորս թերեւս պիտի գովէ. իսկ հայը պիտի լսփէ գիրքը, եւ խօսակցութիւնը ամէն անգամ որ կանց առնէ, պիտի տեսնէ՛ք որ անլիա գիրքին վրայ կը յառէ աչքերը, յօնքերը պոստած: Այս ձգտումներուն բնականաբար կ'ընկերանայ կանխատեսութիւն եւ գուգակչում. անա՛ այս յատկութեանց շնորհիւ է որ հայերը առաջնակարգ տեղ մը կը գրաւեն առետրական գործերուն մէջ: Հայը ոչ նուազ մտացի է ֆան յոյնը, բայց անլի հետատես է, եւ թէեւ շաղախուած է բոլոր արեւելիցի առետրականներու մանր մուր մուր փոփոխութիւններով, բայց հայ վաճառականը արագօրէն կը գնահատէ գործին առաւելութիւնները, երբ անոնք կը ներկայանան այն պայմաններուն տակ, որոնց կը ձգտի իր կոչումը: Բարեկամ մը որ խորունկ ծանօթութիւն ունի Պալմաներու այլաստ ֆազաֆակիրք բնակչութեանց վրայ, իբր շահեկան իրողութիւն մը ըսած է ինձի թէ սնանկութեանց վիճակագրութեանց մէջ սնանկացող հայերուն թիւը բազաւատաբար շատ ֆիչ է: Ղստ որում այդ սնանկութիւնները սովորաբար կ'ըլլան անլի կամ նուազ խարդախուած, վերոյիշեալ իրողութիւնը ցոյց կուտայ թերեւս ո՛չ այնքան հայոց ուղղամտութիւնը, այլ անլի իրենց ոյժը՝ դիմադրելու անմիջական փորձութեան մը, եւ իրենց սրամտութիւնը՝ ըմբռնելու համար առետրական հաստատամտութեան միւթակամ առաւելութիւնը:

Բայց որպէսզի կարելի ըլլայ գնահատել այս ժողովուրդը իր իսկական արժանիքին մէջ, պէտք է հայերը ուսումնասիրել ո՛չ թէ Արեւելի մէջ իր լայնատարած ապականութեամբը, այլ՝ Հայաստանի ռուսական նահանգներուն մէջ: Այստեղ՝ անոնք շատ յաջողութեամբ օգտագործած են ժամանակամիջոցը ընդմէջ այն շրջանին երբ Ռուսիոյ սուրբ ազատարարի սուրբ էր եւ ներկայ շրջանին, երբ Ռուսիոյ պետական մարդիկը ներշնչող սկզբունքները համօրբոստութիւնն ու համալուսականութիւնն են: Այնքան աչառութիւն պատճառեցին ինձ՝ ձեռք ձգուած արդիւնքները, եւ այնքան աչքիս գարկաւ այն հակապատկերը որ կար այս նոր ազատագրուած ժողովուրդին կատարած իսկական յառաջդիմութեան ու իր այլազգի դրացիներուն նահագնումին եւ աստիճանական յետադիմութեան միջեւ, որ ստանց կանխաւ մտադրած ըլլալու՝ որոշեցի յառաջ տանիլ ուսումնասիրութիւնս եւ անլի երկար ատեն նամբողջի թրքական հողի վրայ: Որովհետեւ՝ ի՞նչ էր տեսածս: Վաճառականութեան եւ արհեստներու բոլոր միւրներուն մէջ, թէ՛ գործի եւ թէ կառավարական պաշտօններու մէջ հայը մրցակից

չումէր եւ հրապարակին բացարձակ տէրն էր: Ան է որ կը կազմակերպէ սուրհանդակով ճամբորդութեան միջոցները, եւ եթէ պանդոկ մը գըտնելու չափ բարեբախտ ըլլա՛ք, պանդոկապետը հայ մըն է անպատճառ: Մեծ մասն այն գիւղերուն ուր մարդ կ'իջեւանի, բնակուած են թխորակ գիւղացիներէ: Քաղաքներուն մէջ եթէ կառավարիչը ձեռք չընկեր սոյ տեղական ոստիկանութեան պետը, անիկա հուժկու հայ մըն է անկասկած, ուստի կան համագրեստով. որ քեզի կը հարէ կամ բնակարան մը եւ սաղարթախիտ պարտէ՛ք մը ուր կարենա՛ք կանգնել ձեր վրանը: Եթէ հարու վրայ նշմարէ՛ք գեղեցկակերտ շէնք մը որ հարտարապետական արժանիք մը ունի, անիկա անպատճառ Ալեքսանտրապոլցի հայ հարտարապետի մը գործն է: Ալեքսանտրապոլ քաղաքին մէջ իսկ ուր հայեր չատ բազմաթիւ են, տուն շինելու սերը՝ որը իրենց նախահայրերուն մէկ աչքառու յատկանիշն էր, շատ աւելի ծաղկած է լաւագոյն պայմաններու տակ. ընդարձակ մայր եկեղեցի մը եւ բազմաթիւ մեծ եկեղեցիներ կանգնած են նոր քաղաքին տուներու միջեւ եւ ունին փառափրական ճակատանկարներ: Երեսնի մէջ ամէն մէկ հարուստ վաճառական տեղաւորուած է հանելի վիլլայի մը մէջ, որուն իտալական ձեւերը կը բարձրանան կաղամախիներու եւ ուռնիներու ստուերին եւ պտուղներով բեռնաւորուած ծառերուն մէջէն: Երեսնի մէջ գտնուած պատուական գինին կը պատրաստուի նորագոյն մեթոտներու համաձայն, ձեռամբ հայու մը՝ որ երկու տարի Գերմանիոյ մէջ ուսումնասիրած է եւրոպական հարտարարութեան նորագոյն կիրառումները: Երկրին դրամական գործառնութիւնները հայ դրամատէրներու ձեռքը կը գտնուին: Ճարտարամիտ արհեստուորները, ոսկերիչ, ժամագործ, ստազագործ բարձր ալ հայ են: Մինչեւ իսկ, սահմանազուխի հեծեալ ոստիկաններու ժամտատեսիլ սպան, որուն երկարատեւ ընկերակցութիւնը վայրենի տարբերու հետ — մեծ ու փոքր աստիճանի բիրտներ եւ աւագակներ — իրեն տուած է աւագակապետի մը երեսոյթը, կը կրէ հայկական անուն մը, թէև ասիկա շատ պատիւ մը չի բերեր իրեն: Ժողովուրդին ստուար մեծամասնութիւնը ուսերէն չի խօսիր, կամ շատ քերի կերպով մը կը խօսի: Արդարեւ, եթէ կառավարիչները եւ ոստիկանական գլխաւոր պաշտօնատարները ուս չըլլային, եւ ուս ու զապախ կանոնաւոր գիւտուորներ հոս հոն չերեւային, ճանապարհորդը՝ միտէն չպիտի անցընէր թէ ուսական նահանգի մը մէջ կը գտնուէր եւ իր նամբան պիտի շարունակէր ամենայն հանդարտութեամբ, մինչեւ որ յանկարծ ինքզինքին զար ուսական դուրսեան մը կոշտ կերպով մը բաղխելով: Ինչպէս եղեր է, հայերը տիրած են ուսերուն, եւ Եթէ հԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ ԹՈՅԼ ՏԱՅ ՈՐ ԻՐԵՆՑ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐԸ ԱՆԱՐԳԵԼ

ՅԱՌԱՋ ՏԱՐՈՒՆ, ԱՆՈՒՔ ՎԵՐՋ Ի ՎԵՐՋՈՅ ՊԻՏԻ ՏԻՐԱՊԵՏՆԵՐԿՐԻՆ:

Այս կացութիւնը թելադրական է. պէտք չէ զարմանա՛մք, եթէ հայերը իրենց արեւելցիի երեւակայութիւնն ի գործ դրած են նուազ անխոհեմ կերպով մը քան արեւմտեան խոհեմ ցեղերը. հայկական նոր քաղաքներուն մը գաղափարը հրդեհած է այն ազգային խանգարանութիւնը որ կը սնանի ազգային պատմական դէպքերու ընթացահանութեամբը: Արեւելեան Եւրոպայի օրինակը կարծես կ'արդարացնէ հայերու անկախութիւնները: Երբ կարգը գայ խօսելու թրքական գաւառներուն վրայ, պիտի ջանա՛մք ցոյց տալ այս ենթացողութեանց սխալ ըլլալը: Բայց չեմ կարծեր որ այս կարգի մամբասանութիւնները ազգած ըլլան հայոց կերպով մը աւելի ընդհանուր գաղափարներուն վրայ. եւ այստեղ պատշաճ չէ ատոնց մասին խօսիլ: Հայկական անկախ պետութեան մը տեսլականը եթէ նոյնիսկ իրականութիւն գտնէ հեռաւոր ապագայի մը մէջ, բոլոր մտքերուն ալ միեւնոյն ձեւով չի խօսիր: Շատերը հսկայական վտանգ մը կը տեսնեն մարդկութեան յառաջդիմութեանը համար՝ այս մանր պետութեանց կազմութեանը մէջ. ազգային զգացումը անոնք կը դնեն այն իրականացած գաղափարականներուն մէջ, որոնց վրայ, քանի կը յառաջդիմէ մեր քաղաքակրթութիւնը, անհրաժեշտ է նորը շինել:

...Հայը՝ որ այս կարգի տեսակէտներ կ'որդեգրէ, իրաւամբ կրնայ հարցնել թէ ո՞ր կողմը պէտք է նայի: Թրքական կայսրութիւնը զինքը մինչեւ իսկ չի պաշտպաներ, եւ կը կոտորէ իր հայազգի հպատակները. եթէ հայը իր աչքերը դարձնէ Թուսիոյ, հոն ալ չի տեսներ միջակայն այնպիսի առաւելութիւններ, որոնք զինքը բարձրացնեն շատ աւելի վեր այն տնտեսական աստիճանէն, որուն հասած է ինքը արդէն. իսկ ուսական իտալներու յանձնուիլը կրնայ, իր կարծիքով, ձեռք բերուիլ միմիայն ի զին բարոյական եւ մտաւորական բնացնման: Գտնուելով այսպիսի պատկերի մը դէմ յանդիման, անիկա ապաստան կը փնտռէ ինքն իր մէջ, եւ եթէ խորհուրդ հարցնէ իր աւելի համեստ ըմբռնումներուն, անիկա պիտի աշխատի լուրջութեամբ եւ առանց ցուցամուրթեան, լրացնելու համար իր ցեղին ունեցած պակասները, այն է՝ հայ գիւղացին բարձրացնել իր ներկայ անկեալ վիճակէն, եկեղեցին մաքրագործել, հարուստ դրացիներու շահը փնտռել տալ հասարակաց օգտակարութեան ձեռնարկներու մէջ: Առանք են ամենեւն աւելի օրինաւոր յաւակնութիւնները, որոնք, որքան ալ դանդաղօրէն ի գործ դրուին, ապահովաբար յաջողութեամբ կը պսակուին, եւ որոնք պիտի հաստատեն, ինչ որ ըլլան քաղաքական յեղաշրջումները, իր իրաւունքը՝ ազ-

դեցուքիւմ մը ունենալու համար իր երկրին պատմութեանը վրայ, իբր մէկը յառաջդիմաւոր բնիկ ու հաստատարանկ տարրերէն, Մօտաւոր Արեւելի մէջ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ Մ Է Զ

Փարիզի «Անահիտ»-ի 1900 թիւ 9-11էն թարգմանւած:

«Պատմութեան ինքնորոշ համաժողովը իր օրակարգին մէջ անցուց, թրանսպարան ու չինական խնդիրներուն հետ, հայկական խնդիրն ալ: Գ. Համբարձում Առաքելեանն է, որ յանձնեց համաժողովին կարգադիր յանձնախումբին սրտայոյզ յիշատակադիր մը զոր ինքը խմբագրած էր եւ զոր ստորագրած էին պ.պ. Կամպարեան, Նովիբոֆ, Հովալէքաթ, ալ Ռուպերթի, Լորիս Մելիբոֆ, Մարտիկէ, Առաքելեան, Զօպանեան, Մ. Յովհաննէսեան, Բ. Միքայէլեան, Տր. Զալեան, Զերազ, Պատմանեան եւն.:

Հարցը վիճուեցաւ համաժողովին չորրորդ նիստին մէջ: Յանձնախումբի մասնաւոր նիստին ներկայ կ'ըլլան հայերէն պ.պ. Կամպարեան, Լորիս Մելիբոֆ, Առաքելեան, Ա. Զօպանեան: Կը նախագահէր նիստին ռուս մեծանուն ընկերարան Նովիբոֆ եւ կը խնդրէ պ. Առաքելեանէն կարգալ իր յիշատակագիրը, եւ ընթերցումէն յետոյ՝ յայտարարեց թէ ինքը հարկաւոր կը նկատէր այդ խնդիրը մտցնել համաժողովի օրակարգին մէջ, եւ յանձնախումբին միւս անդամներուն կարծիքը հարցուց, բոլորն ալ համախոհ հանդիսացան նախագահին, ու տեղեկագրերը հետեւեալ բանաձեւը խմբագրեց՝ հարցը հետեւեալ օրուան համաժողովի ընդհանուր նիստին վիճարանութեանը առաջարկելու համար. «Համաժողովը, Հայաստանի մասին իրեն յանձնուած յիշատակագրին ծանօթանալէ յետոյ, իր համակրութիւնը կը յայտնէ այդ դրժբախտ ազգին, կը մտածէ թէ հայկական ջարդերը այս վերջերս տեղի ունեցած ամենէն զոտիկ արարքներէն մին կը կացուցանեն, եւ իղձ կ'ըլլայ յայտնէ որ ստիպեն օսմանեան կառավարութիւնը յարգել հայոց անկապտելի իրաւունքները որոնք Պերլինի դաշնագրով երաշխաւորուած են»:

Ահմէտ Ռիզա դիտել կուտայ թէ համաժողովը անդորձնական բան մը կ'ընէր միմիայն հայոց համար Եւրոպայի պաշտպանութիւնը պահանջելով, որովհետեւ, ըսաւ, Հայերը մէկ փոքր մասը կը կազմեն

օսմանեան պետութեան ժողովուրդներուն, որոնք ամէնքն ալ, մահ-մետական թէ քրիստոնեայ, հաւատարապէս կը տառապին Սուլթան Համիտի բռնապետական ռեժիմին հետեւանքով: Ա. Ռիզա առաջարկեց որ Տաճկաստանին ընդհանուր բարենորոգումը պահանջուի Եւրոպայէն:

Գ. Արշակ Զօպանեան պատասխանելով կը յիշէ սուլթաններու հալածանքները անցեալին քրիստոնեայ ազգերու եւ այս անգամ հայերու դէմ: Կ'անելցնէ թէ իբրեւ ուրոյն հայկական խնդիր է արձանագրուած Սան-Սթեֆանոյի եւ Պերլինի դաշնագրերուն մէջ. այլեւս կարելի չէ այս մասին վիճել: Հայերը այս խաղաղութեան համաժողովէն խնդրած են իրենց հարցով զբաղել. թուրքերն ալ կարող են զատ դիմում մը ընել իրենց հարցին համար, որ բոլորովին տարբեր է:

Գ. Ռուպերթի, ռուս. ընկերարանութեան ռուսացի Պրիւքսիլ ազատ համալսարանին մէջ, պահանջեց որ յանձնախումբի բանաձեւը աւելի որոշ ըլլայ. «որիչ լուծում չկայ բայց եթէ ինքնավարութիւն պահանջել եւրոպական կառավարութիւններէն՝ Հայաստանի համար»:

Գ. Ռաֆայելի, ռուս կառավարական պաշտօնեայ, առաջարկեց որ Պերլինի դաշնագրին հետ եւ անկից առաջ յիշատակուի Սան-Սթեֆանոյի դաշնագրերը:

Նիստը աւարտելէն ետք, պ. տը Ռուպերթի Զօպանեանին հետ կը խմբագրեն հետեւեալ բանաձեւը. «Համաժողովը ցաւ կը յայտնէ որ պառակտումը, նախանձը եւ իւրաքանչիւր պետութեան իր մտամուտը շահերը ըմբռնելու անձկամիտ եղանակը արգիլած ըլլաւ մինչեւ ցարդ Սան Սթեֆանոյի եւ Պերլինի դաշնագրերներն ստորագրող պետութիւնները՝ իրենց ամենատարրական պարտականութիւնները կատարելու հանդէպ ժողովրդի մը, զոր պաշտպանելու պարտքն ստանձնած էին իրաւաբանական արժէք ունեցող որոշ յանձնառութիւններով: Կը յուսայ որ տիեզերական խնդին բողոքը եւ քաղաքակրթ. աշխարհին զայրոյթը վերջ ի վերջոյ եւրոպական կառավարութիւնները պիտի ստիպեն լուծել հայկական խնդիրը արմատական ու բանաւոր եղանակով մը, ինչպէս որ ըրաւ վերջերս կրետէի մէջ»:

Հետեւեալ օրը, եւրոպական միջազգային ապագայ պատերազմի մը անկարելիութեան վրայ (որու մասին խօսեցաւ պ. տը Պրիւք, Լահէի համաժողովին զխաւոր դերակատարը) երկար վիճարանութենէ մը յետոյ, պ. Նովիբոֆ կարդաց պ. Առաքելեանի յիշատակագիրը եւ յանձնախումբին բանաձեւած որոշումը, պ. Շարլ Ռիշէ, համաժողովին դեր նախագահը, քուէի դրաւ այդ որոշումը որ ընդունուեցաւ միաձայն հաւանութեամբ:

Սուրբ առին նաեւ Արշակ Զօպանեան, Միքայէլ Յովհաննէսեան (Մ. Վարանդեան), պաշտպանելով վերեւի բանաձեւը ու ընդդիմա-

խօսելով Ահմէտ Ռիզայի տարկութիւններուն՝ թէ, ա.— Հայաստան չկայ, ք.— պէտք է վերցնել Սան Սթեֆանոյի յիշատակութիւնը, քանի որ Պերլինի դաշնագրով ան ջնջուած է եւ զ.— Կրետէի ձեւով կարելի չէ լուծել հայկական հարցը, քանի որ «հայերը տարածուած են ու տարտղնուած են օսմանեան պետութեան ամէն կողմը ու ոչ մէկ կէտի վրայ հոծ մեծամասնութիւն մը չեն կաղմբը»:

Համաժողովը բանաձեւին մէջէն կը վերցնէ Սան Սթեֆանոյի եւ Կրետէի մասին եղած ակնարկութիւնները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՄԷՁ (1900)

Փարիզի ընկերվարական միջազգային համաժողովին մէջ Քըլարա Ջեթթին ներկայացուց հետեւեալ բանաձեւը որ ընդունուեցաւ միաձայնութեամբ:

Բանաձեւը Ա. կէտին մէջ կը պարսաւէ ռուսական ցարութեան կեղեքումի քաղաքականութիւնը Լեհաստանի եւ Ֆինլանտիայի ժողովուրդներուն նկատմամբ:

Բ. կէտին մէջ կը դատապարտէ անդլիական կառավարութեան վայրագութիւնները հարաւային Ափրիկէի պոլոնիներուն նկատմամբ:

Գ.— Փարիզի միջազգային ընկերվարական մամուլը, անգամ մը եւս հաստատելով եղբայրական համերաշխութեան զգացումները որ բոլոր ժողովուրդները պարտին միացնել իրարու. զայրոյթով կը բողոքէ այն բռնութիւններուն, անգթութիւններուն, ջարդերուն դէմ, որոնք Հայաստանի մէջ գործուեցան, երկու աշխարհներու աշխատաւոր դասակարգին ուշադրութիւնը կը հրաւիրէ այն ոճրագործ մեղսակցութեանը վրայ զոր կարգ մը դրամատիրական կառավարութիւններ ունեցան, կը հրաւիրէ ընկերվարական խորհրդարանական խմբակները որ ամէն առիթով միջամտեն ի նպաստ զգուցելի կերպով կեղեքուած հայ ժողովուրդին, որուն համաժողովը կ'ուղղէ իր սերտ ու բուռն համակրութեան հաւաստիքը:

Մեզի հաղորդեցին թէ Հ. Յ. Դաշնակցութեան պատկանող մէկ քանի գործիչներ են որ Հայաստանի վերաբերեալ այս գեղեցիկ հատուածը մտցնել տուած են զինամուրթեան վայրագութեանց դէմ խմբագրուած որոշողութեան մէջ:

(Անահիտ, 1900 թիւ 9-10-11)

Ա. ԶՕՊԱՆԵԱՆԻ ԿԱՐԾԻՔԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

1905ին, ռուսճափոնական պատերազմի վերջաւորութեան, Ա. Զօպանեան «Հորիզոն» խորագրին տակ, «Անահիտ»-ի յաւելուածին մէջ մէջ կը ներկայացնէ քաղաքական տեսութիւն մը, մասնաւորապէս մասնանշելով Հիւս.—Ամերիկական իրրեւ նոր ոյժ մը արեւելեան հարցին մէջ:

Ա. Զօպանեան կը գրէ.

«Տրուած ըլլալով վիթխարի ուժը գոր կը ներկայացնէ ամերիկ. հանրապետութիւնը եւ իր անկախ դերն ու կտրուկ նկարագիրը, այդ քաղաքական նոր ստատարը որ կ'աւելնայ Արեւելեան հարցին շուրջ՝ ունի որոշ նշանակութիւն: Վերընտրուելէն անմիջապէս յետոյ, Պ. Բուզվիթ յայտնեց իր մտադրութիւնը՝ հաղազութեան երկրորդ տիեզերական համաժողովի մը գումարման նախաձեռնութիւնը առնելու. երապական տէրութիւնները սկզբամբ հաւանեցան, միայն Ռուսիա պահանջեց որ այդ համաժողովը գումարուի պատերազմին (1904-1905ի ռուս մարտական պատերազմը) աւարտումէն յետոյ. այդ պահանջին ընդունուեցաւ, եւ պատերազմին աւարտումէն յետոյ պիտի գումարուի համաժողովը. քէպէտ ինչ ինչ տէրութիւններ ամէն ջանք պիտի ընեն որ Արեւելեան հարցը անոր օրակարգին մէջ չ'տնեն, բայց անկարելի չ'է որ, դրդուած Ամերիկայի հայասիրական շարժումէն, ինչպէս նաեւ Ամերիկայի արեւելեան շահերէն, պ. Բուզվիթ ջանք մ'ընէ այդ դժուարութեանց յաղթելով հայկական հարցը օրակարգին մէջ մտցնելու. ահա կէտ մը որու վրայ մեր գործօն կուսակցութիւնները անշուշտ արդէն դարձուցած են իրենց ուշադրութիւնը. բայց հայոց պարտքն է ամէն ճիգ թափել որպէսզի այդ համաժողովին մէջ մեր հարցը լրջօրէն նկատառութեան առնուի:

Ֆրանսա, Իտալիա եւ Անգլիա այժմ մտերմակամ եւ սիրալիր յարաբերութիւններ ունին իրարու հետ. այդ տէրութիւններէն ոչ մէկը, դժբախտաբար մեր հարցը տիրաբար ձեռք առնելու տրամադրութիւն ցոյց չի տար: Բայց եւ իրենցմէ ոչ մէկը որոշապէս հակակիր չ'է անոր. իրենցմէ իւրաքանչիւրը կը սպասէ որ ուրիշ մը «քոժոժ կախէ». եթէ Միացեալ-Նահանգներու կառավարութիւնը յանձն առնէ «քոժոժը կախել» այդ համաժողովին մէջ, այդ երեք տէրութիւնները հաւանակամ է որ պիտի աջակցին այդպիսի նախաձեռնութեան մը յաջողմանը»:

Դ Ե Պ Ի՝ Ե Ր Կ Ի Ր

Քսաներորդ դարու սկիզբը, Հայ ժողովուրդին ղեկ գործադրուած հալածանքը թուրք եւ ռուս կառավարութիւններուն կողմէ, որոշապէս նպատակ ունէր ցրուել մեր բազմութիւնները, հեռացնել զանոնք իրենց դարաւոր հայրենիքէն:

Արտագաղթի այս հոսանքը մահացու հարուած մը պիտի տար Հայ Դատին, կ'ուզէին վիճելի դարձնել Հայկական մեծամասնութիւնը եւ խնդրական՝ մեր իրաւունքները հայրենի հողին վրայ:

Այս մասին գոյութիւն ունեցող ազգային մտահոգութիւնը ա՛յնքան պատկերալից կերպով կ'արտայայտէ է. Ակնունի իր «Դէպի՛ երկիր» յօդուածաշարքին մէջ, որ առաջին անգամ լոյս տեսաւ «Դրօշակ»ի 1900 Յուլիսի թիւին մէջ, առանց ստորագրութեան, իբրև խրմբագրական: Մեծ հայրենասէրը, սարսափահար՝ ի տես արտագաղթի հոսանքին, հզօր շունչով զգաստութեան կոչ կ'ուզէ իր ժողովուրդին:

Ամէն տեղ է որոնում հայը ապաստան

Բացի այն երկրից, որ կոչոււմ է Հայաստան:

Գնում է հայը՝ կննիոր ճակատին, յոյզը սրտում:

— Ո՛ւր, հայ շեմակամ:

— Ղարիպուքիւն:

Գնաց: Իսկ այնտեղ, հնուսի կիսաւեր գիւղերում, պառաւ մայրը՝ մէջքը կորացած, հալումաշ կիներ՝ ծծկերը գրկին, եւ չորս մատղաշները՝ բորիկ եւ ցնցոտիապատ, նրան են սպասում: Նրան են սպասում, երբ պարտատէրն է դուռը բաղխում կամ երբ հարկահանը՝ որոտալի ճայնով՝ շանք ու կրակ է թափում: Երեխաների կանչը՝ «հա՛ց» եւ դատարկուած գոմից նուազած եզան բառաչիւնը՝ «խոտ» — դադար չունի: Դաշտում՝ հաց, գոմում՝ խոտ չկայ, — նրան են սպասում: Գիշերը անձրեւ եկաւ, հողը փափկեց, արտը վարոզ չկայ. նրան են սպասում: Տանեցու աչքը ջուր կտրեց: Պառաւ տատը թոռների բողբոջ կտրեց՝ ձէթը ծամ տարաւ, լուս վառեց, բայց էլի խաբար չկայ: Ու ժամից դառնալիս՝ իր ցաւը նա այսպէս երգեց՝

Տուն կայ՝ պահօզ չկայ,

Արտ կայ՝ վարոզ չկայ...

Գնում է հայը՝ վերքը ճակատին, երկիւղը սրտում:

— Ո՛ւր, հայ երիտասարդ:

— Օտար աշխարհ:

Եւ եգիպտոս ու կիպրոս, կովկաս ու Բալկան եերիք չեզան հալածական պանդխտին: Ծովեր անցաւ, մինչեւ Ամերիկա հասաւ: Օտար աշխարհում նրա լեզուն բացուեց. ցոյց տուեց իր մարմնի վերքերը, սրտի խոցերը: Անպաճոյն, բայց յուզիչ լեզուով պատմեց ծերուկ հօր սպանութիւնը՝ կաթուածահար մօր առաջ, մատաղ էրոջ փախցնելը. նկարագրեց հարեւանի թալանը, ամբողջ գիւղի աւերումը եւ իր յուսահատ փախուստը: Մարդիկ յուզուեցին, կսկծացին: Փախստականին ապաստան տուին, ֆաջալերեցին: Բայց նա ոչ առաջինն էր եւ ոչ վերջինը: Օր չանցաւ, որ պանդուխտ չգար: Ամիս չանցաւ, որ նոր ֆարվան չերեւար: Հնէրը նորերին գրաւեցին: Օտար աշխարհի նամբան՝ ջրի նամբայ շինեցին: Գիւղ չմնաց առանց փախստականի, օջաղ չմնաց առանց դարիքականի: Եւ ծերունի պապը՝ մարած օճախի մօտ նստած, արտասուէր սրբեց ու հանգած այս գանգատը ուզիզեց՝

Ման ունինք՝ մանկալ չունինք,

Ընտանիք ունինք՝ քաիկ չունինք:

Գնում է հայը՝ բողոքը ճակատին, վրէժը սրտում:

— Ո՛ւր, հայ հայրենասէր:

— Ազատ երկիր:

— Ինչո՞ւ համար:

— Գործելու համար:

«Այնտեղ, ազատների կրկրում, ուր չեն կտրում այն կոկորդը՝ որ բողոք է հնչեցնում, եւ այն ձեռքը՝ որ ստրուկի շրքան է փշրում, այնտեղ մենք բարձրաձայն ֆարսով վառ կը պահենք համագային վրէժի սրբազան կրակը՝ իբրեւ վերջին աւանդ անմեկ գոհերի, այնտեղ՝ ինչպէս մարմնացած բողոք՝ կը պատկերացնենք դիւստի հայրենիքի սարսափները — սարսափներ, որոնց հարիւրերորդ մասը անգամ չգիտէ ֆաղափակիք աշխարհը. ազատ ու անկախ այնտեղ մենք կ'ուսումնասիրենք հայրենիքի փրկութեան ճանապարհները, կը կրթենք ու կը պահպանենք տարագիր մատաղ հայ սերունդը օտար ազդեցութիւնից. այնտեղ, զգայուն մարդկանց առաջ, որոնք լսել, զգալ, ցատման որոտ արձակել գիտեն, մենք բաց կ'անենք ճանապարհը ժողովրդի սիրտը, շունք ու անէծք կը թափենք, մինչեւ որ արար-աշխարհ տակնուվրայ կը լինի. մինչեւ որ մի որեւէ տեղից մեզ օգնութիւն կը հասնի»:

Ու գնաց: Նա միեակ չէր: Նրան հետեւեցին ընկերներ, ծանօթ ու անծանօթ գործիչների ամբողջ խմբեր, տարբեր ծրագրերով, տարբեր ճանապարհներով: — Սկսուեցին լրագիրներ, հանդէսներ, հիմնուեցին դպրոցներ՝ ընկերութիւններ. տեղի ունեցան ժողովներ, մերկացումներ, վերջապէս աղերսանքներ, դիմումներ: Եւրոպա, Ամերիկա,

նոյնիսկ ստրկութեան երէկուայ հայրենիքը, փարաւոնների երկիրը՝ լեցունեց ազգի ցար լացող գործիչներով ու բողոքներով: Միայն երկիրն էր, որ մնաց առանց բողոքի, առանց գործողների: Եւ այն ժամանակ, երբ օտար աշխարհում՝ ազգասիրական հողի վրայ բուսած ազմուկն եւ իրարանցումը սաստկանում էր՝ վերածելով հայրենիքի ու գործի ընդհանուր շահերը խմբական եւ նոյնիսկ անհատական մանր հաշիւների, նոյն այդ ժամանակ՝ երկրի մէջ լուում էին բողոքի բոլոր կենդանարար ձայները, հանգչում ապստամբութեան խորայնները՝ վառուած անթիւ գոհերի ազատատէր շունչով: Երկրի խորում՝ կռուող շմաց, ժողովրդի առաջ՝ բողոքող: Եւ Մուշի դաշտի կիսաւեր գիւղերում, յուսարեկ, մոռցուած, անընկեր մնացած մարտիկը՝ գիւղի աշուղին կանչեց եւ խնդրեց այսպէս երգել իր ազգի վիշտը՝

Ճրագ կայ՝ վառող չկայ,

Ժողովուրդ կայ՝ սիրտ տուող չկայ:

Ինչո՞ւն ժողովուրդ...

Ամէնքը գացին: Մէկը իրրեւ բողոք՝ ֆանդուած օջաղի, միւսը՝ հարստահարուած աշխատանքի, երրորդը՝ հալածական գաղափարի: Գնացին, որ աղերսեն, վկայեն անսիրտ, կուրացած աշխարհին ֆո վիշտը, տառապանքը, ֆո յուսահատ վիճակը: Իսկ դու՝ որբական մեծակութեան մէջ՝ սպասում եւ խարբիկների, օգնութեան, ազատութեան...

Գնացին եւ էլի գնում են...

Յիսուն հազար գաղթականներ կովկասում, որոնք 5 տարուց ի վեր մի անկիւն անգամ չունեն իրենց յոգնած գլուխը վայր դնելու համար. անթիւ, անհամար հալածականներ Եգիպտոս, Կիպրոս, Ամերիկա, Եւրոպա՝ ցնցոտիապատ, թափառական, անտուն, անտէր՝ իրրեւ անխօս կենդանագիր հայրենիքի թշուառութեան, ցիրուցան որբեր հայ աշխարհի բոլոր ծայրերից եւ այդ բոլորի հետ միասին՝ ամբողջ Հայաստանի մտածող, յեղափոխող տարրը՝ ուսուցիչ, ֆարոգիչ, գրող, կռուող, յեղափոխական, վարդապետ, մտաւորական — բոլորն էլ երկրից դուրս, բոլորն էլ թափառական, աղերսանքը բերանին, ձեռքը մեկնած...

Որպիսի՞ դարձ:

Պատմական վիթխարի դէպքերը միմեանց յաջորդեցին, մենք արեան գետեր տուինք, մեր նահատակների թուով աշխարհ դարդեցինք, իսկ այժմ... Այժմ արեան փոխարէն արտասուք ենք թափում, բողոքի տեղ՝ աշխատանք: Ժողովուրդ եւ հայրենիք պաշտպանելու փոխարէն՝ մեր թշուառ գոյութիւնն ենք պահպանում. թշնամու տեղ՝ իրար հետ

ենք կուում: Եւ կամ մեր խիզճը խարբելու համար, այն միջոցին, երբ ամբողջ Տարօնում մի հաս դպրոց, մի այրենարան չի մնացել, հայ հայրենասէրները օտար երկրներում թերթեր են տպագրում, նաոեր են աւում, նոյնիսկ դպրոց եւ ժողովարաններ են հիմնում: Հայաստանը — փա՛ռֆ այս նոր գիւտին, օտարութեան մէջ են փնտռում, իսկ նրա ապագան՝ աղերսանքների եւ տարագրութեան մէջ: Եւրոպան կըշտացաւ, նոյնիսկ «չոզնեց» մեր լաց ու կոծից, մեր ցնցոտիներից, իսկ մենք՝ ինքնախարէութեան դիմակի տակ՝ շարունակում ենք թափառել եւ աղերսել, աղերսել եւ թափառել.

Ժողովուրդ էինք՝ թափառական դարձանք,

Կուողներ էինք՝ աղերսողներ դարձանք...

Կա՛ց, հայ մարդ, կա՛ց:

Ի՞նչ չէ այն ճանապարհը, որ տանում է դէպի փրկութիւն: Ազատագրական արիւնը չէ, ~ նոյնիսկ այնքան սոսկալի, ինչքան «հայկական կոտորածները», որ սպանում է մի ազգ, այլ թափառական կեանքը, մարացկանի պայուսակը, անվերջ տարագրութիւնը: Մի մոռացիր, որ ֆսան տարուց աւելի է ինչ օսմանեան բռնապետութիւնը ե՛ւ հրճութեամբ, ինչպէս Վանում, ե՛ւ սովով, ինչպէս Վասպուրականում, ե՛ւ կոտորածով, ինչպէս ամբողջ Հայաստանում, մի նպատակ միայն ունի, վերացնել, նուազեցնել հայերին, դարձնել Հայաստանը անհայտ քանակ, որպէսզի այդպէսով վերջապէս մի ծանր գերեզման արդար այն մեծ, ոգեւորիչ հայրի վրայ, որ 22 տարուց ի վեր գրադեցնում է ամբողջ Եւրոպան «Հայոց Հարց» անունով եւ որը 500 տարուայ ստրուկ ժողովրդի սրտում ծնել է ե՛ւ յոյս, ե՛ւ հերոսութեան ձգտում, ե՛ւ մարդկային մեծ իդէալներ...

Այո՞. իդէալներ, որոնց իրագործման համար հայութիւնը միայն մի վայր ունի — Հայաստան: Մայր հայրենիքից դուրս՝ հայ ժողովուրդը ազգ չէ. այլ փշրանք, թափփուք անպէտք եւ անկարեւոր: Երկրն է նրա պատմական դերի բեմը, նրա կուրտուրական բազմանքների հենքը: Թափառական, շրջիկ կեանքը, տարագրութիւնը սպանեց հրէական տաղանդաւոր ազգը. նա մեզ էլ կը սպանի հասցնելով ազգը հայկական ջիւղտութեան...

Եւ այն. ինչ որ մինչեւ այժմ չաջողուեց մեր թշնամուն իր միջոցներով. ժամանակակից հայ սերունդը կարծէք ուզում է աջողցնել իր անմիտ «ֆառաֆականութեամբ», հայկական այս սպանիչ եւ յուսահատ թափառականութեամբ, այն ոգով, որ հային տանում է դէպի ամէն կողմ եւ երբեք դէպի Հայաստան... 500 տարուայ ստրկութիւնից յետոյ, հեյլէնը՝ հակառակ ամէն գոհերին՝ իր կուտի դրօշը տնկեց աւե-

բակածածկ հայրենիքի կրծքում, այն հողում, որից մինչև այժմ էլ չէ չփացել մահատակների արեան բուրմունքը: Արիւնը նրան չփախցրեց, այլ աւելի սերտ կապեց: Միքէ՞ մենք պիտի փախչեմք: Մեր ստրուկ, մեզանից աւելի հալածական, մեզանից աւելի տգէտ նախնիքը՝ տանջամեծերի բովից անցնելով՝ մեզ բողբն մի մեծ ժառանգութիւն — **Ե Ա Յ Բ Ե Ի Բ**: Ի՞նչ, միքէ՞ մենք պէտք է մեր սպազայ սերունդին **Հ Ա Յ Բ Ե Ի Բ Ի** փոխարէն բողբն լոկ հայկական գաղութներ, ցիրուցան ովկեանի այս եւ այն կողմը, չչաղկապուած ոչ մի զգացմունքով, ժողովրդական ոչ մի գաղափարով...

Մեր հայրենիք — դեռ 40 տարի առաջ սուս անմոռանալի հայրենասէրը:

Իր որդիքը արդ կանչում է
Համեյ իր վրէժ, բէն ու սի:

Եթէ 40 տարի առաջ կային «որդիք», որոնք խուլ էին եւ անընդունակ ըմբռնելու այդ կոչը, այժմ, 20 տարուայ անսովոր դէպքերից եւ անուր գոհերից յետոյ՝ չպիտի լինեն այդպիսիները: Այդ «վրէժ, բէն ու սիք» կանչում է հային դէպի Մայր-Երկիր եւ ոչ դէպի Եւրոպա կամ Ամերիկա: Օտարները մեզ արդէն ճանաչեցին: Այժմ **Ե Ր Կ Ի Ր Ե** է մեր ապրելու տեղը, գործելու ասպարէզը: Այնտեղից բողբն մեր **Բ Ո Ղ Բ Ե Ի Բ**, այնտեղից լսուի մեր սպառնալիքն ու ազերսամքը: Եւ այնտեղ, անխրախոյս, յուսահատ, տանջուող ժողովրդի մէջ բողբն մեր բոյն դնեն այն բոյսը ուժերը, որոնք այժմ՝ յամալս ապարդիւն կերպով՝ սպառում են օտար երկիրներում, հայրենիքից շատ հեռու, օտար աշխարհներում:

Դ Է Ա Ի Բ Ե Ի Բ Ի Բ — ահա այսօրուայ մեր նշանաբանը: Եւ բողբն սրանից յետոյ մեր պրոպագանդի ամբողջ գծով, խոսքով, պանդուխտների շրջանում թէ գաղթականների մէջ, Պոլսի խանութներում թէ կովկասեան թէյարաններում, ամերիկեան հայոց ժողովարաններում թէ Բալկանի ձորերում, Ատրպատականից մինչև Նեպոս ու Նեղոսից մինչև Դաւուր, ամէն տեղ եւ ամէն ժամանակ բարձրաձայն հնչի հայութեան ակազիֆն նոյն յամառ հրաւերը, նոյն ազդու կոչը՝

Դ Է Ա Ի Բ Ե Ի Բ Ի Բ, Դ Է Ա Ի Բ Ե Ի Բ Ի Բ:

ԻՌԻՍԵՐԸ ԴԵՄ ԷԻՆ ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՇԱՐՃՄԱՆ ԻՌԻՐՔԻՈՅ ՄԷՋ

Սուլթան Համիտի բռնապետութեան ամբողջ շրջանին, երբ հայ յեղափոխական կուսակցութիւններ կը կոուէին այդ իշխանութեան դէմ, որու քաղաքականութիւնը եւ ոստիկանութիւնը կ'աջակցէին թըրքական կուսակցութեան, հայաժանքի ենթարկելով հայ յեղափոխականները:

Խ. Հայաստանի «Նորք» հանդէսի 1925 թիւ Ե. եւ Զ. ի մէջ բուլղերիկները հրատարակեցին վաւերագիր մը՝ «ժանդարմական վարչութեան գեկուցումը հայերի յեղափոխական շարժումների մասին», 1903 թ. 12 Փետր., Թիֆլիս: 24 մեծագիր էջերէ բաղկացած այդ ընդարձակ զեկուցումէն քանի մը քաղուածքներ, ցոյց տալու համար ուստերու հակահայ քաղաքականութիւնը:

«Թիֆլիսում գտնուող շարժման զեկուցարները եռանդուն յարարերութեան մէջ են արտասահմանի ազիտատորների հետ, որոնցից է Մելիքեանը(*) ժընեւում, զրամ են ժողովում եւ արտասահման փոխադրում, առաւելապէս Անգլիա, որ այդ միջոցներով կազմակերպուի ապստամբութիւնը եւ օգնութիւն հասցուի հայ ապստամբներին: Այդ ազիտատորներից առանձին ուշադրութեան արժանի է Խաչատուր Մուսեանը, որ ծառայում է Թիֆլիսում հրատարակող «Մշակ» թիւթի խմբագրատանը: Ապրիլ 24-ին թիւ 3429 զրութեամբ զեկարտածենտը տուաւ նոր ցուցմունք Թիֆլիսում գործող Բիրոյի եւ առանձին անձանց մասին:

«...Անհրաժեշտ է դադարեցնել զրամի հսկանակալութիւնները ուստեաների մէջ, արգիլել գեմի եւ ռազմաժողովի յղումը Պարսկաստանի վրայով Թիւրքիա, այլ եւ ձեռնաձուլի լինել շնչելու հայ բանտարական յեղափոխական ընկերակցութիւնների գործունէութիւնը, պատասխանատուութեան կանչելով նրա անդամներին: Դեպքերումեղը անաջողութիւն էր ներկայացնել հայոց շարժման մասնակիցների ցուցակը, որոնց մաս զենեկալու եռակուսու կարծիքով միաժամանակ կարելի չէ յաջող ելքով խուզարկութիւն կատարել, եւ կանխօրէն յարարերութիւններ չսկսելով Դեպքերում մեծի հետ՝ ձերբակալել Թիւրքիա գեմի փոխադրող երեսակների անդամներին՝ պատշաճ շնորհներ սկսելով նրանց գործողութիւնների մասին:

Վարելի էր խիստ թերահաստ լինել զկողմ հայ յեղափոխական կուսակցութիւնների մտանձաձ ձգտումները, որոնք յամենայն զկար մարդկանց մի խմբակի ձգտումներ են եւ համարել այդ ձրագիրները լուրջ ուշադրութեան շարժանքի մեծաներ, էթէ հայ յեղափոխական կուսակցութիւնները, բաղկացած լինէին բացառապէս ոչինչ արժեքող, սիւնէժ երիտասարդներից, բայց այդ կուսակցութիւնները

(*) Ինտուֆէանի ծածկանունը:

իրանց շարժերում ունեցել են Եւրոպայի, Քիւրքիայի եւ Ռուսաստանի հայ ժամույկ համարեա բոլոր ներկայացուցիչներին, ունեցել են եւ ունին ներկայ օրերին իրանց կոմիտէները Լոնսոնում, Փարիզում, Փըննում, Կ. Պոլսում, յաւոզել են իրանց համար նպաստաւոր ժաբով ազդել նոյնիսկ այնպիսի պետական գործիչ վրայ, որպիսին Գլադստոնն է. որը բացայայտ հրապարակ եկաւ պաշտպանելու Քիւրք կառավարութեան կողմից իրրիւ թէ հարստահարուած հայերի շահերը: Եթէ այդ կուսակցութիւնները այնքան հարուստ եւ հզօր չլինէին, ապա նոյնիսկ հակառակ նրանց անդամներից ոմանց անբարեխղճութեան, չէին կարող կազմակերպել բազմամարզ գիտուած հրոսակախմբեր, թւով մի քանիսը մինչեւ 1000 հոգի, չէին յաջողի նրանց սպասարարութեան տեղը հասցնել՝ շնայած ռուս կառավարութեան ձեռք առած միջոցների ու հսկողութեան: Այդ կուսակցութիւնների շարժերում զանուած են դրամատուրներ եւ շատ ունեւոր ու տարիքով ինքուրոյն ժաբողիկ, իսկ Գլադստոնին ներկայացրած գիտուածին ստորագրել են նաեւ ռուսահայեր, ինչպէս այդ տեսնուած է Քիւրքիայի ոստիկանապետի հազորագորութիւնից, որ պահուած է վարչութեանս 1895 թ. գործերում:

Ձեկուցումը ստորագրած է «դեննեբալ-մայոր» Դեքիլ:

Ձեկուցումը կը պարունակէ բազմաթիւ տեղեկութիւններ կողմնակա հայ յեղափոխական կազմակերպութիւններու եւ տնտես չհանդէպ կատարուած քննութիւններու եւ խուլարկութիւններու մասին:

Այս ամէնը քանի մը տարի ետք պիտի յանդէլին աւելի մեծ չտփի վրայ ձերբակալութիւններու եւ Դաշնակցութեան դէմ կատարուած մեծաւորինդ դատավարութեան:

• • •

Դաշնակցութեան դէմ տեղի ունենալիք հայաժամանակներուն նիւթ մատակարարելու համար, Ռուսիոյ ոստիկանական բարձրագոյն մարմինը, 1907ին, զազտնարար կը տեղեկագրէր վարչապետ Ստուլիպինին.

«Դաշնակցութեան կազմը կը պարունակէ իր մէջ բոլոր վարչութիւնները՝ օրէնսդիր, կրթական, վարչական, դատական, պատժիչ եւ գործադիր մարմիններով. ամենալայն ահաբեկում թէ՛ իր անհնազանդ անդամներու եւ թէ կազմակերպութեան թշնամի պետական պաշտօնեաներուն նկատմամբ. ոստիկանութիւն եւ ռազմական ոյժ:

Կովկասի մամուլը ամբողջովին հայերու ձեռքն է:

Կուսակցութիւնը ունի իր կանոնաւոր բանակը, զինուորներ, կազմակերպուած 16 տարի առաջ, որ յեղափոխական շրջանին կը հասնէր 100.000 մարդու, բանակ մը, որու պահպանման համար կը ծախսուէր 10 միլիոն թուպի:

Կուսակցութիւնը ունի զինապահեստներ եւ զինուորական դրու-

րոցներ ուր կը վարժեցնէ, ի միջի այլոց, նաեւ ականներու գործածութեան: Կուսակցութեան ռազմական բաժինն ունի վերին աստիճանի կանոնաւոր կազմակերպութիւն, որու մէջ կը մտնեն հետեւակներ, այրուածի, թնդանօթածիգ եւ խրամահատ մասեր:

Կուսակցութեան դրամական միջոցները կը հայթայթուին անդամատուրէ, կամովին նուիրատուութիւններէ, էֆայրոպիացիներէ:

1907ին Դաշնակցութիւնը ունէր 165 հազար անդամ, որոնք բնդիանուր աւամար կուսակցական գանձարկը կը մտցնէին տարեկան մէկ միլիոն ռուբլի:

ՅԱՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՊ (1901 Փետր. 1)

1895-1896ի ջարդերուն հետեւանքով, թուրքիայէն 40էն 50 հազար հայեր վախճելով ապաստանեցան Կովկաս: Յարի կառավարութիւնը հետապալին զանոնք հալածեց, ստիպելով ընդունիլ ռուսահայտակութիւն, առանց հողային, տնտեսական դիւրութիւններ տալու քանի որ այդ ձեւով անոնք պիտի կորսնցնէին թուրքիոյ մէջ իրենց ունեցած կալուածային իրաւունքները: Դաղթականութեան մէջ մասը վերադարձաւ թուրքիա: Կովկասեան կառավարչապետի 1901 Նոյեմբեր թուակիր հետեւեալ շրջաբերականը կը պարզաբանէ հետապնդուած քաղաքականութիւնը հայերու հանդէպ.

«Ի կատարումն Բարձրագոյն հրամանների, որոնք տրուած էին 1901 թուի Փետրվ. 1 ին եւ Յուլիս 29ին՝ այն թրֆապատակ հայ փախրտականների դրութիւնը կարգաւորելու հարցի մասին, որոնք գտնազան ժամանակ, սկսած 1893 թուից, գաղթել են մեր սահմանները, առաջարկում են ձեր գերագնացութեան յայտնել ձեզ յանձնուած նահանգի սահմաններում գտնուող հայ փախստականներից՝ հետեւեալը.

1) Զակագան ժամանակներում, սկսած 1893 թուից, կովկասեան երկրի սահմանները իրենց կամով եկած թրֆապատակ հայերին, որոնք ցանկանում են կամաւորապէս, իրենց հաշով, հեռանալ կայսրութիւնից, համապատասխան աջակցութիւն ցոյց կը տրուի այդ բանի համար:

2) Մնացած այն բոլոր փախստականներին, որոնք չեն ցանկանայ գաղթել արտասահման, թոյլ է տրուում մնալ իրենց այժմեան

բնական տեղում եւ գրուել գիւղական համայնքների վրայ, եթէ այդ բանին կը համաձայնին վերջինները (141-146 յօդ. 9 հատ. առանձին յաւելումով) . հակառակ դէպքում, 1899 թուի հրատարակութեան 9րդ հատարի 564րդ յօդ. 9րդ պրակի գորութեամբ նրանց թոյլ է տրուում գրուել մէշչանների (ֆաղաֆային) հասարակութիւնների վրայ: Միեւնոյն ժամանակ վերոյիշեալ անձերից նրանք, որոնք կը ցանկան բնակութիւն հաստատել ներքին նահանգներում, թոյլ է տրուում ուսական հպատակութիւն ընդունելուց յետոյ, նանապարհ ընկնել իրենց հաշուով՝ երկաթուղիների օժանդակութեամբ սակագնով, իրենց ընտրած տեղերը կովկասեան երկրից դուրս, եւ այդպիսի անձանց առանց արգելիքի կը տրուեն պատշաճաւոր անցագրեր:

3) Թէ կովկասեան երկրի սահմաններում մնացող եւ թէ ներքին նահանգները գնալ ցանկացող հայ փախստականները պարտաւոր են ուսաց հպատակութիւն ընդունիլ. ԻՍԿ ՌՈՒՍԱՑ ՀՊԱՏԱԿՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆԵԼ ԶՅԱՆԿԱՑՈՂՆԵՐԸ ՊԱՐՏԱՒՈՐ ԵՆ ԱՆՅԱՊԱՂ ՀԵՌԱՆԱԼ ՌՈՒՍԱՑ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ: Միեւնոյն ժամանակ հայ փախստականներին իրաւունք է տրուում այժմ եւ եթ ուսաստանի հրպատակութեան մէջ մտնել, իբրեւ բացառութիւն, 1899 թուին հրատ. 837 եւ 839 յօդուածներին:

4) Հայ փախստականները 1902 թուից սկսած ենքակայ են գինուորացութեան՝ կայսրութեան մնացած ազգաբնակչութեան նման:

5) Գիւղացիների հողային բարեկարգութեան ժամանակ կովկասում, շրջ կէտում յիշած անձանց, եթէ նրանք կը վերաբնակուեն արդէն եղած գիւղերում, որոնք գեւ բարեկարգութիւն չունին. ԻՐԱ-ԻՈՒՆՔ ԶԷ ՏՐԻՈՒՄ ՀՈՂԱՐԱԺԻՆ ՍՏԱՆԱԼ:

6) Քաղաքներից դուրս անշարժ գոյքեր ձեռք բերելու իրաւունքը կովկասում թոյլ է տրուում գազփական հայերին կամ նրանց սերունդներին ոչ վազ՝ քան ՌՈՒՍԱՑ ՀՊԱՏԱԿՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆԵԼ ՌՈՒՑ ՔՅԱՆ ՏԱՐԻ ՅԵՏՈՑ:

7) Վերեւ բերած կանոնները տարածուում են այն փախստական հայերի վրայ, որոնք եկել են կովկասի սահմանները մինչեւ 1901 թուի Փետրուար 1ր. իսկ վերոյիշեալ ժամանակամիջոցից յետոյ եկածները դուրս են ուղարկուելու կայսրութիւնից:

Վերոյիշեալին կցում են. որ Բարձրագոյն հրամանը ի կատար ածելու կարգի մասին, հայ փախստականների դրութիւնը կարգաւորելու հարցի վերաբերմամբ, եւ առանձին ցուցումներ կը տամ ի դեկավարութիւն»:

(Անտար-Գեներալ-ատիւտանդ Իլիան Գոյիցին)

(Է. Ակնուհի՝ Կովկասեան վերքեր. էջ 287):

ՌՈՒՍԵՐԸ ԿԸ ՀԱԼԱԾԵՆ ԹՈՒՐԿԻՈՑ ԴԷՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԿԱՆ ԽՈՒՄԲԵՐԸ (1903 Ապրիլ 4)

Ռուսերը, ամէն անգամ որ Հողային պահանջներ ունեցած են Թուրքիային, դիւնապետական գետնի վրայ արժարժած են Հայկական Հարցը:

Իրականութեան մէջ՝ անոնք չեն քաջալերած հայ յեղափոխականներու շարժումները՝ ընդդէմ Թուրքիոյ, մանաւանդ Համիտի երեսուն տարուան բռնատիրութեան շրջանին:

Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան շրջանին պատահեցաւ Կուրդնեան խումբի արշաւանքը դէպի Թուրքիա: Հազիւ մեր հայ դուկները սահմանը կ'անցնէին, ռուսերը դաւադրօրէն կրակեցին խումբին վրայ, պաշարեցին զայն, անձնատուր եղողները ձերբակալեցին, դատեցին եւ աքսորեցին Սիպերիա:

Կովկասէն դէպի Թուրքիա արշաւող խումբերը յաճախ երկու կրակի մէջ կ'իյնային: Ըմբռնելու համար Ռուսիոյ թշնամութիւնը, հրատարակութեան կուսանք, իբրեւ նմոյշ, այդ առնչութեամբ պատրաստուած երկու գաղտնի տեղեկագրեր:

Կովկասեան ֆաղաֆային մասի կառավարչապետի գրասենեակ
Թիւ 480, 4 Ապրիլ, 1903 թ. ԹիՖլիս

ԳԱՂՏՆԻ

Պ. Զինուորական նահանգապետին, Կարսի նահանգի

Համաձայն կառավարչապետի պաշտօնակատարի տեղեկութիւններին՝ ստացուած Ասիական Թուրքիայից, թուրքերը դրդուած հայ յեղափոխական կամիտների գործակալների միջոցով, պատրաստուում են ապստամբութեան: Վերջինիս նպատակն է՝ մեր Անգրիզիկասեան հայերի օգնութեամբ՝ տեղիք տալ թուրքերին դիմելու խիստ միջոցների եւ այդպիսով դարձնելու հայերին վրայ Եւրոպայի ուշադրութիւնը, որը պնդում է բարեկարգութեան իրագործում վրայ եւրոպական վիլայէթներում եւ մտածում է, որ մոյնպիսի բարեկարգումներ խոստացուել են սուլթանի կողմից մեւ ստիպեալ վիլայէթներին:

Թիւրքաց իշխանութիւնները գամագան նախագուշակեան միջոցներ են ձեռք առնում իրենց հպատակ հայերի ապստամբութեան դէմ եւ աշխատում են կատարելագուծելու անջատելու նրանց մեր հպատակ հայերից, որոնք ըստ երեւոյթի, շատ գործունեայ մտածակցութիւն ունեն ապստամբութիւնը նախապարաստելու մէջ. սրա հետ միասին թիւր-

քերը եւաւտացած են, որ բոլոր կարգադրութիւնները լինում են Անդր-կովկասեան հայերի կողմից:

Ուրիշ տեղեկութիւնների համեմատ, օսմանեան կառավարութիւնը իր ձեռքի տակ ունի անհերքելի ապացոյցներ, որ ասիական վիլայէթների հայերը պատրաստուում են ապստամբուելու իրենց կառավարութեան դէմ. մշտական յարաբերութիւններ ունենալով կովկասեան հայ յեղափոխական կոմիտէների հետ: Ենթադրութիւն կայ, որ խառնակութիւնները պիտի սկսուեն գարնան սկզբին՝ կովկասից Թիւրքիա տանող ճանապարհները բացուելու պէս:

Թիւրքերի կարծիքով՝ գլխաւոր կէտերը, որտեղից Անդրկովկասեան հայերը պիտի մերս խուծեն Թիւրքիա, են՝ Կազգուան եւ Օլթի:

Այս բոլորի մասին պատիւ ունենմ յայտնել Ձերդ պայծառափայլութեան, ի գիտութիւն եւ հարկաւոր դէպքում ի պատշաճ տնօրինութիւն:

(ստորագրութիւն)

Հիմ. նահանգապետ
Կարսի նահանգի

Դատական բաժանմունք, թիւ 143,
13 Ապրիլ, 1903 թ. ԿԱՐՍ

ՇԱՏ ԿԱՐՍԻՈՐ, ԿԱՏԱՐՆԷԱՊԷՍ ԳԱՆՏՆԻ

Կարսի Շրջանապետին

Կարսի ոստիկանապետը իր գեկուցագրով՝ Ապրիլ 11ին, թիւ 67, հաղորդում է, որ գործակալների միջոցով իր հաւաքած տեղեկութիւններին նայելով փախստական հայերի մէջ անպայման շարժում եւ պատրաստութիւն կայ, կարելիութեան առաջին դէպքում Թիւրքիա անցնելու Պարսկաստանի վրայով. որտեղ, ըստ եղած տեղեկութիւնների, նրանք գաղտնի կոմիտէից պիտի ստանան զէնք, փառաբաններ, զգեստներ եւ մինչեւ անգամ դրամ: Ենթադրում են սահմանը անցնել Սուրմալուի գաւառից: Կարսի շրջանի՝ Բաշ-Շորազեալ, Բաշ-Քատիխ-լար, Արզըլ-Քիւիւհ-Գեքէ, Փալդերվան, Շորաֆ ու հասչիվտլիք գիւղերում, այլեւ Կազգուանի շրջանի՝ Թիգար, Արզըլ-Ղոշ եւ Բաշ-Քիլիսս գիւղերի տներում եւ գուներում՝ պահեստի հայ զինուորները զինուորութիւն են ստեղծելու 6-6 հոգուց բաղկացած խմբերին, որի համար ըստառում վճար մի ինչ որ ընկերութիւնից: Իսկ առ հասարակ բոլոր հայ գիւղերում կատարում է դրամական հանգանակութիւն: Գիշերները՝

10-15 հոգուց բաղկացած զինուած խմբեր գիւղէ գիւղ տեղափոխութիւններ են կատարում:

Որովհետեւ վերոյիշեալ տեղեկութիւններից մէ քանիսը հաստատում են նաեւ Ապրիլ 11-ի թիւ 167 ձեռ գեկուցագրով հայերի մէջ նկատուող շարժման եւ ձեռ շրջանի համարեա բոլոր հայ գիւղերում կատարուող դրամական հանգանակութիւնների վերաբերմամբ. — ուստի, ի լրումն ներկայ Ապրիլ 2-ից եւ 5-ից թ.թ. 120, 123, ձեռ արած առաջարկութիւններս, ինչպէս նաեւ անձամբ ձեռ տուած ցուցմունքներս, յանձնարարում եմ. ...

1. Հիմնել, ըստ ձեռ հայեցողութեան, հայ գիւղերում ոստիկանական պահականոցներ, հայերի գործողութիւնների վրայ հսկելու եւ թոյլ չտալու համար, որ նրանք խմբեր զինեն, դրամ ժողովեն եւ առհասարակ կարգն ու հանգստութիւնը խանգարեն. իսկ եթէ — մարդկանց պակասութեան պատճառով — կարելիութիւն չկայ անհրաժեշտ թուով պահականոցներ հիմնել, այդ դէպքում կազմակերպեցէք յանձնակի եւ ըստ կարելւոյն անընդհատ պաշտոններ հայ գիւղերի մէջ, ինչպէս եւ աւելի անհանգիստ ու կասկածելի վայրերում:

2. Առանձին ուշադրութիւն դարձնել մահրամասնօրէն եւ հանգամանօրէն պարզելու Փարագետ գիւղի բնակիչ Կիրակոս Պետրոսովի արած յայտնութիւնը թէ դրամի հանգանակութիւն անում են Քեօղիք-Սաքըլմըշ գիւղերում՝ Աւետիս Սարգիսովը, եւ Փարագետ գիւղում՝ Միսակ Սատուրովը ու Նահապետ Արուսովը, եւ իմանալով՝ թէ ում են յանձնում ժողոված գումարները, առանց յետաձգելու հաղորդել այս մասին անհրաժեշտ տեղեկութիւնները դատախազութեան եւ ժանդարմների վարչութեան:

3. Պաշտօնական գործերով կազգուան անելիք ճամապարհորդութիւնիցս վերադառնալուց յետոյ, խնդրում եմ Ձեզ՝ անյապաղ անձամբ գնալ հայ գիւղերը իրերու դրութիւնը տեղն ու տեղը պարզելու եւ հանգամանքներին հայած անհրաժեշտ կարգադրութիւններ անելու, որպէսզի աւելի լաւ եւ աւելի իրական կերպով կազմակերպուեն ներկայ գործի համար անհրաժեշտ միջոցները:

4. Կարգադրութիւն անել, որ Ապրիլ 19-ին, առաւօտեան ժամը 10ին, Կարս քաղաքում ինձ ներկայանան Մացրա, Չաիմ, Քեօթիք-Սաքըլմըշ, Փարագետ, Բէկլի-Ախմէտ, Դոյրմանլի, Բերմա եւ Չերմալը գիւղական տանուտէրների օգնականները:

Հայկական շարժման պատճառով գործակալներ պահելու ծախսերի նախավճարը Ձեզ կ'ուղարկուի շուտով, իսկ առայժմ միջոցները քիչ լինելով յատկացում է 200 ուրբ.: Գեներալ-Մայոր ՍԱՄՈՅԼՈՎ

Գրասենեակի կառավարիչ՝ Գուլկիյ

* * *

Կովկասէն դէպի Թուրքիա անցնող հայ ֆետայիները ենթակայ էին ամենէն առաջ ռուս բռնապետութեան հալածանքներուն: Հայդուկներն յաճախ իրենց թիկունքէն հարուած ստանալով՝ կէս ճամբան կը մնային:

Սասունի օգնութեան հասնելու համար 1903ին Որստը Գեորգ կը կազմէ 61 հոգիներ խումբ մը, որուն մաս կը կազմեն նաև մասուրբականներ, բժիշկ, ուսանող, քահանայ:

Այս խումբի ոստիկանին մասին Միքայէլ Վարանդեան կը գրէ. («Հ. Յ. Դ. Պատմութիւնը» հատոր Ա. էջ 292).

«Ճամբայ կ'ելլեն Օլթիի շրջանէն, սահմանը կ'անցնին, աղբիւրի մը վերեւ, լեռ կը բարձրանան ու դիրքեր կը բռնեն: Բայց ռուս զինուորները կը նշմարեն ֆետայիները եւ լուր կուտան իրենց սահմանապահ զօրքի հրամանատարին: 150 ռուս զինուորներ կը շրջապատեն մերոնց դիրքերը, միաժամանակ լուր տալով տանիկ զօրքերուն. սրնոք կը փութան դէպքի վայրը: Օլթիի կողմէն ալ ռուսական հրամանատար, գնդապետ Բրկով, կը հասնի մոր օգնական ուժերով: Առաջին յարձակումը կը գործեն ռուսներ, բշտով ֆետայիներուն խումբը դէպի թուրքերը: Թորգով կը հրահանգէ ընկերներուն՝ չպատասխանել ռուսներու յարձակումին եւ կռուիլ միայն տանիկներուն դէմ: Ու պատգամաւոր կը դրկէ ռուս հրամանատարին, րացատրելու խումբի նպատակը: Իրարու ետեւէ գացող երկու պատգամաւորները, Անուշաւան եւ Քալանթարեան, բանտ կը նետուին: Բրկովի հրամանով ռուսերը երեք կողմէ կը պաշարեն ֆետայիներու խումբը. չորսուրդ կողմէն ալ՝ բալբերը. ու այսպէս կ'առնեն հայոց խումբը իրենց խաչածուռ կրակին տակ: Անել կացութիւն մը՝ տարօրինապէս ողբերգական: Մեր դժբախտ ընկերները չէին կրակեր ռուսերուն վրայ, իսկ վերջինները ատկէ քաջալերուած, աւելի եռանդով կը շարունակեն յարձակումները:

Միայն տանիկներն են, որ 10ի չափ ասկեաքներ գոհ կուտան մերիններուն գնդակներուն: Մէկ քանի ժամ կռուելէ ետք, ֆետայիները կ'որոշեն անձնատուր լինել ռուսերուն: Խումբի քահանան խաչը ձեռին, ընդառաջ կ'երթայ, բայց կը զարնուի ռուսերու կողմէ: Որստը Գեորգն ալ կը սպաննուի, դարձեալ ռուս զինուորի մը սուինով: Ըստ երեւոյթի մինչեւ վերջ տղաները կը մնան իրենց կրաւորական դիրքին մէջ՝ հանդէպ ռուսերուն: Բաց մը որ կը մնայ անհասկնալի... Մերիններէն կը սպաննուին 27 հոգի, 6 հոգի ալ կը վիրաւորուին եւ 14 հոգի գերի կ'առնեն ռուսերը, անոնց մէջ՝ խմբապետը: Մնացած տղաները կըրցան փախչիլ ու յապաստանիլ մուք ափտաները: Իսկ գերիները նոյն

Բրկովի հրամանով մորթուցիցն թուրք բանակի ներկայութեամբ: Ռուսերու քիմուրականներ խրախնամք սարքեցին մորթուած հայ դուկներու դիակներուն շուրջ...

Կուլուեմեանի ողբերգութիւնն էր, որ կրկնուեցաւ աւելի վայրագ, բարբարոս ձեւով...

Հ. Յ. Դաշնակցութիւնը չէր կարող մարսել ռուս սահմանապահ բանակի այդ նենգաւոր խաղը եւ շատ չանցած, 1904 Օգոստոս 31ին, Օլթի քաղաքի մէջ, արիւնքաւ հրամանատարը, գնդապետ Բրկով, գետին փռուեցաւ մեր տերրաբիւտի վրիժառու ձեռքով: Գրեթէ միաժամանակ սպանուեցաւ մեր ձեռքով միւս բարձրաստիճան հայատեացի, Իգտիրի գաւառապետ Բողուսլանկի»:

ՌՈՒՍԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒ ԳՐԱՌՈՒՄԸ (1903 Յունիս 12)

Ռուսահայ ազգային կալուածներու գրաւումը Յարական կառավարութեան կողմէ, որ իր ատենին խոր ընդգլուծած առաջ բերաւ ամբողջ հայութեան մէջ, տեղի ունեցաւ կայսերական հրովարտակի մը համաձայն: Ահա՛ այդ հրովարտակը.

«Քաղաքը Կայսրը, մինիստրներէ կոմիտէ որոշման համեմատ, Ռուսաստանի հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածներէ վարչութիւնը կառավարչական հիմնարկութիւններէ տեսչութեան տակ կեդրոնացնելու եւ վերոյիշեալ եկեղեցու միջոցներն ու կալուածները, — որոնցմով ապահովուած էին հայ-եկեղեցական դպրոցներէ դրութիւնը — ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեանը յանձնելու մասին, 1903 թուի Յունիս 12ին Բարձրագոյն հրամայել բարեհաճեց:

Ա. Հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածներու յանձնումը պատշաճաւոր մինիստրութիւններէ տեսչութեանը եւ վարչութեանը՝ իրազօրծել հետեւեալ հիմունքներով:

1. Հայ-լուսաւորչական եկեղեցիներին, վանքերին, հոգևոր հաստատութիւններին եւ հոգևոր դպրոցներին պատկանող բոլոր անշարժ կալուածները, ներքեւ յիշուած (յայ. 2 եւ նրա ծանօթութիւնը) լրացուցութիւններով, առանձին հաստատած կանոններէ համաձայն որոշուած կարգով՝ այդ պատկանութեան հոգևորականութեան եւ հոգևոր հաստատութիւններէ վարչութիւնից առնել եւ յանձնել երկրազորութեան եւ պետական կալուածներէ մինիստրի տեսչութեանը, իսկ վերոյիշեալ հիմնարկութիւններին պատկանող գրամագուրիները յանձնել ներքին գործերի մինիստրի տեսչութեանը, պահպանելով հայ-լուսաւորչական եկեղեցու սեփականութեան իրաւունքները յոյշ կալուածներէ եւ գրամագուրիներէ վրայ:

2. Երկրագործական և պետական կալուածների տնտեսութեան պէտք է յանձնուեն հայ-լուսաւորչական եկեղեցու հետեւեալ կալուածները:

ա) Թէ՛ ընկուծութիւն ունեցող և թէ՛ անընակ հողեր, ինչ անուս էլ ունենան և ինչ տեսակ էլ լինեն նրանք, նոյնպէս առանձին տնտեսները, մարգագետինները, արտաստեղերը, ձկնորսութեան տեղերը, շրայացները և այլն: Դրանցից ի քայ են առնուած, սակայն, հողի այն տարածութիւնները, որոնց վրայ գտնուած են եկեղեցիների, վանքերի, մատուռների և այլն շինութիւնները, և այն հողերը որոնց վրայ շինուած են առաջարկների տները, հողերը հաստատութիւնները, ծխական թէ՛ բազաքային, և գիւղական հողերարկանութեան տները ու հողերը զարոցների շինութիւնները, այն հողերը, որոնք գտնուած են եկեղեցական կամ գերեզմանոցների շրջապատերի մէջ և, վերջպէս, հողերարկանութեան ձեռքում եղած ազարակային հողամասերը, որոնց վրայ գտնուած են այգիներ, քանջարանոցներ, արտեր և այլն, երեք տեսակտիւնից ոչ աւել տարածութեամբ՝ իւրաքանչիւր ծխական եկեղեցուն կից, որոնք չեն գրուած օտարի ձեռքը եկամուտ ստանալու համար, և:

բ) Հայ-լուսաւորչական եկեղեցիներին, հողերարկանութեան և այլ դասանութեան հողերը հիմարկութիւններին պատկանող տներից և շինութիւններից այն բոլորը, որոնք հարկաւոր չեն ընկուծութեան և հենց իրան հողերարկանութեան ու վերոյիշեալ հիմարկութիւնների տնտեսական տեսանութեան համար:

Մտածութիւն: Երկայ կանոնները չեն տարածուած այն առջաբ գալուածների ու դրամազուրկների վրայ, որոնք պատկանուած են Ս. Պետերբուրգ և Մոսկուա բազմաբնիկ հայոց եկեղեցուն:

3. Տնտեսութեան վերոյիշեալ կարգին ենթարկել նոյնպէս այն կալուածները և դրամազուրկները, որոնք սրանից յետոյ, որպէս նուիրատուութիւններ և կտակով թողուածներ, կը ստացուին ի նպաստ վերոյիշեալ հիմարկութիւններին:

4. Յիշուած կալուածներից ստացուող եկամուտների վերահսկողութիւնը և դրամազուրկների կտակաւորութիւնը կեդրոնացնել ներքին գործերի նախարարութեան մէջ, օտար դասանութիւնների հողերը գործերի բաժանուելուց, որին երկրագործութեան և պետական կալուածների նախարարը, այդ կալուածների վարչութեան հաշուաւորութեան հետ միասին, պէտք է յանձնել նրանցից ստացուած եկամուտները, իր տնտեսութեան տակ առած առջաբ գալուածների վրայ գրուած բոլոր հարկերը և պարտաւորութիւնները վճարելուց ու ստորեւ մասնացոյց արած յետգցումները կատարելուց յետոյ:

Այս ներքին գործերի նախարարութիւնը յանձնուած է այդ եկամուտները, նոյնպէս և այն դուժարները, որոնք գոյացել են նրա վերահսկողութեան տակ մտած դրամազուրկների տնտեսներից, ստորեւ յիշատակուած հանումներից յետոյ, այն հողերը հաստատութիւններին, որոնցից այդ կալուածները և դրամազուրկները ընդունուած են:

5. Առջաբ կայքերից ստացուող եկամուտից հանուած են իւրաքանչիւր տարի: ա) ոչ աւել քան 10 առ հարիւր երկրագործութեան և պետական կալուածների

նախարարի կարգադրութեամբ՝ վերոյիշեալ առջաբ կայքերի վարչութեան ծախսերի և յասուկ պահեստի դրամազուրկ կազմելու համար, յիշած կայքերի արտակարգ ծախսերին լուսաւորութիւն տալու՝ նրանց բարեօգտան նպատակով, և բ) 5 առ հարիւր ներքին գործերի միմիտարի կարգադրութեամբ կազմելու հայ-լուսաւորչական եկեղեցական օժանդակ դրամազուրկ՝ հայ-լուսաւորչական եկեղեցական հաստատութիւնների կարիքները հողալու նպատակով և թէ՛ այդ եկեղեցու վարչութեան ընդհանուր պահանջների համար, այն պայմանով, որ այդ դրամազուրկի մէջ մտնի և աւելորդը վերոյիշեալ (կէտ ա.) 10 առ հարիւրից:

Կասկածներ կամ թիրիմուցութիւններ ծագելու դէպքում այն հարցի առիթով, թէ հողերարկանութեան և հողերը հիմարկութիւնների իրաւասութեան տակ գտնուող այս կամ այն կալուածները և դրամազուրկները ենթակայ են կեդրոնական կտակաւորութեան տնտեսութեան, — այդ հարցի վճիռը թողուած է ներքին գործերի նախարարի որոշման:

Բ. Յանձնել՝ 1) ներքին գործերի նախարարին: ա) մշակել հիմունքներ՝ ծախքեր անելու համար հայ-լուսաւորչական եկեղեցու օժանդակ դրամազուրկից՝ համաձայն այն կանոնների, որոնք գործադրուած են հռոմէական կաթոլիկ հողերարկանութեան օժանդակ դրամազուրկի վերաբերմամբ և իր կարիքներն այս հարցի մասին առաջարկել հաստատութեան՝ սահմանուած կարգով, և բ) սահմանել հողերը հաստատութիւնների հաշուաւորութեան կարգը նրանց սուած արդիւնքները ծախսելու վերաբերմամբ: 2) յանձնել երկրագործութեան և պետական կալուածների և ներքին գործերի միմիտարներին, փոխադարձ համաձայնութեամբ, որչիլու՝ ա) այն կանոնները, որոնց համաձայն հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածներն և դրամազուրկները պէտք է յանձնուին նախարարութիւններին ու բ) այն կանոնները, որոնց համաձայն պէտք է կտակաւորութեան յիշեալ կալուածները:

Գ. Ի փոփոխութեան նախարարների կոմիտէի՝ 1898 թուի Մարտի 26ին Բարձրագոյն հաստատուած վճիռի, որչիլու իրաւունք տալ երկրագործական և պետական կալուածների, ներքին գործերի և ժողովրդական լուսաւորութեան նախարարներին, այս կանոնադրութեան յօդ. 13 հիման վրայ, հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածները արքունի վարչութեան մէջ ընդունելուց յետոյ՝ փոխադարձ համաձայնութեամբ, յայտնի կացուցանել այն դոյքերը, որոնցով ապահովուէր ժողովրդական նախարարութեան իրաւասութեան տակ անուած ուսումնարանների գոյութիւնը, և յետոյ՝ ա) ցոյց տալ այն գոյքերը, որ անհրաժեշտ է թողնել ուսումնարանների անմիջական կարիքների համար, բ) որչիլ՝ համապատասխան միւս կալուածների արդիւնքի, այն դրամական գումարների շաբը, որոնք պէտք է արուին՝ իւրաքանչիւր տարի ժողովրդական լուսաւորութեան նախարարութեանը՝ յիշուած ուսումնարանների պահպանութեան համար: (Վիովկասեան Վլքքը, էջ 344):

ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒ ԳՐԱԻՄԱՆ ԱՌԹԻՒ
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՁԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅԵՐՈՒՆ

Ճարական կառավարութեան կողմէ Հայ եկեղեցական կալուածներու գրաւման որոշումը ուղղուած էր Հայ ժողովուրդի ազգային պոյութեան դէմ: Դաշնակցութեան պեկավարութեամբ Համաժողովրդական շարժում մը սկսաւ այդ քայլին դէմ, Կովկասի եւ արտասահմանի մէջ:

Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրօն հրատարակեց «Ոչ-ռուսահայտակ հայերուն» ուղղուած հետեւեալ կոչը, որով կը յանձնարարուի Հանրազրութիւններ կազմել եւ զիմել Հահէի Բարձրագոյն Ատեանին:

18/5 Յունուարի 1904, ժրնն:

Յարգելի Հայրենակիցներ,

Յայտի է Ձեզ, որ Ռուսիոյ նախարարական խորհուրդը իր Յունիս 12ի նիստին մէջ որոշած է յարգուելի գրաւել Հայ եկեղեցական կալուածները, որոնք ըստ նոր տնօրէնութեան՝ պիտի կառավարուին այսուհետեւ պետական կալուածներու նախարարութեան կողմէ: Իսկ կալուածներէն ստացուած Հասոյթները պիտի յատկացուին ծխական եւ ուրիշ կարգի զարոցներու պէտքերուն եւ այդ ծախքերէն մնացած գումարները միայն պիտի յանձնուին Համապատասխան եկեղեցիներուն ու վանքերուն:

Յունիս 12ի կարգադրութիւնը, խելով Հայ կղերի ձեռքէն եկեղեցագատական կալուածներու վարչութիւնը, ո՛չ միայն կը խախտէ Հայաստանեայց եկեղեցւոյ իրաւունքները ազգային գոյքերու կառավարութեան խնդրոյն նկատմամբ, այլեւ կը Հանդիսանայ իրրեւ նորատեսակ յափշտակութեան ձեւ մը 100 միլիոն թուրքի արժէքով Հայ ազգային ստացուածքներու: Դժուար է ուրիշ կերպ անուանել ո՞րս նախարարներու որոշումը, քանի որ «Հայ ծխական» անուանուած զարոցները, որոնց գոյութեան պահպանման Համար պէտք է ծախուի կալուածական Հասոյթներու մեծագոյն մասը, շունչն գրեթէ ոնել «Հայ» ազգային եւ կրօնական նկարագրի: Բաւական է միայն յիշել, որ այդ վարժարաններու ուսուցիչներէն շատերը չեն պատկանիր Հայ ազգութեան, որ Հայերու հետ միասին ոչ-Հայ երեխաներ եւս կը յաճախեն այդ վարժարաններէն մեծ մասը, ուր Հայոց լեզուի ու կրօնի դասաւանդութիւնը դարձած է սոսկ ձեւականութիւն մը: Ռուսաստանի «Հայ ծխական զարոցները» իրենց ներկայ գրութեան մէջ կը հանդիսանան ո՛չ թէ իրրեւ կրթական հիմնարկութիւններ, այլ իրրեւ ուսուցման նոր ձեւի մը հիմնարկութիւններ, որոնք կը ձգտին ոչնչացնել Հայութիւնը իր իսկ սեփական միջոցներովը: Բացի այդ, չկայ ո՛չ մի երաշխաւորութիւն, թէ ո՞րս պաշտօնեաները չպիտի Համարեն «ծխական զարոցները» Համայն պետութեան ուսումնարաններ, ուր կը սովորին նաեւ մի քանի մանուկներ, եւ Հետեւաբար ո՛չ ոք կարող է վտաս Հիմնել, որ Հայ եկեղեցական կալուածներու եկամուտով ուսակական կառավարութիւնը չպիտի Հոգայ իր իսկ սեփական պէտքերը:

Ահա թէ ի՛նչու Յունիս 12ի որոշումը Հայերու կողմէն Հանդիպեցաւ միանամուռ զիմադրութեան: Ամբողջ Հայ Հոգեւորականութիւնը, իրեն զլուրի ունենալով եկեղեցւոյ ալեկարգ պետը, եւ Համայն Հայ Հասարակութիւնը, առանց խտրութեան կուսակցութիւններու, Հասակի ու սեռի՝ որոշեցին չընդունել այս ապօրինի կարգադրութիւնը եւ բողոքել սանձարձակ կամայականութեան դէմ:

Կաթողիկոսը հեւազրով ու նամակներով ազերսեց կայսեր ի նկատի առնել իր բերած լուրջ բացատրութիւնները եւ յետաձգել յիշեալ որոշման իրազօրծումը: Սինօդի անդամները, թեմակալ առաջնորդները հրաժարական տուին, անհնարին դանելով իրենց պաշտօնավարութիւնը ներկայ պարագաներու մէջ: Ռուսաստանի բոլոր բողոքներուն եւ նոյնիսկ գրեղներուն Հայ քնակչութիւնը արինահեղ ցոյցերով բողոքեց կատարուած աւազակութեան դէմ եւ մերժեց յանձնել կալուածները: Ռուսիոյ դարբար տիրապետութեան ընթացքին մէջ առաջին անգամն էր որ Կովկասի մէջ Հազարբար Հայեր կուսեցան թոնակալութեան դէմ, իրենց թափած արիւնովն ու կեանքի զընովը պաշտպանելու Համար Հայ ազգային իրաւունքները:

Մերուծի Հայրապետին աղերսանքները մնացին ձայն բարբառոյ յանապատի: Հայ Հոգեւորականութեան զըմբոստութիւնը խորտակելու Համար ոստիկան Պէլզէի կառավարութիւնը նոր հրաման արձակեց, որով Հոգեւորական պաշտօններու մէջ Հաստատուելու Համար նախապէս կը պահանջուի Կովկասի կառավարչապետին կամ նահապետներուն հաճութիւնը. ահա՛ մի պարագայ եւս, որ նոր տեսակի չիճովթիկութեան կը վերածէ Հայ Հոգեւորականութիւնը, զայն կը դարձնէ կառավարութեան ձեռքին մէջ անվերջ պէնջ մը՝ անոր նպատակները իրագործելու Համար: Ժողովրդին արդար բողոքը խեղդելու նպատակով՝ Հայաքնակ զլիւաւոր քաղաքները յայտարարուած են զինուորական դրութեան մէջ: Գնակուած են զիջ թէ շատ արժանաւոր զիբք բռնող թերթերը, աքտրուած են ու կ'աքտրուին բողոքի նշոյլ ցոյց տուող Հայերը, կը Հալածուին Հայկական դատի կենդանի ներկայացուցիչ-տանձկահայերը... Այսպէս, բռնութիւնն ըրաւ, ինչ որ կընար ընել:

Խարէութեան միջոցաւ, մտրակի Հարուածներու սարսափին տակ, զէնքի ուժով ձեւակերպուեցաւ թղթի վրայ կալուածներու մեծ մասին փոխանցումը: Վայբող պաշտօնեաները խորտակեցին իջմիածնի դանձարանը եւ Մայր Աթոռի գումարները փակեցին Մրեանի նահանգական դանձարանի մէջ:

Ձրկուած ու կողպտուած իր դարբար Հարստութեան աղբիւրներու Հասոյթներէն, Հայ բարձր Հոգեւորականութիւնը մատնուած է ծանր կացութեան. իջմիածնի ձեմարանը, թեմական զարոցները պարտքով ու մասնաւոր Հասոյթներով է միայն որ կը պահպանուին:

Ոչ ոքի յայտնի է, թէ ուր պիտի յանդի սկսուած պայքարը:

Մերժելով ստանալ տէրութեան յափշտակած կալուածներուն եկամուտը, Ռուսաստանի մեր եղբայրները որոշած են շարունակել կռիւր:

Այս պարագաներուն մէջ պէտք է որ ուրիշ երկրներու Հայերն եւս մասնակից լինին ազգային շահերու պաշտպանութեան գործին:

Մէկ կողմ թողով բողոքի այն մեւերը, որ մընչեւ այժմ կազուժներու
աշխատանքը մոռցնին արտադրութեան, ինչպէս եւ Գ. Պոլտոյ պատրիարքարանին ու-
սաց դեպքանաւան միջոցաւ ներկայացուցած զեկուցազիրը, մենք այս գրութեամբ
կ'ուզենք առաջարկել բողոքի մի նոր միջոց ոչ-ուսաստանական հայերուն, այն է՝
աշխատել կալուածական խնդիրը զնեւ Լաւելի Միջազգային Առեւտրի առջիկ:

Ռուսաստան գտնուող հայ եկեղեցական կալուածները, ինչպէս կը վկայի
նոյնիսկ ուսուցիչական կառավարութեան կողմէ 1836 թուին կազմուած յատուկ կանոնադրու-
թիւնը (Պոլսի ինքն), կը կազմեն սեփականութիւնը համայն հայութեան լուսաւոր-
չական եկեղեցւոյն, այսինքն բոլոր լուսաւորչական հայերուն: Յիշեալ գոյքերուն մէջ
մասը, հայ սրբաւարներուն անունով գնուած են աշխարհիս բոլոր անկիւնները ցրուած
բարեկաշտ հայերու անունի միջոցներով: Ռուսաստանի, Պարսկաստանի, Տաճկաս-
տանի հայերը նոյնչափ մասնակցած են այդ ազգային եկեղեցական հարստութեան
գումարման, որչափ եւ Հնդկաստանի, Եգիպտոսի, Հոլլանդայի, Ռումելիայի, Տրան-
սսիայի, Ամերիկայի եւ այլ հեռուոր երկիրներու հայերն ու անոնց նախահայրերը:
Հետեւորք այդ բոլոր հայերն ունին հաւասար իրաւասութիւն պահանջելու, որ յի-
շեալ գոյքերը գտնուին իրենց վստահութիւնը վայելող մարմնոյ մը հակազուժանն
ու արժամարկութեանը տակ, որպիսին բոլոր հայերու համար կը հակադրանայ ներ-
կայիս մէջ էջմիածնայ Մայր Աթոռը: Հակառակ պարագային ազգային այդ սմբողջ
հարստութիւնը բաժանուելու է բոլոր հայ եկեղեցական համայնքներու միջեւ:

Կալուածներու գրաման փաստը կատարուելէ յետոյ, ահա այդ դասն է
որ պիտի սկսին այսօր ոչ-ուսական հպատակ հայերը ուսուցիչականութեան պէ-
տոյնը մասին է որ պէտք է խորհին ու գործեն բոլոր հայերը:

Լուսաբանելով խնդիրը իրենց տեղական տեսակետներով ու փաստերով,
հանդիսանալ իրենք մի հաւաքական կրօնական մարմին, զանազան երկիրներու մէջ
ուրբող հայերը պէտք է պաշտպանեն իրենց շահերը, բան մը որ ներկայ պարագանե-
րուն մէջ կը լինի եւ ընդհանուր ազգային շահերու պաշտպանութիւն: Սակայն, պէտք
չէ մոռնալ որ սեւէ հետեւանքի հասնելու համար անհրաժեշտ է, որ իւրաքանչիւր մի
երկրում հայերու շահերուն պաշտպանութիւնը յանձն առնէ այդ երկրի կառավարու-
թիւնը, որը միայն կարող է զիմէ Լահէի բարձրագոյն Առեւտրի պաշտօնապէս:

Իրագործելու համար այդ անհրաժեշտ է խորհրդակցութիւն ու համա-
ձայնութիւն առնել մի երկրի հայութեան մէջ: պէտք է յուրը, փոստարանուած խնդրա-
դիր ներկայացնել երկրի կառավարութեան եւ հաւաքել բոս կարելոյն շատ ստորա-
գրութիւններ. ապէ կատ պէտք է նաեւ ընտրել վստահելի մարմին մը, որ կարենայ
հասկնալ կերպով հարցն առաջ մղել:

Մեր կողմէն կրնանք հաղորդել, որ միջազգային իրաւարարական խնդիր-
ներուն տեղական անձեր յուսադրած են մեզ, որ յարուցուելէ խնդիրը կրնայ ունենալ
որոշ քաղաքական հետեւանքներ, եթէ պետութիւններէն զոնէ մին (Անգլիա, Ամերի-
կա, Հոլլանդա կամ մի ուրիշը) համաձայնի նախաձեռնարկ լինել:

Վստահ ենք, յարգելի հայրենակիցներ, որ ազգային այս հրատարակ խնդրոյն
առջեւ, մէկ կողմ թողով կուսակցական բաժանումները, առնելով պիտի գործէք մեզ
մեռքի տուած, ընդհանուր ուժով պաշտպանելու համար մեր ընդհանուր ազգային շա-
հերը:

Կը յուսայ եւ կը վստահի մեր շրջահայերութեան ու անկեղծ հայրենասիրա-
կան զգացմունքներուն վրայ:

Հ. Յ. Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Եկեղեցական կալուածներու գրաման օրերուն, Հ. Յ. Դաշ-
նակցութիւնը հետեւեալ յայտարարութիւնը հրատարակեց Գովկասի
մէջ:

«Հ. Յ. Դ. սրանով յայտարարում է բոլոր ոստիկաններին,
ստրամիկներին, ոստիկանապետներին, գաւառապետներին, ժամ-
տարմներին, որ այսուհետեւ նրանցից իւրաքանչիւրը անխնայ կերպով
կոչուցուի, եթէ համարձակուի հայերի ձեռքից գէնգ խլել, խուզարկու-
րիւն կատարել կամ բանտարկել այդ նպատակով: Թող նրանցից իւրա-
քանչիւրը նախքան այդ տեսակ գործ սկսելը յիշէ Բագուի նահանգա-
պետ Նակաշիցէին, Գանձակի փոխ-նահանգապետ Անդրէեւին, գաւա-
ռապետներ՝ Բագուպաւսկունց, Մեմրիցիցի, Պաւլովին, ոստիկանապետ
Սախարովին, պրիստաներ՝ Նասչանսկունց, Զաւախովին, Շուճակեւի-
չին, Տէր Սահակեանին, ոստիկան Սերգօին դոնապան Եւկոյին եւ ուրիշ
շատերին, որոնք Հ. Յ. Դ. վնասով մահուան պատիժին են արժանացնել:
Փոխարքայի կողմից 25 թուալի ընծայ կամ յեղափոխական գնդակ —
ահա ինչ պէտք է ընտրել: Փոխարքան խոստանում է այդ ձեռով վնաս-
ուածների քննադատութիւն ապահովացնել. նա թեթեւացնում է մեր գործը,
որովհետեւ միայն անմեղ քննադատների անօգնական դրութիւնը կարող
է դողացնել յեղափոխականի ձեռքը. այժմ վերացրած է այդ արգելքն
էլ:

Մանթութիւն. — Մօտ օրերս Թիֆլիսում մի ոստիկան մի
եսայ ցինաքափ անելիս վիրաւորուած է. փոխարքան այդ բանը լսելով
25 թուալի ընծայ է տալիս:

ՄԼԸ Գողաք, 1905 Մայիս 18.

Հ. Յ. Դ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ(*)

(*) Դրօշակ, 1905 թիւ 7:

Կալուածներու գրաման նախընթաց տարին հայկական վան-
քերն ու եկեղեցիները ունէին հետեւեալ հողային սեփականութիւնը
(վերելահող, արօտտեղի, անտառ, այգի). — Էջմիածին՝ 45.000
ղեսիադին, Պեսարապիոյ թեմի վանքեր՝ 4.418, Շամախի՝ 79, Ղա-
րարաղ՝ 58.698, Երեւան՝ 32.440, Վրաստան՝ 12.250, ընդհ. գումար՝
153.000 զեսիադին: Ռուսաստանի միւս հայ եկեղեցիներու սեփակա-
նութիւնը 20.000 զեսիադինը չէր անցնէր:

Այս հողերուն տարեկան եկամուտն էր, Էջմիածին՝ 51.000
րուպլի, Պեսարապիա՝ 13.085, Շամախի՝ 1.830, Ղարարաղ՝ 6.700,
Երեւան՝ 17.190, Վրաստան՝ 3.500, ընդամէնը՝ 93.000 րուպլի: Պետա-
կան հողային տուրք կը վճարուէր 8.000 ր., ուրեմն վանական հողերու
եկամուտը կը հասնէր 85.000 ր.: Եկեղեցապատկան հողերու եկամու-
տին էր 25.000 ր.: Այսպէս՝ Հայ. Եկեղեցիի հողային եկամուտը կը
դառնար 110.000 ր. (տարեկան): Մնացած անշարժ կալուածներէն
(տուն, ջրաղաց, խանութ) Էջմիածինը կը ստանար 51.301 ր. եկամուտ:

Եկեղեցական եւ վանական դրամապլուխներն էին, 1900 թ.
տուեալներով. Երեւանի թեմի 643 եկեղեցիները միասին ունէին
239.283 ր. դրամապլուխ, 47 վանքերը՝ 4.546, Վրաստանի թեմի 356
եկեղեցիները՝ 287.067, 14 վանքերը՝ 38, Ղարարաղի թեմի 208 եկեղե-
ցիները՝ 45.285 ր., 13 վանքերը՝ 379 ր., Շամախիի թեմի 38 եկեղեցի-
ները 100.211 ր., Աստրախանի թեմի 39 եկեղեցիները՝ 500.456 ր., Պի-
սարապիայի թեմի 43 եկեղեցիները՝ 350.209 ր., 3 վանքերը՝ 779 ր.,
բոլորը միասին (1327 եկեղեցի) 1.522.513 ր. դրամապլուխ, 79 վան-
քերը՝ 5.746 ր.: Աստեղծէ զատ Էջմիածնի Մայր Աթոռը 1902 Յունուար
1ին դրամապլուխ եւ աւանդ դրամ ունէր 465.723 ր. եւ 4.000 Փրանք (*):

(*) Միթար վարդապետ, «Հայեր Ռուսաստանու», Վաղարշապատ,
1900: Այս աղբիւրի տուեալներով 1900ին հայ եկեղեցական դասի թիւն էր 7 եպիս-
կոպոս, 34 վարդապետ, 1547 բահանայ, 360 եկեղեցական սպասուոր:

Հայ ժողովրդի խոր ընդվզումը եւ ուսեւեմափոն պատերազմի
հետեւանքով ուսեւ բանակին կրած պարտութիւնը, իրենց անդրադար-
ձումը կ'ունենայ կայսրութեան ներքին քաղաքական կեանքին վրայ:
Կոստալարութիւնը կարգ մը ազատութիւններ կը շնորհէ բնակչութեան:
Այսպէս, 1905 Օգոստոս 1ին ետ կ'առնուէր հայ եկեղեցական կալուած-
ներու գրաման մասին դրուած օրէնքը, հետեւեալ հրովարտակով:

Վեովկասում մեր փոխարքայութիւնը վերականգնելով. մենք կովկասը կա-
ռավարելու համար մեր վաստակութեամբ բնորոշ անձի վրայ հողացողութիւն գրինը
վերահաստատել այդ օրհնեալ երկրում հասարակական կեանքի խանգարուած ընթացքը:
Այժմ փոխարքան ծանօթանալով իր ինձնքին յանձնուած երկրի պայմաններին, մեզ
ստաջազրութիւններ ներկայացրեց փոփոխելու մի քանի կարգադրութիւններ, որոնք
վերաբերում են ազգաբնակչութեան հայկական մասին եւ զժուարացնում են նրա կա-
նանուոր եւ խաղաղ գաղափարներ: Բարեք համարելով հաստատել մեր փոխարքայի
ստաջազրութիւնը՝ շնորհում ենք Հայ-Ղուսաւորչական հոգեւորականութեանը միջոց-
ներ լայն լուսաւորչի գործունէութեան՝ յօգուտ ժողովրդի:

Հրամայելով ընդ սմին յետ դարձնել ստորեւ ցոյց տրուած հիմունքներով
այն զոյգերը, որոնք վերացրուած էին հայ եկեղեցական հաստատութիւններից, մենք
թոյլ ենք տալիս մեր փոխարքային այժմ եւ եթ իր իշխանութեան յանձնուած երկրի
սահմաններում ժամանակաւորապէս զործադրելով միջնեւ օրէնդրական կարգով
քննուիլը կազմուած կանոնները, որոնք պէտք է ապահովեն ծխականների ժամանակ-
ցութիւնը եկեղեցական զոյգերի կառավարմանը, իսկ որպէսզի այսուհետեւ վերացուին
այն թիւրիմացութիւնները, որոնք ստալ էին զալիս գործող օրէնդրութեան թերու-
թիւնից, փոխարքան պէտք է քննութեան ենթարկէ այն հարցը թէ ի՞նչպէս պէտք է
որոշակի սահմանել պետական իշխանութեան յարաբերութիւնը զէպի հայ եկեղեցա-
կան հաստատութիւնները: Ըստ այսմ հրամայում ենք ա) ի վերացումն 1903 թ. Յու-
նիսի 12ի Բարձրագոյն հրամանի՝ յանձնել հայ եկեղեցական պատշաճաւոր հաստա-
տութիւնների տնօրինման հայոց եկեղեցիներին, վանքերին, եկեղեցական հաստատու-
թիւններին եւ հոգեւոր ուսումնարաններին պատկանող բոլոր անշարժ զոյգերը ու
դրամապլուխները եւ արքունի կառավարման ընթացքում ստացուած բոլոր եկամուտ-
ները, բաց ի այն ծախսերից որոնք տեղի են ունեցել այդ զոյգերի պահպանութեան
համար, եւ բացի այն դուժարներից որոնք ծախսուել են այդ զոյգերը յարբունիս
դրուելու համար: Եկեղեցական հաստատութիւններին իրանց զոյգերը եւ եկամուտ-
ները յետ դարձումը կատարել մեր կովկասեան փոխարքայի, ներքին գործերի նա-
խարարի եւ հողաշինութեան եւ երկրագործութեան կառավարչի համաձայնութեամբ,
բ) Այդ զոյգերը եւ եկամուտները յետ դարձնելու ժամանակ հայ հոգեւորականու-
թեան յարուցանելիք ինչդերերի վերջնական լուծումը յանձնել մեր կովկասեան փո-
խարքային, գ) Միջնեւ հայոց եկեղեցական դպրոցների նոր կանոնադրութեան մշա-

կումը, իրաւունք տալ մեր փոխարքային, որ կովկասեան փոխարքայութեան սուշ-
մաններում թոյլատրի եկեղեցիներէ եւ վանքերի կէջ եկեղեցական դպրոցներ բանալ
1874 թ. Յունիսի 19ի Բարձրագոյն Հաստատուած կանոնների հիմամբ, Պ) Յանձնա-
բարել ա) անյազազ առաջադրութիւն ներկայացնել սահմանուած կարգով, առանց այլ
անշուքեան հետ բանակցելու, Հայոց դպրոցների նոր կանոնադրութեան հրատարակ-
ման մասին, կապելով այդ հարցը այն խնդրին հետ որ վերաբերում է Հայոց եկեղե-
ցուն այն անշարժ գոյքեր եւ եկամուտները յետ դարձնելուն, որոնք յանձնուած են
ժողովրդական լուսաւորութեան նախարարութեանը, նախարարների կոմիտէի 1898
թ. 26 Մարտի եւ 1903 թ. Յունիսի Բարձրագոյն Հաստատուած կարգադրութիւնների
համաձայն, ք) արքունի գանձարանի աջակցութեամբ մշակել նախադիմ Հայոց եկե-
ղեցուն պատկանող բնակչութիւն ունեցող կալուածների գիրկացիների համար եւ ներ-
կայացնել այդ նախադիմ սահմանուած կարգով մեր հաստատմանը:

Կալուածներու վերադարձնելն ետք, այդ մասին փոխարքայ Վա-
րանցով-Դաշկով պարտք կը համարէ զեկուցել Նիկիոյայ Բ.ին.

Ճի՛վ Կովկաս զաւուց անձիջապէս յետոյ, եւ Ձեզդ Մեծութեան Բարձրագոյն
հաճութեանը խնդրեցի վերադարձնելու հայ-լուսաւորչական եկեղեցուն նրա գոյքերը
եւ թոյլատրելու հայ հոգեւորականութեան դպրոցներ բանալու: Թաղաւոր, այդ
ողորմութեանը որ դուք ցոյց տուիք հայերին, ունեցաւ, ինչպէս հետագայի հանդու-
մանները հաստատեցին, բարձր աստիճանի կարեւոր բաղադրական նշանակութիւն:
Հայ ժողովուրդը, որ չի ճանաչում հոգեւորականութիւնն իրրեւ դաս, եւ հոգեւոր
անձանց ընտրում է իր միջից զուտ պատմական նշանակալից պատճառներով, անկախ
կրօնական հայացքներից, սերտորէն կապուած է իր հոգեւորականութեան շահերի
հետ: Իրա գիմաց եկեղեցական գոյքերի գրաւումը վերաւորել է ժողովրդի բարոյա-
կան զգացումը եւ նրան համարեա գլխովին առանց դատակարգի ու կացութեան
խտրութեան, նետել յեղափոխական շարժման մէջ: Այն ահարկչական ակտերի մէջ,
որ դարձադրում էին կառավարական իշխանութեան ներկայացուցիչների ղեմ, որոնք
այսպէս թէ այնպէս անշուքեան ունէին գոյքերի գրաւման հետ, մասնակցում էին
անուղղակի, եթէ ոչ դրամով գոնէ համակրանքով, բոլոր կովկասեան, զուցէ եւ
Ռուսաստանի շատ հայեր: Հայ Յեղափոխական «Դաշնակցութիւն» ընկերակցութեանը,
որ իւր ժամանակին ստեղծուել է թուրքահայաստանի հայերին ազատագրելու թուրքիայի
իշխանութիւնից եւ Ռուսաստանում իրան արտայայտել է միայն դրամ ժողովելով,
զէնք առնելով եւ կամաւորներ կազմակերպելով թուրքիա ուղարկելու համար, — եկե-
ղեցական գոյքերի գրաւումից յետոյ բարենպաստ հող գտաւ իր ազատարար զաղա-
փարհերի պրոպագանդի համար եւ ռուսահայերի նկատմամբ: Ինքնուրոյն Հայաստանի
ստեղծման զաղափարն ընդհանրապէս բոլոր հայերին նրա կազմին մէջ հաւաքելով, որ
զուցէ առաջ ծագում էր առանձին անհատների մտքում, — յանկարծակի նշանաւոր
շափեր ընդունեց Կովկասում: Վարչութեան տեղեկութիւնների համաձայն չկար հայ-
կական բնակչութիւն ունեցող մի վայր, ուր չզործէր «Դաշնակցութեանը» տեղական
կոմիտէն, իսկ հայերի համակրանքն ամէն մի ահարկչական ակտի նկատմամբ այն-

քան էր ակնյայտի, որ նոյնիսկ Պուրաշիտի նահանգի իւրաւունքները, ուր հայ չկայ
ամենեւին, վերադրում էին նրանց սաղբանքներին, չիտեղով վրայիներէ մասնակ-
ցութեամբ կատարուած զաղաքական սպանութիւնների առանձին զէպքերի մասին, երբ
դեռ կարելի էր այսպէս թէ այնպէս թոյլատրել վարձուորութիւն: Հայերի յեղափո-
խութեան սուտ նախադրեալի ազդեցութեան տակ, որի պատճառով հոգեւորականու-
թիւնից գրաւեցին եկեղեցական գոյքեր, ստեղծուեց հայ մասսաների իսկական յե-
ղափոխական տրամադրութիւն: Սակայն տեղական վարչութիւնը չէր կամենում ան-
նկ շարժի հիմնական պատճառը: Բանտարկութիւններով եւ երկրից ազատելով նա
հալածական միջոցներ էր ձեռք առնում այն բոլոր հայերի ղեմ, որոնք քացայաջա-
րէն իրանց անհամակրանքն էին յայտնում գոյքերի գրաւման ստիժով, եւ գրեթէ
բազմացնում էր դժգոհների թիւը: Հայ եկեղեցու կալուածների ու գրաւագուծների
վերադարձումը ակամայից յեղափոխութեան գիրկը նետուած հայ ժողովրդի սիրտը,
բնականից պահպանողական ու զործնական, ամբիջապէս դարձրեց զէպի Ռուսական
Արքան, պարզ ցոյց տալով, թէ ուր է թագնուած իսկական շարժը: Հայերի մաս-
նակցութիւնն ահարկչական ակտերում նկատելիորէն յանկարծակի պակասում է:
«Դաշնակցութեան» ազդեցութիւնը թէ եւ ոչ յանկարծակի բայց անընդհատ ընկնում է,
եւ Դուք, Ձեզդ Մեծութիւն, յանձնին հայ ժողովրդական մասսայի այժմ ունիք հպ-
տակներ, որոնք յատրաստ են ծառայել ռուսական կայսրութեան շահերին, ինչպէս
երբեմն ռուս զորքերի շարժման ժամանակ զէպի Ասիական թուրքիան ծառայում էին
Անդրկովկասեան այժմեան հայերի նախնիները: (Դ. Անանուն՝ Ռուսահայերի հա-
սարակական զարգացումը. Գ. հատոր, էջ 367):

ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆՆԵՐՈՒ ԴԱՇՆ ՑԱՐԻՁՄԻ ԴԵՄ

1904 Դեկտեմբեր 1ին Փարիզի մէջ հրատարակութեան արուե-
ցաւ հոն դուժարուած «Պորհրոգածողով Ռուսաց կայսրութեան ընդդի-
մադիր եւ յեղափոխական կազմակերպութիւններ» մարմնի որոշումնե-
րը:

Այս ժողովին կը մասնակցէին ռուսաց սոցիալիստ յեղափոխա-
կան, լեհական, լատիշ, Ֆինլանդական, վրաց սոց. յեղափոխական,
ռուս սահմանադրական կուսակցութիւնը եւ Հ. Յ. Դաշնակցու-
թիւնը:

Կուտանք այդ համագումարի որոշումներուն ազդութեանց վե-
րաբերելալ մասը, առնելով զայն «Դրօշակ»ի 1904 Դեկտ.ի թիւէն:

«ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ յայտնուեց ընդհա-
նուր ցանկութիւն կիրառել ռուսկալար գաղափարը նաեւ այդ խնդրի

լուծման համար հաստատելիք ընդհանուր հայեցակետի վրայ: Մանրամասն թմուրքեան չ'հնարակելով վիճելի կետը այն դերի մասին, որ ազգայնական խնդրին վիճակուած է խաղալ ուսաց վերակազմեալ թագուորութեան ապագայ պետական իրաւունքի սահմանաւորման մէջ — ժողովը այնուամենայնիւ, հնարաւոր սեպեց արձանագրել, որ ազգայնական խնդրի լուծման կէտում հարիրդաժողովին մասնակցող բոլոր կուսակցութիւնները համաձայնում են, ընդունելով ամէնքէն էլ՝ որ ամէն մի ազգ ունի ինքնորոշման (իր ճակատագիրը տնօրինելու) իրաւունք, ունի նաեւ իրաւունք վայելելու ազգայնական զարգացման ազատութիւն՝ երաշխաւորուած օրէնքներով:

Ժողովը միաձայն ընդունեց, որ ներկայ ռեժիմը հանդիսանում է ոչ թէ իբրեւ կազմակերպութիւն զանազան ազգութիւնների խաղաղ, միատեղ ֆազակերթական աշխատանքի, այլ իբրեւ կազմակերպութիւն բռնութեան, որ հասարակապէս ծանրացած է բոլոր ազգութիւնների վրայ: Կոնք ուսացման ձգտումների դէմ, որոնք աղաւղտում են Մայրերի (ժայռագաւառներու . Գ.Լ.) հասարակական կեանքի հիմունքներն իսկ, կոնք ազգայնական բշնամութեան արհեստական գրգռման դէմ պէտք է միանայ այն կոնքին, որ պիտի մղուէ արտաքին յարձակողական ֆազակեանութեան դէմ, որովհետեւ՝ թէ՛ ուսացման ձգտումները եւ թէ՛ արտաքին ֆազակեանութիւնը նպատակ ունին հեռացնել հասարակական կարծիքի ուշադրութիւնը ներքին ֆազակեանութեան խնդիրներից՝ ձգձգելու համար ներկայ ռեժիմի գոյութիւնը»:

Համազումարը կը գտնէ.

«1) Որ միապետական (ինքնակալ) ռեժիմը ճակատագրական խոչընդոտ է հանդիսանում առաջդիմութեան ու բարեկեցութեան համար՝ թէ ուս ժողովրդի եւ թէ ուս կառավարութիւնից ննշուած բոլոր ազգութիւնների՝ եւ որ այդ ռեժիմը ֆազակերթութեան ժամանակակից գրութեան մէջ ներկայացնում է անիմաստ ու վնասակար տարածութիւն (անախորձիզմ):

2) Որ կոնք այդ ռեժիմին դէմ կարող է մղուել շատ աւելի մեծ ուժով ու ազդութեամբ, եթէ զանազան՝ թէ ուս եւ թէ ոչ ուս՝ դիմադրական ու յեղափոխական կուսակցութիւնների գործադրութիւնները համաձայնուած լինէին:

3) Որ ներկայ վայրկեանը առանձնապէս բարեյաջող է յայտնուում այդ բոլոր կուսակցութիւններն համերաշխ գործունէութեան համար՝ ընդդէմ ինքնակալ կառավարութեան»:

Համազումարին մասնակցող բոլոր կուսակցութիւնները կ'ընդունին.

«1) Բռնապետութեան ոչնչացումն. վերացումն այն բոլոր բանի միջոցների որոնք խախտեցին Ֆինլանդիայի սահմանադրական իրաւունքները:

2) Միապետական (ինքնակալ) կազմի փոխարինումն ազատ առկալարական ռեժիմով, հիմնուած ընդհանուր ձայնատուութեան վրայ:

3) Ազգայնական ինքնորոշման իրաւունք. օրէնքներով երաշխաւորուած ազգայնական զարգացման ազատութիւն՝ բոլոր ժողովրդների համար: Վերացումն ամէն տեսակ բռնութեան՝ ուս կառավարութեան կողմից՝ առանձին ազգութիւնների վերաբերմամբ»:

Աւելցնենք, որ այս համազումարին հրաւիրուած է եղեր նաեւ «Ռուսաց Սոցիալ-դեմոկրատական բանւորական կուսակցութիւնը» (Հետագային բոլշեւիկեան կուսակցութիւնը), բայց մերժած է մասնակցել: Այս համազումարը պատմական նշանակութիւն ունեցաւ, յառաջանելու համար 1905ի ուսական առաջին յեղափոխութիւնը:

«Դրօշակ», ողջունելով համազումարը, անոր նուիրած է «Առաջին քայլ» խմբագրականը, իբրեւ նախարան ունենալով ժան ժուէի հետեւեալ մարզարէաշունչ տողերը.

«Եւ այժմ անձկալի ու յուսախառն անհամբերութեամբ սպասում ենք այն հետեւանքներին, որ պիտի տայ Ռուսաստանում կենդանի ազատարար գործողութիւնը, պատրաստուած ընդդիմաւեր կուսակցութիւնների համաձայնութեամբ»:

«Երբ մտածում էք, թէ որպիսի սֆանջիլի արդիւնքներ կ'ունենայ Եւրոպայի եւ աշխարհի համար առկալարական ազատ ռեժիմի հաստատումը Ռուսաստանի մէջ, երբ մտածում էք, որ ցարիստական բռնապետութեան անկումով բոլոր կատարեալ ու կէս-բռնապետութիւնները պիտի կարոնցնեն իրենց յեմակետը, — իրաւունք ունէք աւելու, որ դա կը լինի մարդկային պատմութեան մեծագոյն անցքը, փրանաւան յեղափոխութիւնից ի վեր»:

Այս համազումարին քանի մը ամիս ետք, 1905 Մայիս 11/24ին, Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ ահարեկումի ենթարկուեցաւ Բազուի նահանգապետ Իլյան Նակաչիձէն: Իսկ նոյն տարուան Յուլիս 21ին, դարձեալ Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ Կ. Պոլսոյ մէջ մահափորձ կատարուեցաւ Կարմիր Սուլթան Համիտի դէմ, թէեւ ինք ազատեցաւ, բայց իր հետեւորդներէն երկու հարիւր հոգի ուղանուեցան, կը գրէ «Դրօշակ»՝ 1905 Օգոստոսի թիւին մէջ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԿԸ ՀՐԱՀՐԷ ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԿՈՒՒՆԵՐԸ

Ցարական կառավարութիւնը կողմանի մէջ իրեն դէմ եղած դժգոհութիւնները մոռցնելու համար, իր գործակալներուն միջոցով լարեց հալածութեան յարաբերութիւնները, ապա հրահրեց սկսած կռիւնները: Երկու ազգերը մարդկային եւ նիւթական մեծ կորուստներ ունեցան: Հայ եւ թաթար ներկայացուցիչներ արտակարգ ճիշտ թափեցին կռիւնները զազրեցնելու համար:

Այդ օրերուն հրապարակ եկաւ Բազուի նախկին քաղաքապետ Ալեքսանդր Նովիկով, իր բաց նամակով՝ ուղղուած Նահանգապետ Նակաշիձէին, ամբաստանեց զայն եւ իշխանութիւնը, իբրև հեղինակ միջոցառման կռիւններուն: «Իրոջակ»ի 1905 Մայիսի 15-էն կ'անձնեք այդ նամակը նոյնութեամբ:

Բ Ա Ց Ն Ա Մ Ա Կ

ԲԱԳՈՒՒՆ ԱՀԱՆԳԱՊԵՏ ԻՇ. ԿԱԿԱՇԻՉԷԻՆ

(ԹԱՐԳ. ՌՈՒՍՆԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԻՑ, ՏԱՐԱՇՈՒԱՇ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ)

«Ամբողջ Ռուսաստանը, ամբողջ աշխարհը սարսափեց երեքուեց, իմանալով Փետրուարի 6-9ին Բագուում տեղի ունեցած անցքերը:

Ռուսաստանը փնտռում է եւ չէ կարող գտնել դժբախտութեան պատճառը: Ով որ ճանաչում է նրա հեղինակին, պարտաւոր է ցոյց տալ բացարձակապէս: Ապա թէ ոչ նա ինքը կը դառնայ յանցաւորին թագցնող: Ես ճանաչում եմ յանցաւորին եւ սրբազան պարտք եմ համարում տալ նրա անունը: Կոտորածի հեղինակը դուք էք:

Անաստիկ այն հիմքերը, որոնցով ես ամբաստանում եմ ձեզ եւ պտորաստ եմ այսպէս անել այդ ամբաստանութիւնը:

1. Բայք ոստիկանները, զինուորները, կոզակները երբ նրանց խնդրում էին ազատել կոտորուողներին, միակերպ ու միաձայն պատասխանում էին «մեզ չէ հրամայուած»: Նրանցից մի քանիսը իրենց վրդովմունքն էին յայտնում, որ ստիպուած են անշարժ մնալ եւ զենքը ձեռին դիտել, թէ ինչպէս ջարդում էին անմեղներին:

2. Դուք եւ ձեր օգնական ոստիկանապետ Դեմիսկին, կոզակների բազմաթիւ պահակով, շրջում էիք ձեռքով Բագուի մէջ եւ փոխանակ հալածելու կոտորուողներին դիտումք հեռահամար էիք կարծես շտապելով մի այլ տեղ, բայց տալու համար մարդասպաններին ի կատար ածելու իրենց արիւնք գործը: Մինչդեռ ապացուցուած է, որ երկու

կոզակների կամ հինգ զինուած հայերի երեսուր բաւական է եղել մարդասպաններին փախցնելու համար:

3. Դուք յետ էիք մղում նրանց, որոնք դիմում էին ձեր օգնութեան եւ երբ կայան եւ ուրիշները ձեր մերձեցումն արգելադրեցին, դուք դեռ նրանց վրայ էիք յարձակում բացարձակ սուտ մեղադրանքով, որ իբր թէ նրանք հրացան էին արձակում եւ դրանով հրաւիրում էին վրէժխնդարութիւն:

4. Դուք ձեր շխտումքով մտնելու էիք ջարդոգներին, շտապով խօսում էիք նրանց հետ, իսկ երբեմն նոյն իսկ հրամայում էիք վերադարձնել նրանց իրենց գէնքերը, որ կոզակները սխալմամբ խլել էին:

5. Դուք հրաժարում էիք տալ զինուորական իշխանութեան գրաւոր առաջարկներ գէնքի դիմելու համար եւ բաւականանում էիք բերանացի կարգադրութիւններով, իմանալով, որ ձեզ չպիտի հաւատային լույս խօսքերով: Այդքան բաւական է, համարելու համար ձեզ ոչ միայն յանցանք բոլորապէս, այլ եւ գործակից մարդասպանների, ի նկատի առնելով ձեր բարձր դիրքը Բագուում, դուք, կարելի է ասել, հոգին էք այդ անուր ջարդին: Կայէն, ի՞նչ արիւր եղբայրներդ հետ:

Բայց իբրև վախճառ, դուք բոլոր ժամանակ ստում էիք, ձեւանալով, որ իբրեւ թէ չունիք բաւականաչափ ուժ սարսափներին վերջ տալու համար: Դուք խաբում էիք հասարակութիւնը, ասելով որ իբր հրաման էք տուել գէնք գործ դնելու, դուք մինչեւ անգամ երբեմն թափում էիք կոկորդիլոսի արտասուքներ:

Դուք զգուսնէք չզգացիք փորձել խաբելու հասարակութիւնը, իբր թէ պաշտօնական խնդիրք էք ներկայացրել, որ հրապարակով բնօրին խնդիրը հասարակութեան պատուիրակների ներկայութեամբ, լաւ իմանալով, որ այդպիսի դատաստանի իրաւունք դուք չէք ստանայ:

Ձեր գործակիցները Դեմիսկին, Խոմիցկին, Բորոզին, ձեզնից էլ լաւ են: Նրանք խնայաւորում էին ուղիղ նայել մարդկանց աչքերի մէջ, ոճրագործութիւնից յետոյ, ուր նրանք խաղացել են միայն երկրորդական դեր, նրանք հեռացան: Դուք մնացիք Բագուում, դուք, զլխաւոր ոճրագործ: Դուք մարդիկ էք ընդունում, խորհրդակցութիւններ էք հրաւիրում:

Դուք կայէնից էլ վատ էք, — կայէնը մէկ եղբայր սպանեց, իսկ դուք թաթախեցիք ձեր ձեռքերը հարիւրաւոր անմեղ եղբայրների արեան մէջ: Կայէնը ինքն անձամբ սպանեց Աբելին, իսկ դուք օգտուելով ձեր հեղինակութիւնից, դէպի ոճիր մղեցիք շատ թշուառականների, որոնք երկար պիտի տանջուեն խղճի խայթոցներից:

Կայէնը սպանեց Աբելին եւ չդիպաւ գալոց սերունդներին, իսկ

դուք չամացիք բազմաթիւ սերունդների տարածութեան վրայ ցանկ բշխանութեան սերմեր Բագոււմ ապրող բարեկամ ժողովուրդների միջև: Եւ միայն առողջ դատադուքիւնը կարող է ֆանդել ձեր գարշելի ծրագրերնրը:

Դուք Յուդայից էլ վատ էք, որովհետեւ Յուդան, զարհուրելի գործը հիւքելուց յետոյ զոչաց ու գնաց խեղդուեց, իսկ դուք հնարաւոր էք գտնում ապրել, ձեր բոլոր արածներից յետոյ:

Դուք անպատուեցիք հրաշագեղ վրաստանը, որ ձեզ իր գաւազն էր համարում: Դուք անպատուեցիք Ռուսաստանը, որի դէմ կարող եմ տրամբջալ ազէտի գոհերքը եւ անգիտակից ոճրագործները, կարծելով թէ ձեր եւ Ռուսաստանի մէջ կայ որեւէ ընդհանուր բան: Թող ձեր անունը յաւիտեանապէս անիծուած լինի:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆՈՎԻԿՈՎ
(Բագոււի նախկին քաղաքագլուխ)

ԻՇ. ՆԱԿԱՇԻՉԷԻ ԱՀԱՐԵԿՈՒՄԸ

«Երոշակ»ի 1905 Մարտի Թիւին մէջ լոյս տեսած է Հ. Յ. Դ. Բագոււի Կենար. Կոմիտէի կողմէ Փետր. 7ին իշխան Նակաշիճէի զըրկուած հետեւեալ սպառնազգիրը.

«Պ. Նահանգապետ,

«Վերջին օրերում տեղի ունեցած արիւնալից դէպքերը, մեզ անբընշեցիմ մի կարծիք, որը դառնում է համոզմունք մեզ համար, — այն, որ թափուած ամբողջ արեան պատճառը դուք էք եւ ձեզ ենթարկուած ոստիկանութիւնը: Հարկաւոր չդատելով ապացոյցներ բերել ձեր յանցագործ վարձուցի համար, որը բազմաթիւ անմեղների կորստեան պատճառ եղաւ, Հայ Յեզ. Դաշնակցութեան կենտրոնական Կոմիտէն, Յալիֆան իր վրայ դրած սրբազան պարտականութեան կատարման ձեռնարկելը՝ պաշտպան հանդիսանալ անմեղ պոհերին, աւելորդ չի համարում յայտարարել ձեզ, պ. Նահանգապետ, որ եթէ արիւնահեղութիւնը չէ՛ դադարեցնի ձեր ձեռքում եղած բոլոր միջոցներով, այդ դէպքում դուք պատասխանատու էք ձեր արիւնով, այլեւ ձեր մեղակիցների արիւնով»:

Հ. Յ. Դ. ԲԱԳՈՒԻ ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷ

Այս ազդարարութենէն երեք ամիս ետք կը զործադրուի Նակաշիճէի ահաբեկումը: «Երոշակ»ի 1905 Յունիսի Թիւին մէջ կը կարգուի.

«Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Բ. Կ. ԿՈՄԻՏԷԻ ՈՐՈՇՄԱՄԲ՝ ԲԱԳՈՒԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԻՇԽԱՆ ՆԱԿԱՇԻՉԷ, ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ԵՂԵՌՆԻ ԳԼԽԱՒՈՐ ՀԵՂԻՆԱԿԸ, ՄԱՅԻՍ 11/24ԻՆ ԵՆԹԱՐԿՈՒԵՑ ՏԵՐՈՐԻ՝ ՌՈՒՄԲԻ ՄԻՋՈՑՈՎ: ՆԱՀԱՆԳԱՊԵՏԸ ՍՊԱՆՈՒԵՑ ՏԵՂՆ ՈՒ ՏԵՂԸ: ՏԵՐՈՐԻՍՏԸ ԱՋԱՏ Է»:

Աւելցնենք, որ Նակաշիճէի երկու ահաբեկչներն էին Մարտիրոս Չարուիճեան եւ Դրո, որ աստիճանաբար պիտի դառնար նոր ժամանակներու ընթացքին հայկական ռազմական ուժին արտայայտող մեծադոյն ղեկավարէն մէկը:

ՌՈՒՍԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

Որհնդային իշխանութիւնը քարոզչութեան նոր մեթոտ մը սկսած է կիրարկել արտասահմանի մէջ. կը ջանայ հաւատացնել, թէ անցեալին ոուս պետութիւնը միշտ օգնած է հայութեան:

Այսպէս շէր մտածեր բողշեւիկեան առաջին սերունդը, որ կը մերկացնէր ցարական ինքնակալութեան դաւադիր ու յետադիմական քաղաքականութիւնը:

Որհնդային Հայաստանի առաջին յեղկոմի նախագահ Ս. Կասեան, 1923ին Երեւանի մէջ լոյս տեսած «Նորք» հանդէսին մէջ (էջ 121-133), հետեւեալ կերպով կը վերլուծէ «Ռուսական ինքնակալութեան քաղաքականութիւնը Անդրկովկասում»:

«Քուն Ռուսաստանի եւ Անդրկովկասի փոխաբարբերութիւնները հաստատել ԳԱՂՈՒԹԱՅԻՆ շահագործութեան հիմքերի վրայ — ահա ամենահզօր ինքնակալութեան տնտեսական ֆազաֆակցութեան այրութեանը: Ինքնակալութիւնը Անդրկովկասի շուկան դարձնում է առաւելուտրա-արդիւնաբերական կապիտալի բացառիկ սեփականութիւնը: Անդրկովկասը. որպէս գաղութ, պարտաւոր էր սպառել Ռուսաստան մետրոպոլիայի ֆաբրիկատները: Անդրկովկասը պարտաւոր էր իր հում նիւթերը յանձնել Ռուսաստանին: Ինքնակալութիւնը ձեռք էր առնում ամէն միջոց, որպէսզի հում նիւթը չմշակուէր սեղում, որպէսզի ծայրագաւառը չգորգացնէր իր մէջ սեփական արդիւնաբերութիւն, որպէսզի նա տնտեսապէս կախուած լինէր Ռուսաստանի գործարանատէրներից, ենթարկուած սրանց կապիտալիստական շահագործութեանը:

Բայց եթէ ինքնակալութիւնը Փիզիֆապէս չի ոչնչացրել տե-

դական գիւղացիութիւնը Անդրկովկասում, ապա իր տնտեսական անդամակազմումը նա հիմնադրապէս փայլաշէլ է նրան, ազատագրել է մասնիկ ստեղծելի չհարստութեան: Ռուսական կապիտալը, գործնական գործում ԱՌՆԻՏԲԱՎԱՆ կապիտալի ծեւով, հիմնադրապէս փարսեանդ է արել Անդրկովկասի բնատնտեսութիւնը: Տեղում կեանքի կոչած տնտեսական կապիտալի հետ միասին՝ նա ծծում էր գիւղացիութեան կենսական հիւրը:

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

...Ամէն տեղ եւ ամենուրեք, միշտ եւ անզուգար նա խնայելով, գրգռել էր սուրբ, որ ինքը ոչ միայն «կամօճն Աստուծոյ» ստեղծում էր խանութիւն է «ՆՈՒՄԱՃՈՒՄՆ» երկրի վրայ, որ ինքը ոչ միայն տիրապետող դասակարգի իշխանութիւն է, այլեւ ՏՐԱՊԵՏՈՂ ԱՐՏԻ իշխանութիւն: Նրա համար գոյութիւն չունէին «ծայրագատար» շահեր, հոյնիսկ կարիքներ: ամէն ինչի վրայ նա նայում էր միայն եւ բացառապէս «կենդանի» շահերի տեսակէտից:

Այդ նպատակի համար՝ ամենից առաջ հարգաւոր էր Անդրկովկաս տեղափոխել ռուս գիւղացիներ, տեղադրել դրանց նրա զանազան անկիւններում, բաժին հանելով նրանց լուս հոգեր աւելի, քան հարկատու էր: Այդպիսով նա Անդրկովկասում ստեղծում է ԱՄՈՒՐ ՈՒ ՀԱՐՈՒՍ ՌՈՒՍ ՌՈՒՍ ԳԻՒԿԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ:

Սա անհիմն պնդումն է, այլ գունատրուած թուերի կենդանի խօսքը, իսկ թուերն առում են, որ Պոսկան քուսկանների կիսում, օրինակի համար, Բորչալուի գաւառի Պրիվոլնայէ ռուս գիւղում, ուր ապրում էին այսպէս կոչուած պետական գիւղացիներ, իրաքանչիւր ծուխ, բազկացած 7-7 հոգուց՝ ունէր 32 դեսիատին բաժնեհող եւ 7 դեսիատին կապալահող (ընդամենը 39 դ.): Այնինչ նոյն գաւառի Բարմալուրը բարբ գիւղաշրջանի պետական գիւղացիների իրաքանչիւր ծուխ, որ բազկացած էր 7-6 անդամից, ունէր 20 դեսիատին բաժնեհող եւ մօտ մէկ դեսիատին կապալահող (ընդամենը 21 դես.), իսկ նոյն գաւառի Ուզունլար գիւղի պետական գիւղացիների իրաքանչիւր ծուխը, բազկացած 9 անդամից, ունէր միայն 8-5 դ. բաժնեհող եւ 5 դ. կապալահող (ընդամենը 13-5 դ.):

...Բոլոր պետական դպրոցները լեցում էին ռուս մտաւորական քափփոխներով, որոնք դպրոցներից եւ ուսումնական նիւթերից դուրս էին վանում այն ամէնը, ինչ որ յիշեցնում էր «տեղականը» եւ համարում այդ «խոշոր ծառայութիւն հայրենիքի հանդէպ»: Ամէն տեղ նշումն ու հետապնդումն ազգանունների վերջաւորութեան պատճառով, թունաւոր ծաղրանք ազգային ծագման հասցէին:

Ամէն տեղ-մայրենի լեզուին հետապնդումն, մայրենի գրականութեան մատչելի մամուլի նշումն: Ամէն տեղ — բռնի պահանջ՝ իմանալ տիրապետող ազգի լեզուն, թէ ուստիկանաւորը, թէ դատարանում և թէ մինչև անգամ շուկայում, ուր ամենակարող գարադալոյը անխիղճ կերպով ծեծում էր կամ «գոլոտրին» կամ «արմեաշկային» հենց այն պատճառով որ նրանք չէին հասկանում նրա հրամանները...:

...Տասնեակ տարիներում ինքնակալութիւնը ճիգ է քափել ազգայնապէս դիմակազուրկ անել Անդրկովկասի բազկացուցիչ մասերը, խտնաշփոք անել նրա ազգային փարտէզը: դարձնել նրան, եթէ կարելի է այսպէս ասել, սպազգային ազգութիւնների կոնգլոմերատ: Քախան վարչական բաժանումներով, բռնի արտագաղթով ու ներգաղթով նա ստեղծել էր Անդրկովկասում ազգութիւնների եւ ժողովուրդների իրար հիւսուած եւ խառնիմազան մի ցանց: Նա Անդրկովկասը դարձրել էր մի փառային «ամբողջութիւն», որպէսզի յիշատակութիւն անգամ չլինի ազգային տերիտորիաների մասին, որպէսզի ազգութիւններից ոչ մէկը չհամարակուի մտածել ազգային ամենաչնչին շահի մասին՝ որոշ տերիտորիաների վրայ, առանց շոշափելու մի ուրիշ ազգութեան նոյնքան աւելի չնչին շահը: Նա այնպէս էր խառնել ազգութիւնները, որ սովորական ՀԱՐՆԻԱՆԱՅԻՆ ՎԵՆԵՐԻՆ, ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ հակասութիւններին կարելի լինէր վերագրել ԱԶԳԱՅԻՆ պայքարի բնոյթ:

Գաղտնի, բայց յամառ կերպով ինքնակալութիւնը մի հարեւանին սրում էր միւսի դէմ: Նրա ազենտները, մեծից մինչև փոքր՝ մի տեղ գրգռում էին թիրաքին հային դէմ, մի ուրիշ տեղ՝ հային թիրաքին դէմ, մի տեղ վրացին հայի կամ ոսի դէմ, մի ուրիշ տեղ՝ հային կամ ոսին՝ վրացու դէմ եւ այլն: Նրա պրովոկացիային ենթարկուող տեղական ազգայնականները՝ համարեա դանակը ձեռքերին՝ իրար վրայ էին յարձակում ամենաչնչին առիթով:

Այժմ Մոսկուայի մէջ նստած իշխանութիւնները այս նոյն սկզբունքը կը գործադրեն. ոչ թէ զարկ կուտան Հայաստանի տնտեսութեան, այլ կ'աջակցին տնտեսական այն ձեռնարկներուն, որոնք համաժողովնական նշանակութիւն ունին:

«Սովետական Հայաստան» օրաթերթի ծաւալով Երևանի մէջ լոյս տեսած «կոմունիստ» ռուսերէն օրաթերթի գոյութիւնը ապացոյց է, որ աւելցած են նաեւ ռուսերու թիւը եւ ազդեցութիւնը Հայաստանի մէջ:

ՄԱՀԱՓՈՐՁ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏԻ ԴԵՄ

Հ. Յ. Դաշնակցութեան Գ. Ընդհ. Ժողովը, որ գումարուեցաւ 1904 Յունուարին, Սոֆիայի մէջ, որոշեց բացառիկ միջոցներու դիմել եւ զարկ տալ յեղափոխական գործունէութեան: Այս նպատակով աշխատանքի լծուեցաւ կազմակերպութեան առաջին ղէմքը՝ Քրիստափոր Միքայէլեան, ընտրելով իր գործակիցները:

Նրեթական միջոցներ հայթայթուեցան կովկասահայ մեծահարուստներու կողմէ, ընդհանրապէս սպառնալիքի տակ. թէ եւ ղժուարութեամբ, բայց ի վերջոյ Քրիստափոր ձեռք բերաւ անհրաժեշտ գումարը:

Ինք յղացեր էր պաղատարը՝ ահարեկել Կարմիր Սուլթանը, որ, քաջալերուած Ռուսաստանի եւ արեւմտեան պետութիւններու անտարբերութենէն, կը շարունակէր ջարդեր կազմակերպել հայկական նահանգներուն մէջ:

Սամուէլ Տայն ծածկանունին տակ՝ Քրիստափոր ճամբորդեց Ռուրիկայի հետ, զայն ներկայացնելով իրբեւ իր աղջիկը: Ուսումնասիրութիւններ կատարեց Պոլիս եւ Պուլկարիս: Պատրաստ էր ծրարելու կառքի մը մէջ պիտի դրուէր ղժոխային ուսմբ մը, որ պիտի պայթէր Սուլթանին անցքի պահուն, երբ ան վերադառնար սոյոթքէն: Ռուսքի պայթումը եթէ արդիւնք չտար, ահարեկիչները ձեռնառումբեր պիտի գործածէին:

1905 Մարտ 17ին, Սոֆիայի մօտ, Վիտոլ յերան վրայ, ձեռնառումբի փորձեր կատարելու ատեն Քրիստափոր Միքայէլեան նահատակուեցաւ, իր ընկերոջ՝ Վոսմշապուհ Քէնտրեբեանի հետ:

Պատասխանատու մարմինը որոշեց շլտածղել ծրարելը, եւ Ռուրիկան Պոլիս հրաւիրուեցաւ: Մահափորձի համար կառքը Վիեննայէն գնած էր Ակնունին եւ ղրկած էր Պոլիս՝ Ժորիս անունով պելճիքացիի մը, որ նոյնպէս Քրիստափորի գործակիցներէն էր:

1905 Յուլիս 21ին, Համիտ՝ երբ Ուրբաթ օրուան աղօթքէն կը վերադառնար, պայթեցաւ կառքի մէջ դրուած ղժոխային ուսմբը, նախապէս ճշդուած ժամուն... բայց Սուլթանը կարճ խօսակցութիւն մը ունեցած էր Շէյխ-Իւլ-Իսլամ ձէմալէտտին էֆէնտիի հետ եւ այս յարադումի հետեւանքով ապատեցաւ մահէն:

Ահաւոր պայթումը սարսափի մատնեց բոնակալը եւ պալատականները. «Երբ դղրդիւնը վերջացաւ եւ ծուխի մշուշներ ցրուեցան.

հանդիսականներուն առջեւ պարզուեցաւ ահռելի տեսարան մը. մօտ 40 մարդ եւ 50 ձի բառացիօրէն կտոր, կտոր եղած էին եւ 80է աւելի մարդիկ ծանր ու թեթեւ վիրաւորուած... կառքը (սուլթանին) շրջապատուեցաւ հարիւրաւոր մարտոցմով, որոնք իրենց սուրերը համեր էին պատեաններէն, այնպէս որ ամբողջ տեսարանը վայրկեան մը խօյ, վայրենի փանթէրի մը տպաւորութիւնը կը գործէր...» («ՃրանկՓութեանը ցայթունը»):

Սուրկանութիւնը երկար ամիսներու քննութիւններէ ետք կըրցաւ ձերբակալել պելճիքացի Ժորիսը, որ մերժեց մատնել իր հայ ընկերները, սուաւ միայն մեռածներուն եւ փախստականներուն անունները:

Միջազգային հանրային կարծիքը չդատապարտեց ահարեկումը եւ շատ բնական գտաւ Կարմիր բոնակալին ղէմ անուած քայլը: Աստիճանաբար Համիտի ղէմ ղժոխութիւնը աւելցաւ նաեւ Թուրքերու մէջ: 1907 Դեկտ. 27-29, նախաձեռութեամբ «Դրօշակ» իմբազրութեան, Փարիզի մէջ գումարուեցաւ «Օսմանեան Կայսրութեան Ընդդիմադիր Տարբերու Կոնգրէն» (*), որ պահանջեց Սուլթան Համիտի գահընկեցութիւնը: Յաջորդ տարին, 1908 Յուլիս 10, Համիտ ստիպուեցաւ Սահմանադրութիւն հռչակել, իսկ 1909 Մարտ 31 յետաշրջական ղէպքերուն հետեւանքով գահընկեց հռչակուեցաւ եւ աքսորուեցաւ Սելանիկ: Պալքանեան պատերազմին զինք տարին Կ. Պոլիս, ուր մեռաւ մոռացութեան մէջ, առաջին համաշխարհային պատերազմին վերջերս:

Համիտի յաջորդ Իթթիհատականները, իրենց գործած ոճիւրներով, զերազանցեցին Կարմիր Սուլթանը, բայց վրիժառու հայ յեղափոխականներու գնդակով անոնք եւս գտան իրենց պատիժը, որուն պիտի անդրադառնանք առանձին:

(* Յայտարարագիրը հրատարակուած է «Հայաստան եւ Հայ Դատը ըստ դաշնագրերու» հատորին մէջ: 1942, էջ 64:

ՓՈՐՁ՝ ՊԱՌԱԿՏԵԼՈՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

1905ի ուսական առաջին յեփափոխութեան հետեւանքով, Կովկասի մէջ ստեղծուեցան ընկերային, քաղաքական նոր պայմաններ, որոնք ունեցան իրենց անմիջական ազդեցութիւնը Լ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական ներքին կեանքին վրայ:

Ամբողջ Ռուսաստանի մէջ ստեղծուած էր մեծ շարժում մը՝ բարելաւելու համար աշխատանքի դասակարգի տնտեսական միճակը, ընկերվարական գաղափարներ արագօրէն նուաճումներ կատարած էին զանգուածներու մէջ:

Ռուսեւճափոնական պատերազմի ճախողանքը շուարումի մատնած էր ցարական իշխանութիւնը. 1905ի յեղափոխութեան հետեւանքով Տուման (Ռորհրդարան) հրաւիրուեցաւ, սահմանադրական կարգեր յայտարարուեցան:

Մամուլի եւ խօսքի ազատութիւնը մեծ եռուղեւ ստեղծեց Կովկասի հայութեան մէջ: Գրուուած եկեղեցական կալուածներու վերադարձը, հաշթաթարական կոիւները, կենդանութիւն, ազգային շարժում ստեղծեցին արեւելահայութեան մէջ, որ նախապէս Հայ Դատի դոյութիւնը կը կապէր միայն արեւմտահայութեան հետ:

1905ին Քիֆիւսի մէջ հիմնուեցաւ «Յառաջ» օրաթերթը, որուն շուրջ խմբուեցան հայ մտաւորականութեան յաւաքային ղեկավարը: «Մրշակ»ը կորսնցուց իր նախկին հմայքը: Դաշնակցութիւնը սկսաւ հրատարակել, «Յառաջ»ի մատենաշար անունին տակ, բազմաթիւ դրժոյկներ, գլխաւորապէս նուիրուած ընկերային, տնտեսական հարցերու:

Դէպքերու զարգայման հետեւանքով, համառուսական շարժումներուն սկսած էր մասնակցել Դաշնակցութիւնը: Կովկասի մեր մարմինները ընդունած էին, «կովկասեան նախագիծ» անունին տակ, մեր ծրագրի պարզարանումը, ընկերվարական գաղափարներու աւելի յստակ իւրացումով:

Լեւոն Աթաբէկեանի գլխաւորութեամբ սկսաւ ձախ հոսանք մը: Ան կը պահանջէր, որ Դաշնակցութիւնը զրպոյի միայն արեւելահայ խնդիրներով եւ արեւմտահայերուն ձգուի իրենց դատի ղեկավարութիւնը:

Այս շարժումը յառաջ բերաւ դժգոհութիւն արեւմտահայ հայրուկներուն մէջ, որոնք կարծեցին թէ Դաշնակցութիւնը կը լքէր թուրքիոյ մէջ սկսուած շարժումը:

Ահա այս տարակարծութիւնները սկսան օլտադործել հայ պահ-

պանդականները, «Մշակ»ի խմբակի գլխաւորութեամբ, բայց թելադրութեամբ ուսական կառավարութեան գաղտնի բաժանմունքին:

Արեւմտահայ խմբակներուն մէջ ուժեղ դէմք մըն էր Միհրանը, բայց յաւակնոտ եւ փառամուլ մէկը, որ փորձեց իր շուրջ հաւաքել հայդուկները, նոյնիսկ յարձակուած գործեց «Յառաջ»ի խմբագրատան վրայ, բայց զուրս չպրտուեցաւ:

Ի վերջոյ ձախակողմեաններէն «անջատականներ» անունին տակ խմբակ մը հետեւեալ կազմակերպութեան: Իսկ խմբակետ Միհրան հետզհետէ դարձաւ կոյր գործիք մը ուսուստիկանութեան համար, որ շահագրգռուած էր Դաշնակցութեան պատակտումով:

Փաստօրէն հայ ժողովուրդի երկու հատուածներուն միացման գաղափարն էր, որ պիտի յաղթանակէր եւ պիտի ձախողէր պառակտումի փորձը, զոր կը քաջալերէր արտաքին թշնամին:

«Դրօշակ»ի 1906 Նոյեմբերի թիւին մէջ հրատարակուեցաւ Դ. Ընդհ. Ժողովի հրաւերը եւ նոյն ատեն հետեւեալը, «Դիմում» խորագրին տակ.

«Կովկասաբնակ տանկահայ դաշնակցական ներկայացուցչական համագումարը, որ հաւաքուած էր «կովկասեան նախագիծ» շուրջ տարածուած խնդիրներն բնեւում, ի միջի այլոց, բնուութեան առնելով վերջին 4-5 ամսուայ ընթացքում մամուլի մէջ եւ զանազան խստերում՝ յանուն տանկահայ դատի մղուած պայքարը, որով իբր թէ պաշտպան են հանդիսանում մեր դատին, յայտարարում է.

- 1) Որ դա հակայեղափոխական մուր տարրերի ազդեցիկ (գրգռում) է — զանազան մուր, ստոր, ետական նպատակներին համար:
- 2) Որ այսպիսի մի ընթացք լուր դաւանանական դիրք է տանկահայ դատի հանդէպ:
- 3) Որ Դաշնակցութիւնը իբր հայ ժողովրդի արդար դատի միակ պաշտպան, այսօր էլ գործում է նոյն նախագիծով՝ ինչ որ 16 տարուց ի վեր:

Համագումարը սրանով կոչ է անում ամբողջ հայ հասարակութեան եւ մասնաւորապէս կովկասի դաշնակցականներին, գգոյ մնալ ուղի հակայեղափոխական տարրերից եւ նրանց պրոպագանդից:

Կովկասաբնակ տանկահայ դաշնակցականների համադումար 30 Հոկտ. 1906

• • •

Լ. Յ. Դաշնակցութեան Դ. Ընդհ. Ժողովը, որ գումարուեցաւ 1907 Փետր.ին Վրէննայի մէջ, ընդունեց կովկասեան գործունէութեան նախագիծը, «որ 1905ի խորհուրդից ի վեր, հանդիսանում է իբրեւ մի

ֆազաֆական կոնտրապոզիտի կազմակերպութեան շարքերում եւ այդ շարքերից դուրս, եւ իր պարունակած սկզբունքներով մեր շարքերը ոգնւորելու փոխարէն, մի անըմբռնելի թիրիմացութեամբ ամենատրտալուր ընդհարումների եւ պառակտումների պատուակ եզաւ — ընդունուեց, վաւերացուեց, թէ ըստ իրաւատութեան, եւ թէ ըստ էութեան եւ դարձաւ այն հիմնաքարից մէկը, որի վրայ պէտք է յենուի Դաշնակցութեան սոցիալիստական գործունէութիւնը Անդրկովկասի հայ ժողովուրդի մէջ»:

Դ. Ընդհ. Ժողովին մասնակցող 21 մարմիններէն 20ը մերժեցին «Դաշնակցութիւնը երկու հատուածներէ — կովկասեան եւ Թրքահայկական — բաժնելու» առաջարկը:

Դաշնակցութիւնը Դ. Ընդհ. Ժողովէն դուրս կուզար աւելի քան երբեք միակամ եւ կենսունակ:

«Երոջակ»ի նոյն թիւին մէջ կը յայտարարուէր նաեւ Վարդոյի (Պուլկարի) եւ «Միհրանական խումբ»ի արտաքստուժը Հ. Յ. Դաշնակցութենէն: Իսկ 1907ի Յունիս-Յուլիս միացեալ թիւին մէջ յայտարարուեցաւ, որ Յունիս ին Արմաւիրի մէջ անարեկումի ենթարկուած էր Միհրանը: Դաւադիրը ստացաւ իր արժանի պատիժը:

ՀԱԱԳԱՅԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ Բ. ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԵՒ ՀԱՅ ԴԱՍԸ

1907 Օգոստոսին Հաագայի մէջ գումարուած Ոսկաղութեան Բ. Համաժողովին Հայ Դատը արժարձեցին երկու պատուիրակութիւններ:

Առաջինը նշանակուած էր էլմիածնի Կաթողիկոսին կողմէ. այդ պատուիրակութեան անդամներն էին Արեւմտեան Եւրոպայի Հայոց Առաջնորդ Գեղորդ եպիսկ. Իւթիւճեան, Աւետիս Ահարոնեան եւ Յ. Շահնազար: Երկրորդ պատուիրակութիւնը կը բաղկանար Հայասէր Եւրոպացիներէ՝ Վիկտոր Պերար, Փիէր Քիլեար, որոնք արտօնուած էին խօսելու նաեւ Անաթոլ Յրանսի եւ Յրանսիս տը Փրեսանսէի կողմէ:

Կաթողիկոսի պատուիրակութիւնը, Համաժողովին ներկայացուցած իր յուշագրին մէջ («Դրօշակ» 1907 Օգոստ.), նախ կ'անդրադառնայ 1878ի Պերլինի Վեհաժողովին, ճիշդ յօդուածով ճշդուած բարենորոգումներուն, 1895 Մայիսին վեց պատուիրակներու կողմէ Բ. Դրան ներկայացուած բարենորոգումներու ծրագրին եւ կ'ըսէ.

«Ահա տասը տարի է անցեր եւ ոչ մէկը այդ բարենորոգումներէն, որ այն ժամանակ կը նկատուէին ամիրածեշտ եւ բարեբար մոյնֆան մահմետական, որքան եւ քրիստոնեաներու համար, չիքականացաւ: Ընդհակառակը Թուրքիոյ հայերու դժբախտ կացութիւնը երթալով աւելի վատթարացաւ: Հազարաւոր հայեր բնաջնջուեցան կամ մասնակի կոտորածներով մահացան: Եւ Մուշի դաշտի դէպքերը անցեալ Յունիսին դարձեալ բաց արին 1894-95-96ի ջարդերու շրջանը:

«Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա. քերեսուն տարի ետք կուզայ խնդրելու ֆազաֆակիրք պետութիւններու գթութիւնը: Այսօր խոր ծերութեան մէջ ան չ'ուզեր աշխարհէն մեկնիլ, առանց կատարելու այս գերագոյն պարտքը դէպի իր ժողովուրդը»:

Պատուիրակութիւնը իր յուշագիրը յանձնած է Անգլիոյ, Ռուսիոյ, Ճրանսայի, Գերմանիոյ, Իտալիոյ, Մ. Նահանգներու եւ Աւստրալիոյ ներկայացուցիչներուն, խնդրելով նոյն ատեն ունկնդրութիւն, բերանացի տեղեկութիւններ ներկայացնելու համար:

Իսկ Հայաստաններու պատուիրակութիւնը իր դիմումին մէջ կ'ըսէ. «Ամերիկայի, Եգիպտոսի, Պարսկաստանի եւ Պուլկարիոյ ֆառասուն ֆազաֆներու հայ գաղութիւնները մեզմէ խնդրեցին Հաագա գումարուած ֆազաֆակիրք պետութիւններու մերկայացուցիչներուն ուշադրութեան յանձնել այն բողոքները, որ Թուրքիոյ դժբախտ հայ ժողովուրդը, ջարդերու և բռնութիւններու ենթակայ, ֆազգով ու կարիքով ջնջման մատնուած, չէր կարող ուղղակի ներկայացնել»:

Դարձեալ Պերլինի դաշնագրի ճիշդ յօդուածը եւ 1895ի բարենորոգումներու խոստումները յիշատակելէ ետք, կը շեշտուի Հայերու ենթարկուած ողբալի վիճակը, աւելցնելով, որ յարատեւ բռնութեան վիճակը քուրք պետութեան հայկական մահանգներուն մէջ, կը կազմէ մոյնֆան յարատեւ վտանգ աշխարհի խաղաղութեան համար. այնպիսի միջազգային բարդութիւններ կրնան ծագիլ այդ կացութենէն, որ առաջ կուզայ երապակեան ընդհանուր պատերազմ»:

Կոչը ստորագրած են Վիկտոր Պերար, Անաթոլ Յրանս, Յրանսիս տը Փրեսանսէ, Փիէր Քիլեար:

Մեծ պատուիրակներու ներկայացուցիչները նաժակով կը փութան պատուիրակութիւններուն յայտնել, որ պիտի չկրնան խնդրուած ունկնդրութիւնը շնորհել, որովհետեւ Հայկական Հարցի քննութիւնը, Լեւ առաւել լուծումը իրենց իրաւասութիւններէն բարձր է: Համաժողովի նախագահ պ. Նելիզով — Պոլսոյ ուսուցիչներ — պաշտօնական ունկնդրութիւն չ'ուզելով Հայ պատուիրակներուն, բերանացի Լեւ

յայտնած է վերելի բացատրութիւնը, թէ «հայկական խնդիրը համա-
ժողովի ծրագրէն դուրս է»:

Այս վճռական մերժումէն ետք, հայ պատուիրակութիւնը բո-
ղոքի գրութիւն մը կը ներկայացնէ Համաժողովին, յայտնելով, որ
«հայերու կացութիւնը Թուրքիոյ մէջ չի կրնար նկատուիլ Թուրքիոյ
ներքին քաղաքականութեան խնդիր», քանի որ **Պերլինի դաշնագրով** և
1895ի յուշագրով ան դարձած է միջազգային խնդիր:

Պատուիրակութիւնը նոյն ատեն միջազգային մամուլի մէջ
հրատարակութեան տուաւ բողոքի գրութիւն մը, կոչ ընելով քաղաքա-
կիրթ աշխարհի խղճին և ակելցնելով որ «մարտիրոս ժողովուրդի յու-
սախարութիւնը արդեօք վերջիվերջոյ չի՞ խախտեր իսպառ այդ ժողո-
վուրդի հաւատքը դէպի խաղաղ միջոցներու արժէքը»:

«Դրօշակ», պատուիրակութիւններու այս դիմումին արձագանդ
ըլլալէ ետք, կ'ակելցնէ.

«Այսպէս վերջացաւ այն դիմումը, որ հայ ժողովրդի որոշ շեր-
ջաններու մտայն կամ պակաս հաւանական յայտերի հետանկար էր գար-
յեցրել: Եւրոպական դիւանագէտները, ոռուսական ժողովուրդները
մտրոստող ցարի հրաւերով Հաագա համախմբուած՝ չկամեցան կամ
չկարողացան արդարութեան եւ իրաւունքի մի հատիկ գործ կատարել,
որ կարող էր նրանց դատարկ, անպտուղ եւ կեղծաւոր ժամանցի վիեր
մի փոքր լեցնել»:

ԳՈՓԵՆՀԱԿԻ ԸՆԿԵՐՎԱՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԶԵՆՈՒՆՈՒԹԵԱՄԵ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ
ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎ (1910 Օգոստոս)

1910 Օգոստոսի վերջերը, Գոփենհակի մէջ պատուիրակութեան Մի-
ջազգային Ընկերվարական Համաժողովը (*), մասնակցութեամբ մօտ 30
աղագերու և 900 պատգամաւորներու: Առաջին անգամ լրջաբար Թուր-
քիայէն կուսակցութիւն մը (Դաշնակցութիւնը) կը մասնակցէր Միջազ-
գայնականի Համաժողովին: Պատուիրակութեան մաս կը կազմէին Մի-
ջազգային Վարանդեան, Նիկոլ-Դուման, Շիրակունի (Մարտիրոս Յա-
րութիւնեան), Արմենակ Բարսեղեան, Հ. Յ. Դեան միջնորդութեամբ
ընդունուած էր Միջազգայնականի մէջ նաև Սեւանի կ'աշխատուորա-

կան կազմակերպութիւնը, որ սակայն չէր կրցած սեփական պատգամա-
ւորութիւն զրկել և զինք ներկայացնելու համար լիազօրած էր պուր-
կար ընկերվարականները: Համաշխարհային ընկերվարութեան առաջ-
նակարգ դէմքերէն ներկայ էին Ժոռէս, Ժիւլ Գէտ, Վայնան (Շրանսա),
Քէյր Հարդի, Մակտոնալտ (Անգլիա), Կառլ Կի, Յետկին (Գերմանիա),
Վիկտոր Առլեր, Պերներտորֆեր (Աւստրիա), Վանտերվալտ, Անսի
(Պելճիքս), Վան-Կոյ (Հոլանտա), Ֆերրի (Իտալիա), Պարլօ Իլլիգիաս
(Լեհաստան), Պիտանով, Լենին, Չերնով, Ռուբանովիչ (Ռուսա-
տան):

Գոփենհակի ընկերվար Համազումարին Հ. Յ. Դաշնակցու-
թեան կողմէ ներկայացուած բանաձեւեր կը մերկացնէր ոռու կառավար-
ութեան գրգռիչ քաղաքականութիւնը Պարսկաստանի և Թուրքիոյ
նկատմամբ: Բանաձեւեր կ'ըսէր.

«Նկատի ունենալով որ ոռու կառավարութիւնը սկիզբէն ի
վեր գործադրած է բոլոր միջոցները, վիժեցնելու համար Պարսկաստա-
նի սահմանադրական շարժումը. որ ան յաճախ նոյնիսկ զինեալ միջա-
մտութիւն ըրած է, այն պատրուակիմ տակ թէ կ'ուզէ կարգը սահմանին
վրայ պահպանել ու իր հպատակներուն կեանքը Պարսկաստանի մէջ
պաշտպանել, մինչդեռ իր իսկական նպատակն է կասեցնել պարսիկ
ոռակավարական ձգտումները. որ ան իր գործերուն եւ ոստիկանութեան
միջոցով Պարսից Ատրպատական նահանգին մէջ ամենախիստ ոռու-
ձգութիւններ ըրած է ապստամբ սահմանադրականներու եւ անոց զե-
կավար դաշնակցականներուն դէմ, որ մինչեւ այսօր տակաւին ցարա-
կան կառավարութիւնը բազմաթիւ դիմակաւորեալ գործակալներու մի-
ջոցով իր էնթրիկները եւ փրավոֆասիոնները կը շարունակէ, որ չնա-
յելով Պարսից կառավարութեան յաճախակի բողոքներուն, ոռու գոր-
քերուն մէկ կարեւոր մասը տակաւին Պարսից հողին վրայ կը գտնուի.

«Նկատելով ատկէ գատ՝ որ ոռու կառավարութիւնը մեծ եռան-
դով կը «գործէ» անեւ Թուրքիոյ մէջ եւ մանաւանդ Թրքահայաստանի
մէջ. որ ան շարունակ գործակալներ կը զրկէ քրտական յետաշրջակամ
աւստպետներու քով, զանոնք հայերու դէմ գրգռելով՝ երկիրը մշտա-
պէս խռով դրութեան մէջ պահելու եւ հակայեղափոխութիւն առաջ բե-
րելու նպատակով.

«Որ Պոլսոյ ոռու դեսպանը Էւ կարիմի ոռու հիւպատոսը այդ
իմաստով յատուկ հրահանգներ ունին.

«Նկատի ունենալով որ երբ ցարիզմին ազատասպամ ընթացքը իր
երկրին ներսը յաղթանակեց, ան այժմ չի կրնար հանդուրժել իր դրացի
երկու երկիրներուն մէջ մտցուած սահմանադրական կարգերուն եւ սիս-
դեմաթիկ ու յամառ կերպով ամէն ջանք գործ կը զնէ, վերանորոգելու

(*) Տես «Դրօշակ», 1910, թիւ 7-9:

համար Թուրքիոյ եւ Պարսկաստանի մէջ նախկին կամայականութեան սխաղեմը .

«Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ իր նիւթերը ունի այդ երեք պետութիւններուն մէջ, ամենաստիպողական կերպով կ'առաջարկէ եւրոպայի ընկերվար կուսակցութիւններուն, կիրառել իրենց ձեռքը գտնուող բոլոր միջոցները, ցարիզմին յետաշրջական շահատակութիւններուն վերջ դնելու համար» («Ազատամարտ», Կ. Պոլիս, 1910, Սկստ. 6) :

Ընկերվար համադումարը ընդհանուր բանաձեւեր կը քուէարկէ ի նպատ մահապատիժի վերացման, զինաթափութեան, միջազգային իրաւարարութեան, զազոնի դիւանագիտութեան ջնջումին եւ ինքնորոշման իրաւունքի՝ բոլոր ազգերուն համար :

• • •

Հ. Յ. Դ. Ընդհ. Ժողովը (1909, Վառնա) միաձայն բազմանց յայտնած էր, որ Ռուսաստանի դանազան ընկերվարական ու յեղափոխական հատուածները միանան ընդհանուր կռուի մէջ եւ որոշում տուած էր, որ մեր համապատասխան մարմինները այդ նպատակով զիմուձներ կատարեն : Ընդհ. Ժողովի յարտարարութիւնը կ'ըսէր .

«Ռուսական յեղափոխութիւնը տարուած գաղափարի վեհ քրքրիչով, չկռեց իր ուժերը, հաշուի չառաւ խոչընդոտներին ամբողջ լրջութիւնը եւ կազմակերպուած ուժի հակդէպ չպատրաստեց մարտակուր շարքեր... կուսակցութիւնները՝ ազանդական ոգիով տոգորուած՝ բաժնուած էին նայնիսկ կռուի ընթացքում... տարուելով հատուածամուկ նեղարտութեամբ... Հ. Յ. Դաշնակցութիւնը գալիս է այն հաստատ համոզման՝ որ Ռուսաստանի արդի սոցիալ-տնտեսական մտակայ գործունէութեան ծանրութեան կենտրոնը պէտք է համարել Կոնիտի՛ ՄիԱՊեՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԷՎՈՒՄԻ ԴԵՄ, որի գոյութեամբ չափազանց դժուարին, յաճախ ապարդիւն են աշխատանքների տնտեսական նուաճումները եւ անխուսափելի՝ ազգային հալածանքները... Ընդհանուր ժողովը հրահանգում է իր մարմիններին՝ արծարծել միւս կուսակցութիւններին եւ խմբակցութիւններին շրջաններում ստիպողական անհրաժեշտութիւնը մի ընդհանուր համագումարի, որին մասնակցէին ոչ միայն սոցիալիստական ու յեղափոխական, այլ եւ բոլոր կազմակերպուած ընդդիմադիր տարրերը» :

Գոհենձակի Միջազգային համաժողովը յարմար առիթ եղաւ ուսական կուսակցութեանց խորհրդակցութեան համար : Դաշնակցութեան նախաձեռնութեամբ ու հրաւերով միջկուսակցային խորհրդատու

ղով մը կը գումարուի : Ներկայ էին պատգամաւորներ ուս սոց. յեղ. կուսակցութեան, Լատիչ սոցիալ-դեմոկրատիայի, լեհական ընկերվար կուսակցութեան, հրէական «Սերպ»ի եւ Հ. Յ. Դ. եան եւ երկու Ֆին սոցիալ-դեմոկրատ, որպէս հիւրեր :

Նիստը բացաւ Հ. Յ. Դ. եան ներկայացուցիչը, ու Յրդ Ընդհ. Ժողովի որոշումը յիշատակելէ յետոյ, երկարօրէն ծանրացաւ ուսական կուսակցութիւններու ստուերոտ կողմերուն վրայ եւ առաջարկեց խորհրդակցիլ մարտական ուժերու համերաշխ գործակցութիւնը իրականացնելու շուրջ .

«Մեզ, դաշնակցականներս, — ըսաւ — ամենէն աւելի կը հետաքրքրէ կացութեան ՄԱՐՏԱԿԱՆ կողմը : Գուցէ այն է պատճառը, որ մենք սկիզբէն եղեր ենք միշտ գործնական կուսակցութիւն : Գուցէ այդ մեր քերութիւնն է : Գուցէ մեզանչեք ենք սոցիալիստական հաստատմի դէմ, սկիզբէն կեդրոնացնելով մեր ոյժերը գլխաւորապէս քաղաքական կռիւներու եւ ազատութեան տարրական նուաճումներու վրայ՝ թէ Թուրքիոյ եւ թէ՛ Անդրկովկասի մէջ... կը թուի, սակայն, թէ ցարական ինքնակալութեան գարիւրելի մնշման տակ, չկայ մեզ համար — Ռուսաստանի ընկերվարական կուսակցութիւններու համար — ստիպողական, հրատապ խնդիր, քան այդ տարրական ազատութիւններու նուաճումը — թէկուզ եւ «բուրժուական» ազատութիւններու — որոնք... անհրաժեշտ հանգրուանն են դէպի մեր ընդհանուր, մեծ իդէալը...»

«Ընկերներ՝, կարծեմ չեմ սխալիր, եթէ ըսեմ, որ ի շարս այն պատճառներու, որոնք յառաջ բերին համառուսական յեղափոխութեան փիսքով, ոչ-յետին տեղը կը բռնեն այս երկու պատճառները .—

«1. Յեղափոխական ոյժերու պատակումն ու երկպառակութիւնը — մէկ կողմէն :

«2. ՄԱՐՏԱԿԱՆ տարրին պակասը. գանգուածային ու ազգական պատրաստութեան ծայրայեղ թուլութիւնը — միւս կողմէն :

«... Շնորհակալութիւն Հ. Յ. Դ. եան կողմէ՝ ձեր տուած արձագանքին համար : Ձեզի... հասկնալի կը լինի, թէ ինչու այդ կազմակերպութիւնը... բռնուած է ոյժերու միացման մտաւազութեամբ : Եւ այն՝ ի դէմս իր երեք խոշոր հատուածներու — ուսսահայ, քրքահայ եւ պարսկահայ... Թրքահայերն ու պարսկահայերն եւս խորապէս շահագրգռուած են այդ խնդրով : ԹՌԻՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆԱՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԼԻՆԵԼ ԹԱՏԵՐԱԲԵՄ ՌՈՒՍ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԴԱԿԵՐՈՒՅ...»

Յետոյ խորհրդակցութիւնները կը սկսին Վիքտոր Ձերնովի նախաձեռնութեան տակ : Կուսակցութիւններու ներկայացուցիչները կուտան զեկուցումներ, իւրաքանչիւրը իր ջրջանի կազմակերպական վիճա-

կի եւ իր յեղափոխական կացութեան մասին, կանգ առնելով մասնաւորապէս ՄԱՐՏԱԿԱՆ խնդրին վրայ:

Ժողովը բաղձանք յայտնեց, որ այդ երեք կուսակցութիւնները մօտիկ ապագային հրաւիրեն նոր խորհրդատողով — մասնակցութեամբ այդ կուսակցութեանց զաղափարակից կազմակերպութիւններու, — որ պիտի սահմանէր համերաշխ գործակցութիւն՝ քաղաքական հետադայ ձեռնարկներուն համար:

ՎԱՐԱՆՅՈՎ-ԴԱՇԿՈՎ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Վարանցով-Դաշկով Կովկասի փոխարքայ Նշանակուելէն ետք, աստիճանաբար մեղմ քաղաքականութիւն մը սկսաւ Ռուսաստան դէպի հայերը: Այս փոփոխութեան մէջ, նոր փոխարքան գիտցաւ օգտագործել հայերու մէջ եղած ուսասիրական տրամադրութիւնները:

Ռուշեիկեան «Կարմիր Դիւան» ամսաթերթի 26րդ զբոյն մէջ հրատարակուեցան փոխարքայ Վարանցով-Դաշկովի նամակները ուր՝ գուռած ցար Նիկոլա Բ.ին: Ասոնցմէ մէկ մասը կը շօշափեն ուսասայ յարաբերութիւնները և Ա. Խոնդկարեան հրատարակեց «Հայրենիք» ամսագրի 1929 թիւ 7ին մէջ(*): Ստորեւ կուտանք Վարանցով-Դաշկովի կողմէ 1912 Հոկտ. 10ին ցարին գրուած նամակը, ուր շատ յստակ կերպով կը բացատրուի այդ թուականներուն Ռուսաստանի որդեգրած նոր քաղաքականութիւնը դէպի հայերը:

«Ձերդ Կայսերական Մեծութիւն,

«Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ թրքահայերից եւ ուսսահայերից բազմացած իր հօտի խնդրանքներին հետեւեմքով՝ ենթադրում էր մեկնել Փեթրսպուրկ, որպէսզի անձամբ ամենապատեհօրէն դիմէ միջնորդութեամբ Ձերդ Կայսերական Մեծութեան պաշտպանութիւն ցոյց տալու թրքահայերին քրդական յարձակումների դէմ: Եւ ինձ վրայ համարձակութիւն վերցրի մերժելու կաթողիկոսի մեկնումը եւ առաջարկեցի նրան արկանելու իր միջնորդութիւնը Ձերդ Մեծու-

(* «Հայրենիք» ամսագրի 1930, թիւ 5 և 6 մէջ, Ա. Խոնդկարեան հրատարակած է նաեւ «Ճարական Ռուսաստանը եւ կովկասահայութիւնը» խորագրով յօդուածաւարք մը, ներկայացնելով Ստոլիպինի եւ Վարանցով-Դաշկովի նամակները: Հոն կան շահեկան տեղեկութիւններ ուսսական քաղաքականութեան տարբեր փուլերու մասին:

թեան բարձրագոյն բարեկայեցողութեան: Օգտուելով նախարարների խորհուրդի նախագահի սիրալիր համաձայնութիւնից — որին եւ ծանօթացրել էր կաթողիկոսի միջնորդութեան հետ — եւ պարտք էր համարում ամենապատեհօրէն ներկայացնելու Ձերդ Կայսերական Մեծութեան արժայական ուշադրութեան նաեւ իմ անձնական մի քանի նկատումները յիշեալ միջնորդութեան առթիւ:

«Ձերդ Մեծութեան յայտնի է, որ կովկասի վերաբերեալ Թուրքիայի հետ ունեցած մեր յարաբերութիւնների պատմութեան ամբողջ ընթացում եւ մինչեւ 1877-1878 թ. թ. առաջին կեսին պատերազմը, որ վերջացաւ Պաքումի եւ Կարսի շրջանների մեր հողերին կցումով, ուսսական քաղաքականութիւնը Պետրոս Մեծից սկսած անդադար հիմնուել է դէպի հայերն ունեցած բարեացական վերաբերումների վրայ, որին եւ վարձահատոյց են եղել հայերը, ցոյց տալով մեր գործերին ներդրում օգնութիւն պատերազմական գործողութիւնների ժամանակ: Միացնելով մեր անբարեկամութիւններին այսպէս կոչուած Հայկական Շերշանը, որտեղ գտնուում էր էջմիածինը՝ հայ լուսաւորչականութեան այդ որդանը, կայսր Նիկոլայ Պաւլովիչը քիչ ջանք չգործադրեց, որպէսզի էջմիածնի պատրիարքից ստեղծէ մի հոգաբարձու թրքական եւ պարսկական հայերի համար, իրաւացիօրէն ենթադրելով դրանով ձեռք բերել Ռուսաստանի համար օգտակար մի ազդեցութիւն Փոքր Ասիայի քրիստոնեայ ազգաբնակչութեան վրայ, այն երկրամասի ազգաբնակչութեան, որտեղով անցնում է մեր վազեմի առաջնապագաման ճանապարհը դէպի հարաւային ծովերը:

«Հովանաւորութիւն ցոյց տալով հայերին, մենք ձեռք էինք բերում հաւատարիմ դաշնակիցներ, որոնք միշտ ցոյց են տուել մեզ շատ մեծ ծառայութիւններ: Եթէ պատահել է, որ այդ քաղաքականութիւնը երբեմն էլ մեզ չի յաջողել՝ Թուրքիայի հակառակութեան շնորհիւ, որ ցանկացել է Կոստանդինուպոլսի պատրիարքի ձեռքում կենդանացնել հոգեւոր ազդեցութիւնը թրքահայերի վրայ, բայց, յամենայն դէպս նա առաջ է տարուել անշեղ եւ հետեւողական կերպով, իմաստաբար դար ու կիսուայ ընթացում: Վերջին անգամ այդ քաղաքականութիւնը իր յետադարձ արտայայտութիւնը է գտել Սամ-Սոնֆանոյի դաշնագրի մէջ, որի 16-րդ յօդուածի համաձայն Բ. Դուռը պարտաւորուել է՝ առաջ գործերը Հայաստանում բողոքելու սպառնալիքի տակ՝ անյապաղ իրագործելու տեղական պահանջներից բխող բարեկարգումներ ու բարեկարգութիւններ այն նահանգներում, որոնք բնակուած են հայերով, ապահովել ներքին կեանքը հարեւան քրդերից: Բարձր Դրան այդ պարտաւորութիւնը յետագայում հաստատուեց Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածով, բայց արդէն առանց ուսսական զեմքի սպառնալիքի, որը բաց բողոքուեց դաշ-

նագրում մեծ պետութիւնների համաձայնութեամբ եւ հակառակ Ռուսաստանի գանկութեան:

«Միայն անցած դարի 90-ական թուականներին Ռուսաստանի հայերի հանդէպ ունեցած այդ վաղեմի փառաբանութիւնը կտրուկ կերպով փոխուեց Սասունի կտորածի ժամանակ, երբ հայերը ստացան իշխան Լորանով-Ռոստովսկուց կտրուկ մերժում իրենց խնդրին՝ միջամտութիւն ցոյց տալու Թուրքիայի առաջ: Ձերդ Մեծութեան շատ լաւ յայտնի է. թէ որպիսի տխուր հետեւանքների բերեց մեր փառաբանութեան այդ փոփոխութիւնը, ստեղծելով՝ Ռուսաստանի ներսում հայ եկեղեցու նկատմամբ ձեռնարկած անյաջող փայլերի հետեւանքով, հսկառուս տրամադրութիւններ առհասարակ բոլոր հայերի, եւ այդ թում նաեւ ռուսահայատակների մէջ, որոնք հէնց այդ պատճառով մղուեցին ռուս կառավարութեան թշնամի յեղափոխական շարժումների գիրկը: Նշանակելով ինձ կովկասի փոխարքայ այն նպատակով, որ ես հանգրստացնեմ յեղափոխական հրդեհով բռնավառուած այդ ծայրագաւտոր, Ձերդ Մեծութիւնը բարեհաճեց, համաձայն իմ խնդրի, բեկանել այն բոլոր կարգադրութիւնները, որոնք տրուեցներ էին յարուցել ռուսահայերի մէջ: Ձերդ Մեծութեան իմ հանդէպ ցոյց տուած այդ արքայական բարձր վստահութիւնը, — հակառակ բազմաթիւ պետական գործիչների կարծիքի, որոնք դատապարտում են իմ հայերի հանդէպ ունեցած փառաբանութիւնը — միակ բանն էր, որ ինձ ոյծ էր ներշնչում անշեղ կերպով առաջ տանելու այդ փառաբանութիւնը. բայց եւ փոխարէնը ես այժմ բախտաւոր եմ գեկուցանելու Ձեզ, Տէր Արքայ, որ Ձերդ Մեծութիւնը ունի այժմ ոչ միայն հաւատարիմ հպատակներ յանձնու ռուսական հայերի, այլ եւ դէպի Ձեզ են ուղղուած թրքահայերի հայեացքները, որոնք խոր կերպով գիտակցում են, թէ միայն Ռուսաստանից եւ նրա գերագոյն Առաջնորդիցն է, որ նրանք կարող են ստանալ իրենց կեանքի, պատուի եւ գոյքի իրական պաշտպանութիւնը՝ հանդէպ քրդական չղաղարող գազանութիւնների:

«Ես կարծում եմ, Տէր Արքայ, որ այժմ հասել է ժամանակը պիտելու թրքահայերին հովանաւորելու ռուսական վաղեմի փառաբանութեան, եւ հարկաւոր է միայն փնտռել այն ձեւերը, որ պէտք է բնորոշ այդ հովանաւորութիւնը ներկայ պայմաններում: Իմ համեատ կարծիքով, պէտք է որ մենք կտրուկ յայտարարութիւն անենք Բարձր Դրան՝ յենուեղով Պերլիի դաշնագրի վրայ՝ հայերի ապահովութիւնը քրդերից երաշխաւորելու մասին: Ըստ իս չէ կարելի բաց թողնել մեր ձեռքից յոգուտ հայերին միջամտութիւններ անելու ձեռնբէցութիւնը, մինչդեռ լրագրներում արդէն կայ՝ գուցէ եւ սխալ՝ տեղեկութիւն այն մասին, թէ մի քանի հայ փառաբանութիւն խաղաղագներ (փոխտիկու-

ներ) դիմել են կուս Բերնշտորֆին, խնդրելով Աւստրիայի միջամտութիւնը: Եթէ մենք այդ ուղղութեամբ չանենք առաջին փայլը եւ մեծ պետութիւններից մի ուրիշը անէ, դրանով մեծ հարուած կը հասցուի Ռուսաստանի Փոքր Ասիայի քրիստոնեաների մէջ ունեցած վարկին. իսկ մեր լուրերը հայ ժողովրդի պաղատանքների հանդէպ ներկայ վայրկեանում, թրքես. նրա կողմից մեկնաբանուի այնպէս, որ մենք նրան առաջարկում ենք ընդմիշտ թողնել այն յոյսերը, որ նա դրել էր իր մինչեւ այսօրուայ միակ թագակիր հովանաւորողի՝ ռուս ցարի վրայ եւ ապագայում պաշտպանութիւն փնտռել Ռուսաստանից դուրս:

«Այդպիսով մի բացարձակ միջամտութիւն յոգուտ թրքահայերի պաշտպանութեան անհրաժեշտ է. յատկապէս, ներկայումս, որպէսզի մենք ոչ թէ դէն հրենք, այլ նախապատրաստենք մեզ համակիր ազգաբնակչութիւն այն շրջաններում, որոնք, իրերի ներկայ դրութեան ժամանակ, կամայ թէ ակամայ, կարող են շատ դիւրութեամբ դառնալ մեր պատերազմական գործողութիւնների վայր:

«Անելով այդպիսով մի կտրուկ միջամտութիւն, միեւնոյն ժամանակ մենք պէտք է. ըստ իս, շեշտենք որ դրանով մենք նպատակ չունինք հողային նուաճումներ անելու ի հաշիւ Թուրքիայի, եւ այդ նրա համար. որպէսզի շփոթութիւն առաջ չբերենք ոչ միայն թուրքերի, այլ եւ հայերի մէջ, որոնք տեսչուս են միանալ Ռուսաստանին: Իրականի մէջ, այսպէս կոչուած թրքական Հայաստանի գրաւումը, որի բնակչութիւնը կազմուած է առաւելապէս վայրենի քրդերից, ներկայ ժամանակում կարող է միայն վնասակար լինել մեզ համար, ստեղծելով մեծ հոգսեր այդ խայտաբղէտ, միմեանց թշնամի եւ մոլեռանդ ազգաբնակչութեամբ լցուած երկրի կառավարութեան գործում:

«Վերջում չեմ կարող թագցնել Ձերդ Մեծութիւնից, որ թրքահայերի պաշտպանութեան համար իմ ծրագրած դիւանագիտական միջամտութիւնը կը լցնի նրանց ռուսական ցեղակիցների սրտերը հաւատարիմ հպատակութեան սիրոյ եւ անձնուիրութեան զգացումներով հանդէպ իրենց միապետի. սրի հովանու տակ նրանք անկեղծ կերպով կը ցանկանան բարօրութիւն ամբողջ հայ ազգին:

«Ձերդ կայսերական Մեծութեան հաւատարիմ հպատակ՝

ԿՈՄՍ Վ.Ս.ՐԱՆՏՈՎ-ԴԱՇԿՈՎ»

ՌՈՒՍԱՍԱՆ ԵՒ ՀԱՅԿ. ԲԱՐԵՆՈՐՈՎՈՒՄՆԵՐՈՒ ՎԵՐՋԻՆ ՓՈՒԼԸ (1912 - 1914)

1912ի Պալքանեան պատերազմը կողկասի հայութեան մէջ նոր շարժում մը կը ստեղծէ ղէպի թրքահայութիւնը: Ցարական կառավարութիւնը կը դադրեցնէ իր հալածանքը Դաշնակցութեան ղէմ: Այնքան մեծ ազմուկով սկսուած դատավարութիւնը անսպասելիօրէն մեղմ վըճիռներով կը վերջանայ 1912ի սկիզբը:

1912ի Հոկտեմբերին վերջերը Թիֆլիսի մէջ կը զուճարուի խորհրդակցական ժողով մը. ներկայ կ'ըլլան պատգամաւորներ Բազուէն, Երեւանէն, Ախալցխայէն, Նոր-Նախիջևանէն, Արմաւիրէն, Պաթումէն եւ այլ վայրերէն, իսկ Թիֆլիսէն՝ զանազան մշակութային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Ժողովը կ'ունենայ երկու նիստ եւ կ'որոշէ (*):

Ա.— Հրաւիրել մօտ ապագային աւելի լայն կազմով նոր համազումար մը, ըստ կարեւորին բոլոր հայրենակ կարեւոր վայրերու ներկայացուցիչներէն, ընտրելու համար լիազօր մարմին մը հայկական հարցին համար աշխատելու առաջադրութեամբ:

Բ.— Դիմել Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ խնդրել, որ ան յանուն հայութեան ղիմում ընէ Նորին Մեծութեան Ռուսաց Կայսեր՝ օգնութեան հասնելու թրքահայ ժողովուրդին, այս տազնապալից օրերուն: Ժողովը կը մշակէ այդ մտքով բանաձեւ մը եւ յատուկ պատգամաւորութեան ձեռքով գայն կը ներկայացնէ կաթողիկոսին:

Նոյն ժողովին մէջ խնդիր կ'ըլլայ նաեւ թրքահայերու ինքնապաշտպանութեան մասին, բայց մեծամասնութիւնը կ'որոշէ գոհանալ ղիմումներով:

Կ'ընտրուի ժամանակաւոր Բիւրօ մը, բաղկացած 7 հոգիէ՝ Ալ. Պատրիսեան, Ս. Յարութիւնեան, Ա. Գալանթար, Հ. Առաքելեան, Ա. Պօստեան, Յովհ. Թումանեան եւ Ն. Աղբալեան: Բիւրօն պիտի զբաղէր ընթացիկ գործերով եւ պատրաստութիւններ պիտի տեսնէր հրաւիրելու Թիֆլիսի մէջ նոր, աւելի բազմամարդ համազումար:

Համազումարի որոշումով հետեւեալ ղիմումը կը կատարուի Գէորգ Ե. Կաթողիկոսին.

«Ձերդ Սրբութիւն,

«Թիֆլիսի հայ հասարակութեան պատկանող անձանց մի խումբ, որ բաղկացած է Թիֆլիսի հայ կրթական եւ բարեգործական հիմնարկութիւնների. մամուլի եւ հասարակական այլեւայլ խաւերէ մերկայացու-

ցիչներից, բնութեան աննյով թրքահայերի դրութիւնը, որ անսանկի է դարձել նրանց կեանքի, պատուի եւ գոյքի վրայ գործադրուող անընդհատ բռնութիւնների հետեւանով եւ չտեսնելով թիւրքաց կառավարութեան կողմից ձեռք առնուած իրական միջոցներ եւ երաշխիքներ, որոնք ուղղուած կը լինէին այդ երեւոյթները վերացնելու գործի օգտին եւ անկարող լինելով այնքա լուռ եւ անկարեկից լսել իրանց եղբայրների վերայ կատարուած այդ զազանութիւնների մասին, դիմում է Ձեր Սրբութեան. իրրեւ թէ՛ Ռուսաստանի եւ թէ Թուրքիայի հայ ժողովրդի, նոյնպէս եւ բոլոր հայերի հոգեւոր գլխին, խնամարար խնդրելով գիմում անի թագաւոր կայսրին, միջնորդելով Թուրքիայի հայ ժողովուրդի պաշտպանութեան մասին տանգամներից եւ իրաւագրկաթիւնից. Մեք հաստատապէս հաւատում ենք, որ իրրեւ Արեւելի քրիստոնեաների մշտական պաշտպան, նոյնպէս եւ իրրեւ մի մեծ պետութիւն, որ Պերլինի դաշնագրով իր վրայ է վերացրել Թուրքիայի հայաբնակ վիլայէթներում անհրաժեշտ բեֆորմներ մտցնելու հոգը. ռուսական պետութիւնը առանց ուշադրութեան չի թողնի Ձեր Սրբութեան եւ ի դէմս ձեր հօտի՝ նրա հաւատարիմ որդիների խնդրանքները, եւ իր ոյժեղ հովանաւարութեամբ եւ միջամտութեամբ վերջ կը դնէ մեր եղբայրակիցների տանգամներին, նորից ամբողջ աշխարհի առաջ կը յայտնագործէ իր բարձր պատմական առաքելութիւնը Մերձուր Արեւելու»:

Նոյն թուի Նոյեմբեր 25ին, Թիֆլիսի մէջ կը զուճարուի երկրորդ համազումարը, որուն ներկայ կ'ըլլան պատգամաւորներ Թիֆլիսէն, Բազուէն, Նոր Պայագիտէն, Պաթումէն, Հալաբիսէն, Հին Նախիջևանէն, Շուշիէն, Թիֆլիսի հայ կաթողիկ համայնքէն, նաեւ ներկայացուցիչներ՝ «Հորիզոն» եւ «Մշակ» խմբագրութիւններէն: Ժողովը կը վերջնորէ նախորդ Բիւրօն, անոր կազմին վրայ աւելցնելով Կ. Ստեփանեանը եւ Ա. Զամախանը: Համազումարը հետեւեալ հրահանգները կը մշակէ Բիւրոյի համար. 1) Օժանդակել Նորին Վեհափառութիւն Կաթողիկոսին իր գործունէութեան մէջ հայկական հարցի վերաբերմամբ. 2) Կապեր հաստատել Պոլսոյ, Փարիզի եւ ուրիշ վայրերու հայ մարմիններուն հետ, որոնք նպատակ ունին աշխատելու հայկ. հարցին համար. 3) պրօպագանտի միջոցով նպատաւոր տրամադրութիւն ստեղծել ռուս հասարակութեան եւ վարիչ շրջանակներու մէջ ղէպի հայկ. հարցը: Գալով ինքնապաշտպանութեան խնդրին, ժողովը միաձայնութեամբ կ'ընդունի անոր կարեւորութիւնը եւ անհրաժեշտութիւնը, բայց պարտաւորիչ որոշումներ չի տար այդ խնդրի մասին:

Գէորգ Կաթողիկոսը, Թիֆլիսի նորակազմ Բիւրոյի ղիմումին վրայ հիմնուած, փոխարքայ Վարանցով-Դաշկովի միջոցով աղերսազէր մը կ'ուղարկէ Նիկոլա Յարին, խնդրելով որ Լոնտոնի խորհրդատու-

(*) Լէօ՝ «Անցեալից», էջ 245:

վին մէջ, որ պիտի մշակուէին Պաշտանեան պատերազմին վերջ զնոյ հաշտութեան պայմանները, նկատի առնուէր նաեւ Հայկական Հարցը: Կաթողիկոսը նոյն ատեն Եւրոպական պետութիւններու մօտ ղիմումներ կատարելու համար պատուիրակ կը նշանակէ Պօղոս Նուպար Փաշան:

Սակայն 1912 Դեկտեմբեր 22ին, փոխարքայ Վարանցով-Դաշկով կը զրէ կաթողիկոսին հետեւեալ պատասխանը.

«Ձեր սրբութիւնը հայ ժողովրդի անունից իմ միջոցով ղիմեցիք խնդրելով, որ պաշտպանութիւն ցոյց տրուի ֆոքր Ասիական Թուրքիայում քրտերի ձեռքով հարստահարուող հայ ազգաբնակչութեան եւ որպէսզի նա ընդունուի Ռուսաստանի հովանաւորութեան տակ: Այս միջնորդութիւնը ներկայացուցեց ի բարի հայեցողութեան նորին կայսերական մեծութեան. եւ քաղաք կայսրը բարեհամութիւն ունեցաւ վերաբերուել հայ ժողովրդի վիճակին կատարեալ բարեացակամութեամբ:

«Այժմ կայսերական կառավարութիւնը առաջարկութիւն է արել Թուրքիոյ կառավարութեան, ցոյց տալով նրան, որ մեր ունեցած տեղեկութիւններով հայերի դուրսիւնը Փոքր Ասիայում վերջին ժամանակները վատացել է եւ առաջ է բերում արդարացի գահգատներ քրտերի կողմից եղած հարստահարութիւններին եւ անձնակցան ու կալուածական ապահովութեան բացակայութեան վրայ. բանքը, որոնք առաջանում են վարչական անբարեկարգութիւնից եւ վատ կողմից: Դրա հետ միասին Թուրքիային ցոյց է տրուած, որ նրա համար անհրաժեշտ է այժմից իսկ լրջօրէն զբաղուել վերանորոգումներով քիւրֆաց Հայաստանում եւ լաւացնել վարչութեան կազմը, մտնանշելով, որ քրիստոնէայ հպատակների օրինաւոր շահերի արհամարհումը եղել է մի շարք տարիների ընթացքում Թուրքիայի համար մշտական խռովութիւնների եւ բարդութիւնների ազդիւր նրա եւրոպական նահանգներում եւ վերջի վերջոյ բերել հասցրել է Թուրքիոյ համա դժբախտ պատերազմին Պալեաններում, նրա բոլոր հետեւանքներով:

«Հետեւելով դարաւոր անաղութիւններին եւ խորին գգացմունքով վերաբերուելով հայ ժողովրդի տանջանքներին, կայսերական կառավարութիւնը մտադիր է այսուհետեւ էլ ամենաբարեացակամ կերպով վերաբերուել Թուրքիայում կեղեքուող հայ ժողովրդի կարիքներին եւ ջանքեր գործադրել գոյութիւն ունեցող գեղձումները հետացնելու եւ անհրաժեշտ բարենորոգումները գործադրելու նպատակով:

«Կայսերական կառավարութիւնը, սակայն հենց իրանց, ՀԱՅԵՐԻ ՇԱՀԵՐԻՆ ԲՈՂՈՐՈՎԻՆ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԵԱՆ Է ՀԱՄԱՐՈՒՄ, ՈՐ ԹՈՒՐԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ՔՆՆՈՒԻ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՆՑԵՐՏԻ ԿՈՂՄԻՑ յառաջիկայում, պալեանեան նգնաժամը հարթելու համար գումարուելիք կոնֆերանցիայում, որովհետեւ կատարեալ հիմք ունի

կասկածելու, թէ եւրոպական պետութիւնները միակամ կը լինեն հայերի համար կենսական հարցի լուծման մէջ: Եւ սակայն այդպիսի միակամութեան բացակայութիւնը պետութիւնների մէջ եւ, դրա հետեւանքով, տարաձայնութիւնների ծագումը կը ստեղծեն, ինչպէս այս ապացուցիլ է տխուր պատմական փորձը, չափազանց բարեպատեհ միջավայր տեղական բուրժ վարչութեան համար խուսափողական վերաբերմում ցոյց տալու դէպի հայերի դուրսեան բարելաման գործը:

«Գրաւելով ձեր սրբութեան ուշադրութիւնը մանաւանդ վերջին հանգամանքի վրայ, եւ առանձնապէս կարեւոր կը համարէի, որ ներկայ վճռական թույլին հայեր ցոյց տային առանձին զսպաւածութիւն ու տակտ եւ անժամանակ հաւաքական ղիմումներով չբարդացնեն կայսերական կառավարութեան համար թրփահայերի վիճակի բարելաման խնդիրը:

«...Ես լիապէս համոզուած եմ, որ ձեր սրբութիւնն իր ծերունուզարդ հեղինակութեամբ կը կարողանաք ներգործել հայերի վրայ հենց իրանց հայերի օգտի համար ցանկալի ուղղութեամբ»:

Վարանցով-Դաշկովի այս պատասխանը դեռ չստացուած, Կաթողիկոսը նոր աղերսագիր մը կը զրէէ Յարին, դարձեալ խնդրելով որ Լոնտոնի խորհրդաժողովը սեղանի վրայ զէն Հայկական Հարցը եւ այլ աղերսագիրը մասնաւոր պատուիրակութեամբ կ'ուղարկէ Թիֆլիս փոխարքային ներկայցնելու:

Պատգամաւորներ Մեսրոպ Եպիսկոպոս, Բազրատ վարդապետ, Ալեքսանդր Նատիսեան եւ Սամսոն Յարութիւնեան կը ներկայանան Փոխարքային 1912 Դեկտ. 26-27ին եւ կուտան կայսեր անունով յիշատակագիրը: Փոխարքան կ'ըսէ, որ արդէն կաթողիկոսին պատասխանած է թրքահայ հարցի մասին, կը կարողացուի այդ գրութիւնը, կը քննուի ներկայացուած հարցը: Եւ երկրորդ օրուան տեսակցութեան ատեն, փոխարքան հետեւեալ կերպով կը ձեռակերպէ տեղի ունեցած խօսակցութիւնը.

«1. ~ Կ. Պոլսի ոռոսաց ղեսպանին եւ Տանկաստանի հիւպատոսներին հրահանգ տրուի, որ շարունակեն պաշտպանել տանկաց կառավարութեան առաջ հայերին քրտական եւ թրքական նշումներից:

Բացատրուեց որ նախարարապետ Կոկոլցեւի եւ արտաքին գործոց նախարարի խորհրդի հիման վրայ եւ բոլոր կողմերի հայերի գանկութեան համաձայն՝ կաթողիկոսը նշանակեց Պօղոս Փաշա Նուպարին իր կողմից ներկայացուցիչ եւրոպական պետութեանց ներկայացուցիչների կոնֆերանսում աշխատելու Տանկահայաստանի բարենորոգումների համար ուսակական կոնտրոլի տակ:

կաթողիկոսը դեռ հրահանգ չէ տուել Նուպար Փաշային, որ սեղի պիտի ունենար ոռուսաց կառավարութիւնից պատասխան ստանալուց յետոյ : Նուպար Փաշան իր կողմից, իր անհատական հեղինակաւոր դիրքի շնորհիւ կատարել է մասնաւոր դիմումներ : Իսկ լաշտօնական դիմումներ կատարելու համար, հարկ է համարել խնդրելու հեռագրով կաթողիկոսից ոռուսաց կառավարութեան վերաբերմունքը, որը հարցումից անկախ պիտի հեռագրուէր նրան : Իսկ այժմ ստացած պատասխանը շատ ծանր կացութիւն կը ստեղծէ : Արդեօք Նուպար Փաշան պէ՞տք է շարունակէ վեհափառի կողմից երոպական պետութեանց մօտ աշխատանքը թէ դադարի իր պաշտօնից : Վերջին դէպքը ծանր կը լինի կաթողիկոսի եւ Տանկահայոց համար : Փոխարքան համաձայնելով հիմնաւոր առարկութեանց հետ՝ ձեւակերպեց մօտաւորապէս հետեւեալ կերպով .

«2.— Պօղոս Փաշա Նուպարը նշանակուած է կաթողիկոսի կողմից, հաւանութեամբ պատրիարքի եւ Ազգային ժողովի, որ աշխատի եւրոպական կառավարութեանց մօտ ճիշտ յօդուածի իրագործման համար, հայաբնակ նահանգներում թեփորմներ մտցնելու վերաբերմամբ ոռուսաց կառավարութեան նախաձեռնութեամբ եւ նրա կոնտրոլի տակ :

«Բացատրուեց, որ Կ. Պոլսում տանկաց կառավարութիւնը վախճնալով օտար միջամտութիւնից հայկական հարցի առթիւ եւ ցանկանալով առաջն առնել այդպիսի միջամտութեան, ըստ իր նախնաւանդ սովորութեան, կազմել է մասնախումբ կոչելով ներքին գործոց նախարար Բեշիտ պէշը մի քանի հայերին, որպէս թէ հայաբնակ գաւառների վերանորոգման մասին խորհրդակցելու : Բացատրուեցին այդ կեղծ քայլի շարժառիթները : Փոխարքան գրեց մասնաւորապէս հետեւեալը .

«3.— Ներքին գործոց նախարար Բեշիտ պէշը նշանակել է այժմ Պոլսում մի մասնախումբ, որի մէջ նախարարի նշանակումով չորս հայ եւ մասնակցում են : Այդ մասնախումբը ոչ մի վստահութիւն չի վայելում հայերի կողմից : Դրանով տանկաց կառավարութիւնը կամենում է ոռուսաց միջամտութեան առաջն առնել :

«Շեշտուեց հետեւեալ կէտը, որ եւ գրուեց .

«4.— Բոլոր հայերը առանց կուսակցական խտրութեան, համաձայն են, որ Տանկաստանի թեփորմների նախաձեռնողը լինի Ռուսաստանը եւրոպական պետութեանց համաձայնութեամբ, եւ թեփորմների իրագործման կոնտրոլը պատկանում է Ռուսաստանին » :

«5.— Պերլինի կոնգրեսի ճիշտ յօդուածի իրագործման ու վերահսկողութեան յանձնելը Ռուսաստանին յաջողեցնելու համար, պէտք է կաթողիկոսի կողմից եւրոպական պետութեանց մօտ պատգամաւորու-

թիւններ նշանակել, որպէսզի դիպլոմատիական շրջաններում տրամադրութիւն ստեղծուի յօգուտ ոռուսական նախաձեռնութեան և կոնտրոլի :

«6.— Երբ որ յարմար ըստէն կը լինի, կաթողիկոսը բազմաւոր կը համարի իրեն ներկայանալ թագաւոր կայսեր իր հօտի, տանկահայ ժողովրդի վիճակի բարեխաւման համար անձամբ հայցելու :

«Քանի որ փոխարքան ցոյց էր տալիս բարեացակամ տրամադրուելու եւ մի քանի անգամ եւս յայտնեց իր անձնական կարծիքը, թէ կաթողիկոսն ու հայ ժողովուրդը, ինչպէս եւ կաթողիկոսի ներկայացուցիչ Պօղոս Փաշա Նուպարը, պէտք է աշխատին յաջողացնել Ռուսաստանի նախաձեռնութեամբ եւ կոնտրոլի տակ թեփորմներ մտցնել տալու Տանկահայաստանում, պատգամաւորութիւնը խնդրեց, որ եթէ հնարաւոր է՝ մի նոր լրացուցիչ նամակով յանուն վեհափառ կաթողիկոսի՝ յայտնէ փոխարքան, թէ հայկական հարցը չի փակուում, այլ ընթացքի մէջ է եւ կարելի է նոյն ուղղութեամբ աշխատանքները շարունակել :

«Այս կարեւոր կէտի առթիւ փոխարքան հետեւեալը գրեց .

«7.— Նամակի (պատասխանի) տպաւորութիւնն այն է, որպէս թէ հայկական նահանգների թեփորմներին հարցը հերթական լինելուց դադարում է : Կաթողիկոսից այս կէտի առթիւ հարցապնդում ստանալու դէպքում տալ բացատրութիւն, որ ոչ թէ հայկական հարցը վերացում է, այլ ընթացքի ոյժի մէջ է եւ կը բնուի պալմանեան հարցերի հետ միասին » :

Փոխարքան կը խոստանայ վերոյիշեալ եօթը կէտերու մասին փոխադարձ խորհրդակցութեամբ եւ իր ձեռքով կազմուած ձեւակերպումները հեռագրով յայտնել Փեղրսպուրկ, խոստանալով նաեւ աջակցել, որ ցանկացուած պատասխանը ստացուի : Մերոպ կպիսկ. շնորհակալութիւն կը յայտնէ, փոխարքան իր տուած պատասխանին մէջ կ'ըսէ, թէ անցած է Լորանովի քաղաքականութիւնը եւ ուրախութիւն կը յայտնէ, որ այս կարեւոր խնդրին մէջ ոռուսական եւ հայկական շահերը միացած են :

Ազգային Բիւրոյի այս արձանագրութիւնները որոշապէս ցոյց կուտան, որ ոռուս կառավարութիւնը ամէն ջանք կը դործադրէր, որպէսզի եւրոպական պետութիւններ չդրադին Հայկական Հարցով եւ անոր մենաշնորհը պատկանի բացառապէս Ռուսիոյ :

* * *

Բարենորոգումներու նոյն հարցը Պոլսոյ Ազգային Երեսփ. Ժողովին կը բերուի 1912 Դեկտ. 21ին Հմ. եպ. Դիմաքսեանի կողմէ հետեւեալ ձեւին տակ . «Թուրք կառավարութեան կողմէ խմբագրուած եւ հրատարակուած քարինորոգումներու ծրագիրը ոչ 1880ի եւ ոչ 1895ի

Մայիսեան ծրագրի բնոյթն ու խորհուրդն ունի. նա չի համապատասխաներ երբեք ներկայ ժամանակի ոգոյն եւ պահանջներուն եւ ըստ ինքեան անբաւական է օսմանեան երկրի վերածնութեան»: Հմ. Եպիսկ. Դիմաքսեան կը պահանջէ 61րդ յօդուածին կիրառումը եւ կ'առաջարկէ յսել վարչութիւնը իր կատարած աշխատանքներու մասին «կարելիութեան սահմաններուն մէջ»:

Վարչութեան ատենապետ պ. Ստեփան Գարայեան իր տուած բացատրութիւններուն մէջ կ'ըսէ. «Բարեկարգման ծրագիր ըսելով կը հասկնանք մեր կամ ուրիշներէ առաջարկուած՝ սիստեմ մը, որ նպատակ ունենայ հիմնաւորել հայերու քաղաքացիական իրաւունքները: Նա հիմը պիտի ըլլայ մեր ազգային գոյութեան պահպանման, ապահովուած կատարեալ երաշխիքներով: Պիտի օգտուինք պատմութեան դասերէն եւ հիմնուինք միջազգային դաշնագրերու եւ նշմարիչ թուրք կառավարութեան կողմէ ընդունուած յանձնառութեանց եւ երաշխիքներու վրայ»:

Փարիզի մէջ, 1913 Մարտ 13ին, պատուիրակութեան նախագահ Պօղոս Փաշա ներկայանալով սուս դեպքան Իզմիթիին՝ ինդրած էր տեղեկացնել, թէ արդեօք ժամանակը հասած կը համարուի՞ դիմելու Լոնտոնի դեսպանաժողովին՝ Հայկական Հարցը արծարծելու համար: Ան կը պատասխանէ, — ոչ մէկ քայլ առնել, մինչեւ առաջադրուած հարցերու մասին արտաքին նախարարէն պատասխան մը ստանալը. որովհետեւ պէտք է դիմել Լոնտոնի դեսպանաժողովին: Աւելի վերջն է որ Փեթրպուրկէն պատասխան ստացուեցաւ յուշագրեր պատրաստելու մասին:

Միւս կողմէ՝ Պոլսոյ ազգային կեանքին մէջ վերջ կը գտնուին կուսակցական պայքարները եւ Ազգ. Երեսփ. Ժողովը, ամբաստանելու համար Կեդր. Վարչութիւնը, անոր իրրեւ աջակից կուտայ խորհրդարանական յանձնաժողով մը, որուն կը մասնակցին բոլոր հոսանքներէն ներկայացուցիչներ, — Գ. Զօհրապ, Յ. Շահրիկեան, Վ. Թէքէեան, Յ. Գալֆայեան եւ Գ. Տէր Մովսէսեան:

Իսկ զիբերու դիւտի 1500ամեակի առթիւ, 1913 Հոկտ. 11ին Ազգ. Երեսփ. Ժողովը յայտարարեց հայ յարանուանութիւններու միութիւնը, կրօնական բնոյթ չունեցող ինդրի մէջ բոլոր հայերը պիտի օգտուէին Ազգ. Սահմանադրութենէն: Այս քայլը մեծ տպաւորութիւն ձգեց թէ՛ ներքին կեանքի եւ թէ՛ արտաքին աշխարհի մէջ:

Ազգ. Երեսփ. Ժողովի կողմէ կազմուած յանձնախումբին մաս կը կազմէր Օսմանեան Խորհրդարանի անդամ Կոմսը (Վահան Փափազեան), որ գործօն մասնակցութիւն ունեցաւ Բարենորոգումներու ձեռնարկին մէջ: Ան հետեւեալ կերպով կը պատմէ կատարուած աշխատանքները («Վէժ», թիւ Ա.-Դ.).

«Դաշնակցութիւնը, Ազգ. Երեսփ. Ժողովին մէջ դրած էր իր ամենէն կարկառուն դեմքերը եւ Ազգ. Կեդր. Վարչութեան մէջ ունէր երկու ընկերներ: Կուսակցութիւնը նպատակ ունէր պատրաստել բարենորոգումներու նախագիծ մը ու գայն անպաշտօն կերպով ներկայացնել Ազգ. Կեդ. իշխանութեան իբր ատաղձ՝ դիւրացնելու համար անոր աշխատանքը:

«1912 Դեկտեմբերին ընկերներ Զուարեան, Ակնունի, Բժ. Զուարեան, Ռ. Զարգարեան եւ Վ. Փափազեան պաշտօն ստացան ձեռնարկելու այդ աշխատանքին եւ անոր գուզրնքաց. գրադելու — ուրիշ մէկ երկու ընկերներու հետ — թրքահայ ժողովուրդի թուական ուսումնասիրութեամբ՝ օգտուելով եւրոպական եւ թրքական աղբիւրներէ: Այդ խորհրդակցութիւններուն մասնակցեցան նաեւ Զօհրապը եւ Շահրիկեանը: Յունուարի սկիզբը պատրաստ էր այդ աշխատանքը:

«Այս ատեններն էր որ ուսական դեսպանատունը դիմեց պատրիարքին՝ ներկայացնելու հայերու քաղաքական պահանջները: Ապահովութեան յանձնաժողովը նիստ գումարելով, իր պահանջներուն հիմ կ'ընդունէր 1880ի եւրոպական միջազգային յանձնաժողովի մշակած կանոնագիրը, 1895ի Մայիսեան ծրագիրը, Արեւելեան Բուսնիի եւ Լիբանանի ինքնավարութեան կանոնները, ինչպէս նաեւ թրքական վերջին «քարեկարգութեան» ծրագիրը, «վիւայէթներու իրաւանց ընդարձակում» օրէնքը եւ պետութիւններու՝ գանազան ատեններ ներկայացուած իշխանակազմները: Հարցի բնութեան այս պահուն է որ յանձնաժողովի դաշնակցական անդամը կը ներկայացնէ արդէն իսկ պատրաստուած նախագիծը. որը կարգ մը փոփոխութիւններէ յետոյ կ'իւրացուի եւ կը վաւերացուի պատրիարքին կողմէ:

«Յանձնաժողովը իմացաւ, թէ Պօղոս Փաշան եւս պատրաստած է նախագիծ մը, աջակցութեամբ վիկտոր Պերարի եւ ուրիշ հայասերներու: Յանձնաժողովի պահանջով կը ստացուի այդ ծրագիրը որ հիմնական երկու քերտութիւններ ունէր. ԸՆԿՀԱՆՈՒԹ ԲՆՆԻԶԸ ԹՐՔԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԱՅԻՆ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ՈՒՆԵՐ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՎԵՑ ՊԵՏՈՒԹԻՆԵՐՈՒ ՎԵՐԱՀԱՅԻՑ ՄԱՐՄԻՆ ՄԸ ԿԸ ՍՏԵՂՈՒՄ»:

1913 Փետրուարի կէսին Վ. Փափազեան յանձնաժողովին կողմէ Փարիզ կը գրկուի Նուպար Փաշային մօտ հաշտեցնելու համար երկու նախագիծերը:

1913 Ապրիլ 21ին, Ազգ. Երեսփ. Ժողովին մէջ Ազգ. Վարչութիւնը մանրամասն զեկուցում մը կ'ընէ իր տարած աշխատանքներու մասին: Միւս կողմէն տեղեկ կը պահուի Կաթողիկոսը՝ Պատրիարքարանի եւ Ազգ. Պատուիրակութեան միջիւ, ստեղծուած տարակարծու-

թեան չուրջ: Պոլսոյ ոռու դեսպանը եւս, որուն հետ սերտ կապ կը պահէր տոքթ. Զաւրիեւ, վերջինին կը յայտնէ իր տեսակէտը:

«Ան կը բաժնէր Պատրիարքարանի երկխոսքերը մշտական բռնաբարոյի մարմնի մը կազմութեան հետեւանցներու մասին եւ աւելի նպատակայարմար կը գտնէր ընդհ. բնիչին ապահովել լայն իրաւունցներ երկրի վարչութեան գործին մէջ, որ սակայն, ի հարկին իրաւունց պիտի ունենայ սլաւոնացի կապ պահել դեսպանատուներու հետ, իբրեւ զինքը նշանակող միջազգային յեմարանի»: Այս տեսակցութիւններու արդիւնքը Պատրիարքարանը կը հաղորդէ Պօղոս Փաշային եւ նոյն ատեն Դաշնակցութեան կողմէ տոքթ. Զաւրիեւ Փարիզ կ'երթայ ու անձամբ կուտայ լուսարանութիւններ:

Ի վերջոյ տեղի կուտայ Պօղոս Փաշան եւ 1913 Ապրիլին, թրքահայ քաղաքական բաղձանքներու ձեւակերպուած միակ նախագիծը, իր ընդարձակ հիմնաւորումովը կը յանձնուի Պոլսոյ ոռու դեսպանին՝ պատգամաւորութեան մը միջոցով, պատրիարքի գլխաւորութեամբ եւ մասնակցութեամբ Ս. Գարայեանի եւ Գ. Զօհրապի: Այսպիսով, Ռուսաստան իր ձեռքը կ'ստանէր նախաձեռնութիւնը Հայկական Հարցի եւ Պոլսոյ իր դեսպանը կը հանդիսանար անմիջական ղեկավար անոր:

Այս աշխատանքներուն զուգընթաց՝ պատրաստուած էր նաեւ թրքահայերու վիճակագրութիւնը, որուն համար երկար աշխատեցան Ս. Զաւրեան, տոքթ. Զաւրեան, Գ. Փաստրմաճեան եւ Վ. Փափաղեան, օգուտելով վիճակագրական հին արխիւներէ, եւրոպացի ճամբորդներու եւ գիտնականներու հաւաքած նիւթերէն: Մասնաւոր կարեւորութեամբ քննուեցան Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքին պարտքերը թեթեւեղութեամբ համար 80ական թուականներուն, Սուլթանին արտօնութեամբ, հաստատուած ժողովրդական տուրքին հաշիւները եւ գումարին քանակը: Ապահովութեան Յանձնաժողովը թուրքերու առարկութիւններուն դէմ հրատարակեց Փրանսերէն լեզուով քանի մը հատորներ «Հայաբնակ նահանգներու վիճակը» անունով: Այս առթիւ է որ Գ. Զօհրապ M. Léart ծածկանունով լոյս ընծայեց իր գիրքը «La question Arménienne à la lumière des documents»:

1913ի սկիզբը ինկած էր Քեամիլ փաշայի պահպանողական դահլիճը ու անոր յաջորդած էր գուտ իթթիհատական դահլիճը: Թուրքերը հրապարակ դրած էին «Վիլայէթներու վարչական բարեկարգման» օրէնքը, միւս կողմէ զիմեցին Զօհրապի եւ Պ. Հալաճեանի միջնորդութեան, նորէն մերձեցում ստեղծելու համար Դաշնակցութեան հետ: Երբեմն Զօհրապի, երբեմն Վարդգէսի բնակարաններուն մէջ տեղի կ'ունենան հանդիպումներ, թուրքերէն կը մասնակցին Պալիլ, Միտհատ Շիրքի եւ Թալէաթ, Դաշնակցութեան կողմէ՝ Ակնունի, Փաստրմաճ-

եան եւ Վարդգէս: Թուրքերը կ'առաջարկեն Դաշնակցութեան՝ հրատարակ օտար միջամտութիւնէ եւ վստահիլ թուրքերու կողմէ կատարուելիք բարենորոգումներուն, նոյն ատեն Թալէաթ կ'աւելցնէր. «Իսկ եթէ այս անգամ ալ չլսէք մեզ եւ շարունակէք մնշում գործ դնել օտար ուժով, միեւնոյնն է, ոչ մէկ իրական արգիւնքի չէք հասնիր, չէ՞ որ իրագործման ատեն հազարումէկ մամբաներ կան վիժեցնելու բոլորը...»: Այս բանակցութիւնները որեւէ արդիւնքի չեն յանգիր, ամբողջ հայ ժողովուրդը, նաեւ Դաշնակցութիւնը, այլեւս վստահութիւն չունէին թուրքերու խոստումներուն վրայ:

Պատրիարքարանի նախագիծը կ'իւրացուի ոռու դեսպանին կողմէ, իսկ իրաւական հիմերը կը պատրաստէ դեսպանին Ա. Խորհրդը՝ դական Ա. Մանտելտամ, իր ունեցած բազմակողմանի ծանօթութիւններով, յենած միջազգային իրաւունքի եւ Հայկ. Հարցի անհերքելի տուեալներու եւ փաստաթուղթերու վրայ:

Այդ տուեալներն էին Ա.— 1895 Մարտ-Ապրիլին Փրանսական, անգլ. եւ ոռուական դեսպաններուն կողմէ Բ. Դրան տրուած յուշագիրք: Բ.— Նոյն դեսպաններուն ներկայացուցած Մայիսեան ծրագիրը: Գ.— 1895 Հոկտ. 20ին Սուլթանին կողմէ հրատարակուած իրատէն՝ Մայիսեան ծրագրի գործադրութեան առթիւ: Դ.— 1880ի եւրոպ. վիլայէթներու նախագիծը. Ե.— 1913ի վիլայէթներու օրէնքը. Զ.— Լիբանանի ինքնավարութեան վերաբերող կանոնները եւ արձանագրութիւնները: Կը յիշատակէ նաեւ Պերլինի դաշնագիրը եւ 1896ի «Քրիստոնեաներու վերաբերող կանոնները»:

Բարենորոգումներու նախագծի հիմնական պահանջները հետեւեալներն էին.

- 1.— Հայաբնակ վեց նահանգներէն պիտի կազմուի մէկ վարչական միութիւն, դուրս կը ձգուին ոչ հայաբնակ մասերը:
- 2.— Ընդհ. նահանգապետի պաշտօնին պիտի կոչուի օսմանեան հպատակ քրիստոնեայ մը, որուն կը վերապահուի բոլոր պաշտօնեաներու նշանակումը: Պաշտօնէութիւնը եւ ոստիկանութիւնը կէս առ կէս պիտի ըլլան քրիստոնեայ ու մահմետական:
- 3.— Հայկ. այդ երկրամասը կ'ունենայ Բարձր. Ժողով մը. ընտրուած քրիստոնեաներէ եւ մահմետականներէ, հաւասար թիւով:
- 4.— Համիտի գումարներու ցրում:
- 5.— Միայն նստակեաց տարրերը ընտրելու եւ ընտրուելու իրաւունք ունին:
- 6.— Դատարաններու եւ հրատարակուած օրէնքներուն համար պիտի գործածուին նաեւ տեղական լեզուները:
- 7.— Վերադարձ՝ գրաւուած հողերու:

9.— Ազգ. Սահմանադրութիւնը պիտի մնայ անխախտ :

10.— Մուհաճիրներ պէտք չէ տեղաւորուին հայկ. երկրամասին մէջ :

11.— Մասնաւոր տրամադրութիւններ պիտի մշակուին նաեւ բարելաւելու համար կիրիկոյ հայութեան վիճակը :

12.— Պետութիւններու եւ Օսմ. կառավարութեան ներկայացուցիչներէ բաղկացած յանձնաժողով մը, հիմ ունենալով այս նախագիծը, պիտի պատրաստէ հայկ. երկրամասի համար հիմնական վարչական կանոններ :

Ռուս ղեկավարի համաձայնութեամբ՝ քիչ աւելի ուշ Պատրիարքարանը ազգային բաղձանքները կը յանձնէ նաեւ անդրիական եւ Քրանսական ղեկավարութիւններուն :

1913 Մայիս 22ին ռուս արտաքին նախարարութիւնը իր ղեկավարին միջոցով բարենորոգումներու անհրաժեշտութեան մասին ձեռնարկներ կ'ընէ գերման կառավարութեան մօտ, յայտնելով նոյն ատեն որ «Գործի նախաձեռնութիւնը կը ցանկայիմ իրենց ձեռքը պահել, ինչպէս եւ կ'առաջարկէ Լոմոնոսի կառավարութիւնը...»: Իսկ երկու օր վերջ, Ռուսաստան կ'առաջարկէ հինգ պետութիւններուն (Անգլիա, Ֆրանսա, Գերմանիա, Աւստրիա եւ Իտալիա) քննել հայկ. բարենորոգումներու հարցը. կշիռն ունենալով 1895ի Մայիսեան ծրագիրը :

Միայն Գերմանիա կ'ընէ կարգ մը առարկութիւններ, ի միջի այլոց նաեւ պիտուութիւնները պէտք չէ անտեսել նաեւ քիւրտներու հարցը...», նպատակ ունենալով ընդհանրացնել ու ձախողեցնել եղած առաջարկութիւնը :

Ռուս ղեկավարները կը յաջողի գլուխ բերել ղեկավարութեան վիճակը 1913 Յուլիս 3ին, Պոլիս, Ենի Բէօյ, աւստրեհունգար ղեկավարատան ամբարանոցը : Հարցի քննութեան հիմ կ'ընդունուի Մանտելշտամի նախագիծը, եւ ռուսները կտրուկ կերպով կը մերժեն թրքական ծրագիրը : որ կը պաշտպանուէր գերման եւ աւստրեհունգար ներկայացուցիչներուն կողմէ : Բայց խոհրդակցական այս ժողովին նպատակն էր հաշտեցնել տարբեր տեսակետները մէկ ծրագրի շուրջ :

Անգլիական եւ Քրանսական ներկայացուցիչները աւելի թոյլ կերպով կը պաշտպանէին, բուն շահապրօուողը ռուսականն էր : Փոփոխութեան կ'ենթարկուի վարչական մէկ միութիւն կազմելու ծրագիրը եւ կ'ընդունուի թրքական տեսակետը՝ երկու շրջաններու բաժնելու աւելցնել Տրապիզոնը : Այս պարագան կ'ընդունին ռուսները : Երեք շաբթուան (Յուլիս 3—24) խորհրդակցութիւններէ վերջ, կարելի չ'ըլլար բոլոր կէտերուն շուրջ համաձայնել, եւ հարցը ինքնաբերաբար կը մնայ ռուս ղեկավարատան սեղանին վրայ :

1913ի ամբան գերման արտաքին նախարարութեան կողմէ տորթ. Լեպսիուս յատուկ առաքելութեամբ կը ղրկուի հայաբնակ նահանգները : Նախ կը տեսնուի Պատրիարքին եւ Ապահովութեան Յանձնաժողովի անդամներուն հետ, յայտնելով Գերմանիոյ տեսակէտը. որ դէմ էր Ռուսաստանի դէպի հարաւ տարածումին, ինչ որ սպառնալիք մը կը նկատէին իրենց շահերուն դէմ : Նոյն ատեն Գերմանիա չ'ուզեր ճակատել Ռուսաստանի դէմ, ստանձնելով միայն զօրոյդի դեր մը : Եւ վանկէնհայմ Պերլինէն հրահանգ կը ստանայ գործակցիլ ռուս ղեկավար Քիրսին հետ ու այս նպատակով, երկու ղեկավարները 1913 Սեպտ. 3ին համաձայնութեան մը գալով, կը խմբապետն բարենորոգումներու պահանջները, վեց կէտերէ բաղկացած .

Ա.— Հայկական նահանգները կը բաժնուին երկու վարչական միութեանց :

Բ.— Երկու ընդհ. քննիչներ կը նշանակուին պետութիւններու համաձայնութեամբ եւ Սուլթանին իրատէով :

Գ.— Վարչական երկու հողամասերը կ'ունենան առանձին ընդհ. ժողովներ՝ կազմուած կէս առ կէս քրիստոնեաներէ եւ մահմետականներէ :

Դ.— Պաշտօնեաներու նշանակումը եւ հրաժարեցումը կը վերապահուի ընդհ. քննիչներուն :

Ե.— Վարչական, դատական, ոստիկանական բոլոր պաշտօնեաները ընդունելի կէս առ կէս :

Զ.— Պետութիւններուն կը վերապահուի բարենորոգումներու կիրառման հակազիտը, ղեկավարներու եւ հիւպատոսներու միջոցով :

Այս կէտերը ընդունուեցան բոլոր ղեկավարներէն եւ Հոկտ. 25ին Բ. Դրան ներկայացուեցան կիսապաշտօնական ձեւով ռուս ղեկավարին կողմէ՝ յանուն իր եւ գերման ղեկավարներու : Սկսան պետութիւններու բանակցութիւնները Բ. Դրան հետ, հայկական բարենորոգումներու մասին :

Թուրքները ամէն կերպ աշխատեցան նոր առաջարկներով փոխել հիմնական կէտերը : Ռուս ղեկավարը զիջում չըրաւ մասնաւորապէս օտար քննիչներու նշանակման հարցին մէջ, եւ Թուրքիա ստիպուեցաւ յանձնառութիւն ստանձնել միայն Ռուսաստանի հանդէպ, անոր հետ կնքելով 1914 Յունուար 26—Փետրուար 6ի բարենորոգումներու համաձայնութիւնը (*): Այս զիջումին մէջ դեր կատարեցին նաեւ երկու գէոգր. Թուրքիոյ փոխառութեան կնքումը Ֆրանսայէն եւ գերման ղեկ-

(*) Տես «Հայաստան եւ Հայ Դատը ըստ դաշնագրերու», 1942, էջ 72:

ուորական առաքելութեան մը ժամանումը Պոլիս: Այս երկու կէտերուն մէջ ալ Ռուսաստանն էր, որ տեղի կուտար:

Գալով հայ կեանքին, 1913 Օդոստոսի սկիզբները կը հրատարակէր Արշալույսի Գաղտնիքը եւ կ'ընտրուի Տիգրանակերտի Առաջնորդ Չաւէն եպիսկոպոսի որուն վրայ մեծ յոյսեր դրուած էին: Ան Հոկտեմբերի կէսին հասաւ Պոլիս եւ իր ուխտը կատարեց Նոյեմ. 8ին: Երեսու. Ժողովին մէջ կեդրոնի խմբակը, պատրուակ բռնելով Երուսաղէմի ինդիքը, պայքար կը բանայ Կեդր. Վարչութեան դէմ, որ կը հրատարակէ 1914 Յունուար 31ին. գործի դուրս կուգայ տոքթ. Դաւթեանի վարչութիւնը: Նոյն ատեն կը լուծուի Ապահովութեան Յանձնաժողովը:

Բ. Դուռը Ապրիլի մէջ կը դիմէ վեց պետութեանց ղեկավարներուն եւ ընդհ. քննիչ կը նշանակուին հոլանտացի Վէստէնէնկը եւ տանքարքացի Հոֆը (առաջինը նախապէս ընդհ. նահանգապետ եղած էր հոլանտական Գոնկոյի, իսկ երկրորդը՝ գնդապետ մըն էր, անփորձ վարչական գործերու մէջ):

Յուլիսի սկիզբը երկու քննիչներ հասան Պոլիս: Անոնց մասնակցութեամբ ղեկավարները եւ թրքական ներկայացուցիչը պատրաստեցին քննիչներու տրուելիք հրահանգները: Այս պահուն էր, որ կը պայթէր եւրոպական պատերազմը: Վէստէնէնկ ղեկ Պոլիս կը գտնուէր, իսկ Հոֆ դէպի Վան ճամբայ ելած էր: Թայեաթ օգտուեցաւ առիթէն եւ ետ ճամբեց քննիչները: Բարենորոգումներու գործադրութեան շնորհաբերութեան օրերը:

«ԴՐՕՇԱԿ»Ի ՎԵՐԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆԸ

Ճիշդ այն պահուն, երբ Թիֆլիսի եւ Կ. Պոլսոյ հայկական շրջանակները այնքան լաւատես դարձած էին Հայկական Բարենորոգումներու մասին կնքուած ուսուեթուրք համաձայնութեամբ, Զ. Յ. Դաշնակցութեան ժընեւի պաշտօնական օրդան «Իրօշակ» իր «Անվերջ պատրանքներ» խմբագրականով (1914 Մայիս-Յունիս) իր վերապահութիւնը եւ մասնադրութիւնը կը յայտնէր ոուս քաղաքականութեան նկատմամբ:

«Թեքահաւատութիւնը ծայր է տալիս արդէն բարենորոգում-

ների վերաբերմամբ անգամ այնտեղ. ուր երկէ տիրում էր ամենախանդալառ լաւատեսութիւն: Բուռն, անվերապահ ցնծութիւնը կամաց-կամաց տեղի է տալիս լուրջ, պաղարիւն դատողութեան:

«Հայ բուրժուազիան, «դիւանագիտական լուծումներ» սիրահար մտաւորականութիւնը սկսում են բերելու ըմբռնել հայեացքներն ու գործելակերպը այն մարդկանց, որոնք չէին բաժնուած ոչ այդ վարդապոյն լաւատեսութիւնը, ոչ այդ մանկուկան խանդավառութիւնը եւ քարոզում էին — 25 տարուայ ազէտաւոր փորձերից հրահանգուած — որ դիւանագիտական բարենորոգումների վրայ յոյս դնելէ առաջ. Ազգը ինքզինքը պէտք է ենթարկէ խորունկ բարենորոգումի. պէտք է նետէ իր վրայից թուամոռք կրաւորականութեան նկատմամբ, պէտք է ներշնչուի ինքնօգնութեան առողջ ու փրկարար գաւառանքով, պէտք է ղեկուի եւ պատրաստուի...»:

«Պատրաստուելու պէտք չկայ, ասում էին մեզ, քանի որ իրերի քննական ընթացքը արդէն իսկ նպաստում է Հայկական հնդրի լուծման. քանի որ միջպետական շահերը հրամայականօրէն պահանջում են այդ լուծումը եւ քանի որ Ռուսաստանը առել է մեր դատը իր հօր ձեռքերի մէջ:

«Այդ վերջին փաստը մասնաւորապէս «գորաւոր» էր մեր չափաւոր ու խոհեմ հայրենակիցների բերնում: Եւ նրանց խորիմաստ իդէոլոգները տղայական միամտութեամբ հոլովում էին մամուլի մէջ — «Ռուսաստանը», «Քեռին», «մեր պատմական հովանաւորը», «մեր արանդական պաշտպանը»...: Եւ պատրաստ էին յանցագործ ու դատանան յայտարարել սկեպտիկներին, որոնք շատ էլ չէին հրապարակում «Քեռի»ի պաշտպանութեամբ եւ նրա իսկական շարժառիթներով»:

«Իրօշակ» բարենորոգումներու գործադրութեան մասին իր վերապահութիւնը յայտնելէ ետք, կը գրէր:

«Այս բոլորից յետոյ՝ յանցաւոր միամտութիւն է յուսալ, որ Ռուսաստանը պիտի կամենայ — երեկպետեան դաշնակցութեան չկամութիւնը խորտակելով — բարենորոգում եւ անդորրութիւն մտցնել Հայաստանի մէջ, նախարար Սազանովի վերջին նառը Դումայում. որ հակասութիւնների մի հիւսուածք էր, բնաւ չի մեղմում մեր մտատանջութիւնը եւ մենք սկսեալ յիշում ենք մեր անմոռանալի Պրեսանսէի վերջին խօսքը, որ ուղղեց մեզ մահից առաջ իր առանձնասենեակում. «Զգա՛ստ եղէ՛ք. այն պետութիւնն իսկ, որ այսօր ինքզինքը բարեկամ ու պաշտպան է ցոյց տալիս ձեր ազգային դատին՝ վաղը կարող է մի նոր արիւնահոսութիւն (scigéné) սարքել թիւրքաց Հայաստանում. իր նուա-

նողական ծրագիրները առաջ տանելու նպատակով... Չեմ պնդում, որ ամպատնառ այդպես կը լինի. բայց կարող է լինել... Պատրաստ եղե՛ք:

«...Մայրայեղ միամտութիւն է, ուրեմն, հանգստացնել ժողովուրդը, յոյս դնելով քիւրքերի ողջմտութեան եւ ուսմանի հայասեր տրամադրութեան վրայ: Հայ ժողովուրդը պետք է ապրեցնել Հայաստանի մէջ,— եւ ով որ ընդունում է այդ նպատակը, պետք է ընդունէ եւ միջոցները: «Դիւանագիտական միջոցը», որին կառչել են փոքրագոյն միգի սիրահարները, ամենայնտիւն է եւ ամենատկարը»:

Բ. Մ Ա Ս

ՇԻՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄ

1878ի Պերլինի դաշինքէն առջին անգամն էր, որ թուրքերը ընդունած էին միջազգային հակակշիռի տակ գործադրել բարենորոգումներ Հայաստանի նահանգներուն մէջ, 1914 Յունուար 26ի ուսանթուրք համաձայնութեամբ:

Նոյն տարուան Օգոստոսին կը պայթէր Եւրոպական պատերազմը. արդէն կազմուած էր Երրեակ Համաձայնութիւնը (Ռուսիա, Ֆրանսա, Մեծն Բրիտանիա) եւ Երրեակ Զինակցութիւնը (Գերմանիա, Աւստրիա-Տունգարիա, Թուրքիա): Երրեակ Համաձայնութեան Տեապային պիտի գային միանալու ուրիշ պետութիւններ եւս:

Հայերու համակրանքը Համաձայնականներու, դիւանորապէս Ռուսաստանի ճետ էր, այն յոյսով որ վերջինը պիտի գրաւէր Թուրքիան եւ գոհացում պիտի տար հայ ազգային պահանջներուն:

Պատերազմի սկիզբները, 1914 Յուլիսին, Կարինի մէջ բացուած էր Հ. Յ. Դաշնակցութեան Ութերոյ ընդհ. ժողովը: Իթթիհատական վարիչներ Տոն կը հասնէին, առաջարկելով Դաշնակցութեան՝ գործակցիլ Թուրքիոյ ճետ, ընդդէմ Ռուսաստանի: Թուրքերը պիտէին, թէ ուսերու կողմէ ինչքան հարածանքի ենթարկուած էր հայ ազգային դատը կովկասի մէջ:

Կարինի ընդհ. ժողովը մերժեց այդ առաջարկութիւնը, ինչ որ ճակատադրական նշանակութիւն պիտի ունենար արեւմտահայ ժողովուրդին համար եւ որոշեց, որ արեւմտահայ ու արեւելահայ հատուածները կատարեն իրենց քաղաքացիական պարտականութիւնները: Ուրիշ խօսքով՝ հայ ազգային կազմակերպութիւնները չէզոք պիտի մնային պետութիւններու Երկու մեծ խմբակցութեանց զինաբախումի ընթացքին:

Ընդհ. ժողովի այդ որոշումը մնաց մեռեալ տառ: Համաձայնական պետութիւնները, գլխաւորապէս Ռուսաստան, էջմիածինի կաթողիկոսութեան խողովակով, գործի մղեց հայերը: Իսկ թրքական իշխանութիւնները իրենց հալածանքներով աւելի խորացուցին հայերու մէջ եղած համակրանքը դէպի «խաչապաշտ» Ռուսաստանը:

Կարինի Ընդհ. ժողովէն ընտրուած Գերազոյն Մարմնի անդամները դէպքերու բերումով մնացին իրարմէ կտրուած: Ժողովրդական ընդհանուր խանդավառութեամբ, Կովկասի մէջ կը սկսէր հայ կամաւորական շարժումը: Պատերազմի առաջին ամիսներուն կ'ազատէին Վասպուրականի եւ Պայազիտի շրջանի հայերը: Բայց 1915 Ապրիլ 24ին կը սկսէր հայ մտաւորականներու աքսորը, ապա ամբողջ հայութեան տարագրութիւնը:

Հայեր թէեւ իրենց համակրանքով եւ գործօն մասնակցութեամբ ուսւ գէնքի յաջողութեան համար բերին կարեւոր նպաստ մը, բայց Ռուսաստան խորքին մէջ շարունակեց իր ծանօթ քաղաքականութիւնը՝ չքաջալերել հայերը իրենց ազգային պահանջներուն մէջ: Հետագայ վաւերագրերը կը հաստատեն Ռուսիոյ աննպաստ քաղաքականութիւնը դէպի հայերը եւ կը հերքեն այն առասպելը, թէ ան եղած է հայերու ազատարարը:

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԴԻՄՈՒՄԸ՝

ԱԶԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼՆԵՐԸ

Թուրքիոյ դէմ Ռուսաստանի կողմէ ծրագրուած նոր քաղաքականութեան համար էական տարր մըն էին հայերը: 1914ի պատերազմին սկիզբը, անկասկած Կովկասի փոխարքայի շրջանակին յանձնարարութեամբ, Ամենայն Հայոց Կաթողիկոսը հետեւեալ գրաւոր դիմումը կատարեց Կոստ Վարանցով-Դաւիդի.

Ձերզ պայծառափայլութիւն, մեծարգոյ Կոստ,

Ինձ, իբրեւ ծայրագոյն հոգեւոր հօր բոլոր հայերի, բազմիցս դիմում են շատերն իմ հօտից, աղբրելով ինչքեւ անսպառ դժուրութեան ազրիւր մեր պաշտելի միակնից թեթեւացում իրենց բազմաթիւ ազգականների, որոնք իրանց վրայ են դարձրել եւ դարձնում են օրհնքի պատիժը «Մաշակցութիւն» ընկերակցութեան մէջ մասնակցելու համար, մի բան, որ պատժուում է տաժանակիր ախտասնջով եւ աքսորով:

Այս առանձին հանգամանքները, որոնց մէջ ծագեց եւ գործում էր այս ընկերակցութիւնը, որ փոխում էր իր գործունէութեան նպատակը եւ այն պայմանները,

որոնց մէջ պիտի գործ ունենային այն մարզիկ, որոնք մեղադրուում են նրան մասնակցելու մէջ, առիթ են ինձ, ինչպէս մի մարդու, որ հետեւում է մայրենի կեանքին, հիմք հաւատարմացնելու, որ դէպքերի ահապին մեծամասնութեան մէջ մեղադրեալները ոչ մի ընդհանուր բան չունենին հիմնական օրէնքներով դրուած կառավարութեան մեծի դէմ փորձեր կատարելու հետ:

«Մաշակցութիւն» ընկերակցութիւնը, որ ծագեց անցեալ դարի 90ական թուականների սկիզբին, նպատակ ունէր իր ցեղակիցների դրութեան բարելաւումը թուրքիայում: Այս նպատակը կատարելուպէս զուգորդում էր Ռուսաստանի աւանդական դերի հետ Արեւելքում. դրանից աւելին. միայն նրա, իբրեւ մեծ քրիստոնեայ պետութեան հզօր պաշտպանի շնորհիւ, հայերը երկզրիանի Արկոսի հովանու տակ մասն, դարերով թրքական լծի տակ սանջուկուց յետոյ. կոչուելով ուսուական բանակի դրաշակների տակ պատերազմելու համար Թուրքիայի դէմ, հայերը, զենեքալների եւ հասարակ շարքային զինուորների դերում, սովորեցին կոուել իրենց հարստահարողների եւ քրիստոնէութեան վաղեմի թշնամիների դէմ. հայ ամենից շատ սիրուած գրողները կանչում էին ժողովուրդը հայրենասիրական մեծագործութիւնների իրենց մեծ հայրենիք Ռուսաստանի եւ թրքական լծի դէմ կոուելու համար: Այս զպայմանքների մէջ դաստիարակուած հայ երիտասարդութիւնը հիմնեց «Մաշակցութիւն» կուսակցութիւնը:

«Բայց դրանից յետոյ, երկար տարիներ ուսուց թագաւորների գայիտնի տակ բարորութիւն վայելելուց յետոյ, հայերի համար եկան ծանր տարիներ, որոնք անմիջապէս նախորդում էին Ձերզ պայծառափայլութեան փոխարքայութեան փառաւոր դարաշրջանին: Ձերզ պայծառափայլութեան, զան ում եւ է մէկին լաւ յայտնի են այն ծանր վերաւորանքները, որոնք հասցուում էին հայոց եկեղեցուն, որի դարաւոր իրաւունքների համար ստի կանգնեց հայ ժողովուրդը, հազոյն քրիստոնեայ ժողովուրդներից: Բայց մեր երջանկութեան համար էր, որ թագաւորի կամքով Ձերզ պայծառափայլութիւնը կոչուեց կառավարելու Կովկասը եւ յիշատակուած միջոցները, որոնք յուզում էին հայ ժողովուրդը եւ նրա ազգային կուսակցութիւն «Մաշակցութիւն»ը, լնուկեցին:

«Այս ժամանակամիջոցին անմիջապէս հետեւեցին խողովութիւնը եւ հայ-թրքական ընդհարումները: Այս տրիանգել ընդհարումների մէջ «Մաշակցութիւն» կուսակցութիւնը շարունակում էր իր ազգային դերը: Ձերզ պայծառափայլութեան յայտնի է, որ ինքնապաշտպանութիւնը ընկաւ այս ընկերակցութեան ուսերի վրայ: Ընդհարման տարիներում ոչ մէկի մտքով անգամ չէր անցնում, որ «Մաշակցութեան» մէջ ինքնապաշտպանութեան ճողի վրայ կատարած աշխատանքը կ'ունենար որեւէ ընդհանուր բան հակապետական դիտաւորութիւնների հետ: Ամբողջ Կովկասին յայտնի էր, որ ինքնապաշտպանութեան հողի վրայ այս կուսակցութեան ցոյց տուած աջակցութիւնը ապօրինի գործունէութիւն չէ եւ ոչինչ գաղտնիք դրանից չէր լինում: «Մաշակցութեան» մեծ դասաստանական գործով, որ շնուում էր 1911 թ. Պետերբուրգում, կառավարել Սենադի առանձին ստեանում, հայերից շատերը ենթարկուեցին շատ թէ

էլ Ծանր պատիժները, շնայած որ շնորհիւնը, ինչպէս պարզուց բացայայտօրէն, ընկեր տարբեր էր վերին աստիճանի կողմնակալ եւ անկանոն կերպով, որի հետեւանքով շատ անձեղ ժարդիկ Ծանր բարոյական եւ Նիւթական վնաս կրեցին: Եթէ լինէր բարեխիղճ վերաբերմունք ղէպի գործը, ընկեր չէր կալանուորի հայերին հարիւրներով, որոնք որպէս թէ ձեռք են բարձրացրել պետական կազմի հիմունքներէ վրայ, եթէ նա խորատուուէր Վրանակցութեան պատժութեան եւ նրա դերի մէջ հայ-թրքական ընդհարումներէ ժամանակ:

Հնորը, որի վրայ նոյնից առաւ Վրանակցութիւն» ընկերակցութիւնը, այն անջքերն էին, որոնք հետեւեցին ազատարար պատերազմին, երբ ազատարար Զարի ձեռքով հայերի համար ստացուած Սան-Սթեֆանոյի դաշնագրութեան 16րդ յօդուածը փոխարինուց Պերլինի դաշնագրի անբովանդակ 61րդ յօդուածով եւ հայերը նորից թիրաքներ կամայականութեան յանձնուցին: Անա հինց այն ժամանակ առաջ եկան ռուսահայերի մէջ ընկերակցութիւններ, որոնք նպատակ ունէին թեթեւացնել սահմանի միջոց կողմի իրենց եղբայրներէ վրձակը:

Քնայց ճակատագրին հանելի եղաւ, որ հայ-թրքական ընդհարումներին զուգարիպէր Ռուսաստանի ներքին խռովութիւնը: Հայերը, որոնք միշտ էլ ուշի ուշով են վերաբերուել ռուսական լաւին էլ, վատին էլ, խորապէս վերապրում էին այն ցընցումները, որոնք ռուսաց երկրի վրայ թափուցին: Նրա երիտասարդութեան անհանգիստ տարրերը, որոնք մտնում էին եւ Վրանակցութեան» մէջ, չէին կարող չվարակուել որոշ աստիճանով ռուսական յեղափոխութեան զաղափարով: Եւ անա հայկական Վրանակցութեան» հունի մէջ սկսեցին Ռուսաստանից թափուել նրա բնութեան օտար ալիքներ հակակուսովարական ազիտացիայի, որին հակամարտում էին կազմակերպութեան հիմնական տարրերը, հայերը ղէնքը ձեռքին պաշտպանում էին իրանց կեանքն ու ստացումքը, եւ ինքնապաշտպանութիւնը միացրեց բոլոր հայերին:

Քզտուելով այն բանից, որ անձեղ ինքնապաշտպանութիւնը կարելի է ներկայացնել իբրեւ հակապետական Վրանակցութիւն», նրանք ձեռք էին բերում հին փաստաթղթեր, որոնք վերաբերում են ինքնապաշտպանութեան, հաւարում էին ազգականներից եւ տականներից սուտ վկաններ եւ ստեղծում են մեղադրանքներ: Այսպէսով հետացում են փրկական տանուտէրութեան մրցակիցները, հողային կտորներ են ձեռք բերում, ազատում են պարտքեր հասուցանելուց, փողեր են ղուրս քալում սպանալով բանտ նստեցնել, ահարեկելով այն պատուաւոր ժարդիկնց, որոնք 1905-1906 թուերին ղեկավարել էին ինքնապաշտպանութիւնը եւ շատ յաճախ մեղադրանքները հակապետական ընկերակցութեան մասնակցելու մասին կառուցուած են լինում հինց այսպիսի հողի վրայ: Բացայայտ է, որ այս գործողութիւնը պարզապէս վնասակար է ռուսաց պետական շահերի համար եւ հակասում է խղաղացման, սիրոյ եւ ղէպի ժողովուրդն ունեցած վստահութեան Զերդ իմաստուն քաղաքականութեան: Ի հարկէ, կառավարութիւնը պիտի հայածէր վնասակար ժարդիկնց օրէնքի ամբողջ խրատութեամբ, բայց պէտք է տարբերել նրանցից խռովութեան անձանակից ժարդիկնց

եւ այսպիսիներին, որոնք մասնակցութիւն էին ունեցել ինքնապաշտպանութեան մէջ, լիազօրութեամբ լինելով այդ բանի համար ազգարեակութեան կողմից:

Ք1905 թուից անցել է 9 տարի, ժարդիկ որոնք այդ տարիներում կատարել են օրէնքներին հակառակող գործեր, արդէն կարողացել են զղջալ, իսկ անձեղ վնասուածները նեղում են եւ ազալում արդարութեան մասին: Եւ նրանք բոլորը յոյս ունեն սղոստափառ միակեան գթարտութեան վրայ: Այս յոյսերը նրանց մէջ ուժեղացել են մանաւանդ այն ժամանակից, երբ մեր կառավարութեան ջանքերով եւ հողացողութիւններով յայտարարուած են թիրաքիայում բարենորոգումներ հայերի համար, որոնք սկզբնական նպատակն էին Վրանակցութիւն» կազմակերպութեան համար:

ՔԵւ անա այժմ ինձ դիմում են դատապարտուածներին, փախածներին, կալանաւորուածներին ընտանիքները եւ անընդհատ խնդրում են վշտարեկ' լինել Զերդ պայծառափայլութեան միջոցով ամենաողորմած թագաւորի առաջ եւ ինչորեւ նրանց համար թոյլատրութիւն վերադարձնել նրանց ընտանիքներին: Նրանք վաղուց արդէն զրգը ջացել են իրենց կամայ եւ ակամայ մեղքերը եւ միշտ կը լինեն նորին կայսերական մեծութեան ամենահաւատարիմ հպատակները:

ՔԶերդ պայծառափայլութիւն, մեծայարդ կոմս, ղուր Զեր երկարատեւ ծառայութեան ընթացքում, կովկասում, համոզուել էք թէ ո՞րքան երախտագիտութեամբ եւ հուստարմութեամբ ղէպի ռուսական թագաւորները լցուած են իմ ժողովրդի սրտները, որպիսի սիրով են վերաբերում Ռուսաստանին: Իմ անունից եւ հայ ժողովրդի անունից խնդրում են արկանել առ ռուս պաշտելի միակեան հաւատարիմ հպատակութեան զգացմունքներ: Ապաւինելով ցարական ողորմութեան, թոյլ եմ տալիս ինձ միջնորդել, որ Զերդ պայծառափայլութիւնը հայցող լինի օգոստափառ միակեան առաջ եւ առ ռուս արկանէ նորին կայսերական մեծութեան ամենահաւատակ պաշտանքս ներում չնորհելու Վրանակցութիւն» ընկերակցութեան մէջ 1905-1906-1907 թուականներին մասնակցելու համար դատապարտուածներին, թոյլ տալու այն անձանց, որոնց մասին գործ է շարունակուած Վրանակցութեան» մէջ մասնակցելու համար եւ որոնք հեռացել են հայրենիքի սահմաններից, վերադառնալ Ռուսաստան եւ կարճելու այն գործերը, որոնք ղեռ չեն վերջացել, ինչպէս նաեւ այսպիսիները, որոնք կարող են այսուհետեւ սկսուել(°):

Այս դիմումին կցուած էր 180 անձերու ցանկ մը: Ինչպէս յայտնի է, ցարը ընդատանջ կատարուած դիմումին եւ բանտէ ու արքորէ վերտուարման դատապարտեալները:

(°) Լէւ' Վերբաւոյ յեղափոխութեան զաղափարաւանութիւնը, Բ. հատոր, էջ 113:

**ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐԲԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ**

1914ի պատերազմի յայտարարութենէն աժիս մը ետք, Սեպտ. 2ին, Կովկասի փոխարքայ Վարանցով-Դաշկով կը պատասխանէ Կաթոլիկոսի մէջ նամակին եւ նոյն ատեն հրահանգներ կուտայ «մեր կողմերէ եւ թէ սահմանի միւս կողմի հայերի» մասին:

«Իմ քաղցր պարտականութիւն եմ համարում. տեղեկագրել ձեզ, որ ձեր Օգոստոսի 5ի թ. 1131 նամակը, որով դուք միջնորդում էիք քրքահայերի հովանաւորութեան եւ պաշտպանութեան եւ նրանց վիճակի բարւոյնման մասին, ես ներկայացրեցի նախադարձերի խորհրդի նախագահին: Այժմ ստատու-սեկրետար Գորիմիկիւնը տեղեկացնում է ինձ որ ռուս կառավարութիւնը ոչ մի դէպքում ոչ մի զիջում չի անի հայկական հարցի հոգի վրայ այն մտքով, որ բարեկրօնազմները Թուրքիոյի հայկական նահանգներում մտցուելու են ռուսաց սկզբնական ծրագրով եւ Ռուսաստանի բացառիկ հսկողութեան տակ:

«Նախարարների խորհրդի նախագահի վերաբերեալ հարաստիացման շնորհիւ. բոլորովին համոզուած լինելով հայերին յուզող խնդիրների նպաստաւոր լուծման մէջ, ես պարտք եմ համարում. այնուամենայնիւ, նախագգուշացնել ձեզ, որ թէ մեր կողմերի եւ թէ սահմանի միւս կողմի հայերի գործողութիւնները ներկայ բուպեում պէտք է խստիւ համաձայնեցրած լինեն իմ ցուցումներին հետ, որովհետեւ Թուրքիայի եւ Ռուսաստանի մէջ ներկայումս տիրող յարուած դրութեան պատճառով, ընդհանուր քաղաքական տեսակետից, ինչպէս եւ նույնպէս ընդունում են մեր դաշնակից պետութիւնները, շատ կարեւոր է. որ Թուրքիայի դէմ պատերազմի առիթը տայ ինքը Թուրքիան եւ ոչ թէ որեւէ գործողութիւն մեր կողմից, ուստի շատ ցանկալի կը լինի եւ նայնիսկ վտանգաւոր, առաջ բերել որեւէ ապստամբութիւն Թուրքիայի հայերի մէջ:

«Միեւնոյն ժամանակ ես խոնարհաբար խնդրում եմ ձերոյ սրբութիւնից վերայիցեալ նկատումներից դրդուած՝ գործ դնել ձեր բարձր հեղինակաւոր ազդեցութիւնը ձեր հօտի վրայ այն մտքով որպէսզի մեր հայերը սահմանի միւս կողմի հայերի հետ պատրաստ լինեն ինչպէս այժմ, Թուրքիայի անորոշ դրութեան միջոցին. այնպէս էլ ապագայում, ի դէպս մեր պատերազմի նրա հետ, կատարել այն յանձնարարութիւնները, որ ես ըստ ժամանակի պահանջման կարեւոր կը համարեմ եւ կ'առաջարկեմ նրանց ի կատարում» (1էօ՝ «Անցեալից», էջ 292):

**ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ
ԿԱՄԱԻՌԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ ՄԱՍԻՆ**

Կովկասի մէջ կամաւորական շարժումը սկսաւ Ռուսաստանի ներշնչումով եւ անոր քաջալերութեամբ: Բայց Փարիզէն եւս կատարուած են յանձնարարութիւններ, որոնց մասին յուշեր գրի առած է Մալխաս «Հայրենիք» օրաթերթի 1942 Օդոստ. 5 եւ 6 թիւերուն մէջ, պատմելով թէ «ինչպէ՞ս սկսաւ կամաւորական շարժումը»:

Մալխաս պատերազմի սկիզբը կը գտնուէր անձնական գործով Միխայիլ (Պանտրմա) եւ շուտով կը վերադառնայ Պոլիս: «Ազատամարտ»ի խմբագրատան մէջ կը տեսակցի Արմէն Գարոյի. Բարսեղ Շահպաղի. Սարգիս Մինասեանի, Հրաչ Թիրեաքեանի հետ: Փարիզէն նոր վերադարձած է Բարսեղ Շահպաղ եւ Սարգիս Մինասեանի խնդրանքով, ան կը կրկնէ իր զեկոյցը, որպէսզի լսէ նաեւ Մալխասը: Բ. Շահպաղ կ'ըսէ.

«Հազիւ թէ պատերազմը սկսած, Տուներկ (Ֆրանսայի վարչապետ) իր մօտ կը հրաւիրէ Վիքթոր Պետարը, ֆրանսացի ակամաւոր պետական գործիչն ու Զ. Յ. Դ. եւս մօտիկ բարեկամը, ու անոր հարց կուտայ, թէ ի՞նչ դիրք պիտի բռնեն Վիքթոր Պետարի բարեկամ հայերը. մասնաւորաբար Զ. Յ. Դաշնակցութիւնը պատերազմի հանդէպ եւ ո՞րքան ափսի գործակցութիւն պիտի ցոյց տան:

«Վ. Պետար կը պատասխանէ այն իմաստով թէ՛ հայերը մէկէ աւելի անգամներ յուսախար եղած են մեծ պետութիւններէն ու մասնաւորաբար Ֆրանսայէն եւ դժուար թէ անմիջական մասնակցութիւն մը ուզեն ունենալ պատերազմին, մանաւանդ որ գտնուելով երեք սահմանակից պետութիւններու մէջ, քաղաքական շատ փափուկ կացութեան մէջ են:

«Տուներկ կը պարզէ հայկական նահանգներու բարեկրօնազման խնդրին մէջ ֆրանսական կառավարութեան ցոյց տուած իրական աջակցութիւնը ռուսական ծրագրին, առանց որու դժուար թէ այդ ծրագիրը յաջողէր, եւ կը շեշտէր մեծ պատերազմի ունենալիք ճակատագրական նշանակութիւնը փոքր ազգերու ապագայի նկատմամբ: Տուներկ ինքն ալ որպէս հայասէր, խորհուրդ կուտայ Վ. Պետարին. անմիջապէս յարաբերութեան մտնել կոմիտէին հետ (ժրնեւ ըսել կ'ուզէր) թելադրելով ձեռքէ չփախցնել այդ պատեհութիւնը. միանալ Դաշնակիցներուն եւ այդ կերպով ապահովել հայ ժողովուրդի ապագան:

«Վ. Պետար անմիջապէս կը հեռագրէ ժրնեւ, ուր միայն Մ. Վարանցեանը կը մնար, որպէս «Իրօշակ»ի խմբագիր: Դժբախտաբար

չեմ յիշեր թէ՛ ան ուզակի յարաբերութեան կը մտնէ՞ Տումերկի հետ. թէ նորէն բանակցութիւններ կը տարուին Պետարի միջոցով: Այսպէս թէ այնպէս, այդ բանակցութիւններու վերջնական եզրակացութիւնը կը լինի այն, որ Տումերկ ֆրանսական կառավարութեան կողմէ կը խոստանայ. «նուագազոյր դժուութիւն մը» Թրքահայաստանի մէջ, եթէ հայերը միաման Դաշնակիցներուն եւ իրենց օժանդակութիւնը բերեն պատերազմին»:

Անշուշտ Մ. Վարանդեան չէր կրնար նման ծանրակշիռ հարցի մը մասին որոշում տալ: Պէտք էր Հ. Յ. Դեան Բիւրոններէն մէկը վերցնէր պատասխանատուութիւնը: Ու Փարիզի մէջ կ'որոշեն մէկը զրկել Պոլիս՝ Ֆրանսական կառավարութեան առաջարկութիւնը ներկայացնելու համար Հ. Յ. Դեան Արեւմտեան Բիւրոյին: Մասնաւոր թոյլտուութեամբ Բ. Շահպաղին հրամանագիր կը տրուի, որով ան հնարաւորութիւն կ'ունենայ Մարտիլիայէն ծովով Պոլիս հասնել:

Մալխաս կը գրէ.

«Թէեւ այս պատմութիւնը ինձ համար բոլորովին նորութիւն մըն էր, բայց Բիւրոյի երկրորդ նիստն էր արդէն այդ հարցի համար, եւ ներկաները եկած էին որոշ եզրակացութեան: Ինչպէս կ'երեւեր, անոնք տարակարծիք չէին կամաւորական շարժում մը առաջ բերելու մասին: Կը մնային միայն քանի մը հարցեր անմիջականօրէն կապուած այդ ձեռնարկին հետ:

Պարզ էր ինքնին, որ կամաւորական շարժումը կրնար սկսիլ միայն Կովկասի մէջ: Իսկ Ի՞նչ պիտի լինէր Խուսէիոյ մէջ գտնուող ընդհանրապէս հայերու եւ մասնաւորաբար դաշնակցականներու վերաբերմունքը Թուրքիոյ հանդէպ:

Բոլորս ալ այն տեսակէտն ունէինք թէ՛ հայ ժողովուրդը պէտք է օրինապահ քաղաքացու դերին մէջ մնար ամէն տեղ, բայց մասնաւորաբար Թուրքիոյ մէջ»:

Բիւրոյի նիստը տեղի կ'ունենայ 1914 Օգոստոս 22ին եւ Գ. Փատրմանեանի առաջարկով, կ'որոշուի զրկել Մալխասը Կովկաս. «Արեւմտեան Բիւրոյի տեսակէտը պարզելու համար Այստեղեան Բիւրոյին եւ յայտնէ մեր որոշումը կամաւորական շարժման մասին»:

Նախապէս Բ. Շահպաղը պիտի գրկուէր Կովկաս. իսկ Մալխասին դալով, անոր կը տրուի այս պարտականութիւնը: Յաջորդ օր կը յաջողի մեկնումի տոմսակ առնել եւ կը պատմէ հետեւեալը.

«Կիւլիէրթայի տոմսակ մը կը գնեմ ու կ'ամապարեմ դէպի «Ազատամարտ»: Ներկայ են Գարօն, Հրաչը, Սարգիսը: Ոչ Պուլկարիայէն եւ ոչ ալ Ֆրանսայէն մեր հեռագիրներուն պատասխան եկած է: Սարգիսը տուն կուտայ, ես ալ ծոցի տետրակիս մէջ կը գրեմ գաղտնի

թանաքով Արեւմտեան Բիւրոյի որոշումը կամաւորական շարժում սկսելու մասին:

Գարօն կը շեշտէ, որ անպատճառ նշանակուի կազմակերպուելիք կամաւորներու թիւը: Նրեսուն հազար... անոնք պատերազմը յայտարարելուն պէտք է մտնեն երկիր, որպէս ռուսական բանակի յառաջապահներ:

Կ'որոշուի թիւը ու անոնց կատարելիք գործը ձգել Արեւելեան Բիւրոյի հայեցողութեան»:

Մալխաս Թիֆլիս ժամանելէ վերջ կը հանդիպի «Հարիզոն»ի խմբագրատունը եւ կը տեսակցի ընկերներուն հետ. «Որոշուեցաւ այդ երկկոյ Ա. Ջամալեանի տունը արեւի բազմամարդ ժողով մը ունենալ, ուր ես պիտի զեկուցանէի:

«Երեկոյեան Արշակի մօտ հաւաքուեցան բացի Բիւրոյի անդամներէն, աչքի գարնող դաշնակցականներ տոքք. Ջարիբեը, Իշխանը, Ազգային Բիւրոյէն երկու երեք հոգի ու Պետական Դումայի անդամ Բարաջանեանը: Աւելի քան քսան անձնաւորութիւններ ներկայ էին:

«Առանց այլեւայլի պիտի ըսեմ, որ զեկուցումս ու Արեւմտեան Բիւրոյի որոշումը խանգարուածքամբ ընդունուեցան ներկաներէն: ...Աւետիք (Շահյաթունեանը) միակն էր, որ բացասական վերաբերմունք ցոյց տուաւ կամաւորական շարժման հանդէպ: Խօսեցաւ ցասկոտ բարկութեամբ, կարճ ու լեցուն նախադասութիւններով: Մօտաբար պէս հիմնական միտքը հետեւեալն էր: Պէտք չէ հաւատալ դիւանագիտութեան փուն խոստումներուն. որոնք կրնան վազը ետ առնուիլ: Հայ ժողովուրդը, որ պետութեան մէջ որ կը գտնուի, պէտք է իր քաղաքացիական պարտականութիւնը կատարէ, իսկ կամաւորական շարժում մը կրնայ ծանր հետեւանքներ ունենալ: Ի հարկէ. Աւետիքը առանձին մնաց: Ան հարցին կը մօտեմար հեռուէն հեռու դիտողք մը ակնացով: Ժողովուրդէն հեռու, եթէ կ'ուզէք ըսէք կեանքէ հեռու, գրասենեակի մտաւորական մըն էր, ան չէր ուզեր տեսնել կամ չէր կրնար տեսնել հասարակութիւնը այնպէս որ տրամադրութիւնները իր շուրջ դարձաք փոքրիկոյ հոսանքը: Ան չէր անդրադառնար, որ եթէ Ազգ. Բիւրոն ու Դաշնակցութիւնն ալ ուզէին կասեցնել կամաւորական շարժումը, յաջողութիւն պիտի չունենային»:

Մալխասէն շարք մը առաջ, Օգոստոս 14ին, Պոլսէն մեկնած էր Պաթում Օսմանեան Խորհրդարանի երեսփոխան Կոմս. երթալու համար իր ընտրական շրջանը՝ Վասպուրական:

Անոր տունած տեղեկութիւնները կամաւորական շարժման մասին հետեւեալներն են.

«Հասած էինք Թիֆլիս. ես ու զեռ էր հոն: Ռուս-քրքական պատերազմը անխուսափելի կը նկատուէր. ժողովրդական հաւաքոյթներ տեղի կ'ունենային, որոնց մէջ յաճախ անյայտ մարդիկ ամբիոն կը բարձրանային՝ հրահրելով ամբոյսի տրամադրութիւնները: Խաչակրաց արշաւանքի նման բան մըն էր, որ կը պատրաստուէր: Միւս կողմէ՝ Քիւրքահայ եւ կովկասահայ երիտասարդութիւնը Դաշնակցութեան դուռները ամբ առած էր. կը պահանջէին հրապարակ իջնել եւ ձեռք առնել կամաւորական գումար կազմելու գործը:

«...Գալով մեր շրջաններուն՝ Դաշնակցութեան ղեկավարութիւնը գտայ տատանուող եւ անհանգիստ տրամադրութեան մէջ: Ընդհ. ժողովի պատգամաւորները վերադարձած էին արդէն. անոնց զեկուցումներէն զիտէին ուրիշն, Ընդհ. ժողովի որոշումները եւ իքթիհատի առաջարկները: Միեւնոյն ժամանակ, ամէն կողմէ բարոյական ճրճում գործ կը դրուէր՝ դրական կերպով վճռելու կամաւորական գումարներու խնդիրը եւ ստանձնելու կազմակերպութեան ղեկավարութիւնը: Եթէ չեմ սխալիր, նոյնիսկ արդէն հեռագրով կանչուած էր ապագայ վարիչներէն Անդրանիկը» (*«Իմ Յուշերը»*, Բ. հատոր, 1952, էջ 282):

*Կարօ Սասունի երկու ամիս ետք, Հոկտ. 12ին կը մեկնի Պոլսէն, Տրապիզոնի ճամբով Սասուն-Մուշ երթալու համար: Բայց պատերազմի յայտարարութեան հետեւանքով իր առած նաւը դէպի Օտեսա կ'երթայ, 17 օրուան սպասումներէն ետք: «Ինձի հետ կը տանէի Հ. Յ. Դ. Բիրոյնի հրահանգ նամակները երգրում եւ Մուշ: Պոլսոյ եւ Թուրքիոյ դաշնակցական ղեկավար ընկերներու կարծիքով կամաւորական շարժման շուրջ շատ ազմուկ եւ շատ ցոյցեր էին որ տեղի կ'ունենային: Ընկերներն ինձի կը թելադրէին, հնարաւորութեան պարագային, կովկասի վրայով անցնիլ եւ յայտնել կովկասի մեր ղեկավարներուն որ հրաժարին *ցուցական* գործունէութենէ, եւ գաղտնի աշխատանք կատարեն (այն ատեն տակաւին կը կարծէին որ փոքրիկ ու փեղայական գաղտնի խմբերով գործ կարելի էր տեսնել. ամբողջ իրականութիւնը կը մնար մեզի համար անչափելի):... Ես երկրի նամակները յանձնեցի Արեւելեան Բիրոյնի եւ զեկուցում տուի մեր ընկերներու տրամադրութեան մասին: Բայց կովկասահայութեան ոգեւորութեան այիքը իր գագաթնակէտին հասած էր եւ բոլոր գործնական ֆայլերը առնուած էին: Այդ իրողութեան առջեւ քէ արտասահմանի եւ քէ կովկասի կուսակցական մարմինները լծուեցան գործին՝ շարժման աւելի կազմակերպուած բնոյթ մը տալու» (4. Սասունի՝ «Տանկահայաստանը ոռուսական տիրապետութեան տակ, 1914—1918», Պոսթըն, 1927, էջ 26):*

Ս. Վրացեան, որ մասնակցած էր Կարնոյ Ընդհ. ժողովին, «Հայաստանի Հանրապետութիւն» հատորին մէջ (էջ 7), կը գրէ.

«...Այժի առաջ ունենալով թիւրք իշխանութիւնների կակածոտ ու բժախնդիր վերաբերումը՝ Հ. Յ. Դ. ընդհանուր ժողովը կարճ կապեց իր օրակարգը եւ ցրուեց՝ նախօրոք ֆինուքեան առնելով Թիւրքիայի պատերազմի մէջ մտնելու հաւանականութիւնը եւ այդ առթիւ որոշելով հրահանգել իր մարմիններին եւ ընկերներին *մնալ օրինապահ իրենց ապրած երկրի վերաբերմամբ եւ կատարել իրենց բաժին հասած քաղաքացիական պարտականութիւնները*»:

Հայաստանի նախկին վարչապետ Ալ. Նատիսեան որ 1914ին Թիֆլիսի քաղաքապետ էր եւ սերտօրէն մասնակից հայ ազգային շարժման, կամաւորական շարժման մասին կը գրէ ():*

«Ընդհանուր ժողովէն ետքը պատգամաւորներ եկան կովկաս, բայց չկարողացան դիմադրել ընդհանուր տրամադրութիւններուն եւ անցան կամաւորական բանակներու կազմակերպման գործին զուխը: Կազմուեցաւ կոմիտէ մը կուսակցութեան պարագլուխներէն եւ որուն անդամակցեցան Արմէն Գարօ, Սիմոն Վրացեան, քժ. Զաւրեան, Իշխան Արղութեան, Ա. Գիւլիսանդանեան եւ Նիկոլ Աղբալեան:

«...Թիֆլիսի մէջ կազմուեցաւ Ազգային Բիրոն, որ իր կողմէ նշանակեց երեք ներկայացուցիչներ. փոխարքայի հետ բանակցելու համար կամաւորական բանակի հետ կապուած բոլոր խնդիրներու շուրջ: Ներկայացուցիչներն էին՝ մէկը քեմալեան Առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոս, միւսը Սամսոն Յարութիւնեանը եւ ես: Մենք մեզ վրայ ետինք այդ պարտականութիւնը եւ մինչեւ վերջը մնացինք մեր պաշտօններու վրայ:

«Զիս նշանակեցին ներկայացուցիչ զինուորական իշխանութիւններու մօտ. եւ այդ պարտականութիւնն ալ կատարեցի սկզբի օրերէն մինչեւ կամաւորական խումբերու վերջնական լուծումը:

«Սկիզբէն իսկ յայտնի եղաւ, որ ոռու կառավարութիւնը կը մտածէ լայնօրէն օգտակործել հայ ժողովուրդի ուժերը՝ Թուրքերուն դէմ պատերազմելու համար: Ինձ առաջարկեցին կազմել ցանկ մը արտի մէջ գտնուող բոլոր այն հայ յեղափոխականներուն, որոնք կարող էին օգտակար լինել կամաւորական շարժման: Մենք կազմեցինք այդպիսի ցանկ մը եւ յանձնեցինք կառավարութեան:

«Մեզ կ'առաջարկէին նոյնպէս գտնել Հ. Յ. Դաշնակցութեան մէջէն հմուտ ահաբեկիչներ, որոնք անցնելով Թուրքիա՝ կարողանային սպանել ինքիւր փաշան: Ժամատարման պետը մինչեւ անգամ կուտար

(*) Ա. Նատիսեան՝ «Բազմապետի մը յիշատակները», «Հայրենիք» ամսագիր, 1932, Թիւ 12, էջ 156:

մեզ այն մարդու անունը, որ կարող էր իր վրայ վերցնել այդ համար-
ձակ գործը: Մենք մերժեցինք այդ ծրագիրը» (*):

Ա. *Պատիւնեան կամաւորական խումբերու մասին շահեկան տե-
ղեկութիւններ տալու ատեն, կը մերժէ այն մեղադրանքը, թէ ջարդերու
պատճառ դարձան: Կ'աւելցնէ, որ այդ խումբերը կորիզը եղան
հետագային այն բանակին որ ստեղծեց Հայաստանի Հանրապետու-
թիւնը:*

Մեր կատարած քաղաքացիները ցոյց կուտան, որ Կովկասի մէջ
արեւմտահայերու մասնակցութեամբ յառաջ եկած կամաւորական շար-
ժումը երբեք համապատասխան չէր Կարնոյ մէջ Դաշնակցութեան Գե-
րագոյն Ժողովին տուած որոշումներուն:

Սակայն եւ այնպէս, Աւետիք Շահխաթունեանէն դատ ոչ ոք զէմ
եղաւ կամաւորական շարժումին, որովհետեւ քաղաքական հզօր ազ-
դակներ ստեղծեր էին ռազմաշունչ մթնոլորտ մը եւ կը կարծուէր, թէ
Ռուսաստան պիտի իրազործէր հայերու ազգային իտէալը:

Դ. Անանուր ճիշդ կերպով դիտել կուտայ, կամաւորական
շարժման բուն հելինակին՝ Ռուսաստանի շահագրգռութիւնը:

«Պէտք էր օգտագործել թիւրքահայերի կենդանի ոյժը եւ հրա-
հանգում էր կամաւորներ ընդունել առաւելապէս թիւրքահայերից: Դա
ամուր էր երկու նպատակով. առաջինը՝ մի չնախատեսուած ոյժ էր
օգտագործուում. երկրորդը՝ դա մի այնպիսի գայթակղեցնող ոյժ էր,
որ սահմանից այն կողմը թիւրքապատիկ շահ էր ընձեռնում: ... Նա ան-
վստահութեամբ վարակն էր պատուաստում գանազան ազգերից բաղկա-
ցած թիւրքական բանակին եւ նրա գորութիւնը նուազեցնում էր մի
պատկառելի ոյժով»:

Այս կամ այն չափով, կամաւորական շարժումը պատրուակ
ծառայեց թուրքերուն համար, որպէսզի կատարուի հայերու տարա-
գրութիւնը եւ մէկ միլիոն զոհեր տանք:

Գերագոյն այս զոհողութիւնը սեղի ունեցած ատեն, ինչ վերա-
բերմունք ունեցաւ Ռուսաստանի զէպի հայերը, կը տեսնենք յաջորդ
գլուխներու մէջ:

(*) Համաձայնական պետութիւններ, հակաթիւրքականներու միջոցով
նոյն գործը տունն Հնչակեաններուն: Ասոնց վարիչ զէմբերէն Արշալու Նասեան (նախ-
կին ռուսացի Պահիրէի Գալուստեան Ազգ. վարժարանի) ահաբեկչներու մասին տե-
ղեկութիւններ հաղորդեց Կ. Պոլիս եւ որու հետեւեալով քսան հնչակեաններ կախա-
ղան հանուեցան:

ՌՈՒՍԱԿԱՆ ՆԱՀԱՆՁՐ ԵՒ ՏԱՐՕՆԻ ԵՂԵՌՆԸ

Ռուսական բանակի յառաջխաղացման հետեւանքով եւ հայ
կամաւորական զուեղերու օգնութեամբ կարելի եղած էր ազատել Վա-
սի հայութիւնը, որ ինքնապաշտպանութեան դիմած էր:

Կովկասեան ճակատին վրայ ռուս բանակը քանի մը անգամ
նահանջեց, այդ պատճառով ալ ազատագրուած հայ բնակչութիւնը նոր
աղէտներու ենթարկուեցաւ:

Ռուս հրամանատարութիւնը շահագրգռուած չէր ազատելու
հայ բնակչութիւնը աղէտներէն: Այս պարագան ի յայտ կուգար նա-
հանջներու ատեն մասնաւորապէս:

Ամենէն ողբերգականը պիտի մտար Տարօնի հայութեան կո-
րուստը: Տարօնի մարտիկներուն մէկ մասը լեռները քաշուած էին եւ
իրենց դիմադրութեան մասին յաջողած էին լուր զրկել ռուսական ճա-
կատը, օգնութեան յոյսով: Փախստական հայերը կը լսէին ռուսական
թնդանօթներու ձայնը, բայց ի վուր սպասեցին ազատարարի գալուս-
տին:

Կ. Սասունի, որ կը գտնուէր ռուսերու կողմէ գրաւուած Բու-
լանըխ-Մայազկերտ շրջանը, իր յուշերուն մէջ կը գրէ (*):

«Ամենէն մտահոգիչը զինուորական կացութիւնն էր: Յառաջա-
խաղացումը կ'ուշանար, մինչդեռ Սասունէն եւ Մուշէն ստացուած լու-
րերը ցոյց կուտային որ Տարօնի մէջ հրդեհը բռնկուած էր: Դեռ յետեանը
(ռուսական բանակի հետախուզական բաժնի հայ սպան Գ. Լ.) ցիշդ
այդ օրերուն ստացած էր շորի կտորի վրայ գրուած ծածկագիր նամակ
մը Փափագեանէն (Կուս) եւ Ռուբէնէն: Անոնք կը գրէին, Սասնոյ կոիւ-
նեքա մասին եւ կը յայտնէին թէ՛ հաւանական ընդհանուր բռնկումի մը
պարագային՝ իրենք միայն ուր օր պիտի կրնային դիմանալ: Եթէ այդ
կարն միջոցին ռուսական զօրքերը եւ կամաւորները չհասնէին, հայու-
քեան ամբողջ ազգամարտիկ պիտի վերջանար եւ ժողովուրդը կո-
տորուէր: Այդ ընդարձակ նամակը դրութիւնը խիստ լալուած կը ներ-
կայացնէր. ան սրտառուչ կոչ մըն էր Տարօնի օրհասական կուռին օգ-
նելու համար: Կային գործնական կարգադրութիւններ: Անոնք կը
խնդրէին որ պահակներ ունենան Եմերուքի գագաթին, եւ կրակ վա-
սենք հան. որպէսզի Սասնոյ լեռներէն նշմարուին բոցերը, իբր ազ-
դանշան, սկսած ընդհանուր յարձակողականին: Իսկ իրենք Սասնոյ
լեռներու վրայ պիտի վառէին երկու խոշոր կրակներ, ի նշան օրհասա-

(*) Կ. Սասունի՝ «Տաճկահայաստանի ռուսական տիրապետութեան տակ,
1914-1918», էջ 78:

կան կուրից: Ծածկագրի համար կը թելադրէին ցկատի ունենալ «Բլրսուլ բող չերգէ ԱՅոյ դաշտում» երգի այսինչ տուններ:

Բազմահազար արծիւներու աչքերը ջուր կտրեցան հեռաւոր Նէմրուրիին ակնկառոյց, բայց Նէմրուրի գագաթին երեղէն լեզուները չխօսեցան... Ու «Բլրսուլ այլեւս չերգեց ԱՅոյ դաշտերում»...:

Կ. Սասունի կը մեկտայրէ Դեւոյեանը, որ թրքական յարձակողական բանակի զօրաթիւր փոխանակ 30 հազարի, 70 հազար ցոյց տուած էր եւ այս տեղեկութիւնը իր ազգեցութիւնը ունեցած էր ուսուսական արագ նահանջին վրայ: Նոյն մեկտայրանքը սուլի մանրամասնօրէն կ'ընէ Կոմս, իր յուշերու Բ. հատորին մէջ (էջ 413):

Կր կարծենք, թէ այս մեկտայրանքները չափազանցութիւն են. ոուս հրամանատարութիւնը այս կամ այն դիմադրական կարեւոր շարժումը՝ նահանջ կամ յառաջխաղացում՝ չի կատարեր միայն մէկ տեղեկութեան վրայ հիմնուելով:

Կր մեղադրուին նաեւ հայ կամաւորական զուեղերու պետերը, մասնաւորապէս Անդրանիկը, որ առանց ենթարկուելու ոուս հրամանատարութեան հրամանին, օգնութեան չդնաց Տարօնի:

Չուր է հայ պատասխանատուներ փնտելի հոն, որ ամբողջ ռազմաճակատը եւ թիկունքը ոուս հրամանատարութեան ձեռքին մէջ էին. մանաւանդ արագ յարձակողական մը դէպի Տարօն՝ կարելի էր կատարել միայն ընդհանուր հրամանատարութեան անկողնութեամբ:

Ռուսերը իրենց համար բեռ կը նկատէին ազգապարտած հայ գաղթականները եւ երբեք տրամադիր չէին աչքաուու զոհողութիւն մը կատարել, հայ նոր բազմութիւններ ազատելու համար:

Պատմական իրողութիւնը այն է, որ 1915 Յուլիս 23ին, ոուսական բանակը, առանց ենթակայ բլրայու թրքական մեծ յարձակողականին, նահանջեց Տարօնի ձախառնէն, ուր 200 հազարի մօտ հայեր լքուեցան թշնամիին ձեռքը եւ տնաւոր եղեռնի մը զոհերը եղան:

ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՄԱԶԱՅՆԱԿԱՆՆԵՐՈՒ Ա Զ Գ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ը

1915 Մարտին, կովկասեան ճակատի վրայ էնվեր Փաշայի կրած պարտութենէն ետք, նոյն ամսուն այ տեղի կ'ունենար անպիւժ-Փրանսական նաւատորմի յարձակումը Տարտանլի վրայ, որ համաձայնականներու ձախողանքով կը վերջանար:

Թուրքերը կը զլային, թէ մահու կենաց կտիւ մը սկսած է օսմանեան կայսրութեան համար:

Մենք ազգովին պատրաստուած չէինք զիմադրուելու համար անհար վտանգը:

Օսմանեան սահմանադրութեան 1908-1914 տարիներուն, հայ պահպանողական դասը մէկ մտահոգութիւն ունէր՝ ճակատիլ ու կոուրիլ Հ. Յ. Դաշնակցութեան ազգեցութեան դէմ, որ ի յայտ կուզար «բաց ու բաց» ի պայքարներու ընթացքին:

1890-1908ին յեղափոխական արիւնալի պայքար մղող մեր հայ զուեղերը վար դրած էին իրենց պէնքերը, յուսալով որ օսմանեան սահմանադրութեան յարաբերաբար ազատ պայմաններուն մէջ, մեր ժողովուրդը պիտի գտնէր իր փրկութիւնը: Այս հոգեբանութեան ախտաւոր մէկ երեւոյթն էր, որ նորակազմ «Հայ Սահմանադրական-Իրաւագիր Կուսակցութիւն»ը 1908, Հոկտ. 18/31ին, Կ. Պոլսոյ մէջ հրատարակած իրենց ծրագրի նախաբանին մէջ կ'ըսէին, թէ Սահմանադրութեան հրոշակման հետեւանքով «յեղափոխական կուսակցութիւններու գոյութեան եւ գործունէութեան պէտքը ինքնին դադրած է այլեւս»: Վերակազմաւ Հնչակեան կուսակցութիւնն ալ իրենց միացած էր:

Քաղաքական գետնի վրայ ամբողջ ազգը, Ամենայն Հայոց Կատողիկոսին եւ Կ. Պոլսոյ Պատրիարքարանի ղեկավարութեամբ, իր յոյսը դրած էր Բարենորոգումներուն վրայ, որոնք պիտի գործադրուէին ոուսեթուրք 1914 Յունուար 6ի համաձայնութեամբ...:

Առաջին Համաշխարհային պատերազմը պայթեցաւ, գոնէ հայերուն համար անակնկալօրէն: Թուրքերը ծրագրած էին իրենց ընկերը եւ երբ առիթը ներկայացաւ, անդթօրէն վարուեցան, իրենց երկիրը աւերակ դարձնելու գնով:

1915 Ապրիլ 11/24ին, Կ. Պոլսէն հայ մտաւորականներու աքսորով սկսան հայկական տեղահանութիւնները: Բացի Կ. Պոլսոյ, Իգմիրի եւ Քէօթահիայի հայերէն, Թուրքիոյ բոլոր քաղաքներէն հայեր, դժնակ պայմաններու մէջ, անօթի եւ ծարաւ, ջրուեցան դէպի հարաւ, Միջագետքի անապատները: Ճամբու ընթացքին շատեր կոտորուեցան «Թէչիքիլաթը Մախսուսէ»ի չէթէներուն կողմէն:

Ամբողջ հայերէնք մը կը կորսնցնէինք եւ ազգ մը կ'անճիտուէր: Վասպուրականի, Տարօնի, Շապիւր Գարահիսարի, Ուրֆայի, Մուսասաղի զիմադրութիւնները մասնակի ընոյթ ունեցան, որովհետեւ ընդհանուր ազատամրութեան մը հաւատք չկար, իսկազուութեան օրերէն սկսած:

Շատ աւելի ուշ, հայութիւնը պիտի արթննար եւ Արարատեան դաշտին վրայ իր վրէժը պիտի լուծէր դարաւոր թշնամիէն:

Իսկ հայերու 1915ի տարագրութեան ատեն, համաձայնական հրեք պետութիւնները՝ Ռուսաստան, Անգլիա եւ Ֆրանսա, Հաւաս հեռագրական զորձակալութեան միջոցով հետեւեալ արգարարութիւնը բրին ջարդարարներուն.

«Ընկ ամիսէ ի վեր Հայաստանի քաղաք եւ բնակավայրերը ազգաբնակչութիւնը, յառաջ օտմանեան պաշտօնեանեան օգնութեամբ, հայերը կուտորիլու սերական ընդացին մէջ է: Կտորածներ տեղի ունեցած են Կարին, Գերջան, Ակն, Բաղէշ, Մուշ, Սասուն, Ջէյրուս եւ ամբողջ Կիլիկիոյ մէջ: Վանի շրջանին մտաւորապէս հարիւր գիւղերու բնակիչները ամբողջովին կտորուած են: Վան քաղաքին մէջ հայկական քաղաք պաշարուած է քաղաքի կողմէն: Միամասնակ օտմանեան կառավարութիւնը Պոլսոյ մէջ իսկապէս հալածանք սկսած է իտաղաղ հայ ազգաբնակչութեան դէմ: Նկատի ունենալով Թուրքիոյ այս նոր սերունդները մարդասիրութեան եւ քաղաքակրթութեան դէմ, ԳԱՇՆԱԿԻՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿՈՎ ԿԸ ՅԱՅՏՆԵՆ Ք. ԳՐԱՆ, Թէ ԻՐԵՆՔ ԱՅԻ ՈՃԻՐՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԵՏԻ ՆԱՍՏԵՆ ՕՍԻՐԱՆԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԲՈՂՈՐ ԱՆԿԱՄՆԵՐԸ, ԻՆՉՊԻՍ ՆԱՍՏԻ ԻՐ ԱՅՆ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՄԵԱՆԱԿԻՑ ԵՂԱՄ ԵՆ ՆՄԱՆ ԿՈՏՈՐԱՆԵՐՈՒ»(*):

Ինչպէս պիտի տեսնենք հետագային, հրեք պատասխանատուութեան չկանչուեցան սփռագործները, որոնք կանուխէն փախան Կ. Պոլսէն եւ ապաստան գտան Պէրլին ու Մոսկուա: Հայ յեղափոխութեան վրէժխնդիր զնդակով անոնք պետիւ պիտի փոռէին Պերլինի, Հոմի եւ Թիֆլիսի մէջ:

ՌՈՒՍ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԿԸ ԳՐԱԿԵՒՆ ԷՐԶՐՈՒՄԸ, ՎԱՆԸ ԵՒ ՊԵՐՏԻՍԸ...

Բոլշևիկները, երբ իշխանութեան զլուխ եկան, հրատարակութեան տալիս ցարական կառավարութեան զազանի փաստաթուղթերը: Հայաստանի վերաբերեալ մտար թարգմանարար յայտատու 1926ին երեւանի մէջ՝ «Հայաստանի Ատոնումիան եւ Անտամտան» խորագրին տակ, Աշոտ Յովհաննիսեանի յոտաջարանով:

Սասրեւ կատարեք հաստատած մը «Հողաշինարարութեան աւ հո-

(* «Յուսարեք», 1947, Ապրիլ 28:

ղաջործութեան զլուսար կառավարիչ» Ա. Կրիվոչէի տեղեկագրէն, ուղղուած արտաքին զործերու նախարար Սազանովին.

«Տանկական քակատում մեր ռազմական գործողութիւնները յաջողակ հետեւանքները հիմք են տալիս կարծելու, որ աւելի կամ պակաս մօտիկ ապագայում մենք հնարատուութիւն կ'ունենանք ուղղելու կողմնակա սահմանները եւ Փոքր Ասիայում ու Հայաստանում մեր տիրապետութիւնները կ'արագանան»:

Տեղեկագիրը կը մատնանչէ այն շրջանները, «որոնք զիւրապետեանեան զերաւեսչութեան համար կական նշանակութիւն ունին»՝ Ան ծովի արք միւնէ Աստան, յետոյ «Արարի ու Եփրատի վերին հոսանքի աւազանն եւ սրբ ստորարար կոչում է Հայաստան (էրզրումի ու Վանի վիլայէթները, այլեւ Պիքլիսի վիլայէթի մի մասը): Այս մարդի մէծ մասը ծովի մակերեսից բարձր գիրք ունի եւ լիովին պիտանի է որոս գաղթականների համար: Այս տեղ ամայի հողերն ընդգրկում են ընդարձակ տարածութիւններ»:

Տեղեկագիրը կարեւոր մարդ կը նկատէ նաեւ պարսկական Մուզանը. եւ կ'աւելցնէ. «Էլ աւելի ցանկալի կը լինէր ամբողջ հիւսիսային Արքեպոլի կցումը, որովհետեւ այդ դէպքում մեզ կ'անցնէր Արաքսի ամբողջ աջ ափը եւ այսպէսով վերացում կը լինէին այն էական անյարմարութիւնները, որոնք գետի աւազանում ոտոցման ցանց կառուցելիս՝ առաջ են գալիս վերջինս սահմանային դրութիւնից»:

«Հայաստան եւ Հայ Դատը (ժաւերազրեր)» հատորին մէջ (Ըջ 198) հրատարակած ենք կողմնակա բանակի հրամանատար Կոր. Ռուսենիչի 1915 Ապրիլ 5ի տեղեկագիրը, ուր ան կը յայտնէ Արաշկերտի հովտի մասին.

«Հայերը մտադիր են, հողերը շահագործելու համար, գրանել Բասիլի եւ Բիւրբերի լճաւ հողերը իրանց փախտականներով: ԱՅՄ ՄՅԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՄ ՀԱՄԱՐՈՒՄ ԵՄ ԱՆԸՆԳՈՒՆԵԼԻ Այն պատճառով որ հայերի գաղթած հողերը պատերազմից յետոյ դժուար կը լինի ետ վերցնել. կամ քէ ապացուցանել՝ գաղթածը իրանց չէ պատկանում. որի ապացուցն է հայերի գաղթումը ոտոքբնական պատերազմից յետոյ:

«Չափազանց ցանկալի համարելով բնակեցնել սահմանակա վայրերը ոտոսակա տարրով, եւ կարծում եմ, որ կարելի է մտցնել կեանքի մէջ մի ուրիշ միջոց, որ աւելի է համապատասխանում ոտոսական շահերին»:

Խոսելով Արաշկերտի, Գիւլիսի եւ Պալապիտի հովիտներէն շերտերը զուրս քշելու մասին, Կոր. Ռուսենիչ կ'աւելցնէ.

«Իսկ ապագայում երբ յիշած հավիտենքը մտնեն ռուսական կայսրության սահմանների մէջ, բնակեցնել նրանց Գուպանից եւ Գոնից՝ գաղարածներով եւ այս միջոցներով կազմել սահմանամերձ գաղագուժիւն»:

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ԱԶԳ. ԲԻՒՐՈՅԻ ԲՈՂՈՔՆԵՐԸ

Թրքահայաստանի գրաւումը նահանգներուն մէջ կոպուներ տեղաւորելու ծրարերը եւ այս առթիւ հայ գաղթականներու հանդէպ ցոյց տրուած դժուարութիւնները, հայածանձները ստեղծեցին զժողոճութիւններ: Ասոր հետեւանքով ալ Կաթողիկոսը եւ Ազգ. Բիւրոյի նախագահութիւնը 1915 Յունիս 4 թուակիր գրութեամբ մը զիմեցին Կոստ Իլլարիոն Իւանովիչին:

Ահա՛ այդ գրութիւնը (*):

«Համաձայն այն տեղեկութիւնների, որ ես ստացել եմ տեղական ներկայացուցիչներից. Թիւրքաց Հայաստանի այս շրջանում ոչ միայն հայերին չէ ցոյց տրուում որեւէ օգնութիւն կամ պաշտպանութիւն բրուտութիւններից, այլեւ կատարեալ արհամարհանքի է մատնուում ամէն մի խնդիր քրիստոնէայ ազգաբնակչութեան պաշտպանութեան մասին, մի բան որ առիք է սալիս փորդ գեղերի գլխաւորներին եւ չեքէզներին շարունակել անպատիժ հարստահարութիւններ կատարել անպաշտպան քրիստոնէաների վրայ: Մինչդեռ հայ ազգաբնակչութեան արգիլուած է մտնել Մալազկերտի բերդային շրջանը. զինուած մահմետականները, չեքէզները, որոնք դեռ երէկ դուադրօրէն յարձակուում էին ռուսաց զօրքերի վրայ, բոլորովին ազատ զբօսում են. ոտքից զլուխ զինուած եւ անպատիժ կերպով նոր յարձակումներ են գործում հայոց գիւղերի վրայ: Իսկ այն հայերը, որոնք զէնքը ձեռին կրուել են թշնամու դէմ, խուճարկութիւնների են ենթարկուում եւ զինաթափ են անում. եւ նրանց բնական ձգտումները կտուելու ընդհանուր թշնամու դէմ ռուսաց փառաւոր ազատարար բանակի շարքերում իբրեւ կամաւորներ, հանդիպում են բացարձակ թշնամական վերաբերմունքի, որ արտասայտուում է նրանց ազգային զգացումներին եւ ինքնասիրութեան համար վիրաւորական ձեռքի մէջ: Այս բոլորից յետոյ հասկնալի է այն անհամարտութիւնն ու երկիւղը որոնցումով բռնուած է յիշեալ շրջանի հայ ազգաբնակչութիւնը»:

(*) 140՝ «Անցեակից», էջ 324:

Այս նամակի ողիւյ՛ Յունիս 4ին գանգատներ բրին Վարանցով-Դաշկովին ՄԵՐՈՅ ԵԿԻՍԿ., Ա. Պատիսեան եւ Սամսոն Յարութիւնեան: Տեղի ունեցած կը տարօրինակ դէպք մը: Վանի զինուորական հրամանատար զօր. Նիկոլաւէն հեռագիր ստացուած էր, թէ հայ կամաւորները կրակած են ռուս զինուորներուն վրայ, զրազած են կողպուտով եւ թալանով: Կովկասեան սպայակոյտի կողմէ այս հեռագիր պաշտօնապէս կը հազարդուի Պատիսեանին, աւելցնելով թէ այս տեղեկութեան հետեւանքով փոխարքան հրամայեր է դադրեցնել հայ նոր կամաւորական խումբերու կազմակերպումը: Վանէն եկած լուրը բոլորովին անհաւատալի կը թուի Աղլային Բիւրոյին, քանի որ նոյն զօրավար Նիկոլաւեր զրեթէ միտածմանակ նամակով կը յայտնէ զարձեւայ Պատիսեանին իր կատարեալ դժուարակութիւնը հայ կամաւորական խումբերու վերաբերմամբ: Ուստի՝ Ազգ. Բիւրոն իր փոխնախագահ Պանոնցըր եւ անդամներէն բանաստեղծ Յովհ. Թոնեանեանը կ'ուղարկէ Վան՝ քննութիւն կատարելու: Տեղւոյն վրայ կատարուած քննութենէն կը պարզուի, որ զօր. Նիկոլաւեր հայ կամաւորներուն մասին զժողոճեան հեռագիր չէ ուղարկած եւ թէ հեռագիրը փոխուած է ճամբան կամ ընդհ. հրամանատար Իւտենիչի գրասենեակին մէջ: Չինուած նաեւ ուրիշ փաստերով, յիացօրուած անձերը (ՄԵՐՈՅ ԵԿԻՍԿ., Ա. Պատիսեան եւ Ս. Յարութիւնեան) իրենց նամակին մէջ կը զրեն:

«Բոլոր վերոգրեալից պէտք է հետեւցնել. 1) որ գեներալ Նիկոլաւեւ իր մեծաւորներին չէ ուղարկել յայտարարութիւններ վերեւ յիշատակուած փաստերի մասին, որոնք վերագրուում են հայ կամաւորներին. 2) դէպի չէ եղել որ հայ կամաւորները հրացան կրակեն ռուսաց զօրքերի վրայ, ինչպէս նաեւ դէպի չէ եղել որ կամաւորները աւագաւորին կամ թալաններ կատարեն: Եւ սակայն այդպիսի անտեղի ու անարդար մեղադրանքը նախ եւ առաջ ստուեր է ձգուում հայ կամաւորական խմբերի անձուէր գործունէութեան վրայ, խմբերի, որոնք աչփի ընկնող քաջարիւթեամբ կուում են ռուս բանակի յառաջապահ շարքերում, երկրորդ՝ ստեղծուում է ատելութիւն, անբարեացակամութեան եւ գրգումամ մընոլորտ զօրքերի մէջ, եւ այս ոչ միայն հայ խմբերի վերաբերմամբ. բայց նոյնպէս եւ ամբողջ հայ ժողովրդի վերաբերմամբ, երրորդ՝ հայ հասարակութեան մէջ նա առաջ է բերուում դառնութեան եւ խորին վիրաւորանքի զգացումներ կերկայ պատմական ընդդէմ. երբ բոլոր երկիրներին ամբողջ հայ ժողովուրդը պատրաստակամութեամբ գոհուում է ամէն ինչ ռուսաց զօրքի յաջողութեան համար, տեսնելով այդ յաջողութեան մէջ քիւրքահայերի փրկութիւնը թիւրքական բազմադարեան լծից... Միայն հանգամանօրէն բնութիւն կատարելու

Եւ ժամանակին համապատասխան միջոցներ ձեռք առնելու ճանապարհով է որ կարելի կը լինի դադարեցնել բանակի խորհրդում անհասկնալի անբարեացակամութեան եւ անառիք բշխումը բնական ազդեցութեան տակ ծագած ինչ որ անատոյջ հոսանքը որ թէեւ այժմ, ճիշդ է սահմանափակ չափերի մէջ, բայց այնքան գործունեայ է այդ գագաճումներին արտաշարման մէջ դէպի հայ կամաւորներին աշխատանքը, որ բաւական է այս կամ այն կամաւորի կողմից մի շատ փոքրիկ խանգարում կարգապահութեան եւ կարգի որպէսզի բանակի այդ շրջաններում իսկոյն ձայն բարձրացնէ անարդար բացասական եւ բացայայտօրէն կրֆոս քննադատութիւն ոչ միայն մեր կամաւորներին հասցէին, որոնք քաջօրէն տանում են հաշիւներին համար մարտնչողներին հետ հաւասար կերպով ցարական ծառայութիւնը, բայց եւ ամբողջ հայ ժողովրդին հասցէին որին նրանք պատկանում են: Մինչեւ իսկ հայ փախստականները անշնչացած եւ խորապէս դժբախտացած, որոնք կորցրել են այս պատերազմի մէջ իրանց ամբողջ ստացուածքը եւ մերձաւորներին եւ փախչում են վայրենի քղերիւն եւ բիրտական անկեղծների հալածանքներից ամէն տեղ չեն գտնում այնքան բնական պաշտպանութիւն եւ հովանաւորութիւն:

«... Գործի պարզութեան համար մեզ բոլորը ենք տալիս նշանակել մի քանի դէպքեր որոնք պայծառօրէն պատկերացնում են այն վերաբերմունքը որ տնին դէպի հայերը առանձին մասերի գլխաւոր հանդիսացող մի քանի օֆիցերներ: Այսպէս, 1) չնայած որ գեներալ Նիկոլաներ բազմիցս կարգադրութիւններ է արել, որոնցմով արգիւտում է որեւիցէ պատրուակով զենք խլել հայերից, վերջիններս զինաթափ անելու դէպքերը նրան ստորադրուած պաշտօնեաներին կողմից կրկնելու են, առաջացնելով բարձրաձայն տրտունջ եւ անբաւականութիւն հայ ազգաբնակչութեան մէջ. որ իր կեանքի ներկայ երկիւղալից եւ ճրգնածամային միջոցին փրկութիւն որոնում է զենքի մէջ բացառապէս, ինչպէս ինքնապաշտպանութեան մէջ. 2) Քիրոյ առաջակային հրոսակալներին առաջնորդներից մի քանիսը, որոնք մասնակցել են վաղի շրջանում նորերս տեղի ունեցած հայկական սարսափելի ջարդերի մէջ, այժմ գտնում են մեր զորաբաժինների մէջ ինչպէս պատուաւոր ռազմագերիներ: Այսպիսի քիրոյ առաջակներից մէկը, Ալի-Բէկ, կարաֆինդ գիւղից, յայտնի կազմակերպողը հայերի արիւնտ կտորածի Քայազիտի շրջանում, իր բոլոր մեղսակիցների հետ գերի է ընկել մեր զորքերի ձեռքը եւ այրում է ազատ, վայելելով իրան շրջապատող անձանց ուշադրութեան բոլոր նշանները:

«Պէ՞տք է անելացնել սրան. թէ դէպի ոճրագործներն ունեցած այսպիսի վերաբերմունքը կարող է ծառայել իրեն խրախուսանք քրք-

տակն աշիրէթների համար շարունակելու իրանց գործունեութիւնը հայերի կեանքի եւ գոյքի դէմ: Այս բաշխութեան դէմքերը տեսնելը առաջացնում է խոր վրդովմունք եւ յուզմունք տեղական հայերի մէջ, որոնք իշխանութիւնների այդ տեսակ զիջող վերաբերմունքի մէջ դէպի այդ տեսակ դէմքերը հեզմանք ծուստուած մի ժողովրդի գագաճումին վրայ...»

«Իսկ սրա հետ մի շարքում ի՞նչ վիրաւորական հակասութիւն է Բերկրի-Գալէում մօտ ժամանակներս տեղի ունեցած երեք հայերի մահապատիժը, որոնք կախուել են այն պատճառով, որ նրանք հրացանագութիւն են սկսել քրդերի հետ, որոնք իջնում էին սարերից չնկատելով, տարածութեան հեռաւորութեան պատճառով, թէ նրանց մէջ 5 թէ 6 կոզակներ էին գտնում, որոնք ուղեկցում էին քրդերին Բերկրի-Գալէ: Այստեղ ակնյայտ է, տեղի ունէր մի տխուր թիրիմացութիւն, եւ հրացանագութիւնն էլ կոզակների համար չունեցաւ ոչ մի հետեւանք: Բայց տեղական զորամասի հրամանատար Հոհէտորֆը (ծագումով գերմանացի) գործին ուրիշ կերպ նայեց, յայտնեց իրանից բարձր իշխանութեան այնպիսի իմաստով, որ յետոյ հիմնուեց զինուորական-դաշտային դատարան, որ իր հերթին ուշադրութիւն չդարձրեց այն բանի վրայ, որ այդտեղ չէր կարող լինել եւ չկար մահապատիժի ենթարկուածների կողմից ոչ չար դիտարութիւն, ոչ, մանաւանդ, դիտարութիւն հրացան արձակելու ռուս զինուորների վրայ, որոնց հետ կողք-կողքի տուած կռիւ են մղում իրանց ընդհանուր թշնամու դէմ» (Լէօ, «Անցեալից», էջ 326):

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՆԲԱՐԵԱՅԱԿԱՄՈՒԹԻՒՆՆԸ

(ԲԺ. ԶԱՐԻԷԼԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ)

ԲԺ. Զարիելը 1912-1913ին բացառիկ աշխատանք կատարեց շահագործութիւն ստեղծելու համար Հայ Դատի շուրջ, ուստի կառավարութեան մօտ: Ան կարեւոր մասնակցութիւն ունեցաւ Կ. Պոլսոյ և Փարիզի մէջ կատարուած բանակցութիւններուն մէջ, որոնք ի վերջոյ յանդեպի թրքահայ նահանգներու բարենորոգումներու մասին կնքուած 1914 Յունուար 26 ռուսեթուրք համաձայնութեան:

Երբ 1914ի աշնան սկսաւ ռուսեթուրք պատերազմը, հայերը իրենց դատի լուծումը կը սպասէին ռուս զէնքի յաջողութիւնն: Այդ օրերուն, ԲԺ. Զարիելը վերսկսաւ իր ղիմումները Ս. Փեթրսպոլի, ուրիշ ստանալով յարջ հաւատարմութիւն, մեկնեցաւ Փարիզ, հոն ստանա-

լու համար նաև Ֆրանսական կառավարութեան հաւանութիւնը եւ աջակցութիւնը:

Բուլշեւիկներու կողմէ հրատարակուած ցարական կառավարութեան նամակագրութիւնը ցոյց կուտայ, որ այդ խոստումները «ակադեմական բնոյթ» կը կրէին. Ռուսաստան ի վերջոյ պիտի համաձայնէր իր ղաշակիցներուն հետ Թուրքիոյ բաժանումին, կցելով Թըրքահայ նահանգները Ռուսաստանին, առանց հայերուն ինքնավարութիւն տալու:

Ահա այդ նամակագրութենէն յատկանշական մասեր, զորս կը քաղենք 1926ին Երեւանի մէջ տպագրուած «Հայաստանի Աւտոնոմիան եւ Անտանտան» գրքէն:

Փարիզի ուսուցչական Ա. Պ. Իզվոլսկին 1915 Մայիս 4/17ին կը գրէ արտաքին նախարար Ս. Դ. Սազանովին.

«Այստեղ եկած Բժ. Զարիբեւը ինձ մի յուշաթուղթ ներկայացրեց՝ մեր արտաքին գործերի նախարարութեան մէջ իր ունեցած զբոյժների հետեւանման մասին: Այս քղթում, ի միջի այլոց, ասուած է, որ Ռուսաստանը մտադիր է պետութիւններին առաջարկելու, որ պէտքի Տանկաստանի սահմաններում ստեղծուի ինքնավար Հայաստան՝ Տանկաստանի գերիշխանութեան ներքեւ ու երեք պետութիւնների՝ Ռուսաստանի, Անգլիոյ ու Ֆրանսայի հոգատարութեան տակ: Իբրեւ Քէ Հայաստանի հողերը պէտք է ընդգրկեն ոչ միայն բոլոր հայկական նահանգները, բացի մի քանի ծայրամասերից, այլեւ Կիլիկիան՝ Միջերկրական ծովի վրայ նաւահանգստով, որ պիտի լինի Մերսինում, ի բաց առեւտրային Ալեքսանդրէթի ծոցը՝ Եւմուրքալիկով հանդերձ: Այնուհետեւ քղթում նշանակուած է, որ Քէեւ այս ծրագրին հաւանութիւն է տուել մեր արտաքին գործերի նախարարութիւնը, որն այս իրականացնելու գործում խոստացել է իր օգնութիւնը Լանտոնի ու Փարիզի իր դեսպանների միջոցով, — հայ պատուիրակները խուսափելու համար Ֆրանսայի ու Անգլիայի կասկածներից, մանաւանդ Կիլիկիոյ խնդրում, գործելու են ուսուցչականների տեսանկյունի միջամտութեան. որը կարող է տեղի ունենալ դժուարին դէպքերում միայն, այլեւ այն ժամանակ, երբ իրենց, դեսպանները հնարաւոր կը գտնէին այս: Ինձ յայտնի է, որ ինչպէս Բժ. Զարիբեւ, այնպէս եւ վերադարձած Պօղոս Նուպար Փաշան վերոգրեալ իմաստով արդէն արտայայտուել են այստեղի արտաքին գործերի նախարարութեան անդամների առաջ: Ուստի մի մերժէք տեղեկացնելու ինձ, թէ վերոյիշեալ ծրագրին դուք իրօք հաւանութիւն էք տուել եւ քէ ի՞նչ չափով ես պէտք է պաշտպանեմ այդ ծրագրին այստեղ: Կիլիկիոյ վերաբերեալ կէտը ինձ յատկա-

պէս փափուկ է քուսմ, որովհետեւ Ֆրանսիան մեզ արդէն յայտարարել է իր յաւակնութիւնների մասին այս մարզի նկատմամբ»:

ԻԶՎՈՎՍԿԻ

Արտաքին նախարար Ս. Դ. Սազանով մէկ օր Ետք, 1915 Մայիս 5/18ին, կը հետադրէ Փարիզի դեսպան Իզվոլսկիին.

«Ի՞նչ 2307

Ձեր բիւ 318 հեռագիրը ստացուած է:

Հայերի հետ ունեցած զրոյցները զուտ ակադեմական բնոյթ էին կրում: Զարիբեւին ոչ մի որոշ ծրագիր մատուցուած չէ եղել: Նրա այն խնդրին, որ մենք ի նկատի ունենանք հայերի բաղձանքները՝ Կիլիկիան մտցրած տեսնելու ապագայ հայկական մարզի սահմանների մէջ. պատասխան է տրուած եղել, որ մենք չենք կարող պաշտպանել այդպիսի մի ցանկութիւն՝ ի նկատի ունենալով Կիլիկիայում փրանսական շահերի սիրապետող լինելը»:

ՍԱԶԱՆՈՎ

Դեսպան Իզվոլսկին, զարձակու նոյն հարցի մասին, 1915 Յունիս 1/14ին կը գրէ Սազանովին.

«Ձեր Ի՞նչ 2307 Հեռագրով ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, ԵՍ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՄ ԶԱՆԱԳԻԻՐ ԿԵՐՊՈՎ ԶԵՆՊԱԼ ՄՆԱԼ ԶԱՒԲԵԵԻ ՈՒ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ ՅԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ՈՐԵԵԻ ՕԺԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ ՑՈՅՑ ՏԱԼՈՒՅ»:

Թուրքիոյ բաժանման հարցը երկար Թղթակցութիւններու նիւթ կը դառնայ Ս. Փեթրսպուրկի, Փարիզի եւ Լոնտոնի կառավարութիւններուն միջեւ: Ի վերջոյ Մեծն Բրիտանիոյ արտաքին լիազօր Սըր Մարկ Սոյքս եւ Ֆրանսայի ներկայացուցիչ Փիքօ կ'այցելեն Ս. Փեթրսպուրկ եւ Սազանովի հետ կը համաձայնին ընդունել պատրաստուած նախագիծը: 1916 Ապրիլ 13/26ին Սազանով յուշագրով կը յայտնէ քաղաքականութիւններու կարգապահութիւնները Ֆրանսական դեսպան պ. Փալէուսկին.

«1.— Ռուսաստան իրեն կը կցէ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի ու Պիլիսի շրջանները՝ մինչեւ ապագային որոշուելիք կէտ մը Սեւ ծովի եզրեր, Տրապիզոնէն արեւմուտք»:

2.— Քիւրտիստանի այն շրջանը, որ կ'իյնայ Վանէն ու Պիլիսիսէն հարաւ, Մուշի, Սղերդի, Տիգրիսի հոսանքի, Ճէգիբէ-Խպն-Օմարի ու Անասիայի վրայ իշխող լեռնազաւթներու գծի ու Մերգեբերի մարզի միջեւ՝ կը զիջուի Ռուսաստանին եւ որ ասոր փոխարէն Ֆրանսայի սեփականութիւն կը նանչնայ այն հողամասերը, որոնք կ'իյնան Այա-

տաղի, Կեսարիոյ, Ազ-Տաղի, Երլտըզ Տաղի, Զարայի, Ակնոյ ու հարբերդի միջեւ»:

Իսկ աւելի ետք, 1916 Յունիս 14/27ին դարձեալ Սաղանով զրու-թեամբ մը կը յայտնէ Կովկասի փոխարքայ իշխան Նիկոլայ Նիկոլաւե-րին.

«Ինչ կը վերաբերի հայերուն լայն ինքնավարութիւն տալուն, ապա պէտք է մտռնալ որ Մեծ Հայաստանի մէջ, որ այժմ նուաճած է Ռուսաստան, հայերը երբեք մեծամասնութիւն չեն կազմած, իսկ այն պատժիչ միջոցներէն ետք որ բուրբերը գործադրած են անոնց վերաբերմամբ պատերազմի ժամանակ եւ այն ալ իրենց՝ հայերու վկայու-թեամբ, զարհուրելի չափերով, բուսական այս յարաբերութիւնը ալ աւելի է փոխուած ի վնաս հայերու, որոնք ներկայիս դժուար թէ կազմեն բնակչութեան նոյնիսկ 1/4րդ մասը: Այսպիսի պայմաններու տակ ՀԱՅԵՐՈՒ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՊԷՍ ԱՅՆ ԱՆԱՐԴԱՐ ՀԵՏԵՒԱՆՔԸ ԿՈՒՆԵՆԱՅ, ՈՐ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍՏՐԿԱՑՆԷ ՄԵԾԱՎԱՍՆՈՒԹԻՒՆ ԿԱԶՄՈՎ ՏԱՐՐԵՐԸ»:

Իսկ իշխան Նիկոլայ Նիկոլաւեիչ իր 1916 Յունիս 3/16 թուա-կիր պատասխանին մէջ կը շեշտէ.

«Իմ խորին համոզումով ներկայիս գոյութիւն ունեցող ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՄՐՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՀԱՅՈՑ ՀԱՐՑ ԲՈՂՈՐՈՎԻՆ ԶԿԱՅ ԵՒ ԶՊԷՏՔ Է ՆՈՅՆԻՍԿ ԹՈՅԼԱՏՐԵԼ ԱՅՍՊԻՍԻ ՀԱՐՑԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՈՒՄԸ, որովհետեւ փոխարքայութեանս մէջ եղած ուս-սանկարտակ հայերը իրաւահասար որուական հպատակներ են՝ մահ-մետականներու, վրացիներու եւ ռուսերու նման»:

Ծովային նախարարութեան կողմէ 1916 Մարտ 20/Ապրիլ 2ին պատրաստուած տեղեկագիրը աւելի բացորոշ կերպով հակահայ տրա-մադրութիւն կը պարունակէ: Յիշելի ետք, թէ Սամսոնը եւս առնելու է Ռուսաստանի կցուելիք հողերուն մէջ, ուր որոշ թիւով տաճիկ-օս-մանցի նոր հպատակներ կ'ունենան, տեղեկագիրը կ'աւելցնէ.

«Դժուար թէ այս մի էական անյարմարութիւն լինէր, քանի որ Ռուսաստանի սահմաններում սրդէն բաւական մեծ քանակութեամբ մահմետականներ ունենք, եւ առայժմ համարեա ոչ մի հիմք չկայ կասկածելու նրանց լոյսալուսութեան մասին: Իսկ պատերազմը վերջանա-լուց յետոյ, նոր ծայրերկիրը կազմակերպելու շրջանում, ՏԱՂԻԿ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԻՑ ԱԻԵԼԻ ԱՆԻՈՐՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԵԼԻ Է ՍՊԱՍԵԼ, ՔԱՆ ՕՐԻՆԱԿ ՀԱՅԵՐՈՒՑ, ՈՐՈՆՑ ԵՐԱԿՆԵՐԻ ՄԷՋ ՅԱՏԿԱՊԷՍ ԱՆՀԱՆԳԻՍ ԱՐԻՒՆ Է ՀՈՍՈՒՄ»:

Միևնոյն քաղաքականութիւնը կ'արծարծէ ռուս արտաքին

նախարար Ն. Ն. Պոկրովսկի, 1916 Դեկտ. 8/21ին գրելով Լոնտոնի ղեկավան Կոմս Ա. Կ. Բենկենդորֆի.

«...Պոլսոյ ու Նեղոսցիների խնդրի՝ մեր օգտին վնասելով ու հայկական մարզերի մեր գրաւումով՝ Փոքր Ասիայի ապագայ կազմա-կերպման հարցը մեզ համար առաջնակարգ նշանակութիւն է ստանում:

«...Մեզ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆԱՊԷՍ ԱՆՀՐԱՍԹԵՇՏ Է, ՈՐ ՓՈՔՐ ԱՍԻԱՅՈՒՄ ՊԱՀՊԱՆՈՒԻ ԸՍՏ ԿԱՐԵԼԻՈՅՆ ՄԵԾ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՎ ԱՆ-ԿԱՆ ՏԱՀԱԿԱԿԱՆ ՄԻ ՊԵՏՈՒԹԻՒՆ, ՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՊԷՍ ՈՒ ՏՆՏԵՍԱՊԷՍ ՄԵՐ ԿՈՂՄԸ ՀԱԿՈՒԱԾ ԼԻՆԻ»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՒԸ

Պոլշեիկեան յեղափոխութեան հետեւանքով, Երբ ռուսական բանակը քայքայուեցաւ եւ նահանջեց բոլոր ճակատներէն, Հայաստան միակ մնաց ու 1918 Մայիսին արարատեան դաշտին վրայ քաջարար գիմարուեց եւ ետ մղեց թրքական բանակի բոլոր յարձակումները: Հայ ժողովուրդը ազատեցաւ Ֆիզիքական բնաջնջումէն եւ Մայիս 28ին հռչակուեցաւ Հայաստանի Անկախութիւնը:

Վարդանանց ճակատամարտին հաստար արժէք ունեցող այս պատերազմին մասնակցող հայկական զորամասերու թիւը եւ անուննե-րը կը քաղենք Բժ. Յով. Մելիքեանի յուշերէն. («Հայրենիք ամսագիր» 1925 Մայիս).

Մայիս 22ին քէ՛ Սարտարապատի եւ քէ՛ Բաշ-Աբարանի ուղ-ղութեամբ կռիւները վերջացան հայկական բանակի փառաւոր յաղթու-րեամբ:

Ելեւանի շտապի պետ՝ զինուորական բարձրագոյն կրթութիւն ստացած գեղապետ Վ. Բիլեանը կը պատրաստէ պատերազմի ընդհանուր ծրագիրը: Տարուած փառաւոր յաղթութեամբ, Բաշ Աբարանի եւ Սար-տարապատի մէջ, փրկուեցաւ հայութիւնը եւ անոր սիրտը կազմող երեւանը:

Յազարանակի հերոսներն զին գոր. Սիլիկեան, գեղապետներ՝ Դանիէլ Բէկփիրումեան, Հասան Փաշայեան, Վեֆիլեան, Դրօն եւ ու-րիշներ: Բաշ Աբարանի եւ Սարտարապատի կռիւներուն մասնակցեցան մօտ 10.000 հոգի հետեւեալ զնդերէն.

	հոգի
Գ. հայկական հրացանաձիգ զնդէն	1500
Ե. հայկական հրացանաձիգ զնդէն	800
Բարձրգանական Ա. զնդէն	1200
Նրզնկայի զնդէն	700
Մակուի զնդէն	300
Շտապի պարետի գումարտակ	200
Վանի Ա. եւ Բ. հրացանաձիգ զնդերը	2500
Բ. հեծելազոր գունդ	700
Զէյթունի հեծելազոր գունդ	500
Բարձրգանական հեծելազոր գունդ	800
Ցատուկ հեծելազոր գունդ	500
Սմբատի, Տելի Ղազարի եւ Մուրատի խումբեր	500
4 դաշտային հրետանիի մարտկոցներ 16 բնդամօքներով:	

Այեֆսանդրապոլէն բաժնուած հայկական բանակի երկրորդ մասը փաշուեցաւ Ղարափիլիսէի ուղղութեամբ, ուր կռուեցաւ զօր-նազարբէկեանի հրամանատարութեան ներքեւ. Մայիս 26ին:

Ղարափիլիսէի հերոսամարտին մասնակցած են հետեւեալ գորամասերը.

Բ. հրացանաձիգ հայկական գունդը	1000
Գ. հրացանաձիգ հայկական գունդը	1000
Դ. հրացանաձիգ հայկական գունդը	1500
Ե. հրացանաձիգ հայկական գունդը	800
Զ. հրացանաձիգ հայկական գունդը	300
Էրզրումի հրացանաձիգ գունդը	200
Անդրանիկի գորամասը	3000
Լոռիի գումարտակը	300
Կոտոշ Արամի խումբը	200
Ա. հեծելազոր գունդ	700
Կարսի հեծելազորի գունդ	600

Գ. եւ Բ. հրետանիի մարտկոցներ 12 բնդամօքներով:

Սարտարապատի, Բաշ Աբարանի եւ Ղարափիլիսէի կռիւներով հիմը դրուեցաւ Հայաստանի Անկախութեան:

ԳԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲՈՂՇԵՒԻԿՆԵՐԸ ԲԱԳՈՒԻ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

1917ի Հոկտեմբերեան յեղափոխութեան հետեւանքով ոռուս-կան բանակը քայքայուեցաւ եւ նահանջեց բոլոր ճակատներուն վրայ: Աշխարհածանօթ է Լենինի «Դէպի տուն» նշանաբանը ուղղուած ոռուզինուորին եւ որ յենարան ծոռայեց այնքան դիրուժեամբ զբաւելու իշխանութիւնը մայրաքաղաքին մէջ:

Այդ քաղաքականութեան հետեւանքով ալ ոռուս զինուորները եւ սպայութեան կարեւոր մասը հեռացան Հայաստանի ճակատէն, որ կը գտնուէր Տրապիզոն-Երզնկա-Տարօն-Վան գծին վրայ:

1917 Հոկտեմբերէն 1918 Նոյեմբերի զինադադարը, մօտաւորապէս տարի մը, հայութիւնը մնաց գլխաւոր մարտչնող ոյժը Թրքական բանակին դէմ: Վերջինը հաղիւ 1918 Սեպտ. 15ին յաջողեցաւ զբաւել Բագուն:

Ահա այդ կռիւներուն ռազմական արժէքի մասին է, որ գերման ընդ. սպայակոյտի պետ զօրավար Լուտենտորֆ իր յուշերուն մէջ կը գրէ:

«Գլխաւոր ազգակը, որ Գերման արեւմտեան բանակին խորտակումը առաջ բերաւ, վառելիքի պակասն էր, որովհետեւ թուրքերը չկրցան ատենին զբաւել Բագուն, եւ հայերն էին, որ թուրքերուն արգելք եղան Բագուն զբաւելու իր ժամանակին»:

Այս է պատմական ճշմարտութիւնը, ակամայ խոստովանութիւն մը գերման ռազմական մեծագոյն ղէմքին կողմէ որ ոչ մէկ բարեացակամ տրամադրութիւն ունեցած է դէպի հայերը:

Իսկ թուրքերու դէմ, պատերազմի դաշտին վրայ, հայ ռազմիկներու անհաւասար դիմադրութիւնը այդ ընդարձակ ճակատին վրայ, Դաշնակցութեան զբօշին տակ, Երզնկայէն մինչեւ Բագու, զեկամարեցին՝ Մուրատ, Սեպուհ, Անդրանիկ, Արամ, Նազարբէկեան, Սիրիկեան, Դրօ եւ Ռոստոմ:

Իսկ ի՞նչ բրին բոլշեւիկները մասնաւորապէս Բագուի պաշտպանութեան ընթացքին: Ներկայացնենք նաեւ այդ մասին պատմական յախճախիչ աւանդատուարեր վաւերապիւր մը, նոյնինքն Լենինի խոստովանութիւնը:

Հայպետհրատի կողմէ 1944ին հրատարակուեցաւ Երեւանի մէջ «Վ. Ի. Լենին, ռազմական զրազրութիւն 1917-1920», 155 էջնոց հատորը: 32րդ էջին վրայ կը կարգանք Լենինի կողմէ Մոսկուայէն

զրկուած հետազիր մը Ի. Վ. Ստալինին, Յարիցին. այդ հետազիրն մէջ կ'ըսուի:

«Բագուի վերաբերմամբ առաւելապէս կարեւոր է, որ դուք անընդհատ յարաբերութիւններ ձեռք բերէք Շահումեանի հետ եւ Շահումեանը գիտեցնայ գերմանացիներին առաջարկը. որ դեսպան Եոֆֆէիին արուած է Պերլինում, այն մասին որ գերմանացիները կը համաձայնուէին դադարեցնել բուրբերի յարձակումը Բագուի վրայ, եթէ Մենթ Գերմանացիներին ՀԱՄԱՐ ԵՐԱՇԽԱՒՈՐԵՆՔ ՆԱԽԹԻ ՄԻ ՄԱՍԸ: Ի ՀԱՐԿԷ, ՄԵՆՏ ԿՐ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԵՆՔ: Այսպէս ուրեմն, ձայն էս-էրներին նկատմամբ անողոք եղէք եւ յանախակի ծանուցեցէք»:

Այս քայլերը բուլղարացիները կ'առնէին որոշակաւ կանուխէն, 1918 Մարտ 3ին ստորագրած էին Պրեսթ Լիթովսկի անձնատուութեան դաշինքը գերմաններու եւ Թուրքերու հետ:

Աւելի ետք, Յուլիս 29ին նոյն Լենինը, այս անգամ ուղղակի Շահումեանին բուլղարացիներէն կամիսարին կը հետազրէ:

«Սովետների Ե. Համագումարի որոշման եւ կենտրոնական Սովետական իշխանութեան դէմ դաշնակցների ամէն տեսակ գործողութիւնները կը դիտուին որպէս դաւաճանութիւն: Զօրքեր ուղարկելու նկատմամբ միջոցներ ձեռք կ'առնենք, ԲԱՅՑ ՀԱՍՏԱՏԱՊԵՍ ԽՈՍՏԱՆԱԿ ԶԵՆՔ ԿԱՐՈՂ»:

Բարեկամութիւն եւ դաշինք գերմաններու, Թուրքերու հետ, իսկ Թշնամութիւն եւ թիկունքէն հարուած՝ Գաշնակցութեան դէմ որ մինչեւ վերջին պահուն գեկապարեց Բագուի ռազմական պաշտպանութիւնը: Ահա այսպէս վերջացաւ բուլղարացիներէն մասնակցութիւնը Բագուի պաշտպանութեան մէջ:

Դաւազիր այդ քաղաքականութեան դոճ Եզու Շահումեան որ Բագուի պաշտպանութենէն քաշուած էր իր բնակրներով, Երբ անդրիացիները գիրենք աքսորեցին ու ապա զնդակահարեցին:

ՍՄԱԼԻՆ ԶԻՋՈՒՄՆԵՐ ԿԸ ՊԱՐՏԱԴՐԷ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ, ՅՈՒՍԱԿՈՎ ԹՈՒՐԲԻՈՅ ԱՊԱԳԱՅ ԽՈՐՀՐԳԱՅՆԱՅՈՒՄԸ

«Հայաստան եւ Հայ Դատ»-ը Ա. հատորին մէջ (Էջ 93) տուած էինք Սովետներու կողմէ 1917 Դեկտ. 30ին հրատարակուած հրովարտակը Հայաստանի մասին, իսկ Բ. հատորին մէջ անկ գտած էր նոյն հարցի մասին եւ նոյն թուականին Սթալինի հրատարակած կոչը:

Իսկ այս անգամ կուտանք «Հայաստան եւ Թուրքիա» Սթալինի գրած մէկ յօդուածը 1921 Մարտ 4ին, «Ազգերու Կեանքը» թերթին մէջ, Ա. Աքաչքո ծածկանունով:

Այս յօդուածին թուրքերէն թարգմանութիւնը 1948 Օգոստ.ին հրատարակեց «Ճումհուրիյէթ», Երբ Հայաստանի հողային պահանջները կը վերաբարձուէին:

Սթալինի այս յօդուածը յստակ կերպով կը պարզէ բուլղարացիներու բնութիւնը, որ կակահար իրաւակարգն է եւ ոչ թէ հողային ընդարձակումները:

Յօդուածը կ'առնէք Կ. Պուլոյ «Ժամանակ»ի 1948 Օգոստ. 13ի թիւն:

«Անգարայի կառավարութեան համար, որ ազգայնական շահերու կը հետամտի, շատ մեծ կարեւորութիւն ունի հողերը նոյնութեամբ պահել եւ եթէ հնարաւոր ըլլայ, բնորոշակել: Մինչ բնկերվարական պետութեանց համար ոչ մէկ արժէք ունի հողը եւ ազգային միութիւնը ըստ քանի:

Ամէն օժանդակութիւն պէտք է բնծայենք Թուրքիոյ որ բացէ ի բաց պայքար բացած է կայսերապաշտ համաձայնական պետութեանց դէմ եւ առայժմ Արեւելի միակ կէս գաղթապաշտ պետութիւնն է: Որպէսզի այս պայքարին մէջ կարենանք օժանդակել Թուրքիոյ, պայման է որ այն պետութիւնները որոնք ի մտոյ անոր հետ բանակցութեան պիտի ձեռնարկեն, գոհացուցած ըլլան անոր ազգ. շահերը:

Եթէ նոյնիսկ կասկածիմք որ Անգարայի կառավարութիւնը կը հետապնդէ կայսերապաշտ, ծաւալապաշտական համաքրքական փառապաշտութիւն մը որ կ'ուզէ ի ձեռին պահել հայ ժողովուրդին բրնակած հողերը եւ նոյնիսկ ձեռք անցնել Կովկասը, պէտք չէ վախճանք անոր այս ծաւալապաշտական հակումներէն:

Որովհետեւ համաշխարհային յեղափոխութեամբ եւ Թուրքիոյ մէջ համայնակարութեան յաղթանակով ամէն ինչ զարմեայ բնականոն վիճակի մէջ պիտի մտնէ:

Անվախօրէն պէտք է հողային գիտմներ բնենք, որովհետեւ այս գիտմները առժամեայ բնոյք կը կրեն: 1918ին դեռ նոր ծնունդ առնել սկսած համայնակարութիւնը փրկելու համար ինչպէս որ Ռեքրանիան աշխիւնն Թուրքիոյ կէտր գոհեյալ յետագային ետ առինք, հիմա որպէսզի արեւել. յեղափոխութիւնը յաղթական հանդիսանայ, պայման է որ Թուրքիոյ առժամեայ հողային գիտմներ բնենք: Որպէզի Հայաստան այս յարեղաժողովին մէջ ի հարկին մեծագոյն ազգ. գոհողութիւնները բնէ, պէտք է Լեւինի սկզբունքներով շարժի: ՀԱՅԱՍՏԱՆ ԸՉ ՄԻԱՅՆ ՊԵՏՔ Է ՀՐԱԺԱՐԻ ԽԵՒ ՄԸ ԿԱՅՍԵՐԱՊԱՇՏԱԿԱՆ

ԲԱՂՁԱՆՔՆԵՐԷ, ԱՅԼ ԵՒ ՄԻՇՏ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԵՐ ՅՈՐՁՈՐՁՈՒԱԿ
ՀՈՂԵՐԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԿՑԵԼՈՒ ՆՄԱՆ ՇԱՏ ՀԱՄԵՍՏ ԲԱՂ-
ՁԱՆՔՆԵՐԷ: Նկատելով որ այսօրուան պայմաններու տակ անհնար է,
վանի եւ Պիթիլիսի նահանգներու վերաբերեալ պահանջներէն ալ պէտք
է հրաժարի:

Կարելի է ըսել որ Կարսն ու Արտահանը ոչ միայն Հայաստանը
այլեւ Ռուսիան ալ կը շահագրգռեն, որովհետեւ այս վայրերը Կով-
կասի դէմ լաւագոյն արշաւանքի մէկ խարիսխն են: Ով որ կ'իշխէ Կար-
սի, կ'իշխէ նաեւ Վլադիվասթոֆի: Թէեւ Սովիէթական Ռուսիա քաջ
գիտէ այս ճշմարտութիւնը, բայց այս խնդիրներուն չնայի պետական
շահերու տեսակետով: Ան կը հաւատայ որ պիտի յաղթանակէ պրոլե-
տարական յեղափոխութիւնը եւ այս յաղթանակին հետեւանքով բոլոր
արշաւանքի խարիսխները, բոլոր հողային գիշումները պիտի կորսնցնեն
իրենց արժէքը: Այս պատճառաւ Սովիէթական Ռուսիա իրաւունք ունի
պնդելու որ Հայաստանի համար անընդունելի պայման մը չէ Կարսն
ու Արտահանը առժամայէտ թողուլ թուրքիոյ ձեռքը, մինչեւ որ յաղ-
թանակէ համաշխարհային յեղափոխութիւնը եւ լիւրձ հաղերը վե-
րագտնեն իրենց իրական տէրերը:

Սովիէթական վարչաձեւին տեղադրումը Հայաստանի մէջ,
առաջին հիմնական պայմանն է սովիէթական համադաշնակցութեան
մը համար որ պիտի հիմնուի Հայաստանի, Վրաստանի եւ Թուրքիոյ
միջեւ: Շատ չանցած այս համադաշնակցութեան շուրջ պիտի համա-
յըմբռնին արեւելի բոլոր երկիրները: Անգարայի կառավարութիւնը
սա պարագան քաջ պէտք է հասկնայ որ Հայաստան սովիէթականանալէ
յետոյ Թուրքիոյ պիտի մնայ այլեւ ոչ թէ պայքարիլ այս սովիէթա-
կան Հայաստանի դէմ այլ միանալ անոր»: («Ժամանակ» 1948 Օրոտտ.
13):

ՀՆՁԱԿԵԱՆ ԵՒ ՌԱՄԿԱՎԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ՄԸ

ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԿԻԼԻԿԻԱ

*Գաղափար մը կազմելու համար, 1914ի պատերազմին, Հնչակեան
ի ռամկավար կուսակցութիւններուն գրասենեակներու մէջ պատրաստած
քաղաքական ծրագիրներու մասին, ստորեւ կուտանք երկու կուսակ-
ցութիւններու միջեւ 1915 Մայիսին Ազեքսանդրիոյ մէջ կնքուած հա-
մաձայնագիրը, որ Պէյրութի «Զարթօնք»ի 1950 Յունիս 2ի թիւին մէջ
հրատարակեց Միքայէլ Նաթանեան:*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան եւ Ռամկավար կուսակցու-
թեան նգիպտոսի մարմինները, մղուած պատմական բազէի անհրա-
ժեշտութենէն, միատեղ գալով ժամանակաւոր համագործակցութեան
հետեւեալ հիմունքները մշակեցին:—

ՆԱԽԱՐԱՆ

«Իւրաքանչիւր կուսակցութիւն իր ինքնուրոյն կազմը, կուսակ-
ցական գոյութիւնը պահելով հանդերձ, իր կուսակցական անհատա-
կան գործունէութեան բոլոր արտայայտութեանց մէջ թէ՛ սկզբունքա-
յին եւ թէ՛ տակտիկային տեսակետներէ ռեւէ հակասութիւն պիտի չը-
բովանդակէ այն հիմունքներու դէմ՝ որոնք կը բղխին սոյն համաձայ-
նագրէն:

«Այս համաձայնագիրը իր ամբողջ գործութեամբ երկու կողմե-
րու ցանկութեամբ պիտի շարունակէ գոյութիւն ունենալ, մինչեւ որ
սոյն համագործակցութիւնը առաջ բերող տրամադրութիւնները իրա-
գործուին:

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

«1) Համաձայնող երկու կողմերու մօտաւոր նպատակն է ինք-
նավար Հայաստան եւ Կիլիկիա:

«2) Ինքնավար Հայաստան եւ Կիլիկիա պիտի դրուի Սրբեակ
Համաձայնութեան կամ ռուսական հովանաւորութեան (protectorat)
ներքեւ՝ նայելով քաղաքական յարաբերութիւններու դասաւորութեան:

«3) Երկու կողմերը իրենք գիրենք բացարձակապէս հակառակ
կը յայտարարեն ինքնավար Հայաստանի (Կիլիկիայով միասին) գաղա-
փարի իրականացման՝ քրքական գերիշխանութեան (soveraineté)
ներքեւ: Այդ տեսակետով անոնք կը հանդիսանան անջատականներ
(séparatistes):

«4) Այն պարագային երբ վերայիշեալ կուսակցութեանց անջա-
տողական բաղձանքները, հակառակ այդ սեւեռուն գաղափարով թափ-
ուած բոլոր ջանքերուն, համերոպական պատերազմէն յետոյ չիրակա-
նանան, կուսակցութիւնք իրենց կը վերապահեն նոր պայմաններու հա-
մեմատ իրենց ուղղութիւնը գծել:

«5) Եթէ պետութեանց փոխ-յարաբերութեանց պատճառով,
ինքնավար Հայաստանը իրականանալու յաջողութեան պայմաններ
ներկայացնէ՝ Ռուսաստանի հետ կցուելով — համաձայնող կողմերը այդ
բանին պիտի չհակառակին:

«6) Եթէ հնարաւորութիւն չլինի Հայաստան եւ Կիլիկիա միատեղ ինքնավար դարձնել՝ որպէս ամբողջութիւն եւ քաղաքական յարաբերութիւններու դասաւորութեան հիմունքով՝ հնար լինի միայն Կիլիկիան ինքնավար դարձնել, համաձայնող կողմերը, այդ սարագային այդ տեսութիւնը պիտի պաշտպանեն եւ անոր ուժ տան:

«7) Ինքնավար Հայաստանի եւ Կիլիկիայի համար երկու կուսակցութիւնները կ'ընդունին հետեւեալ ընդհանուր ծրագիրը:

«Ինքնավար Հայաստան եւ Կիլիկիա պիտի ունենան քաղաքական ինքնավարութիւն՝ փարլամենթական ռեժիմով եւ ռամկավարական հաստատութիւններով:

ՏԱԿՏԻԿԱ

«1) Համաձայնող կողմերու ընդհանուր գործունէութեան տակտիկան պիտի լինի ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ-ԱՊՍՍԱՄԲԱԿԱՆ եւ ինչպէս նաեւ դիւաւանագիտական:

«2) Երկու կուսակցութիւնները խորապէս համոզուած են որ Հայկական Դատին իր ընդարձակ առումով բաւարար լուծմանը համար, նպատակայարմար եւ անհրաժեշտ իսկ է ԵՐԿՈՒ ԶԱԿԱՏԻ ՎՐԱՑ ԿՌԻՒ ՄՂԵԼ, այսինքն՝ ոչ միայն շեշտել ՏԱԶԿԱԶԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՄԷՋ ՍԿՍՈՒԱԾ ԿԱՄԱՌՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ եւ ուժեղացնել ու ընդարձակել զայն. այնու Կիլիկիոյ մէջ եւս առաջ բերել նոր ձգտումով ապստամբական շարժում:

«3) Երկու կուսակցութեանց Եգիպտոսի շրջանակները իրենց աշխարհագրական դիրքին բերմամբ իրենց գործունէութեան առաջին եւ գլխաւոր թատերաբեմ կը դարձնեն Կիլիկիան եւ ամէն ջանք պիտի թափեն իրենց արեւմտեան բոլոր շրջանակներն ալ (Պուլկարիա, Ռումանիա, Եւրոպա եւ Ամերիկա) համախմբել մասնաւորապէս եւ գլխաւորապէս իրենց Կիլիկեան գործունէութեան մէջ:

«4) Որպէս տակտիկայի գործունէութեան միջոց՝ անոնք սյարտաւոր են միասնաբար գործադրել այն բոլորը. ինչ որ ներկայ եւ ապագայ պայմանները անհրաժեշտ կը դարձնեն իրենց մտակայ նպատակին հասնելու համար:

ԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐՈՒՆ ԴԻՐՔԸ ԴԷՊԻ Ն. Վ. ՊՕՂՈՍ ՓԱՇԱ

«1) Երկու կողմերը միասին ուժ պիտի տան Պօղոս փաշա՝ Նուպարի նախագահութեամբ բացուած Ազգ. Շահերու Պաշտպանութեան

հանգանակութեան, նկատելով որ երկու կուսակցութեանց քաղաքական ծրագիրը կատարելապէս համաձայն է Ն. Վանութեան գործունէութեան ընդհանուր գծերուն եւ հետապնդած նպատակին եւ թէ երկու գործունէութիւնները նոյնութիւն կը կազմեն եւ պիտի մնան ներդաշնակ՝ մինչեւ մեր մտաւոր նպատակին իրականացումը:

«2) Ն. Վ. Պօղոս Նուպար փաշան կը հանդիսանայ երկու կողմերու քեֆնածուն որպէս Պատուիրակութեան ներկայացուցիչ-լիազօր ապագայ Գանկրէտին եւ որուն համար անոնք կը կատարեն պէտք եղած փրփակմանն ու դիմունքները:

ՏԵՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

«1) Երկու կուսակցութիւնները տեղական-ազգային հարցերու մէջ պիտի հանդիսանան ՀԱՄԸՆԹԱՑ:

«2) Երկու կուսակցութիւնները իրենց տեղական կազմակերպական ծախքերը գոցելու համար պիտի կրնան. բացի իրենց առանձին կուսակցական անդամավարներէն, իրենց համար հատոյթի աղբիւր ստեղծել՝ միասին կազմակերպելով հրապարակային ժողովներ, գրական երեկոյթներ, թատերական ներկայացումներ, եւն.:

ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

«1) Երկու կուսակցութիւնները տեղական ընդհանուր գործերը վարելու համար, համաձայնագրի ոգոյն համեմատ, կ'ընտրեն 6 հոգիէ բաղկացած մարմին մը, որ կ'ունենայ իր Ատենապետը, Ատենադպիրը, Գանձապետը, Հաշուակալը եւ խորհրդակալներ: Սոյն մարմինը իրաւասութիւն ունի ի հարկին վերոյիշեալ կուսակցութեանց չպատկանող գործակիցներ ալ առնել իր մէջ միաձայն հաւանութեամբ: Իր անունը պիտի ըլլայ՝ Եգիպտոսի Վարիչ Մարմին Գործակցող կուսակցութիւններու (Ս. Դ. Հնչակեան — Ս. Ռամկավար) — Comité Exécutif d'Egypt des Partis Arméniens Cooperants (S. D. Hentchakian — Constitutionnel Démocrate):

ՄԻՆՍ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ՄԻԱՑՈՒՄԸ

«Եգիպտոսի Վարիչ Մարմինը իր անմիջական գործունէութեան նպատակներէն մէկն ալ պիտի ընէ միւս շրջաններուն մէջ գտնուող Ս. Դ. Հնչակեան եւ Ռամկավար կազմակերպութիւնները, ինչպէս եւ վերականգնեալ Հնչակեան կազմակերպութիւնը համախմբել սոյն ծրագրին շուրջ եւ անոնցմէ կազմել մի ամբողջութիւն, մի ընդհանրական կեդ-

րոնական վարիչ Մարմնով, որի կեդրոնավայրը լինէր Եգիպտոս՝ իր աշխարհագրական դիրքին յարմարութեամբը:

Աղեքսանդրիա, 20 Մայիս 1915

Սահ. Ռամկ. Կուսակցութեան Կեդր. Ակումբ Եգիպտոսի (Ստոր.) Ապահ Պետրոսեան, Վահան Թէֆէեան, Լ.

Մկրտիչեան, Մ. Տամատեան

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Եգիպտոսի շրջանի պատասխանատու Մարմնի կողմից (Ստոր.) Ս. Սապահ Գիւլեան»

ՌԱՄԿԱՎԱՐՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԻՆ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՆ ԾՈՎԷ ԾՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ

1919 Օգոստոսին, ամերիկեան յանձնախումբ մը, ծերակուտական Մր. Չարլս Գրէյնի նախապահութեամբ, Կ. Պոլլիս կ'երթայ, քննութիւններ կատարելու եւ իմանալու ժողովուրդներու տրամադրութիւնները ամերիկեան հոգատարութեան մասին:

Այս առթիւ ամերիկեան յանձնաժողովին կը ներկայանայ նաեւ Ռամկավար կուսակցութեան կողմէ պատուիրակութիւն մը բաղկացած Յովհ. Յակոբեանէ, Արամ Ինճիճեանէ եւ Յովհ. Շահնապարէ: Անոնցմէ մէկը՝ Յովհ. Յակոբեան կը պատասխանէ ելլած հարցումներուն, ներկայացնելով իր կուսակցութեան տեսակէտները:

Այդ թուականին Ռամկավար կուսակցութեան ընկերային ու քաղաքական մտածելակերպին եւ ուղղութեան ծանօթանալու համար, կուսանք այդ տեսակցութեան կարեւոր մասերը, որոնք հրատալուուած են Միքայէլ Նաթանեանի կողմէ «Պայքար»-ի 1951 Դեկտ. 5ի թիւին մէջ:

Մր. Գրէյն.— Ի՞նչ է ձեր կուսակցութեան ծրագիրը:

Յովհ. Յակոբեան.— Մեր կուսակցութիւնը ինչպէս որ էր անունը կը ցուցնէ, տնօրբաթի սկզբունքներու վրայ հիմնուած է, շատ նման Ամերիկեան Տէմոքրատ կամ Հանրապետական կուսակցութիւններուն: Մեր ծրագիրը ազգային է եւ ապա-դասակարգային, ուրիշ բառով հակաընկերակրական: Մեր երկիրը ըլլալով ամայի եւ աւերակ, մենք կը հաւատանք Անկախ Հայաստանի վերաշինութեան համար անհատական նախաձեռնութեան եւ զրամադրութի քաջաբան, միեւնոյն աստիճան տարակոյս պաշտպան հանդիսանալով գործաւորի շահերուն օրէնսդրական միջոցներով: Մենք չենք հաւատար դասակարգային պայքարի եւ ձեր կուսակցութիւնը էր

ջանքերը պիտի ուզէր դասակարգային շահերը համեմատելու եւ արդէն Հայաստանի մէջ հիմնականում դասակարգի գոյութիւն չունին: Մենք կը դաւանինք մեծամասնութեան իշխանութեան, ի հարկէ յարգելով մէկտեղ փոքրամասնութեան շահերը: Բաղադրացիներու հաստատութիւն օրէնքի ստիճակ, հասարակաց ձրի կրթութիւն եւ ուրիշ ուսմկավար տեսակէտներ:

Մր. Գրէյն.— Իսկ հողային հարցի մասին, դուք այ միւս կուսակցութեան (այսինքն Դաշակցութեան) նման հողերու ազգայնացումը կ'ընդունի՞ք:

Յովհ. Յակոբեան.— Ոչ, մենք հողերու ազգայնացում չենք ընդունիր, այլ ընդունելով մէկտեղ հողային անհատական սեփականութեան իրաւունքը, մենք կ'ուզենք որ օրէնսդրութեամբ հողային սեփականութեան միւնիփում եւ մաքսիփում մը որչափ, յոյր դիւրացիներուն հողեր բաժնուին, իսկ մնացեալ հողերը վարձու կամ ֆոնտսիփոնի տալը պետութեան օրէնսդրական բաժնի որոշումին ձգուի:

Մր. Գրէյն.— Ի՞նչ է Հայաստանի մանտային մասին ձեր տեսակէտը:

Յովհ. Յակոբեան.— Հայաստանի մասին ձեր տեսակէտը յարգելէ առաջ թոյլ տուէք ինծի Հայաստանի անկախութեան մասին յայտնել ձեր բաղձանքները, որ ամբողջ հայութեան բաղձանքներն են: Մենք կը պահանջենք Անկախ եւ Միացեալ Հայաստան, որ իր մէջ պարունակէ Ռուսահայաստան, Երբանայաստանի վեց նահանգներ եւ կիլիկիան ազատ մուտք ունենալով Սեւ ծովու եւ Միջերկրականի վերայ: Հայաստանը պիտի դուրս Ազգերու Ընկերակցութեան հովանիին տակ եւ անկէ բղխած ունէր դաշնակից պետութեան հոգատարութիւնը սխրաժօտը պիտի ընդունինք: Մենք համակիր ենք դաշնակից յոյր պետութեանց՝ Ֆրանսայի, Իտալիոյ եւ Անգլիոյ, սակայն նախընտրութիւն կուտանք Ամերիկայի Միացեալ Նահանգաց, եթէ ան ընդունել:

Մր. Գրէյն.— Ձե՞ք կարծեր որ այդ սահմանները ընդարձակ են հայութեան թիւին համեմատութեամբ:

Յովհ. Յակոբեան.— Հայաստանի տնտեսական ապագան ապահովելու համար սահմանները կենսական են հայութեան եւ թէ այդ հողամասերու մէջ մենք այսօր այ մեծամասնութիւն ունինք բոլոր միւս ցեղերու վրայ: Ռուսահայաստանի հայութեան թիւը ձեզի ծանօթ է. վանի, Մուշի, Պուլաւըզի, Ալաշկերտի, Բասենի շրջաններու մէջ միայն վերապրող հայութիւն մը կայ, որ հիմա Կովկաս կը գտնուի: Կիլիկիոյ մէջ 120.000 հայ կայ այսօր: Խարբերը քաղաքի շրջակայից մէջ 10.000 հայ, եւ այսպէս ամէն տեղ ահապիւն թիւով վերապրողներ կան 400.000էն աւելի թրքահայեր կը գտնուին Կովկասի մէջ, պատրաստ որ մը առաջ իրենց բնակավայրերը վերադառնալու: Մինչ թրքական բարձրագոյն մէջ եղած պաշտօնական յայտարարութեան համաձայն, Ռուսիոյ գրաստ երէք վիլայէթներէն փոխած յաղթականներէն 500.000 հոգի սովի եւ համաճարակներու գո: երթալով բնաջինջ եղած են: Պատերազմէն առաջ հայերը վեց վիլայէթներու մէջ աւելի էին, քան ոչ միայն թուրքերը այլ բոլոր մահամետական ցեղերը, քիւրտ, չիքքէզ եւ նոյնիսկ գղղրլպաչ եւ կիլիկի ցեղերն այլ միասին հաշուելով: Եթէ դուք բարի ըլլաք ինձ թոյլ տալ պիտի բսեմ որ թուրքերը մէջ

երբեք ճշմարիտ վիճակագրութիւն եղած չէ եւ թուրքերու ցուցուցած վիճակացոյցներուն երբեք կարելի չէ վստահիլ:

Ար. Քրէյն եւ միւս անդամները իրարու երես կը նային եւ ժպտով, — մենք դիտենք, մենք դիտենք:

Յովհաննէս Յակոբեան շարունակելով կ'ըսէ. ես մեր ուշադրութիւնը հրաւիրելով պիտի ըսեմ թէ՛ նային ալ կեղծած են իրենց թիւերը հետեւեալ պատճառներով, նախ շատ արունքերու ծնունդը հաղորդուած չէ կառավարութեան, խուսափելու համար զինուորական տուրքէ, իսկ ազնիւներու զոյութիւնը անյայտ պահուած է վախճալով յափշտակութենէ եւ քննարարութիւնէ: Հայոց եկեղեցիները կնուսէքի առթիւ կ'արժանազան թուր ծնունդները եւ պատրիարքարանը ամենէն աւելի ձեռնհաս մարմինն է ճշգրիտ վիճակագրութիւնները կազմելու Քուրքիոյ Հայութեան:

Վերջապէս ես կ'ուզեմ չոր ուշադրութիւնը հրաւիրել այն կէտի վրայ որ Անկախ Հայաստանի յայտարարութենէն յետոյ, Քուրքիոյ եւ աշխարհի ամէն կողմը ցրուած Հայութիւնը պիտի վերադառնայ իր հայրենիքը: Վերջերս Պետարպիոյ, Ռուսմանիոյ եւ Պուլկարիոյ հայերը սկսած էին վաճառել իրենց կալուածները, Հայաստան դադարելու համար: Միայն պատրիարքարանէն տրուած հրահանգի վրայ էր որ այս կանխահաս շարժումը կասեցաւ:

Ար. Քրէյն.— Ինչո՞ւ ուսանայիք հակառակ են թրքահայերուն:

Յովհ. Յակոբեան.— Մենք խոր հակառակութիւն մը նշմարած չենք ուսանայիչու եւ թրքահայերու միջեւ: Եթէ կան թիւերմացութիւններ եւ զգոհութիւններ, հետեւանք են անշուշտ այս պատերազմի պատճառաւ ստեղծուած ոչ նորմալ կացութեան:

Յովհ. Ծանազար կը յիշեցնէ ուսանալոց զոհողութիւնը թրքահայոց հանդէպ երեսուն տարիներու ընթացքին:

Յովհ. Յակոբեան.— Իմ ընկերակիցս կը յիշեցնէ ինծի յայտնելու ձեզ որ ուսանայիչ երեսուն տարիներէ ի վեր ամէն զոհողութիւն բրած են թրքահայոց փերկութեան համար, անոնք չեն խնայած իրենց կեանքը եւ բարոյական ու նիւթական ամէն աշակցութիւն:

Ար. Քրէյն.— Բայց անոնց պետական տեսակէտը կը տարբերէ մերինէն, աւելի լաւ չէ՞ր ըլլար որ դուք անջատ կառավարութիւն կազմէիք, իսկ անոնք անջատ:

Յովհ. Յակոբեան.— Հայերը երկու անջատ կառավարութեանց բաժնէլը շատ փափուկ կացութիւն մը կը ստեղծէ եւ կ'ընայ վտանգել ազգային ու անտեսական բարգաւաճումը: Հայութեան ընդհանուր յատկանիշը նոյնն է, ինչպէս նաեւ մեր ձգտումներն ու իսկանները: Անցեալին տարբեր երկիրներու ընկալիչ ըլլալով, դատարարակութիւնը տարբեր ուղղութիւն ստացած է. չիտակ է այդ: Անոնք ուստական կրթութիւն ստացած են եւ մասամբ զերմանական, իսկ մենք Փրանսական, անգլիական եւ ամերիկեան: Անոնք ազգուած են ուստական ծայրայեղ գաղափարներէ, բայց մի ժողովուրդն որ հայը շատ խորապէս գործնական ողջմտութիւն մը (փրէքթիքըլ քաւմէնս) ունի, վաղը երբ իրական հայկական պետութիւն մը կազմուի, շուտով հա-

յերը պիտի կրնան տեսնել, ուրիշ բան է յօդուածները դրել, զիրքեր հրատարակել եւ ուրիշ բան իրական կեանքը ապրիլ: Անոնք կեանքի իրական պահանջներուն առջեւ պիտի խոնարհին:

Ար. Մոնրիովի.— Ձե՞ք վախճար որ միացմամբ անոնք մեծամասնութիւն կազմեն եւ իրենց տեսակետները պարտադրեն ձեզի, որով կասեցնեն մեր անտեսական գաղափարը, թող քանի մը տարի առանձին մնան, միեւնոյն հոգատար պետութեան ներքեւ, ապա կը միացուին:

Յովհ. Յակոբեան.— Անկեզ ըլլալու համար բռնք որ մենք այդ մեծամասնութեան չենք վախճար: Մենք թրքահայերս փոքր թիւ չենք կաշիք եւ ուստական միջոցները ամբողջութեամբ ծայրայեղ չենք համարեր: Մեր կուսակցութիւնը թէև ստաժմ գորատը չէ սակայն մեծ համակրութիւն ունի ժողովրդական խաւերու մէջ, մեր մասնաճիւղերը ցրուած են թուր գաղութներու մէջ եւ երկու տարիէ ի վեր ուստահայոց մէջ կազմուած է ճիշտագոյն կուսակցութիւնս որ մեր կուսակցութիւնն է տարբեր անտեսակողութեամբ, բայց միեւնոյն ծրագրով, անոնք մեզի հետ են եւ զօրաւոր բերրակամ կը մղեն ուստահայութեան մէջ լուրջ եւ զօրձնական տեսակետներու տարածման, երբ երկու հաստատները միացուին ծայրայեղները հորդամասնութեան մէջ պիտի մնան:

Արիշ պատուիրակ մը (գրեւորական).— Երբ հոն զօրաւոր կազմակերպութիւն մը կայ ծայրայեղ գաղափարներով տողորուած դուք ինչ ուժեր ունիք հակադրելու համար:

Յակոբեան.— Մենք զօրաւոր մաստրականութիւն մը ունինք Յրանալի. Անգլիոյ եւ մանաւանդ Ամերիկայի մէջ, կամ ուսուցիչ, իրատարան, երկրաչափ, զուգանտես, բժիշկ, բազմութիւ երիտասարդներ, կը հաստան Հայաստանի անկախութեան, յայտարարութեան անմիջապէս յետոյ հայրենիք պիտի վերադառնան եւ նստիւն զերակազմութեան եւ վերաշինութեան գործին: Անոնք պի՛ ի բերեն բարոյական եւ մասուր (ինքելլէջուր) այնպիսի ուժ մը, որ պիտի կարենայ հակադրել ծայրայեղութեան եւ կամ անհամբարաշխութեան ամէն փորձ:

Ար. Քրիկ.— Եթէ երկու Հայաստաններ մէկ կառավարութեամբ կառավարելու համաձայնութիւ, դուք ինչ կարգապարտութիւն կ'ստանարե՞ք:

Յովհ. Յակոբեան.— Միացեալ Ամբողջական Հայաստանի կառավարութեան իշխանութիւնը կը պատկանի հոգատար կառավարութեան: Թող մանտաղը կառավարութիւնը խորհրդակցելով Փարիզի համահայկական պատուիրակութեան հետ, կազմէ Հայաստանի մամանակաւոր կառավարութիւնը: Համոզուած ենք թէ՛ մեր կուսակցութիւնը, ինչպէս նաեւ ամբողջ Հայութիւնը ուժ պիտի սայ այդ կառավարութեան:

Ար. Քրիկ.— Մեծ թշնամութիւն կ'ո՞յ մեր կուսակցութեան եւ Գաշակցութեան միջեւ:

Յովհ. Յակոբեան.— Անցեալին այո, թշնամութիւն գոյութիւն ունէր: Հայ չեղափոխութեան շրջանին մենք հակառակ էինք անոնց գործելակերպին: Կը գտա-

պարտէինք անոնց ցոյցերը (տէմնսքրէյշըն) եւ միայն ինքնապաշտպանութեան կը հաւատայինք: Այս վէճերը երբեմն անհատականութեանց կ'իջնէին: Իսկ հիմա մեր պայքարը միայն սկզբունքային խնդիրներու շուրջ է եւ անհատական մենք բարեկամներ ենք իրարու:

Մը Քրէյնը շնորհակալութիւն կը յայտնէ եւ պատուիրակութիւնը կը մեկնի յայտնելով իր յարգանքներն ու շնորհակալութիւնը:

Մ Ա Յ Ի Ս Ե Ա Ն Ա Պ Ս Տ Ա Մ Բ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Հայաստանի անկախութեան շրջանին, բոլշևիկներու առաջին ելոյթը տեղի ունեցաւ՝ 1920 Մայիս 1 աշխատաւորական տօնին առթիւ: Նախ ցոյցեր կատարուեցան Երեւանի մէջ, ապա ապստամբութիւն՝ Ալեքսանտրապոլի մէջ, զբաժանապատ գնացքի պետ Մուսայէլեանի ղեկավարութեամբ:

Ապստամբութիւնը կարելի եղաւ ճնշել մասնաւորապէս արեւմըտահայ մարտիկները դործօն մասնակցութեամբ եւ անոնց յայտնաբերած վճռականութեամբ:

Բոլշևիկները 1932ին հրատարակեցին «Առաջին մասսայական-յեղափոխական շարժումները Հայաստանում - Մայիսեան ապստամբութիւնը, նիւթեր եւ փաստաթղթեր»:

Այս հատորէն առնելով կուտանք երկու կոչեր, որոնք կ'արտայայտեն այդ օրերուն, հայ ժողովուրդի բոլոր հոռանքներուն մէջ տիրապետող ազգային գիտակցութիւնը եւ խորշանքը գէպի գաւազներէրը:

ՀԱՅ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ Ո Չ

Հայրենակիցներ,

Այն ժամանակ, երբ հայկական հարցի լուծումը իր վերջին ամենափափուկ փուլին մէջ է, եւ ամենափոքր մի ծանրոց կարող է նըժարն այս կամ այն կողմը թեքել, պատահեցաւ դժբախտաբար մի ողբերգութիւն, որ չպէտք է պատահէր եւ հայ արիւն կրող ոչ մի մարդու ձեռքը անոր մէջ չպէտք է խառն լինէր:

Մեր անբախդ ու էանդուած հայրենիքի մէջ հայ ժողովուրդը քնաջնջող, մեզ կոտորող, մեր հայրենեաց լեռ ու ձոր, գետն ու վտակը հայ արիւնով ներկող Իքթիսատ կուսակցութիւնը, որ Նուրի ու Խալի փաշաների միջոցով փոխադրուած էր Աղբբէջան՝ գառան մորթը

վրան առած՝ մի օր յանկարծ Բագուի մէջ յայտարարեց սովետական իշխանութիւն եւ առաջին օրն իսկ իր նշանաւոր ուլտիմատու մով պահանջեց հայկական հանրապետութեանէն երեք օրէն յանձնել Ղարապաղ ու Զանգեզուր եւ իր գորախումբերն արդէն շարժման մէջ դրաւ, Հայաստանի վրայէն երբայ միանալու Մուսթաֆա Քեմալ փաշայի հետ, որը մինչեւ այժմ կը շարունակէ ջարդել տասնեակ հազարաւոր հայեր կիլիկիոյ մէջ, հակառակ մինչեւ իսկ Փրանսական բանակի ցոյց տուած պաշտպանութեան:

Խելագար եւ երկու աչքերով կոյրը միայն կարող էր չտեսնել այս կերպով հայկական Հանրապետութեան ընդհանրապէս եւ թրքահայութեան մասնաւորապէս, սպառնացող նոր վտանգը: Եւ սակայն գտնուեցան հայ անուց կրող մարդեր եւ հայ իրականութեան մէջ գործող, բայց հայ ոգիին ու զգացմունքներուն խորթ խմբակներ, որոնք փոխանակ Հայաստանի սահմանները պաշտպանելու այդ վտանգին դէմ, կողմնակից յայտարարեցին գիրեմի այդ հայադաւ շարժման եւ Ալեքսանդրապոլի ու Կարսի մէջ դիմեցին եղբայրասպան կոուի:

Այդ խելագարները ոչ միայն չտածեցին, որ այդ կերպով վերջին անբուժելի հարուածը կուտան լուծման օրերու մէջ գտնուող հայկական հարցին, այլ մինչեւ անգամ հոգ չըրին, թէ մեր երկրի սահմանները կը բանան եւ կը հրաւիրեն Կոմիտէ-աղբբէջանեան գառնաըզգեստ գայլերը, որպէսզի միացեալ հայութեան դիակներու վրայէն երթան ու միանան մեր դարաւոր թշնամիին, էնվէրի ու Թալէաթի հարազատ յաջորդ Մուսթաֆա Քեմալին:

Տարակոյս չկայ, որ ամէն հայ մարդ, որ իր երակներուն մէջ հայ արիւն կը կրէ, եւ իր գուլթին մէջ փոքր ինչ խելք, կը դատապարտէ այդպիսի խելագար շարժումը, եւս առաւել թրքահայերս, որ անոր անմիջական հետեւանքները պիտի կրենք: Այդ շարժումն ինչ տեսակ շարժառիթներ ալ ունեցած լինի, չի կրնար արդարանալ եւ մենք մասնաւորապէս պէտք է ծառանանք անոր դէմ եւ մեր բոլոր ուժերը ի սպաս դնենք կառավարութեան, իր բնին մէջ խեղդելու գայն եւ շեղեցնելու իր ոճրադաւ նպատակէն:

Հայ Ռամկավար կուսակցութիւնը մանաւանդ, որ տոգորուած է եղած միշտ հայ ազգի կրած տառապանքներով, որ կեցած է այն ուղիին վրայ. որ նախորդ բազմաւազար նահատակներն իրենց արիւնով գծած են նորա առաջ ումենէն արեւի իրաւունք ունի գայրոյթով մերժելու այդ հայրենադաւ ոճիրը, դատապարտելու անոր հեղինակները, միաժամանակ իր ուժերը տրամադրելով հայրենիքին սպառնացող ներկայ վտանգին հանդէպ: Բնաւ չենք կասկածիր, որ այդպէս կը մտածեն

իրը ընդհանրական Հայրապետ, մեր սրբազան պատեն եմ համարում այս ծանր, կ'ստեղծ օրհասական թուղթերին հայրական խրատով դիմել քուրթին եւ զգաստութեան կոչ անել — Հայ ժողովուրդ համախմբուիր քո հայրենի հանրապետութեան պահպանութեան գործի շուրջը. դա է քո հայրենիքի փրկութեան միակ մանապարհը:

Մե՛նք հաւատում ենք Հայ ժողովուրդի իմաստութեան եւ առողջ բնագոյին:

Մե՛նք հաւատում ենք, որ հայրենիքի միութեան, ազատութեան եւ շինութեան նամբի վրայ առաջ եկած արգելներն ու դժուարութիւնները կը վերանան, բորբոքուած մտքերը կը խաղաղուեն եւ ամէնք մի խօսք եւ մի հոգի կը դառնան ընդհանուր գործի նամբին: Վտանգը եւ խիստ ծանր վտանգը մեր դրանն է — հա՛յ ժողովուրդ, զգո՛յ իր եւ պատմութեան առաջ ծանր պատասխանատուութեան քեռի տակ մի՛ ընկնիր: Ամէն:

Գեորգ Ե. Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ի 14 Մայիս 1920 ամի

Եւ ըստ Տոմարիս ԽՅԿԹ

Ի Հայրապետութեան Մերոյ Թ. ամի

յկրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ի Վաղարշապատ

(«Առաջին Մասսայական-Յեղափոխական Հարժումները Հայաստանում», էջ 374-375):

Ս Ե Ի Ի Ի Դ Ա Շ Ն Ա Գ Ի Բ Ը

Մե՛նք պետութիւններու եւ պարտուած Թուրքիոյ միջեւ կնքուած միակ դաշնագրին է, որով ճանչցուեցան Հայաստանի անկախութիւնը եւ անոր հողային պահանջները Թուրքիայէն:

Այնքան մեծարժէք է այդ պատմական վաւերագիրը որ էջմիածնի կաթողիկոսը անոր յեցած՝ զիմումներ կատարեց միջազգային ատենաներուն, խորհրդաժողովներուն: Նոյնիսկ Խորհրդային Միութեան համակիր հայ կողմակերպութիւնները միշտ յիշատակեցին Սեւրի դաշնագրով ճանչցուած հայկական իրաւունքները:

Բայց եւ այնպէս Հայաստանի խորհրդայնացումի յայտարարութեան մէջ, առաջին բուլշեւիկեան կոտորածներ, առաջնորդութեամբ Թուրքիոյ բարեկամութեանն, ինքզինք «Տակառակորդ» անուանեց այդ դաշնագրին եւ Թուրքիոյ հետ միասնաբար անվաւեր հաշտեց այդ զաւինքը:

Մեր այս հատորին մէջ դարձեալ կը ներկայացնենք Սեւրի դաշնագրին հայերը շահագրգռող յողուածները:

Դաւիթբէր ստորագրեցին Թուրքերու կողմէ՝ Համտի փաշա, Բիզա Թէվֆիք պէյ, Խալիլ պէյ, իսկ Հայաստանի Հանրապետութեան կողմէ՝ Պատուիրակութեան նախագահ Աւետիս Ահարոնեան: Համաժողովին նախագահն էր պ. Միլլըբան:

Ահա Հայաստանի վերաբերեալ յողուածները.

Յօդ. 88.— Թուրքիակը յայտարարէ թէ ինք կը մանչնայ Հայաստանը իրը ազատ եւ անկախ պետութիւն մը, ինչպէս ըրած էին սուկէ առաջ դաշնակից պետութիւնները:

Յօդ. 89.— Թուրքիա եւ Հայաստան, ինչպէս նաեւ մյուս պայմանագիր բարձր կողմերը կը հաւանին Ամերիկայի նախագահին իրաւարարութեան յանձնել էրզրումի, Տրապիզոնի, Վանի Է. Պիթլիսի նահանգներուն մէջ Թուրքիոյ եւ Հայաստանի սահմանին որոշման խնդիրը եւ ընդունիլ նախագահի որոշումով Հայաստանի ծով իջնելուն եւ վերայիշեալ սահմանին յարակից բոլոր օսմ. հողերուն զինուորապէս շեղուցման մասին պատրաստուած բոլոր տրամադրութիւնները:

Յօդ. 90.— Երբ 89րդ յողուածին համաձայն սահմանը որոշուելով, յիշեալ նահանգներու հողերէն ամբողջ կամ մէկ մասը Հայաստանին փոխանցուի, Թուրքիա այժմէն կը յայտնէ թէ որոշման քուակումէն սկսեալ կը հրաժարի իր բոլոր իրաւունքներէն փոխանցուած այդ հողամասին վրայ:

Ներկայ դաշնագրին այն տրամադրութիւնները որ գործադրելի են Թուրքիայէն անցատուելիք հողերուն համար, այժմէն գործադրելի պիտի ըլլան վերայիշեալ հողամասին համար:

Հայաստանի վեհապետութեան տակ դրուած հողերուն պատճառով, Թուրքիայ պարտէն իր (Հայաստանի) յանձն առնելիք մասին, ինչպէս նաեւ օգնագործելիք իրաւունքներուն համեմատութիւնն ու հանգամանքը պիտի ճշդուին ներկայ դաշնագրին 8-րդ մասին (ելմտական տրամադրութիւններ) 241 եւ 244 յողուածներուն համաձայն:

Ի վերջոյ, ի հարկին կնքուելիք պայմանագիրները պիտի լուծեն այն բոլոր խնդիրները, որ ներկայ դաշնագրով չեն հարթուած եւ յիշեալ հողերուն քողման հետեւանքով կրնան առաջ գալ:

Յօդ. 91.— 89-րդ յողուածին մէջ յիշուած հողերէն մէկ մասը, երբ Հայաստանի քողուի, տրուած որոշման համաձայն Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ սահմանը տեղւոյն վրայ գծելու համար՝ նոյն 89րդ յողուածով նախատեսուած որոշումէն սկսեալ երեք ամսուան ընթացքին պիտի կազմուի սահմանագծման յանձնաժողով մը, որուն կազմութեան եղանակը յետոյ պիտի որոշուի:

Յօդ. 92.-- Հայաստանի սահմանները Ատրպեյջանի եւ Վրաստանի հետ պիտի որոշուին շահագրգռուող կառավարութեանց կողմէ հաւաքական համաձայնութեամբ մը:

Եթէ որեւէ կերպով, շահագրգռուող տէրութիւնները, 89րդ յօդուածին յիշած որոշումը տրուած պահուն, չյաջողին հաւաքական համաձայնութեամբ մը իրենց սահմանները որոշել. այն ատեն այդ սահմանը դաշնակից գլխաւոր պետութեանց կողմէ պիտի որոշուի: Այս սահմանը տեղին վրայ գծելու իրաւասութիւնն ալ անոնց կը պատկանի:

Յօդ. 93.-- Հայաստան կ'ընդունի եւ կը հաւանք գործադրել գլխաւոր դաշնակից տէրութեանց հետ կնքելիք պայմանագրի մը մէջ տրուելիք այն տրամադրութիւնները, զորս աներաժեշտ պիտի նկատեն նոյն տէրութիւնները, պաշտպանելու համար Հայաստանի մէջ ցեղային, բնակական եւ կրօնական տեսակետով մեծամասնութիւն տարրեր եղող մոզովուրդին շահերը:

Նպնակէս Հայաստան կը հաւանք գլխաւոր քաղաքակից տէրութեանց հետ կնքելիք պայմանագրի մը մէջ գրուելիք այն տրամադրութեանց, զորս անոնք աներաժեշտ կը նկատեն փոխադրութեանց սպասութիւնով եւ ուրիշ ազգերու առեւտրական հասարութեան համար:

* * *

Համաձայն Աւերի դաշնագրին, Թուրքիան կը կորսնցնէ Սուրիան, Միջագետքը, Պապուսինը — որոնք պիտի յանձնուին Ազգերու Դաշնակցութեան կողմէ նշանակուած պետութեանց հոգատարութեան — եւ Հիճազը որ կը հռչակուի ազատ ու անկախ պետութիւն: Յետոյ, Թուրքիա բացարձակօրէն կը հրաժարի Եգիպտոսի եւ Կիպրոսի վրայ ունեցած իր վեհապետական իրաւունքներէն: Կը ճանչնայ Մարոքի եւ Թունիսի մէջ Ֆրանսայի թեւարկութեան իրաւունքը: Այս ճանաչումը կիրարկելի կը նկատուի — Մարոքի համար, 1912 Մարտ 30էն, իսկ Թունիսի համար 1881 Մայիս 12էն: Թուրքիա կը հրաժարի նոյնպէս Լիբիայէն — որ համաձայն 1912 Հոկտեմբեր 18ի Լոզանի դաշնագրին, փոխանցուած էր Լիբիոյ սուլթանին — եւ Երկրաստան կղզիներէն որոնք կը յանձնուին Իտալիոյ:

Դաշնագրին Արդ դրուիւր կը վերաբերի փոքրամասնութեանց իրաւունքներու պաշտպանութեան — ազատութիւն կեանքի եւ ըստացումի, հասարական կամ անհատական ազատութիւն գաւառանքի եւ լեզուի: Թուրքիա կ'ընդունի 1915ի Լքեայ Գոյլբուր օրէնքին անարգարութիւնը եւ չեղեալ կը նկատէ զայն: Թուրքիա յանձն կ'առնէ գիւրացեայ 1914 Յունուարէն յետոյ երկրէն հեռացող քաղաքացիներու ներգաղթը եւ վերագործեն անոնց զբաղեալ ստացուածքները (144): Ամէն

Թրքահայաստակ, առանց ցեղի եւ կրօնքի խտրութեան, հաւասար իրաւունքներ կը վայելէ (145): Թուրքիա կը ճանչնայ օտար կրթական հաստատութեանց վկայականները եւ յանձն կ'առնէ բանալ ազատ ասպարէզները ոչ-խլամ քաղաքացիներուն առջեւ (146): Փոքրամասնութիւնները կը վայելեն եկեղեցական ու կրթական ինքնավարութիւն եւ Թուրքիա կը յարգէ Սուլթաններուն կողմէ նախապէս տրուած բոլոր Փերմաններն ու պարտքները: Ինչ նոր օրէնք որ պատրաստուած է այս վերջինները ջնջող կամ սահմանափակող, չեղեալ կը նկատուին (149):

Դաշնագրին Ե. գլուխը խստօրէն կը կրճատէ Թուրքիոյ զինուորական, ծովային ու օդային ուժերը — բանակ՝ 50.000, նաւատորմ՝ 7 եղերապահ ու 6 թորփիլահալած, զինուորական օդանաւ՝ ո՛չ իսկ մէկ հատ:

Թուրքիա կը հաւանք Դաշնակիցներուն յանձնել այն անձերը որ պատասխանատու կը նկատուին օսմանեան կայսրութեան հողամասերուն վրայ պատերազմի ամբողջ տեւողութեան գործուած ջարդերուն: Այս անձերը պիտի դատուին Դաշնակիցներու կողմէ նշանակուած դատարաններուն առջեւ: Թուրքիա պիտի ճանչնայ այս վերջիններուն իրաւասութիւնն ու հեղինակութիւնը (230):

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒՒԼՍԸՆԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՎ

Ամբողջական Հայաստան միացեալ ձեւով, Ուիլսոնեան սահմաններն ալ մէջը՝ տարածութիւնը կ'ըլլար 161.370 քառ. քիլոմեթր, տարածութիւն մը որ ի սփիւռս աշխարհի ցրուած հայութիւնը կընար պարփակել:

Սոյն տարածութենէն միայն կայ ներկայ Հայաստանի 31.980 քառ. քիլոմեթր հողամասը, բաժնուած այսպէս. —

1.— Երեւան՝ 3140 քառ. քիլոմեթր, 2.— Էջմիածին՝ 3750 քառ. քիլմ., 3.— Լէնինական՝ 3300, 4.— Բաժապակ-Լոռի 5000, 5.— Ղազար-Իջևան՝ 4000, 6.— Նոր Պայակոտ՝ 4790, 7.— Դարալագեալ՝ 2 հազար, 8.— Չանդեզուր 6 հազար քառ. քիլոմեթր:

Ներկայ Հայաստանէն դուրս կը մնան եւ սակայն 1925ին Հայաստանի մաս կը կազմէին կարգ մը գաւառներ՝ 39360 ք. քիլոմեթր տարածութիւնով: Այսպէս. —

1.— Սուրմալու գաւառ 3650 քառ. քիլմ, 2.— Շարուր նախնիներն 5600, 3.— Ախալքալաք 2800, 4.— Լեւոնային Ղարաբաղ 10 հա-

գար, 5.— Կարս 5800, 6.— Կաղզուան 4450, 7.— Արտահանչ հազար, 8.— Օլթի 3 հազար քառ. ֆիլմէթր:

Որով, ներկայ Հայաստան՝ 31980. իսկ սոյն պատաները՝ 39350 քռ. ֆիլմ. տարածութիւն, դումար՝ 71330 քռ. ֆիլմ. տարածութիւն: Այս էր 1920ին Արեւելեան Հայաստանի տարածութիւնը:

1920ին, Օգոստոս ամսու 10ին Սևրի մէջ կերուած դաշնադրով, իրաւասութիւն տրուեցաւ Միացեալ Նահանգներու Տանդուցեալ Հայասէր Նախագահ Ուիլսոնի զծէլ Հայաստանի սահմանները: Որով, բացի Արեւելեան Հայաստանէն, որ ունէր 71330 քառ. ֆիլմ. տարածութիւն, Արեւմտ. Հայաստանը կ'ունենար 90 հազար քառ. ֆիլմ. տարածութիւն: Այսպէս.—

- 1.— Վանի ամրոցը տարածութիւն 39300 քառ. ֆիլմ. Հայաստանի մաս 20 հազար,
- 2.— Էրզրումի ամրոցը տարածութիւն 49700 քառ. ֆիլմ. Հայաստանի մաս՝ 40 հազար,
- 3.— Բաղէջի (Պիթլիս) ամրոցը տարած. 27100 քառ. ֆիլմ., Հայաստանի մաս՝ 15 հազար,
- 4.— Տրապիզոնի ամրոցը տարածութիւն 32700 քառ. ֆիլմ., Հայաստանի մաս՝ 15 հազար: Գումար՝ 90 հազար, Արեւելեան ներկայ Հայաստան՝ 31980, Արեւելեան Հայաստանի միւս մասեր 1920ին՝ 39350, Արեւմտեան Հայաստան Ուիլսոնեան սահման 90 հազար, ընդհանուր տարածութիւն 161.330:

Ուիլսոնեան սահմաններով Արեւմտեան Հայաստանի մաս պիտի կազմէին Վանի նահանգէն Վանի Սանճարը, Բաղէջի (Պիթլիսի) նահանգէն Բաղէջ և Մուշի Սանճարները, Էրզրումի նահանգը զբեթէ ամրոցը թեւեւ, Էրզրումի, Հին Պայադիտի և Երզնկայի Սանճարները, Տրապիզոնի Սանճարին և Կիւմիշլիանէին ալ տրեւելեան մասերը:

Սահմանը կը սկսի Սև ծովի վրայ գտնուող Տրապիզոնէն, մաս մէկ ժամ արեւմուտքէն Բյաթանտ պորտի քաղաքէն, մէջը կ'առնէ Տրապիզոնը, կը շարունակէ դէպի հարաւ արեւելք, մէջը կ'առնէ Երզնկա քաղաքը, կ'անցնի Տէրսիմի լեռներու հիւսիսէն և հարաւ արեւելք ծուրով՝ մէջը կ'առնէ Մշոյ գաղար և Սասունի մեծ մասը: Հոս իր հարաւային սահմանն է Տարսուի շրջան, որ կէ Վանայ լիճի արեւելքէն կը դիմէ դէպի հիւսիս, Մասիս, Պարսկաստանի և Թուրքիոյ ներկայ սահմանադրուիտը:

Այդ ձևով Արեւմտեան Հայաստանը իր մէջ կ'առնէ ամրոցապէս Վանայ լիճը, Արածանիի և Արեւմտեան Եփրատի վերին և միջին հովիտները, ձորոտի վերին և միջին հովիտը:

ՌԻՌԵՏԻՍ ՌԻԿԱՐԴԻ, ՄԻԱՅՅԱԿ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՆԱԽԱԳԱՀԸ՝ Անուց՝ որոնց կը վերաբերի այս խնդիրը. Ողջոյն.

Նկատելով որ, Ապրիլ 26, 1920-ին, Դաշնակից Պետութեանց Կերպոյնի հարեւորը, իր Սան Թեմոյի ժողովին մէջ, Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահին հրուէր ուղղեց իրաւարարական վրէժն մը տալու՝ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Պիթլիսի չորս վիլայեթներու միջեւ գծուելիք բրբո- հայկական սահմաններուն մասին.

Նկատելով որ, Մայիս 17, 1920ին, այս հրաւերը ընդունած ըլլալու յայտնող իմ պատասխանս հետագրուեցաւ Ամերիկայի Փարիզի դեսպանին, որպէս զի հաղորդուի Կերպոյնի հարեւորը մէջ ներկայացուցիչ ունեցող Պետութեանց.

Նկատելով, որ Օգոստոս 10, 1920ին, Սեւրի մէջ դաշինք մը ստորագրուեցաւ, մէկ կողմէն՝ Բրիտանական Կայսրութեան, Ֆրանսայի, Իտալիոյ, Ճափոնի, Հայաստանի, Պելճիկայի, Յունաստանի, Լեհաստանի, Փորթուկալի, Ռումանիոյ, Չեխոսլովակիոյ լիազօր ներկայացուցիչներուն, և, միւս կողմէ՝ Թուրքիոյ լիազօր ներկայացուցիչներուն միջեւ, Դաշինք՝ որ ի մէջ այլոց, կը պարունակէ հետեւեալ տրամադրութիւնը.

«Յօդուած 89րդ.— Թուրքիա և Հայաստան, իծչպէս նաեւ միւս Ստորագիր Բարձր Կողմերը, համաձայն են որ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահին իրաւարարական վնտին ենթարկուի Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Պիթլիսի վիլայեթներուն մէջ Թուրքիոյ և Հայաստանի միջեւ գծուելիք սահմաններուն խնդիրը. նմանապէս համաձայն են որ պիտի ընդունին այս մասին անոր տալիք վնտը, ինչպէս նաեւ այն բոլոր պայմանները, գորս սն պիտի որոշէ Հայաստանի էլ մը ունենալու մասին ծովու վրայ, և վերոյիշեալ սահմանագծին մերձակից բրբական հողերու որեւէ մէկ մասին մէջ կառարուելիք ապագօրաշարժին վերաբերեալ»:

Նկատելով որ, Հոկտեմբեր 18, 1920ին, Հաշտութեան Համաժողովին Ընդհանուր Քարտուղարութիւնը, Դաշնակից Պետութեանց հրահանգներուն համաձայն շարժելով, Ամերիկայի Միացեալ Նահանգներու Փարիզի դեսպանին միջոցաւ ինծի հաղորդեց վերոյիշեալ Դաշինքին մէկ պաշտօնական օրինակը, և ուշադրութիւնս հրաւիրեց յիշեալ 89րդ յօդուածին վրայ,

Ես՝ Ռուտրո Ուիլսոն, Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահ, ինծի տրուած ըլլալով վերոյիշեալ իրաւարարական իշխա-

ձուրքիմը, մերկայիս կը յայտնեմ հետեւեալ իրաւարարական վճիռը, արդարութեան գերագոյն շահերուն գոհացում տալու փափաքով իրն-դիրը քննել է ետք, ամենաուղղափառ եւ ամենավաւերական եղանակով.

Ա.

Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Պիթիսի վիլայէթներուն մէջ Թուրքիոյ եւ Հայաստանի սահմանները հետեւեալ կերպով պիտի գծուին.

1. Իրրե սկզբնական կէտ(*) տեղւոյն վրայ պիտի որոշուի Թրքո-Պարսկա-կան սահմանագիծը եւ Վանի ու Հէքքեարի սահմաններուն վերջնական սահմանին արեւելեան վերջաւորութիւնը իրարու միացնող ճառը, այնպէս՝ ինչպէս այս վարչական սահմանը գծուած է 1/200,000 սասիճանաչափով, Թուրքիոյ շարտէզին Պաշտօնէի յատկացուած թերթին վրայ (հաստատուութիւն Turkish Financial, տարի (1914-1915): Այս սկզբնական կէտէն մեկնելով, սահմանագիծը պիտի ուղղուի դէպի հարաւ ու արեւմուտք մինչեւ Մերքէլէր Տաղի արեւմտեան զաղաթը որ կը գտնուի 3350 կէտէն (10,900 ոտք) 6 շրջաններէ դէպի արեւմուտք, մտքաբը Անվալամ դիւղի հարաւ-արեւելքէն զրեթէ 2 շրջաններէ, եւ Վան զաղաթի հարաւ-արեւելքէն ժողովրդագրական 70 շրջաններէ հեռու:

Սահմանին վերջը այս կերպով ճշտուած սահմանը, յետոյ Մամուրէթ-Իւլ-Համիտ եւ Էլվազ զաղաթներուն միջեւ գտնուող վարչական սահմանագիծը, անկէ վերջ, սահմանին միեւնոյն սահմանագիծը այնպէս ինչպէս որոշուած է վերջը, եւ որ, եթէ հարկ չլլայ, կրնայ բուրձրութիւն փոխուի, որպէս զի կարենայ Մեծ Ջապի եւ Պաշտօն Սուրի շուրջը արհաւիր զլիսաւոր գծին հետեւիլ, եւ արդար կերպով բաժնել զերբոյն կէտերի եւ Ձուր Կէտերի կիրճերուն զաղաթները.

Յետոյ դէպի է հիւսիս-արեւմուտք, Քիլիսի Տաղէն ժող 28 շրջաններէ հեռու.

Ջուրքը արհաւիր զլիսաւոր գծին հետեւող եւ Քոհ Գերան լեռներէն, Սարը Տաղէն (3150 մէթր կամ 10,335 ոտք), Քիլիսի Տաղէն (3500 մէթր կամ 11,480

(*) Ի՞մ կարծիքովս, այս սկզբնական կէտը պիտի ինչայ Թրքո-Պարսկական նախկին սահմանադրութիւն վրայ որ յիշատակուած է Սեւրի Դաշինքին 27րդ(4) յօդուածին մէջ. բայց, այս սահմանագիծին 40 մղոնը որուն մէջ կ'իյնայ Հայկական սահմանին սկզբնական կէտը, Թրքո-Պարսկական Սահմաններու Յանձնաժողովին կողմէ նշանակուած չէր 1914ին: Վերջ նկատի առնուած սկզբնական կէտը Բարսահաթ դիւղի հարաւակողմէն զրեթէ մէկ շրջաններէ, Բոթուր դիւղի հարաւ-արեւմտեան կողմէն ժողովրդագրական 25 շրջաններէ հեռու կը գտնուի. ան կրնայ Սահմաններու Յանձնաժողովին կողմէ այս վայրին կարելի եղածին շափ ժողով տեղւոյ մը վրայ հաստատուիլ, պայմանով որ Վան-Հէքքեար սահմանին եւ Պարսկական սահմանադրութիւն միացման կէտին վրայ գտնուի:

կէտ 3540 (11,615 ոտք) անցնող դիւղի մը պիտի շարունակուի, այնպէս որ էյրէթի դիւղի Հայաստանի մնայ, Արազ դիւղի ալ Թուրքիոյ, եւ անցնի Եասաֆ Սուլէն՝ Տիր Սուլէմ Քիլիսէ դիւղէն տանուազն 2 շրջաններէ դէպի հարաւ.

Այս տեղէն դէպի արեւմուտք, մինչեւ այն վայրը՝ ուր Պիթիսի վիլայէթին սահմանը Մուկ Սու կը հասնի արեւմուտքի կողմէն, եւ որ կը գտնուի Մուկս դիւղի հարաւային կողմը, զրեթէ 18 շրջաններէ հեռուորութեան վրայ.

Ջուրքու ըստանման զլիսաւոր գծին հետեւող գիծ մը պիտի շարունակուի, որով Հայաստանի պիտի մնան Քաշիթ, Սինփաս եւ Օղիմ դիւղերը. այս գիծը պիտի անցնի Քանիսար Թէփէն (3,245 մէթր կամ 10,645 ոտք), Արնու Տաղէն (3,350 մէթր կամ 11,045 ոտք) դէպի հարաւ ժողովրդագրական 3 շրջաններէ հեռու գտնուող անանուն սարէն, անցնելով, նախ Սինփաս դիւղի հարաւակողմէն ժող 3 շրջաններէ հեռու անանուն զետակէ մը, յետոյ՝ 3,000 մէթր (9,840 ոտք) բարձր կէտէ մը, հետեւելով այս կէտին հարաւ-արեւմուտք զրեթէ 3 շրջաններէ վրայ երկարող եւ Վան եւ Պիթիսի վիլայէթներուն միջեւ գտնուող սահմանագիծին, եւ շարունակելով միեւնոյն կորագիծը մինչեւ այն անանուն սարը՝ որ Մուկ Սու գետակին արեւելեան կողմը ժող 2 շրջաններէ հեռու կը գտնուի, սար՝ ուրկէ վար ինչեւից վրայ հասնի այս գետակը.

Ասկէ ալ, դէպի հիւսիս՝ մինչեւ այն անանուն սարը՝ որ կը բարձրանայ Վան եւ Պիթիսի վիլայէթներուն միջեւ գտնուող սահմանին վրայ, Մաթա Կէտիկ կիրճին արեւմտեան կողմը, ժողովրդագրական 3 շրջաններէ հեռու.

Վան եւ Պիթիսի վիլայէթներուն միջեւ գտնուող վարչական սահմանագիծը Վանքի Տաղի (3,200 մէթր կամ 10,500 ոտք) հարաւային կողմի մասին մէջ այնպիսի կերպով պիտի փոխուի՝ որ կարենայ հետեւիլ շուրջու ըստանման զլիսաւոր գծին.

Այդ տեղէն դէպի արեւմուտք մինչեւ Մէլյան Շէնիտիայի սարը, որ կը գտնուի Պիթիսի եւ Սղեքը սահմաններուն սահմանագիծը, Պիթիսի զաղաթի հարաւ-արեւելեան կողմը, ժող 29 շրջաններէ հեռու.

Գիծ մը պիտի շարունակուի որ պիտի հետեւի շուրջու ըստանման զլիսաւոր գծին, անցնելով Վէյրիսան Տաղէն (3110 մէթր կամ 10,200 ոտք), յետոյ՝ Քէսան Տէրէն, Խորդ դիւղի հարաւային կողմը, ժող 2 շրջաններէ հեռու, այնպէս որ Թուրքիոյ պիտի մնան Սէմահա եւ Նէվաշին դիւղերը, ինչպէս նաեւ զանոնք իրարու կապող ճամբուն վրայ գտնուող կամուրջը կամ շունը, Հայաստանի թողով Շոփանս դիւղի եւ հիւսիս-արեւելքէն այս դիւղը տանող ճամբան:

Այս տեղէն դէպի արեւմուտք մինչեւ Կիւզէլ Տէրէ Սու, Պիթիսի զաղաթին հարաւային կողմը ժողովրդագրական 23 շրջաններէ հեռու գտնուող կէտ մը, եւ Նուրի Սէր (2,150 մէթր կամ 7,050 ոտք) սարին հարաւային կողմը ժող 2 շրջաններէ հեռու.

Պիթիսի եւ Սղեքը սահմաններուն միջեւ գտնուող վարչական սահմանագիծը, եւ, այն ատեն, գիծ մը պիտի շարունակուի որ պիտի հետեւի շուրջու ըստանման զլիսաւոր գծին եւ պիտի անցնի Բուր Տաղի (2,750 մէթր կամ 9,020 ոտք) եւ 2,700 մէթր (8,860

սաք) բարձրութիւն ունեցող կէտերէն, Գիլուբի Տաղէն (2.230 մէթր կամ 7.315 ոտք) եւ Սիհասէր Քէփէէն (2.250 մէթր կամ 7.384 ոտք)։

Այդ տեղէն ղկպի արեւմուտք, մինչեւ Գիթլիս Սու, եւ այս գետակը եւ Տէշթու մի գիւղին մօտ գտնուող անանուն գետակը իրարու միացնող կէտը, Գիթլիս բաղաճի հարաւարեւմտեան կողմէն մօտաւորապէս 30 շրջաններ հեռու։

Զուրբրու բաժանման գլխաւոր գծին հետեւող գիծ մը պիտի քաշուի որով Քուրբիոյ պիտի մնան 13րկա եւ Տարունի գիւղերը, եւ Հայաստանի՝ Էնպու գիւղը Կնչպէս նաեւ Մէրկէլու սարէն (1.850 մէթր կամ 6.070 ոտք) ղկպի հիւսիս-արեւելք մինչեւ Գիթլիս Սու տանող ճամբուն բոլոր մասերը։ այս գիծը պիտի անցնի Մէրկէլու Քէփէէն եւ Շիխ Քապուրի կատարէն։

Այդ տեղէն, արեւմտեան ուղղութեամբ մինչեւ Զուք (Ղարգան) Սու Հագո գիւղին հիւսիս-արեւելեան կողմէն մօտ 11 շրջաններ հեռու, եւ Զիլի գիւղին մերձաւորապէս 1 շրջաններ ղկպի վեր։

Զուրբրու բաժանման գլխաւոր գծին հետեւող գիծ մը պիտի քաշուի որ Հայաստանի պիտի թողու Տէսթու մի գիւղը, պիտի անցնի Քայմէն Տաղի (2.710 մէթր կամ 8.890 ոտք) սարէն եւ պիտի շարունակուի այնպիսի ձեւով՝ որ Հայաստանի մնայ վերին Տոլիման կամ ներքին շրջանում աւազանը, եւ անցնի կիրճը, Աւեսիփի գիւղին արեւմտեան կողմէն մօտ 3 շրջաններ անցնի եւ Շէլաշ Տաղէն (1.946 մէթր կամ 6.380 ոտք)։

Այդ տեղէն, ղկպի արեւմուտք մինչեւ Սասուն Տէրէ Քապիլ ձկնի գիւղի հարաւարեւմտեան կողմը, մերձաւորապէս 4 շրջաններ հեռու գտնուող կէտի մը վրայ, Մուշ բաղաճի հարաւարեւմուտքը, մօտաւորապէս 47 շրջաններ հեռու։

Զուրբրու բաժանման գլխաւոր գծին հետեւող գիծ մը պիտի քաշուի որ պիտի անցնի Շէլաշտաղ (2.001 մէթր կամ 6.565 ոտք), Քէփէլա (1.931 մէթր կամ 6.335 ոտք) սարերէն, եւ Սասուն Տաղի անանուն մէկ սարէն՝ Մայաթո Տաղի (2.697 մէթր կամ 8.851 ոտք) հարաւարեւմուտքէն մօտ 4 շրջաններ անցնի, 2.229 մէթր (7.319 ոտք) բարձրութիւն ունեցող կէտին վրայ, այնպէս որ Կիւնտէնի գիւղը Քուրբիոյ մնայ։

Այդ տեղէն, Քալուրի Տէրէի արեւմտեան կողմէն մինչեւ Քասէր գիւղի վրան, մօտաւորապէս 2 շրջաններ հեռու գտնուող կէտի մը վրայ, եւ Ալլէլվան (Ճարգին) գիւղի հիւսիս-արեւելեան կողմէն մերձաւորապէս 37 շրջաններ անցնի։

Զուրբրու բաժանման գլխաւոր գծին հետեւող գիծ մը պիտի քաշուի որ պիտի անցնի Ալլաշ գիւղի արեւելեան կողմը եւ մօտ 2 շրջաններ հեռու գտնուող անանուն սարէն եւ 2073 մէթր (6.800 ոտք) բարձրութիւն ունեցող կէտէն, այնպէս որ Հէլլէթի գիւղը Հայաստանի մէջ մնայ։

Այդ տեղէն, ղկպի հիւսիս-արեւմուտք մինչեւ արեւմուտքէն Քալուրի Տէրէ հոսող գետակը Հէլլին գիւղի արեւելեան կողմը մօտ 2 շրջաններ հեռու գտնուող վրայ գտնուող կէտ մը, եւ Մուշ բաղաճի հարաւարեւմտեան կողմը, մերձաւորապէս 42 շրջաններ հեռու։

Զուրբրու բաժանման գլխաւոր գիծին հետեւող գիծ մը պիտի քաշուի որ պիտի անցնի 2.251 մէթր (7.385 ոտք) բարձրութիւն ունեցող կէտէն։

Այդ տեղէն, ղկպի հիւսիս-արեւմուտք մինչեւ Քուրբի Պողազը (Քուրբի Սու) եւ Ասկար Տէրէ հոսող գետակը, Մուշ բաղաճի հարաւարեւմուտքէն մօտ 42 շրջաններ հեռու գտնուող վրայ։

Զուրբրու բաժանման գլխաւոր գիծին հետեւող գիծ մը պիտի քաշուի, այնպիսի եղանակով՝ որ Հէլլին գիւղը Քուրբի մնայ, եւ Քէհրիմանի գիւղն ալ՝ Հայաստանի։

Այդ տեղէն, ղկպի հիւսիս-արեւմուտք մինչեւ Միք Իսմայիլ Տաղի հիւսիս-արեւելեան կողմը Կնչնի եւ Մուշի սանձագնեբուն վարչական սահմանագիծին վրայ գտնուող կէտ մը՝ Փէլէթող գիւղի արեւմտեան կողմը մօտ 5 շրջաններ, եւ Արտուշին գիւղի հարաւարեւմուտքը մերձաւորապէս 19 շրջաններ հեռու գտնուող վրայ։

Զուրբրու բաժանման գլխաւոր գծին հետեւող գիծ մը պիտի քաշուի որ պիտի անցնի Քուրբի Տաղէն։

Այդ տեղէն Պրաթ գետակէն (Պուրաս Սու կամ Եփրատ) հիւսիս-արեւմուտք կողմը Տորն գիւղի վերելը մօտ 1 շրջաններ հեռու գտնուող կէտ մը, Մուշ բաղաճի արեւմտեան կողմը, մերձաւորապէս 56 շրջաններ հեռու։

Կնչն եւ Մուշ սանձագնեբուն միջեւ գտնուող վարչական սահմանագիծը, ղկպի հիւսիս մօտ 2 շրջաններ երկարութեան վրայ, յետոյ, տեղւոյն վրայ գիծ մը պիտի քաշուի որ հետեւի Զուրբրու բաժանման գլխաւոր գծին արեւմտեան կողմէն մինչեւ Շութլա (Ալլէ Քարա) Տաղէն (2.940 մէթր կամ 9.645 ոտք) մօտաւորապէս 6 շրջաններ ղկպի արեւելք գտնուող անանուն սարը, եւ վերջն ալ, ուղղուի ղկպի հիւսիս, անցնելով Հաճի Քէփէէն (Արշիք Տաղի վրայ), եւ այնպէս որ Քուրբի գիւղը Քուրբիոյ մնայ, Քուրբիան գիւղն ալ՝ Հայաստանի։

Այդ տեղէն, ղկպի հիւսիս-արեւմուտք մինչեւ Կիւնտէ Սու, կէտի մը վրայ՝ որ այս գետակէն անցնող երկու ճամբաներուն միջեւ գտնուող ճամբուն մօտաւորապէս կէտին վրայ, Էլմալը եւ Չանագըր գիւղերը տանող ճամբուն մերձաւորապէս կիսուն վրայ կը գտնուի Չուլիք (Չէվլիք) գիւղին հիւսիս-արեւելեան կողմը մօտ 26 շրջաններ անցնի։

Զուրբրու բաժանման ընդհանուր գծին հետեւող գիծ մը քաշուի որ Սուլիան Տաղի երկայնքէն, Չանագըր գիւղին արեւմտեան կողմէն մօտ 2 շրջաններ անցնի գտնուող անանուն սարէն եւ 2.200 մէթր (7.220 ոտք) բարձրութիւն ունեցող կէտէն անցնի, Քուրբիոյ թողլով Չանագըր եւ Չանագըր գիւղերը, եւ Հայաստանի՝ Խուրիս-Թան, Լիւլիսը եւ Էլմալը գիւղերը։

Այդ տեղէն, հիւսիս-արեւմտեան կողմը մինչեւ Էրզրումի եւ Գիթլիսի միջակայքէն միջեւ գտնուող սահմանագիծը, անանուն սարին վրայ որ կը գտնուի այն տեղը՝ ուր Էրշէք եւ Աղա Քէօյ գիւղերուն միջեւ քաշուի ղկպի գիծ մը պիտի կտրէ այս վիլայէթներուն վերջնական սահմանագիծը։

Ջուրերու բաժանման գլխաւոր գծին հետեւող գիծ մը պիտի քաշուի որ անցնի 2,050 մէթր (6.725 ոտք) բարձրութիւն ունեցող կէտէն:

Այդ տեղէն, ղէպի հիւսիս մինչեւ այն անանուն սարը՝ որ նոյն վիլայէթ-ններուն յիշեալ սահմանագծին վրայ կը գտնուի, Պորթի Տաղի վրայ Քարթալը Թէփէի հիւսիս-արեւմտեան կողմէն մօտ 8 շիլոմէթր անդին:

Էրզրում եւ Պիթլիս վիլայէթներուն միջեւ գտնուող վարչական սահման-գիծը.

Այդ տեղէն, ղէպի արեւմուտք մինչեւ Պոյնիք Սու (Քղի Սու) կէտի վրայ, որ այս գետակին եւ Խապու Տէրէ գետակին իրարու խառնուած տեղի վերին մասին մէջ կ'իյնայ եւ Քղի գիւղէն մերձաւորապէս 11 շիլոմէթր անդին կը գտնուի:

Շէյթան Տաղարի Ջուրերուն միացման գլխաւոր գծին հետեւող գիծ մը պիտի քաշուի որ անցնի այս լեռներու 2,610 մէթր (8,565 ոտք) բարձրութիւն ունեցող կէտէն, Շէյթան Տաղէն (2,906 մէթր կամ 9,535 ոտք) Հաքսթուն Տաղէն, այնպէս որ Հայաստանի մեան Տինիք գիւղը եւ այս գիւղին հարաւ արեւմտեան կողմը գտնուող հունը կամ կամուրջը:

Այդ տեղէն, ղէպի արեւմուտք մինչեւ Տար Պողազ (Քուդու Տէրէ), Զար-տաղար (Բալուժոր) գիւղին հարաւակողմը մօտ 3 շիլոմէթր հեռու գտնուող կէտը:

Ջուրերու բաժանման գլխաւոր գծին հետեւող գիծ մը պիտի քաշուի որ Եորախ եւ Ֆրահատի գիւղերը Հայաստանի մէջ ձգլ եւ անցնի Ղապարթը Տաղէն (2,550 մէթր կամ 8,385 ոտք), Սիան Տաղէն (2,750 մէթր կամ 9,020 ոտք), 2,150 մէթր բարձրութիւն ունեցող կիրճէն Մուսթաֆա Պէյ Գոնաղըյի մօտ Բալուժոր-Քղիի մօտուն վրայ, Ֆիլերիէ Թէփէն (2,530 մէթր կամ 8,300 ոտք), 2,244 մէթր (7,360 ոտք) եւ 2,035 մէթր (6,675 ոտք) բարձրութիւն ունեցող կէտերէն:

Այդ տեղէն, ղէպի արեւմուտք, մինչեւ, մէկ կողմէ, Երզնկա եւ Էրզրում սանճագներուն, եւ, միւս կողմէ, Մամուրէթ-իւլ-Ազիզի վիլայէթի սահմանագլուխը, այս վիլայէթի սահմանագծին մէկ սուր անկեան վրայ, Բալուժոր գիւղի արեւմտեան կողմէն մերձաւորապէս 24 շիլոմէթր եւ Երզնկա քաղաքի հարաւ-արեւելքէն մօտ 32 շիլոմէթր անդին:

Գիծ մը պիտի քաշուի որ հետեւի Ջուրերու բաժանման գլխաւոր գծին եւ անցնի հիւսիս-արեւմուտքէն, Բալու մօրէն մօտ 2 շիլոմէթր հարաւ-արեւմուտք գտնուող անանուն սարին վրայ եւ Սիլուս (Քէրսիտու) Տաղէն (2,405 մէթր կամ 7,890 ոտք) ու հասնի մինչեւ Երզնկա սանճագին հարաւային սահմանագծին վրայ գտնուող անանուն սարը, Բալուժոր-Երզնկայի կիրճէն մօտաւորապէս 8 շիլոմէթր հեռու՝ այս գիծը, յետոյ մերձաւորապէս 13 շիլոմէթր երկարութեան վրայ, պիտի շարունակուի սանճագին վերոյիշեալ սահմանին հարաւ-արեւմտեան կողմը, անցնելով Քարաճա Քալէն (3,100 մէթր կամ 10,170 ոտք):

Այդ տեղէն ղէպի արեւմուտք, մինչեւ Էրզրումի եւ Մամուրէթ-իւլ-Ազիզի սահմանին վրայ գտնուող անանուն սարը, մօտ 3 շիլոմէթր հեռու հիւսիս-արեւելեան կողմէն այն կիրճին՝ որ կ'անցնի Մոնղուլ Սիլսիլսիւն, Քէմախի (Եփրատի վրայ)

եւ Բլուրի (Տէրսիմ) միջեւ անանուն սարը գտնուելով Երզնկա քաղաքէն մերձաւորապէս 40 շիլոմէթր ղէպի հարաւ-արեւմուտք:

Էրզրումի եւ Մամուրէթ-իւլ-Ազիզի վիլայէթներուն միջեւ գտնուող բարեփոխեալ վարչական սահմանագիծը(*) — պայմանով որ Սահմանագծման Թանճատ-ղովին մէջ քուարկելու իրաւունք ունեցող անդամներու մեծամասնութիւնը յարմար դատէ — այս պարագային, այս սահմանագիծը ուղղութիւնը պիտի բռնէ Արտեւանին երկայնութեան վրայ գտնուող Ջուրերու բաժանման գլխաւոր գծին, Մերճան Տաղարի (3,449 մէթր կամ 11,315 ոտք) հարաւ-արեւմտեան կողմէն մօտ 2 շիլոմէթր հեռու բարձրացող անանուն սարին եւ Քաթար Թէփէի (3,300 մէթր կամ 10,825 ոտք) միջեւ:

Այդ տեղէն ղէպի հիւսիս, մինչեւ Ֆրաթ Նէհրի (Քարա Սու կամ Եփրատ) կէտ մը՝ որ պետք է նշանակուի Կամախ գիւղին արեւելեան կողմը, մօտ 6 շիլոմէթր հեռու, եւ Երզնկա քաղաքի հարաւ-արեւմտեան կողմը, մերձաւորապէս 35 շիլոմէթր հեռաւորութեան վրայ:

Ջուրերու բաժանման գլխաւոր գծին հետեւող գիծ մը պիտի քաշուի, այնպէս որ Բլուրէն (Տէրսիմի մէջ) Կամախ (Եփրատի վրայ) տանող ճամբան Թուրքիոյ մնայ, Քոճա Արպլէր գիւղն ալ՝ Հայաստանի:

Այս տեղէն ղէպի հիւսիս, Էրզրումի եւ Տրապիզոնի վիլայէթներուն միջեւ գտնուող սահմանագիծը, կէտի մը վրայ՝ որ պիտի նշանակուի 2,930 սարին (2,630 մէթր կամ 8,625 ոտք) արեւմտեան կողմէն մօտ 9 շիլոմէթր՝ եւ Մէթրուզ գիւղի հարաւային կողմէն մերձաւորապէս 4 շիլոմէթր հեռու տեղ մը, կամ Երզնկա քաղաքի հիւսիս-արեւմտեան կողմէն մօտ 39 շիլոմէթր անդին:

Ջուրերու բաժանման գլխաւոր գծին ուղղութիւնը բռնող գիծ մը պիտի քաշուի որով Թուրքիոյ պիտի մնան Զալլը Ետուը, Թոճա եւ Ալամլըզ գիւղերը, եւ

(*) Երեւալ վայրին մէջ, վիլայէթին սահմանագիծը (ըստ Թուրք սպայակոյտի 1/200,000 աստիճաննոց քարտէզին Ողզաթ-Տէրսիմի վերաբերեալ Թերթին) Մանգուր Սիլսիլսիի հիւսիսային գառիթափէն վար կ'իջնէ 7 շիլոմէթր երկարութեան վրայ: Երզնկայի եւ Կամախի (Էրզրումի վիլայէթի Երզնկա սանճագին մէջ) եւ Տէրսիմի սանճագին (Մամուրէթ-իւլ-Ազիզի վիլայէթ) սահմաններու միացման կէտը եփրատէն 14 շիլոմէթր հեռու կը գտնուին: Այս կերպով, Թուրքիոյ կը մնայ 11,000 ոտք բարձր լեռնաշղթային հիւսիսային կողմը գտնուող զինուորական կամըջալուի մը որ Երզնկա քաղաքէն ղէպի հարաւ 20 շիլոմէթր միայն հեռու կ'ըլլայ: Այս տեղ-այն վարչական սահմանագիծը փոխելու իրաւասութիւն չունիմ, եւ այս 40 քառակուսի շիլոմէթր տարածութիւն ունեցող հողերը Սեւրի Դաշինքին 89-րդ յօդուածին մէջ յիշատակուած չորս վիլայէթներէն դուրս կը մնան:

Սակայն, կը համարձակիմ Սահմաններու Ճշման Թանճատողովին ու-չարտիքները հրատարակու որ այս վայրի ընտելներուն կարծիքը առնէ, վիլայէթին այս տեղէն անցնող սահմանագիծին փոփոխման կարելիութեան մասին:

Հայաստանի պիտի թողուն էրբխան գիւղը և Գամբան, ինչպէս նաեւ Մէթրուտ գիւղի հարաւային կողմի կիրճը: այս գիծը պիտի անցնի իւր Բարսու Քէփէն, Քէլէր Քիրանէն (Քէլէր Քաշ, 2,500 մէթր կամ 9,185 ոտք), Քէնամ Տաղն (կամ Քարս Տաղ, 3,030 մէթր կամ 9,940 ոտք) և Հայաստանի եւ Թուրքիոյ մէջ հասարակու պիտի ըստնէ այս կիրճին զազաթը, Չաղզըր գիւղի արեւմտեան կողմէն մօտ 2 շիրմէթր անդին, ինչպէս նաեւ Չարլախ գիւղին մօտ գտնուող Քրալ Խան Պողպարի կիրճին զազաթը: գիծը պիտի անցնի Քարս Տաղի (9 655 ոտք) 2760 կէտն, 2740 կէտն (8,990 ոտք), ինչպէս նաեւ ուրիշ կէտն մը որ պիտի նշանակուի Իրի Սիփրի վտակին մօտ տեղ մը, Ձիմէն Տաղի կիրճին արեւմտեան կողմէն 2 շիրմէթր անդին, այս գիծը այնպէս մը պիտի բաշտի ու արեւմտեան կողմէն Քուշի Քէնի և Քարս Եայրու գիւղերը տանող երկու ճամբաներուն միացման կէտը Թուրքիոյ միայ, և Մէթրուդ և Քիրմանս գիւղերը տանող միւս երկու ճամբաներուն միացման կէտն ալ՝ Հայաստանի: Սահմանագծերու ճշտման Եանձնաժողովը պիտի որոշէ մեծ ճամբուն մասին արդար կարգադրութիւն մը ընել 2760 և 2740 կէտերուն միջեւ:

Այդ տեղէն, դէպի Հրեւիս-արեւմուտք մինչեւ Քէլէրի Չայ (Քէլէրի Ըրմալ), այն կտը՝ որ կը հասնի հարաւային կողմէն, Տրապիզոնի և Սվազի վիլայէթներուն միջեւ գտնուող սահմանագիծը:

Տրապիզոն և Էրզրում վիլայէթներուն միջեւ գտնուող վարչական սահմանագիծը, յետոյ, Տրապիզոնի և Սվազի միջեւ գտնուող սահմանագիծը:

Այդ տեղէն, դէպի Հրեւիս, մինչեւ այն անանուն սարը՝ որ կը բարձրանայ Տրապիզոնի և Սվազի վիլայէթներուն միջեւ գտնուող սահմանին վրայ, Պորզա Փայայէն (2,995 մէթր կամ 9,825 ոտք) մօտ 4 շիրմէթր դէպի հարաւ-արեւմուտք, այս լեռը գտնուելով կիւմիւշիանէ քաղաքէն մօտ 38 շիրմէթր դէպի հարաւ-արեւմուտք:

Չուրքուրու բաժանման գլխաւոր գծին հետեւող գիծ մը պիտի բաշտի, այնպիսի եղանակով մը՝ որ Հայաստանի թողուն Հալէփի, Սինանլը, Քիւիթթին, Քրտանոց գիւղերը, և Թուրքիոյ՝ Գար Գշլա, Սատրզ, Գարա Գրյա և Արա գիւղերը: այս գիծը պիտի անցնի այն կիրճէն՝ որ կը գտնուի, արեւմուտքէն Շիրան Չայի մէջ հոսող վտակներուն և Պարսազ Տէրէի (Քարա Չայ) արեւելեան ակերուն միջեւ, Գարա Հիսարը Շարփի (Շապին Գարահիսար) քաղաքէն մօտ 47 շիրմէթր դէպի արեւելք:

Այդ տեղէն, դէպի Հրեւիս-արեւելք, Հրեւիս և արեւմուտք մինչեւ այն անանուն սարը՝ որ կը բարձրանայ Տրապիզոն և Սվազ վիլայէթներուն միջեւ գտնուող սահմանին վրայ, Ենրշի Քէփէն (2690 մէթր կամ 8,825 ոտք) դէպի Հրեւիս-արեւմուտք, մօտ 7 շիրմէթր անդին, և Կիրասոն քաղաքէն դէպի հարաւ-արեւելք, մերձաւորապէս 47 շիրմէթր հեռու:

Տրապիզոնի և Սվազի միջեւ գտնուող վարչական սահմանագիծը:

Այդ տեղէն, դէպի Հրեւիս, Պոնտոսի լեռնաշղթայի կատարին վրայ գտնուող վերոյիշեալ վերջին կէտէն սկսելով մինչեւ Սեւ Ծով, գիծը պիտի հասնի Քէլէրի գիւղի արեւմուտքէն 1 շիրմէթր հեռու գետափին վրայ նշանակուելիք կէտ մը, կիւրասոն քաղաքէն դէպի արեւելք, մօտ 9 շիրմէթր հեռաւորութեան վրայ:

Չուրքուրու բաժանման գլխաւոր գծին հետեւող գիծ մը պիտի բաշտի, այնպէս որ Թուրքիոյ թողուն Քուրթ Տէրէի (Ազ Սաւ) և իր մէջ հոսող վտակներու շրջան միջին մէջ գտնուող զաւտերը, մարզերը, անտառներն ու գիւղերը, իսկ Հայաստանի մասն Եաղաճ Տէրէի (Կափիյա Տէրէ) և Վէնազիւ Տէրէի (Քէլէր Տէրէ) և ստեղծ մէջ հոսող վտակներուն շրջան միջիններուն մէջ գտնուող զաւտերը, մարզերը, անտառներն ու գիւղերը: այս գիծը այնպէս մը պիտի է բաշտի որ Թիքէպուրի և Կիրասոնի զաւտներուն միջեւ գտնուող սահմանը կարեւի ըլլայ օդագործել, Քարա Քէփէի (1,966 մէթր կամ 5 505 ոտք) ճիշտ հարաւակողմը 7 շիրմէթր երկարութեան վրայ, և, միևնոյն ատեն, հարթողակցութեան աննայաբար ճամբաներ տեղծել, նոր սահմանագիծին և լեքան կատարներէն անցնող արահետներուն միջեւ: հարթողակցութեան այս ճամբաները կրնան տեղւոյն վրայ իսկ ճշտուի Սահմաններու ճշտման Եանձնաժողովին կողմէ, տեղւոյն բնակիչներուն կարծիքը առնուելի եղք:

2. Ներկայ վճիռի ընազրին և անոր կցուած 1/100,000 և 1/200,000 ստիճանոց քարտէզներուն միջեւ երեւան եկող ռեւէ հակասութեան պարագային, վճիռին ընազրին է որ նսխամեծար պիտի համարուի:

Սեւրի Դաշինքին 89-րդ յօդուածին մէջ նշանակուած չորս վիլայէթներու սահմանները Հոկտեմբեր 29, 1914-ին գոյութիւն ունեցող սահմաններն են:

Վերոյիշեալ եղանակով գծուած սահմանը նշանակուած է կարճի գոյնով 1/100,000 ստիճանոց վաւերացեալ քարտէզի մը վրայ, որ սահմաններու ներկայ վճագրին կցուած է: Հոս յիշատակուած աշխարհագրական անունները այս ընազրին կցուած քարտէզներուն մէջ նշանակուած անուններն են:

Աշխարհագրական դիրքերու, լեռներու բարձրութեանց և վիլայէթի, սահմանի ու զազայի սահմաններուն անուններուն համար մեր դիժած գլխաւոր ազբիւրները եղած են Թուրք Սպայակոյտի 1/200,000 ստիճանոց քարտէզը, և, մասամբ ալ, 1/100,000 ստիճանոց Բրիտանական քարտէզը:

Սահմաններու Եանձնաժողովին կը յանձնարարուի 1/200,000 ստիճանոց քարտէզները գործածել տեղւոյն վրայ գծելու համար Հայաստանի սահմաններու այն մասը որ 91րդ յօդուածին համաձայն այս վճագրով ճշտուած է:

Բ.

Վերը նշանակուած սահմանը, որով Տրապիզոնի նուահանգիստը և Քարճուտ Սուի Նովոր Հայաստանի կը տրուին, այլ ևս անկարելի կը դարձնէ որ Հայաստանի ծոցու վրայ ելք մը ունենալու մասին նոր կարգադրութիւններ ըլլան:

Գ.

Իրրեւ յանելուած այն ընդհանուր տրամադրութեանց՝ որոնք, սպառազնութեանց սահմանափակման համար, մտցուած են Սեւրի Դաշինքին Ե. մասին մէջ

նշանակուած զինուորական, նաւային եւ օդային արժադրութեանց մէջ, վերը ճշտուած ձեւով հաստատուած Հայաստանի սահմաններուն կից գանձուող Բրքական հոգեբու ապագինուորականացուցը հետեւեալ կերպով տեղի պիտի ունենայ:

Սեւրի Դաշինքին 196րդ եւ 200րդ յօդուածներուն համաձայն հաստատուած Հակակռի եւ կազմակերպութեան Ձինուորական Միջ-դաշնակցային Յանձնաժողովը պիտի անուանէ Հայաստանի Պետութեան սահմաններուն կից Բրքական վիլայիթներու իւրաքանչիւր գիւղին մէջ բաժնուած ոստիկան զօրաց բարձրաստիճան սպաները, միայն այն զօրականներու մէջէն՝ որոնք, վերոյիշեալ Դաշինքին 195րդ յօդուածին տրամադրութեան համեմատ, Դաշնակից կամ չէզոք այլ եւ այլ պետութեանց կողմէ պիտի հայթայթուին:

Այս սպաները, իրենց միւս պարտականութիւններէն զտու մասնաւորաբար պաշտօն պիտի ունենան նաեւ հսկելու որ այս վիլայիթներուն մէջ հայկական սահմաններուն վրայ յարձակման փորձեր չըլլան, ինչպէս ռազմավարական նպատակ ունեցող երկաթուղիներու եւ մեծ ճամբաներու շինութիւն, զինուորական պարենաւորման մթերանոցներու հաստատութիւն, տարաբնակներէ զինուորական խումբերու կազմութիւն եւ դրացի հայկ. հոգեբուն խաղաղութեան եւ հանդարտութեան համար վտանգաւոր եղող քարոզչութիւն. այս սպաները ասոնց մասին տեղեկութիւն պիտի տան Հակակռի եւ կազմակերպութեան Միջազգային Ձինուորական Յանձնախումբին որ զինուորական համախմբումները եւ վերը նշանակուած յարձակողական բոլոր ձեռնարկները արգելելու համար պէտք եղածը պիտի ընէ:

Ի հաստատութիւն այս բոլորին, ստորագրեցի եւ Միացեալ Նահանգներու կնիքը դրի այստեղ:

Իրաւարարական այս վճռագիրէն երկու պատճէն շինուած է, Ուաշինգթըն քաղաքին մէջ, 22 Նոյեմբեր հազար ինը հարիւր քսանին, Միացեալ Նահանգներու Անկախութեան 145րդ տարին(*)

ՈՒՈՒՏՐՈ ՈՒՒԼՍԸՆ

(*) Արժէքաւոր ուսումնասիրութիւն մըն է Ա. Ալլօյաճևեանի «Պատմական Հայաստանի Սահմանները» հատորը, տպագրուած Գահիրէ՝ 1950ին:

Յուաւի է, որ հոն հրատարակուած բազմաթիւ քարտէսներուն մէջ կը պակտի Ուիլսոնին վերեւի սահմանագծումը, մինչդեռ ժողովուած չէ Արդի Հայաստանի սահմանագծումը Ալեքսանդրապոլի դաշինքով միասին:

Բողլեւիկեան հրատարակութիւններ, մինչեւ Բ. աշխարհամարտը, կը մերկացնէին եւ կը քննադատէին ցարական քաղաքականութիւնը:

Այսպէս՝ 1926ին Մոսկուայի մէջ լոյս տեսած «Պորհրային Մեծ Համայնագիտարան»ի Գ. հատորին մէջ (էջ 434-445) Մոսկուա կը խոստովանի ուսու պետութեան հասցուցած շարիքը հայ ժողովուրդին եւ անոր Դատին:

«Հայկական Հարցը ողբերգականօրէն բարդացաւ միջամուսթեամբը մեծ պետութեանց»՝ Ռուսիոյ եւ Անգլիոյ: Ռուս առեւտրարդիւնաբերական դրամագուլթը, ձգտելով տիրամալ Սեւ ծովուն, Վասփորին եւ Տարսանիլին, կը բռնաբերէր իր այս նպատակները կեղծ նշանախօսով մը, յայտարարելով, որ «իմ կը պայքարի իրրու. քէ քրիստոնեաները ազատագրելու համար Թուրքիոյ մահմետական լուծէն»։ հայկական պարծուագիմ, յուսալով օգտագործել այս Յշամախօսքը եւ անոր օգնութեամբ տիրամալ ազգային փառաքան իմքնորդման, ոչ միայն իմք, իր մեծամասնութեամբ, ուսական ուղղութիւն որդեգրեց, այլ եւ գայն փարոզեց եւ տարածեց Թրքահայաստանի հայերու մէջ»:

«Հայերու այս դիրքը հիմնովին փոխեց դէպի հայ պարծուագին վերաբերումը թուրք կառավարութեան, որ մինչեւ 1877ի պատերազմը ոչ միայն չէր հալածեր գայն, այլ մինչեւ իսկ հայերը կ'առնէր պետական կարեւոր պաշտօններու: Այս վերաբերումը աւելի թշմաճական դարձաւ այն խնդրագրէն յետոյ, գոր ուսահայերը ուղղեցին կազկասեան փոխարքայ մեծ իշխան Միխայիլ Նիզալաեւիչի, եւ այն պաշտօնական դիմումէն յետոյ, գոր թրքահայերը, գլխաւորութեամբ Ներսէս պատրիարքի, ուղղեցին Ռուսիոյ՝ այս վերջինի պաշտպանութիւնը խնդրելով — ի նպաստ հայերու — Թուրքիոյ հետ կնճուելիք դաշնագրի մէջ»:

Սուլթան Համիտի կազմակերպած Զարդերուն եւ հայ յեղափոխական շարժման մասին Հանրագիտարանը կը գրէ.

«Հայ պարծուագին կ'որոշէ զինուած պայքար տանի կառավարական ահաբեկումի դէմ, առ այդ ստեղծելով իր ազգայնական կուսակցութիւնները՝ ՀՆԶԱԿ եւ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ, ուսական Անդրկապկասի մէջ»:

«1890ական թուականներու վերջադրութեան ասպարէզէն կը փառնուի սակայն Հնչակը, եւ հայերու փառաբանական միակ ղեկավար կազմակերպութիւնը կը մնայ Դաշնակցութիւնը»:

Համախի գործադրած ջարդերու մասին կը գրէ.

«Դաշնակներու արկածախնդրական փառաբանութիւնը՝ յարմար պատրուակ էր սուլթանական իշխանութեան ձեռքը՝ բնաջնջումով պայքար Թուրքիոյ համար հայ ժողովուրդին դէմ. սակայն այդ պայքարը ~ հասկնալի է ինքնին ~ կը բխէր բուն իսկ սուլթանական բռնակալութեան էութենէն. ԱՌԱՆՑ ԳԱՇՆԱԿՆԵՐՈՒ ԳԵՏԱՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԻՍԿ՝ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԵՐՈՒ ԴԷՄ, ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆՆԻ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅԻՆ»:

«Եւրոպական դիւանագիտութիւնը պատրաստ էր, ի հարկէ, օգտագործելու Հայկական Հարցը, իբրեւ ճնշման միջոց մը բուրժուական վարչութեան վրայ, անկէ բան մը շարժելու համար, սակայն ճնշող դիւանագիտութիւնը երբեք չէր հետաքրքրուեր Հայկական Հարցի յուր յուժուումով եւ հայ պետութեան ստեղծումով: ԱՅՍ ՄԻՏՖԷՆ ԱՌԱՆՉԱԲԱՐ ՀԵՌՈՒ ԷՐ ՌՈՒՍԻԱՆ: ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՅԱՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱՑԵՇՏ ԷՐ ԹՈՒՐԿԻԱՆ ՏՊԱՐԱՅՆԵՂՈՒ ԵՒ ԱՆԿԻ ՊՈԼԻՍԸ, ՆԵՂՈՒՅՆԵՐԸ ԵՒ ԲՈՒՆ ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽԼԵՂՈՒ ՀԱՄԱՐ»:

Օսմանեան Մասնազրոյթիւնը Եւ Կրկին ջարդերը յիշելէ ետք, Հանրապետարանը կ'աւելցնէ.

«Թուրքերէն յուսալիցաբար հայ փառաբանական շրջանակները նորէն կը փոխեն իրենց փառաբանական ուղղութիւնը եւ կրկին կը դառնան իրենց սկզբնական յեցակուսանին՝ Ռուսիոյ. ցարական կառավարութիւնը այս անգամ սիրով կ'ընդառայէ հայերուն. կը հասունանայ համաշխարհային պատերազմը. «Հայերը, նստած ըլլալով՝ արտայայտութեամբ Միլիտարի» Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ յնկած ուղեխաչին» կը ստանան փառաբանական մեծ կարեւորութիւն»:

«Հանրապետակ»ը ա՛յս փաստերով կը բացատրէ ծնունդը 1914 Յունուար 26ի ծանօթ Համաձայնագրի՝ տալով տնօրէն Նիւրնպերկի կէտերը:

«ՌՈՒՍԻԱՅ ԱՅՍ ՄԻՏՖԷՆԱԲԻԹԻՆԸ ՄԵՆԱՊԵՄ ԻՄԱՆԱՅՈՒՅ ՀԱՅԵՐՈՒ ՎԵՂԱԿԸ ՄԵՆ ՊԱՏԵՐԱՊԵՏՈՒՆ, որ պայքարեցաւ Համաձայնագրի ստորագրումէն անմիջապէս վերջ, առաւել ետ, որ դաշնակները պատերազմի սկիզբէն իսկ ոչ միայն կրտսերական էր իրենց «Մեծ Հայաստանի» նշանախօսումով, այլ եւ կամաւորական գունդեր կազմեցին, առանձնաբար յրապարակ դասակարգութեամբ»:

Ապրիլեան մեծ կոտորածներու մասին խօսելով՝ «Հանրապետակ»ը հետեւեալ թիւերը կ'ուտայ:

«300.000 հոգի սրածուռած ճոյնքան մը մեռած դէպի Միջագետք տանող տեղահանութեանց համարներու վրայ. 200.000 հոգի ալ փրկուած՝ մահմետականութիւնը ընդունելով: Այս հսկայ աղէտէն թրքահայաստանը փաստօրէն մնաց առանց հայերու»:

Իսկ Կովկասեան գեպերու մասին կը գրէ.

«1917ի ամբար, Անդրկովկասի գիւղացիական համագումարին, Թիֆլիսի մէջ, արդէն ձեւ առած էր վրացիներու եւ քարաքներու պլոքը հայերու դէմ»:

«1917ի Հոկտեմբերին Թիֆլիսի մէջ գումարուած հայկական Ազգային Համաժողովը, որ կը ղեկավարուէր դաշնակներու կողմէ, հաստատեց Հայաստանի կապը մնացեալ Ռուսիոյ հետ եւ պահանջեց Ռուսիոյ ձգել թրքականական Հայաստանի այն հողերը, որոնք համաշխարհային պատերազմին զբաղուած էին ռուսական զօրքերու կողմէ»:

Ազգային շրջանակ Հոկտեմբերեան յեղափոխութեան շրջանը եւ Այլ-մի կազմութիւնը, «Հանրապետարան»ը կը նկատէ.

«Մէյսը փաստօրէն Հայաստանի ուսերունք բեռնուց Անդրկովկասի պաշտպանութեան բովանդակ ծանրութիւնը յարձակումներուն դէմ թուրքերու, որոնք բնականօրէն կը ձգտէին օգտագործել քարեներ-պատ վայրկեանը հողային զբաղումներ կատարելու համար»:

Պատերազմի վերջադրութեան Հայաստանի հողերը կ'ընդարձակուին եւ կը հասնին 17.000 անգլ. քառ. մղոնի (աւելի քան 45.000 քառ. զիւ):

«Դաշնակիցներու Հայկական Հանրապետութիւնը Դաշնակիցներէն ստացաւ Կարսի շրջանը, 1948ին Հայաստանէն խլուած Երեւանեան մահանգի մասերը եւ այլ հողեր, որոնք Հայաստանի հողային տարածութիւնը հասցուցին 17,500 անգլ. քառ. մղոնի, 1,510,000 բնակիչներով, որոնցմէ 795,000ը՝ հայեր, 575,000՝ մահմետականներ, իսկ 140,000ը՝ այլ ազգութեանց պատկանող անձեր»:

Խօսելով հայ-թրքական պատերազմի մասին՝ «Հանրապետակ»ը կը գրէ.

«Հայկական Հանրապետութիւնը հարկադրուած էր տեսարար ետ մղել Թուրքիոյ կողմէ կատարուող փրկական արշաւները Օլթիի, Սարրազամիշի եւ այլ շրջաններու մէջ» (3րդ հ., էջ 437):

«1920ին սկսած բարեկամական յարաբերութիւնները հորհրդային Ռուսիոյ եւ Էնկիլիսի միջեւ կը բախտին ընդդիմութեանը դաշնակ Հայաստանի, որ իբրեւ թշնամի ոյժ ինկած էր երկու պետութեանց հարդրակցութեան համարներու վրայ» (3րդ հ., էջ 438):

Ոսելով Հայաստանի խորհրդայնացման մասին՝ կ'եկրակացնէ .

«Հայաստանի խորհրդայնացման, այսինքն հայ ժողովուրդի նոր պետական կեանքի գոյատոււմէն սկսելով՝ այսպէս կոչուած Հայկական Հարցը կրնայ նկատուիլ հաշուեյարդարի ենթարկուած»։(*)

«ՊԵՏՔ Է ԸՆԴԱՐՁԱԿԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ»

Թուրք հրապարակագիրներէն Անմէտ Էմին Եալման միակը եղաւ, որ զինազարի շրջանին զրեց, թէ «Պէտք է ընդարձակել Հայաստանի սահմանները»։ Թուրք թերթերը, Էրբ իրեն հետ բանավճի կը մտնեն, յաճախ կը յիշատակեն այլ յողուածը։ Այսպէս՝ «Ների Սապահ» 1948 Մարտ 24ի թիւին մէջ կը գրէ .

«Ահմէտ Էմին Եալման 4 Օգոստոս 1919՝ քուակիր «Վազրը»-ի մէջ թրքական հողամասերը առատածոնորէն կը նուիրէր Հայաստանի, ըսելով թէ հայկակ . հանրապետութիւնը չի կրնար պարփակել մեր երկրին հայերը, հետեւաբար պէտք է մաս մը հողամաս կցել անոր սահմաններուն, որպէսզի հայերը տէր դառնան ազգային հայրենիքի մը ու մենք յաւիտեան ազատիմք հայկական հարցին ու անոր յարակից մեքենայութիւններու ազմուկէն»։

Ինչպէս կը տեսնուի, Ահմէտ Էմին Եալման իր իսկ ստորագրութեամբ առաջարկած է Հայաստանի նուիրել թրքական հողերը։

Իր այս ընթացքով Ահմէտ Էմին Եալման աւելի առաջ գացած է քան մոսկովները, որոնք վերջերս թրքական հողեր պահանջեցին։ Արդարեւ Եալման չէ բաւականացած թուրք հայրենիքէն մասեր խլելով, այլ եւ ուզած է բաժան բաժան ընել հայրենիքը, «ինքնավար» սնուցիւն տակ կազմակերպութիւններ ստեղծել։

Ահմէտ Էմին Եալման, որ կրակոտ հայրենասէր դարձած է այսօր, 26 Օգոստոս 1919ին «փոքրամասնութիւններու պաշտպանութիւնը» խորագրին տակ հետեւեալը կը գրէր «Վազրը» թերթին մէջ .

(*) «Յուսարը» 1948 Յուլիս 6:

Խորհրդային Համայնագիտորանը վերհրատարակուեցաւ 1949էն 1956 44 հատոր։ «Յուսարը»-ի խմբագրութիւնը ունի Համայնագիտորանի Ա. և Բ. տպագրութիւնները։ Բ. տպագրութեան 3րդ հատորին (1950), 47-108 էջերը նուիրուած են Հայաստանի։ Այս գլուխին կարևոր մասերը հայերէնի թարգմանուած և տրպագրուած են Փարիզի մէջ 1951ին։

«Հետեւեալ կերպով կարելի է լուծել Մերձաւոր Արեւելի կարգը, որ առկաի կը մնայ մինչեւ այսօր .

1.— Սրբագրութեան ենթարկել Հայաստանի սահմանը, տեղաւորել այդ շրջանի գաղթականները եւ երկրին միւս մասերուն մէջ գտնուող հայերուն քսել, ըէ այսուհետեւ իրենց յատակ հայրենիք մը սնին, փափաքողները կրնան հան երբայ, իսկ մնացորդները պիտի դառնան հաւասար իրաւունքներ վայելող օտմանեան քաղաքացիներ եւ այլեւս պիտի չկարենան տանձնաշնորհեալ հաւաքականութեան դիրք գրաւել։

2.— Ապահովել բնութեւնը յատաջողութիւնը, համաձայն անոնց մշակութային, տնտեսական եւ ընկերային պայմաններուն»։

Իսկ 12 Հոկտեմբեր 1919 քուակիր «Վազրը»-ի մէջ, Ահմէտ Էմին «Թուրքիոյ քաղաքականութիւնը» խորագրին տակ կը գրէ, թէ «բոլոր հայերը պարփակելու չափ ընդարձակ պէտք է ըլլան թրքական այն հողերը, որոնք պիտի արուին Հայաստանի»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Յարական բռնապետութեան տապալումին հետեւանքով, ուսերու տիրապետութեան ենթակալ քաղմաթիւ ազգեր սիրտացան իրենց ազգային անկախութիւնը։

1917 Փետրուարի, ապա նաեւ Հոկտեմբերի սուսական յեղափոխութիւնները սատարեցին կեդրոնական իշխանութեան քայքայումին։ Բուլշեիկները, օգտուելով սակցծուած քառսէն, շատ դիւրութեամբ յաջողեցան գրաւել իշխանութիւնը Ս. Փէթրոպոլսի և Մոսկուայի մէջ։ Առանց հողային գրաւումի և առանց պատերազմական սուղանքի խաղաղութիւն նշանարանով հրապարակ իջան, 1917 Դեկտ. 2/15ին կնքելով Պրեսո-Լիթուսկի զինադադարը, իսկ 1918 Մարտ 3/16ին Պրեսո-Լիթուսկի գաշնագիրը(*) Գերմանիոյ, Աւստրեհունգարիոյ, Պուլկարիոյ և Թուրքիոյ հետ։

Ռուսաստանի այս պարտութեան պիտի յաջորդէր, նոյն տարուան մէջ (1918 Նոյեմբեր), Երրեակ զինակցութեան պարտութիւնը։

Թուրքիա Հոկտեմբեր 30ին Մուստարի մէջ ըրիտանական «Ազամեմնոն» ռազմանաւին վրայ ստորագրեց զինադադարը։ Դաշնակիցներու ստիպումով թրքական բանակը քաշուեցաւ Անդրկովկասէն։

(*) Տեւ Հայաստան և Հայ Դատը, քաղաքացիներու, 1942, էջ 93 և 95:

1918 Մայիս 28ին յայտարարուած Հայաստանի Հանրապետութիւնը, թուրք բանակի հետացումով, տիրացաւ նոր հողերու, որոնց տարածութիւնը, որ 1918 Յունիս 4ին Պաթմաժի դաշնադրով 11 հազար քառ. քիլոմէթր էր, բարձրացաւ աւելի քան 60 հազար քառ. քիլոմէթրի: Հայկական բանակը դրանց կարս, Սարրգամիշ, Սյլի, Իզլեր, Չանկեզեր, Իսկ պէլի հարսւ՝ մընչևէ նախիջեան:

Հայերու դարաւոր երազը առաջին անգամ բլլալով կ'իրականանար (*): Խաղաղութեան վեհաժողովը 1920 Յունուար 19ին ճանչցաւ Հայաստանի կառավարութեան փաստական (de fait) գոյութիւնը, իսկ Ռզուստ 10ին Սեւրի դաշնադրով հաստատուեցաւ անոր իրաւական հանգամանքը:

Հայաստանի Հանրապետութիւնը ունեցաւ իր Խորհրդարանը, ազգային բանակը, համարարանը, գրամանիշը, ազատ մամուլը եւ նըշանակեց իր գիւնապետական ներկայացուցիչները Փարիզ, Լոնտոն, Ուաշինկթըն, Հսոմ, Պերլին, Կ. Պոլիս, Աթէնք, Պուքըշ, Սոֆիա, Թոքիօ, Իեհրան Թիֆլիս, Բագու, Հարսւ. Խուստան, Միգրերիս (Փուլակի կառավարութիւն) եւ Գահիրէ:

Հայաստանի ժողովուրդը եւ արտասահմանի բոլոր հայերը աննախընթաց ոգևորութեամբ մէջ էին. արագ կերպով կը բարգաւաճէր հայրենիքը, որուն համար նոր դարաշրջան մը կը սկսէր:

Այդ վերելքը պիտի բնշատուէր Մոսկուայի եւ Անկարայի փորձներուն միջև հաստատուած գիմական գործակցութեամբ, որուն կ'անդրադառնանք հետագայ գլխիներուն մէջ:

Հ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ Խ. ՌՈՒՍԱՍԱՆԻ

Բ Ա Ն Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ը

(Լ. ՇԱՆԹ — Հ. ՏԵՐՏԵՐԵԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ)

1920 Ապրիլ 28ին տասնց զեղակ մը արձակելու Ագրպէջան իորհրդայնացաւ: Այս զեղքը խոր ապաւորութիւն ձեռն Հայաստանի ժողովուրդին եւ զեկամար տարբին վրայ: Մանաւանդ որ Ագրպէջանի յեղակ մը անմիջապէս յաշարով մը Հայաստանէն էր պահանջէր պարպել Ագրպէջանի մաս կազմող «անօթիւնէի հոգածակներ»:

Հայաստանի կառավարութիւնը կ'որոշէ բանակցութիւններու մէջ մտնել Մոսկուայի հետ եւ կը գրէ կատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմեն Լեւոն Շանթ, Համբարձում Տէրաթեան եւ Լեւոն Չաբաֆեան:

Պատուիրակութեան անդամներէն միայն Համբարձում Տէրաթեանն է, որ շատ ուշ, 1921ին, իր յուշերը գրեց «Հայրենիք» ամսագրի մէջ, ուրիկ կուտանք բանակցութիւններու հետ անմիջականորէն կապուած մտքերը:

«Նախ քան պատուիրակութեան մեկնիլը, հանդիպում ունեցանք մեր կառավարութեան անդամներին հետ՝ անհրաժեշտ հրահանգներ ստանալու համար:

Պատուիրակութիւնը լիազարում էր յսնում Հայաստանի Հանրապետութեան բանակցութիւններ վարել իորերդային կառավարութեան հետ եւ քարեկամական դաշինք կնքել նրա հետ: Պատգամարութեան հրահանգում էր Մոսկուայում ընդունելի դարձնել հետեւեալ կէտերը. —

1. Հայաստանի Հանրապետութեան նախաձեռնութիւնով Գանբուրգի մէջ անցանկով հետեւ լիտուայիկ վարարարը:

2. Անցանկում ընդունելի դարձնել տակտիայի եղանակները Հայաստանին:

3. Իորերդային Ռուսաստանը միջամտի պէտք չէ լինի Հայաստանի ներքին գործերին ուղղակի կամ անուղղակի նստապարհներով:

4. Հիւսիսային Կովկասում եւ Ռուսաստանում ապրող հայերին իրաւունք պէտք է տրուի իրենց շարժական գոյներով եւ անբողջ ունեցածքով գաղթել Հայաստան:

5. Կայանբապաշտական պատեքագմի պատեքառով Հայաստանի աշխատարարութեան հասցում միւրական վնասների հատուցում, եւայլն:

(*) Նախապէս հրատարակուած մեր երկու հատորներուն մէջ աւելի ընդարձակ տեղեկութիւններ տուած ենք Հայաստանի Հանրապետութեան երկուեկու տարուան (28 Մայիս — 2 Յեկտ. 1920) գործունէութեան մասին: Հայն ծանօթութեանց համար կարգու է վրայիներ «Հայաստանի Հանրապետութիւնը, 1920, Փարիզ, Ա. Խատրիսեան: «Հայաստանի Հանրապետութեան ծագումը և վարդացումը», 1930, Աթէնք:

Մոսկուայից Թիֆլիսի վրայով Երևանի հետ կապ պահելու համար մեզ տրուեց ծածկագիրը :

Մեր հանդիպման վերջաուրու քեան կառավարութիւնից խնդրեցի թոյլ տալ, որ մեզ բնկերամայ պատուիրակու քեան անպաշտօն քարտուղարի հանգամանքով Սարգիս Այդինեանը, որ իմ հայրենակիցն էր եւ կարող էր օգտակար լինել մեզ» :

Պատուիրակութիւնը Ապրիլ 30ին կը մեկնէ Երևանէն եւ Մայիս 1ին կը հասնի Թիֆլիս : Ղարաբաղի Հայրենակցական Միութեան կողմէ իրենց կ'ընկերանան Աբամայիս Երզնկեան եւ Սիմոնիկ Փիրումեան, որոնք իրեն թէ պիտի օժանդակէին Ղարաբաղը Հայաստանի միացնելու գործին :

Պատուիրակութիւնը հապիւ Մայիսի վերջերս կը հասնի Մոսկուա, երկաթուղային երթիւնի գծուարութիւններու պատճառով :

«Մեր հասնելուն երկրորդ քէ երրորդ օրը, գիշերուայ ժամը 12ին, հրախրեցին արտաքին գործոց կոմիսարիատի գրասենեակը, որտեղ ներկայացրին մեր լիազօրար դրոշմը :

Խորհրդային Ռուսաստանի կողմից մեզ հետ բանակցում էին արտաքին գործոց կոմիսար Չիչերինը եւ նրա օգնական հայագի կաբախանը :

Մեզ համար շատ տարօրինակ էր եւ մինչեւ վերջն էլ մնաց անհասկնալի, թէ ինչո՞ւ մեր հանդիպումները համարեա միշտ գիշերուայ ուշ ժամերին էին նշանակուած : Երկրորդ տարօրինակութիւնն այն էր, որ բանակցութիւնների ընթացքին Հայաստանի քարտէսի փոխարէն կոմիսարիատի սեղանի վրայ դրուած էին լինում Նազան սիստեմի երկու ատրճանակներ : Չհասկանալի թէ ինչո՞ւ արդեօք իրենց ինքնապաշտպանութեան համար, թէ դիմացիները վրայ ազդեցութիւն թողնելու նպատակով : Մեր մէջ միայն ծիծաղ առաջացրեց այդ տարօրինակ ցուցադրութիւնը :

Չիչերինը, բարի գալուստ մաղթելով Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան, իր խնդակցութիւնը յայտնեց մեր ժամանակն առ քիւ եւ հաստատեց հորիդ. իշխանութեան «անկեղծ ցանկութիւն» բարեկամական յարաբերութիւններ ստեղծելու Հայաստանի կառավարութեան ու հայ ժողովրդի հետ : Յետոյ, անմիջապէս անցաւ բուն նիւթին, որի համառօտ ամփոփումը հետեւեալն է.

Տանկները իրենց՝ բուշիւններին պէտք է : Իրենք համաձայնուել են իրենց զինուորական եւ տնտեսական օժանդակութեամբ դուրս շարտելու նրանց երկրից եւրոպական աշխարհակալ «գաւթիչներ»ին : Տանկները պատրաստ են անմիջապէս գործողութիւնների անցնել, սակայն մտահոգուած են, որ Հայաստանի կառավարութիւնը,

որպէս Դաշնակիցների կողմնակից, կարող է հարուածել իրենց թիկունքից : Ձեռ շրմիւրել ենք. ՈՐՊԷՍԶԻ ՀԱՇՏԵՑՆԵՆՔ Ձեռ ՏԱՃԻԿՆԵՐԻ ԷՆՏ ԵՒ ՈՐՈՇ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ՍՏԱՆԱՆՔ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՁ ԳԱՇՆԱԿԻՑ ՏԱՃԻԿՆԵՐԻ ԹԻԿՈՒՆՔԻՑ ՁԻ՝ ՀԱՐՈՒԱՄԻ : Քանի որ ռուս-տանկական համագործակցութիւնը այս րոպէս խորհրդային Ռուսաստանի համար մահու եւ կենաց խնդիր է, ուստի անհրաժեշտ է այդ խնդիրների վերաբերմամբ ճշդել Հայաստանի կառավարութեան դիրքը եւ վերաբերմունքը :

Չիչերինի այս ամփոփ գեկուցումից հասկացուեց, որ խորհրդային կառավարութիւնը պարզապէս ուզում է Միջնորդի դեր կատարել մեր եւ տանկների միջեւ, բարի դրացիական յարաբերութիւններ ըստեղծելու համար, պայմանով, անշուշտ, որ մենք ձեռք քաշենք Դաշնակիցներից եւ ամբողջապէս Մոսկուայի իրաւարութեան յանձնենք մեր դատի լուծումը, ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼՈՎ ԱՅՆ՝ ՕԳՈՍՏՈՍ 10ին Սեւրում ԳՈՒՄԱՐՈՒԵԼԻՔ ԵՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԻՑ :

Վերոյիշեալ խնդիրների վերաբերմամբ Երևանում բնաւ խօսք չէր եղել, եւ մենք նախապատրաստուած չէինք շեշտակի դրուած հարցերին որոշ պատասխաններ տալու : Մենք լիազօրուած էինք միայն՝ «Մոսկուային բնդուելի դարձնել տանկահայ հողամասերի կցումը Հայաստանին» : Տանկահայաստանի անկախութեան եւ նրա սահմանների վերաբերմամբ Սեւրի մէջ հետագային կայանալիք որոշումներից հրաժարուելու մասին խօսք չէր եղել եւ 1920 թ. պայմաններում չէր էլ կարող լինել : Բացի այդ, մեզանից պահանջուում էր նաեւ որոշ երաշխիքներ տալ, որ Հայաստանի կառավարութիւնը թիկունքից պիտի չըհարուածէր բուշիւնների դաշնակից տանկներին :

Ի՞նչ երաշխիքներ : Անշուշտ, իրական երաշխիքներ եւ ո՛չ թէ թղթի :

Խնդիրը առաջադրուած էր պարզ ու շեշտակի : Մեզանից պահանջուում էին ճշդել Հայաստանի կառավարութեան դիրքը ու վերաբերմունքը խորհրդային Ռուսաստանի եւ Տանկաստանի հանդէպ :

Մրազիլը պարզ էր. տանկները նպատակն էր՝ Ռուսաստանի միջոցով մեր կառավարութեան վրայ ճնշում գործ դնել, սրպէսզի մենք ձեռք քաշէինք յարթական Դաշնակիցների օժանդակութիւնից եւ Սեւրի դաշնագրից :

Անշուշտ, խորհրդային Ռուսաստանն էլ ունէր իր հաշիւները՝ Տանկաստանին օժանդակելու համար : Նա էլ հետապնդում էր իր ՔԱՎԱՔԱՅԱՆ նպատակները : Տանկների սպառնալիքով նա մտածում էր ստիպել Եւրոպայի յարթականներին, եր խորհրդային իշխանութեան

հետ բանակցութիւնների մէջ մտնեն եւ իրեն ճանաչեն, որպէս Ռուսաստանի օրինաւոր իշխանութիւն:

Հայ պատուիրակութիւնը կ'առարկէ Ձիշերին. «Դուք հայերուն չափ չէք մանչնար քուրբերը. անոնք վարպետօրէն կը ստեն»:

Ձիշերին կը պատասխանէ, **թէ աշխարհ ալ միամիտ չեն եւ թէ** «իրենց նպատակները մէկն այն է. որ այդ միջոցով դիրացնեն Տանկաստանի խորհրդայնացումը մօտ ապագային»:

Իրրեւ թէ նպատակ չունեն խորհրդայնացնելու Հայաստանը, ալրպէս «հորհրդային կառավարութիւնը յաչս փոքր ազգութիւնների կը վարկարեկուի եւ չի կարողանար իր ծրագրած նպատակներին հասնիլ: Նորից պնդում եմ՝ որ մենք բարեկամ ենք հայ ժողովրդին եւ այժմ էլ պատրաստ ենք ձեր եւ տանիկների միջեւ իրաւարարի դեր կատարել. եթէ Հայաստանի կառավարութիւնը պաշտօնապէս դիմի մեր միջնորդութեան»:

Հ. Տէրտէրեան իր յուշերուն մէջ կ'ըսէ, **թէ տեսակցութենէն պարզուեցաւ, որ «Հայաստանի կառավարութեան եւ Սովետների հետ ապագում նպատակները հիմնովին սարքեր են»:**

Թէեւ Հայաստանի կառավարութեան կողմից լիազօրում չէինք տանկահայկական հաղամասերի վերաբերմամբ քանակցութեան մէջ մտնելու Մոսկուայի հետ, սակայն ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉՎԻՃԵՑՆԵԼՈՒ ՄՏԱՀԱԳՈՒԹԵԱՄԲ հարկադրանքի տակ գտնուեցանք մեր խօսակցութիւնները այդ ուղղութեամբ շարունակելու Ձիշերինի հետ՝ պարզելու համար նաեւ, թէ ի՞նչ կարող ենք ակնկալել Սովետների միջնորդութիւնից:

Պատակցութիւնները կը շարունակուին, եւ Հայ պատուիրակութիւնը կը պաշտպանէ Հայաստանի վեց նահանգներուն վրայ Հայաստանի ունեցած իրաւունքները: **Ձիշերին կ'առարկէ,** **թէ հան հայեր չկան այլևս:**

Առաջին տեսակցութիւնը կը վերջանայ եւ պատուիրակութեան շարք մը ժամանակ կը արուի վիճակագրական տուեալներու վրայ հիմնուած տեղեկագիր մը ներկայացնելու:

«Մեր ամբողջ խօսակցութեան ընթացքին արտաքին գործոց կոմիսարի օգնական կարախանը ուշադրութեամբ եւ լուռ հետեւում էր մեր խօսակցութեան: Ինչպէս նկատում էր նրա դէմքի եւ աչքերի արտայայտութիւնից. նա գոհ էր այդ օրուայ խօսակցութիւնից եւ յանգամ եզրակացութիւնից:

Գոհ չէր սակայն գոյացած համաձայնութիւնից եւ մասնաւորապէս ինձանից մեր պատուիրակութեան արագ անդամ ընկ. Լեւոն Շանքը: Նա մտահոգուած էր, որ մենք անտեղի կերպով շեղուել էինք

մեր սկզբունքային տեսակետից եւ որ տանկահայկական վիշալէքներին խնդիր ենք քակայ էր Դաշնակիցների խաղաղութեան խորհրդածողովի իրաւասութեան ու մեր պատուիրակութիւնը լիազօրուած չէր այդ մասին բանակցութիւններ վարելու:

Մանրամասն բացատրութիւն տուի իմ երկու ընկերներին, ինքնագուլի վարմունքիս պատճառների մասին: Ասացի, նախ, որ իմ նպատակն էր վիճակագրական տուեալներով փաստել մեր Դատի իրարացիութիւնը նաեւ հողը աշխատատեղին սկզբունքի տեսակետից եւ որ այդ սկզբունքի դէմ առարկելը դժուար էր մեզ համար, որպէս ընկերվարական կուսակցութեան անդամների: Երկրորդ՝ խորապէս համոզուած էի, որ տանկները երբեք չպիտի համաձայնէին վերոյիշեալ սկզբունքը Ռուսաստանի իրաւարարութեան հիմք ընդունելու: Ես, վերջապէս, համոզուած էի, որ տանկները չպիտի ընդունէին ընդհանուր հորհրդային Ռուսաստանի իրաւարարութիւնը:

Մանրամասն տեղեկագիր կը պատրաստէ Պատուիրակութիւնը. **Հ. Տէրտէրեան կը կարծէ,** *որ ան որով չափով դեր կը կատարէ ու Ձիշերին ըստ հուշեան առարկութիւններ չ'ըներ:*

Անհրաժեշտ եմ գտնում այստեղ յիշատակելու, որ երբ մեր պատուիրակութիւնը գրադուած էր տեղեկագիր կազմելով, Մոսկուայում էր գտնում Թուրք Ազգային Մեծ ժողովի պատուիրակութիւնը Բէէիր-Սամի բէշի գլխաւորութեամբ, որ առաջելութիւն ունէր խորհրդային կառավարութեան հետ բանակցութիւններ վարելու:

Ես եւ Լեւոն Զարափեանը առաջարկեցինք ընկ. Լ. Շանքին մասնաւոր տեսակցութիւններ ունենալու թուրք պատուիրակութեան հետ եւ աշխատելու իրարահասկացողութեան գալ տանկների հետ, իսկ եթէ այդ չյաջողուէր, գոնէ շօշափած կը լինէինք իրենց տրամադրութիւնները: Առաջարկ քերոզներս այն կարծիքին էինք, որ տանկները գոհ պիտի մնային, եթէ մենք կարողանայինք երկուստեք գոյութիւն ունեցող վեճերը կարգադրել առանց Սովետական Ռուսաստանի միջամտութեան: Տանկները արեւի պատճառներ ունէին կասկածանքով մօտենալու սովետական կառավարութեան բարեկամական անկեղծ ըզգացմունքներին, քան թէ մենք՝ հայերս:

Զնայած որ մեր առաջարկը արեւէ վնաս չէր կարող բերել մեր Դատին, բայց եւ այնպէս ընկ. Շանքը բուռն կերպով ընդդիմացաւ թուրքերի հետ տեսակցութեան գաղափարին: Առարկեց, որ նախ՝ լիազօրուած չենք տանկների հետ բանակցելու եւ երկրորդ՝ որ ինքը կողմակազմի չի՝ նստի մեր ազգի ջարդարարների հետ:

Աշխատում էինք համոզել, որ այստեղ լիազօրութեան խնդիր չկայ, այլ տրամադրութիւններ շօշափելու հարց եւ. եթէ պէտք լինի.

Հայաստանի կառավարութիւնից հետագային կը ստանանք անհրաժեշտ լիազօրութիւնները: Ինչ վերաբերում է երկրորդ առարկութեան՝ գրանուում էինք, որ դիւանագիտական յարաբերութիւնների մարզում զգացմունքը անեղի չունի, այլ միայն սառը դատողութիւնը եւ մեր ժողովրդի շահը:

Գծրախտաբար, այդ խնդրում մեզ չյաջողուեց համոզել ընկ. Շանթին, եւ մենք էլ նպատակայարմար չգտանք, առանց նրա համաձայնութեան, շփման մէջ մտնելու տանիկ պատուիրակութեան հետ եւ ցառով յետ կանգնեցինք մեր մտադրութիւնից:

Այ. Միսանիկեան բացակայ է Մոսկուայէն եւ կը վերադառնայ լեհական ճակատէն: Հ. Տէրտէրեան նոր ծանօթ է ու տեսակցութեան մէջ Երկարօրէն կը ներկայացնէ պատուիրակութեան պահանջները: Միսանիկեան թէեւ կը խոստանայ աջակցել, բայց շուտով կը մեկնի գարձևով լեհական ճակատը:

Տանկահայաստանի մասին մեր տեղեկագիրը ներկայացնելուց մօտաւորապէս մի շաբաթ յետոյ, Յունիսի կէտերին, մեզ նորից հրաւիրեցին տեսակցութեան:

Այս տեսակցութիւնը անիւն արդիւնաւէտ եղաւ: Մենք ընդառայեցինք Սովետական կառավարութեան ՄԻՋՆՈՒՄԻ դեր կատարելու ցանկութեանը՝ Հայաստանի կառավարութեան եւ Մուստաֆա Քեմալի միջեւ: Զիչերինը հորհրդային Ռուսաստանի անունից խստացաւ հայերին բաւարարել՝ Տանկահայաստանի որոշ հողամասերը միացնելով Հայաստանին եւ նրան ապահովելով ել գէպի Սեւ ծով:

Ազերբեջանի հետ եւս մեր սահմանների խնդիրը որոշուեց մօտաւորապէս կարգադրել հետեւեալ ձեւով.՝ Նախիջեւանի շրջանը եւ Զանգեզուրը անվերապաօրէն պիտի համարուէին հայկական հողամասեր, իսկ Վարաբադը պիտի նկատուէր վիճելի, որի իրաւական վիճակը որոշուելու էր հետագային ժողովրդական հանրաժողովով:

Բացի այդ բաւարարում էին մեր պատուիրակութեան մի շարք կարեւոր առաջարկները տնտեսական ու մշակութային խնդիրների վերաբերեալ: Մոսկուայում եւ Ռուսաստանի այլ քաղաքներում կենտրոնացած հայ մշակոյթին վերաբերեալ գրականութիւնը յանձնուում էր Հայաստանին, թոյլատրուում էր հայ գաղթականութեան եւ ընդհանրապէս Ռուսաստանում ապրող բոլոր հայերին իրենց ամբողջ շարժական ունեցումներով փոխադրուել Հայաստան: Մեր երկրի փոխադրական քաղաքացիները մասամբ վերականգնելու նպատակով Հայաստանին ձրիաբար պիտի տրամադրուէին մի քանի տասնեակ շագնաքոծեր եւ վագոններ, ինչպէս եւ պիտի տրամադրուէր բաւարար քանակութեամբ վառելիք (նափթ) ինքնարժէքով: հորհրդային Միու-

րիւնը յանձնառու էր լինում անվճար փոխանցել Հայաստանին նաեւ մանրամասն եւ կտոր գործելու երկու գործարան իր սարճուկարգով: Բացի այդ, որպէս օժանդակութիւն հայ ժողովրդին, հորհրդային Միութիւնը կանխիկ պիտի վճարէր Հայաստանի կառավարութեան 2 1/2 միլիոն ռուբլի ոսկով, պիտի տրամադրէր երկրագործական գործիքներ, հացահատիկ, եւ այլն:

Զիչերինը խոստացաւ շտապ ձեւակերպել բանաւոր կայացած համաձայնութիւնը եւ ռուս-հայկական դաշնագրի բնագիրը մի երկու օրից ներկայացնել ստորագրութեան:

Կայացած համաձայնութեան մասին անմիջապէս տեղեկացրինք Երեւան եւ սկսեցինք պատրաստութիւն տեսնել մեկնելու համար:

Անցաւ երկու-երեք օր: Բայց դաշնագրի ստորագրութիւնը ձգձգուում էր՝ մեզ համար անյայտ պատճառներով:

Պարզ էր, որ կայացած համաձայնութիւնը անակնկալ եւ անսխալ արգելիքների էր հանդիպել քանձր վարագոյրի ետեւում:

Հ. Տէրտէրեան կը կարծէ, թէ Մայիսեան ապստամբութեան վիժումէն ետք, Բագու ապաստանած Հայ բուլչեիկ վարիչ դէմքեր՝ Միկոյեան, Աւիս, Կասեան եւ ուրիշներ վիժեցուցեր են բանակցութիւնները, շուտով Հայաստանը խորհրդայնացնելու համար:

Մեր կարծիքով՝ եթէ ուշ ուշով կարդանք Մոսկուայի թուրք գեսպանի գոր. Ալի Ֆուատի յուշերը, պիտի տեսնենք շատ յստակօրէն, որ նոյն թուականներուն Մոսկուա բանակցութեան մէջ էր թուրք պատուիրակներուն հետ եւ Լենին ու Սթալին կը զերադասեն պահանջել թուրքերը, որոնք դժուար մնացած էին Զիչերինէն:

Զիչերին նոր առաջարկ մը կ'ընէ Հայ պատուիրակութեան՝ Ղարաբաղը Ազրպէյջանին զիջել, Զանգեզուրը վիճելի համարել եւ փոխարէն ստանալ Նախիջեւանը:

Այս առաջարկին պատասխանը շատ ուշ կը ստացուի, մօտ ամիս մը ետք. կարելի չէ եղած գիտնալ, թէ խորհրդային իշխանութիւնը ու յանձնեց, թէ՞ ոչ Հայաստանի կառավարութիւնը ուշացաւ պատասխանելու:

Մինչ այդ՝ Գարախան առանձին տեսակցութիւն կը կազմակերպէ Հ. Տէրտէրեանին հետ եւ կը ջանայ զայն համոզել այն մասին, ինչ Մոսկուայի ծրագրած են հետագային թուրքիայէն հողամասեր գրաւելու եւ այս նպատակով պատրաստուած քարտէսը ցոյց կը տրուի Տէրտէրեանին:

Դէպքերը, սակայն, տարբեր ուղղութիւն կը ստանան: Հայ պատուիրակները դուրսէն կ'իմանան, թէ 11րդ Կարմիր զօրաբանակը

Չանդեղուրի վրայով անցած է Նախիջևան, իբրև թէ թուրքերը պաշտպանելու Հայաստանի բանակի յարձակումներուն զէժ :

Յուլիսի սկզբներին մեզ նորից երաւիքեցին արտաքին գործոց կառավարիատ. որտեղ Չիչերինը Կարախանի ներկայութեամբ յայտնեց մեզ. որ հորհրդային կառավարութիւնը նպատակայարմար է գտնում բանակցութիւնները փոխադրել Երեւան եւ այդ իմաստով առաջարկութիւն է արտած Հայաստանի կառավարութեան :

Երեւանում բանակցութիւններ վարելու համար, հորհրդային կառավարութիւնը նշանակել էր իր լիազօր ներկայացուցիչը՝ յանձնին Լեզրանի, որին յանձնարարուած էր տեղումը ծանօթանալ Չանգեզուրի բնակչութեան ցանկութիւնների հետ եւ ըստ այնմ կարգադրել Չանգեզուրի խնդիրը : Ինչ վերաբերում էր միւս երկու վիճելի շրջաններից՝ Ղարաբաղին ու Նախիջևանին, հորհրդային կառավարութեան տեսակէտը մնում էր նոյնը. ինչ որ մեզ արդէն յայտնել էին. այն է՝ Նախիջևանի շրջանը Հայաստանին, իսկ Ղարաբաղը՝ Ազրբէջանին :

«Յանկալի կը լինէր, — աւելացրեց Չիչերինը. — եթէ ձեր պատուիրակութիւնը հանդիպում ունենար Լեզրանի հետ. նախ քան նրա մեկնումը Մոսկուայից» :

Պատուիրակութիւնը կը տեսակցի Լեզրանի հետ, ներկայ կը գտնուի նաեւ իր խորհրդակներ Սահակ Տէր Գարրէլեան, ծայրամով գարարացի :

Լեզրանը մեզ յայտնեց, որ իր պատուիրակութիւնը մի քանի օրից պիտի մեկնի Բագու եւ ա. նտեղից էլ Թիֆլիսի վրայով պիտի անցնէ Երեւան՝ Մոսկուայում ընդհատուած ուսուցանական բանակցութիւնները շարունակելու համար : Նա հաւաստիացրեց մեզ, որ հորհրդային կառավարութիւնը միանգամայն բարեացակամ վերաբերմամբ ունի Հայաստանի Հանրապետութեան հանդէպ :

«Համաձայն ընկեր Չիչերինի առաջարկին, որ կառավարութեան նրաշումն է. — առաջ նա. — Նախիջևանը մտնում է Հայաստանի սահմանների մէջ, իսկ Ղարաբաղը յանձնուած է Ազրբէջանին : Ինչ վերաբերում է Չանգեզուրին, սրբ առ այժմ համարում ենք վիճելի. դա գրեւ ձեռակամ յայտարարութիւն է եւ կարող եմ ձեզ վստահացնել, որ Չանգեզուրը նախապէս է Հայաստանի Հանրապետութեան անվիճելի հողամաս :

Նայն հաւաստիացումները տուեց նաեւ Սահակ Տէր Գարրէլեանը» :

Լեզրանի պատուիրակութիւնը կը մեկնի Յուլիսի վերջերս զէպի Երեւան : Իսկ հայ պատուիրակները իրենց կառավարութեան հրահանգի կը սպասեն :

Չիչերին կրկին հաւաստիքներ կուտայ, թէ Կարմիր բանակի կողմէ «ՉԱՆԳԵԶՈՒՐԻ ՈՒ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԳՐԱԽՈՒՄԸ ԵՒՄԱՆԱԿԱՆՈՐ ԲՆՈՅԹ ՈՒՆԵՆ» :

Հայ պատուիրակները Օգոստոս 10ին կը հասնին Ռոստով, որ կ'իմանան Սեւրի դաշնագրի ստորագրումը : Իսկ նոյն փութակներին Հայաստանի ներկայացուցիչներ՝ Ա. Չամալեանի եւ Ա. Բարալեանի ու հորհրդային կառավարութեան լիազօր՝ Լեզրանի միջեւ Թիֆլիսում ըստորագրուել է հաշտութեան ժամանակաւոր համաձայնագիր որով՝ հորհրդային Ռուսաստանի զորամասերը գրաւման տակ էին պահելու Ղարաբաղի, Չանգեզուրի ու Նախիջևանի շրջանները եւ Ղազախի գաւառի մասը :

Այդ անսպասելի տեղեկութիւնից, պատուիրակութեան անդամներն կատարելապէս շշմել էինք, քէ ինչպէ՞ս Հայաստանի կառավարութիւնը, որ չէր համաձայնում մի առիտ առաջ Մոսկուայում շատ աւելի նպատաստար պայմաններով մեզ առաջարկուած համաձայնագիրը ստորագրել եւ առաջարկում էր նոր պահանջ ներկայացնել դաշտային Ղարաբաղի մասին. Օգոստոս 10ին համաձայնուել էր ստորագրելու այդ իսայուսակ համաձայնագիրը :

Պատուիրակութեանս համար սրագուէց. որ մեր կառավարութիւնը, բոլշեւիկների Մալխեսան ազատամարտեան առնչութեամբ իր ունեցած ռազմական յաջողութիւններից փայլեբաւած, թերագնահատել էր Կարմիր Բանակի ներկայութիւնը Բագում եւ Ղարաբաղում, եւ մի շարք անյաջողութիւններից յետոյ հարկադրուել էլ Թիֆլիսում ըստորագրել Օգոստոս 10ի համաձայնագիրը» :

Պատուիրակութիւնը ստիպուած կ'ըլլայ տասը օր մնալ Ռոստով, գարձալ հազարակցութեան գժուարութիւններու հետեւեղով : Հ. Տէրակեան կը տեսակցի Լուկաչինի հետ, որ բարեկամ կ'երբերմունք ցոյց կուտայ :

Թիֆլիսում մեր պատուիրակութիւնը տեսակցութիւն ունեցաւ Լեզրանի հետ եւ տեղեկութիւն ուզեց, քէ կարո՞ղ է Երեւան մեկնել՝ Մոսկուայում ընդհատուած բանակցութիւնները վերսկսելու համար :

Լեզրանը մեզ յայտնեց, որ ինքը գրազուած է Ղարաբաղի եւ Չանգեզուրի հարցերի ուսումնասիրութեամբ եւ Բագու հանդիպելուց մի 15-20 օր յետոյ կը մեկնի Երեւան :

Սեպտեմբերի սկիզբներին մեր պատուիրակութիւնը հասաւ Երեւան՝ այնտեղ սպասելու Լեզրանի պատուիրակութեան ժամանելուն : Հետագային պարզուեց, որ Հայաստանի պատուիրակութեան Մոսկուայից մեկնելուց ընդամենը 14 օր յետոյ, ՕԳՈՍՏՈՍ 24ին կնքուել էր ուսուսքական բարեկամութեան դաշինք. որով բոլշեւիկները պար-

տառորուել էին օգնել բուրքերին՝ դրամով, զենքով եւ օւրիշ ամէն միջոցներով :

Պարզուեց նաեւ, որ Լեզրանը իր նրբաւն մեկնուելը յետաձգում էր ո՛չ թէ Ղարաբաղի ու Չանգեզուրի խնդիրներին լաւագոյնս ծանօթանալու համար, այլ Սեպտեմբեր 20ին Բագուում կայանալիք՝ աշապէս կոչուած «Արեւելեան Ազգեր»ի համագումարին մասնակցելու համար: Այդ համագումարում էր, որ փաստօրէն վնասուել էին ո՛չ միայն Ղարաբաղի, Չանգեզուրի եւ Նախիջեանի խնդիրները, այլ եւ Հայաստանի մանուկ Հանրապետութեան ապագայ գոյութեան հարցը:

«Արեւելեան Ազգեր»ի Բագուի համագումարին, բացի Լեզրանից, մասնակցել էին Զինովիներ, Ռադեկեր, Ռադեկեր եւ բազմաթիւ ուղեւորու այլ բաշխիկներ: Մասնակցել էին նաեւ հայ ժողովրդի վկայեալ ջարդարարաններ էնզիեր ու հալի փաշաները եւ ուրիշներ: Մասնակցել էին ե՛ւ Մայիսեան ապստամբութիւնից յետոյ Հայաստանից փախած եւ Ռուսաստանի ու Կովկասի գաղափար կողմնորոշ հաւաքուած հայ բաշխիկները՝ Միկոյեանը, Ախսը, Ս. Կասեանը, Ա. Մոսեանը եւ շատ ուրիշներ, որոնք՝ միացած ջարդարար տանիկ փաշաների հետ՝ դաւեր էին սիրում հայ ժողովրդի ու նրա մանուկ Հանրապետութեան դէմ»:

Սեպտեմբերի սկիզբը պատուիրակութիւնը երբ նրբաւն կը հասնի, կը նկատու մեծ լաւատեսութիւն ու խանդավառութիւն Աւերի դաշնադրի ստորագրութեան հետեանքով: Պատուիրակութիւնը ուրիշ կերպ կը խորհի:

«Խորհրդային Ռուսաստանի զորամասերը արդէն իսկ գտնուում էին Հայաստանի սահմանների վրայ եւ իրական սպառնալիք էին ներկայացնում Հայաստանի անկախութեան համար: Ռուսի պատուիրակութիւնը առաջարկում էր մեր կառավարութեան՝ ամէն զեով ու զիջումներով լեզու գտնել խորհրդային կառավարութեան հետ, անգամ Սեւրից հրաժարուելու պայմանով. որպէսզի կարողանանք արագացնել կարմիր զորամասերի հեռացումը մեր անվիճելի հողամասերից»:

Թուրքերը կ'աճարարեն եւ Սեւր. 23ին, առանց պատերազմ յայտարարելու, կը յարձակին Հայաստանի վրայ: Զինուորական գործողութիւնները սկսելէ քսան օր ետք, Հոկտ. 11ին միայն նրբաւն կուգայ Լեզրանի բազմանգամ պատուիրակութիւնը եւ անմիջապէս կը ներկայացնէ վերջնադր մը Հայաստանի կառավարութեան, պահանջելով.

«1) Հրաժարուել Սեւրի դաշնագրից:

2) Ինչո՞ւ տալ խորհրդային զորքերին իրենց ռազմամրքերով անցնել Հայաստանի երկաթուղիներով ու խնուզիներով՝ միանալու համար Մուսրափա Քեմալի զորքերին՝ դաշնակիցների դէմ կռուելու նպատակով:

3) Հայաստանի եւ հարեւանների միջեւ գոյութիւն ունեցող սահմանային վեճերի լուծումը յանձնել հորհրդային Ռուսաստանի իրաւարարութեան եւ մի շարք երկրորդական այլ ստացարկներ»:

Հայաստանի գահալիքը բացառիկ նիստի կը հրաւիրուի, երկար միճարանութիւններէ ետք, կ'որոշուի բանակցութեան մէջ մտնել Լեզրանի հետ, նկատի առնելով ստեղծուած ասպնապայի կացութիւնը:

Շանթ-Տէրազերեան պատուիրակութեան առաքելութիւնը փաստօրէն ձախողած կը. բացառութիւնները պիտի տեսնենք Մոսկուայի թուրք գեւազան գոր. Ալի Ֆուատի յուշերուն մէջ:

ՌՈՒՍԵՒԹՈՒՐՔ ԳՈՐԾԱԿՅՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԵՄ
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի
ՄՈՍԿՈՒԱՅԻ ԹՈՒՐՔ ԿԵՍՊԱՆ ԶՕՐ. ԱԼԻ ՖՈՒԱՏԻ ՅՈՒՇԵՐԸ
(ԲԱՂՈՒԱՐՔ)

Զօր. Ալի Ֆուատ փաշա, ներկայիս թուրքերէն անունով ժեներալ Ալի Ֆուատ ձեպէտոյ, Ա. համաշխարհային պատերազմին Պաղեստինի ճակատի հրամանատարներէն կը: Քեմալական շարժումին առաջին դէմքերէն՝ նախ քան Իսմէթը՝ արեւմտեան ճակատի հրատաճատարն էր:

Հայաստանի խորհրդայնացման նախօրէին, 21 Նոյեմբեր 1920ին նշանակուեցաւ գեւազան Մոսկուայի մէջ, ուր մնաց մինչեւ 2 Յունիս 1922: Այս թուականներուն է որ կնքուեցան Ալեքսանդրապոլի, Մոսկուայի, Կարսի գաշինքները, ուրիշ խօսքով՝ սուսեթուրք գործակցութեամբ Հայաստանի ծուռտումը:

Զօր. Ալի Ֆուատի յուշերու այս հատորը ամբողջութեամբ նուիրուած է այդ ղեկգերուն եւ կը կրէ «ՄՈՍԿՈՒԱՅԻ ՀԱԹՐԱԿԱՐԻ» (Մոսկուայի յուշեր) անունը:

Զօր. Ալի Ֆուատ իր յուշերը գրած եւ շատ մը գաղանթներ հրատարակած է, որովհետեւ այժմ թշնամահուն են սուսեթուրք լաւարելութիւնները եւ զիսանադիտական, քաղաքական անպատեհութիւններ չեն ներկայացնէր այդ մերկայումսները:

Ալի Ֆուատ ձեպէտոյ «Վաթան» օրաթերթի կարեւոր աշխատակիցներէն է ու ստենէ մը ի վեր կը գրողի հրատարակագրութեամբ:

Յուշերու իր երկրորդ հատորը «ՄՈՍԿՈՎԱ ՀԱԹՐԱՒԱՐԸ», մեզի կը լուսարանէ, թէ Հայաստանի փրկիչ ներկայացող Սթալինները ինչպէս գործի լծեցին ինվերները, ձեւով փաշաները եւ ինչքան դիւրութեամբ Կարսը, Արտահանը, Իզդիբը, Նախիջևանը ընծայարկեցին թուրքերուն... Եւ զօր. Ալի Ֆուատ զեռ զժողուութիւն ունի, յայտնելով, թէ կրնային աւելին ստանալ...:

Գրքը 348 էջերէ կը բաղկանայ, կը պարունակէ 2 քարտէս ու բաժնուած 45 դրուաներու, բաղմամբիւ եմթախորագրերով:

Յիշատակներ այդ դրուաներէն մաս մը.

Բագուի մէջ արեւելեան ազգերու համագործակցութիւնը.— Ի՞նչպէս սկսաւ բուլղարներու հետ առաջին շփումը արեւելեան նակատին վրայ.— Համայնավար միջազգայնականը ի՞նչպէս կը տեսնէր Թուրքիան.— Սովետներու հետ անհատական շփումներ եւ մեր յարաբերութիւնները.— Սովետներու հետ պաշտօնական յարաբերութիւններու սկսումը.— Մոսկուայի մէջ խորհրդակցութիւններ.— Արեւելեան նակատին վրայ հայկական շարժումներ.— Խալիլ փաշայի պատմածները.— Մոսկուայի դաշինքը.— Սթալինի հետ երկրորդ տեսակցութիւնը.— Էնվեր փաշայի եւ ընկերներուն հետ շփումներ.— Անգլետոն առետրական դաշինք եւ Թուրքիա.— Կարսի դաշինքը.— Թուրքիա-ֆրանսական համաձայնութիւն եւ Ռուսիա.— Ձեւով փաշայի գործունէութիւնը.— Էնվեր փաշայի վախճանը.— Ինչո՞ւ էեռացայ Մոսկուայի դեսպանատունէն, եւն., եւն.:

Մութաֆա Քեմալ բացառիկ կարեւորութիւն տալով ուսուերու հետ գործակցութեան, արեւմտեան ճակատի հրամանատար Ֆուատ փաշան իր մօտ հրաւիրելով՝ կ'առաջարկէ անոր ստանձնել Մոսկուայի դեսպանատունը եւ ան կ'ընդունի, պատասխանելով, թէ «մտահ կրնայ ըլլալ, որ հայրենիքի համար ամէն տեսակ անձնութիւն յանձն կ'առնէ»:

Հեղինակը կը պատմէ ու կը ներկայացնէ, նախ քան իր մեկնումը, Բագուի մէջ գումարուած արեւելեան ազգերու համագործակցութեան, ուր Զինովիեի հետ հրապարակ կուզայ Էնվեր, ի ներկայութեան 2-000 պատուիրակներու, քանի մը տասնեակ արեւելեան ազգերէն զրկուած:

Հեղինակը կը խոստովանի, որ Էնվեր փաշա նախ քան Թուրքիայէն իր փախուստը, Կովկասի մէջ ցրուած էր թրքական զօրամասեր, իսկ Մուստաֆայի զինազաղարին Իզդիթ փաշա յաջողած էր այդ զինուորները «պահել իրենց տեղերը»:

Ֆուատ փաշա կը մեկազրկ Անգլիան, որ Տենիքիի եւ Վրանկիլի ուժ տուաւ վերահաստատելու ցորակահոտութիւնը, «փոխանակ

հակացոյութեան գալու իզգէք փաշայի հետ եւ Կովկաս գտնուած թուրք զօրաբաժիններու օգնութեամբ հաստատելու կովկասեան ֆիտերայիսն մը, բաղկացած անկախ պետութիւններէ»:

Կովկասի խորհրդայնացման զէպերուն սկսելու ատեն կը յիշատակէ, որ «Կովկասի հիւսիսային լեռներէն Ադրպէյջանի մուտք գործող Կարմիր բանակի զինուորներու թիւը տասնեակու հարիւր տակէ չէր: Իրենց զէպերն այ հոսկէ-հոնկէ առնուած, քիչ էին: Եթէ Ադրպէյջանին անկախութիւն խոստացած չըլլային, այս տկար ուժով գրաւման չէին կրնար սկսիլ»:

«Մինչեւ իսկ վրացական կառավարութիւնը, թէեւ Մովսէսութեան հետ երեսութեան հասկացողութեան եկած էր, անկախութեան մէջ Անգլիոյ կողմնակից ըլլալէ զատրած չէր: Վրաստանի մէջ համայնավարները ամբողջովին ձերբակալուած էին»:

«Գարնակ Հայաստանի կառավարութիւնը վրացիներու նման անգլիացիներուն հակած էր: Ասով հանդերձ, բաղդատմամբ ուրիշ ազգերու, բուլղարներու աւելի տարածում էր հայերու մէջ: Հայ բուլղարները, թուրք իսլամ պետութիւններէն ամէն կողմէ շրջապատուած ըլլալով, կողմնակից դարձած էին թուրքերու հետ համաձայնելու»:

Յատկանշական է, որ 1920 Նոյեմբեր 21ին Մոսկուայի համար նշանակուած թուրք դեսպանը երկար ատեն կանգ կ'առնէ ու կը մնայ Կարս, Հայաստանի խորհրդայնացման օրերուն: Եւ Մոսկուա կը հասնի հազիւ 19 Փետր. 1921ին:

Գրքի առաջին բաժնին մէջ, սովետ վարիչներու հետ տեղի ունեցած խօսակցութիւններու ատեն, բաղմամբիւ անդամներ կը կրկնուի՝ «Հայաստանի նախնային բանալու հարցը», ուսեթուրք բանակներու միացումը ապահովելու համար:

Մինչեւ զօր. Ֆուատին Մոսկուա հասնիլը, ուսեթուրք միացումը, Երասխակցութիւնը արդէն կատարուած էր Հայաստանի հողերու մէջէն:

Թուրք դեսպանը առաջին անգամ կը տեսակցի արտաքին գործավար Զիչերինի հետ, որ կ'առաջարկէ հայկական հարցի լուծումին համար Վանի եւ Մուշի վիլայէթներէն հողեր տալ Հայաստանին: Յիշենք որ այս տեսակցութիւնը կը պատահի 1921 Փետր. ի վերջերք, երբ Հայաստանէն դուրս քշուած է Կարմիր բանակը:

Փոխ գործավար Գարախանէն Էս լաւ տպաւորութիւն չի ստանար: Կր հանդարտի զօր. Ալի Ֆուատ երբ կը տեսնուի Ազգութիւններու գործավար Սթալինի հետ:

Հեղինակը մեծ համակրանքով կը խօսի Սթալինի մասին. նրկարապրելով անոր հետ ունեցած առաջին տեսակցութիւնը եւ բանակ-

ցուցիչներու նախապատրաստութիւնը՝ կը գրէ հետեւեալը. կուսանք բառացի թարգմանութիւնը.

«ՄԹԱԼԻՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՑԸ:

«Մեր այն հարցումին, թէ Հայաստանի հարցի մասին (բանակցութիւններու ատեն) պիտի խօսուի՞ թէ ոչ, ան (Մթալին) ըսաւ.

— «ԴՈՒՔ ՁԵՁԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐԸ ԼՈՒԾԵՑԻՔ: ԵԹԷ ՉԼՈՒԾՈՒԱԾ ԲԱՆ ՄԸ ԴԵՑ ՄՆԱՑԱԾ Է, ԱՆ ԱԼ ԼՈՒԾԵՑԻՔ, ԲԱՅՑ ԺԱՄԱՆԱԿԸ ՃՇԳՐՏԱՊԷՍ ՄԵՁԻ ԻՄԱՑՈՒՑԷՔ:

«Այս պատասխանը տուաւ: Յետոյ հարցուց, թէ կիւմրին (Ալեքսանդրապոլը) ե՞րբ պիտի պարպենք: Դաշինքի պայմանները երբ գործադրուին, անմիջապէս պիտի պարպենք եւ կիւմրին, սեփականացնելու մտադրութիւն չունինք, ըսի իրեն»:

«Ընկեր Սթալինի տրուած այս կարուկ եւ գոհունակութեան արժանի յայտարարութեան ետք, իրեն մնաք բարով ըսինք»:

Չօր. Ալի Ծուատ 1920ի աշնան էնկիւրիի կառավարութեան կողմէ Մոսկուայի դեսպան կը նշանակուի. հոն պիտի սկսէին Լեհու կառավարութիւններու միջեւ պաշտօնական ստաջին բանակցութիւնները:

Մինչդեռ 1918 Հոկտ. 30ի Մուստրոսի զինադադարէն անմիջապէս ետք, երբ Իթթիհատի վարիչները Պերլին կը փախչէին, հոն անմիջապէս կը սկսէին շփում ունենալ բուլղերիներու հետ: Կը նշանակէ՝ մօտ երկու տարուան միջոցին, Պերլինի եւ Մոսկուայի մէջ, Իթթիհատի պետերը ամբաստանելու ուսուցումը գործակցութիւնը:

Չօր. Ալի Ծուատ թշնամութիւն ցոյց չի տար դէպի Թայէաթը, էնվերը, ձեմալ եւ Պալիլ փաշաները, մինչդեռ Մուսթաֆա Քեմալի կառավարութիւնը մահապատիժ սահմանած էր Իթթիհատական պետերէն շատերուն:

Չօր. Ալի Ծուատ Լորեք չ'անտեսեր Իթթիհատի վարիչներուն կատարած ջանքերը ու ձեռք բերած նպատուար արդիւնքները ուսուցումը գործակցութեան ընթացքին:

Ալի Ծուատի Թայէաթի մասին կը գրէ. «1919 վերջերս Թայէաթ փաշա իր քարտուղարին միջոցով Պերլինէն նամակ մը գրկած էր էնկիւրի՝ Մուսթաֆա Քեմալին: Այս նամակով Անատոլուի մէջ սկսուած պատուարական շարժումը հրաշք կ'անուանէ: Պերլինի մէջ գտնուած բուլղերի վարիչներէն ոմանք գերման կառավարութեան օգնութեամբ կրցած են ազատիլ. ասոնցմէ խոստում առած է, որ բուլղերիկեան ուս կառավարութիւնը պիտի օգնէ Անատոլուի ազգային շարժման: Այս պարագան բուլղերիկեան կառավարութեան մօտ հետապնդելու նպատակով

կով էնվեր, ձեմալ փաշաները եւ Ազմի պէյը Ռուսաստան գրկեցի, կը գրէր»:

Այս հատուածը քաղած ենք Ալի Ծուատի առաջին գիրքէն, «Միլի Միւճատէլէ Հաթրաթը» («Յուշեր Ազգային Շարժումէն», էջ 42):

Աւելի յատկանշական է, որ բուլղերիկները եւս կանուխէն նախաձեռնութիւն ստանձնած են կապուելու պարտուած Թուրքիոյ: «Մոսկուայի Յուշեր» հատորին մէջ (էջ 60) Ալի Ծուատ կը գրէ, «Գաղտնութեան Պալիս եկող ուս երամանատարը՝ խորագրին տակ.

«Ռուսաստանի ճակատադրին տիրացող բուլղերիկները համաձայնականներուն հետ պատերազմական վիճակի մէջ կը գտնուէին զանազան ճակատներու վրայ: Համաշխարհային հանրային կարծիքին ի լուր յայտարարած էին, թէ իրենց սկզբունքն է նիւթական ու բարոյական ամէն օգնութիւն ընծայել Արեւելքի ազգերուն, որոնք կը ձգտին արտապրուել աշխարհակալներու եւ դրամատէրներու լուծէն: Միւս կողմէ՝ Սիպրի քոնկրէն (1 Սեպտ. 1919) քանի մը ամիս ետք, ուս կառավարութիւնը գալտնի Պալիս կը գրկէ Կովկասի բուլղերիկեան բանակներու ընդհ. հրամանատար եւրաշ (բնկեր) Շալուա Իլիասան, քրնելու կապութիւնը: Շալուա Իլիաս Պալիս մեր ազգային կազմակերպութիւններուն միջոցով մեզի հետ շփման մէջ մտաւ եւ տեղեկացուց, որ կատարելապէս պիտի սփռուէին, արագօրէն պիտի սկսին օգնել աշխարհակալութեան զէմ ճակատող Թուրքիոյ՝ իր ազգային պահանջներուն համար»:

Պերլինի մէջ Թայէաթ փաշայի հետ տեղի ունեցած խորհրդակցութիւններէն ետք, էնվեր եւ ձեմալ փաշաները կ'անցնին Մոսկուա եւ գործակցութեան հիմը կը դնեն ուսերուն հետ:

1920 Յունիսին, Սեւրի դաշինքը դեռ չ'հնքուած, Թուրքիա ծանր մտահոգութիւններու ենթակա էր: ձեմալ փաշա հետեւեալ տողերը Մոսկուայէն կը գրէ էնկիւրի՝ Մ. Քեմալին (էջ 49):

«Ռուսերը ձեզի դեսպան մը կը գրկեն: Այս դեսպանը, Իլիաս անուանով, կ'ըսուի թէ պատուաւոր եւ լուրջ մէկն է: Ամէն պարագայի մէջ շատ կ'օգնեն, որ դուք ալ Ռուսաստան դեսպան մը գրկէք: Անոնց կարծիքով՝ անհրաժեշտ է Թուրքիոյ եւ Ռուսաստանի միջեւ զինակցութեան յատուկ դաշինք մը կնքել: Միայն մէկ հարցի լուծումը անհրաժեշտ կը գտնեն: Այդ ալ Հայաստանի սահմաններու խնդիրն է: Ռատեք կ'ըսէ, թէ մինչեւ որ Համաձայնականները ազատին անգլիական ճշուտէն, ամսամալ Հայաստան մը կողմենք: Այս կերպով, Եւ-

րոպայի մեր բարեկամ աշխատանքային կուսակցութիւններուն կողմէ մեծ կարեւորութեամբ հետազոտուած Հայկական Հարցը առայժմ կը լուծուի եւ Աշխատանքային կուսակցութիւնը պատրուակ չ'ունենար մեզի դէմ յարձակելու: Այս մասին եւ խորհրդածութիւններ պիտի չընենք: Միայն թէ համոզուած եմ, որ Ռատեքի արտադրութիւններուն մէջ ընտանեան արժանի քաղաքական հարցեր կան: Ձեր զբոյժը պետական սեփական է այս մասին որոշ եւ կտրուի հրահանգներ ունենայ: Այս հարցը լուծուելէն ետք, որոշերք մինչեւ վերջ ստիպուած մեզի հետ պիտի բլլան: Նայելով Ռատեք կ'ըսէ, — դուք Հայկական Հարցը եթէ լուծելու բլլաք, մեր բնակիչ օդնութեան ուժը եւ կարեւորութիւնը հարիւր անգամ կ'աւելնայ»:

Ճեմալ փաշա որոշերք համամտութեամբ եւ աջակցութեամբ կ'անցնի Աֆղանիստան՝ վերականգնելու համար անոր բանակը: Այս ուղղութեամբ բաւական նիւթ կայ Ալի Տուատի յուշերուն մէջ: Հեղինակը հետազոտելու կը յիշատակի Թալէաթի եւ Ճեմալի սպանութիւնները, առանց մեկնաբանութեան:

Թալէաթի սպանութենէն ետք Էնվեր Պերլին կ'երթայ, բայց շուտով կը վերադառնայ Մոսկուա: «Թալէաթ փաշայի սպանիչին ազատ արձակումէն ետք, հասկցուեցաւ թէ Իքթիսատ Թէրազգի վարիչները միայն Մոսկուայի մէջ կրնային ապաստան գտնել» (էջ 222), կը գրէ Ալի Տուատ:

Էնվեր Մոսկուա գտնուած ատեն, քանի մը հանդիպումներ կ'ունենայ զեսպան Ալի Տուատի հետ եւ երկարօրէն կը լուսարանէ զինք, տարով որոշերք հետ իր գործակցութեան շուրջ ստույգ տեղեկութիւններ:

Էնվեր փաշա հետազոտելու, 1921 Յուլիս 16 թուակիր նամակով մը, ուղղուած Մ. Քեմալին, ներկայացնելով իր կատարած գործերը, կը յիշատակէ որ առաջին անգամ ինք ստացած է որոշերքն ըմբռնելու արտոնելու հազար հրացան եւ այլ զինավորումներ» ու կ'աւելցնէ:

«Յայտնու գտնուած ատեն (1920ի սմարտ) Քեմալի փաշա Եդրոս եւ ձեզի գրած նամակիս մէջ, անոր եւ ձեր այնքան փափաքած ձեռով իմացած էի, որ որոշերքը Հայաստանի մէջ շարժում պիտի չընէին: Մինչդեռ արեւելեան ճակատը եթէ սպասէր, հայերը պիտի զօրանային, եւ միակ միջոցն էր ձեռքի տակ գտնուած ուժերով յարձակում գործել, ինչպէս եղաւ ընդհ. պատերազմի վերջաւորութեան: Այլապէս անոնք յարձակելով մեզ պիտի ճզմէին, բացատրած էի. ԱՅՍՊԻՍՈՎ ՇԱՐԺ»:

ՄԱՆ ԴԵՄ ՍՈՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՁԱՅՆ ՊԻՏԻ ՁՀԱՆԷ, ԻՄԱՅՈՒՑԱՄ ԷՒ ՁԵՁԻ» (էջ 233):

Էնվեր փաշա նոյն նամակին մէջ կը զժգոհի, որ Էնվերի կատարութեան կողմէ Մոսկուա զրկուած պատերազմութիւնը, զետեմարան գտնուած ատեն, որոշերքն կը յայտարարէ, թէ Էնվեր եւ իր ընկերները Թուրքիոյ կողմէ պաշտօնական հանդամանք մը չունին բանակցութիւններ վարելու: «Երբեք պաշտօնական հանդամանքով չեմ աշխատած, եւ զիտնալով, որ Լոնտոնէն ոչինչ ղուրս պիտի դայ, յանձնարարեցի, որ որոշերքն առաւելայոյն օգուտը ապահովէնք: Սալի (փաշա) ի հետ անհատապէս Գարախանի եւ Չիչերիի վրայ ճընշում բանեցնելով երեք նահանգները (Կարս, Արտահան, Օլթի) եւ աւելին՝ Իզմիրի գաւառը մեզի ձգուելուն համար աշխատեցանք, եւ այս ջանքերը պաշտօնապէս երբեք ձեր անունէն չըրինք, այլ կատարեցինք մեր հայրենիքին իրրեւ մէկ անհատը» (էջ 234):

ԱՄԻՆ ՓԱՇԱՅԻ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թալէաթ, Էնվեր եւ Ճեմալ փաշաներուն պէս, Սալի փաշա եւ որոշերքը գործակցութեան նախակարապետներէն է:

Սալի Էնվեր փաշայի հորեղբայրն է, որ Ա. համաշխարհային պատերազմին գտնուեցաւ Իրաքի եւ Կովկասի ճակատներուն վրայ: Նախ պարտուեցաւ զօր Նազարբէգեանէն, իսկ բոլշեւիկեան յեղափոխութենէն ետք, երբ կովկասեան ճակատը քայքայուեցաւ, Սալի փաշայի բանակը զբաւեց Հայաստանը, Սալի այցելութեան զնայ Երեւան՝ զօր Նազարբէգեանին:

Չինազադարին անգլիացիները Պոլսոյ մէջ զինք ձերբակալեցին, լայց յաջողեցաւ բանտէն փախչիլ եւ ապաստանիլ Անատոլու:

Չօր. Ալի Տուատ իր յուշերուն մէջ առանձին տեղ տուած է զործունելութեանը Սալի փաշայի, որուն հանդիպած է Մոսկուայի մէջ ու պատմել տուած է իր ողիսականը:

Սալի, Անատոլու անցնելէ ետք քեմալական շարժման սկիզբը, կը տեսակցի Մ. Քեմալի հետ, որուն զասրնկերը եղած էր: Նախ կը մտածուի Իզմիրի ճակատին ընդհ. հրամանատար նշանակել զինք, ապա անյարմար կը նկատուի. Մ. Քեմալ իրեն կ'ըսէ.

«Քեղմէ կ'ուզենք օգտուիլ արեւելեան ճակատին վրայ: Օրինակ, մեր եւ բոլշեւիկներու միջեւ ճամբան բանալ, այս կերպով յարաբերութիւն հաստատել յետոյ բոլշեւիկներէն զինք, սպառնալով եւ

դրամական օգնութիւն ստանալ: Նախ քան զինադադարը, Կոպկասի մեր բանակներու շարժումներու մէջ զտնուեցաք: Այն ժամանակէն մօտէն կը ճանչնաք բոլշեւիկները: Այդ կողմէն Անատոլոյի համար ձեր կատարելիք օգնութիւնը աւելի թանկարժէք պիտի ըլլայ, քան ուրիշ վայրի մէջ»:

Առանց վարանումի՝ տաջարկուած պարտականութիւնը կ'ընդունի Սալիլ փաշա և այս առթիւ կը յայտնէ այն կարծիքը, թէ բոլշեւիկները զրամատիրութեան դէմ էին, իսկ թուրքերու մեծադոսն թըշնամին անզլիացիներն են, այս պայմաններուն մէջ «բոլշեւիկներուն համար մեզմէ աւելի լաւ դաշնակից կարիքի չէր երեւակայել»:

1919ի վերջերը Սալիլ, «Հարաւային Կոպկասի մէջ կարգ մը դժուարութիւններու հանդիպելէ ետք, կը հասնի Բագու»: Ամենայն հաւանականութեամբ անցած պիտի ըլլայ Նախիջևանէն, ուր մնացած էին թրքական բանակին մնացորդները:

Բագուի մէջ հաստատուած էր Ազրայէջլանի ազգային կառավարութիւնը, բայց Սալիլ դայն տկար կը գտնէ, իսկ բանուորութեան մէջ համայնապարտութիւնը զորաւոր տեղ զրաւած էր: Սալիլի տաշելութիւնն էր Մոսկուա երթալ. ղէպի հիւսիս բարձրանալու ստեն կը հանդիպի Կարմիր բանակի զորամասերուն, որոնց հրամանատարին կը ծանօթացնէ ինքզինք և էրեն տրուած զիւրութիւններուն շնորհիւ կը հասնի Մոսկուա:

Հոն արտաքին գործադար Չիչերինին և իր օգնական Գարսիանին կը ներկայանայ իրրեւ թուրք ազգային բանակի ներկայացուցիչ ու անոնց կը մատուցանէ Մ. Քեմալ փաշայի յարգանքները: Անատոլոյի կացութիւնը մանրամասնօրէն կը ներկայացնէ և կը յայտնէ թուրքերու միտականութիւնը պարտութեան մատնելու յոյներ և անզլիացիներուն ենթարկուած Պոլսոյ կառավարութիւնը: Անատոլոյի մէջ կառուած շարժումը պիտի տարածուէր ամբողջ իրաժմութեան և Ասիոյ մէջ: Կը ջանայ հաստատել, որ զրամատիրութեան ոչնչացար Ասիոյ մէջ պիտի կոտորուի: Կը հասկցնէ, թէ շատով Անատոլոյի մէջ թուրք ազգային կառավարութիւն պիտի կազմուի և անմիջապէս բոլշեւիկներու հետ բարեկամական գաշինք պիտի կնքուի:

Չիչերին և Գարսիան կը պատասխանեն, թէ պիտի օգնեն թուրքերի, բայց պիտի քննեն նախ հարցրողակցութեանց ձաճբանները: Սալիլ կը պնդէ, որ առանց ժամանակ կորսնցնելու, միշտեւ կողմերու միջև յարաբերութեանց հաստատումը, ծովի ու ցամաքի վրայ արամադրելի միջոցներով ղէնք, ռազմաժողովրդ և զրամ զրկել անհրաժեշտ է:

Այլ Ծուարի այն հարցումին, թէ ի՞նչ օգնութիւններ կրցաւ սպասովել, Սալիլ փաշա կը պատասխանէ.

— «Քանակը այժմ չեմ յիշեր. ծալի նախնայ զէնք, ռազմաւորքերի զրկեցի և անձամբ հարիւր հազար ոսկեղրամ այժմէնով ձոյլ ոսկի յանձնեցի Գարաբէտէ գտնուող զօրաբաժնի հրամանատար Ճաւիտ պէյիմ» (էջ 137):

Սալիլ փաշա կը մնայ Ռուսաստան և հոն եւս կը զստնայ սերտ գործակիցը Էնվերի:

Յիշատակենք Սալիլ փաշայի տուած շնական բացատրութիւնը հայկական ջարդերու մասին, երբ Պոլիս անդրիացի սպայի մը կողմէ հարցաքննութեան կը կանչուէր:

Սալիլ իր պաշտպանողականին մէջ կ'ըսէ.

— «Մեր կնքած համաձայնութեան հակառակ, հայերը ըմբոստացան բանակին կողմէ շրջանակին մէջ, մտանդեցին թիկունքի մեր սպասարկութիւնները և առաջին դիժէն ալ ուղեցին անցնիլ: Առանց հետեւանքով հրամայեցի, որ բնաջնջեն բանակի շրջանակին մէջ գտնուած հայկական զինեալ չէթէները, իսկ հայերը տեղահանուին ղէպի հեռուէր շրջաններ: Չէթէներու բնաջնջումին և տեղահանութեան ատենները շատեր մահացան: Առանց թիւր երեք հարիւր հազարէն պակաս թէ աւելի եղաւ, չկրցայ ճշդել»:

Սալիլ փաշա նոյն շնական ձեւով կը բացատրէ Պաղատաի ճակատին վրայ իր կատարած հայաձանքներն ու ջարդերը խաղաղ բնակչութեան նկատմամբ:

ՊԵՔԻՐ ՍԱՄԻԻ ՊԱՏՈՒԻՐԱՎՈՒԹԻՒՆԸ

Թալէաթ, Էնվեր, Ճեմալ և Սալիլ փաշաներուն Մոսկուայի մէջ կատարած նախապատրաստական աշխատանքներէն ետք, արդէն Անգարայի մէջ որոշ ձեւ ստացած էր թուրք նոր էշխանութիւնը: Անգարան անհրաժեշտ ու ստիպողական նկատեց մասնաւոր պատուիրակութիւն մը զրկել Մոսկուա, ռուսերուն հետ պաշտօնապէս համաձայնութիւն մը կնքելու համար:

Ար պատասխանատու առաքելութեան նախադաս նշանակուեցաւ արտաքին գործադար Պեքիր Սամի պէյ, իսկ անդամ՝ Եուսուֆ Քեմալ պէյ, միբալայ տոքթ. Իպրահիմ Թալի, Լալիստանի երեսփոխան Օսման, սպայակոյտի զինուորականներէն Ալյֆի:

Պեքիր Սամի սահմանադրութեան շրջանին Տրապիզոնի կուսակալ եղած էր: Անոր պատուիրակութիւնը չկրցաւ անցնիլ Հայաստանէն կամ Վրաստանէն, որոնց հետ յարաբերութիւններ հաստատուած

չին: Պատուիրակութիւնը ծովի ճամբով Տրապիզոնէն կ'երթայ Թուրքիա. երկաթուղիի հաղորդակցութիւնները կանոնաւորուած չեն, եւ 69 օրէն միայն կը հասնին Մոսկուա:

Արտաքին գործավար Զիչերին Պեքիր Սամիի պատուիրակութիւնը կ'ընդունի 1920 Յուլիս 24ին: Տեսակցութեան ներկայ կը գտնուի նաեւ արտաքին փոխ գործավար հայազգի Գարախան: Զիչերին կը յայտնէ, որ հիմնական խնդիրներու շուրջ արդէն հասկացողութեան եկած էին ձեւով եւ Պալիլ փաշաներուն հետ, կը մնար ճշդէլ մանրամասնութիւնները: Պեքիր Սամի կը փութայ պատասխանել, թէ ձեւով եւ Պալիլ թուրք Ազգ. Ժողովին կողմէ պաշտօնական հանգամանք ըստացած չին եւ անձնական հանգամանքով նախաձեռնութիւն ստանձնած էին:

Այս տեսակցութենէն անմիջապէս ետք Պեքիր Սամի կը հեռագրէ Անգարա, թէ թուրք պատուիրակութիւնը ջերմ ընդունելութեան արժանացած է եւ բոլշեւիկները խոստացած են անպիտաններուն հետ կնքելիք հաւանական համաձայնութեան ընթացքին նկատի ունենալ նաեւ Թուրքիոյ տեսակէտը:

Յայտնենք որ այս ամիսներուն, Հայաստանի Հանրապետութեան կողմէ Լեւոն Շանթի պատուիրակութիւնը եւս կը գտնուէր Մոսկուա: Հայ պատուիրակութեան ձախողութիւնը, կասկած չկայ, արդիւնք էր ամենէն առաջ բոլշեւիկներու որդեգրած արեւելեան քաղաքականութեան, որուն առանցքը կը կազմէին Թուրքերը:

Պեքիր Սամիի պատուիրակութիւնը նոյն գիշերը երկրորդ տեսակցութիւնը կ'ունենայ Գարախանի հետ առանձին: Այլ փուտ այս մասին կը գրէ.

— «Մերինները շեշտած են հայկական ցամաքի քանալու անհրաժեշտութիւնը, որպէսզի մեզի անհրաժեշտ գէնք եւ պիտոյք արագօրէն Անատոլու փոխադրուին: Իսկ Գարախան, Լեհաստանի կարեւորութիւնը վեր առնելով, դժուար պիտի ըլլայ, կ'ըսէ, հոնկէ ուժեր քաշել եւ ճամբան բանալ: Առանց պատճառի Հայաստանի վրայ յարձակում մը յոռի տպաւորութիւն պիտի ձգէ արեւմտեան ու ամերիկեան պետութիւններուն վրայ: Հայաստան զրկուած պատուիրակութիւնը, հայ կառավարութեան ընդդիմութեան պատճառով, չէ կրցած սահմանը անցնել: Քաղաքական ձեռնարկներու սկսուած ըլլալով, այս մէկ երկու շաբթուան ընթացքին կը յուսայ, որ ճամբան պիտի բացուի» (էջ 63):

Պեքիր Սամի կը պատասխանէ. «Մեր ներկայ կացութիւնը թոյլ չի տար նոյնիսկ երկու շաբաթ սպասել»:

Գարախան նոր հաւաստիքներ կուտայ, թէ «25 փութ (հազար քիլոկրամ) ոսկի. չարակամ թնդաւորով երկու մարտկոց, վեց հազար հրացան, հարիւր զնդացիք եւ առատ ռազմամթերք պատրաստ են ու պիտի դրուին հալիլ փաշայի եւ Էնկիւրիի դեսպանատան քարտուղարին հետ, որոնք պիտի ընկերացան Հայաստան գացող պատուիրակութեան: ՀՐԱՄԱՆ ՏՈՒԱՄ ԵՆՔ, ՈՐՊԵՍՁԻ Ի ՆՊԱՍՏ ԱԶՐՊԵՅՁԱՆԻ ԳՐԱԽՈՒԻՆ ՂԱՐԱՐԱՂԻ, ՆԱԽԻՋԵԻՄԻ, ԱԼԱԿԷՕՁԻ ԵՒ ՋԱՆԳԵՁՈՒՐԻ ՇՐՋԱՆՆԵՐԸ: Մինչեւ որ Լեհաստանէն նոր ուժեր գան, աւելի քան դարձակ շարժումներ կարելի չէ եւ եթէ Հայաստան յարձակի Օլթիի վրայ, որուն երեսփոխանը Ազգ. Ժողովին անդամ է, պատճառ պիտի դառնայ, որ սովետական կառավարութիւնը խիստ քաղաքականութիւն մը որդեգրէ: Տեսակցութիւնը այս ձեւով վերջացաւ» (էջ 63):

Որոշապէս կը սարգուի Գարախանի խօսքերէն, որ իրենք հրաման տուած են, որպէսզի Ղարաբաղ, Նախիջևան, Չանգեզուր զբաւուին ի նպաստ Ազգայնականի: Իսկ Օլթիի վրայ հայերու կողմէ յարձակում մը պատրուակ պիտի ծառայէր «խիստ քաղաքականութեան»:

Պեքիր Սամիի պատուիրակութիւնը 4 Օգոստ. 1920ին կ'ունենայ երկրորդ տեսակցութիւն մը Գարախանի հետ, որուն առաջին խօսքը կ'ըլլայ (իր ձեռքը բռնած հեռագրին նախելով) յայտնել, թէ հայերու աննշան զիմարութենէն ետք սովետական բանակը մտած է Նախիջևանի նահանգը եւ այդ կողմերը գտնուած Թուրք զորամասերուն հետ կապ հաստատած է: Նոյն ատեն Գարախան կ'աւելցնէ.

— «Տեղեկացանք, թէ Անգարայի կառավարութիւնը, Հայաստանի յուշագիր մը տալով, պահանջած է որ հայ զինուորները քաշուին Պրեսթ-Լիթովսկի դաշնազրոյ ճշդուած սահմանները: Չանգեզուր պատճառներով յարմար չենք գտներ, որ Թուրքիա առանձին եւ կամ Ս. Միութեան հետ միասնաբար հայերուն պահանջներ ներկայացնէ: Նախկին Ռուսպետանի մաս կազմող Հայաստանի հետ խնդիրը մենք կը կարողանանք: Պատերազմ չուզելով հանդերձ, Հայաստանի դէմ պատրաստութիւններ կը տեսնենք: Հայաստանի դէմ պատերազմի պատճառներ գտնել մեզի կը վերաբերի. ասոր համար ալ մենք ձեռքի տակ փաստեր ունինք: Ասոնք ձեռք մը վերածելով պիտի յայտարարենք, օրինակ, թէ Թուրքիա զրկած մեր 25 փութ ոսկին հայերը զրուած են: Հայաստանի կառավարութեան վերջնագիր մը տուինք, որպէսզի 48 ժամուան մէջ վերագարձնէ այդ ոսկին: Հայաստանի կառավարութիւնը եւս կանչած է Մոսկուայի հայկ. պատուիրակութիւնը (Շանթի պատուիրակութեան մասին է խօսքը. Գ. Լ.): Անհրաժեշտ կարեւորութեամբ կը ղնահատեն»:

Թուրքիայ զգնութեան կարիքը: Լաւ գիտցէք, որ մինչեւ այս ամսուան

վերջը համբաճ պիտի բացուի: Խնդիրը գաղտնի պէտք է մնայ, մինչև ձեր կառավարութեան յայտնեցէք: Կը պահանջէք Պրեսթ Լիթովսկի սահմանները: Ճիշդ չէ ամէն բան կապել ներկայիս ի զօրու չեղող դաշնագրի մը: Փամանակ անցաւ եւ շատ բաներ փոխուեցան: Այսուհանդերձ, այդ դաշնագիրը պիտի քննենք»:

Անկէ ետք Գարախան թուրքերուն կ'ընէ հաճելի առաջարկ մը. «Քաղուի մէջ եօթանասուն անգլիացի զերիններ կան, որոնցմէ մէկը անուանի անձնատուութիւն մըն է: Անգլիական կառավարութիւնը մեզմէ պահանջեց այդ զերինները: Պատասխանեցինք, թէ Ալլրպէյջան անկախ պետութիւն մըն է, ուստի այդ խնդիրը անոր հետ լուծելու է: Այս դիմումէն օգտուելով՝ մասնագիտիկ զերինները փոխանակել Մալթա բանտարկուած թուրքերուն հետ: Ալլրպէյջանի կառավարութիւնն այստեղ համաձայն է: Մեզի ցուցակ մը տուէք, միայն թէ Ալլրպէյջանի կառավարութիւնը դժուար վիճակի մը չմտնենք: Յարմար է որ Մ. Քեմալի յեղափոխութեան հետ առնչութիւն ունեցող զերինները պահանջենք»:

Ծանօթ է, որ ի վերջոյ այստեղ արձակուեցան Մալթայի բոլոր թուրք բանտարկեալները, որոնց մեծ մասը նախկին նախարարներ, պետական բարձր պաշտօնատարներ, մտաւորականներ, հրամանատարներ, Իթթիհատի նախկին վարիչ ղեմքեր, պատերազմի եւ հայկական ջարդերու յանցապորձներ էին: Այս մարդիկը զացին զօրացնել քեմալական պետութիւնն ու բանակը, որպէսզի թուրք բանակը զիբուրթեմը յառաջանայ ղէպի Հայաստան, Կիլիկիա, Իզմիր եւ ի վերջոյ զբաւ Պոլիսը:

Ճակատագրի ի՞նչ հեղանակք. այս վատութիւնը զործուեցաւ հայու մը՝ Գարախանի մեղսակցութեամբ:

Պէտք չէ մոռնալ, որ Պեքիր Սամիի պատուիրակութիւնը Մոսկուա կը գտնուէր 1920ի ամառը, երբ կնքուելու վրայ էր Սեւրի դաշնագիրը եւ երբ թուրքիա կ'ապրէր իր ամենէն տաղանապայի օրերը: Թուսաստան եւս քայքայուած էր եւ կը պարտուէր Լեհաստանի ու Վրաստանի բանակներուն կողմէ:

Այս ծանր վիճակը նկատի առնելով, արտաքին զործավար Զիչերին երբ Օգոստոս 13ին (1920) կրկին կ'ընդունի Պեքիր Սամի պէյի պատուիրակութիւնը, թուրքերուն համար խիստ անախորժ ստաջարկ մը կ'ընէ: Գոնէ այսպէս կը պատմէ զօր Այի Ֆուատ: Նախապէս Սովետները միշտ ձգձգած էին բանակցութիւնները, խուսափողական պատասխաններ տուած էին կնքուելու դաշինքի մասին: Իսկ այս անգամ Զիչերին առաջարկեւ է. «Նախկին հայկական նահանգներէն՝ Պիթիսէն, Վանէն եւ Մուշէն մաս մը տալ Հայաստանի, որ հանդիստ չունի:

Չի կրնար քաշել: Նոյնիսկ բնակիչներու փոխանակութեան շուրջ խորհրդակցութիւն կատարուած է: Այս ամէնը Անատոլուի կառավարութեան բացատրելու համար Խալիլ փաշա մեկնած է Անատոլու եւ պատուիրակութեան կողմէ համայնապար զրականութիւն Անատուի մէջ տարածելու մասին խոստացած է ստանալ Ազգ. ժողովի հաւանութիւնը» (էջ 70):

Զիչերինի այս անսպասելի խօսքերուն ի լուր՝ թուրք պատուիրակութիւնը կը յայտնէ, թէ «Թուրքիոյ մէջ ոչ մէկ առեւ հայկական նահանգ գոյութիւն ունեցած է»:

Այի Ֆուատ իր յաշերուն մէջ կը գրէ, որ ռուսերուն նպատակըն էր իրենց կատարելիք օղնութեան փոխարէն մեր հողերու հաշուին սակարկութիւններ ընել ի նպաստ Հայաստանի, զոր հետագային կու պիտի տային:

Օր մը ետք, պատուիրակութիւնը կ'ընդունուի Լենինի կողմէ: Փոխազարձ բարեկամութեան եւ զործակցութեան սիրալիր խօսքերէ ետք, թուրքերը կը զժգոհին, որ «Հայաստանի համբաւն զեռ չբացուեցաւ», հակառակ տրուած խոստումներուն, միւս կողմէ «մեր միջեւ հազարակցութիւն հաստատող միակ ճամբան՝ Նախիջևան-Շահթախտ երկաթուղիին սովետական կառավարութեան կողմէ Հայաստանին տրուելը զարմանք եւ ցաւ պատճառած է մեզի», կ'աւելցնեն թուրք պատուիրակները:

Լենին անմիջապէս կ'ընէ. «Այո՛, ասոր մէջ անիրաւութիւն մը, սխալ մը եղաւ: Այսուհանդերձ խնդիրը կը քննուի, Էրեք շորս օրէն կը յուսամ, որ նպաստաւոր կարգադրութիւն մը պիտի ըլլայ»:(*)

Պեքիր Սամի իր տեսակցութեան արդիւնքը Անգարա հաղորդելու առեւ սա պարբերութիւնը կը գործածէ. «Լենինը գտանք խիստ սիրալիր եւ սրտաբաց անձնատուութիւն մը: Մեզի եւ իսլամութեան նրատուտի բարեացակամ է»:

Ինչ կայ տեղին: Ուրիշ պաշտօնակա՞ն զրուցեալն մը մէջ զարձակ Պեքիր Սամի կը գրէ. «Մինչեւ որ բուլղերիկները անվտանգ չգարձրեն Վրաստանը, չեն ուզեր Հայաստանի եւ Վրաստանի խնդիր մը բու-

(*) 1920 Օգոստ. 10ին Թիֆլիսի մէջ սովետ. ներկայացուցիչ Լեքրանի և Հ. Համբարկուտութեան պատուիրակներ Է. Ջամալեանի և Ա. Բարալեանի միջև կնքուեցաւ համաձայնութիւն մը, բայց որո՞ւ Հայաստանի զորքերը զբաւելաւ էին Շահթախտ - Ոսկ - Աղնարեք - Սովթանաբէկ գիծը. Շահթախտ - Ջուլֆա երկաթուղին պիտի սպառազօրծուէր Հայաստանի երկաթուղային վարչութեան կողմէ:

Անո՞ւ այս համաձայնութեան շուրջ է թուրքերու բողոքը եւ Լենինի խոստումը գոյն ձնելու մասին: Արգարեւ, Մոսկուա շխտեցուցուց այդ համաձայնութիւնը:

տեղծել. Ի նպաստ Հայաստանի Գարախանի խաղացած դերը յստակ ըր լալով հանդերձ, հաւատացած եմ, որ կառավարութիւնը եւ Համայնա- վար կուսակցութիւնը կ'ուզեն հարուածել դաշնակ Հայաստանի կառա- վարութիւնը: Գիտնալով հանդերձ, որ Անատոլոյի վիճակը թոյլատու չ' սպասելու, դեռ մեր յոյսը կտրելու կացութեան մէջ չենք» (էջ 75):

2 Սեպտ. 1920 Թուակիր ընդարձակ դրութեամբ մը Ազգ. Մեծ Ժողովը կը յայտնէ իր մտավարութիւնը բանակցութիւններու ձգձու- մի հետեւանքներուն մասին եւ չորս յանձնարարութիւններ կ'ընէ. եր- րորդ կէտին մէջ կ'ըսէ.

«Ազրպէյջանի հետ կապ հաստատելու եւ Հայաստանի համար կատարուած իրողութիւն մը ստեղծելու պարագան պէտք չէ կապել Մոսկուայի հաւանութեան. պէտք է օգտուիլ ներկայացոյ առաջին առիթէն» (էջ 78):

Ի վերջոյ ոուսեւթուրք բանակցութիւնները արդիւնքի կը հաս- նին եւ երկու կողմէն պատուիրակները 24 Օգոստ. 1920ին կը ստորագրեն եօթը կէտերէ բաղկացած համաձայնութիւն մը (տես յաջորդ գլուխը): Պատուիրակներէն Եռուսեփ Քեմալ պէյ, իր հետ ունենալով համաձայ- նագիրը եւ Պեքիր Սամիի կարեւոր տեղեկագիրը, կը մեկնի Մոսկուա- յէն եւ 16 օրուան ճամբորդութենէ մը ետք կը հասնի Տրապիզոն, իսկ 16 Սեպտ.ին մանրամասնութիւնները կը հեռագրէ Անգարա:

Համաձայնագրի Գ. կէտով կողմերը յանձնառու կ'ըլլան ամէն միջոցի դիմել երկաթուղային կապ հաստատելու համար...

Այլեւս Զիչերին չի կրկնէր Վանէն եւ Պիթլիսէն Հայաստանին հողեր տալու յանձնարարութիւնը, որ այնքան խրտչեցուցած էր թուր- քերը: Ալի Ֆուատ այդ մասին երկար էջեր տրամադրած է իր յուշե- րուն մէջ, այսօրուան նոր պայմաններուն տուրք տալու եւ հաստատելու համար, թէ ոուսերը միշտ թշնամական տրամադրութիւններ ունեցած են եղեր թուրքիոյ նկատմամբ...

Նոյն Զիչերինը «համաձայն գտնուեցաւ Սարըզամիշի եւ Շահ- քախքի (Նախիջեւան) գրաւումին, քուրքերու կողմէ» (էջ 83):

Կարելի է ենթադրել, որ թուրքերը ստրատիգեցնելու եւ քա- ղաքականապէս իրենց ենթարկելու համար, ոուսերը Վանի, Պիթլիսի հողերը կը յիշեցնէին սնունդ, աղա իրրեւ թուրքերու աղատարարը ներ- կայանալու համար: Եւ դէպքերը այդ ուղղութեամբ ալ ընթացան:

Ռուսերը զէնքի, ռազմամթերքի, օսկիի նոր եւ մեծ առաքում- ներ կը կատարեն: Իսկ ստորագրուած նախնական համաձայնութիւնը արդէն բաւական էր, որ թուրքերը անցնէին յարձակումի՝ Հայաստա- նի դէմ:

Թուականներու պարզ զուգադիպութիւն մը չէ, որ 1920 Սեպտ. 18ին Եռուսեփ Քեմալ կնքուած համաձայնութեան բովանդակութիւնը Տրապիզոնէն կը հեռագրէ Անգարա. իսկ Սեպտ. 23ին, առանց պաշ- տոնապէս պատերազմ յայտարարելու, թրքական բանակը ընդհանուր յարձակողականի կ'անցնի Հայաստանի դէմ: Միւս կողմէն Կարմիր բա- նակը կը հարուածէ մեր հայրենիքը՝ Իջևանի (Դիլիճան) եւ Նախիջե- ւանի նախառններէն...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱՅ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ՊԱՏՐԱՍՏՈՎ ՌՈՒՍԵՒԹՈՒՐՔԻ ԴԱՇՆԱԳԻՐ

Մոսկուայի մէջ ոուսեւթուրք պատուիրակներու միջեւ կա- տարուած բանակցութիւններու հետեւանքով 1920 Յոսոստոս 24ին ստո- րագրուեցաւ դաշնագրի նախագիծ մը, որու հիման վրայ՝ ճիշտ ամիս մը ետք, Սեպտ. 23ին, սկսաւ թրքական բանակի արշաւանքը Հայաս- տանի վրայ: Ահա այդ դաշնագիրը, որ առաջին անգամ ըլլալով հրա- տարակուեցաւ Մոսկուայի թուրք ղեկավար ղոր. Ալի Ֆուատի յուշերուն մէջ (էջ 80):

30Գ. 1.— Ստորագրող կողմերը սկզբունքով կ'ընդունին չը- փանցնալ խաղաղութեան որեւէ դաշնագիր կամ պետական որեւէ յանձ- նագիր՝ որ բոնօրէն պարտադրուած է միւս կողմէն. Ռուսիոյ Հանրապե- տութիւնը կ'ընդունի բացարձակապէս չփանցնալ պետական որեւէ հա- մաձայնագիր որ կը վերաբերի Թուրքիոյ եւ որ վաւերացուած չէ թուրք ազգային կառավարութեան ներկայացուցիչ Ազգ. Մեծ Ժողովին կողմէ:

30Գ. 2.— Ստորագրող կողմերը կը հաստատեն, թէ երկու եր- կիրներու միջեւ ցարդ ստորագրուած բոլոր դաշնագիրները չեն համա- պատասխաներ իրենց ազգային իսկական շահերուն եւ, հետեւաբար, կ'որոշեն զանոնք միանուագ եւ բոլորովին չեղեալ նկատել:

30Գ. 3.— Ապահովելու համար երկու երկիրներու յարաբերու- քեանց անարգելի եւ անընդմէջ շարունակութիւնը բոլոր պարագաներու մէջ, ստորագրող կողմերը կ'երաշխաւորեն անհրաժեշտ բոլոր միջոցնե- րէր ձեռք առնել, կարելի եղածին չափ շուտ եւ ամէն կարգի արգելէ գերծ անձերու կամ այլրանքի տեղափոխութիւնը ապահովելու համար:

30Գ. 4.— Ստորագրող կողմերէն մէկուն հպատակները՝ ստո- րագրող միւս կողմի հողերուն մէջ, տեղական օրէնքներով ընդունուած բոլոր իրաւունքներէն պիտի օգտուի եւ նոյն օրէնքներով նախատես-

ուած քոլոր պարտականութիւնները կատարելու յանձնառու պիտի ըլլան: Բացառութիւն կը կազմեն միայն ազգային պաշտպանութեան վերաբերեալ տրամադրութիւնները:

Երկու կողմերու հպատակներուն ընտանեկան եւ ժառանգակոմ խնդիրները եւս այս յօդուածի տրամադրութեանէն զերծ են: Այս խընդիրներուն լուծման մասին առանձին համաձայնութիւն մը պիտի մըշակուի հետագային:

ՅՕԳ. 5.— Ստորագրող կողմերը համաձայն են, որ փոխադարձաբար իրենց հողերուն վրայ բնակող հպատակներուն հանդէպ ստաւելագոյն թոյլատուութիւններ եւ դիւրութիւններ ցոյց տան:

ՅՕԳ. 6.— Ստորագրող կողմերը համաձայնաբար կ'ընդունին, քոլոր ազգերու առեւտրական նաւերուն նեղուցներէն ազատ անցքի իրաւունք տալու նպատակով ճշդել նեղուցներու եւ Սեւ ծովու յատուկ միջազգային օրէնքները, պայմանաւ որ այդ օրէնքներու տրամադրութիւնները որեւէ կերպով չվնասեն Թուրքիոյ ամբողջական վեհապետութեան եւ մայրաքաղաք Կ. Պոլսոյ պաշտպանութեան: Այս օրէնքներու մշակումը պիտի վստահուի շահագրգռուած պետութեանց ներկայացուցիչներու մասնակցութեամբ յառաջիկային գումարուելիք խորհրդաժողովի մը:

ՅՕԳ. 7.— Այս համաձայնագրի վաւերացումէն ետք, պիտի ձեռնարկուի հիւպատոսական եւ դեսպանական յարաբերութեանց հաստատումին, առ այդ կնքելով նաեւ նոր համաձայնագիր մը:

* * *

Նուրի փաշայի կազմած «Իսլամական բանակ»ի վարիչ ղէմքերէն Նայիմ ձեւատ, 1926ին էնկիւրիի իթթիհատականներու դատավարութեան ընթացքին, յայտարարեց.

«Գարապեֆի փաշա՝ հայիլի փաշայի, Նարիման Նարիմանովի եւ բոլշեւիկեան բանակի հրամանատարութեան ուղղեալ երեք նամակներ գրած էր: Այդ նամակով բոլշեւիկներուն հետ գործակցութեան անհրաժեշտութիւնը կը ջատագովէր. հայիլի փաշայի կողմէ կատարուած ծառայութիւններուն համար անոր շնորհակալութիւն կը յայտնէր: Ասկէ գատ քնդանօթի, գէնֆի եւ ուզմամբելի փոխադրութեան առնօգտագործելու նպատակով Ազրպէյջանի մէջէն նամբայ բանալու անհրաժեշտութիւնը պարզող երեք նամակներ ստացայ Գարապեֆի փաշայէն: Այս երեք նամակներն ալ իրենց հասցէներուն յանձնեցի:

«Ապահովեցի, որ Օգոստոսին թրքական եւ բոլշեւիկեան բանակները իրարու միանան, յետոյ, իմ ստացած հրահանգներու հա-

մաձայն, հայիլի փաշայի հետ աշխատեցայ. որ երկաթուղիով ալ ապահովուի երկու բանակներու միացումը եւ Հայաստան չկարեւայ ասոր ընդդիմանալ: Եւ այս նպատակով Մոսկուա գացինք: Էնվեր փաշա արդէն հան կը գտնուէր»: («Յուսարեք», 25 Սեպտ. 1926):

Ահա ուրիշ վկայութիւն մը եւս բոլշեւիկներէն ստացուած 500 հազար ոսկեդրամի մասին: Էժմէր ձէմիլ Թարսի «Ազըն» թերթին մէջ («Մարմար» 27 Սեպտ. 1952) կը պատմէ նշանաւոր իթթիհատական Տոքթ. Բիգա Նուրի գործունէութիւնը.

Տոքթ. Բիգա Նուր, այդ մեծ ազգասէրը, հետեւեալը պատմեց ինծի 1940-1942 տարիներուն. — Անկախութեան պատերազմին, մեր բանակը երկար առեւէ ի վեր չէր պատերազմօր, բայց պատերազմական վիճակի մէջ էր: Փափաքելի էր գայն շարժման մէջ գնել, բաներ մը ընել եւ այս կերպով «փերիշան»ութենէ փրկել: Ի՞նչ ընենք, պահանջուած ռազմ. պիտոյէր չունէինք սակայն: Այս կացութեան մէջ, Թաֆատի երեսփոխան եւ նախկին առեւտրական գործավար Պէֆի Սամի եւ Սինոպի երեսփոխան Եուսուֆ Քեմալ Մոսկուա գրկուեցան: Անոնք ձեռնունայն վերադարձան:

Այս ձայնոցանքէն ետք, յարմար նկատուեցաւ որ ես երթամ Եուսուֆ Քեմալի (Թէնկիրէֆ) հետ: Միասին Մոսկուա գացինք, ներկայացանք արտաքին գործավար Չիչէրինի, մեր պետերը պարզեցինք իրեն: Մեզ լսեց եւ ըսաւ վերջապէս.

— ՆԱԽ ԵՒ ԱՌԱՋ ՎԱՆՎ ՀԱՅՏՐՈՒՆ ՏՈՒՆՔ, ԱՆԿԷ ՎԵՐՋ ԵԿԷՔ ՈՐ ԽՕՄԻՆՔ:

Այսպիսի բան մը անկարելի էր մեզի համար: Եուսուֆ Քեմալ պէլի առաջարկեցի երթալ Սթալինի, որ այն առեւ բոլշեւիկ կուսակցութեան ընդհ. քարտուղարն էր: Համամիտ գտնուեցաւ ինծի եւ տեսակցելու համար ժամադրութիւն ուղեցինք: Քանի մը օր վերջ հաստատական պատասխան առինք:

Մեզ վայրկեաններով ոլորապտոյտ եւ մամուածապատ նամբաներ էլ թաղերէ տարին: Վերջապէս մտանք սենեակ մը. ուր մէջտեղը սեղան մը կար, փայտէ աթոռ մը, եւ ընկեր Սթալին որ նստած էր շապիկով:

Սթալին մեզի հարցուց թէ ինչու եկած ենք եւ ինչ կ'ուզենք: Ինքն ալ հասկցուցինք խնդիրը: Շատ լաւ, ըսաւ, մեր ալ ներկայատակը նային է, օգնենք ձեզի, միայն թէ գիտնանք, սրբա՞ն կ'ուզէք: Եւ ներկայ եղած էի զանազան դաշնագիրներու կնքումին, եւ միշտ ալ բարձր բուանշաններ կը պահանջէի:

— Տասը միլիոն ոսկեդրամ, ըսի:

— Ոչ, այդքան չէ:

— Հինգ միլիոն: = Աչ:

— Երեք միլիոն:

— Մէկ միլիոն ոսկի քոչ տաճն ձեզի:

Նլանք Սթալինի քովէն եւ գացինք Չիչէրինի մօտ: Իրեն հազորդեցինք Սթալինի խօսքերը:

Ան նորէն պահանջեց որ վանը հայերուն տանք եւ այնպէս ներկայանանք իրեն:

Ի՞նչ պիտի ընէինք: Եթէ նորէն ձեռնուճայն վերադառնայինք, շատ տխուր պիտի ըլլար մեր վիճակը:

Եւսուփ Քէմալ պէյի առաջարկեցի որ նորէն տեսակցուիմք մը ուզենք ընկեր Սթալինէ: Եւսուփ Քէմալ հաւանութիւն չյայտնեց եւ վախցաւ:

Ես մտիկ չըրի եւ լուր դրկեցի Սթալինի: Հինգ վեց օր ետք հրաւեր ստացանք:

Մեր այս երկրորդ այցելութեան առթիւ, նորէն մեզ առաջնորդեցին դարձողարձիկ եւ ոլորապտոյտ նամբաներէ, փողոցներէ...

Վերջապէս տարին Սթալինի մօտ: Ան նորէն նոյն տեղն էր սեղանին գլուխը. փայտէ արտի մը վրայ նստած:

Կտրուկ բառերով մեզի հարցուց թէ ինչ եղաւ:

Ըսինք թէ Չիչէրին կը պահանջէր նախ եւ առաջ վանը Հայկուն տալ եւ կը մերժէր դրամ վճարել:

Սթալին հեռաձայնը բացաւ եւ ուսերէն խիստ լեզուով բաներ մը ըսաւ Չիչէրինի: Մեզի ալ ըսաւ. — Գացէք առէք դրամը:

Նորէն ներկայացանք արտաքին կամիսար Չիչէրինի: Մէկ միլիոն ոսկեդրամին կէսը, այսինքն 500 հազար ոսկին, մեզի ընկերացող խազախ ձիարարներու հետ մինչեւ սահման բերինք, հոն յանձնեցինք Քեազըմ Գարապէտի փաշայի ուժերուն, որոնք այդ դրամը Անգարա տարին:

Այդ գումարով բանակին պակասները լրացան, եւ անկէ վերջ յարձակումի ձեռնարկեցինք:

Յետագային 400 հազար ոսկի եւ թուրքիա դրուեցաւ, մնացեալ 160 հազար ոսկին մնաց Մուսկուայի քուրթ դեսպանատունը եւ շնորհ գիտեր թէ ինչ վախճան ունեցաւ:

Այն ատենուան մեր դեսպանն էր Ալի Փուատ փաշա (Ճէպէտս):

Այս բոլոր վաւերագրներէն Լոթ, մեր մէջ դեռ կան դատարկամիտ մարդիկ, որոնք չեն ուզեր հասկնալ, թէ թուրքերուն համար

ձայնութեան հետեւանքով մեր հայրենիքը ենթարկուեցաւ յարձակումի եւ աղէտներու:

ԼՂԿՐԱՆԻ ՍՏՈՐԱԳՐԱՆՆԵՐ, ԲԱՅՑ ԶԳՈՐԾԱԴՐԱՆՆԵՐ Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր Ը

Թարական ճակատի վրայ յառաջխաղացումները, իսկ արեւմտաքէն ու հարաւէն կարմիր բանակի գործողութիւնները Չանգեզուրէն դէպի Նախիջեան, պատճառ եղան որ Հայաստանի կառավարութիւնը 1920 շոկտ. 21ին, փրկելու համար հայրենիքը մեծ աղէտէ մը, ստորադրէ ն. Միութեան արտակարգ լիազօր Լըզրանի հետ հետեւեալ համաձայնագիրը (*):

ՅՕԴ. 1.— Հայաստանի Հանրապետութեան կը ձգուի ամբողջ երեսանի նահանգը, Կարսի նահանգը, Չանգեզուրի գաւառը, Ղարաբաղն ու Լոռին:

ՅՕԴ. 2.— Թրքական զինուորները կը պարպեն ամբողջ Ռուսական Հայաստանը մինչեւ 1914 թուականի սահմանները:

ՅՕԴ. 3.— 1914ի սահմաններէն մինչեւ Տրապիզոն, Կարին եւ Մուշ եղած տարածութիւնէն թրքական զինուորները կը հեռանան եւ կը մնայ միայն թրքական վարչութիւն:

ՅՕԴ. 4.— Վերայիշեալ բոլոր կէտերուն իրականացումէն ետք՝ նոր միայն պիտի սկսին բանակցութիւնները Հայաստանի ու Էնկիլիսի միջեւ՝ սահմաններու վերջնական ճշդորոշման համար — Ռուսաստանի աջակցութեամբ եւ օժանդակութեամբ:

ՅՕԴ. 5.— Ռուսաստան Հայաստանին կուտայ նափթ եւ այլ անհրաժեշտ պիտոյքներ:

ՅՕԴ. 6.— Ռուսաստան կը զիջի Հայաստանին իր ֆալգմէնտուն մէջ գտնուած հայկական մշակութային հիմնարկութիւններէն մէկ ֆունկն, իրենց ամբողջ ունեցածներով ու հարստութեամբ միասին, ինչպէս՝ (Մոսկուայի Լազարեան ձեռնարանը, զրադարանները եւ այլն):

ՅՕԴ. 7.— Այս բոլորին փոխարէն Հայաստան կուտայ խորհրդ. Ռուսաստանին քրանզիտի իրաւունք՝ զէնք եւ ռազմամթերք փոխադրելու դէպի թուրքիա, Տրապիզոն-Կարին-Մուշ գիծէն ներս, պայմանով, որ նախ՝ Ռուսաստան ապահովէ, որ այդ զէնքն ու ռազմամթերքը

(*) Յ. Իրազէկ՝ «Մոսկի անցեալից», 1926 Պէյրութ, էջ 70:

չպիտի գործածուին Հայաստանի դէմ, եւ երկրորդ՝ որ անոնց %ին 25ը պիտի ձգուի Հայաստանին իբրեւ իրանգիթի իրաւունք:

* * *

Այս համաձայնագիրը, տարբեր խմբագրութեամբ, կը գտնենք Հ. Տէրտէրեանի յուշերուն մէջ, պատմութեան համար կուտանք զայն եւս նոյնութեամբ:

Դաշնագիրը պարունակում էր հետեւեալ գլխաւոր կէտերը.

1. Խորհրդային կառավարութիւնը ճանաչում էր Հայաստանի անկախութիւնը եւ պարտաւորում էր չխառնուիլ մեր պետութեան ներքին գործերին.

2. Հայաստանի սահմանների մէջ մտնում էր Ձանգեզուրը, իսկ Ղարաբաղի ու Նախիջեւանի շրջանների խնդիրը կարգադրում էր Խորհրդային Ռուսաստանի իրաւարարութեամբ.

3. Խորհրդային Ռուսաստանը միջամտելու էր, կասեցնելու համար Հայաստանի եւ Թիւրքիայի միջև շարունակուող պատերազմը եւ հայ-թուրքական սահմանավէճը լուծուելու էր Խորհրդային Ռուսաստանի բարեացակամ միջնորդութեամբ.

4. Սերի դաշնագրից հրաժարուելու դէպքում, Խորհրդային կառավարութիւնը պարտաւորում էր մնչում բանեցնել թուրքերի վերայ՝ էրզրումի վիայէթից որոշ հողամասեր գիջելու Հայաստանին:

5. Ռուսական զորամասերին թոյլ էր տրուում փոքրիկ զորախումբերով անցնելու Հայաստանի հողամասով, իսկ Թիւրքիային յանձնուելիք զենքի ու ռազմամթերքին հարելին երեսուր պիտի տրամադրուէր Հայաստանի կառավարութեան եւ այդ որպէս աւանդ պահուած պիտի մնար Հայաստանի պահեստներում՝ գործածուելու համար այն պարագային, եթէ Թիւրքիան Խորհրդային Հայաստանից ստացած զինամթերքը գործածէր Հայաստանի դէմ:

6. Խորհրդային Ռուսաստանը համաձայնում էր Հայաստանին վճարելու երկու ու կէս միլիոն ռուբլի օսկի, որպէս հատուցում այն վնասների, որ ունեցել էր հայ աշխատաւորութիւնը կայսերապաշտների կռիւմից սկսուած համաշխարհային պատերազմի հետեւանքով.

7. Հայաստանին տրամադրում էր բաւական քանակութեամբ մարային վառելիք՝ ինքնարժէքով:

8. Հայաստանին ձրիաբար տրամադրում էին երկրագործական զանազան մեքենաներ, որոշ քանակութեամբ երկաթուղային շագեկառներ եւ ասպրանձատար վագոններ.

9. Մեր երկրի արտադրած բամպակը տեղում օգտագործե-

լու նկատումով Հայաստանին տրամադրում էին, դարձեալ ձրիաբար, անհրաժեշտ քանակութեամբ մանարաններ ու հիւսուածեղէնի երկու գործարաններ՝ իրենց ամբողջ կազմաձեւով.

10. Մոսկուայում պահ դրուած էջմիածնապատկան գոյները, Ռուսաստանի հայաբնակ քաղաքներում գտնուած հայկական ձեռագրերը, պատմական նշանակութիւն ունեցող արխիւներն ու գրական-գեղարուեստական արժէք ներկայացնող երկերը փոխադրում էին Հայաստան.

11. Խորհրդային Ռուսաստանը արտօնում էր ինչպէս հայ գաղթականների, այնպէս էլ Ռուսաստանի ամբողջ հողամասում բնակուող հայերի ներգաղթը Հայաստան, իրենց ամբողջ շարժական ունեցումաձեւով, եւ մի շարք այլ կէտեր.

Վերոյիշեալ նախնական համաձայնութիւնը երկուստեք ըստարարուելուց յետոյ, Լեզրանք մեկնեց Բագու՝ Մոսկուայի վերջնական հաւանութիւնը ստանալու եւ անմիջապէս վերադառնալու մտադրութեամբ:

Մինչեւ Լեզրանի վերադարձը՝ Կարսը ինկած էր: Շնորհիւ թուրքերու նիւթական, քաղաքական եւ ռազմական օգնութեան՝ թուրքերը տէր դարձած էին կացութեան եւ Մոսկուա, եթէ ուզէր իսկ, զժուար թէ կարենար իր ընդունած իրաւարարութիւնը գործադրել թուրքերու ձօն: Այսպիսով Լեզրանի համաձայնութիւնը կը դառնար անարժէք:

**ԻՆՉՊԵ՞Ս ԲԱՐՈՅԱԼՔԵՑԻՆ ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԸ
ՈՒ ԳԻՒՂԱՑԻՆ**

Թուրքերու լռելի գործակցութեամբ՝ 1920 Սեպտ.ին Հայաստան ենթարկուեցաւ յարձակումի թրքական բանակին կողմէ, որոնք դործը դիւրացնելու համար Ալեքսանդրապոլի համայնավար կուսակցութիւնը ժողովուրդին մէջ ցրուեց հետեւեալ կողք...

Կ Ո Չ

ԶԻՆՈՒՈՐՆԵՐ, ԳԻՒՂԱՑԻՆԵՐ ԵՒ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ,

«Դաշնակցական խայտառակ կառավարութեան խմբապետներից կազմուած զօրքը նահանջում է Քեմալի զօրքերի ահաւոր յարձակու-

մից: Բաւական չէ, որ նրանք քալանի եւ կողոպուտի մատնեցին ժողովրդի հարստութիւնները, բաւական չէ, որ նրանք հայ աշխատաւոր ժողովրդի գլխին չարիք դարձան, այժմ էլ խտրում են ձեզ, գիւղացիներ եւ զինուորներ, ասելով որ՝ գալիս են քուրբերը հայ աշխատաւորութեանը յալանելու եւ կոտորելու: Մենք կոչ ենք անում ձեզ չհաւատալ Դաշնակցականների հազարաւոր ստեղծում, որովհետեւ եկողները ո՛չ թէ քալանի աւագակներ են, այլ հայ գիւղացիների, զինուորի եւ բանուորների ընկերներ՝ բարձր աշխատաւորներ են: Նրանք գալիս են ոչ թէ ձեզ կոտորելու, այլ քալանչի Դաշնակցների ձեռքից ազատելու: Դուք լաւ հաւատացէ՛ք, որ Կարսում, Ալեքսանդրապոլում եւ գրաւուած միւս տեղերում նրանք ո՛չ քալանել են եւ ոչ էլ կոտորել, այլ հաստատել են բանուորագիւղացիական կարգ ու կանոն:

«Եկողները ոչ թէ թշնամիներ են ձեզ, այլ Դաշնակցների կառավարութեան: Ուստի նորից կոչ ենք անում ձեզ տեղերից չշարժուիլ, մնալ հանգիստ, չգաղթել, որովհետեւ դուք սոված ու մերկ կը կոտորուէ՛ք ու կ'ոչնչանա՛ք: Այժմ դուք բոլորովին երես դարձրէ՛ք Դաշնակցականներից, որոնք շարունակ խաբել ու ծծել են ձեր արիւնը, կոտորելով հայ երիտասարդներին, սարքելով ազգամիջեան կռիւներ: Կոչ ենք անում բոլորիդ այժմ հաւաքուելու. բոլշեիկների դրօշակի տակ, որոնք միայն կարող են ձեզ փրկել այս ծանր դրութիւնից: Ուրեմն ընկերներ, խելիք եկէ՛ք, բանուորագիւղացիական իշխանութիւն յայտարարելու համար, որովհետեւ այդ է պահանջում ներկայ ժամանակը եւ դրանում է միակ փրկութիւնը»:

Կոմժունիստական (Բոլշեիկներ)

Կուսակցութեան Ալեքսանդրապոլի

Դաւանի Կոմիտէ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

1920 ԴԵԿՏ. 2ԻՆ ԵՒ ՈԶ ԹԷ ՆՈՅՆՄԲԵՐ 29ԻՆ

1920 Նոյեմբեր 29ին ուսական բանակը չէր կրցած ոտք դնել Հայաստան: Ան կը գտնուէր սահմանազուլիսն վրայ եւ հոն՝ Ղաղախի մէջ է, որ ուսերը կաղմեցին Յեղիւմ (Յեղափոխական Կոմիտէ) մը, յայտարարելով Հայաստանի խորհրդայնացումը:

Որպէսզի կարենան Հայաստան մտնել, Երեւանի մէջ իրենց արտակարգ ներկայացուցիչ Լեզրոն բանակցութիւններ վարեց դաշնակցական կառավարութեան հետ եւ կողմերը 1920 Դեկտ. 2ին համաձայնագիր մը ստորագրեցին խաղաղօրէն իշխանութիւնը փոխանցելու համար բոլշեիկներուն:

Բոլշեիկները հետապնդին անկիտայն այս համաձայնագիրը, հաւատացնելու համար միամիտներուն, թէ Հայաստանի խորհրդայնացումը կատարուած էր ժողովրդական ապստամբութեան մը հետեանքով:

Այս խարէութիւնը հերքող վաւերագիրը լոյս տեսած է 1922ին Մոսկուա տպագրուած «Ճողովածու Գործող Դաշնագրերու» (Թիւ 79) ուսերէն պաշտօնական հրատարակութեան մէջ, էջ 14-15: Հետագային բոլշեիկեան հրատարակութիւններու մէջ այլեւս չի յիշատակուիր այս համաձայնութիւնը:

ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ

Ռ. Ս. Ֆ. Ս. Ն. ԼԻԱԶՕՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՁՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒԻ:

2 ԴԵԿՏ. 1920 Ք., մէկ կողմէն Ռ. Ս. Ֆ. Ս. Ն. լիազօր մերկայացուցիչ ընկ. Լըզրանը Ռ. Կ. Կ. Ս.-ի լիազօրութեամբ, ի դիմաց Ռուսաստանի խորհրդային կառավարութեան, եւ միւս կողմէն ընկերներ Դրօն եւ Տէրտէրեանը ի դիմաց Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան՝ կնքեցին համաձայնութիւն հետեւեալի մասին.

«1.— Հայաստան կը յայտարարուի Անկախ Ընկերվար Խորհրդային Հանրապետութիւն:

«2.— Միմչեւ Հայաստանի Խորհուրդներու համագումարի հրաւիրումը, կը կազմուի ժամանակաւոր Ռազմա-Յեղափոխական Կոմիտէ մը, որուն կը փոխանցուի Հայաստանի բովանդակ իշխանութիւնը:

«3.— Ռուսիոյ հարհրդային կառավարութիւնը կ'ընդունի՞ որ անվիճելիօրէն Հայաստանի ընկերվար հարհրդային Հանրապետութեան մաս կը կազմեն հետեւեալ հոգեբերքը. — Երեւան քաղաքը իր բոլոր գաւառներով (այս գաւառներու մէջ կը մտնէին, ինչպէս յայտնի է, նաեւ Նախիջևանն ու Սուրմաշուն. — Գ.Լ.), Կարսի շրջանի այն մասը, որ ռազմապէս կ'ապահովէ տիրապետութիւնը Ձաջուռ կայարանէն մինչեւ Արաքս կայարանը երկարող երկաթուղագիծին, Գանձակ քաղաքի Ձանգեզուր գաւառը, ճոյն քաղաքի Ղազախ գաւառի մէկ մասը՝ Օգոստ. 10ի համաձայնագիրի սահմաններուն մէջ, եւ Թիֆլիս քաղաքի այն մասերը, որ Հայաստանի տիրապետութեան տակ էին մինչեւ 1920 Հոկտ. 28ը:

«4.— Հայկական բանակի հրամանատարական կազմը չ'ենթարկուիր ոչ մէկ պատասխանատուութեան այն գործողութեանց համար, որ կատարած է բանակի շարքերուն մէջ մինչեւ խորհրդային իշխանութեան յայտարարումը Հայաստանի մէջ:

«5.— Դաշնակցութիւն կուսակցութեան եւ Հայաստանի այլ ընկերվար կուսակցութեանց անդամները պիտի չենթարկուին ոչ մէկ հալածամքի՝ այդ կուսակցութեանց պատկանած բլլալուն համար:

«6.— Ռազմա-Յեղափոխական կոմիտէի մէջ կը մտնեն հինգ անդամներ Համայնավար կուսակցութեան նշանակումով եւ երկու հոգի ձախ դաշնակցականներու խմբակներէն, համաձայնարար Համայնավար կուսակցութեան հետ:

«7.— Ռուսիոյ հարհրդային կառավարութիւնը միջոցներ ձեռք կ'առնէ անյապազ զինուորական ուժեր կեդրոնացնելու, աներաժեշտ՝ Հայաստանի ընկերվար հարհրդային Հանրապետութեան անկախութեան պաշտպանութեանը համար:

«8.— Սոյն համաձայնագիրը ստորագրելէ ետք՝ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը կը ֆաշուի իշխանութենէն: Առժամաբար, մինչեւ Յեղկոմի ժամանումը, իշխանութիւնը կը փոխանցուի զօրահրամանատարութեան, որուն գլուխը կ'սնցնի ընկ. Գրո: հարհրդային Ռուսիոյ կողմէ Հայաստանի զօրահրամանատարութեան կից գործավար կը կարգուի ընկ. Սիլբին» (Բ. ԲՈՐԵԱՆ — «Հայաստան», Տ. Բ., 1929, Մոսկուա, էջ 295-296):

Ինչպէս տեսանք, սուտ է Հայաստանի խորհրդայնացումը Նոյեմբեր 29ին, քանի որ Լըզրանի Դեկտ. 2ին ստորագրած համաձայնագրով կը պարզուի, որ այդ Թուականին իշխանութիւնը զեռ բողջեւիչներուն ձեռքը չէր գտնուեր:

Իսկ հետագային ռուսերը չյարգեցին համաձայնագրի տրամադրութիւնները: Բանտերը լեցուցին մտաւորականներ, քաղաքային եւ զինուորական պաշտօնեաներ: Այս հալածանքներուն եւ բռնութիւններուն հետեւանջով ալ տեղի ունեցաւ Փետր. 18ի ժողովրդական ապստամբութիւնը:

Կատարուած բռնութիւններուն եւ Թայանի մասին կուսանք բողջեւիչներու խռատովանութիւնը: Բ. Բորեան, «Հայաստան» Երկհատոր ռուսերէն գրքին մէջ, այս մասին կը գրէ. (Տատար Բ., էջ 126):

«Յեղկոմի, սուսնց հաշուի առնելու զիւղացիութեան ընդհանուր տնտեսական դրութիւնը եւ անոր հոգեբանական կացութիւնը. սուսնց որեւէ խտիր դնելու եւ դասակարգային որեւէ սկզբունք ունենալու, անցուռ անխնայ եւ վեհական բռնագրաւումներու եւ պետականացումներու: Այս բռնագրաւումները տեղի կ'ունենային անկազմակերպ, սուսնց որեւէ ծրագրի, չունենալով որեւէ յեղափոխական-դասակարգային բնույթ. գործադրութեամբը անտեղի ունութիւններու: Յեղկոմի, որ ստեղծած էր տակաւին կազմակերպ եւ օրինաւոր մէքենայ մը, որ կ'անխառն նախապատրաստած էր ժողովուրդը անհրաժեշտ քարոզչութեամբ մը եւ հաշուի առած էր Երկրի ինքնայատուկ պայմանները՝ հետեւեալ նշանախօսքը կը նշուէ, — բռնագրաւել եւ պետականացնել: քաղաքներու մէջ մասնաւոր անձանց պարէնը, իսկ զիւղերու մէջ՝ զիւղացիներու հացի պահեստը:

Անկանոն բռնագրաւումներ եւ անխտիր բոլորի ինչքի իրագումը՝ զինուորական հագուստի, տնայնագործական իրերու, մասնաւոր եւ այլ տեսակի սանդկոթերու (որոնցմով չ'աւժրուած բրինձը կը գտնուէ), ջաղացներու, սափրիչի գործիքներու, զիւղացիական փեթակներու, ներմակեղէնի, գգեստի, ֆաղաֆացիներու տնային կահ-կարասիի, սուսնց սեփականատէրերու դասակարգային ծագումը նկատի առնելու եւ այլն, եւ այլն: Բնական է, այս միջոցառումները իսպառ գործի էին դասակարգային որեւէ հանգամանքէ եւ գտնուէ գործադրողները ատու իսկ ցոյց կուտային, որ ո՛չ կ'ըմբռնեն եւ ոչ ալ կը հասկնան էու թիւր խորհրդային ֆաղաֆակաւորութեան եւ բնույթը համայնավարական դասակարգային գաղափարաբանութեան:

«Բնական է, որ այս միջոցառումները, բնկերացած բռնութիւններու, եզան հիմնական պատճառ Հայաստանի մէջ բռնկած փետրուարեան ապստամբութեանն»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՄԻՍՆԵՐԸ

Ներկայացուցինք Մոսկուայի թուրք դեսպան՝ զոր. Ալի Ֆուա-
տի յուշերը և ուրիշ վաւերագրեր, որոնք յստակօրէն ցոյց կուտան
ուսեւթուրք գործակցութիւնը Հայաստանի յօշոտման ընթացքին:

Հայկական բանակը աւելի երկար չկրցաւ դիմադրել արեւել-
քէն, արեւմուտքէն ու հարաւէն կատարուած յարձակումներուն: Բու-
շեխիները, զեմալական բանակը Հայաստան առաջնորդելէ ետք, չը-
կրցան սանձել իրենց զինակիցին վայրագութիւնները:

Խորհրդային Հայաստանի արտաքին գործաւար Ա. Բէզդա-
տեանի 1921 Յունուար 21ին էնկիւրի զրկած հետեւեալ երկար հեռագիրը
պերճախօս փաստ մըն է այն սղբերգական կացութեան, որ ստեղծուած
էր Հայաստանի անկախութեան խորտակումէն անմիջապէս ետք:

Հիմիւրի, Քարբիյ Մեծ Ազգային ժողովի կառավարութեան արտաքին գոր-
ծերի կամիսարիմ: Պատմէնք՝ Մոսկուա, արտ. գործ. ժող. կամիսար Ձիչեքիմիմ, Տէր
Գարբիլեանիմ: Պատմէնք՝ Բագու, արտ. գործ. կամ. Հիււէյմովիմ, Արաքէզգովիմ.~

Խորին վրգոյժուեցով հաղորդում է ձեզ Հայաստանի կառավարութիւնն
այն անբաժան երեւոյթներէ մտին, որոնք ստացել են մասսայական և բրնձիկական
բնոյթ և որոնք նկատուած են ձեր սահմանակից շրջաններում: Խորհր. Հայաստանի
կառավարութեան ստացած ստույգ տեղեկութիւնների համաձայն, Կարսի, Ալեքսան-
դրապոլի դուստաներում և չէղք դօտիում ձեր գրաման զօրքերի կողմից տեղի են
ունենում խաղաղ աշխատանք ժողովուրդի վրայ՝ տեղեկատու բռնութիւններ: Տաճիկ
զօրքերի կողմից գրաւուած բոլոր վայրերից ժողովուրդն են Խորհրդ. Հայաստանի պա-
կանդ պետական զօրքերը, աւարի ենթարկուած մասնաւոր սննդի գոյքն ու անա-
սութիւնը, զուտ են զիւղացիների անասունները և գրաւուած է բնակչութեան վեր-
ջին պարենուարումը: Այսպէս, Ալեքսանդրապոլ քաղաքից վերջին ամսուան ընթաց-
քին տարուած են զիւղացիների անասունները, շագնիւղքերը, հեռագրի ու հեռա-
խօսի կաղամները, օթմուդիները, մասնաւոր զօրքը եւայլն: Գուտան տմայացած
է, բոլոր անասունները զուտ: Նալպանդ կայարանում կեարտանցած է հացահատիկ-
ների մեծ պաշար Տաճկաստան ուղարկելու համար, որպիսին խլուած է շրջակայ գիւ-
ղերում և այդպիսով զիւղացիները դատապարտուած են սովմահութեան:

Աշխատանքի ընդունակ բոլոր 18-50 տարեկան հասակի սղամարդիկ բռնի
զուտ են իրենց հայրենի տեղերից և խլուով նրանցից ալիւրի պաշտիւրից կտրուած
ամբողջ վերապահուող՝ զուտ, տարուած են մեծուսան ցրտին դէպի Մարզաքիւրի և
էրզրումի շրջաններ՝ նոր ու բռնի աշխատանքի: Այնուհետեւ, Հարաքիւրիայից եկող
փախուածներէ խմբերին ձեր գրաման զօրամասերի ներկայացուցիչները փոր-
ձում են ուղարկել Կարսի վրայով դէպի էրզրում՝ նոյնպէս բռնի աշխատանքի ու
մար վերադիւշալ պայմաններում:

Կարսում, ձեր զօրքերի կողմից գրաւուելուց յետոյ, առաջին երեք օրերը
տեղի են ունեցել և մասսայական բնոյթ են ստացել թալանը, բռնութիւններն ու ըս-
պանութիւնները, որոնք աւելի կրճատուած չափերով շարունակուած են մինչև օրս:
Յիշեալ գիւղերի ամբողջ վաւերիւրը գրաւուած է, մինչև իսկ վաւերիւր չէ թողնուած
նաև որբանոցներում: Տղամարդիկ զուտ են Մարզաքիւրի և էրզրում, պարենու-
արումը խլուած է և տարաբ. զուտ: Աղբուրդի և Համաձուրի շրջաններում, սա-
կարների առանձին դիւնուած խմբեր ներս են խուժուած հայ գիւղերը, թալանուած և
սպանուած են, իսկ կանանց բռնաբարում: Դեկտ. 13ին Կուլիխի գիւղում տեղի ունե-
ցաւ այդպիսի դէպք: Դեկտ. 26ին Տաճկական Յ բր. գնդի զօրամասի կողմից Գաֆ-
թուլի գիւղը գրաւուելուց յետոյ, բանուրների թուտ նոյն զիւղացիներից ինչ հո-
դի երիտասարդ կամուրջներ՝ Վարդ Տէր Պետրոսեան, Պետրոս Միխայեան, Իզ-
նաթոս Վարդանեան, Մարտին Մուրաթեան, Ստեփաննոս Մուրաթեան, Մանուէլ
Ամանեան, Թուճա Աստեան, Խաչատուր Կուրիկեան և Մանուէլ Ասլանեան, աշ-
խատանքները վերջացնելուց յետոյ, դազանարար սպանուելին նոր գիւղի մի յար-
գանոցում: Նրանց դիակները դուրս բերուելին Գաֆթուլի բնակիչ Ստեփաննոս Պե-
տրոսեանի սայլով, և ոճրագործութեան հետքերը ետնակելու համար, սպանուել սայլի
տէրը: Յունուար 13ին, ասկարների մի խումբ, առանց պատճառի յարձակուել
Եգանեար գիւղի վրայ և կատաղի կրակ բացել վրան:

Չէղք դօտու կից գիւղերում զիւղացի խաղաղ հայ բնակչութեան վրայ
կատարուած թալանը, բռնութիւնները և սպանութիւնները սովորական երեւոյթ են
գարձել: Միայն չորրորդ կոմիսարիատի դուստամասում ցուցակագրուած են աւելի
քան 200 այդպիսի սպանութիւններ:

Շրջանի բնակչութիւնը անարեկում է ենթարկուած, բնակիչների դի-
զական և տնային անտեսութիւնն աւերուած են, անասունները զուտ և հարկերի
տեսուան տակ խլուած են բնակչութեան բոլոր կենսամթերքները: Ձիւնուած զօրամ-
սերի յարձակումները չէղք դօտու վրայ վերջերս բրնձիկական բնոյթ են ստացել և
եթէ այդպէս շարունակուին, նոյն աւերումը տեղի կ'ունենայ ինչ որ կատարուել
Ալեքսանդրապոլի շրջանում, ուր աւերուած են աւելի քան 50 գիւղեր:

Ինչ վերաբերում է Ալեքսանդրապոլի բնակչութեան, շնայած այն հանգ-
ձանքին որ հարաքակցութիւնը դժուար է և կաշկանդուած մեր հեռագրի վրայ զըր-
ուած ձեր կոնաքովով (մինչև իսկ յեղկոմի վերաբերմամբ), այլ և այն հանգաման-
քին, որ ձեր կողմից չի թոյլատրուած մեր ընկերներին դուրս գալ Ալեքսանդրապոլից,
բայց այնուամենայնիւ մեզ յաջողուել անկասկածելիօրէն հաստատել, որ յեղկոմի
իշխանութիւնը ձեր զօրքերով գրաւուած քաղաքում ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ցնորք
է և կարող է իրական լինել այն չափով, ինչ չափով կարեւոր է գինուարական հրա-
մանատարութեան:

Ձիւնուորական հրամանատարութեան կողմից յեղափոխական կոմիտէին ներ-
կայացուած մշտական սպանուելները և վերջնապէս, որոնք ոչ մի սանչութիւն չունին
Յեղկոմի խնդիրների հետ, որպէս Խորհրդային իշխանութեան օրդանի (ինչպէս բռնի

աշխատանքների համար մարզիկ աալը, 10 հազար հրացանների պահանջը, ասկարներ սպանողին յանձնելը, որ յայտնի չէ թէ ո՞վ է սպանել, ե՞րբ կամ ո՞րտեղ եւայլն), որ ստորացրել է Ալեքսանդրապոլի յեղափոխական կոմիտէին եւ փաստորէն դարձրել է նրան զէնք Ալեքսանդրապոլը զբաւող զօրամասերի ձեռքին, — Հայաստանի Յեղափոխութիւնն ստիպուած է, այսուհետեւ, նման օրգանի գոյութիւնը բոլորովին աւելորդ համարել, քանի որ զա խորհրդային իշխանութեան վարչը ձգում է թէ՛ աշխատանք մասանների եւ թէ՛ քաղաքացիների աչքում:

Այնտեղ, ուր գոյութիւն ունի վերոյիշեալ տեսակի գինուորական զբաւում եւ ուր սարկացում եւ աւերում են տիրոմ, այնտեղ չի կարող տեղի ունենալ բանաւորազինւորակաւ իշխանութիւն:

Յիշատակուած բոլոր փաստերի անկողմնակալ վերլուծութիւնը ակնբերի է դարձնում, որ Հայաստանի խորհրդային կառավարութիւնը չի կարող թոյլ առնել նման արբոճներ այն հողամասերի վրայ, որոնք իրաւամբ նա համարում է իր սեփականութիւն, որովհետեւ գրանց նպատակն է յայտնապէս երկիրը անտեսապէս աւերել եւ նրա բնակչութիւնը գոտապարտել զաղթի եւ արհեստական ոչնչացման:

Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը, այդպիսով, ստիպուած է նայել ձեր հրամանատարութեան գործողութիւնների վրայ այն հայեցակէտով, որ դրանք բերում են անխուսափելի արհնաքում եւ լիակատար տեսեսական քայքայում այն շրջաններում, որպիսիները պատերազմի ժամանակ տանկական զէնքի յաղողութեամբ, ընկել են եւ զանոււմ են նրա ժամանակաւոր տիրապետութեան առի եւ որոնք պէտք է անցնին մի այլ պետութեան: Չեր զօրքերի մէջ գտնուած կարգապահութեան հանրածանօթ փաստը եւ ասկեարների ունեցած անկախած համակարանը զէպի խորհրդային իշխանութիւնը ենթադրել չեն աալիս, որ վերը յիշատակուած բրանութեան զէպքերը ինքնակամ գործողութիւններ են, որով ուժեղանում է կատարուող անկարգութիւնների նշանակութիւնը:

Խորհրդային Հայաստանի աշխատանք բնակչութեան անունից, որ խորհրդային իշխանութիւնն ընդունելուց յետոյ ցոյց է առել իր ջնքմ ցանկութիւնը սարկելու յեղափոխական Տանկաստանի հետ խաղաղութեամբ եւ եղբայրաբար եւ որ միանկամ ընդմիջու ազատուել է իր հայրենիքի նացիոնալիզմի լծից, ես ստիպուած եմ մասնանշել, որ վերոյիշեալ փաստերը, որպէս սպառնալից նշան, կարող են արգելք լինել խորհրդային Հայաստանի եւ ազատուող Տանկաստանի յեղափոխական խրնդիների իրականացման:

Լիապէս հուսաւացած, որ ցոյց արուած փաստերի վերաբերութեամբ ձեր մէջ աարակարծութիւններ չեն լինի, իմ կառավարութիւնը չի կասկածում, որ Տանկաստանի կառավարութիւնը չի յապաղի արժատական միջոցներ ձեռք առնել զաղբջընելու նման փաստերը, որին ամենաշուա կերպով կարելի է հասնել միայն հեաջընելով զօրքերը Ալեքսանդրապոլի զաւառից եւ Կարսի հիւսիսային եւ արեւելեան շրջաններից: Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը լիովին հուսաւացած է, որ նրա արդարացի պահանջները չեն կարող չճանաչուել Տանկաստանի Ազգային Մեծ

ժողովի բարեկամ կառավարութեան կողմից, եւ շուտափոյթ պատասխանի է սպասում ձեր կառավարութիւնից՝ այդ աննորմալ կացութեան վերջ աալու համար ձեռնարկըած քայլերի մասին, որոնք պէտք է հաստատեն նրա անկեղծ մատչութիւններն ու զգացմունքները դէպի իր հարեւան խորհրդային իշխանութիւնը: 21 Յունուար 1921:

Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողովրդ. կոմիսար՝ Ա. Բէրջուսեան: (Ս. Վրացեան՝ «Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրջական սալի միջեւ», Պոստոն, 1941, էջ 223):

Գ Ր Ո Յ Ի Յ Օ Դ Ո Ի Ա Մ Ը

Դրո, 1948ին, էրր Միջին Արեւելք կը գտնուէր, «Բոլշեւիկները ի՛նչպէս դրժեցին իրենց խոստումները» խորագրով եւ Տ. Չարեհ ժածկանունով յողուած մը գրեց, ուր կը խօսի Հայաստանի խորհրդայնացման նախօրէի եւ հետագայ դէպքերու մասին:

Հայաստանի կառավարութեան անունով Դրո ստորագրած էր Դեկտ. 2ի համաձայնութիւնը, յուսալով որ բոլշեւիկները պիտի յարպէին նոյնպէս իրենց ստորագրութիւնը:

Կուտանք Դրոյի յողուածին վերջին մասը, ուր կը խօսուի Դեկտ. 2ի համաձայնութեան եւ հետագայ դէպքերու մասին («Արեւելք», 1948 Փետր. 18):

Նախ առաջին տրամադրութեան մէջ նկատուի մէկ կէտ կայ, որուն համաձայն Հայաստանը խորհրդային հանրապետութիւն կը համարուի միայն Դեկտ. 2ին:

Համաձայնագրի երկրորդ կէտին մէջ, բոլշեւիկները կ'ընդունին Հայաստանի հողային ամբողջականութիւնը:

Բայց հետագային անոնք չյարգեցին համաձայնութեան այս տրամադրութիւնը եւ թուրքին պատերազմական աւար գիջեցան Սուրմալուն, Նախիչեանն ու Շարուրը բաժնեցին Հայաստանէն, իսկ Կարսի նահանգը ԱՄԲՈՂՋԱՊԷՍ յանձնեցին իրենց թուրք դաշնակիցներուն:

Համաձայնագրի երրորդ կէտի մէջ, բոլշեւիկները կը խոստանան պատասխանատուութեան չենթարկել Հայկական բանակի հրամանատարութիւնը այն գործերու համար, որոնք կատարուած են բանակի շարքերուն մէջ մինչեւ Հայաստանի խորհրդային իշխանութեան յայտարարումը: Բոլշեւիկները չյարգեցին նաեւ իրենց այս խոստումը:

Հայածանքը սկսաւ հայկական բանակի հրամանատարութեան դէմ: Յունուարին Մոսկուայի կառավարութիւնը պահանջեց Դրոյի հեռացումը Հայաստանէն: Դրո որոշեց երթալ, հակառակ անոր որ իր ձեռքին տակ գտնուող հայկական բանակի թիւը շատ աւելի մեծ էր քան եկուր սովետական բանակը: Կուսակցութեան որոշումով եւ իր համաձայնութեամբ Դրո բռնեց Կապուրի ճամբան: Եթէ այդպէս չընէր, Հայաստան պիտի իյնար քաղաքացիական սպառնիչ կոնֆլիկտի գիրկը եւ, առանց անոր ալ արիւնքաւ հայութիւնը պիտի ենթարկուէր նոր զըրկանքներու: Դրոյի հեռացումը նկշող սպառնութիւն թողուց ժողովուրդին վրայ, որուն հակադրութիւնը ժողովրդական լուր ցոյցի մը ձեւը առաւ:

Արովեան փողոցը լեցուած խիտ բազմութիւնը ցաւով ճանապարհ դրաւ Դրոն, որուն հեռացման մէջ հայ ժողովուրդը կը տեսնէր իր վերջին յոյսերուն անհետացումը: Դրո Մոսկուայի մէջ արգելափակուեցաւ, իրաւունք չունենալով առանց կառավարութեան գիտութեան 60 ֆիւմէթրէն անդին երթալ եւ 48 ժամէն աւելի բացակայիլ:

Դրոյի հեռացումէն վերջ Հայաստանի ամբողջ սպայութիւնը 1500 հոգի, զօր Նազարբէգեանի, Հախվերդեանի, Սլիկեանի գլխաւորութեամբ գնդացիներով շրջապատուած ձիւն ձմեռին, ոտքով էջուեցաւ Ռուսաստանի խորքերը, Բիազան: Ծերունի զօր Նազարբէգեան չըղիմանալով այս ուղեւորութեան, կէս մը անգամալոյժ Հայաստանէն մինչեւ Պաֆու երթալէ վերջ, սովիէթ կառավարութեան որոշումով բանտարկուեցաւ Պաֆուի բանտը, զօր Հախվերդեանի եւ զօր Գամալագովի հետ: Մնացեալ սպայութիւնը ամտուեցաւ Բիազան:

Ծանր վիճակ մը նոյնպէս պարտադրուեցաւ Հայաստան մնացողներուն:

Երեւանի հրապարակին վրայ, օր ցերեկով զօր Բ. Փիլիպովի անձնասպան եղաւ, աւելի լաւ համարելով մեռնիլ քան սովիէթ իշխանութեան անարգանքին ենթարկուիլ:

Ի՞նչ կը ներկայացնէր իրաւամբ հայ սպայութիւնը այն օրերուն: Այս բնորոշումը կատարելու համար պէտք է ֆիշ մը հտ երթալ, ֆրէրել պատմութեան էջերը:

1917ին երբ ռուսական բանակը բոլշեւիկով լուծի տակ որոշեց ամբողջ ճակատը լքել ու հեռացաւ, հայկական բանակը մնաց վեհիպ փաշայի բանակին դէմ դիմաց: 300 հազարնոց ռուսական բանակի տեղը պիտի բռնէր հայկական բանակը: Հայ ղեկավարութիւնը բանակ կազմակերպելէ գատ, պաշտօն ունէր նաեւ պաշտպանելու հայութեան զանգուածները թուրքերու կողմէ զինուած եւ հրահրուած քաջարկե-

լու դէմ: Պրէս-Լիթովսի դաշնագրով սովետները ահագին հոգեր գիչած էին իրենց բարեկամ Թուրքիոյ:

Այն օրերուն է որ Հ. Յ. Դաշնակցութիւնը վնասեց բոլոր հայկական զինեալ ուժերը կեդրոնացնել եւ ամէն ինչ տալ, ամէն ինչ գործադրել օր մէյ երկրորդ հատուածը նոյն կացութեան չմատնուի, ինչ կացութեան որ մատնուած էին արեւելեան նահանգներու մեր եղբայրները: Նազարբէգեանի վիճակուեցաւ հայկական բանակը կազմակերպելու պաշտօնը:

Դժնդակ պայմաններու տակ կազմուեցաւ հայկական բանակը, այն օրերուն երբ Երեւանի նահանգին մէջ կը տիրէին հացի պակասութիւն, սով, հիւանդութիւն եւ այլն: Հայ սպայութեան մեծագոյն մասը հայ գիւղացիի գաւակներ էին:

Ահա այս սպայութիւնն էր որ էջուեցաւ առանց յանգանքի, սխտորուեցաւ Հայաստանէն: Ու հայ ժողովուրդը չկրցաւ իմնիրեն հաշիւ տալ այս ապօրէն կարգադրութեան համար:

Սպայութեան ամբողջ վերջ սկսան բոլշեւիկեան ամենէն սարսափազդու եւ սանձաւազ կալածանքները ամբողջ հայ ղեկավարութեան եւ մտաւորականութեան դէմ: Բանտերը լեցուեցան հազարաւոր բանտարկեալներով: Բոլշեւիկները երկրի գանազան կողմերը սկսան անատիլի հարստահարութեանց: Բոլշեւիկները նոյնիսկ Հայաստանի ցորենն ու արմտիքը Ազրբէյջան արտահանեցին:

Այս խժոժութեան առջեւ, հայ ժողովուրդը սուգ ու շիւանի օրեր ապրեցաւ: Հայ ժողովուրդի ուսաստըր տարրը իր աչքով տեսաւ ու վկայեց թէ սովետական իշխանութիւնը ոչինչով կը տարբերի սուրբանական բռնակալութենէն: Բոլշեւիկները դրժեցին իրենց բոլոր խոստումները: Հայաստան ահ ու սարսափի երկիր դարձաւ:

Հետեւումը անխուսափելի էր, հայ ժողովուրդը չէր կրնար տանիլ այսքան անարգանք ու վատութիւն: Ժողովրդական բռնկում մը ճակատագրական կը դառնար:

«ԿԱՐՄԻՐ ԶՕՐԱՄԱՍԵՐՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ ՄՈՒՏՔԸ

ԿԸ ԿՐԷ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԲՆՈՅԹ»

ԿՐԱԷ ՕՐԺՈՆԻԿԻՉԷ

Երեւանի «Կոմունիստ» թերթի 1921 Ապրիլ 22ին հրատարակած է ընդհանուր հրամանատար Օրժոնիկիձէի հետեւեալ ճառը.

«Ռուսաստանի կուսակցական կուսակցութեան կեդրոնական կոմիտէի համառուսական գործադիր կոմիտէի եւ բանուորներու, զիւզացիներու եւ զազախներու պատգամաւորական խորհուրդին կողմէ կ'ողջունենք երիտասարդ Կարմիր Հայաստանը (ծափեր):

«Ռուսաստանի Կարմիր զորամասերու մուտքը կը կրէ ժամանակաւոր բնոյթ եւ անոնք Հայաստանէն կը հեռանան այն ժամանակ, երբ բանուորագիւզացիական Հայաստանը կը կազմէ իր երիտասարդ Կարմիր բանակը, որ Ռուսաստանի զորամասերու Հայաստանէն հեռանալէն ետք, այս երկրի աշխատաւորական զանգուածներու ֆիզիքական ապահովութեան միակ երաշխիքը կ'ըլլայ»:

Հայաստանի խորհրդայնացումէն ի վեր 36 տարիներ անցած են, բայց ոուս Կարմիր զինուորները կը շարունակեն մնալ Հայաստան:

«ԶԱՆԳԵԶՈՒՐ ԵՒ ՂԱՐԱԲԱՂ ԱՆԲԱԺԱՆ

ՄԱՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ»

ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԸ

Երեւանի վերագրուումէն անմիջապէս ետք, Կարմիր բանակը սկսաւ իր յարձակումները՝ ճնշելու համար Զանգեզուրի ապստամբութիւնը: Բոլշեւիկները իրենց սովորական խարէութեամբ դարձեալ յայտարարեցին, թէ «Զանգեզուր եւ Ղարաբաղ սոցիալիստական Հայաստանի անբաժան մասն են»:

Երեւանի «Կոմունիստ» թերթի 1921 Ապրիլ 23ի թիւին մէջ հրատարակուեցաւ Հ. Ս. Ս. Հ. ի ռազմական կոմիսար Աւիս Նուրիջանեանի կոչը, ուղղուած հայկ. Կարմիր բանակին:

Կոչը զդաշնակցական խմբակներուն դէմ շահուած յաղթանակը կը փառարանէ եւ կը յայտնէ, թէ կռիւր պիտի շարունակուի,

«մինչեւ որ նրանք իրանց գէնքը ցած դնեն, կամ վնասուեն, Զանգեզուրից, առանց որի Սովետական Հայաստանը չի կարող անդորր գրալ իրեն: Հայ աշխատաւորութիւնը մի է: Նրա սոցիալիստական հայրենիքը եւս միացեալ պիտի լինի»:

«ԶԱՆԳԵԶՈՒՐՆ ՈՒ ՂԱՐԱԲԱՂՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԲԱԺԱՆ ՄԱՍՆ ԵՆ:

«Թող դողան խմբակները, երբ մենք՝ հայ աշխատաւորութիւնը ու նրա հերոս կարմիր բանակը գոչում ենք»:

— ԿԵՅՑԷ ԱՆԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԲԱԺԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԶԱՆԳԵԶՈՒՐՆ ՈՒ ՂԱՐԱԲԱՂՆ»:

Բոլշեւիկները, Զանգեզուրին զննքի ուժով տիրակալեալ ետք, այլևս երբեք չյիշեցին, որ Ղարաբաղը Հայաստանի անբաժան մասը կը կազմէ:

ԴԱԻԻԹ՝ ԱՆԱՆՈՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Դաւիթ Անանուն (Տէր-Դանիէլեան) սոցիալ դեմոկրատ յայտնի տեսարան, արժէքաւոր գործ մը ունի՝ «Ռուսահայերի հասարակական զարգացումը», երեք հատոր, որոնք հրատարակուած են 1916ին, 1922ին (էջմիածին) եւ 1926ին (Վենետիկ): Պորհրդային իշխանութեան որով պաշտօն տրուեցաւ իրեն աշխատելու թանգարանի մէջ, ապա «անյայտացաւ» բազմաթիւ հայ մտաւորականներու նման:

Հայաստանի հանրապետութեան շրջանին ամէն կերպ սատարեց անկախութեան գաղափարի խորացման ու ամրապնդման: «Հայաստանի Կոոպերացիա» երկշարաթաթերթին խմբագիրն էր Երեւանի մէջ: 1919ին երբ Պաղատիւթեան Պորհրդաժողովին կողմէ Կովկաս զրկուեցաւ, իբրեւ բարձր բոմիսէր, ամերիկացի գնդապետ Հասկելը, այս առթիւ Դ. Անանունը գրեց «Ամերիկայի բազուկը» խորագրով յօդուած մը^(*), զոր կը ներկայացնենք իբրեւ արտայայտութիւն մը այդ ժամանակաշրջանի մտածողութեան, երբ Ռուսաստան հեռացած էր Կովկասէն:

(*) «Հայաստանի Կոոպերացիա», օրդան Հայկոպի, Երեւան, 1919, Օգոստ. 31, թիւ 14, էջ 417—419:

Այս յօդուածը տեղ գտած է «Անաջին մաս աշխատանքի գաղափարական շարժումները Հայաստանում» գրքին մէջ, 1932, էջ 355:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲԱԶՈՒԿԸ

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները իր բազուկն է մեկնում Հայաստանին: Հօրը նշարում է թոյլի տառապանքները եւ հակառակ աշխարհի կանոններին, ուր չարախնդարութիւնն է տիրող սկզբունքը. նա օգնութեան ձեռք է մեկնում կործանման եզրը հասած հայ ժողովրդին: «Աժու եմք փոքր». այսպէս է բնորոշել ազգիս մեր պատմահայրը եւ իբրեւ մարդկային փոքր մարդ՝ մենք մեր պատմութեան ամբողջ ընթացքում տարուբերուել ենք ուժեղ հարեւանների յարուցած ոլորապտոյտներում: **XX** դարում նայնը կատարուեց մեր նկատմամբ, ինչ կատարուել է մեր պատմութեան բոլոր դարաշրջաններում: Արդիւնքը հրապարակի վրայ է. անդեկ եւ անառագաստ մակոյկի պէս մենք յանձնուել ենք Արեւելի ալեկոծ ծովին եւ հանգիստ հանգրուան չենք գտնում մեզ համար: Միմիայն ուժեղ եւ հմուտ բազուկը կարող է անդորր նաւահանգիստ հասցնել մեր մատաղ հանրապետութեան նաւը եւ մեզ ազդարարել՝ «ե՛լ ու քայլի՛ր»: Այդ ուժեղ բազուկը մենք մեկնած ենք տեսնում հեռաւոր Ամերիկայից:

Օգոստոսի 21ին Հայաստան էր ժամանել ամերիկական ուժեղ բազուկի կարապետը — Պարիզի Հաշտարար Կոնֆերանսի Հնգի հորհրդի ներկայացուցիչ գեղապետ Հասկելը: Մեր ժողովուրդը եւ մեր կառավարութիւնը խանդավառ ընդունելութիւն ցայց տուին Պ. Հասկելին, նանաչելով նրա առաքելութեան երկնիւղի հանգամանքը — իննել Հայաստանի Գերագոյն Կոմիսար Պարիզի Կոնֆերանսի կողմից եւ ամերիկական դեմոկրատիայի ներկայացուցիչ իր ծագման եւ պաշտօնի պատկանելութեամբ: Այսպիսով Պարիզն ու Ամերիկան յանձնեցին գեղապետ Հասկելի ազդարարում են հայ ժողովրդին, որ նրա նակատագիրն ու դատը չեն մատնուած մոռացութեան: Եւ մենք, որ չենք կարող չապահինել երբորդ ուժի օգնութեան, ազգային նուաստացում չենք տեսնում Պարիզի ու Ամերիկայի վերաբերման մէջ, այլ աւագ եզրայրների աջակցութիւն, որին արժանացել ենք մեր ոգորումներով ու կրած տառապանքներով համաշխարհային պատերազմի մէջ:

Լաւագոյնը լաւի թշնամին է: Լաւագոյնն է կատարելապէս անկայս լինել. եթէ արդի պայմաններում առհասարակ հնարաւոր է խօսք բանալ որեւէ մանր ազգի անկայտութեան մասին: Լաւր ժողովրդի փիզիքական գոյութեան ապահովութիւնը, նրա տնտեսական բարգաւաճումը ու կուլտուրական անարգել զարգացումն է ազգային իշխանութեան հովանու տակ. որ կարող է բնձեռել մեզ երբորդ ուժի կարողութիւնը: Ընտրել լաւագոյնը՝ ասել է հաշուի չնստել իրական պայմանների հետ եւ մահանալ ֆաջերի մահով: Ընտրել լաւը՝ նշանակում է կեանք

եւ աշակերտութիւն ուժեղի եւ հմուտի մօտ: Վերջին ուղին պիտի դառնայ մեր քաղաքական իմաստութիւնը: Եւ հայ ժողովուրդը բնագործն այդ ուղին է երազում ու որոնում:

Ամերիկայի մուտքը Հայաստան, եթէ մի օր դա իրականութիւն դառնայ, կը նշանակէ նոր էջ բանալ մեր բազմաձայն պատմութեան մէջ: Վերջ արեւելեան անհոգութեան ու ծուլութեան, վերջ փնթութեան ու վատնող սովորութիւնների — այս պիտի ազդարարէ մեզ Ամերիկան, սրա դիմաց նախաձեռնութեան ու տակաւնութեան ու յամառութեան ոգին է, որ պիտի պատուաստուի մեր ժողովրդին, ամերիկական տեխնիկան է, որ պիտի ծաւալուի մեր երկրում, արդիւնաբերութիւնն ու առեւտուրն է, որ իր բազուկների մէջ պիտի առնէ ողջ Հայաստանը: Ժամանակի ազդանշանը կը դառնայ մեր մէջ անգիտակցուած նշարութիւնը, թէ գիտութիւնը ուժ է, ուժը՝ գիտութիւն:

Մենք Ամերիկայից երկնչելու տեղիք չունենք, եթէ յոգնութիւն պատճառենք մեր ծոյլ մտքին եւ նանաչենք նրան: Սխալ է, թէ աշակերտը չի կարող գերազանցել վարպետին: Սա արեւելեան ֆատալիզմի արտայայտութիւն է: Աշակերտը կարող է ուսանել վարպետից, կարող է գերազանցել նրան, եթէ հաստատ կամեցողութիւն ունենայ, երաժարուի դիմազրկութեան արատից եւ հեղինակութիւնների կոյր երկրպագու չդառնայ:

Թող Ամերիկան ոտք կոխէ մեր հայրենիքը եւ մենք ամերիկացուց սովորենք նրա մշակած ոգով ապրել ու մահաւել: Հայ ժողովուրդը թմրած ուժեր ունի պարփակած իր մէջ: Ոչ ոք չէ կարող նախատեսել նրա կուլտուրական զարգացման թռիչքը: Պատմական դժնդակ պայմանները նրան պահել են խոնարհ վիճակում եւ չեն խրախուսել նրա համնարը:

Թողէք, որ կործանուեն մեզ կաշկանդող շղթաները — այն ժամանակ աշխարհն ու մարդկութիւնը կը տեսնեն մեր գործը եւ կը լսեն մեր խօսքը:

Աշխատենք առանց վիստութեան եւ առանց երկիւղի: Պարտութիւնները չեն, որ մեզ բաժին են վիճակուած: Մեզ սպասում է եւ յազբանակի արբեցումը:

ԻՌՈՒՍԵՐԸ ԿՐ ԶԵՐԲԱԿԱԼԵՆ ԵՒ ԿՄՔՍՈՐԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՆԱԿԻ ԲՈԼՈՐ ՍՊԱՆԵՐԸ

Նախորդ գլուխներուն մէջ մենք տուինք Մոսկուայի թուրք դեսպան Ալի Ֆուատի յուշերը եւ այլ վաւերագրեր, որոնք վճռապէս կը հաստատեն, թէ 1920 Սեպտեմբեր քեմալական բանակին յարձակումը Հայաստանի վրայ, արդիւնք էր թուրքեւստովեա քաղաքական եւ սպառնալից սերտ գործակցութեան:

Հայաստան երկու ամիսէն աւելի դիմադրեց այդ յարձակումներուն: Ո՛չ Ազգերու Դաշնակցութիւնը, ո՛չ ալ արեւմտեան պետութիւնները չօգնեցին մեր երկրին, որ հարկադրուեցաւ անձնատուր ըլլալ բոլշեւիկեան ճնշումին առջեւ, որպէսզի կանգ առնէր թրքական յառաջխաղացումը Ալեքսանդրապոլէն անդին:

Հայաստանի անձնատուութեան գործողութիւնը կառավարութեան կողմէ յանձնուեցաւ Դրոյին, որ մինչ այդ ճանչցուած էր ոռուսերու բարեկամ:

Եւ պատմութեան մէկ հեղանակը պիտի ըլլար, որ Ներսէս Աշտարակեցիի, Սաչատուր Աբովեանի նման, Դրոն եւ ս, որ Հայաստանի ազատագրումը կը սպասէր Ռուսաստանէն, ի վերջոյ պիտի հիասթափուէր:

Զօր. Պասկևիչ Պեսարսպիա արտօրել տուաւ Ներսէս Աշտարակեցիին, Երեւանի դրաւումէն քիչ ետք: Ս. Աբովեան, հիասթափուած ոռուսերէն եւ բարոյալքուած, խորհրդաւոր կերպով անյայտացաւ:

Աւելի բախտաւոր եղաւ Դրոն, որովհետեւ հայ ժողովուրդը այժմ տեսած էր Հայաստանի անկախութիւնը, եւ երբեք պիտի չուզէր հրաժարիլ այդ իրաւունքէն:

Դրոյի հեղինակութիւնը շատ մեծ էր Հայաստանի մէջ եւ բոլշեւիկները գիտէին, թէ ան չի կրնար դաւաճանել իր ժողովուրդի ազգային շահերուն: Եւ առաջարկեցին իրեն՝ մեկնիլ Մոսկուա, ուրիշ խօսքով՝ պատուաւոր արտօր: Քանի մը զինակիցներով՝ խորհրդայնացումէն ամիս մը ետք Դրո մեկնեցաւ եւ բոլշեւիկները, երեւոյթները փրկելու համար, զինուորական նուազախումբով անոր ողջերթ մաղթեցին:

Դրոն հազիւ մեկնած, 1921 Յունուար 24ին բոլշեւիկները պաշարար, հետեւեալ պայմաններու մէջ, ձերբակալեցին Հայաստանի ամբողջ սպայութիւնը:

Յիշենք, որ ըստ 1920 Դեկտ. 2ի համաձայնագրի (ստորագրուած Լեզրանի եւ Դրոյի կողմէ) Յօդ. 4ին. «Հայաստանի բանակի հրա-

մանատարութեան կազմը չի ենթարկուում որեւէ պատասխանատուութեան՝ բանակի շարքերում կատարուած գործողութեանց համար, միջեւ խորհրդային իշխանութեան հռչակումը Հայաստանում»:

Հակառակ այս յանձնարութեան, բոլշեւիկները նախ սկսան փոքր խումբերով հայ սպաներ զրկել Բաղու, իրբեւ թէ հոն նոր պաշտօններ ստանձնելու համար: Ապա պաշտօնական յայտարարութեամբ մը, 1921 Յունուար 24ին, հրաւիրուեցան բոլոր հայ սպաները Ներքայնալ Երեւան, Դիլիճան եւ Ղամարլու:

Երեւանի մէջ պարտաւոր էինք ներկայանալ Խորհրդարանի մեծ շէնքը: Այդ թուականին մաս կը կազմէի հայ զինուորականութեան եւ նոյն օրը Երեւանի կայազօրի հերթապահ սպան էի: Հերթապահ սպան ստիպուած է սուրը իր կողքին կախուած ունենալ, այդպէս գացի ներկայանալու:

Հետզհետէ Խորհրդարանի մեծ սրահը լեցուեցաւ հայ սպաներով, որոնց մէջ՝ նաեւ մեր զորավարները: Հրաւիրուած էինք Վրէժի տրագիքայի (արձանագրութեան համար) եւ սկսանք լեցնել մեզի տրուած մանրամասն հարցարանները: Ժամեր կը սահէին եւ չէինք դիտեր, թէ ինչով վերջանալու էր այս քննութիւնը: Յանկարծ նշտարեցինք, որ զինեալ պահակ դրուած է դրան առջեւ, իսկ քիչ ետք հեծելազօրքը պաշարեց մեր գտնուած շէնքը: Մէկ առ մէկ սենեակ մը տարին մեզ, խուզարկեցին եւ ինձմէ խլեցին սուրս:

Արդէն մութը սկսած էր, երբ մեզ՝ 800ի մօտ սպաներ՝ դուրս հանեցին. (յաջորդ օր Ղամարլուի եւ Դիլիճանի մէջ ձերբակալուածներով այդ թիւը պիտի հասնէր 1200ի):

Խորհրդարանի շէնքին առջեւ կարդի շարուեցանք, շրջապատուած հեծելազօրքով եւ զնդարորդներու վաշտով մը: Հասկնալի էր, որ օտար իշխանութեան մը մօտ գերի կը նկատուէինք: Խումբը դանդաղ քայլերով սկսաւ յառաջանալ Աստաֆեան մեծ պողոտայէն դէպի Քանաքեռ: Պողոտային երկու կողմերը խնուած էին Երեւանի բնակիչներէն շատեր: Կիներ, թաշկինակները իրենց աչքերուն, կ'արատուէին հեկեկալով: Ամէնքը շմամ էին այս անսպասելի դաւադրութեան ի տես: Եւ երեւակայել, որ մինչեւ այդ օրը հայ զինուորը ոռուսին դէմ զնդակ մը իսկ չէր արձակած եւ դայն ազատարար ճանչցած էր միշտ...

Բոլորովին մութ եւ սարսափելի ցուրտ էր, երբ հասանք Քանաքեռ ու տեղաւորուեցանք զօրանոցներուն մէջ: Առաւօտ միջայն կըրջանք իրարու դէմք տեսնել եւ մեր մտահոգութիւններուն շուրջ խօսակցել: Եւստով հրաման տուին անուններու ստուգում կատարել եւ ճամբայ հանուեցանք դէպի Դիլիճան:

Հազիւ մէկ երկու ժամ քալած էինք, երբ տեսանք որ Հայաստանի սպարապետ պարթեւահասակ ծերունի զորավար Նազարբէգեան անկարող էր ճամբան շարունակելու: Ընկերացող ուսուցիչները կը պոսային ու կը հայհոյէին: Սպարապետին ընկերացող զօր. Հախվերահան եւ ուրիշներ միջամտեցին. կարելի եղաւ դիւզացիներու յատուկ եզան սայլի մը վրայ դնել ծերունի Նազարբէգեանը: Ախտա կը գտնուէր գնդապետ Կուրոն, Դրոյի ղինուորականներէն, որ դեռ ձերբակալուած չէր, ան կրցաւ ձիու կառք մը տրամադրել Նազարբէգեանին:

Երեւանէն մինչեւ Աղստաֆայի կայարանը վեց օր տեւեց մեր երթը. սարսափելի ցուրտ, շատ տեղեր մէկ մէթըն աւելի ձիւնի մէջէն դժուարութեամբ կրնայինք քայլել: 1200 սպաներ քանի մը քիլոմէթրի վրայ, իրարմէ բաժան կը քալէինք, ճամբան մնացողներ եւ կորսուածներ ունեցանք:

Բազու հասնելէ ետք, քանի մը շէնքերու մէջ ցրուեցին մեզ եւ ապա ճամբայ հանեցին դէպի Ռազան, Մոսկուայէն քիչ հեռու, մեր աքսորավայրը:

Աքսորեալներուն մէջ էին զորավարներ Նազարբէգեան, Սիլիկեան, Հախվերտեան, Կամազեան եւ Շելկովնիկեան: Բոլորն ալ պահած էին իրենց բարոյական կորովը:

Բազուէն մեկնելէ ետք, կառախումբին մէջ հսկողութիւնը աւելի թուլացաւ: Ռոստովի կայարանը քանի մը տասնեակ սպաներ յաջողեցանք փախչել եւ ապաստան գտանք հայ ընտանիքներու մօտ: Մասնաւորապէս Նախիջևեանի մէջ մեզի հանդէպ դուրգուրտութեամբ վերաբերուէնք ունեցան, որպէսզի աննշար մնանք իշխանութիւններէն:

Երկու ամիս ետք, Փետր. 18ի ժողովրդական ապստամբութեան հետեւանքով, Մոսկուա նկատեց, որ հալածանքը իր համար թշնամական մթնոլորտ կը ստեղծէ, վերադարձաւ մեղմութեան քաղաքականութեան: Ընդհանուր ներում յայտարարուեցաւ եւ աքսորուած սպաները վերադարձան: Դեռ իշխանութիւնները կազմակերպուած չէին, դիւրութեամբ մենք եւս խանութեանց մոտ կայարանը՝ աքսորէ վերադարձողներուն եւ մեկնեցանք Հայաստան:

Վերադարձողները կարճ ատենի մէջ կմախք դարձած էին: Բայց տարօրինակ հողեփոխութեան մը ենթարկուած էին մանաւանդ ուստախոս հայ սպաները, ասոնք այլեւս համակրանք չունէին դէպի ուսերը, ընդհակառակն, ատելութեամբ լեցուած էին: Անոնք տեսան, թէ ոուսերը աւերեցին ու թալանեցին Հայաստանը եւ ժողովուրդը կըրկին պիտի աշխատէր իր աւերակ հայրենիքը վերաշինել յամառ ու տըքնաջան աշխատանքով:

Պորհրդային Միութեան մէջ, հայերը առաջին ըմբոստ ժողովուրդը հանդիսացան, 1921 Փետր. 18ի ապստամբութեամբ(*): Բանտերը լեցուած էին քաղաքական դործիչներով, իսկ 1200 սպաներ աքսորուած էին, երբ հայ գիւղացիութիւնը մասնաւորապէս ըմբոստացաւ եւ կարմիր բանակայինները դուրս շարտեց Երեւանէն:

Մօտ երկու ամիս տեւեց կռիւը եւ Քիֆլիսի անկումէն ետք է, որ օգնական նոր ուժերով բոլշեւիկները յաջողեցան վերադարձել Հայաստանը:

Վարկաբեկուած էր Հայաստանի Յեղկոմը եւ Լենին մասնաւոր լիազօրութիւններով Երեւան զրկեց Ալ. Միսանիկեանը, անոր տալով հետեւեալ նամակը, ուր կը տեսնուի բոլշեւիկ վարիչին ժամանակաւոր նահանջը:

«Ազրբէյջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի եւ Լեռնական Հանրապետութեանց ընկեր կոմունիստներին.—

«Ձերմագին ողջունելով կովկասի հորհրդային Հանրապետութիւնները՝ թայլ եմ տալիս ինձ յայտնելու այն յոյսը, որ նրանց սերտ միութիւնը կը ստեղծէ հաշտութեան այնպիսի մի օրինակ. որ չի տեսնուած բուրժուազիայի օրով եւ հնարաւոր չէ բուրժուական կարգերով:

«Բայց որքան էլ ազգային հաշտութիւնը կարեւոր լինի կովկասի ազգութեանց, բանուորների եւ գիւղացիների միջեւ. աւելի կարեւոր է պահպանել ու զարգացնել խորհրդային իշխանութիւնը, որպէս ընկերավարական փոխանցման շրջան: Դժուար է այդ խնդիրը, բայց կատարելապէս իրագործելի: Նրա յաջող լուծման համար ամենից կարեւորը այն է, որ Անդրկովկասեան կոմունիստները հասկանան իրենց կացութեան իրատեսակութիւնը, իրենց հանրապետութիւնների կարգ ու սարքը, որ տարբեր է Ռ. Ս. Ֆ. Խ. հանրապետութեան կացութիւնից եւ պայմաններից, հասկանան, որ աներաժեշտ է ոչ թէ ընդօրինակել մեր գործելակերպը, այլ մտածուած կերպով ձեւափոխել այն՝ կոնկրետ պայմանների տարբերութեան կիրառելի եղանակով:

«Ռուսաստանում խորհրդային իշխանութիւնը ունեցել է Ռ. Ս. Ֆ. Խ. հանրապետութեան քաղաքական եւ փոքր չափով էլ զինուորական աջակցութիւնը: Այդ արմատական տարբերութիւն է:

(*) Դէպքին մանրամասնութիւնը կարելի է Ե. Յ. Գ. Փրակայի Ռուսոպական Միութեան 1927ին հրատարակած «Փետր. 18» գրքոյէն մէջ եւ այդ մասին բազմաթիւ յուշեր «Հայրենիք» ամսագրին մէջ:

«Երկրորդ. — Այժմ դաշնակիցներից վախենալու հարց չկայ արշավանքների տեսակետից, ոչ էլ վրացական. ագրքէյջանեան, հայկական, Դադստամի, Լեռնական սպիտակ գուարդիականների աջակցութիւնից:

«Երրորդ. — Ռուսաստանը տնտեսապէս կտրուած է եղել եւ մեծ չափով մնում է կտրուած առաջաւոր դրամատիրական երկիրներից: Կովկասը կարող է աւելի շուտ եւ աւելի հեշտ «համակերպութիւն» եւ ազդրամեջին փոխանակութիւն հաստատել դրամատիրական Արեւմուտքի հետ:

«Ամբողջ տարբերութիւնը այդ չէ': Բայց մատնանշուած տարբերութիւններն էլ բաւական են՝ հասկանալու համար. որ անհրաժեշտ է այլ գործելակերպ:

«Աւելի մեղմութիւն, գգուշութիւն, գիշողութիւն դէպի մանր բարժուագիւտ, մտաւորականութիւնն ու, յատկապէս գիւղացիութիւնը: Տնտեսական մեծ թափով եւ շուտափոյթ օգտագործել դրամատիրական Արեւմուտքը՝ մեծաշնորհների եւ ապրանքային փոխանակութեան ֆազակականութեամբ: Նախքը, մանգանէզը, ածուխը, տկվարչելեան հանքերը, պղինձը — այս է համալսին անագիւտ հարստութիւնների ոչ լրիւ ցուցակը: Լիակատար հնարաւորութիւն կայ լայն չափով զարգացնելու մեծաշնորհների եւ ապրանքային փոխանակութեան ֆազակականութիւնը արտասահմանի հետ:

«Այդ պէտք է անել լայն չափով, հաստատակամբ, հնարամբութեամբ՝ ամէն կերպ օգտագործելով այդ՝ բարելաւելու բանուորների եւ գիւղացիների վիճակը եւ հրաւիրելու մտաւորականութիւնը տնտեսական շինարարութեան գործին: Օգտագործելով ապրանքային փոխանակութիւնը իտալիայի, Ամերիկայի եւ այլ երկիրների հետ՝ բոլոր ուժով զարգացնել հարուստ երկրի արտադրական ուժերը, սպիտակ ածուխը, ռուգումը: Ոռոգումը առանձնապէս կարեւոր է, որպէսզի ամէն գնով բարձրացուի հողագործութիւնն ու ամասնապահութիւնը:

«Աւելի դանդաղ, աւելի գգուշաւոր, աւելի սխտեմատիկ փոխանցում դէպի ընկերվարութիւնը, ահա՛ թէ ինչ է հնարաւոր եւ անհրաժեշտ: Կովկասի հանրապետութիւնների համար, ի գանազանութիւն Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետութիւնից, ահա՛ թէ ինչ պէտք է հասկանալ եւ կարողանալ իրագործել՝ տարբերելով մեր գործելակերպից:

«Մենք բացիմք առաջին ճեղքը համաշխարհային դրամատիրութեան մէջ: Ճեղքը բացուած է: Մենք պաշտպանեցինք մեզ բոլոր Դաշնակիցներից: Նրանց պաշարման աջակցութիւնը, նրանց զինուորական

օգնութիւնը վայելող սպիտակների՝ էս-էրներին, մեծշուէիկների դէմ՝ կատաղի. գերբնական, ծանր ու դժուարին, դաժանօրէն գահավէժ պատերազմում:

«Զեզ. Կովկասի կոմունիստ ընկերներ, հարկաւոր չէ ճեղքեր բանալ. պէտք է գիտեմուլ մեծ գգուշաւորութեամբ ու սխտեմատիկօրէն ստեղծել նորը՝ օգտագործելով 1921 թուականի ձեզ համար նպաստաւոր միջազգային կացութիւնը: 1921ին ե՛ւ Եւրոպան, ե՛ւ ամբողջ աշխարհը այն չեն՝ ինչ որ էին 1917 եւ 1918 թուականներին:

«Ո՛չ թէ պէտք է ընդօրինակել մեր գործելակերպը, այլ անկախօրէն խորհրդածել նոր իրատեսակութեան. պայմանների եւ արդիւնքների պատճառների մասին. ձեզ մօտ պէտք է իրագործել 1917-1921 թուականների փորձի ոչ թէ տատր. այլ ոգին. միտքը. դասերը:

«Տնտեսապէս՝ միանգամից պէտք է յենուել դրամատիրական արտասահմանի հետ ապրանքային փոխանակութեան վրայ. ժլատ չլինել. բո՛ղ նա ստանայ տասնեակ միլիոնաւոր համալսին ամենաբանկազին արտադրութիւններ:

«Այնտեղ միանգամայն բարելաւել գիւղացիների վիճակը եւ ձեռնարկել ելեկտրականացման, ռոոգման խոշոր աշխատանքների: Ոռոգումը ամէնից շատ է հարկաւոր եւ ամէնից աւելի կը կերպարանափոխել երկիրը. կը վերածնէ այն. կը թաղէ անցեալը. կ'ամրապնդէ ընկերվարութեան փոխանցումը:

«Ներողութիւն նամակիս անխնամութեան համար. որ պէտք է գրէի հապնեկօրէն՝ ընկեր Մեասնիկեանի հետ ուղարկելու համար: Կրկին անգամ ուղարկում եմ ամենաչեղձ ուղղոյններս եւ բարեմագրութիւններս կովկասի խորհրդային հանրապետութեանց բանուորներին ու գիւղացիներին»:

Վ. Լենին

Մոսկուա, 11 Ապրիլ, 1921

ԼՈՆՏՈՆԻ ԽՈՐՀՐԴԱԾՈՂՈՎԸ

(1921 ՓԵՏՐ. 21 — ՄԱՐՏ 13)

Հայաստանի Հանրապետութեան վարչապետներէն Ալեքսանդր Խատիսեան, իր «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը» գործին մէջ (էջ 294), հետեւեալ կերպով կը ներկայացնէ Լոնտոնի խորհրդածոզովը: Անպիտ կը փորձէ իր վէճերը կարգադրել Թուրքիոյ եւ Ռուսաստանի հետ: Նոյն թուականին Թուրք պատուիրակութիւն մը Մոսկուայի մէջ բանակցութիւններու սկսաւ եւ համաձայնութիւն մը կնքեց:

Լոնտոնի խորհրդածոզովին մասնակցեցան՝ լորտ Քըրզըն (Անգլիա), Պրիան (Ֆրանսա) ընկերակցութեամբ մարաջախտ Ֆօշի եւ պ. Պերքըլոյի, կոմս Սֆորցա (Իտալիա): Խորհրդածոզովին նախագահեց վարչապետ Լոյտ ձորմը: Լոնտոն եկած էին թուրքերէն Պեֆիր Սամի պէյ (էնկիւրիի կառավարութեան անդամ) եւ Պալոյ թուրք կառավարութեան կողմէ Թեվֆիփ փաշա. երկու պատուիրակութիւնները համերաշխաբար գործակցեցան, պահանջելով որ Թուրքիոյ 1914ի սահմանները վերականգնուին: Խորհրդածոզովը լսեց երկու հայ պատուիրակութիւններու ներկայացուցիչները՝ Պօղոս Նուպար փաշան եւ Ա. Ահարանեանը, որոնք պահանջեցին Սեւրի դաշնագրի տրամադրութիւններու անփոփոխ պահպանումը:

Հայ պատուիրակները մասն կ'ըսէին, թէ խորհրդային իշխանութիւնը նոյն օրերուն արդէն տապալած է Հայաստանի մէջ՝ Փետր. 18ին տեղի ունեցած ապստամբութեան հետեւանքով, հետեւաբար վերականգնուած է Հայաստանի կատարեալ անկախութիւնը:

Լորտ Քըրզըն կը մատնանշէ դժուարին կացութիւնը, որուն մէջ կը գտնուէր խորհրդածոզովը Հայաստանի վերաբերմամբ. թուրքերը փաստօրէն գրաւած են բոլոր վիլայէթները, որոնք կցուելու էին Հայաստանի, եւ նոյնիսկ Ռուսահայաստանի մէկ մասը. եւրոպական պետութիւններ չեն կարող այնտեղ ուղարկել զօրքեր, իսկ ռուսական Հայաստանը թէեւ ազատուած է խորհրդային լուծէն, բայց կը գտնուի նոր յարձակման սպառնալիքին տակ:

Մարտ 12ին խորհրդածոզովը առաջարկի ձեռով յայտնեց յայնեանուն եւ թուրքերուն, իր որոշումը՝ բաղկացած 10 կէտերէ: Յայտնեց միեւնոյն ատեն, թէ իր առաջարկները կը կազմեն անբաժանելի ամբողջութիւն մը, զոր պէտք է կա՛մ ամբողջապէս ընդունիլ կամ մերժել: Այդ առաջարկները կը պարունակեն կարգ մը գիշումներ թուրքերուն:

Հայաստանի մասին կը խօսէր Յրդ կէտը, որ խմբագրուած էր այսպէս.

«9. Հայաստան. — Ինչ կը վերաբերի Հայաստանին, ներկայ պարտաւորութիւնները կարող են յարմարցուիլ. պայմանով, որ Թուրքիան ճանաչուի թրքահայերու իրաւունքները Ազգային Օճախի մը համար Ասիական Թուրքիոյ արեւելեան սահմաններուն մէջ եւ համաձայնի ընդունիլ այն յանձնաժողովի որոշումը, որը կը նշանակուի Ազգերու Լիկայի հորհուրդէն՝ նպատակ ունենալով տեղւոյն վրայ ուսումնասիրել այն հողամասերու խնդիրը, որոնք արդարացի կը լինէր այդ նպատակի համար փոխանցել Հայաստանին»:

Փոխանակ Սեւրի դաշնագրի «ազատ եւ անկախ» բառերուն, յիշուած է օճախ անորոշ անունը:

Անգլիոյ տեսակէտով Օճախը պէտք է լինէր կիլիկիոյ մէջ, իսկ Ֆրանսայի տեսակէտով՝ արեւելեան վիլայէթներու մէջ:

Խորհրդածոզովի գումարման շրջանին, Մարտ 9ին, ֆրանսացիները եւ թուրքերը արդէն համաձայնութեան եկած էին Պրիանի եւ Պեֆիր Սամիի միջոցով եւ Ֆրանսա կը կրճատէր իր ազդեցութեան շրջանակները Սուրիոյ մէջ, յօգուտ Թուրքիոյ: Ֆրանսիին Պալոյն մեկնեցաւ էնկիւրիի եւ կնքուեցաւ ֆրանսեւթուրք դաշնագիրը:

Իսկ Մարտ 12ին Իտալիոյ արտաքին նախարար կոմս Սֆորցա եւ Պեֆիր Սամի պէյ ստորագրեցին անջատ համաձայնութիւն մը, որով Իտալիա յանձն կ'առնէր հաշտութեան դաշինքի կնքումի ատեն պաշտպանել Թուրքիոյ շահերը:

Մարտ 16ին, Անգլիա ստորագրեց համաձայնութիւն մը Սովետներու հետ, որով վերջինները կը պարտաւորուէին հրաժարիլ պրոպագանտ անգլիական գաղութներու մէջ, իսկ անգլիական կառավարութիւնը կը պարտաւորուէր չպաշտպանել այն նարակազմ պետութիւնները, որոնք կազմուած էին նախկին ռուսաց կայսրութեան երկիրներէն: Այդ առաջին հարուածն էր Հայաստանին, որովհետեւ Անգլիան արդէն կը պարտաւորուէր չօգնել հայերուն՝ իրենց անկախութիւնը վերականգնելու պայքարին մէջ:

Լոնտոնի խորհրդածոզովին հետ, ինչպէս ըսինք, միաժամանակ Մոսկուայի մէջ տեղի կ'ունենար խորհրդածոզով մը Խորհրդ. Ռուսաստանի եւ Թուրքիոյ միջեւ: Բանակցութիւնները յանգեցան ռուս-թրքական դաշնագրին. որ կնքուեցաւ 1921 Մարտ 16ին, այսինքն՝ ճիշդ այն օրը, երբ ստորագրուեցաւ անգլիառուս համաձայնութիւնը:

Իսկ Լոնտոնի խորհրդածոզովին առաջարկները մերժուեցան թէ՛ թուրքերու եւ թէ՛ յայներու կողմէ:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ ԵՒ ՏԱՃԿԱՍՏԱՆ

(ՄՈՍԿՈՒԱՅԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ)

Բարեկամութեան եւ եղբայրութեան դաշն Ռուսաստանի Սոց. Դաշն. կոմ. Կոմիտեի. Հանրապետութեան եւ Տանկաստանի միջեւ, կնքուած *Մոսկուա*, 16 Մարտի 1921 (տանկական բուականով՝ 1337) .

(Լիազօրներ Ռուսաստանի Սոց. Դաշն. կոմ. Կոմիտեի. Հանրապետութեան՝ Չիչերին եւ կոմկուսով, Տանկաստանի՝ Խուսուֆ Քեմալ պէյ. Ռիզա Նուր պէյ եւ Ալի Ֆուատ փաշա) :

Ռուս. Սոց. Դաշն. կոմ. Կոմիտեի. Հանրապետութեան կառավարութիւնը եւ Տանկաստանի Ազգային Մեծ Ժողովի կառավարութիւնը. բաժանելով ազգերի եղբայրութեան սկզբունքները եւ ժողովուրդների ինքնորոշման իրաւունքները, նկատելով իրենց մէջ գոյութիւն ունեցող համերաշխութիւնը աշխարհակալութեան դէմ մղուող կռուի մէջ, այլ եւ այն փաստը. թէ երկու ժողովուրդներէն մէկի կամ միւսի համար ստեղծուած բոլոր դժուարութիւնները կը վատարացնեն մասն միւսի վիճակը, միեւնոյն ժամանակ կատարելապէս բազմաթիւ իրենց մէջ հաստատել մշտական սրտագին փոխադարձ յարաբերութիւններ ու անհակոխի անկեղծ բարեկամութիւն, հիմնուած երկու կողմերու փոխադարձ շահերու վրայ, որոշեցին կնքել բարեկամութեան եւ եղբայրութեան դաշնագիր :

30Դ. 1. — Դաշնադիր կողմերէն ամէն մէկը կը համաձայնի չճանչնալ հաշտութեան որեւէ դաշնագիր... որ ընդունելու հարկադրանքի տակ է գտնուել դաշնադիր կողմերէն միւսը : Ռուս Ս. Դ. Խ. Հանրապետութեան կառավարութիւնը համաձայն է չճանչնալ միջազգային որեւէ ակտ, որ կը վերաբերի Տանկաստանին եւ չէ ճանչցուած Տանկաստանի՝ ներկայիս Ազգ. Մեծ Ժողովի ներկայացուցիչ հանդիսացող ազգային կառավարութեան կողմէ :

Տանկաստան ըսելով՝ ներկայ դաշնագրի մէջ կը հասկցուի այն հողամասը, որ նշանակուած է 1336 (1920) թ. Ռուրիքի Ազգային Ռիստի մէջ :

Հաստատումն Տանկաստանի հիւսիս-արեւելեան սահմանի Ռուս. Ս. Դ. Խ. Հանրապետութեան հետ հետեւեալ գծով — Սեւ ծով, Խէտիս-Մթա լեռ, Շաւշեթ եւ Քաննի-դաղ լեռներու ջրբաժան գիծը, Արտաճանի եւ Կարսի սանջագներու հիւսիսային վարչական սահմանը, Արփաչայ եւ Արաքս գետերու հովիտը՝ մինչեւ ստորին Գարաաուի գետաբերանը :

30Դ. 2. — Տանկաստանը կը համաձայնի *վրաստանին* զիջիլ

վեհապետութիւնը *Բաթում* քաղաքի ու նաւահանգիստի եւ այն հողամասի վրայ, որ կը գտնուի յող. 1ի մէջ ցայց տրուած սահմանէն հիւսիս ու կը կազմէ Բաթումի գաւառի մէկ մասը, պայմանով որ՝ 1. ներկայ յօդուածի մէջ նշանակուած վայրերու բնակչութիւնը... պիտի օժտուի տեղական լայն ինքնավարութեամբ (աւտոնոմիա) վարչական տեսակետէն, ապահովելով իւրաքանչիւր համայնքի մշակութային եւ կրօնական իրաւունքները, այլեւ բնակչութեանը ենարարութիւն տրուի սահմանելու հողային այնպիսի օրէնք, որ համապատասխան ըլլայ անոր ցանկութեան. 2. Տանկաստանին պիտի տրուի ազատ, անմաքս տրանզիտ Բաթումի նաւահանգիստով դէպի Տանկաստան առաւուռող եւ կամ այնուեղէն բերուող ամէն կարգի ապրանքներու համար...

30Դ. 3. — Դաշնադիր երկու կողմերը համաձայն են այն մասին, որ *Նախիջևանի շրջանը* կը կազմէ ինքնավար (աւտոնոմ) հողամաս մը *Ազրբէջանի* հովանաւորութեան տակ, պայմանով որ Ազրբէջանը այդ հովանաւորութիւնը չզիջի որեւէ երրորդ պետութեան :

30Դ. 4. — Դաշնադիր երկու կողմերը հաստատելով մերձաւորութիւնը Արեւելի ժողովուրդներու ազգային-ազատագրական շարժումներու եւ Ռուսաստանի աշխատաւորներու կողմէն ընկերային նոր կարգի համար մղուող պայքարի միջեւ, հանդիսաւորապէս կը ճանչնան այդ ժողովուրդներու ազատութեան եւ անկախութեան իրաւունքը, հաւասարապէս եւ իրաւունք՝ ընտելու կառավարական այն եղանակը, որ համապատասխան է իրենց ցանկութեան :

30Դ. 5. — Ապահովելու համար *Նեղուցներու* բացումն ու ազատ երթելակը անոնց միջով բոլոր ազգերու առեւտրական յարաբերութեանց համար, դաշնադիր երկու կողմերը կը համաձայնին *Սեւ ծովի* եւ *Նեղուցներու* միջազգային կանոնագրի վերջնական մշակումը յանձնել ծովափնեայ երկիրներու պատուիրակներէն բաղկացած յատուկ յարիրդաժողովին, պայմանով որ անոր ընդունած վճիռները որեւէ վեցս պիտի չհասցնեն Տանկաստանի գերիշխանութեան, անոր ապահովութեան ու մայրաքաղաքին՝ Կ. Պոլսոյ :

30Դ. 6. — (Երկու երկիրներու միջեւ նախապէս կնքուած բոլոր դաշնագիրները փոխադարձաբար կ'ընդունուին որպէս ո՛չ համապատասխան երկու կողմերու շահերուն, ուստի եւ՝ ջնջուած) :

30Դ. 7. — Ռուս. Ս. Դ. Խ. Հանրապետութեան կառավարութիւնը անհամապատասխան համարելով առանձնաշնորհումներու (փոփոխութիւն) կարգը (ոճիմ) ամէն մէկ երկրի ազգային ազատ զարգացման, այլ եւ անոր՝ այդ երկրի վեհապետական իրաւունքներու լիակատար կիրաւումն, ուժը կորսնցուցած եւ ջնջուած կը համարուի ամէն

կարգի գործադրութիւն եւ իրաւունք, որ այս կամ այն առնչութիւնն ունի այդ ռեժիմի հետ:

80Գ. 8.— (Փոխադարձ պարտաւորութիւն՝ թոյլ չտալու, որ կազմուին ու գոյութիւն ունենան այնպիսի կազմակերպութիւններ եւ խմբակցութիւններ, որ ուղղուած են միւս երկրի կառավարութեան դէմ):

80Գ. 10.— (Փոխադարձ համաձայնութիւն՝ տեղական օրէնքներէն բխող իրաւունքները եւ պարտականութիւնները, բացառութեամբ ազգային պաշտպանութեան վերաբերեալ պարտականութեանց, տարածելու կողմերէն իւրաքանչիւրի այն ֆազաֆազիներու վրայ, որ կ'ապրին միւս կողմի հողամասին մէջ):

80Գ. 11.— (Փոխադարձ կիրարկումն առաւելագոյն նպաստաւորման՝ կողմերէն իւրաքանչիւրի այն ֆազաֆազիներու վերաբերմամբ, որ կ'ապրին միւսի հողամասին վրայ):

80Գ. 15.— Թուսաստանը կը պարտաւորուի Անդրկովկասի հանրապետութիւններու վերաբերմամբ առնել անհրաժեշտ ֆայլեր, որ այդ հանրապետութիւնները Տանկաստանի հետ իրենց կնքելիք դաշնագիրներու մէջ ընդունին ներկայ դաշնագրի այն յօդուածները, որ անմիջապէս իրենց կը վերաբերի:

**ՍԹԱԼԻՆԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ ԱՌԹԻԻ
ԴՐԺՈՒՄ ՏՐՈՒԱԾ ԽՈՍՏՈՒՄՆԵՐՈՒՆ**

Հայաստանի խորհրդայնացումէն երկու օր ետք, Ազգութիւններու Կոմիսար Սթալին «Փրաւտա»-յի 1920 Դեկտ. 4ի թիւին մէջ, «Կեցցէ խորհրդային Հայաստանը» խորհրդին տակ, յայտնելէ ետք որ Համաձայնականները եւ Նախագահ Ուիլսոն խաբած են Հայերը, իսկ դաշնակները սովի մատնած են երկիրը, կ'աւելցնէ.

Նոյեմբեր 30ին Հայաստանի Յեղկոմի նախագահէն ողջոյնի հեռագիր կը ստացուի ընկ. Լենինի անունին՝ հորհրդային Հայաստանի ծնունդի եւ Դիլինգան ֆազաֆի գրաւման մասին Յեղկոմի կողմէ: Դեկտ. 1ին հորհրդային Ազգայնամբ ինքնակամօրէն կը հրաժարի հիւսիսային շրջաններէն եւ կը յայտարարագրէ Չանգեզուրի, Նախիջևանի եւ Լեռ-

նային Վարաբաղի փոխանցումը հորհրդային Հայաստանի: Դեկտ. 1ին Յեղկոմը կը ստանայ թուրք հրամանատարութեան ողջոյնը: Դեկտ. 2ին կը ստացուի ընկ. Օրժոնիկիձէի հաղորդագրութիւնը այն մասին, որ Երեւանի դաշնակ կառավարութիւնը ֆշուած է եւ Հայաստանի զօրքերը իրենք զիրենք դրած են Յեղկոմի տրամադրութեան տակ:

«Այժմ Հայաստանի մայրաքաղաքը, Երեւան, կը գտնուի Հայաստանի հորհրդային իշխանութեան ձեռքը»:

Այս ուրախ լուրերը հաղորդելով՝ Սթալին կ'եզրափակէր.

«Դարաւոր թշնամանքը, որ կար Հայաստանի եւ զինք շրջապատող մահմետական երկիրներու միջեւ, վերջ գտաւ մէկ հարուածով՝ եղբայրական համերաշխութեան հաստատումով Հայաստանի, Թուրքիոյ եւ Ազրպէյճանի աշխատաւորներու միջեւ:

«Թող գիտնան բոլորը, որոնց որ հարկ է գիտնալ, թէ այսպէս կոչուած հայկական «կնքիտ»ը, որու վրայ ապարդիւն կերպով գլուխ կտորած են աշխարհակալ դիւանագիտութեան հին գայլերը, ի վիճակի եղաւ լուծելու ՄԻԱՅՆ հորհրդային իշխանութիւնը:

«Կեցցէ՛ հորհրդային Հայաստանը»:

Հակառակ վերեւի պաշտօնական յայտարարութեան որ «Ռորհրդային Ազրպէյճան ինքնակամօրէն կը հրաժարի Հայաստանի հիւսիսային շրջաններէն եւ կը յայտարարագրէ Չանգեզուրի, Նախիջևանի եւ Լեռնային Ղարաբաղի փոխանցումը Հայաստանին», հազիւ երեք ամիս ետք, 1921 Մարտ 16ին, Մոսկուայի մէջ կը կնքուի ռուսեւթուրք դաշինք մը, առանց Հայաստանի կարծիքը առնելու, Ազրպէյճանին կը սրուի Նախիջևանը:

Մոսկուայի դաշինքը կ'ըսէ.

«Դաշնադրող երկու կողմերը կը համաձայնին, որ Նախիջևանի շրջանը — այն սահմաններու մէջ, որ մատնանշուած են սոյն դաշնագրի 1 (Գ) յաւելումին մէջ — կազմէ ինքնավար երկրամաս մը, Ազրպէյճանի հոգատարութեան տակ, պայմանով, որ Ազրպէյճանը սոյն հոգատարութիւնը պիտի չզիջի ոեւէ երրորդ պետութեան մը» (տե՛ս «Ժողովածու Գործող Դաշինքներու», Մոսկուա, 1935, էջ 159):

Թուսիս աչ միայն հ. Ազրպէյճանի կը զիջէր Նախիջևանը, որմէ Ազրպէյճան կ'աւելի՛ր եւ եղբայրաբար՝ հրաժարած էր 1920 Դեկտ. 1ին, այլ եւ յանձնառու կ'ըլլար Թուրքիոյ առջեւ թոյլ չտալու, որպէսզի հ. Ազրպէյճան իրեն յանձնուած հայկական այդ հողամասի հոգատարութիւնը փոխանցէ որեւէ այլ պետութեան մը (ակնարկը՝ Հայաստանի): Նոյնութեամբ այս նոյն յօդուածը, առանց հոգատարութեան փոխանցումին վերաբերող արգելիքին, տեղ գտած էր աւելի ուշ, 1921

Հոգտ. 13ին կարսի մէջ կնքուած ծանօթ դաշինքի 5րդ յօդուածին մէջ («Ժողովածու Գործող Դաշինքներու», 1935, Մոսկուա, էջ 168):

Նախիջեւանին վերաբերող այս յօդուածին առիթով, բոլշեփի Բ. Բոքեան դառնութեամբ կը նկատէր իր երկհատոր «Արմենիայ»ի մէջ (Հ. Բ., Մոսկուա, 1929, էջ 303):

«ԱՅՍ ԵՕԻՈՒԱԾԸ ԿԸ ԼՐԱՑՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՁՆԱՏՐԻՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐԿԻՈՅ ԱՌՋԵԻ ԵՒ ՋԵՐՈՑԻ ԿԸ ՎԵՐԱԾԵՐ ԴԱՇՆԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍԸ»:

Երկու ամիս ետք, երբ ապտամբ կը մնար Ջանգեզուր, նոր խարէութիւն մը գործադրեցին բոլշեփիները: 1921 Մայիս 21ին բոլշեփիկ պատուիրակներ բանակցութիւններ կը վարեն Լեռնահայաստանի կառավարութեան հետ:

«ԶԱՆԳԵԶՈՒՐԸ ԵՒ ԼԵՌՆԱՑԻՆ ԴԱՐԱԲԱՂԸ,— գրաւորապէս կը վկայէին հորհրդային գոյգ պատուիրակները՝ Մ. Մելիկով (յաման կարմիր Բանակի) եւ Ա. Կարինեան (յամուն Խ. Հայաստանի կառավարութեան),— ՈՐՊԷՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՔԱԿՏԵԼԻ ՄԱՍԵՐ, ՊԻՏԻ ՄԸՏՆԵՆ ՆՐԱ ՄԷՋ» (Ա. Արշակունի — «Հայաստանի Խ. Իշխանութեան բնոյթը», 1926, Գահիրէ, էջ 25):

Եւ որպէսզի տակաւին կանգուն եւ սպառէն Լեռնահայաստանը վերջնապէս վար դնէ իր գէնքը եւ լիովին անճատուր ըլլայ Խ. Իշխանութեանց, Երեւանը, անշուշտ թելադրանքովը Մասկուայի, խարդախորէն եւ նեմգամտաբար, իր 1921 Յունիս 12ի կառավարական աքթով, կը յայտարարէր:

«Ազրբէջանի Սոցիալիստական հորհրդային Հանրապետութեան եւ Հայաստանի Սոցիալիստական հորհրդային Հանրապետութեան կառավարութիւնների միջեւ եղած համաձայնութեան հիման վրայ, յայտարարում է, որ Լեռնային Ղարաբաղն այժմեանից կազմում է Հայաստանի Սոցիալիստական հորհրդային Հանրապետութեան անբաժան մասը» (Վ. Նաւասարդեան — «Ռորհրդային քաղաքականութիւնը Հայ կական Հարցում», Փարիզ, 1938, էջ 34):

Այս աքթին տակ կային ստորագրութիւնները Հ. Ս. Խ. Հ. Ժողկոմների հորհրդի նախագահ Ա. Միասնիկեանի (Ա. Մարտունի) եւ քարտուղար Մ. Ղարաբէկեանի:

Օր մը վերջ. 1921 Յունիս 13 թուակնով, Երեւանի հորհրդային կառավարութիւնը նոր աքթով մը կը յայտարարէր:

«Լեռնային Ղարաբաղը վերջին համաձայնութեամբ (Ազրպէյճանի հետ) Հայաստանի հորհրդային կառավարութեան կողմից յայտարարուած է Հայաստանի անբաժան մասը» (անդ, էջ 35):

Իսկ աքթին տակ, անոր հանդէպ դիրախաւատ հայ ժողովրդի լրիւ վստահութիւնը շահած ըլլալու համար, կային կառավարութեան հիմնականներուն եւ քարտուղարին ստորագրութիւնները.— Ա. Միասնիկեան, Գ. Մակինցեան, Ա. Բէզդաւտեան, Ս. Սրապիոնեան (Լուկաշին), Ա. Կարինեան եւ Մ. Ղարաբէկեան: («Յուսարեք», 1947 Դեկտ. 16):

Այս խոստումները, յանձնառութիւնները երբեք չյարդուեցան բոլշեփիներու կողմէ: Քանի մը ամիս ետք պարտադրեցին Հայաստանը Կարսի մէջ ստորագրելու դաշինք մը որով լիովին գոհացում կը տրուէր Թուրքիոյ:

ԿԱՐՍԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Արդի Հայաստանի սահմանները Թուրքիոյ հետ, ճշդուած են 1921 Հոկտ. 13ին Կարսի դաշնագրով, որ կնքուեցաւ Ռուսաստանի ընկերվար դաշնակցային հանրապետութեան կողմէ, մասնակցութեամբ Հայաստանի, Ազրպէյջանի, Վրաստանի խորհրդային հանրապետութիւններուն եւ Թուրքիոյ:

Հայաստանի կառավարութեան կողմէ ստորագրեցին արտաքին գործերու գործավար Ասքանազ Մուսեան եւ ներքին գործերու գործավար Պողոս Մակինցեան:

Ազրպէյջանի կողմէ՝ Եախտախտինսկի. Վրաստանի՝ Եալվա Էվիա եւ Ալեքսանտր Սվամիձէ, Թուրքիոյ՝ Քեազիմ Գարապէջի. Վելի պէյ, Մուխտար պէյ, Մէմտու Շէվրէթ պէյ, Ռուսաստանի՝ Ծակով Գանէցկի:

Ստորեւ կուտանք Հայաստանի վերաբերեալ յօդուածները:

Բարեկամութեան դաշնագիր մէկ կողմէն Հայաստանի Ընկերվարական հորհրդային Հանրապետութեան, Ազրպէյջանի Ընկերվարական հորհրդ. Հանրապետութեան եւ Վրաստանի Ընկերվարական հորհրդ. Հանրապետութեան եւ միւս կողմէն Թուրքիոյ միջեւ կնքուած Ռուսաստանի Ընկերվար. Դաշնակցային հորհրդ. Հանրապետութեան մասնակցութեամբ. 1921 Հոկտ. 13ին. կարսի մէջ:

Հայաստանի, Ազրպէյջանի եւ Վրաստանի Ընկերվար. Հանրապետութեանց կառավարութիւնները մէկ կողմէն եւ Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովի կառավարութիւնը միւս կողմէն, ազգութիւններու եղբայրութեան եւ ժողովուրդներու ինֆորմաշիան իրաւունքը յար-

գելով, իրենց միջև մշտական սրտագին փոխարարություններ և անընդհատուող անկեղծ բարեկամութիւն հաստատելու ցանկութեամբ ոգեւորուած, որ հիմնուած է երկու կողմերի փոխադարձ շահերու վերայ, — որոշեցին Ռուսաստանի Ընկերով. Դաշնակց. հորհրդային Հանրապետութեան մասնակցութեամբ. կնքել բարեկամութեան դաշն և այս նպատակով իրենց լիազօրներ նշանակեցին:

Հայաստանի Ընկերով. հորհրդ. Հանրապետութեան կառավարութիւնը՝ արտ. գործ. ժող. կոմիսար Ասֆանազ Մուսեան և ներքին գործոց կոմիսար Պօզոս Մակինցեանին:

Ազրպէյջանի հորհրդ. Հանր. կառավարութիւնը՝ պետկ. վերահսկ. ժող. կոմիսար Շախտախտիսկիին:

Վրաստանի Ընկ. հորհրդ. Հանրապետութեան կառավարութիւնը՝ ռազմածով. ժող. կոմիսար Շալվա Էլվիային և արտ. գործ. ժող. կոմիսար Ալեքսանտր Սվամիճէին:

Թուրքիոյ Ազգ. Մեծ Ժողովի կառավարութիւնը՝ Ազգ. Մեծ Ժողովի սնդամ և արեւել. նախտի հրամանատար Քեազիմ Գարապէֆիին, Ազգ. Մեծ Ժողովի սնդամ Վելի բէյին, հանրային աշխատանքների պետական քարտուղարի նախկին օգնական Մուխթար բէյին, Թուրքիոյ լիազօր ներկայացուցիչին Ազրպէյջանու՛ր Մէմուու Շէվրէք բէյին:

Ռուսաստանի Ընկերով. հորհրդ. Դաշն. Հանրապետութեան կառավարութիւնը՝ իր լիազօր ներկայացուցիչը Լատվիայի մէջ Նակով Գանէցկիին:

Որոնք փոխանակել ենտ օրինական նանչցուած լիազօրութիւնները, համաձայնութեան եկան հետեւեալի մասին.

ՅՕԴ. 1.— Թուրքիոյ Ազգ. Մեծ Ժողովի կառավարութիւնը և Հայաստանի, Ազրպէյջանի և Վրաստանի Ընկերով. հորհրդ. Հանրապետութեան կառավարութիւնները կը նկատեն ջնջուած և ոյժ չներկայացնող այլևս այն դաշնագրերը, որոնք կնքուած են իրենց վեհապետական իրաւունքները կիրառող պետութիւններու միջև այն հողամասի վրայ, որ ներկայիս կը մտնէ պայմանադիր կողմերու հողամասերում մէջ, և այն դաշնագրերը, որոնք կնքուած են երրորդ պետութեանց միջև: Անդրկովկասեան Հանրապետութիւններու վերաբերեալ:

Հաստատուած կը համարուի, որ ներկայ յօդուածը կիրառելի չէ 1921 Մարտ 16ին Մոսկուայի մէջ կնքուած ռուս-տանկական դաշնագրի վերաբերմամբ:

ՅՕԴ. 2.— Պայմանադիր կողմերը կը համաձայնին չնանչնալ որեւէ հաշտութեան դաշնագիր կամ այլ կարգի միջազգային ակտ, որը անոնցմէ մէկը ուժով ստիպուած պիտի ըլլար ընդունիլ: Ասոր հետե-

ւանով՝ Հայաստանի, Ազրպէյջանի և Վրաստանի Ընկերով. հորհրդ. Հանրապետութեան կառավարութիւնները կը համաձայնին չնանչնալ որեւէ միջազգային ակտ, որ վերաբերում է Թուրքիոյ, բայց որ չէ նանչցուած Տանկաստանի սզգային կառավարութեան կողմէ, որ այժմ կը ներկայացուի Ազգային Մեծ Ժողովով:

Թուրքիոյ անունին տակ. ներկայ դաշնագրի մէջ, կը հասկըցուին այն հողամասերը, որոնք մտած են Թուրքիոյ Ազգային Ուխտին մէջ 1920 Յունուար 2ին (1336) և մշակուել և հոշակուել են օսմանեան պատգամաւորական խորհրդարանի կողմէն և Պոլսոյ մէջ և ներկայացուել է մամուլին և բոլոր պետութիւններուն):

Իր կողմէն Թուրքիոյ Ազգ. Մեծ Ժողովի կառավարութիւնը կը համաձայնի չնանչնալ որեւէ միջազգային ակտ, որ չէ նանչցուած Հայաստանի, Ազրպէյջանի, Վրաստանի հորհուրդներուն կողմէն ներկայացուած համապատասխան կառավարութիւններու կողմէն:

ՅՕԴ. 4.— Թուրքիոյ հիւս. արեւելեան սահմանը (համաձայն ռուս ընդհ. սպայակոյտի քարտէսի՝ չափանիշ 1/21,000-5 վերստ 1 մտանչափի մէջ) կ'որոշուի այն գծով, որ կը ուզուի Սեւ ծովի եզրերը գտնուող Սարսնի գիւղի մօտ, կ'անցնի հետիւ-Մքառը, այդ սահմանը յետոյ կը հետեւի Արտասանի և կարսի սանճագներու նախկին վարչական սահմաններուն, Չայ (Արփաչայ) և Արաքս գետերու հովտով, ներքին կարսայ գետի գետաբերանը (սահմաններուն մանրամասն նկարագրութիւնը, ինչպէս և անոնց վերաբերեալ հարցեր որոշուած են իրդ և 2րդ յաւելումներով և դաշնագրին կցուած քարտէսի վրայ), ստորագրուած պայմանադիր երկու կողմերէն):

Դաշնագրի և քարտէսի միջև տարակարծութիւն լինելու պարագային վճռական նշանակութիւն կը տրուի բնագրին:

Մանրամասն որոշումը և պետական սահմանը ճշդելը իրականութեան մէջ. ինչպէս նաեւ սահմանային նշաններ դնելը, կը կատարուի խառն յանձնաժողովի ձեռքով, անդամներու հաւասար թուով, պայմանադիր կողմերու և Ռուսիոյ ներկայացուցիչի մասնակցութեամբ:

ՅՕԴ. 5.— Թուրքիոյ կառավարութիւնը և հորհրդ. Հայաստանի ու Ազրպէյջանի կառավարութիւնները կը համաձայնին, որ Նախիջեանի շրջանը այն սահմաններում մէջ, որ որոշուած են այս դաշնագրի 3րդ յաւելումի մէջ, կը կազմէ ինքնավար հողամաս՝ Ազրպէյջանի հովանաւորութեան տակ (*):

(*) Այս յօդուածէն հետեւած է Մոսկուայի դաշինքին մէջ եղող սա պարբերութիւնը. ՎԱԿ պայմանով, որ Ազրպէյջան այդ շրջանաւորութիւնը չզիջէ որեւէ երրորդ պետութեան:

Հայաստանի Հանրապետության Պատուիրակութիւնը իր ատե-
նին, 1921 Նոյեմբեր 3 թուակիր յիշատակագիր մը ուղղած է Սեւրի դաշ-
նագիրը ստորագրող բոլոր պետութիւններուն, ընելով իր վերապա-
հումները այն զիջումներուն մասին, զորս այդ դաշնագիրը կարող է
առաջ բերել Սեւրի դաշնագրով եւ մըջազգային յանձնառութեան ուժով
Հայաստանի ճանչցում իրաւունքներուն մէջ:

Ռուսաստանի Կարսի դաշնադրով աճաւոր հաբում մը տուա
Հայաստանին անոր հողերը նուէր տալով զինակից թուրքերոյ: Կ'ըստի
թէ Ասքանազ Մուսեան չէր ուզած ստորագրել դաշնագիրը եւ Ռուսաս-
տանի պարտադրանքով ստորագրած էր. ժամանակ մը ետք խորհրդա-
ւոր պայմաններու տակ անձնասպան եղաւ Մուսեան:

Ա. Համաշխարհային պատերազմին հողային այնքան մեծ կո-
րուստներու ենթարկուած թուրքիան, հողերու կը տիրանար բացա-
ռապէս Հայաստանի ճակատին վրայ եւ այս՝ շնորհիւ ուսանելու րբ բա-
րեկամութեան:

1929ին Մոսկուայի մէջ տպագրուած, «Հայաստան» երկնաստոր
ռուսերէն գիրքին մէջ Բ. Բորեան կը գրէ.

«ԱԻԵԼԻ ԾԱՆՐ ԵՒ ԱԻԵԼԻ ԱՆՆՊԱՍՏ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ՝ ՔԱՆ
ԿԱՐՍԻՆՆ Է, ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՋԵՐՈՒ ՎՐԱՅ ՀԱԶԻՒ ԹԷ ԿԱՐԵԼԻ Է
ԳՏՆԵԼ:

«Խորհրդային Հայաստանի համար այդ ծանր խաղաղութիւնը,
որու նմանը պատմութիւնը չի նանչնար, քեղադրուած էր «յեղափոխու-
կան» թուրքոյ կողմէ յեղափոխական պատերազմի մէջ յաղթանակած
հայ աշխատաւոր ժողովուրդին. որ յեղափոխական խանդավառութեամբ
աջակցած էր դաշնակցական կառավարութեան պարտութեան եւ «բոլ-
շեւիկ» թուրքոյ յաղթանակին» (Բ. Տատոր, էջ 163-164):

«ԸՍՏ ԷՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՎԱՏԹԱՐ ԵՒ ԱՄԵՆԱՍՏՏԱՌԱԿ ԽԱ-
ՂԱՂՈՒԹԻՒՆ ԷՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ» (Նոյն, էջ 360):

«Ռուսոյն արեւելեան քաղաքականութիւնը իր ամբողջութեանը
մէջ կը պահանջէր, որպէսզի բաւարարուին քրքական «եքիտասարոյ»
դրամատիրութեան աշխարհակալական-բոնատիրական բնագոյնը ի
ՀԱՇԻԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԳԻՆ. (Նոյն, էջ 299):

«ԿԱՐՍԻ ՄԷՋ ԽՈՐՀՐԴՆԵՐՈՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՔԱՂԱՔԱՅՈՒ-
ՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԵՒ Ի ՇԱՀ ՀԱՄԱՇԵՆԱՐՀԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒ-
ԹԵԱՆ «ԾԱԽՈՒ ՏՐՈՒԵՑԱԻ» ՀԱՅԱՍՏԱՆԸ» (Նոյն, էջ 164):

Սովետները սկզբունքով դէմ էին փոքր ազգերու, նաեւ կով-
կասեան ազգերու անկախութեան: Ազրպէյջանի, Հայաստանի եւ Վրաս-
տանի դրաւումէն երկու տարի ետք, 1922 Դեկտ.ին, այդ երկիրներու
անկախութեան վերջ տրուեցաւ: (1936ի Սթալինեան Սահմանադրու-
թեամբ պիտի վերահաստատուէր այդ անկախութիւնը ձեւակաւե-
րէն, պարզապէս խաբելու համար ժողովրդական զանգուածները):

Ահա քաղուածներ Անդրկովկասեան Սոց. Դաշնակցային Խոր-
հրդային Հանրապետութեան Սահմանադրութենէն, ընդունուած Խոր-
հուրդներու Անդրկովկասեան առաջին համապումարի կողմէն, 1922
Դեկտ. 13ին:

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԱԾ

ԳԼՈՒԽ 1.

Բանաձեւ՝ Անդրկովկասի աշխատաւորները միացնելու մասին.
ՅՕԳ. 1.— Ռուսաստանի Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը,
ազատելով աշխատաւորները դրամատէրներու եւ կալուածատէրներու
դասակարգային ճնշումէն, ազատութիւն բերաւ ցարական նախկին կայ-
սրութեան ճնշուած ժողովուրդներուն եւս, տալով անոնց ինքնորոշ-
ման իրաւունք, մինչեւ պետական անջատում: Անդրկովկասի վերին
դասակարգերը, ի դէմս իրենց բարձրակարգ կալուածատիրական կու-
սակցութեանց, օգտուեցան այդ իրաւունքէն, ամբարկելու համար
իրենց քաղաքական եւ տնտեսական տիրապետութիւնը ու գերման-տան-
կակ. աշխարհակալութեան քեղադրանքով սկիզբները անջատեցին Ան-
դրկովկասը բանուորագիւղացիական Ռուսաստանէն, կազմելով Ան-
դրկովկասի Հանրապետութիւնը եւ զուխ ունենալով Սէյմը, ապա
միացեալ Անդրկովկասը բաժան-բաժան ըրին երբէ մասի, հեռանալով
իրարմէ ու ամփոփուելով ազգային հանրապետութիւններու մէջ: Ռու-
սաստանի հակայեղափոխութեան եւ աշխարհակալ Անտանդի հետ միա-
սին շարունակելով իրենց անհաշտ կոնիւր խորհրդային իշխանութեան
դէմ, Ազրբէյջանի, Վրաստանի եւ Հայաստանի բարձրակարգ կալուա-
ծատիրական զեկավար կուսակցութիւնները արիւնատ կոնիւնքու մէջ
նետեցին այդ երկիրներու ժողովրդական զանգուածները, զանոնք թու-
նաւորելով մէկմէկու դէմ ու հրահրելով ազգային ատելութիւն եւ պա-
ռակտում:

ՅՕԳ. 2.— Միմիայն յեղափոխական խորհրդային յեղաշրջումը
Անդրկովկասի հանրապետութիւններու մէջ, տապալելով ճնշողներու
տիրապետութիւնը ու հաստատելով բանուորներու եւ գիւղացիներու

իշխանութիւնը, Անդրկովկասի ժողովուրդներուն բերաւ ազգային խազազութիւն եւ գետին ստեղծեց եզրայրական համակեցութեան ու միասնական պայքարի համար ընդդէմ ընդհանուր բշտամու: Այս գետնի վերայ ալ, Անդրկովկասեան հանրապետութեանց եւ այդ հանրապետութեանց մէջ մտնող ինքնավար երկիրներու աշխատաւորները առաջադրելով համաձայնեցուած ու ծրագրուած աշխատանք, տնտեսութեան վերածնունդի եւ արտաքին ու ներքին բշտամիներէն պաշտպանուելու համար, ստեղծեցին (12 Մարտ 1922 թ.) Անդրկովկասի Սոց. հորհ. Համրապետութեանց Դաշնակցային Միութիւնը:

807. 3. — Անդրկովկասի աշխատաւորները անհրաժեշտ ու հասունցած համարեցին զարգացնել իրենց քաղաքական, տնտեսական եւ ռազմական միութիւնը: Այդ նպատակով, Անդրկովկասի բոլոր հանրապետութեանց լիազօր ներկայացուցիչները բով բովի գալով հորհուրդներու Անդրկովկասեան առաջին համագումարի մէջ, որոշեցին կազմել Անդրկովկասեան Սոցիալիստական Դաշնակցային հորհրդային Հանրապետութիւն:

807. 4. — Հաւատարիմ զանգուածներու աւանդութեանց եւ անոնց ձգտումին դէպի եզրայրական միութիւն, Անդրկովկասի աշխատաւորները միեւնոյն ժամանակ հանդիսաւորապէս կը յայտարարեն աշխատաւոր բովանդակ մարդկութեան առջեւ, որ իրենք ըստ ամենայնի պատրաստ են խորհրդային հանրապետութեանց բոլոր բանուորներու եւ գիւղացիներու հետ միասին ստեղծելու խորհրդային միացեալ ճակատ, համաշխարհային կապիտալի դէմ մղուող ընդհանուր պայքարի համար: Ելակէտ ունենալով այս. Անդրկովկասեան Սոցիալիստական Դաշնակցային հորհրդային Հանրապետութիւնը կը համարէ անյետաձգելի, կազմելու Սոցիալիստական հորհրդային Հանրապետութիւններու Միութիւն, — նախատիպը խորհրդային բոլոր երկիրներու համաշխարհային հզօր Միութեան:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՍՈՑ. ԽՈՐՀ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Սոց. հորհ. Հանրապետութեանց Միութեան կազմութեան մասին յայտարարութիւն, ընդունուած Ս. Խ. Հ. Միութեան հորհուրդներու Ա. Համագումարին մէջ, 30 Դեկտ. 1922ին:

«Մենք, պատուիրակներս այդ (խորհրդային) հանրապետութեանց, մեզ տրուած լիազօրութեանց հիման վրայ որոշեցինք ստորագրել Սոց. հորհ. Հանրապետութեան կազմութեան դաշնագիրը»:

ԽՈՐՀ. ՄԻՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԸ

(Քաղուածքներ) Ս. Խ. Հ. Միութեան Սահմանադրութեանէն (Հիմնական Օրէնք), ընդունուած Ս. Խ. Հ. Միութեան կեդր. Գործադիր Կոմիտէի երկրորդ նստաշրջանի առաջին գումարումի կազմէն, 6 Յուլիս 1923ին:

Առաջին բաժին. — Յայտարարութիւն՝ Ս. Խ. Հ. Միութեան կազմութեան մասին:

Երկրորդ բաժին. — Դաշնագիր: (Առանձին հանրապետութեանց անունները). «Կը միանան մէկ միութենական պետութեան մէջ — խորհրդային Սոց. Հանրապետութեանց Միութիւն:

Գլուխ Ա. — Խորհ. Միութեան բարձրագոյն օրգաններուն եմբակայ հարցերը:

Գլուխ Բ. — Դաշնակցային հանրապետութեանց վեհապետական իրաւունքներու եւ միութենական քաղաքացիութեան մասին:

3. Դաշնակցային հանրապետութեանց վեհապետութիւնը կը սահմանափակուի միայն այն շրջանակի մէջ, որ ցոյց տրուած է ներկայ Սահմանադրութեան մէջ եւ միայն այն հարցերու մասին, որ կը վերաբերին միութեան իրաւասութեան: Այդ շրջանակէն դուրս ամէն մէկ միութենական հանրապետութիւն իր պետական իշխանութիւնը կը կիրառէ ինքնուրոյն կերպով: Ս. Խ. Հ. Միութիւնը կը պաշտպանէ միութենական հանրապետութեանց վեհապետական իրաւունքները:

4. Միութենական ամէն մէկ հանրապետութեան իրաւունք կը վերապահուի, ազատօրէն դուրս գալու Միութենէն:

5. Միութենական հանրապետութիւնները կրնան իրենց Սահմանադրութեան մէջ մտցնել փոփոխութիւնները, համաձայն ներկայ Սահմանադրութեան:

6. Միութենական հանրապետութեանց հողամասը չի կրնար փոփոխութեան ենթարկուիլ առանց անոնց համաձայնութեան: Նաեւ յօդ. 4րդի փոփոխութեան, սահմանափակման կամ վերացման համար կը պահանջուի հորի. Միութեան մէջ մտնող բոլոր հանրապետութեանց համաձայնութիւնը:

7. Միութենական հանրապետութեանց ֆաղափայտներուն համար կը սահմանուի միութենական միասնական ֆաղափայտութիւն:

Գլուխ Գ.— հորի. Միութեան խորհուրդները համագումարի մասին:

Գլուխ Գ.— հորի. Միութեան Կեդրոն. Գործադիր Կոմիտէի մասին:

Գլուխ Ե.— հորի. Միութեան Կեդր. Գործ. Կոմիտէի նախագահութեան մասին:

Գլուխ Զ.— հորի. Միութեան ժողովրդական կոմիտարներու խորհուրդի մասին:

Գլուխ Է.— հորի. Միութեան գերագոյն դատարանի մասին.

Գլուխ Ը.— հորի. Միութեան ժող. կոմիտարութիւններու մասին:

Գլուխ ԺԲ.— Միութենական հանրապետութեանց մասին:

64.— Միութեան ամէն մէկ հանրապետութեան հոգամասի վրայ վրայ անոր իշխանութեան գերագոյն օրգանը կը հանդիսանայ Հանրապետութեան խորհուրդներու Համագումարը, իսկ Համագումարի միջեւ ընկած ժամանակամիջոցին համար, անոր Կեդր. Գործադիր Կոմիտէն:

65.— Միութենական հանրապետութեանց եւ հորի. Միութեան իշխանութեանց գերագոյն օրգաններու փոխադարձ յարաբերութիւնները կը սահմանուին ներկայ կանոնադրութեամբ:

66.— Միութեան Հանրապետութեանց Կեդր. Գործադիր Կոմիտէները իրենց մէջէն կ'ընտրեն նախագահութիւններ, որոնք Գործադիր Կոմիտէներու նստաշրջաններու միջեւ ընկած ժամանակամիջոցին կը հանդիսանան իշխանութեան գերագոյն օրգաններ:

67.— Միութենական հանրապետութեանց Կեդր. Կոմիտէները կը կազմեն իրենց գործադիր օրգանները — ժողովրդական կոմիտարներու խորհուրդները...

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԼԵՒՈՆ ԲԱՇՇԱԼԵԱՆԻ

ԶԻԶԵՐԻՆ ՈՒԶԵՑ ԳՈՒՊԱՆ ՓՈՆԱԴՐԵԼ ԼԱՅԵՐԸ

Ազգային Գատուիրակութեան անդամ Լեւոն Բաշալեանի օրագրութիւնը հրատարակուեցաւ Ռամկավարներու Փարիզի օրգան «Այսօր»-ին մէջ: Այդ օրագրութիւնը կը վերաբերի Կլիաւորապէս Լոզանի խաղաղութեան խորհրդատուներին:

Երկու հայ պատուիրակութիւնները մէկ ճակատ կազմելով, կը պաշտպանէին Հայ Դատը եւ այս անգամ օրակարգի հարց դարձած էր արեւմտեան պետութիւններու կողմէ՝ ստեղծել հայկական օճախ մը Թուրքիոյ արեւելքը կամ հարաւը, հոգատարութեամբ Ազգերու Ընկերակցութեան:

Թուրքիա բուն կերպով ընդդիմացաւ. անոր ուժ տուին Մովսէսները: Ասոնք օգնելու համար իրենց զինակիցներուն եւ զիրենք ազատելու համար հայկական մղձաւանջէն, առաջարկեցին հայ պատուիրակութիւններուն՝ հայ պաշտպանութիւնները փոխադրել Գուլպան: Ահա եղած առաջարկութիւնը եւ տրուած պատասխանը («Այսօր», 1951, Փետր. 9 եւ 10):

Կիրակի, 28 Յունուար 1923.— Լրագիրները այս առաւօտ կը հրատարակեն Չիչէրիմի նամակը Պ. Նավիլի, որով Մոսկուա կ'առաջարկէ հայ գաղթականները Ռուսաստան փոխադրել, ինչպէս մասն Պ. Չիչէրիմի համիմաստ նաքը Բոնֆէրանսին, որուն պատճէնը Պ. Բաշալեան ստացաւ ուղղակի ռուս պատուիրակութեան ղեկմելով:

Ժամը 4ին, ՊՊ. Տը Մարսիէ, Բրաֆթ-Պոնար ու Պէրի, միշտ ընկերակցութեամբ Պ. Մոնթկամբրիի, տեսակցութիւն մը ունեցան Պ. Չիչէրիմի հետ, որ ըսաւ.

— Մոսկուայէն հեռագիր մը ստացած եմ որ զիս կ'արտօծէ յայտարարել թէ Տօնի եւ Գուլպանի միջեւ հազամաս մը կ'առաջարկենք հոն փոխադրելու համար մինչեւ 250.000 հայ գաղթականներ: Պէտք է ամփոփապէս նշանակուի Յաննանթազով մը, որուն անգամները պէտք է ըլլան մէկ հայ ներկայացուցիչ, օրինաւորապէս արտօնելու ու պատասխանատու, որ մեզ երաշխաւորէ թէ եկող հայերը հակառուս չեն եւ որեւէ կազ չունին Դաշնակցականներու հետ. մէկ ներկայացուցիչ այն մարդասիրական ընկերութեանց, որոնք իրենց վրայ պիտի վերցնեն այդ գաղթականներուն փոխադրութեան եւ տեղաւորման ծախքը, եւ մէկ ներկայացուցիչ սովիետներուն կողմէ: Այս մնայուն յանձնաժողովը պիտի վարէ ամբողջ գործը. իր կեդրոնատեղին պէտք է ըլլայ Պերլին

կամ Հոսմ: Բնականաբար տեղւոյն վրայ ալ յանձնախումբ մը պիտի գտնուի որ ջուկ եւ գո՛ւ գաղթականները, ինչպէս կ'ըլլայ այժմ Ռուսիա վերադարձող բազմաթիւն համար, որոնցմէ ամսական 2-000 հոգի իրենց տեղերը կը դառնան: Ինձ պատասխան մը պէտք է մինչեւ ուրբաթ:

Հայաստանները, ի պատասխանի, իրենց շնորհակալութիւնը յայտնեցին Ռուսիոյ ստանձնած այս վեհանձն նախաձեռնութեան մասին, եւ ըսին թէ եղած առաջարկութիւնը եւ պայմանները պիտի հազարդեն հայ պատուիրակութեանց: Յայտնեցին նաեւ թէ ուսական այս առաջարկը կը նկատուի իբր մէկ մասնակի լուծումը հայկական խնդրին եւ թէ հայերը կը վերապահե՛ն իրենց բոլոր իրաւունքները՝ իրենց հայրենիքը ունենալու ապագային:

— Այո՛, ապագային, ըսաւ Պ. Զիչերին՝ ոչ-հաջողութեան շեշտով մը:

Պ. Մոնթկոմըրի ըսաւ թէ ինք Երեւան պիտի երթայ, տեղւոյն վրայ ուսումնասիրելու երկրին տնտեսական պայմանները եւ տեսնելու թէ ի՛նչ միջոցներ ձեռք առնելու է որպէսզի մաս մը հայ գաղթականներ ալ հոն փոխադրուին:

Պ. Զիչերին, որ համակիր չի թուիր այս ծրագրին, պատասխանեց թէ Երեւանի մէջ տեղ չկայ:

Պ. Զիչերին ըսաւ նաեւ որ կը փափաքի որ գաղթականները երկրագործ դասակարգէն ըլլան, որովհետեւ բազմաթիւ պիտի չսիրեն որ հայ առևտրականներ գան երկրին մէջ:

Պ. Քրաֆթ-Պոնարի հարցման վրայ, Պ. Զիչերին անկողաց թէ բազմաթիւ գուցէ հաշտ աչճով չնային այդ եկուոր հայերուն, եւ պէտք է լրջօրէն ուսումնասիրել այդ խնդիրը:

Բանակցութեան ընթացքին Պ. Զիչերին յայտնեց որ Մոսկուայի մէջ ասկից առաջ ալ ուսումնասիրեք էին Հայ Ազգային Տունը, — որ ըսել է հայ պետութիւն մը — հիմնել Մայրագոյն-Արեւելի մէջ, բայց այն եզրակացութեան եկեր էին թէ անկարելի է ատիկա:

Ըստ Պ. Զիչերինի, Քուպանի հայ գաղթականները պիտի ունենան տեղական բոլոր ազատութիւնները:

Ի վերջոյ, Պ. Զիչերին ըսաւ որ եթէ իր ճօթը չէր գրկած հայ պատուիրակութեանց, պատճառը այն էր որ որոշապէս չէր գիտեր թէ երկու պատուիրակութիւնները ի՛նչ կը ներկայացնէին, քանի որ անոնք միացած էին եւ քանի որ Դաշնակցականներ կան անոնց մէջ, ու խնդրեց որ Հայաստանները իրեն նշանակեն թէ որո՞ւ գրկելու է ճօթը:

Ուրբաթ, 2 Փետրուար 1923.— Պ. Նորատունկեան այսօր տեսակցութիւն մը ունեցաւ Պ. Զիչերինի հետ, որ ըսաւ թէ կ'ուզէ որ իրեն

մէտորանում մը ներկայացուի որուն մէջ նշանակուած ըլլայ թէ ո՛րքան հայ գաղթական, գլխաւորաբար հոգագործ, կրնան երթալ Քուպան, ուսկի՞ց պիտի երթան, ո՞վ պիտի հոգայ անոնց փոխադրութեան, տեղաւորման եւ ժամանակի մը համար պարենաւորման ծախքերը, ո՞ր մարմինն է որ պիտի կազմակերպէ այս բոլոր գործողութիւնները, եւ յանուն այդ գաղթականներուն խօսելու հեղինակութիւնը որո՞ւ կը պատկանի, որովհետեւ Ռուսիա պէտք է ապահով ըլլայ թէ այդ գաղթականներուն մէջ Դաշնակցականներ պիտի չսարդին, բան մը որ իրենց հանելի չէ, որովհետեւ այս միջոցիս, իրենց գլուխը ունենալով Նժդեհ անուամբ մէկը, Պարսկաստանի մէջ է՞՞՞րիկներ կ'ընեն Ռուսիոյ դէմ:

Պ. Զիչերին այս տեղեկութիւնները կը սպասէր Հայաստաններու Լիկայէն եւ կը ցաւի որ մինչեւ հիմա չհազարդեցին իրեն, զի ինք քիչ օրէն պիտի վերադառնայ Մոսկուա, ուր պիտի կատարուին հարկ եղած գործողութիւնները՝ խնդրին ընթացք տալու համար:

Պ. Նորատունկեան ըսաւ որ պատշաճ դատուեցաւ որպէսզի Պ. Մոնթկոմըրի անմիջապէս մեկնի Կ. Պոլսոյ վրայով Պաթում, Երեւան, եւ յետոյ Քուպան ալ ուսումնասիրելով տեղւոյն վրայ, երթայ Մոսկուա:

Պ. Զիչերինի առարկութեանը՝ թէ լաւագոյն կ'ըլլար եթէ Պ. Մոնթկոմըրի նախ Մոսկուա երթար, Պ. Նորատունկեան ըսաւ թէ գործին վրայ գիտակցութեամբ եւ ձեռնհասութեամբ խօսելու համար Պ. Մոնթկոմըրի պէտք ունէր նախ տեղւոյն վրայ ուսումնասիրելու գայն:

Պ. Նորատունկեանի խնդրանքին վրայ, Պ. Զիչերին ըսաւ թէ Մոսկուայէն երահանգ պիտի գրկուի իրենց Կ. Պոլսոյ ներկայացուցչին, որպէսզի հարկ եղած դիրութիւնները տրուին Պ. Մոնթկոմըրի՛ իր նամբորդութեան համար:

Շաբաթ, 3 Փետր. 1923.— Պ. Ահարոնեան տեսաւ պուլկար պատուիրակ Պ. Թոտորոփը, որ ըսաւ թէ հայերը ուրիշ մար չունին բայց եթէ ընդունիլ Մոսկուայի առաջարկը: Հետաքրքրական է գիտնալ որ Ռուսերը նմանօրինակ առաջարկ մըն ալ Պուլկարիոյ ըրած են՝ Քուպան փոխադրելու համար պուլկար գաղթականներ: Մոսկուայի նըպատակը կը թուի, ի մէջ այլոց, բազմաթիւներուն միաձայլ գանգուածը թուլացնել, անոր մէջ մտցնելով եկուոր տարրեր:

Կիրակի, 8 Փետրուար 1923.— Այս առաւօտ Պ. Նորատունկեան նամակ մը ուղղեց Պ. Զիչերինի, խնդրելով ուրիշ Պ. Մոնթկոմըրի պաշտօնին համար հարկ եղած դիրութիւնները տրուին Մոսկուայի կառավարութեան կողմէ, ներփակելով համառօտ ճօթ մը որուն մէջ ինչ ինչ տեղեկութիւններ տրուած էին Պ. Զիչերինի յարուցած կէտերուն վրայ: Պ. Բաշալեան անձամբ յանձնեց այդ նամակը որու պատուիրա-

կուրսեան ընդհանուր ֆարտուզար Պ. Սապանինի, որ ըստ թէ հայաստաններու կողմէ ալ նամակ մը ստացած էին՝ Պ. Մոնթկոմերիի պաշտօնը դիրացնելու խնդրանքով, եւ Պ. Նարատուկեանի խնդրանքին հետ միասին հազորդած էին արդէն Մոսկուա:

Պ. Բաշալեան միանգամայն Պ. Սապանի յանձնեց մեր վերջին նօթին մէկ պատճենը:

Երեկոյթին տեղեկացանք թէ Քոնֆէրանսը խզուած է եւ անգլիական պատուիրակութիւնը մեկնած:

* * *

Բարեբախտաբար ըսենք, որ հայ գաղթականները Գուպան փոխադրելու ծրագիրը չհետապնդեցին երկու հայ պատուիրակութիւնները: Այս պիտի նշանակէր Ռուսաստանի մէջ ձուլումի ենթարկել մեր ժողովուրդը եւ նոյն աստն թշնամութիւնը գրգռել հայերու դէմ:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ ԿԸ ՊԱՇՏՊԱՆՆԷ ՀԱՅԿ. ԴԱՏԸ ԼՕՁԱՆԻ ՄԷՋ

Լօզանի խորհրդատուները (1922-23), պառակտուած համաձայնական պետութիւնները որոշած էին հաշտութիւն կնքել Թուրքիոյ հետ, որուն գլխաւոր պաշտպանը այս անգամ Ռուսաստանն էր:

Անգլիա եւ Ծրանսա կը մտածէին Աղզային Օճախ մը տալ հայերուն՝ Թուրքիոյ արեւմուտքը կամ հարաւը (Կիլիկիա), հոն հաւաքելով Թրքահայ գաղթականութիւն:

Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութիւնը եւ Աղզային Պատուիրակութիւնը միասնաբար եկած էին այն եզրակացութեան, որ պիտի չընդգիծանան այդ ծրագրին, քանի որ տուեալ քաղաքական պայմաններուն մէջ ուրիշ ելք չկար:

Ահա այդ թուականին (1922 Դեկտ. 26) Հ. Հ. պատուիրակութեան նախագահ Ա. Ահարոնեան, Լօզանի խորհրդատուներէն ենթադրանքներով կը պաշտպանէ Հայ Դատը.

«Եթէ իմ պաշտօնակից նորին գերագնացութիւն Պ. Նարատուկեանի գեղոյցէն յետոյ եւ խօսք կ'առնեմ, առիկա միայն անոր համար

է, որ ապացուցանեմ, թէ հայ ժողովուրդը իր ամբողջութեամբ, իր կուսակցութիւններով եւ զազութիւններով, միանգամայն համամիտ է այն պահանջներուն, որ մենք ձեզ կը ներկայացնենք ահա:

Յետոյ կ'ուզեմ ըսել, թէ որքան մեծ է թուրքերու գործած անարդարութիւնը դէպի մեզ, թուրքերու, որոնք եկած են այստեղ իրենց համար արդարութիւն հայցելու նպատակով:

Անոնք բռնագրաւած են այսօր ոչ միայն տանկահայկական գաւառները, այլ եւ Երեսնի համրապետութեան մեծագոյն մասը: Ես մըտադիր չեմ շօշափելու այնպիսի հարցեր, որոնք կը վերաբերին Ռուսաստանի եւ կարող են անել վիճակի մէջ դնել դաշնակիցները, բայց պէտք է ըսեմ, որ 1920ի վերջերը, երբ Հայաստանի Հանրապետութիւնը իրաւապէս ճանջուած էր դաշնակիցներու կողմէ, Քեմալի բանակը յարձակեցաւ Հայաստանի վրայ եւ գրաւեց Կարսի նահանգը, Արտահանը, Սուրմալուն եւ Նախիջեւանը:

Այս գրաւումով թուրքերը աւելի եւս ծանրացուցին կովկասահայերու կացութիւնը, որովհետեւ գրաւուած վայրերէն 180 հազար հայեր, փախչելով թրքական յառաջխաղացումէն, ապաստանեցան հանրապետութեան մնացած մասերուն մէջ: Եւ եթէ աւելցնենք այս քիւի վրայ պատերազմի ընթացքին տանկական արեւելեան նահանգներէն փախած 350 հազար հայերը, որոնք նոյնպէս ապաստանեցին Հայաստան, այն ժամանակ հասկնալի կ'ըլլայ միանգամայն սովորուած համաձայնութիւնը, որոնք իշխեցին այս երկրի վրայ: Միայն Ամերիկայի եւ Եւրոպայի օգնութեամբ էր, որ կարելի եղաւ մեղմացնել աղէտը:

Տանիկները այդ սոսկալի եղելութիւնը կ'արդարացնեն այն դաշնագրով, որ ստորագրուեցաւ Կարսի մէջ 1921 Հոկտ. 13ին: Իրապէս միայն այդ մէկ դաշնագիրը չէ, այլ չորս դաշնագիր — Բրեստ-Լիտովսկի (1918), Բաթումի (1918), Ալեքսանդրապոլի (1920) եւ Կարսի (1921) դաշնագրերը: Վերջին երեքը Բրեստ-Լիտովսկի կրկնութիւններ են, բոլորն ալ մեզմէ պիտի խլէին վերայիշեալ հողամասերը:

Մուստրասի զինադադարով Բրեստ-Լիտովսկի եւ Բաթումի դաշնագրերը ոչնչացան, Ալեքսանդրապոլիի՝ 1921 թիւիս Լոնտոնի մէջ կայացած դաշնակիցներու խորհրդածոգովը չեղեալ համարեց: Իսկ ինչ կը վերաբերի Կարսի դաշնագրին, ոչ ոք մեծ պետութիւններէն չուզեց մանչնալ անոր գոյութիւնը:

Տանիկները կ'ըսեն նաեւ, որ այդ բոլոր գաւառները իրենց կը պատկանէին դեռ ուսու-թրքական պատերազմէն առաջ (1877)․ բայց եթէ այդպէս դատենք, այն ժամանակ այդ շրջանին Բուլղարիան ալ Տանկաստանին կը պատկանէր․ եւ եթէ անոնք այդպէս հետու երթան, ո՞ր պիտի հասցնեն արդեօք իրենց տիրապետութեան իրաւունքները:

Պէտք է նկատել, որ եթէ իրենց Ազգային Ուխտին մէջ, որով տանիկները շատ կը պարծեման, կը պահանջէին կարսը, Արտահանը եւ Բաթումը, պէտք է յիշեցնեմ, որ Սուլմալուն եւ Նախիջեւանը չեն պատկանած երբեք տանիկներուն: Ռուսերը գրանցին զանոնք պարսիկներէն: Բայց տանիկները տիրեցին այս երկուսին ալ, որոնցմէ Սուրմալուն իրենց պահեցին, իսկ Նախիջեւանը տուին Ադրբեյջանին:

Այժմ, անցնելով հայ Ազգային Օճախի խնդրին, թոյլ տուէ՛ք ինձ նկատել, որ հարցը յաճախ վատ ձեւով կը տրուի եւ վատ կը հասկըցուի: Մեր խնդրածը ապաւէն մը չէ եւ ոչ ալ գաղթավայր մը, այլ մեր դարաւոր հայրենիքին մէջ Ազգային Օճախ մը կ'ուզենք ունենալ:

Դուք գիտէ՛ք արդէն, պարոններ, որ հայ ժողովրդի մարտիրոսութեան ցաւոտ խնդրի հետ զուգընթաց գոյութիւն ունին նաեւ քաղաքական եւ դիւանագիտական հարցեր: Արդէն 1856 թուին Փարիզի եւ 1878ին Պերլինի խորհրդածոզովներուն մէջ ծեծուած է հայկական հարցը: Ապտիլ շամիտի թագաւորութեան օրով եղած ջարդերէն յետոյ, 1895 թուին ծրագրուեցաւ բարեկարգութեամբ հարցը եւ, վերջապէս, 7 վիլայէթներու համար կայացան որոշումներ, որոնք վերջացան անով, որ Հայաստան ուղարկուեցան երկու բարձր կոմիսարներ պ.պ. Վէսթերնէնկ եւ Հոֆ' մէկը Հոլանտացի եւ միւսը Նորվեկիացի: Վրայ հասաւ մեծ պատերազմը. տանիկները մասբու դրին երկուսն ալ եւ սկսան ջընջելու հայկական հարցը ոչնչացնելով հայերը: Այս ողբերգական պատմութիւնը քաջ ծանօթ է բոլորիս եւ կարիք չկայ անդրադառնալու անոր: Դաշնակիցներուն յաղթանակը, ինչ արդար հատուցում մեր դարաւոր տանջանքներուն եւ այն բոլոր գոհողութիւններուն, մենք միշտ ընդունած ենք, պէտք է տայ մեզ Տանկաստանէն եւ Ռուսաստանէն անջատուած՝ անկախ ու ազատ Հայաստան մը:

Այսօր մեզ խորհուրդ կուտան մէկ կողմ թողուլ կովկասեան Հայաստանը, ձգել նաեւ Միացեալ Նահանգաց նախագահի գծած սահմանները, ինչքան ալ անոնք պակասաւոր էին ընդգրկելու համար ողջ Հայաստանը, եւ ամենատարակաւ արդարութիւն չըլլա՞ր արդեօք ըստանալ գոնէ Ազգային Օճախ մը ծովային ելքով: Մեր ժողովուրդը 25 դար շարունակ ապրած է այդ երկրի մէջ եւ տանիկները երբեք մեծամասնութիւն չեն կազմած այդտեղ:

Այս պահանջներու դէմ, որ ինչքան համեստ, նոյնքան եւ արդար են, Իսմէթ փաշան՝ թիւով 700-000 մեր գաղթականներուն ցոյց կուտար Գանատայի եւ Աւստրալիայի նամբան:

Մենք շատ ենք տանջուել ու շատ արիւն թափել մեր հայրենիքի համար, մինչեւ որ հասեր ենք այս կէտին: Գանատա կամ Աւստրալիա գնալու համար չէր, որ մեր ազգը մէկ սիրտ ու հոգի դարձած՝ նետուե-

ցար ընդհանուր շփոթի մէջ եւ մէջտեղ դրաւ ոչ միայն իր ներկան ու ապագան, այլ եւ իր անցեալը, որովհետեւ ամբողջ սերունդի մը ոչնչացումը կը նշանակէ խզել բնախօսական կապը մեր նախնիքներու եւ գալիք սերունդի միջեւ: Ոչ մէկ մեծ կամ փոքր դաշնակից պետութիւն որ մտանկեցած է համաշխարհային մեծ պատերազմին չէ ունեցած այնքան ծանր տառապանքի օրեր, որքան փոքրիկ հայ ժողովուրդը: Ու այդ տառապանքներէն ալ կը բխի իր արթածան իրաւունքը պահանջելու սեփական հայրենիք մը որքան եւ ան ըլլայ համեստ:

Մեզ կ'ըսեն որ հայ ազատագրական շարժումը խարդախօրէն ներշնչուած է դուրսի ազդեցութիւններով, որոնք կուզան եղեր ցարական Ռուսաստանէն եւ Բրիտանիայէն: Ես պիտի յայտարարեմ այստեղ, որ ցարական կառավարութիւնը եւ սուլթանը համամիտ էին միանգամայն՝ ոչնչացնելու համար բոլոր այն շարժումները, որոնք ուզուած էին Տանկաստանի մէջ գոյութիւն ունեցող բնութիւններու դէմ: Կովկասեան բոլոր խմբերը, որոնք կը կազմուէին իրենց տանկասեղ եղբայրներուն օգնութեան հասնելու համար, կ'ոչնցացուէին սահմանագիծի վրայ, ուսական բանակի կողմէն, որովհետեւ ցարական կառավարութիւնը չէր ուզեր նոր Պուլկարիա մը ստեղծել իր սահմաններուն հարաւային մասին վրայ:

Անգլիայի քաջայերու մը ուրիշ առասպել մըն է: Մեր ազատագրական շարժումը առաջ է եկած այն խոր պատճառներէն, որոնք առաջ բերին եւ պալքանեան ժողովուրդներու ազատութիւնները: Թուրքերու եւ անոնցմէ բաժնուած ազգերու պարզ համեմատութիւնը լաւագոյն ապացոյցը կը լինի՝ տեսնելու համար, թէ որքա՞ն իրաւացի էր պատմութիւնը եւ որքա՞ն այդ ազատագրումները համապատասխան են մարդկութեան եւ քաղաքակրթութեան շահերուն:

Այո՛, մենք միշտ նզկներ ենք մեր հայրենիքի ազատութեան, եւ Միացեալ Հայաստանը պիտի լինի մեր իտէալը: Բայց եթէ կան ներկայիս մեծ դժուարութիւններ, որոնք թոյլ կուտան դաշնակիցներուն գծել միայն փոքր Հայաստան մը մեծի փոխարէն, այսինքն՝ Ազգային Օճախը եւ մեծի կիլիկիոյ մէջ, մենք պիտի ընդունինք այդ առաջարկը դաշնակիցներու կամքը յարգած ըլլալու եւ անոնց աշխատանքը քեթեցնելու համար:

Մենք համոզուած ենք որ պիտի հասնինք արդարութեան, որովհետեւ մենք ունինք Անգլիայի, Ֆրանսայի, Իտալիոյ հանդիսաւոր խնամքները: Այն Անգլիան, որ մէկ օրուան մէջ ռուսի ելաւ ապացուցանելու ամբողջ աշխարհին, որ միջազգային համաձայնագրերը թուրքի կտորներ չեն միայն, այն մեծ Ֆրանսան որ իր ամբողջ գոյութեամբ ասպարէզ նետուեցաւ դաշնակիցներու հաւատարիմ մնալու եւ

թայլ չտալու համար, որ մարդկային մեծ գրկանքները ռոմանտիզմ, այն իտալիան որ կը նանչնայ օտար լուծը. եւ այդ լուծը թօթափելու համար նետուեցաւ ռազմադաշտ, չպէտք է մեզ լքեն: Մենք հանգիստ ենք այդ տեսակէտէն: Մենք համոզուած ենք որ այս խորհրդածոյզովը չպիտի ցրուի, մինչեւ որ արդարօրէն չլուծուի մեր դատը: Մենք գիտենք գործի ծանրութիւնը, սակայն համոզուած ենք որ դաշնակիցներու միակամ ոգին բաւական է որ արդարութիւնը լինի լրիւ եւ իրական(*):

ԼՕԶԱՆԻ ԴԱՇՆԱԳԻՐ

Դաշնագիր՝ մէկ կողմէն Մեծն Բրիտանիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ, Ճափոնի, Յունաստանի, Ռումանիոյ եւ Սերպ հորուաթ, Սլովէն պետութեան, իսկ միւս կողմէն Տաեկաստանի միջեւ, կնքուած *Լօզան, 24 Յուլիս, 1923ին*:

(Լիագործներ Մեծ Բրիտանիոյ՝ Ռեմբոլդ, Ֆրանսայի՝ Պելլէ, Իտալիոյ՝ Գարոնի եւ Մոնտանդա, Ճափոնի՝ Հայաշի եւ Օզիայի, Յունաստանի՝ Վենիզելոս եւ Գազլամանոս, Ռումանիոյ՝ Դիամանդի եւ Կոնցեսկու, Ս. Ե. Ս. պետութեան՝ Եովանովիչ, Տաեկաստանի՝ Իսմէթ փաշա, Ռիգա Նուր բէյ եւ Հասան բէյ):

(Դաշնագիրը բաղկացած է 143 յօդուածներէ, որոնք կը բաժանուին հինգ մասերու, վերջիններն ալ՝ առանձին հատուածներու):

(80Դ. 2-22.— Կորոշուին Տաեկաստանի սահմանները մի առ մի: Ոչինչ չէ ըսուած սակայն Տաեկաստանի եւ հորի. Միութեան սահմաններու մասին):

80Դ. 37-45. — Փոքրամասնութեանց պաշտպանութիւն:

80Դ. 38.— Ոչ մահմեդական փոքրամասնութիւնները կատարեալ ազատութիւն պիտի ունենան տեղափոխութեան եւ արտագաղթի...

80Դ. 39.— Ոչ-մահմեդական փոքրամասնութեանց պատկանող տանկահպատակ փոքրամասնութիւնները պիտի օգտուին բոլոր այն փառապատկան եւ փառապատկան իրաւունքներէն ինչ որ՝ մահմեդականները:

(*) Ա. Կատիսեան՝ «Հայաստանի Հանրապետութեան Ծագումը եւ զարգացումը», Աթէնք, էջ 339:

Տաեկաստանի բոլոր բնակիչները, առանց կրօնի խտրութեան, հաւասար պիտի ըլլան օրէնքի առջեւ:

80Դ. 42.— (Տաեկաստանի ոչ-մահմեդական փոքրամասնութեանց ընտանեկան ու անձնական կանոնագիրը պիտի սահմանուի համաձայն անոնց սովորութիւններուն, յատուկ յանձնաժողովներու միջոցով, որոնց պիտի մասնակցին տաեկ կառավարութիւնը եւ փոքրամասնութիւնները հաւասար ներկայացուցչութեամբ: Անհամաձայնութեան պարագային տաեկ կառավարութիւնը Ազգերու Դաշնակցութեան հորհուրդի հետ միասին կ'ընտրէ բարձր իրաւարար: Տաեկ կառավարութեան պարտականութիւնն է ցոյց տալ ամէն տեսակ պաշտպանութիւն փոքրամասնութեանց եկեղեցիներուն, սինակէզներուն, գերեզմանատուններուն, աստուածահանոյ եւ բարեգործական հիմնարկներուն, եւայլն):

80Դ. 43.— (Ոչ-մահմեդական փոքրամասնութիւնները պիտի չհարկադրուին խանգարելու իրենց կրօնական սովորութիւնները՝ կատարելու համար օրէնքով պահանջուող ակտեր իրենց շարքակալ հանգիստի օրը: Այդ օրերը նման ակտեր չկատարելու համար պէտք չէ, որ անոնք պատժի ենթարկուին: Բացառութիւն կը կազմեն այն ակտերը, որ կապուած են հանրային կարգի պաշտպանութեան հետ եւ որոնք պարտադիր են Տաեկաստանի բոլոր ֆազաֆացիներուն համար):

ԶԻԶԵՐԻՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

ԼՕԶԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ.

ՆԵՂՈՒՑՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Լօզանի հորհրդածոյզով: Ռուս-ուկրայն.-վրացական պատուիրակութեան ներկայացուցիչ Գ. Վ. ԶԻԶԵՐԻՆԻ յայտարարութիւնը Նեղուցներու ռեժիմը ուսումնասիրող յանձնաժողովի առաջին նիստին, 4 Դեկտ. 1922:

«...Առեւտրական նաւագնացութեան ու ծովային խաղաղ հարգակցութեան կատարեալ ազատութիւնը վտարի, Մարմարա ծովին ու Տարտանիլի պէտք է ապահովուի բացարձակապէս եւ առանց որիէ սահմանափակման: Խաղաղութեան պահպանումը Սև ծովի մէջ եւ անոր ափերու ապահովութիւնը, հաւասարապէս նաեւ խաղաղութեան պահպանումը Մերձուոր Արեւելի մէջ ու Կ. Պոլիսը անվտանգ

պահելը հարկ է, որ հիմնովին երաշխաւորուին: Իսկ այդ կը նշանակէ թէ՛ պէտք է Տարտանելը եւ Վոսփորը թէ՛ խաղաղ ժամանակ եւ թէ՛ պատերազմի միջոցին մշտապէս փակ պահուին ռազմական եւ զինուած նաւերու, ինչպէս նաեւ զինուորական թռչող ապարատներու համար բոլոր երկիրներու, բացառութեամբ Տանկաստանի...

Հիմնուելով այն փաստի վրայ, որ Տարտանելը եւ Վոսփորը Տանկաստանին կը պատկանին, ռուս կառավարութիւնը եւ իր դաշնակիցները, յարգելով ամէն մի ժողովուրդի վեհապետութիւնը, կը պնդեն այն բանի վրայ, թէ վերականգնել ու պահպանել պէտք է թուրք ժողովուրդի լրիւ իրաւունքները իր հողամասի եւ իր ջուրերու վրայ: Թուս կառավարութիւնը եւ իր դաշնակիցները հաւստարապէս կը պնդեն եւ այն փաստի վրայ, թէ Տանկաստանի կառավարութիւնը ի վիճակի պիտի ըլլայ պաշտպանելու իրական եղանակով Նեղուցները եւ Մարմարայի ծովը ամէն մի յարձակման դէմ այն պարագային միայն, եթէ զգալապէս նանչցուի իր իրաւունքը՝ ամբաստանելու և զինելու ծովափերը, ունենալու պատերազմական նաւատորմ եւ Նեղուցներու ու Մարմարա ծովի պաշտպանութեան համար գործ դնելու արդիական պատերազմական տեխնիկայի բոլոր միջոցները...

Նեղուցներու փակումը պատերազմական նաւերու առաջ կը համապատասխանէ նաեւ բոլոր պետութիւններու հաւասարութեան սկզբունքը, մինչդեռ անոնց բացումը ռազմաճակատներու առաջ՝ կը ստեղծէ նպաստաւոր վիճակ աւելի ուժեղ ծովային պետութեան համար... Խորհ. Թուսաստանը առանց որեւէ փոխարինութեան չեղեալ յայտարարելով բոլոր այն համաձայնագրերը, որ կը վերաբերին Կ. Պոլիսը Թուսաստանին յանձնելուն, ատով իսկ հնարաւորութիւն տալով Տանկաստանին յարգականօրէն պաշտպանելու իր գոյութիւնը ու ազատելով Միջերկրական ծովի ջրաբաշխի բոլոր պետութիւնները ցարիզմի դարաւոր նկրտումներու հին վտանգէն, երբեք մտադրութիւն չէ ունեցեր թոյլ տալու, որ Նեղուցներու մասին տրուի մի այնպիսի որոշում, որ անմիջականօրէն ռազմուած ըլլայ իր իսկ սեփական ապահովութեան դէմ...

ՌԱՓԱԼՈՅԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ԵՒ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Համաձայնութիւն՝ մէկ կողմէն ուզրայնական ՍեՀ, Պելոպոնեսի, Վրաստանի ՍեՀ, Ազրբեյջանի ՍեՀ, Հայաստանի ՍեՀ եւ Հեռուոր Արեւելի Հանրապետութեան ու միւս կողմէն Գերմանիայի միջեւ, Թափալոյի դաշնագիրը Թուսաստանի Ս. Դ. Խ. Հանրապետութեան դաշնակից պետութիւններու վրայ տարածելու մասին, կնքուած Պէրլին, 5 Նոյեմբեր, 1922 թ.:

(Լիազօրներ Ուզրայնայի Ս. Խ. Հանրապետութեան՝ Աուսեմ, Խորհրդային միւս հանրապետութեանց եւ Հեռ. Արեւելի հանրապետութեան՝ Կրեստիցսկի, Գերմանիայի՝ Մայցան):

ՅՕԴ. 3.— Դաշնադիր կողմերէն իւրաքանչիւրի այն փոխադրութիւնները, որ կ'ապրին միւս երկրի հողերուն վրայ. լիակատար չափով կ'օգտուին իրենց անձի իրաւական պաշտպանութեամբ՝ համապատասխան միջազգային իրաւունքի եւ իրենց ապրած երկրի պետական հիմնարկներուն:

ՅՕԴ. 7.— Երկու կողմերու ներկայացուցչութիւնները եւ անոնց մէջ աշխատող անձերը պարտաւոր են հեռու մնալ ամէն տեսակ զրգուճներէ եւ ֆարզութեան՝ ընդդէմ իրենց ապրած պետութեան կառավարութեան ու պետական հիմնարկներուն:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԱՃԿԱՍՏԱՆ

(ՓԱՐԻՋԻ ԴԱՇՆԱԳԻՐ)

Բարեկամութեան եւ չէզոքութեան դաշն Սոց. Խորհ. Հանրապետութեանց Միութեան եւ Տանկաստանի միջեւ, կնքուած Փարիզ, 17 Դեկտ. 1925:

(Լիազօրներ Խորհրդային Միութեան՝ Չիչերին, Տանկաստանի՝ Թեվֆիք Բիւշտի բէյ):

ՅՕԴ. 1.— Դաշնադիր կողմերէն մէկի դէմ մէկ կամ մի քանի երրորդ պետութեանց կողմէն պատերազմ հռչակուելու պարագային դաշնադիր միւս կողմը կը պարտաւորուի չէզոքութիւն պահպանել առաջինի վերաբերմամբ:

ՅՕԴ. 2.— Դաշնագիր կողմերէն ամէն մէկը կը պարտաւորուի հետու մնալ ամէն տեսակ յարձակումէն միւսի վրայ: Նա կը պարտաւորուի նոյնպէս չմասնակցիլ քաղաքական բնոյթ կրող որեւէ դաշնակցութեան կամ համաձայնութեան մէկ կամ մէկ քանի երրորդ պետութեանց հետ՝ ուղղուած դաշնագիր միւս կողմի դէմ...

ՅՕԴ. 3.— (Դաշնագիրը կը կնքուի երեք տարով, այն իրաւունքով, որ կ'երկարաձգուի այնուհետեւ տարուէ տարի):

**«ՊԵՏՔ Է ՎԵՐՋ ՏԱԼ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱԻԱՔՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ 300.000 ԱՐԵՒՄՏԱՀԱՅ
ԳԱՂՔԱԿԱՆՆԵՐԸ ՅՐՈՒԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ»**

Բոլշեւիկեան ընկերային, եւ քաղաքական ըմբռնումներուն ներհակ է աղլահաւաքումը: Զանազան թուականներու եթէ հայերու ներգաղթ կազմակերպեցին, միջնադարին շրջանակները ու բանւորները տպաւորելու համար էր: Այլապէս բոլշեւիկները տեւապէս պիտի չբաջարէին արտադրութիւն Ռուսաստանէն դէպի Հայաստան:

Պորհրդային Հայաստանի պետական դէմքերէն Արտաշէս Կարինեան, 1924ին Երևանի մէջ հրատարակուած «Տնտեսական Լրաբեր» ռուսերէն պաշտօնաթերթին մէջ յօդուած մը գրած է «Պէտք է վերջ տալ հայութեան հաւաքման Հայաստանում եւ 300.000 արեւմտահայ գաղթականութիւնը ցրուել Ռուսաստանում» խորագրին տակ: Յայտնուած մտածումները բոլշեւիկեան քաղաքականութեան հիմքը կազմած են եւ միշտ նոյն տեսակէտը կը պահեն: Յօդուածը կ'ստնենք «Արձագանգ փառիզի» հնչակեան օրդանի 1924 Հոկտեմբեր 26ի թիւէն:

«Երեւանի մէջ հրատարակուող «Տնտեսական Լրաբեր» անունով բոլշեւիկեան ռուսական պաշտօնաթերթին մէջ, ծանօթ հայախօս բոլշեւիկ Ա. Կ. (Արտաշէս Կարինեան?) ընդարձակ յօդուած մը գրած է վերոյիշեալ խորագրին տակ, որուն հետեւեալ մասերը կարեւոր կը համարենք ներկայացնել մեր ընթերցողներուն:

«Պէտք է այժմ եւ եթ յայտարարել, կ'ըսէ Ա. Կ., որ բոլոր յայտերը Հայաստանում կամ Հայաստանին կից շրջաններում հող ստանալու մասին անիրականալի են: Հայաստանը հողային փոքր չունի: Մանր բարձրակարգ բոմանտիկների հիւսած բոլոր հաշիւները Տանկահայաստանի հողերի մասին՝ բոլորովին անհող են: Այդպիսի կացութեան մէջ կարող է լինել միայն մի ելք եւ մի ուղի, այն է — հողային կնճռի

լրծումը Հայաստանից դուրս եւ խորհրդային Միութեան սահմաններում: Հայաստանը այժմ մեկուսացած եւ ինքնամփոփ հողային միառարչէ: ՆԱ ՀՐԱԾԱՐՈՒԵԼ Է «ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ» ԳԱՂՔԱՓԱՐԻՑ ԵՒ ԿԱՄՈՎԻՆ մտել խորհրդային ընկերվար Միութեան մէջ: Այժմ նա — անբաժանելի մասն է խորհրդային ֆեդերացիայի: Ահա այս պատճառով է, որ նա կարող է խնդրել միւս խորհրդային հանրապետութիւններից, որ պէտքի իրենց ազատ հողային ֆոնդից սան որոշ տարածութիւն եւ դրանով աջակցեն հողային կնճռի լուծմանը Հայաստանում: Այդպիսի հողեր քիչ չեն Հիւսիսային Կովկասում, Դոնի շրջանում եւ Կուրանում: 300 հազար հայ գաղթականների բնակեցումը խորհրդային միութեան հսկայական տերիտորիայի վրայ աւելի հեշտ խնդիր է, քան թէ սոված ու քայքայուած Հայաստանում: Այդ գաղթականութեան բնակեցումը կ'ազատի Հայաստանը ծանր քեռից, որ խեղդում է նրան: ԱՅՎ ՁԵՆՈՎ ԻՐ ՀԻՄՔԻ ՄԷՋ ԿԸ ԽԵՂԴՈՒԻ ԱՄԷՆ ՄԻ ԱԶԳԱՅԻՆԱԿԱՆ ՓՈՐՁ ԵՒ ԿԸ ստեղծուի աւելի ամուր Կաստուանդան Մերձարո Արեւելի ժողովրդների միութեան համար:

«Կայ եւ մի ուրիշ ելք, այն է՝ դարձնել Հայաստանը լեռնադիրնաքերական երկիր: Հսկայական բնական լեռնային հարստութիւնները, պղնձի հանքերը եւ գործարանները, որոնք գտնուում են Այլաշվերդի, Ղափան եւ Զանգեզուր, բարեկալտստ Կայմաններում կարող կը լինեն դառնալ ժողովրդական տնտեսութեան զարգացման հիմնական աղբակներ: քայքայ յոյ խնդրի լուծումը այժմ Խ. Հայաստանի ուժերից վեր է, ինչպէս վեր է նաեւ խորհրդային ամբողջ ֆեդերացիայի ուժերից: Ահա թէ ինչո՞ւ հողային կնճռի այն լուծումը, որ առաջադրուած է մեր կողմից, — մլսակ եւ ամենէն նպատակայարմար ձեւն է»:

«Բոլոր այդ (պատերազմի) դէպքերը չէին կարող անհետեւանք անցնել մեր երկրի համար: Նրանք աւելի բազմաքրին քայքայուած, աւելի շատացրին անգործ եւ անհող մարդկանց թիւը: Միայն գաղթականների թիւն է Հայաստանում մօտ 300,000: Կառավարութիւնը այժմ իսկ մտահոգուած է 20,000 որբերի ճակատագրով, որոնք մօտակայ տարիներին պիտի հեռանան որբանոցներից եւ ուժեղացնեն հողագործական գաղթականութեան շարքերը: Այս փաստերը անվիճելի են եւ բազմիցս անգամ նկատուելի են խորհրդային մամուլի կողմից Հայաստանում: Այս ամէնը վնասակամութիւն թելադրում են մեզ, — ՎԵՐՋ ՏԱԼ ՀԱՅՈՒԹԵԱՆ «ՀԱԻԱՔՄԱՆ» ԳԱՂՔԱՓԱՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՄԻ ԳԱՂՔԱՓԱՐ, ՈՐ ՄԻՆՁԵՒ ԱՅԺՄ Է՛Լ ԱՊՐՈՒՄ Է ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶԱՆԳՈՒԱՄՆԵՐԻ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ»:

Բոլշեւիկ պետական գործիչը հետեւեալ կերպով կ'երկարակցեն իր նշանաւոր ուսումնասիրութիւնը.—

Ա. Հայաստանը հողային ազատ ֆոնդ չէ ունեցած, չունի և մախտանսի ապագային մէջ չի կրնար ունենալ:

Բ. Այդ ֆոնդի բացակայութիւնն է եղած պատճառը, որ գարգանայ «ազգայնական բովանտիկան» եւ հայութիւնը ձգտի տիրանալու իր «պայպենական հողերուն»:

Գ. Այդ ֆոնդի բացակայութիւնն է պատճառը, որ մաքու աշտր վառ ու կենդանի է «Միացեալ եւ Անկախ Հայաստանի» գաղափարը ժողովրդական գանգուածներուն մէջ:

Ուստի, միանգամ բնդմիշտ այս բոլոր կենսիւնները լուծելու համար, անհրաժեշտ է մախ՝

Վերջ դնել Հայութեան «հաւաքման» գաղափարին Հայաստանի մէջ: Եւ ապա՝

Երկրի մէջ եղած 300 հազար արեւմտահայ գաղթականութիւնն ալ ցրուել լայնածաւալ Ռուսիոյ մէջ»:

Վ Ե Ր Զ Ի Ն Փ Ո Ր Զ Ը

ՐԻԿԱՅԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախորդ էջերուն մէջ ներկայացուցինք համաձայնութեան բազրաթիւ փորձեր Հայաստանի Հանրապետութեան եւ Ս. Միութեան միջեւ, կարենալ խուսափելու համար թրքական վտանգէն:

Ս. Միութիւնը միշտ նախապատուութիւն տուաւ թուրքերուն, եւ երկու կողմի բանակները յօշոտեցին Հայաստանը:

5000 քաղաքական տարադիրներ եւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան անդամները, 1921ի գարնան, Զանգեզուրէն անցան Պարսկաստան եւ հոն ապաստան գտան:

Մանր վիճակ եւ յուսաբեկում սկսած էին թէ՛ երկրի եւ թէ՛ արտասահմանի հայութեան մէջ, քանի որ արեւմտեան պետութիւնները, Արդիւրու Լիկան ոչ մէկ գործնական օգնութիւն կրցան հասցնել Հայաստանի:

Յուսալքումի այս շրջանին է, որ Հ. Յ. Դաշնակցութեան Պատերազանատու Մարմինը կողմէ կը լիպորուէին բնկերներ Արշակ Զոմարեան, Վահան Նաւասարդեան եւ Վահան Փափաղեան Բիկայի մէջ բանակցութիւններ վարելու խորհրդային պատուիրակներու հետ:

Բանակցութիւնները տեղի կ'ունենան 1921 Յուլիս 8էն 14: Ս. Միութեան կողմէ իրեւ բանազնաց կը մասնակցին դեսպան Ա. Եոֆֆէ, Վահան ՏՏր Վահանեան (հետադային գնդակահարուած), Սահակ Տէր Գարրիէլեան (մաքրագործումներու ատեն «անձնասպան»):

Սովետ ներկայացուցիչները կը խոստանան իրենց ազդեցութիւնը ի գործ դնել, որպէսզի Հայաստան տէր դառնայ իր կորսնցուցած հողերուն: Իսկ Դաշնակցութիւնը բարեացակամ վերաբերում պիտի ունենար խորհրդային իշխանութեան հանդէպ: Մօտաւորապէս ասոնք էին համաձայնութեան սկզբունքները, որոնք «փարաֆէ» եղած էին:

Շուտով պարզուեցաւ, որ խորհրդային իշխանութեան նպատակըն էր ստուգել Դաշնակցութեան դիրքը Թուրքիոյ նկատմամբ: Սովետները վախ ունէին, որ կրնայ մեղմանալ հայութեանը լարուածութիւնը արտասահմանի մէջ, կացութիւն մը, որմէ՝ քաղաքական այնքան օգուտներ ձեռք բերած էին ուսերը եւ անոնց յաջորդող բոլշեւիկները:

Ամէն պարագայի մէջ, «փարաֆէ» եղած համաձայնութիւնը չլաւերացուցին ոչ բոլշեւիկները եւ ոչ ալ Դաշնակցութեան Գերագոյն Մարմինը:

Հայ Դատի պատմութեան մէջ, Բիկայի բանակցութիւնները կազմեցին վերջին փորձ մը՝ հարթելու բոլշեւիկներու եւ Անկախ Հայաստանի միջեւ զոյութիւն ունեցող քաղաքական տարակարծութիւնը:

ՀԱՅՏԵՐՈՒ ԶԱՐԴԱՐԱՐՆԵՐԸ ԿԸ ՊԱՏԺՈՒԻՆ...

Նախորդ գլուխներուն մէջ մանրամասնօրէն ցոյց տուինք, թէ ինչպէս մէկ միլիոն հայերու ջարդարար Թալէաթ, Էնվեր, Ճեմալ եւ ընկերները ապաստան կը գտնէին Պերլին, Հոռոմ, Մոսկուա եւ Թիֆլիս: Բոլշեւիկները զուրգուրանքով ընդունեցին իթթիհատութէրբաբար վարիչները, զանոնք օգտագործելու համար համաձայնականներուն դէմ:

Համաձայնական պետութիւններու գինուորական ատեանները Կ. Պոլսոյ մէջ մահապատիժ սահմանեցին քանի մը երկրորդական դէմքերուն: Իթթիհատականներու մէկ մասը Մալթա կղզին աքսորուեցաւ, քանի մը ամիս ետք ազատ արձակուելու համար:

Հայկական ջարդերու զոհերը ի զուր արդարութիւն սպասեցին միջազգային ատեաններէն: Մանաւանդ ուսուցիչները գործակցութեան հետեւանքով Հայաստանի յօշոտումը աւելի խոր դառնութեամբ լեցուց վրէժխնդիր հայորդիները:

1921 Մարտ 15ին, Պերլինի մէջ, Սողոմոն Քէչիբեանի գրե-
զակով գետին կը փռուէր ՄԼԾ ԱՏրագործ Թայֆաթը:

Սողոմոն կը ձերբակալուի: զատագարութիւնը կը վերածուի
Թայֆաթի զատագարութեան եւ ազատ կ'օրէսուի Քէչիբեան:

Նոյն տարուան Դեկտ. 6ին Հոռոմի մէջ կ'օտարեկուի Ապրիլ
Եան եղևոնի չըջանի Թուրք վարչապետ Սալիա Հալիմ փաշա:

1922 Ապրիլ 17ին, դարձեալ Պերլինի մէջ կը պատահուի
ՊԵՏԱՎԱՅԻՆ ԵԱՐՔԻՐ ու ձեռնայ Ազմի: Իսկ 1922 Յուլիս 25ին, Թիֆ-
լիսի մէջ, ՄԼԾն Պետրոս փառոցին վրայ, ճիշտ Ձեկայի շէնքին տօջե-
լիքնաչարժով անցնելու առնել, ձեռնայ փաշան իր երկու թիկնապա-
ներով կ'ոչնչացուի:

Կովկասի մէջ Երրակ, Բազու եւ Եուշի նոյնպէս տեսած էին
եղևոնը: Հեղինակներէն Ազրպէյջանի վարչապետ Խան Կոյսկի աճաբե-
կուեցաւ 1920ին, Թիֆլիս, իսկ նախարար ձեռնաշիշը 1921 Յուլիս 19ին
Պոլիս: Վերջինին աճաբեկիչը Միսոք Թորյաբեան իլևե ձերբակալուե-
ցաւ, բայց անպիտան գինուորական առևանին կողմէ ազատ արձակ-
ուեցաւ: Դատարանին մէջ լսուեցան բաշմաթիւ վկայութիւններ
հայերու ղէմ կատարուած ջարդերու մասին:

Ջարդարաններէն մէկ քանին ալ իրենց պատիժը դտան Անգա-
րայի մէջ կախաղանի վրայ, 1926ին, Քէմալի ղէմ պատրաստուած մա-
հափորձին պատճառով:

Իսկ էնվեր սպաննուեցաւ Թուրքիստանի մէջ, Բոյշեւիկներու
ղէմ ապստամբութեան մը ընթացքին:

Հ. Յ. Դաշնակցութիւնը կուզար հաստատել Լինչի ախ կար-
ծիքը որ յայտնուած էր 1897ին «Եթէ ինձի հարցուէր, թէ ի՞նչ յատկա-
նիշներ հայերը կը զանազանն միւս արեւելքցիներէն, պիտի պնդէի
թէ անոնք ունին յատկութիւն մը, որ ժողովրդական բարբառով՝ ան-
վախութիւն կը կոչուի» (էջ 100):

Փիէր Լոթինները այլևս չէին կրնար կրկնել ախ վիրաւորանքը:
Թէ հայերը նապաստակներ, վախկոտներ են եւ զատագարտուած են
միայն ջարդուելու:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ «ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐ»Ը 1923ԻՆ

1923 Օգոստոս եւ Սեպտեմբեր ամիսներուն, խորհրդային մա-
մուլը մեծ աղմուկով կ'իմացնէր, թէ ինքնադատապարտութեան յայ-
տարարութիւններ (ղեքլարացիաներ) ստորագրած էին Վրաստանի Ազ-
րային դեմոկրատ, Մենչևեիկ Սոցեալ դեմոկրատ, Ազրպէյջանի Մու-
սաւաթ կուսակցութիւնները եւ Հ. Յ. Դաշնակցութեան «Աշխատա-
ւոր» կուսակցութիւնները: Վերջին յայտարարա-
յիքը ստորագրած էին Վրաստանի Հ. Յ. Դ. Նախկին Կեդր. Կոմիտէի
'անդամներ' Կորիւն Ղազարեան, Բ. Թոփչեան, Մինաս Մակարեան, Ա.
Նալչաջեան, Տիգրան Աւետիսեան եւ Դրօ: Այս յայտարարութիւնը առա-
ջին անգամ յայտեսաւ «խորհրդային Հայաստան» եւ Թիֆլիսի «Ջարիա
վոստոկա» թերթերու 1923 Յուլիս 31ի թիւին մէջ:

Այս յայտարարութիւնը Ձեկան յաջողած էր ձեռք ձգել, ձեռնայ
փաշայի աճաբեկումի հետեւանքով ձերբակալուած 250 դաշնակցական-
ներ բանտէն ազատ արձակելու առնել:

Ձեկայի գործակալները սկսան Հայաստանի բոլոր զիւղերուն
եւ շուրջներուն մէջ դաշնակցականներ որսալ եւ յայտարարութիւններ
ստորագրել տալ անոնց:

Նոյնմբեր 20ին, մօտ 250 զպատգամաւորները ու մասնակցու-
թեամբ, Երևանի պետական Թատրոնի շէնքին մէջ, Ձեկայի հսկողու-
թեան տակ, կը բացուի համազումարը, ուր «Նախաձեռնող Բիւրօն» կը
ներկայանայ 3247 դաւանափոխներու յայտարարագրերով:

Համազումարը Համայնավար կուսակցութեան փառաբանու-
թիւնը կատարելէ ետք, կը քուէարկէ հետեւեալ բանաձեւը:

1.— Լիկվիդացիայի ենթարկել Հ. Յ. Դաշնակցութեան բոլոր
կազմակերպութիւնները Հայաստանում:

2.— Հաստատել գաւառական եւ շրջանային կոմիտէներէն բերի
որջումները դաշնակցական տեղական կազմակերպութիւնների լիկվի-
դացիայի մասին:

3.— Առաջարկել Ագրիէյջանի, Վրաստանի եւ Խորհրդային
Հանրապետութիւնների սահմաններում, այլ եւ Տանկաստանի ու գա-
ղութահայ միւս վայրերում գտնուող դաշնակցական աշխատաւոր շար-
քերին մեր օրինակով լուծել դաշնակցական կազմակերպութիւնները եւ
ցրել զեկավար մարմինները տեղերում:

4.— Անվանել յայտարարել Դաշնակցութեան բարձր կուսակ-
ցական մարմինների կողմից տրուած կուսակցական մանդատներն ու
յանձնարարութիւնները:

5.— Վնասկան կերպով արգիլել Հ. Յ. Դաշնակցութեան արտասահմանում գտնուող բարձրագոյն մարմիններին հրապարակ գալ կամ յայտարարութիւններ անել Հայաստանի կազմակերպութիւններին անունից:

6.— Սոյն որոշումներն ուզարկել Բ. Ինտերնացիոնալի միջազգային քիւրոյին ի գիտութիւն:

7.— Դնել մեր բովանդակ ուժերը միջազգային բանուոր-գիւղացիական յեղափոխութեան եւ նրա մարտական շտաբ Գ. Կոմիտէի տրամադրութեան տակ եւ լինել պատրաստ նրա ղեկավարութեամբ պաշտպանելու հոկտեմբերեան մեծ յեղափոխութիւնը եւ նրա ծնունդ հարիւրդային իշխանութեան նուաճումները բոլոր հակայեղափոխական ուժերից եւ վտանգներին, լինեն նրանք դրսից թէ ներսից:

Բոլշեւիկեան սարսափի եւ բռնութեան տակ առնուած այս յարարութիւնները ոչ մէկ նշանակութիւն ունեցան երկրի եւ Սփիւռքի մէջ(*):

Ժամանակ առ ժամանակ պիտի վերսկսէին ձերբակալութիւնները, աքտորները՝ «հակայեղափոխականներ», «կուլակներ», «Փաշիսաներ» զանազան որակումներով, բայց երբեք խաղաղութիւն պիտի չտեսնէր բոլշեւիկը, իր գործած ոճիրները միշտ պիտի հալածէին զինք:

Եթէ այդ սադրանքներով յաջողեցաւ տկարացնել Դաշնակցութեան կազմակերպութիւնը հայրենիքի մէջ, ասոր փոխարէն աւելի զօրացաւ զանգուածներու զարշնջը բռնութեան դէմ եւ մարդիկ աւելի ամբօրէն փարեցան ազատութեան ու անկախութեան գաղափարին:

Եւ «հաշուարդար»էն երեք տասնամեակ ետք, Սուրէն Թովմասեան՝ Կոմկուսի քարտուղարը Հայաստանի մէջ, 14 Փետր. 1954ին, Հայկոմկուսի 17րդ համագումարին, յայտարարեց հետեւեալը.

«Ձի կարելի մտռանալ, որ մենք ապահովագրուած չենք բուրժուական ռեակցիոն իդէոլոգիայի, մասնաւորապէս բուրժուա-մացիոնալիստական Դաշնակցութիւն պարտիայի իդէոլոգիայի ներքափանցումից:

«Անհրաժեշտ է... վնասկանօրէն արմատախիլ անել բուրժուական իդէոլոգիայի ազդեցութեան ներքափանցումը սովետական մարդկանց միջավայրը, ուժեղացնել պայքարը բուրժուական մացիոնալիզմի դէմ...» («Ս. Հայաստան», 15 Փետր. 1954):

(*) Վ. Նաւասարդեան՝ «Հ. Յ. Դաշնակցութեան լիկւիտացիան», 1924, Գահրէ, էջ 48:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ճարերու Ռուսաստանը ամէն կերպ աշխատած էր տկարացնել Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, դրաւելով անոր կալուածները եւ փակելով հայ վարժարանները:

Հոն՝ ուր ցարերը ձախողեցին, բոլշեւիկները յաջողեցան իրենց հետեւողական քաղաքականութեամբ եւ արիւնարբու բռնապետութեամբ:

Կարլ Մարքսի, Լենինի հակակրօն ըմբռնումները օրէնքի կարգ անցան ամբողջ Ս. Միութեան, նաեւ՝ Հայաստանի մէջ:

Հայաստանի խորհրդային կառավարութեան 1922ի դեկտեմբեր (հրովարտակ) պետութենէն անջատուած հուշակոնցաւ եկեղեցին, ջնջուած յայտարարուեցաւ Հայոց Եկեղեցւոյ ընդհանրականութիւնը, միասնականութիւնը: Նոյն դեկտեմբեր իրաւունք կուտար հաւատացեալներուն՝ տեղական կրօնական համայնքներ կազմել, առնուազն քսան անդամներով, որոնք ոչ մէկ օրդանական, կազմական կապ պիտի ունենային իրարու հետ:

Բոլշեւիկները Հայ. Եկեղեցին քայքայելու համար երկու անջատ կաղմակերպութիւններ ստեղծեցին՝ «Անաստուած» եւ «Ազատ Եկեղեցի», իրենց օրգաններով:

«Անաստուածութեան հնգամեակը կը հետապնդէ լիակատար հաշուեյարդարը այն բոլոր կրօնական վարդապետութեանց եւ ուսմաններու, եկեղեցական համայնքներու եւ հերձուածներու, որոնք գոյութիւն ունին հարիւրդային Միութեան մէջ, անկախ անոնց սկզբունքային վերաբերումէն դէպի հարիւրդ. իշխանութիւնը... Բոլոր յարանուանութեանց ազօքարանները պիտի փոխանցուին պետութեան անոնց մէջ ակումբներ, սիմեմաներ եւ ժամանցի այլ օգտաւէտ օճախներ հաստատելու համար»(*):

Այս հնգամեակները հետեւողական կերպով քայքայեցին Հայ. Եկեղեցին: Հայաստանի կոմիսարներէն Գ. Մակինցեան կը գրէր.

«Ձոր տերեւներու պէս՝ տակաւին ծառի ճիւղերէն կախուած կը մնան հոգեւորականները եւ մենք համբերութեամբ կը սպասեմք, որ այդ տերեւները մեզմ հովերէն գետին իյնան» («Կոչնակ», 1924, Օգոստ. 16):

Այդպէս ալ պատահեցաւ, յաջողեցան բնաջնջել Հայ Եկեղեցականութիւնը, մթերանոցի եւ շարժանկարի սրահներու վերածեցին ամբողջ եկեղեցիները:

(*) Ա. Գարտիզեան՝ «Հայ Եկեղեցւոյ տաղանայր եւ անոր պատասխանատուները», 1938, Գոսթըն, էջ 39:

Անբարոյ, այլասերած քանի մը հոգեւորականներ՝ Պաթուհի քահանայ Մեսրոպ Մելիքանի եւ Բենիկ վարդապետի գլխաւորութեամբ, հակակրօն պետութեան նիւթական օժանդակութեամբ պարբերաթերթ մը հրատարակեցին, իբրեւ թէ եկեղեցին բարեկարգելու համար: Իրենց նպատակն էր վարկաբեկել ու քայքայել էջմիածնի հեղինակութիւնը, եւ լրել յաջողեցան: Եւ ճիշդ այնպէս, ինչպէս Ռուսաստանի մէջ, գործեց «Կենդանի Եկեղեցի»:

«Ազատ Եկեղեցի»ն արտասահմանի մէջ ալ ունեցաւ իր աջակիցները. Ամերիկայի գաղութին մէջ Պոսթընի հովիւ Շահէ վարդապետ Գասպարեան, Ղեւոնդ եպիսկ. Դուրեան, իսկ Յունաստանի մէջ Կարապետ եպիսկ. Մազլըմեան:

Ներակատակերգութիւն էր, որ խորհրդային բռնապետութեան մէջ միակ «ազատ» մամուլը «Ազատ Եկեղեցի» պարբերականն էր, որուն կատարած գործի մասին Ալ. Միասնիկեան հրճուանքով կ'աւետէր:

«Եկեղեցի»ն հալածողը, այն ոտմատակ տուողը յամենայն դէպս հայ բոլշեւիկները չեն, այլ Աշոտ եպիսկոպոսները ու Բենիկ վարդապետները, որոնք այսօր դուրս են եկել իրենց եկեղեցու դէմ եւ հրապարակով քարկոծում են նրան: Դա հայոց «առաքելական» եկեղեցու քայքայումն է նշանակում. նա իմքն է քայքայում» («Կուսակցութիւնները գաղութահայութեան մէջ», էջ 54):

Սակայն եւ այնպէս բոլշեւիկները անուանապէս պահեցին էջմիածինը արտասահմանի համար եւ թոյլ տուին, որ իրենց օրով Պորէն Մուրադբէգեան (1932ին), Գէորգ Զէօրէկչեան (1945ին) եւ Վազգէն Պալճեան (1955ին) եպիսկոպոսները կաթողիկոս դասան, արտասահմանի եկեղեցական ու աշխարհական պատգամաւորներու մասնակցութեամբ:

էջմիածինի խողովակով խորհրդային իշխանութեան փորձերը միշտ յաջողութեամբ չպսակուեցան արտասահմանի մէջ: Ճիշտ է, որ առիթ տուին պառակտումներու, վէճերու, բայց ազատ աշխարհի մէջ Հայ. Եկեղեցին դորացաւ եւ ժողովրդական ուժերն ընդդէմութիւն մը չազմակերպուեցաւ խորհրդային թափանցումներուն դէմ:

ՀԱՅ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐԸ ԵՒ ԱՄԵՐԻԿԱԿԱՑ ԳԱՂՈՒԹ:

Հայաստանի խորհրդայնացումէն անմիջապէս ետք, Համայնավար կուսակցութիւնը մասնաւոր ուշադրութիւն դարձուց ամերիկահայ գաղութին:

Քիչեր կ'ըմբռնեն, որ այդ գաղութին մէջ հետազային պատահած պառակտումը արդիւնք էր Համայնավար կուսակցութեան հետեւողական քաղաքականութեան ու կատարած գրգռութիւններուն ու նուաճումներուն:

Ս. Հայաստանի համայնավար առաջին ղեմքերէն Աշոտ Յովհաննիսեան, 1925ին Երեւանի մէջ լոյս տեսած «Նորք»ի Ե-Զ. միացեալ թիւին մէջ (էջ 272). «Ամերիկահայ կոմունիստական շարժումը», խորագրին տակ, կը գրէր:

«Արտասահմանեան հայ մասսաների շրջանում կոմունիստական խօսքի ու գործի յաջողութիւնը ոչ մի վայրում չի շահագրգռում մեզ այսօր այնպէս, ինչպէս ամերիկահայ գաղութում: Ճիշտ է, ներկայիս այդտեղ չէ, որ խարխուս է ձգում աստանդական հայ կապիտալը, այդտեղ չէ, որ ապաստանում են նրա պաշտօնական քաղաքականութիւնը նիւթազ պատուիրակութիւնները», ինչպէս նաեւ այդտեղ չէ, որ կենտրոնացած են գաղթական այն մասսաները, որ հրատապ կարիք ունին մեր խօսքին ու գործնական միջամտութեամբ:

«...Սակայն ամերիկահայ գաղութի գերագնացող կարեւորութիւնն այլ տեսակետից է, որ չպէտք է անտեսեմք: Այստեղ է, որ համադիպում են կապիտալիստական շահագործութեան եմքարկուած գաղութահայ պրոլետարիայի գլխաւոր գնաւաճը: Այստեղ է, որ գաղութահայ քաղաքական կազմակերպութիւնները տասնեակ տարիների աշխատանք են տարել մի քանի տասնեակ հազարի հասնող պրոլետարական մասսաների կազմակերպութեան շուրջը՝ մերք ազգային-քաղաքական դրադիցիոն ծրագրի հիմունքով, մերք պարզելով պրոլետարիատի դասակարգային-յեղափոխական պայքարի դրօշ:

Պատահական չէ, որ կորցնելով բնաշխարհի մասսաների վրայ երբեմն ունեցած ազդեցութիւնը, դաշնակցականներն ու հնչակեանները հաւաքել են իրենց մտաւոր ուժերը, — թող ներուի մեզ նրանց հասցէին պերճանքի այդ ոճը, — իրենց մասսայական ազդեցութեան վերջին մնացորդը գէթ հեռաւոր այդ գաղութում պահպանելու համար»:

Աշոտ Յովհաննիսեան կուսայ մանրամասնօրէն հայ համայնավարներու կազմակերպութեան պատմութիւնը Ամերիկայի մէջ, յայտնելով որ 1921էն սուրին «Հայ բանուորական կուսակցութիւն»ը «կապ է հաստատում ամերիկեան բանուորական կուսակցութեան՝ Ուորկըրը:

Պարտիի հետ՝ տանելով սրա զեկավարութեամբ կոմունիստական լեզու աշխատանք»:

Նոյն յօդուածին մէջ Խորհրդային Հայաստանի Իշխանաւորը կուտայ շարք մը հրահանգներ, թելադրանքներ, որոնց կարգին կ'ընէ. «Եւ ոչ միայն Դաշնակցութեան բացայայտ թշնամանքը չէզոքացնելու համար է, որ անկրթութիւնը է այդ աշխատանքը, այլեւ նոյն չափով ռազմականութեան եւ հնչակեանքի երկրորդի ու խարսխիկ «բարեացակամութիւն»ը մերկացնելու եւ նրանց դէմ սպառազինութիւն համար»:

Խ. Հայաստանէն տարուելիք աշխատանքի մասին Ա. Յովհաննիսեան կը յայտնէ, որ ան «նպատակ պիտի ունենայ միայն օժանդակելու գաղութահայ կազմակերպութիւններին աշխատանքներին, գարկ տալու նրանց իդէալոգիական-գաստիարակչական եւ քաղաքական-կազմակերպչական գործերին», սպա կ'աւելցնէ. «Կոմունիստական ընթացիկ քաղաքականութեան ու գործող հրահանգների սահմաններում պիտի է որ իւրաքանչիւր երկրի կուսակցական-կառուցողական աշխատանքն ու գաղափարական պրոպագանդը նպաստի ընդհանուր շարժման եւ դիրքացնի իւրաքանչիւր վայրում կատարուող աշխատանքը: Այդ տեսակետից է, որ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԱԻԵԼԻ ՍԵՐՏ ՈՒ ԱԻԵԼԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՆԵԼ ՄԵՐ ԵՒ ՈՒՌՈՎԸՐՍ ՊԱՐՏԻԻ ՀԱՅ ՀԱՏՈՒԱԾԻ կայն ու առնչութիւնը: Փոխադարձ առնչութիւնն աւելի արգասաւոր դարձնելու տեսակետից անկրթութիւնը է, որ ՍԵՐՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ՍՏԵՂՍՈՒԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԲԶԻՋՆԵՐԻ ՄԻՋԵՒԻ»:

Պահ մը շեղելով ժամանակագրական կարգէն, տանք ամերիկեան ընդհ. դատախազի որոշումը «Հայ Յառաջդիմական Լիկ»ի մասին.

ՈՒԱՇԻՆԿՔԸՆ, Սեպտ. 25, (Նույնաթիւն Փրէս). — Ընդհանուր Դատախազ Թամ Ս. Քլարք աւելցուց 4 նոր կազմակերպութիւններ դաւադիր խմբակցութիւններու նախորդ ցանկին վրայ: Այդ 4-ն ալ համայնավար են. — «Ամերիկեան Կամիսոն Եւրոպայի Գործարաններու Օգնութեան, Ամերիկեան Խորհուրդ Խորհրդային Յարաբերութիւններու, Համայնավար Քաղաքական Ընկերակցութիւն, Ժողովրդական Ռեւոլյուցիոնիստական Լիգան»:

Թամ Քլարքի վերաբնութեամբ այս ցուցակը հրատարակուեցաւ Հաւատարմութեան Վերաբնութիւն «Պորտ»ի ատենապետ Սմիթի Ուրիշարտըրի կողմէ: Ցանկի վրայ դրուած են 123 կազմակերպութիւններ: Այդ ցանկը դրկուած է կառավարական բոլոր պաշտօնատուներուն, որպէսզի կառավարական պաշտօնեաներու հաւատարմութեան պարագան վերաբնութեան ենթարկուի:

Դատախազ Քլարք այդ «դաւադիր» կազմակերպութիւնները

դասաւորած է հետեւեալ կերպով. — 22 կազմակերպութիւններ ուսման արդիւնաւորական (Թոթալիթէրիզմ), 15 կազմակերպութիւններ որպէս ֆաշիստ, 82 կազմակերպութիւններ որպէս համայնավար, 6 կազմակերպութիւններ ալ կառավարութեան բռնի տապալումը շատագնադրուած: Ըստ այդ 123 անուններու ցանկի եւ դասաւորման, համայնավար դաւադիր կազմակերպութիւններու շարքին դրուած է «ԱՐՄԵՆԻԸՆ ՓՐՈՎԿՐԵՍԻՎ ԼԻԿ ԱՎ ԱՄԵՐԻԿԱ» («Ամերիկայի Հայ Յառաջդիմական Լիկ»):

(«Հայրենիք», 29 Սեպտ. 1948)

Իսկ 1955 Յունիս 26ին, Պոսթընի «Հայրենիք» օրաթերթը տուաւ հետեւեալ տեղեկութիւնը:

«Միացեալ Նահանգներու ծերակոյտին ներքին Ապահովութեան մասնախումբը, Ուրբաթ օր, յայտարարեց որ Ամերիկայի մէջ կան 34 օտար լեզուներով հրատարակուող թերթեր, որոնք կը հետեւին համայնավար գծին: Այս թերթերէն 18ը լոյս կը տեսնեն Նիւ Եորքի մէջ:

Մասնախումբի առջեւ վկայութիւն կուտար Տիկ. Սթիւարտը, որ օտար մամուլին եւ օտար ձայնասփիւռին վրայ հակողութեան կատարող մարմնոյն նախկին պաշտօնատարներէն մէկն է:

Տիկ. Խնտրեսի մի առ մի տուաւ անունները այդ 34 համայնավար թերթերուն, որոնց շարքին կը փայլին հետեւեալ հայերէն հրատարակութիւնները.

«Պայքար», «Լրաբեր», «Ներկայացող Հայաստան», «Նոր Օր» եւ «Միքս Սիւէթ-Երբ»:

ՃԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

1921ի ձմեռէն ետք, բուլղարիկները յաջողեցան հաշուեյարդարի ենթարկել Փետրուար 18ի յեղափոխութիւնը եւ Զանգեզուրի սուլտանութիւնը: Ընդառաջելով Լենինի հրահանգներուն՝ աստեղ մը մեղմ բաղադրականութիւն վարեցին Հայաստանի մէջ:

Զանդուածային հալածանքներն ու ձերբակալութիւնները վերսկսան 1926ին: Հ. Յ. Դ. օրգան «Դրօշակ», որ սկսաւ հրատարակուիլ 1926ին Փարիզի մէջ, Ապրիլի իր թիւով, «Հայաստանի ձերբակալութիւնները» խորագրին տակ, կը գրէ.

Անցեալ Փետրուարին արտասահմանեան մամուլին հաղորդուած

Ինչպե՞ս պիտի օգտագործվեն և օգտակար լինեն հարկաբերական օրենքները, որոնք տեղի ունեցած էին Հայաստանի մէջ, Յունուարի 1-ի պահանջները:

Այս մասին բացարձակ լուսօրինակ կը պահէր խորհրդային մասնակցը, իսկ արտասահմանեան հակադաշնակցական թերթերը, սովորականին պէս անպարբեյիմ «սուտ», «չբերուածոյ» եւն. հոչակելի օրենքալուծութեանց լուրը: Եւ իրենց մէկ օրկանը աւելի առջ երթալով, «պաշտօնակա՞ն հերքում» մըն ալ բերել տուաւ Երեւանէն:

Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրօն, որ աշարհութեամբ կը հետապնդէր խնդիրը առաջին օրէն իսկ, ներկայիս լրացուցած ըլլալով իր բնութիւնը, ի վիճակի է պաշտօնապէս հաստատելու, թէ ԲԱՍԱՐՁԱՎԱՊԷՏ ՃԻՇՏ ԵՆ ՁԵՐԲԱՎԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ, թէ շատերը մինչեւ այսօր կը տառապին բանտերու մէջ, իսկ շատերն ալ ախորժած են Ռուսաստանի խորհրդը:

Հայաստանի սահմաններուն մէջ առաջին օրերուն օրերակալուած են. Երեւանի շրջան՝ 43 հոգի, Ալագեազ 12, Էջմիածին 15, Կոտայք 5, Ղամաբուր 2, Դիլիջան 10, Դարալագեազ 12, Ջանգեզուր 11, Երեւան 89, Երեւանի զինուորական եւ հրամանատարական կազմէն 40:

Այնուհետեւ օրերակալութիւնները (շարունակուած են փոքր ընդհատումներով, միշտ վառ պահելու համար ահ ու սարսափը: Մասնաւորապէս Էջմիածին օրերակալուած են շարք մը ուսանողներ եւ զինուորներ: Այս օրերակալուածներու թիւը, ինչպէս եւ խորհրդային միւս նրկիրներու մէջ օրերակալուած հայերու թիւը դեռ եւս ստուգման կը պարտի:

Բանտարկեալները, որոնց մեծամասնութիւնը ուսուցիչներ, ուսանողներ եւ զինուորներ կը կազմեն, դժնդակ վիճակի մը դատապարտուած են, Չեկայի խոճաւ ցնդներուն մէջ, թէ բարոյապէս եւ թէ փիզիկապէս:

Բաշխուկեան բռնակալութեան առաջին փառաբանութիւնը չէ այս, անպաշտպան գոհներու հանդէպ: Այս իշխանութիւնը միջոցներու մէջ խորութիւն չի դնէր, անաստան պահելու համար իր լուծարարութեանցին ալ ինքն է որ կը հնարէ, ինչպէս ներկայ պարագային:

Բայց իր իսկ ձեռքով կը փորէ իր հիմքերը: Ճակատագրական է այս փառաբանութեան վախճանը:

Եւ գոհերը շատ լաւ գիտեն այդ պարագան, երբ աներկիւզ կը դիմագրաւեն ամէն վտանգի, կը տոկան անլուր չարչարանքներու:

Հայաստանի մէջ օրերակալութիւնները, աքսորները, Երբէք Լանգ շառն եւ միշտ շարունակուեցան:

«Դրօշակ»ի 1931 Ապրիլի Թիւին մէջ, «Աքսորականները» խորագրին տակ, լոյս տեսած են Հայաստանէն դրկուած Հետեւալ ստորջ տեղեկութիւնները:

«Վերջին հինգ տարւոյ ընթացքում Հայաստանից դէպի Սիրիա եւ Հիւսիսային Ռուսաստանի տունդրանները արտարւածներ թիւր հանում է հինգ հազարի մոտ 5000 հոգուց մեծ մասը զիջակներ են, ապա՝ ուսանողներ, մտաւորականներ, բանտարկներ եւ այլն: Աքսորականները, մեծ մասամբ, մեղադրուած են Դաշնակցութեան պատկանելու մէջ, բայց կան եւ ուրիշ կուսակցականներ, ինչպէս օրինակ, Դաւիթ Անանուր: Բաւականին խոշոր տոկոս են կազմում երիտասարդները, 18 տարեկանից մինչեւ 25 տարեկան՝ ուսանողներ, աշակերտներ եւ պարզ աշխատանքներ: Կան եւ կոմսոնիստ ընդդիմադիրներ՝ տրոցկիստներ:

Աքսորականներին այս բազմութիւնը ցրուած է ընդարձակ տարածութեան վրայ Արեւանգիւղից սկսած մինչեւ Սիրիերի խորքերը: Ոմանք մեկուսացուած են մեկուսարաններում (Իզոլատոր) եւ պահուած են իրենց պատանդ: Ոմանք՝ տաժանակիւր աշխատանքի են դատապարտուած հանքերում կամ փայտ կտրելու վայրերում: Ոմանք պահուած են Սոլովկի կղզում եւ բանտային տնտեսութեան մէջ: Ոմանք՝ սիրիական իսկ զիջակներում, Հազարատր վերստերով հեռու կենտրոններէ: Ոմանք ապրում են «ազատ», ուստիկանական հսկողութեան տակ:

Աքսորականներին վիճակը անտանելի է, ուղղակի դժոխային: Նրանք պաշտօններ վարելու իրաւունք չունեն, իսկ այս նպովեալ աշխարհում ով կտաժարութեան պաշտօնեայ չէ՝ չի կարող կօսակերտի խնամութեանից միւրք ստանալ: Իսկ ինչպէ՞ս են ապրում այդ դժբախտները: Ովքեր բանտերում եւ ազգերարաններում են՝ դատապարտուած են ուտել ինչ որ տալիս է կտաժարութիւնը: Երբ պակաս տուրիստներ չկան այնտեղ եւ «ուղղիչ տներով» պարծենալու կարիք չկայ, բանտը դժոխք է, եւ բանտային բեժիմը՝ դանդաղ, բայց ստորջ մահացման մի միջոց:

Պատկերը աւելի լաւ չէ, սակայն, եւ դուրսը, «ազատ» աքսորականները համար: Նրանք բոլորն էլ համարեա սեւապոթոութեամբ են պարապում. անտաններում փայտ են կտրում, հանքերում, աշխատում... Եւ այս բանի համար ստանում են չնչին աշխատավարձ: Կօսակերտներին դռները փակ են նրանց առջեւ, իսկ մասնաւոր շուկայում գնեքը անմատչելի են: Տնից օդնութիւն շատ քիչ են ստանում. այն էլ հազիւ 10—20 բուրբի ամսական. ինչպէ՞ս կարող են օդնել ինքն տեղիներն էլ, երբ իրենք էլ սոված մեղնում են: Ջուրակների բերանից կտրում են պատարը եւ ուղարկում իրենց աքսորական հարգատներին:

Այսպիսի պայմաններում քաղաքօրականները իրենց հացը իսկապէս հանում են ճարտից, հոդից: Դուրք պէտք է տեսնէք, թէ ինչպէ՞ս հարաւի տաք կլիմային սովոր մարդիկ, հարաւի թեթեւ հաղուտներով ամբողջ օր փայտ են կտրում անտանում 40—50 աստիճան ցրտին: Կեսնք կը դիմանա՞յ այդանոց: Աքսորականները, Ֆիզիկապէս դատապարտուած են մահանալու: Հիւսիսային կլիման, ճահճուտները, տայգաները լափում են իրենց պոչերին: Հայաստանի կարծրաթուղ կերտասարդները:

Քաղաք են ստանում եւ ուզարկում «Մինու» մեռնելու: Որքան է այսպիսիներէ թիւը:..

Հինգ տարի առաջ աքսորւածներէջ շատերի աքսորի ժամկէտը վազուց լրացել է, բայց նրանց չազատեցին, այլ առանց նոր մեղադրանք ներկայացնելու նորից դատապարտեցին երեքական տարով աքսորի նոյն վայրում: Ոմանք դեռ 1929 թ. Յունուարին լրացրել էին իրենց աքսորի ժամանակաշրջանը, բայց այն ժամանակ աւելացրին մէկ եւ կէսական տարի: Հիմա դարձեալ երեքական տարի աւելացրին: Պարզ է, որ ուզում են ամէնքէն կոտորել եւ որքան շուտ, այնքան լաւ: Հինգ հազար երիտասարդ, աշխատասէր հայեր կոտորում են հիւսիսային անտանելի սառցարաններում: Ի՞նչ են մտածում այս մասին արտասահմանի հայերը, ի՞նչ է մտածում եւրոպական դեմոկրատիան կամ Սոցիալիստական Ինտերնասիոնալը: Բոլշեւիկեան զինաններում մահուան դատապարտուած հազարաւոր աշխատւորները մի Սակո-Վանցետի է՞լ չարժեն, որ ձայն չեն հանում, չեն բողբոմ: Թ՞է խաչազող բոլշեւիկների ճոցիալիզմի կառուցումը՞ կուրացրել է մարդկանց աչքերը, եւ նրանք, իբրք, հաստտում են, որ Միբիւր աքսորւածները հակայնդափոխականներ են, իսկ գիտութեան եւ տեխնիկայի վերջին կատարելագործութիւններով զինւած Ձեկան յեղափոխութեան եւ սոցիալիզմի դատն է պաշտպանում...

Հ Օ Կ Ե Ի Պ Լ Ո Ք

Հայաստանի Հանրապետութեան շրջանին, Պոլսոյ հայ դաղութին մէջ կազմուած էր Հայրենիքի Օգնութեան Մարմինը, (ՀՕՄ), որ շարունակեց Հայաստանի դաղթականութեան համար զդեստեղէններ զրկել:

Տարի մը ետք, խորհրդային իշխանութիւնը Երեւանի մէջ կազմեց Հայրենիքի Օգնութեան Կոմիտէ (ՀՕԿ) մը, որ շուտով իր մասնաճիւղերը ունեցաւ հայաշատ բոլոր դաղութներուն մէջ:

Աստիճանաբար պիտի պարզուէր, որ Հօկերու նպատակը ոչ թէ հայրենիքին նիւթական օգնութիւն զրկել էր, այլ արտասահմանի մէջ կաղմակերպել խորհրդային վարչաձեւին համակիր տարրերը եւ պայքար բանալ Հայաստանի անկախութիւնը հետապնդող Դաշնակցութեան ու անոր համակիրներուն դէմ:

Հօկերու մէջ մտան տխուր անցելի տէր մարդիկ, խաչազողներ, արկածախնդիրներ: Սկիզբները Ֆրանսայի մէջ հօկին մասնակցեցան թիւրիմացաբար դաշնակցականներ, բայց շուտով քաշուեցան:

Այս շարժումին աւելի թափ տալու համար, խորհրդային իշ-

խանութիւնը մասնակի ներգաղթ կաղմակերպեց Յունաստանէն, ուր խորհրդային պատուիրակները աւելի աղատութիւն ունէին գործելու: Պոլսոյ սովետ առեւտրական ներկայացուցիչ Դանուշ Շահվերդեանի կողմէն ատեն մնաց Աթէնք եւ յաջողեցաւ կաղմակերպել խորհրդային նիւթաւոր տարրը, հայատառ քանի մը թերթեր ալ հրատարակելով: Նոյն կաղմակերպութիւնը հիմնեցին աւելի ետք Ֆրանսայի եւ Սուրիոյ մէջ: Հօկերը դաղութներու ազգային կեանքին մէջ ծնունդ տուին պոլսեաներու, կոտեւիլու համար եռագոյնին, Մայիս 28ին, Դաշնակցութեան դէմ:

Այնքան լրբացան այդ տարրերը, որ Լիոնի մէջ կաղմակերպուլուած հանդէսի ընթացքին, բեմին վրայ յարձակեցան Աւետիս Ահարոնեանին վրայ, Պէյրութի մէջ դաւադրաբար սպաննեցին Վահան Վարդապետեանը, Աթէնքի վաղթականներուն մէջ պատուեցին Մուսաբեկը: Սովորական դարձան նման դէպքերը:

Այդ գրգռումները ունեցան իրենց հակազդեցութիւնը. ամէն տեղ ընդվզեցաւ Հայաստանի անկախութեան պաշտպան հոտանքը: Փոխադարձութիւնը եղաւ ուժգին եւ մահացու: Ծանր դէպքեր պատահեցան Կրընուպիլի (Ֆրանսա), Աթէնքի, Պէյրութի եւ Նիւ Եորքի մէջ:

Վարձկան մարդիկ սմբեցան եւ այս անգամ դիմեցին օտար իշխանութիւններու միջամտութեան ու պաշտպանութեան: Օրինակ, 1932 Մայիս 28ի անկախութեան հանդէսը արգիլուեցաւ Աթէնքի մէջ, խորհրդային դեսպան Փոթեմքիւնի միջամտութեան հետեւանքով:

Տարիներ շարունակ Յունաստան ազատ ասպարէզ տուաւ իր երկրին մէջ ամէն ազգի համայնավարներու գործունէութեան: Այդ ազատամտութեան արդիւնքը պիտի տեսնէին 1944 Դեկտեմբերին, երբ համայնավարները իշխանութիւնը ձեռք անցրելու եւ մայրաքաղաքի խողազ բնակչութիւնը ահաբեկելու համար հինգ հազար անդէն մարդիկ սպաննեցին:

Հօկի եւ պոլսեան գործունէութեան ատեն, պառակտեցին նախ հայրենակցական միութիւնները, ապա՝ ազգային իշխանութիւնները:

Աւելի ետք՝ Հօկերու մէջ մտած էին համայնախորհրդներու համար անվատահելի նկատուած մարդիկ: Ծիշող այն ատեն, երբ Պ. Միութեան մէջ սկսաւ խորհրդային վարիչներու ջարդը, նոյն թուականներուն խորհրդային իշխանութիւնը լուծեց նաեւ Հօկերը, որոնք այլեւս ձախող զոյգ էին իրենց տխուր առաքելութեան մէջ:

1932ին, Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Եւրոպայի Կեդր. Կոմիտէի եւ Հ. Յ. Դ. Բիւրոյի միջեւ ստեղծուեցան վէճեր, որոնց հետեւանքով կուսակցութեան շարքերէն վտարուեցան Կեդր. Կոմիտէի հինգ անդամները:

Պատժուածները իբրեւ թէ խանդավառուած էին Թուրքիոյ դէմ յեղափոխական շարժումներ վերակսելու ծրագրով եւ կը մեղադրէին Բիւրոն, որ ձեռք քաշած էր այդ աշխատանքներէն ու մտահոգուած էր միայն հակախորհրդային գործունէութեամբ:

Այս կարգախօսը արեւմտահայ երիտասարդութեան զգացումներուն կը խօսէր եւ շատեր անգիտակցաբար հետեւեցան Կեդր. Կոմիտէին, ուժ տուին անոր ըմբոստութեան:

«Յառաջ» օրաթերթը թէեւ ընկ. Շ. Մխաբեանի անհատական սեփականութիւնն էր, բայց նոյն ատեն Կեդր. Կոմիտէի օրգանն էր եւ թերթի բովանդակութեան պատասխանատուութիւնը ստանձնած էր կուսակցութիւնը:

Կեդր. Կոմիտէն ուզեց իր սեփական օրգանը ունենալ եւ հրատարակեց «Մարտկոց» օրաթերթը, ուր տեղ գտան ըմբոստներու կոյտները:

1933 Փետր. 4էն Մարտ 21, Փարիզի մէջ գումարուած Հ. Յ. Դ. 12րդ ընդհ. ժողովը քննեց «մարտկոց»ական խնդիրը եւ քուէարկեց հետեւեալ բանաձեւեր.

«Մարտկոցական շարժումը իր ծագման պատճառներով, իր արտայայտութեան ձեւերով, ինչպէս նաեւ իր բովանդակ էութեամբ բացայայտօրէն հակադաշնակցական երեւոյթ մըն է, ուզողուած կուսակցութեան եւ անոր միասնակամութեան դէմ»:

12րդ ընդհ. ժողովը կուսակցութենէն արտաքսեց նախկին Կեդր. Կոմիտէի հինգ անդամները: Բայց ամիս մը պայմանաժամ տուաւ, որ շարժումին յարողները կարողանան վերադառնալ Դաշնակցութեան շարքերը:

Ընդհ. ժողովը, որուն կը մասնակցէին բոլոր շրջաններէն ընտրուած պատգամաւորներ եւ փորձառու հին գործիչներ, յաջողեցաւ հաշտեալարարի ենթարկել «Մարտկոց»ական շարժումը, առանց ծայրայեղութեանց գիւնելու:

Եւրոպայի շրջանի ընկերներուն համար աւելի յստակ ու պայծառ դարձաւ կացութիւնը եւ ստեղծուած ընկերական առողջ մթնոլորտին մէջ յայտնի դարձաւ դատաւիր ձեռքը:

Բողոքող Կեդր. Կոմիտէի հինգ անդամներէն երեքը Լեւոն Արս-

Նան, Ա. Արոյեան եւ Վազգէն Դուրանեան. բողոքշրջաբերական մը լրկեցին միւս երկու անդամներուն դէմ (Մ. Գոյուժճեան եւ Մ. Երիշանց):

Այս բողոքշրջաբերականը իր ատենին հրատարակուեցաւ «Յուսարեք»ի 1933 Մայիս 18ի թիւին մէջ:

Շրջաբերականին մէջ մանրամասնօրէն կը ներկայացուին «Մարտկոց» օրաթերթին հաշիւները եւ կը պարզուի, որ թերթը կրցած է իր ծախքերը հաւասարակշռել, ապա կ'աւելցնէ.

«Այս օտար ազդիւրին նուիրատուութեան գումարը եղած է 25.000 ֆր. վեց ամսուան համար. ինչպէս հաշուեմնութեան ընթացքին միայն բուռեցաւ մեզի թերթի վարչութեան կողմէ, առանց սակայն յայտնելու այդ ազդիւրին անունը եւ ոչ ալ այն նպատակն ու դիտաւորութիւնը, որով առնուած է այդ գումարը:

«...Այս կացութեան ծանօթ ըլլալէ վերջ, իբր պատասխան գ. հարցումին. կարելի է ըսել առանց այլեւայլի, թէ ոչ մէկ ատեն կարելի է համաձայն ըլլալ, որ այս օտար նպատար շարունակուի՝ խաթարելով այս շարժման մաքուր բնոյթը:

«...Այս ձեւով ներկայացուած հաշիւներէն իսկ կը պարզուի թէ թերթը ապրած է ոչ-բնական միջոցներով:

«...Խիստ կարեւոր գումար մը մտած է սնտուկը, որուն ոչ իրական քանակը, ոչ իրական ազդիւրը եւ ոչ ալ անոր լրիւ գործածութիւնը կարելի էր եղաւ ստուգել:

«...Կ.Կ.Ի նշանակած հաշուեմնիչ ընկերոջ պնդումներուն հակառակ, թերթին վարչութեան պատասխանատու ընկերը բոլորովին մերժած է յիշեալ գումարին բուն ազդիւրը յայտնել»:

Այս շրջաբերականը, որ հրատարակուեցաւ դաշնակցական մամուլին մէջ, կատարեալ խոստովանութիւն մըն էր եւ մերկացում մը բոլշեւիկեան դաւադրութեան:

Կարելի է ըսել, թէ Եւրոպայի շրջանին մէջ մասնաւորապէս բոլորովին փարկաբեկուեցան դաւադիրները եւ Չեկայի վերջին ձախող փորձը հանդիսացաւ պառակտելու համար Դաշնակցութիւնը:

ԿԸ ՄԵՂԱԴՐՈՒԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ,
ՈՐ ԿԸ ՊԱՀԱՆՋԵ ՀՈՂԵՐՈՒ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ

Ալ. Մեանդիկան, Հայաստանի խորհրդայնացման երրորդ տարեդարձին առիթով, կ'ազդարարէր Դաշնակցութեան.

«Հայաստանի խորհրդայնացումը, կարելի է համարձակօրէն ասել, վճռել է կամ վերացրել այսպէս կոչուած Հայկական Հարցը: Եւ նա մի բան էլ աւելի՛ է արել: Տանկահայաստանի՞ խնդիր: Այդ էլ է լուծուած: Կարից քոզ հայեայն մեզ դաշնակցականները... («Մարտակառ», Թիֆլիս, 1923, Նոյ. 29):

Անդրադառնալով Լենինեան Հրամանադրին (Թրքապատկան Հայաստանի մասին), խորհրդահայ վարիչներէն Պողոս Մակինցեան — գրական քննադատ եւ դիւանագէտ — անվարան կը յայտարարէր.

«Այս ամէնը ներկայիս (այսինքն՝ 1925ին — Գ.) կորցրել է իր այժմէականութիւնը: Հայկական Հարցը — լուծուած է միանգամ ընդմիշտ խորհրդային Հայաստանի գոյութեամբ» («Նորք», Երեւան, 1925, Թ. 5-6, էջ 418):

Իսկ խօսելով յատկապէս Կարսի դաշնադրի մասին՝ Արտուշև Կարինեան — խորհրդահայ ծանօթ ղեմքերէն, գրապէտ եւ հանրային գործիչ — Երեւան գումարուած կուսակցական ֆանֆերանսի մը մէջ կը յայտարարէր.

«Մեր բոլոր ընկերները պէտք է լաւ գիտեանք, որ Կարսի դաշնագրութիւնը մեր արեւելեան ֆազաֆականութեան կիմնաքարն է: Նրան իր տեղից խախտել՝ նշանակում է մեր արեւելեան ֆազաֆականութիւնը փլուզման ենթարկել» («Դրօշակ», 1926, Թ. 5, էջ 161):

Անդրկովկասի բուլշեւիկ մեծ ղեմքերէն Օրթոնիկիձէ, 1926 Մայիս 7ին, քաղաքական ընդարձակ զեկուցումի մը մէջ Դաշնակցութեան մասին՝ կ'ըսէր.

«Հայաստանը վերջնականապէս ֆայֆայման ենթարկող դաշնակցականներն առաջին տարիներին լռեցին, նրանք այժմ էլ լուռ են, հայ գիւղացին երբեք չի արձագանգի նրանց կոչին եւ խորհրդային իշխանութեան դէմ չի գնայ. սակայն քիթեւամտութիւն կը լինի նրէ մեք ստեմօ՝ քէ նրանք բոլորովին չեն գործում: Նրանք իրենց գեմքը դարձրել են ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱԿԱՒԱՀՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԻԱՄԻՏ ՄԱՐԳՎԱՆՑ, ՄԱՍՆԱԻՈՐԱՐԱՐ ՏԱՃԿԱՀԱՅՅԵՐԻ ՀԱՅՑԱՑՔՆԵՐԸ ՈՒՂՂՈՒՄ ԵՆ ԴԵՊԻ ՏԱՃԿԱՑ ՍԱՀՄԱՆԻ ԱՅՆ ԿՈՂՄԸ»:

Կովկասեան փոխարքան իր ազդարարութեան մէջ առանձին չէր. գրեթէ նոյն օրերուն նոյն ահակոչը — ու թերեւս նոյն պատճառներով — կը լսուէր նաեւ Երեւանէն:

Իր այն զեկուցին մէջ, որու մասին քիչ վերը խօսեցանք, Ա. Կարինեան կը յայտարարէր.

«Վերջերս, մեր կուսակցական միջին խաւերում, չափազանց վտանգաւոր մտայնութիւն է առաջ եկել: Նեղ ազգայնական տրադիցիաները տակաւին պահուել են: Եւ մեր ընկերները այն հաւատքն են սնուցանել, թէ խորհրդային իշխանութիւնը մեր սահմանները պիտի ընդարձակի ի հաշիւ Տանկաստանի եւ Նախիջեւանի» («Դրօշակ» յիշատակուած թիւէն):

Կարսի դաշնադիրը պաշտպանելով՝ Կարինեան իր կուսակցները զգաստութեան կը կոչէր այս «չափազանց վտանգաւոր մտայնութեան» դէմ:

Պայքարը երթալով ոչ թէ աղօտեցաւ, այլ աւելի խորացաւ ու ծաւալեցաւ:

Յատուկ գրքոյկ մը գրելով Դաշնակցութեան դէմ՝ պրոֆ. Գէորգ Արով — ան՝ որ այնքան շատ «կը սիրէ» մեզ — կը յայտարարէր.

«Դաշնակցութիւնն Ալեքսանդրապոլի խայտառակ դաշնագիրն ստորագրելուց յետոյ անգամ չհրաժարուեց Տանկահայաստան ունենալու ձգտումից: Եւ գարմանալի կը լինէր, որ հայ բուրժուազիայի այդ կուսակցութեան մտքից դուրս գար Տանկաստանի վեց վիլայէթներին նման համեղ պատուը: Դեռ մինչեւ այժմ էլ Նիկոլ Աղբալեանների ու բոլոր դաշնակցականների գլխից դուրս չի գալիս մեծ Հայաստանը եւ դաշնակցական բոլոր քերթերն էլ գրում են Հայաստանի սահմանների փոքրութեան մասին: Արտասահմանում նստած, իրենց մատերով ու ազիտացիայով աշխատում են Հայաստանի սահմաններն ընդարձակել, գրաւել Ղարսը, Սուրմալուն եւայլն» (Գ. Արով — «Դաշնակցութիւնն անցեալում եւ այժմ», 1929, Երեւան, էջ 103):

«Դաշնակցութիւնը դեռ օրօրում է ծովից-ծով Միացեալի երազներով եւ Դաշնակցութիւնը դեռ սպասում է, որ հայ բուրժուազիայի, հայ կապիտալիստների համար պէտք է ձեռք բերի Տրապիզոնն ու Վանը, էրզրումն ու Կիլիկիան» («Դաշնակցութիւնն անցեալում եւ այժմ», էջ 124):

Մինչեւ 1944, երբ Գ. համաշխարհային պատերազմը վերջանալու վրայ էր, բուլշեւիկները ամբողջ քառօրէ դար կը մեղադրէին Դաշնակցութիւնը, որ Հայաստանի հողերու ընդարձակում կը պահանջէր: Հիւս. Ամերիկայի համայնավար պաշտօնաթերթը՝ «Լրաբեր»՝ իր 1944 Փետր. 24ի խմբագրականով կը գրէր.

«Անոնք (այսինքն՝ մենք՝ դաշնակցականներս) մինչեւ այսօր ալ

կը ծառայեն շիջարի պատերազմական նպատակներուն: այսօր ՏՊԻ ԴԱԻԱԴՐՈՒԹԻՒՆ մը կը սարքեն, որուն անունը դրած են՝ «ԹԻՔԷՆՆՅ ԳԱԻԱԴՐՈՒ ԿՑՈՒՄ ՍՈՎԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ «ՊՐՈՄԵՔՆ»

1927ին Փարիզի մէջ սկսաւ հրատարակուիլ «Պրոմեքն» անունով ամսագիր մը, «Օրգան Կովկասի եւ Ուկրայնիայի ժողովուրդներու ազգային պաշտպանութեան»:

Առաջին թիւին մէջ երեւցան վրացի մենչելիկ Նոյ Ռամիշվիլի. Մուսաւաթի ղեկավար ղեմքերէն Ռասուլ Չասկ, լեռնական Հայտաբ Պամաթ, Ազրպէյճանի «Ազգային-Դեմոկրատ» կուսակցութեան հիմնադիր տոքթ. Նոսրով Բէկ Սուլթանով, վրացի ազգային-դեմոկրատ Գրուազաւան եւ ուրիշներ:

«Պրոմեքն»ին շմանակեցեալ Դաշնակցութիւնը եւ ոչ ալ ուրիշ հայ կազմակերպութիւն մը:

«Պրոմեքն»ի շուրջ հաւաքուած կովկասցիները առաջին թիւով պարզեցին իրենց նպատակը.

«Քնդրի միակ լուծումը կովկասեան պարանցի չէզոքացումն է, որ ներկայիս համագոր է Ազգերու Լիկայի ծոցին մէջ զտնուող անկայս պետութեան մը ստեղծման»:

Հետեւեալ կէտերուն մէջ կը ձեւաւորուի անկայս պետութեան ստեղծումը.

- 1.— Միութիւն՝ կովկասի ուսու-բարձրիկեան բոնագրամուս դէմ կռուելու համար:
- 2.— Տեսակետներու միութիւն արտաքին քաղաքականութեան մէջ թէ՛ պայքարի եւ թէ խաղաղութեան ժամանակ:
- 3.— Միացեալ նախատ՝ պաշտպանութեան գործին մէջ:
- 4.— Դրամական եւ ելմտական դրութեան միութիւն:
- 5.— Ընդհանուր մագալին սահմաններ:
- 6.— Հաղորդակցութեան միջոցներու, երկաթուղիի, փոստ-էստաբլի միութիւն:

Բանի մը տարի «Պրոմեքն»ի շուրջ հաւաքուած կովկասցիները գործիչները իրենց կեդրոնը ունեցան Փարիզ: Իսկ Բ. Համաշխարհային պատերազմի նախօրէին կեդրոնը փոխադրեցին Պերլին: Նացիներու տիրութեան տակ անոնք արտագնա տեղափոխուեցան Եւրոպայի արեւմտեան մասեր:

վանաւորութեամբ եւ ժանդակութեամբ հրատարակեցին եօթը լեզուներով, նաեւ հայերէն «Կովկաս»ը: Հայերէն բաժինը ստանձնած էին խումբ մը երիտասարդ հայ նացիներ, որոնք ոչ մէկ կապ ունէին Դաշնակցութեան հետ: «Կովկաս»ի մէջ միշտ քննադատուեցաւ Դաշնակցութիւնը, որ գործնապէս հետու մնաց կովկասեան ազգերու հակա-խորհրդային միացեալ ճակատէն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻՄՈՒՄԸ ԱԶԳԵՐՈՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

1932ին, երբ Թուրքիա պիտի ընդունուէր Ազգերու Դաշնակցութեան անդամ, Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահ Ա. Ահարոնեան հետեւեալ գրաւոր դիմումը ներկայացուց Ազգերու Դաշնակցութեան:

Պարոն նախագահ եւ պարոններ.

Այն ժամուն ուր Արդարութեան միջոցաւ ժողովուրդներուն խաղաղութիւնը ապահովելու կոչուած պետութիւնները կը պատրաստուին հրաւիրել թիրաքիան մտնելու Ազգերու Դաշնակցութեան մէջ, Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութիւնը, որ ստորագրած է Սեւրի դաշնագիրը եւ բազմիցս պաշտպանած է հայ ժողովուրդի դատը Ազգերու Դաշնակցութեան մօտ՝ պատիւն ունի ձեր ուշադրութիւնը հրաւիրելու հետեւեալ պարագաներուն վրայ.

Պատերազմէն առաջ հայ ազգը չորս միլիոնի բնակչութիւն մը կը հաշուէր, որուն երկու միլիոնէն աւելին Թուրքիայ մէջ մեծաւ մասամբ հաստատուած իրենց նախնայներուն պատմական հողերուն վրայ՝ հայկական վիլայէթներուն մէջ:

Թիրաքիքը, օգտուելով մեծ պատերազմէն՝ ի կատար ածելու համար մեր ժողովուրդը բնաջնջելու իրենց ծրագիրը, գոր մասամբ միայն կրցած էին գործադրել միջեւ այն ատեն՝ կատարածներու եւ տարագրութեանց շարանով մը այդ թիր իր կէտին վերածեցին: Ու մնացորդներն ալ. բունով մօտ մէկ միլիոն մարդկային էակներ, իրենց օժտեցեալէն դուրս էջելով ու վտարելով՝ տարտնջեցին օտար աշխարհներուն մէջ: Ու թիրաք կառավարութիւնը ձեռք դրաւ ամբողջ հայ ժողովուրդի ինչքին վրայ, մասնաւոր թէ ազգային ստացումով, դպրոցներ, եկեղեցիներ, հաստատութիւններ: Ամէն ինչ բռնագրաւուեցաւ կեղծումներու ամենէն կամայական եղանակով:

Այսօրուայ հանրապետական Թիւրքիան ալ, հակառակ իր ըրած կարգ մը յայտարարութիւններուն՝ նախորդ կառավարութեանց քաղաքականութիւնն է որ կը շարունակէ:

Պատերազմէն յետոյ՝ 1920 թուի Օգոստոսի 10ին, ստորագրուեցաւ Սելրի դաշնագիրը, որուն 88րդ յօդուածով «Թուրքիան կը յայտարարէ ընդունիլ Հայաստանը իբր ազատ եւ անկախ պետութիւն մը, ինչպէս ընդունած են գայն Դաշնակից պետութիւնները»: Այս յօդուածը որոշ կերպով կը ցուցնէ արդէն որ Դաշնակից պետութիւնները Սելրի դաշնագրէն առաջ իսկ նախնայած էին արդէն Հայաստանի անկախութիւնը:

Բայց 1922 թուի դէպքերուն հետեւանալով՝ Սելրի դաշնագիրը փոխարինուեցաւ Լոզանի դաշնագրով, որուն մէջ Հայաստանի, կամ հայոյ առնուան յիշատակութիւնն իսկ չկայ:

Սակայն, Ազգերու Դաշնակցութիւնը չէր կրնար չհետաքրքրուիլ հայ ժողովուրդին բախտովը եւ իր առաջին ընդհանուր ժողովին մէջ իսկ, 1920 թուի Նոյեմբերին, անկախ կը խորհէր Հայաստանը ընդունիլ իր ծոցին մէջ: Ազգերու Դաշնակցութիւնը պարտաւորուեցաւ այդ խորհուրդը մէկ կողմ ձգել՝ մանաւանդ քեմալական բանակին յարձակման պատճառով, բայց յաջորդ տարին իսկ, 1921ին, անկախ միաձայնութեամբ կը փոխարկէր բանաձեւ մը, Հայկական Ազգային Օմախի մը ստեղծումին համար Թուրքիոյ մէջ, անկախ քրֆական ամէն տիրակալութեան:

Այդ որոշմանգիրը կրկին ձեռք առնուեցաւ եւ հաստատուեցաւ ամէն տարի Ազգերու Դաշնակցութեան ընդհանուր ժողովներուն կողմէ, մինչեւ 1924 թուականը, այսինքն Լոզանի դաշնագրին ստորագրութեան վերջն իսկ:

Բայց Ազգերու Դաշնակցութիւնը Թուրքիոյ վրայ ազդելու ոչ մէկ միջոց ունենալով իր ձեռքը՝ պարտաւորուեցաւ տարուէ տարի յետաձգել իր արդարութեան եւ հատուցումի ջանքերը:

Սակայն, այսօր, երբ անկախ ձեռք կ'երկնցնէ Թուրքիոյ՝ գայն հրաւիրելու համար մտնել Ազգերու Դաշնակցութեան մէջ, արդեօք ինքն իր հանդէպ իսկ պարտաւոր չէ՞ օգտուիլ այդ նպաստաւոր ու բացառիկ առիթէն՝ արժեցնելու համար հայկական պահանջները:

Հարիւր հազարաւոր հայ գաղթականներ, խոնուած լայն շերտանակի մը վրայ իրենց հայրենիքին շուրջը, Պարսկաստանէն մինչեւ Պալեստինայ, անցնելով իրաքէն, Սուրիայէն, Եգիպտոսէն եւ Յունաստանէն, դեռ եւս առանց հաշուելու անոնք, գորս բախտը նետած է աւելի հեռաւոր արեւմտեան իրենց աչքերը յառած կը մնան այն երկրին վրայ, որ իրենցն էր եւ իրենց նախահայրերունը, եւ որ կը մնայ հիմա քա-

փուր ու ամայի: Այդ հարիւր հազարաւոր գաղթականները ինչպէ՞ս կրնան ընդունիլ, որ մէկ կողմէն նկատի չառնուին պետութիւններու եւ Ազգերու Դաշնակցութեան կողմէ իրենց հանդէպ ստանձնուած յանձնարարութիւնները, մինչդեռ միւս կողմէ Թուրքիան, իրենց բոլոր դժբախտութեանց պատասխանատուն՝ մուտք գործէ Ազգերու Դաշնակցութեան մէջ՝ առանց արդարութեան հատուցման:

Վերջապէս, այդ տողերը ստորագրող Պատուիրակութիւնը պարտականութիւն ունի իր ամենավեճական վերապահումներն ընելու Թուրքիոյ ներկայ սահմաններուն վերջնական հանաչման մասին, քանի որ հայ ժողովուրդը չի կրնար ընդունիլ որ սեփականագրկուի իր դարաւոր իրաւունքներէն եւ պատմական ժառանգութեանէն:

Հակառակ իր կրած ծանր յուսախաբութիւններուն՝ հայ ժողովուրդը հաւատք կը տածէ որ Ազգերու Դաշնակցութիւնը պիտի զգուշանայ նոր անարդարութիւն մը գործելէ եւ անկախ կը մտադրէ որ Թուրքիոյ մուտքը Ազգերու Դաշնակցութեան մէջ, սկզբնակէտն ըլլայ Արդարութեան եւ Հատուցումի նոր դարաշրջանի մը:

Ընդունեցէք, պարոն նախագահ եւ պարոններ, մեր ամենախորին յարգանաց հաւաստիքը:

Հ. Հ. Պատուիրակութեան նախագահ
եւ Սելրի դաշնագիրը ստորագրող՝
Ա.Ա.ՀԱՐՄԵԱՆ
Ժընևե, 28 Յունիս, 1932

ՀԱՅԵՒՎՐԱՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Անցեալին մշակութային սերտ կապեր ունեցած են Հայաստան եւ Վրաստան: Յաճախ միասնական ճիւղերով զիմադրուած են արտաքին յարձակումներ: Շատ բնական է, որ նոր ժամանակներու ընթացքին, եւ ի ինդիր ազգային անկախութեան, երկու գրաքի ազգեր նոյն մտահոգութիւնները ունենային:

Քաղաքական այս ըմբռումին արդիւնքն էր, որ 1936ին, Փարիզի մէջ, նախաձեռնութեամբ Հանրապետական Արշակ Զամաչեանի եւ վրացի գործիչներու կողմուեցաւ «Հայի վրացական Միութիւնը», որ մեծապէս ստատուեց երկու ազգերու տարաբնութեան մէջ յարաբերութիւններու սերտացման:

Կու տանք քանի մը քաղուածքներ այդ միութեան կազմութեան առ-
թիւ լոյս տեսած կոչէն:

Պատմական վարկեանը զոր կ'ապրենք, հրամայականորէն կը հրահանգի
հայ եւ վրացի ժողովուրդներուն՝ նորէն բռնել իրենց միութեան հին, վստահելի եւ
փրկարար ուղին:

Սերպական մայր ցամաքին վրայ ստեղծուած քոսոր եւ Հեռուոր Արեւել-
քէն առաջացող ազգաւունջ փոթորիկը անխուսափելիորէն կը մղեն աշխարհը դէպի մի
նոր, հսկայածաւալ, թրեւս եւ համաշխարհային պատերազմ, որ կրնայ վերջնաւ
աւարեկուսներու եւ սովակարութիւններու միջոցաւ կեանքի կոչուած ուսական խոր-
հրդային Կայսրութեան փլուզումով:

Պատմութիւնը կը վկայէ, որ հայերն ու վրացիները՝ հինէն ի վեր կապուած
իրարու ընդհանուր մշակոյթով եւ ընդհանուր քաղաքական ճակատագիրով՝ յաճախ
միացեալ ուժերով պայքարեր են իրենց ազգային գոյութեան պահպանման համար:
Բազմաթիւ դէպքեր կարելի է յիշատակել անցեալէն, երբ վրացիներն ու հայերը, թեւ
թեւի առած, պատերազմեր են սկիւթացիներու, պարսիկներու, հռոմայացիներու,
բիւզանդացիներու, արաբներու, սելճիկեան թուրքերու, մոնղոլներու եւ այլ աշխար-
հակալ ցեղերու դէմ, որոնք կը ձգտէին սարկացնել Հայաստանն ու Վրաստանը: Եւ
չենք սխալիք պնդելով որ եթէ վրացիներն ու հայերը, իրենց զուգորդութեամբ անցած բազ-
մաթիւ քաղաքական արհաւիրքներէն ետք, շանհայացան եւ շարունակեցան Կովկասեան
լեռներու եւ Արարատի ստորոտներէն, առոր մէջ նշանակալից դեր խաղցած է անոնց
միութիւնն ու զորոժանգութիւնը:

Հայ եւ վրացի ժողովուրդներու այս եղբայրական փոխադարձութիւնը
գտած է իր արձագանքը անոնց նոյնանման ազգային առասպելաբանութեան մէջ, ըստ
որի Հայերն ու Վրացիները ծագում առած են ընդհանուր մէկ նախահօր — Քորգամի
— երկու զաւակներէն՝ Հայկեմ եւ Քարթուկուսէմ, որոնց անունով կը կոչուին իրենք
եւ իրենց երկիրները: Եւ՝ կարծէք այս առասպելին իրականութիւնը հաստատուելու հա-
մար՝ պատմութեան մէջ կ'արձանանայ այն իրողութիւնը որ վրացիներն ու հայերը,
հազարաւոր սարիներ կողք կողքի ապրելով հանդերձ՝ ոչ մէկ անգամ իրար դէմ չեն
պատերազմած — հոյակապ փաստ մը, որ կրնանք ըսել, եզակի է այլ հարեան ազգե-
րու պատմութեան մէջ...

Ով ծանօթ է հայոց եւ վրաց պատմութեան, ան դիտէ, օրինակի համար,
թէ ի՞նչ փայլուն արդիւնք ունեցաւ հայ եւ վրացի ժողովուրդներու միութիւնը վրացի
Քամար Քազուհու զարաւրջանին, երբ հայ — վրացական միացեալ բանակը մտցրեց
Վրաստանն ու Հայաստանը դաժան Սելճիկեան թուրքերու հորդանքէն:

Այս միութիւնը սեւականացնելու եւ ամբարշտելու զորոժին մէջ, առարկա-
յական ազդեակներ եւս, անշուշտ, ունեցեր են իրենց դերը: Հայաստանը, շնորհիւ իր
աշխարհազարկան դիրքին, ընդհանրապէս պահակի դեր կը կատարէր Վրաստանի հա-
մար՝ առաջին հերթին կուրծք տալով հարաւին արշաւող ընդհանուր թշնամիներու
դէմ: Վրաստանն ալ, իր հերթին պատուար կը հանդիսանար Հայաստանի համար՝

հիւսիսական հորդանքերու դէմ եւ յաճախ ալ ապաստան կուտար հարաւային թշնամի-
ներէն հալածական հայ ժողովուրդին:

Այս միութիւնը շարունակուեցաւ մինչեւ վրաց Քազուհուութեան եւ անգլո-
կովկասեան հայկական հոգեւոր Ռուսաստանին: Ռուսական իշխանութիւնը իր
divide et impera (բաժանեալ՝ զի տիրեսցես) քաղաքականութիւնով նենգորէն իրար
դէմ լարեց հայ եւ վրացի ժողովուրդները եւ քայքայեց անոնց վաղեմի բարեկամու-
թիւնն ու միութիւնը: Եթէ այս դժբախտութիւնը չլինէր՝ յետպատերազմեան դէպքե-
րը չլին ունենայ այն հետեւանքը, որ Ռուսաստանը նուաճէր կովկասեան անկախ հան-
րապետութիւնները, իսկ թուրքներն ալ հաստատուէր հայկական եւ վրացական ընդար-
ձակ նահանգներու վրայ...

Աչքի առնել բերելով, թէ՛ անցեալի, թէ՛ ներկայի եւ թէ՛ ապագայի դէպ-
քերն ու հասանականութիւնները, որոնք այնքա՞ն սպառնալից են Անդրկովկասի հա-
մար, ՀԱՅ — ՎՐԱՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ որտապին կոչ կ'ընէ, առանց խմբակցական եւ
կուսակցական խտրութեան, բոլոր Հայերուն եւ Վրացիներուն՝ լինին անոնք հոն, հա-
րնիրքին մէջ թէ՛ այստեղ, արտասահման՝ որ սմէնքը, իրենց բարոյական, մտաւոր
եւ նրութեան ուժերը մէկտեղելով՝ մէկ ամուր, հայ — վրացական կուսան կազմեն՝
ինչպէս կ'ընէին իրենց հին նախնիները նման պարագաներու մէջ:

ՀԱՅ — ՎՐԱՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ վստահ է նաեւ, որ Հայերու եւ Վրացիե-
րու բազմադարեան հարեանները՝ Ազրբէջանցիք եւ Հիւս. Կովասի լեռնականները՝
որոնց հետ անոնք ընդհանուր շահեր եւ նպատակներ ունին, բացառիկ համակրանքով
կը դիմուորեն հայերու եւ վրացիներու միացման գործը: Զէ՛ որ այս երկու ժողո-
վուրդներու բաժնուած լինելը պատճառներէն մին եղաւ, որ մենք, մօտիկ անցեալին,
կորսեցուցանեց մեր ընդհանուր հայրենիքը՝ Ազատ Կովկասը: Մենք համոզուած ենք որ
Կովկասեան ժողովուրդներու միացումը մեր օրերուն այլեւս աներակառելի երազ չէ:
Առոր իրբու ապացոյց կրնան ծառայել 1930ի դէպքերը, երբ, ըստ պաշտօնական հա-
ղորդագրութեան, Անդրկովկասի շարքային իշխանութեանմ դէմ միացել էին ամբ-
բ: Բանք հասեր էր հոն, որ Քուրքերու պատմաբանութիւնը կց զեկավարէր հայ ֆա-
համայ մը, Գարալագեագի շրջանին մէջ հայերը կը կուռէին թուրք զեկավարներու
ձեռքին տակ, իսկ Եամբարի շրջանին մէջ իմամը կ'երգուեցնէր շիամբքը, սիւննիս-
թը, յուսաւորակամները եւ օրթոգոսները» («Բազուայ Բանուոր», 1930 թ. Յունիս
18):

ՀԱՅ — ՎՐԱՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ հիմնական նպատակները պարզ են եւ կեն-
սական: ՄԻՈՒԹԻՒՆԸ, կովկասեան միւս հանրապետութիւններու կողքին, կը պահանջէ
Հայաստանի եւ Վրաստանի անկախութիւնը ազգային հոգիներու այնպիսի սահմաններով,
որ բուրբար լինին անոնց բնականօրէն պետական գոյութեան համար:

ՄԻՈՒԹԻՒՆԸ կը հետամտէ նաեւ որ Կովկասեան շրջա սպառ հանրապետու-
թիւնները սերտորէն միանան եւ միահամուռ ուժերով պաշտպանեն իրենց Երկիրները
ամէն մի ոսնձգութեան դէմ, որով ալ ան գալու լինի:

Սիրելի հայրենակիցներ, հայեր եւ վրացիներ. մենք կը դիմենք մէկ ան-

Խըտտարար: Նձ ալ լինի ձեր կոչումն ու դերը կեանքի մէջ, լինիք դուք Հոգեւորա-
կան, գիտնական, գրագէտ, մշակութային գործիչ, քաղաքական կուսակցութեան ան-
դամ, ծեր թէ երիտասարդ՝ ամէնքդ ալ պէտք է տրամադրէք ձեր ոյժը, տաղանդը եւ
միջոցները ի խնդիր Հայրենու եւ Վրացիներու միութեան: Թող ձեզ համար հաւատի
եւ խանդավառութեան ազդիւր հանդիսանան ձեր նախնիները, որոնք այնքան յամախ,
ձեռք ձեռքի սուած Հերոստարը պայքարեցին իրենց հայրենի հողը եւ ազգային ազա-
տութիւնը պաշտպանելու համար:

1936 թ. Մայիս

ՀԱՅ . ՎՐԱՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ԳԱՐԱԽԱՆ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ ԹՈՒՐԲԻՈՅ ՑԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ ՄՈՆԹՐԷՈՅԻ ՄԷՁ

Թուրքիան, 1936 Յուլիս 20ին, յաջողեցաւ Մոնթրէոյի դաշնա-
դրով գերիշխան տէր դառնալ Նեղուցներուն, եւ վերջ գտան Լօզանի
դաշնագրով դրուած սեղմումները եւ Դաշնակիցներու հակակշիռը:

Այդ թուականներուն Թուրքիա բարեկամական դաշինքով կապ-
ուած էր Ռուսաստանի. էնկիւրիի խորհրդային ղեկավար Գարախան Նե-
տեւեալ շնորհաւորական հեռագիրը ուղղեց նախադահ Իսմէթ Ինէզուի-
ին:

«Թուրքիա այսօր կը տեղաւորուի իր հողին ամենէն կեանական
մէկ մասին վրայ եւ երեսակայական երաշխիքներու փոխարէն իր նիւ-
թական միջոցներուն կը յամանէ նեղուցներու ապահովութիւնը: Ասի-
կա, ինչպէս նաեւ Թուրքիոյ տնտեսութեան վերականգնումը արդիւնք
են բուն պայքարներու եւ անխոնջ աշխատանքի շրջանին:

«Մոնթրէոյի մէջ ստորագրուած պայմանագրութիւնը կը ցուց-
նէ թէ աշխարհ կ'ընդունի այս անուրանալի իրականութիւնը:

«Ինչպէս յայտնի է Ձերդ վստահութեան, Մոսկուայի դաշնագրի
կնձումէն ի վեր, Խ. Յիւրթիւնը պաշտպանած է այսօր բոլորին կողմէ
ընդունուած տեսակէտը եւ միշտ ուժով օգնած է Թուրքիոյ այս օրինա-
ւոր պահանջին թէ ինք բացարձակ տէրը ըլլալու է իր հողին: Խաղաղեց-
նելով Եւրոպայի ամենէն կարեւոր շրջանակներէն մէկը, նեղուցներու
նոր պայմանագրութիւնը ապահովութեան կարեւոր ազդակ է ոչ միայն
Թուրքիոյ, այլ եւ Սեւ ծովեան երկիրներուն համար: Հետեւաբար այս
պարագան կարեւոր նպաստ մըն է յազադութեան համար, որուն հա-
մար աշխատեցան Խ. Միւրթիւնը եւ Թուրքիան»:

Համբ փաշա իր տուած պատասխանին մէջ շնորհակալութիւն
յայտնելէ վերջ, կ'աւելցնէ.

«Մոնթրէոյի մէջ ձեռք բերուած արդիւնքը նոր հանգրուան մը
կը կազմէ միջազգային համաձայնութեան տեսակէտէն եւ մասնաւոր
կարեւորութիւն մը կը ստանայ անով որ թուրքեւսովեոս բարեկամու-
թեան մէկ արտայայտութիւնն է»:

«ՀԱՅԱԶԳԻ» ԳԱՐԱԽԱՆԸ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

1921ի ամբան խորհրդային ղեկավարը Վարչաւիոյ մէջ Հայազգի
Գարախանն էր, մէկը Գրեմլի ակնառու դիւանազէտներէն (գնդակա-
հարուեցաւ Մոսկուայի մէջ, 1937 Դեկտ. 16ին, իբրեւ Թրքական «ԼԵՐ-
տեա»...):

Այդ օրերուն Հայկական Հարցով իր աջակցութեանը դիմած
էին երկու Հայ գործիչներ, որոնցմէ մէկը՝ մեր տարաբախտ ընկերը՝
Արշակ Զամալեան:

Դեսպանատան մէջ Հայ բանազնացները ընդունելով՝ Գարա-
խան, ի ներկայութեան Ստեփան Շահումեանի մեծ որդիին՝ Սուրէնի,
կը յայտարարէր անոնց.

— Դուք պատասխանատու քաղաքական գործիչներ էք, անկեղծ
օրէն կարելի է խօսիլ ձեզի: Դուք՝ կ'ըսէք, որ մենք կ'օգնենք Թուրքիոյ՝
զէնքով, ռսկիով եւ մարզիչներով: Կարեւորագոյնը կը մտնաք: Մենք
անոր կ'օգնենք նաեւ խօսքով: Մեր կարմիր քարազնութեամբ վկայեալ
հակայեղափոխականը՝ Մուսթաֆա Բեմալ՝ մենք աշխարհի կը կերցնենք
իբրեւ յեղափոխականի: Դուք միամիտ չէք խորհելու համար, որ Խ.
Ռուսիան եւ կամ Լեւին թշնամական որեւէ զգացում ունին հայ ժողո-
վարդի հանդէպ եւ կ'ուզեն գուր տեղը անոր արիւնը քափել: Սակայն
նաեւ պէտք է միամիտ ըլլաք խորհելու համար — հոս միթիւնկ չէ, այլ
լուրջ խօսակցութիւն ձեզի հետ, ուստի ես զիս պարտաւոր կը զգամ այս
բանը ըսելու ձեզի — որ եթէ վաղը մեր ընդհանուր շարժման շահը պա-
հանջէ մեզմէ գոհել Անդրկովկասի բովանդակ հայութիւնը մինչեւ վեր-
ջին հայը, մենք կրնանք ՈՅ ԻՍԿ ՄԵԿ վայրկեան տատանում ունենալ
այդ գոհողութեան առջեւ:

(«Յուրաքեր», 1949, Յուլիս 14)

ԱՂԱՍԻ ԽԱՆՁԵԱՆԻ ԵՂԵՐԱԿԱՆ ՎԱՅՃԱՆԸ

Հայաստանի երիտասարդ համայնավարներուն մէջ ամենէն կարգաւորուն դէմքը հանդիսացաւ Աղասի Պանջեան, վանեցի, որ զբաւած էր իր կուսակցութեան Կենդկոմի ընդհ. քարտուղարութեան աթոռը, ճիշդ այն շուքով, ինչ որ Սթալին՝ Մոսկուայի մէջ:

Եւ ահա օրին մէկը հեռագիրները կը հալորդեն անոր «անձնապանութիւն»ը, եւ հակասական տեղեկութիւններ իրարու կը յաջորդեն այս խորհրդաւոր մահուան շուրջ:

«Տէլի Թելեկրաֆ»ի Մոսկուայի թղթակիցը 1936 Յուլիս 13ին հետեւեալ կերպով արտասահման հեռագրեց Աղասի Պանջեանի մահը.

«Երեւանի մէջ անձնասպան եղած է Հայաստանի Կեդր. Կոմիտէի ընդհ. քարտուղար Պանջեան: Հանգուցեալը անդամ էր նաեւ համաժողովներական Կոմկուսի Կեդր. Կոմիտէի վերստուգիչ յանձնատնօրդի: Համաձայն պաշտօնական տուեալներու, անձնասպանութիւնը հետեւանք է այն իրողութեան որ, Պանջեան չունէր անհրաժեշտ քաջութիւնը վճռական պայքար մղելու հակադեպիտիսական տարրերու դէմ»:

Իսկ ԹԱՍ գործակալութիւնը Թիֆլիսէն հեռագրեց Յուլիս 11 թուականով («Թղվեստի») —

«Երեւանի մէջ Յուլիս 9ին ինքնասպան եղաւ Հայաստանի Կեդ. Կոմիտէի ընդհանուր քարտուղար Աղասի Պանջեան: Վերջերս շատ ընկճուած էր: Հակայեղափոխականներու դէմ իր սկսած պայքարը անյաջողութեան էր մատնուած: Խանջեանը ինքն ալ կը գգար իր սխալները, սակայն չէր կրնար ուղղել: Միաժամանակ բոքախտէ վարակուած էր: Այս բոլոր մտահոգութիւնները ծանրապէս ազդած էին իր առողջական վիճակին վրայ»:

Բանի մը օր ետք, ԹԱՍ գործակալութիւնը կ'իմացնէր, թէ Պանջեան Թիֆլիսի մէջ անձնասպան եղած է եւ ոչ թէ Երեւանի...:

Աստիճանաբար լուրեր կը հասնէին արտասահման: Կը պարզուի, որ Պանջեան վէճ ունեցած է խորհրդային իշխանաւորներուն հետ Հայաստանի հողային պահանջներուն շուրջ: Նոր սահմանադրութեամբ կը լուծուէր Անդրկովկասի Փետերացիան եւ Հայաստանի ներքին սահմանները կը դառնային վերջնական:

Կը կարծուի, թէ Բերիայի հետ ունեցած վէճի ընթացքին է, որ Պանջեան սպաննուած է Թիֆլիսի մէջ: Մարմինը կը փոխադրուի Երեւան, կը թաղուի անուշ կերպով եւ այդ առթիւ տեղի կ'ունենայ 600 հոգիի ձերբակալութիւնը:

«Խ. Հայաստան»ի Սեպտ. 2ի թիւին մէջ կը յայտարարուի, որ խորհրդ. Գրողներու Միութեան ընդհ. ժողովը անդամակցութենէ կը

վտարէ Ալազանը, Ա. Բակունցը, Գ. Մահարին, Վ. Թոթովեցը, Գ. Վանանդեցին, Վ. Նորենցը եւն.:

Մտաւորապէս ամիս մը ետք, Օգոստոս 24ին, Մոսկուայի մէջ կը գնդակահարուին Չինովիեւ եւ իր 15 ընկերները: Սթալին-Բերիայի կողմակերպած ոճիրները մեծ ծաւալ կը ստանան ամբողջ Խ. Միութեան մէջ:

Բայց դառնանք Պանջեանին:

Անոր գնդակահարումէն 83 օր ետք, 1936 Հոկտ. 2ին, յաջորդ՝ Ա. Ամատունի, որ աւելի ետք նոյնպէս պիտի գնդակահարուէր, հետեւեալ ամբաստանութիւնները ձեւակերպեց Պանջեանի եւ միւս գնդակահարուածներու հասցէին.

«Հաշտուողական վերաբերմունք էր ցուցաբերում դաշնակցների ու մացիոնալիզմի արտայայտութիւններին...»:

«Խաղաղութեան եւ հաշտութեան «վարդագոյն» մշուշ էր ստեղծում, որպէսզի կարողանան քողարկել մացիոնալիստական, դաշնակցական եւ կուլակային տարրերին պաշտպանելու իրենց բացայայտ մացիոնալիստական գիծը»:

«Նրանք հանապարհ կը բանային դաշնակցների առջև»:

Իսկ «Խ. Հայաստան» թերթի քարտուղարը՝ Բ. Ա. Աթանասեան՝ կը վկայէր.

«Վերջին տարիներս կենտր. օրգանը՝ «Խ. Հայաստան»ը՝ դաշնակցների դէմ ուղղուած յոդուածներ չէր տպում: Այդ կտտարուել է Խանջեանների ցուցումով»:

«Երբ այս հարցով մենք դիմում էինք Խանջեանին՝ մա միշտ այսպիսի պատասխան էր տալիս. — «Ներկայ պայմաններում ոչ մի կարիք չկայ Դաշնակցութեան դէմ յոդուածներ տպելու: Դա աւելորդ կը լինէր...»:

«Խանջեան ամէն կերպ պաշտպանում ու խրախուսում էր դաշնակցական գաղափարներով համակուած գրականագետների հակայեղափոխական խմբակին. որին գլխավորում էր կուսակցութեան մտկիւն սնդամ Բակունցը»:

Ա. Ամատունի իր զեկուցման մէջ Դրաստամատ Սիմոնեանի տոնութեամբ կ'ըսէր.

«1931 թուականի Փետրուարին, — կը վկայէր Սիմոնեանը Ձեկային, — ես արտասահմանից երեւան վերադարձայ: Խանջեանի հետ իմ ունեցած առաջին իսկ հանդիպման ժամանակ... ես նրան, Արշակ Ջամալեանի խնդրով, հազարեցի Դաշնակցութեան անտեղեւոր, նրա վերաբերմամբ խորհրդային Հայաստանին: Նա գոհուակուութիւն յայտնեց. որ Դաշնակցութիւնը կանգնած է խորհրդային Հայաստանի դէմ

սոսկ գաղափարական պայքար մղելու դիրքերում, յայտնեց, որ մեր քաղաքական-տնտեսական կեանքի ֆնմադատութիւնը նրանց կողմից կտատարուի և եւ, ի հարկէ, հորհրդային իշխանութիւնը կատաստրոֆի ենթարկուելու ռիսկում, դաշնակներն են այն միակ ռեալ ոյժը, որ կարող են անցնել իշխանութեան գլուխը:

«Պանջեանը բառացի այսպէս ասաց. — «Ի հարկէ, մի որեւէ բան պատահելիս՝ ես եւ դու կը փախչենք եւ հայ ժողովուրդի տէրը կը դառնայ 'Իաշնակցութիւնը» («Պ. Հայաստան», 1936 Հոկտ. 30):

Պորհրդային Հայաստանի առաջին սերունդի ներկայացուցիչը այսպէս արտայայտուած է Հ. Յ. Դաշնակցութեան վերաբերմամբ:

Կրնայ պատահիլ, որ Պանջեանի սպանութիւնը արդարացնելու համար յաշս համայնավար կուսակցութեան, ոճրապորժները դիտուանաւոր կերպով կ'ընէին այդ վերադրումը:

Երկու պարագային ալ, անտարակուսելի է համայնավար վարդապետութեան սնանկութիւնը:

Պանջեանի սպանութենէն երկու տարի ետք, հերթը պիտի գար Ամենայն Հայոց Կաթողիկոս Ռորէն Ա.ին...:

Քէ հեռագիր մը ստացուած է Երեւանէն՝ Գէորգ Արք. Զէօրէկճեանէն, որ կը յայտնէ, թէ Կաթողիկոսը վախճանած է սրտի տազանայէ:

Իսկ Ապրիլ 13ին Լոնտոնէն կը հեռագրէին.

«Ն. Հայաստանէն կը հազորդուի, թէ հայ եկեղեցիի պետը՝ հորէն Կաթողիկոս՝ սրտի կաթուածէն մեռած է:

«Քանի մը ամիս առաջ կ'ըսուէր, թէ խորհրդային բանտին մէջ արգելափակուած էր:

«Հաս կը կարծուի, թէ Զեկայի կողմէ սպանուած է»:

Երկու ամիս կ'անցնի եւ արտասահմանի մեր Առաջնորդարանները, Երուսաղէմի պատրիարքութիւնը ոչ մէկ լուր կը ստանան էջմիածինէն:

«Սիրոն» 1938 Յուլիսի թիւին մէջ կը յայտնէ.

«Նկատելով որ Ապրիլ 23էն ի վեր հեռագրով եւ նամակով որեւէ լուր չէր ստացուած Ս. Էջմիածինէն, Ս. Պատրիարք Հայրը Յունիս 13ին հետեւեալ հեռագիրը ուղղեց Զէօրէկճեան Սրբազանին՝ փրանսերէն.

«Կը սպասենք անվրէպ մանրամասնեալ նամակի վասն յուզարկաւորութեան Սրբազան Հայրապետին, կացութեան Մայր Աթոռոյ, Անդամոց Գերագոյն հորհուրդի, եւ ձեր Տեղակալութեան կոնգակիմ»:

Իսկ այսօր, 29 Յունիս, Ն. Ամենապատուութիւնը դարձեալ վճարեալ պատասխանով հեռագիր ուղղեց նոյն հասցէին.

«Ամէն կողմէ կը դիմեն մեզի, հանեցէ՛ք փութացնել սպասուած տեղեկութիւնները»:

Վերջապէս Յուլիս 18ին «Յուսարբեր»ի մէջ կը հրատարակուի Գահիրէի Առաջնորդարանի ստացած զեկոյցը էջմիածինէն, Մայիս 24 թուակիր, ուր Գէորգ եւ Արսէն արք.ները կ'իմացնեն, թէ «հորէն Ա. Կաթողիկոսը տարւոյս Ապրիլի յոյս 6ի գիշերը հանգեաւ ի Տէր սրտի կաթուածից»:

Ոչ ոք կը հաւատայ այս շինծու տեղեկութեան: Հայաստանի ամբողջ ժողովուրդը իմացած էր Ամենայն Հայոց Կաթողիկոսին ողբերգական վախճանը եւ արտասահման անցնող ճամբորդներ կը բերեն ժանրամասնութիւններ: Փարիզի «Յատաջ»ը 1938 Մայիս 10ի թիւով կուտայ հետեւեալ սրտաճմրկ տեղեկութիւնները.

«Զեկիստները պահանջում են յանձնել էջմիածնի թանկագին գանձերը, ոսկեայ, արծաթեայ անօթները, աղամանդները, արժէքաւոր մատանիներ եւայլն: Պահանջում են բանալիները՝ տաճարի թանգարանն ու գանձարկը բանալու համար, Կաթողիկոսը մեքծում է, չեկիստները շրջապատում են Կաթողիկոսին եւ բռնութեամբ բանալիները ձեռքից լսնում են»:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԽՈՐԷՆ Ա. ՄՈՒՐԱՏԲԵՒԵԱՆ՝ ԽԵՂԴԱՄԱՀ

Բոլշևիկներու ամենէն քստմնելի ոճիրը, անմարդկային արարքը պէտք է նկատել Ամենայն Հայոց Կաթողիկոս Ռորէն Ա. Մուրատբեգեանի սպանութիւնը:

Դարաւոր անցնալի տէր էջմիածինը հանդիսատես դարձած էր մեծ արջաւանջներու, աւերներու, բայց թշնամին երբեք չյանդգնեցաւ մահացնել Հայոց Կաթողիկոսը:

Այդ սրբապղծութիւնը եւ անպիտանութիւնը կատարեց Բոլշևիկոյր եւ Հայ. Եկեղեցին անզամ մը եւս զոհարելութեան իր բաժինը բերաւ մեր ժողովուրդի ազատագրական պայքարին: Դալիք սերունդները պիտի չմոռնան գործուած այդ ոճիրը:

Դահլճները ամէն կերպ ջանացին զսողոմնի պահել սպանութիւնը, բայց ժամանակի ընթացքին ստացուեցան պէպէս մանրամասնութիւններ:

1938 Ապրիլ 11ին Երուսաղէմէն կը հազորդուէր «Յուսարբեր»ի

«Ձեռք եմ անցնում տարաբախտ կաթոզիկոսի օգնութեան կամ-
չորը եւ անգոր դիմադրութիւնը:

«Զեկիստները ի վերջոյ նրան խեղդամահ եմ անում եւ էնա-
նում: Ասում եմ որ դժբախտ կաթոզիկոսին խեղդել եմ վերին աստիճա-
նի վայրագ կերպով, ուզողսի ձեռքերով սեղմել եմ կոկորդը եւ խեղդել
եմ: Իհարկը մնում է ինկած գետնի վրայ:

«Կաթոզիկոսին դիակը ուռած, կապտած, չարչրկուած ամբողջ
երես օր փռուած մնում է վեհարանի դռնիցում: Վանականներից ոչ
մէկը, միջնու իսկ Գերագոյն Հագեւոր Խորհրդի անդամները չեն հա-
մարձակուած մտնեալ դիակին, որ արդէն սկսել էր հոսիլ: Չորրորդ օրը
վանձու ասորոզ մի քանի ոգորմելի կոյսեր, մեծ դժուարութեամբ վան-
քի բակում մի փռու եմ փորում եւ մահատակ կաթոզիկոսի դիակը վեհա-
րանից իջեցնելով քաղում եմ՝ առանց եկեղեցական արարութեան»:

*Հայաստանի մէջ գործուած ահաւոր ոճիրներուն մէջ իր մեղ-
տակցութիւնը ունի Անաստաս Միկոյեան, որու մասին «Իզվեստիա»
1987 Նոյ. 29ին գրեց:*

«Հայաստանի դաւանանքները յայտնաբերուած եմ ընկեր Միկոյ-
եանի անմիջական մասնակցութեամբ:

«Հայաստանի ժողովուրդը երբեք պիտի չմոռնայ այն մեծ օգ-
նութիւնը, գոր Միկոյեան ցոյց տուաւ իրեն»:

*Կ'անցնին տարիներ, եւ բոլշեւիկները ամէն ջանք կը Բափեւ
դռնելու ուստ վկաներ՝ հաւատացնելու համար Սփիւռքի հայութեան,
Թէ Խորէն Ա. բնական մահով մեռած է:*

1941ի Համաժողովի պատուիրակներէն Խաչ արքեպ. Աջապա-
եան՝ Անթիլիասի նախկին կաթողիկոսական Տեղապահը՝ էջմիածնէն իր
բնակավայրը դառնալով՝ Աստուծոյ սպասաւորին վայել «Ճշմարտախո-
սութեամբ», կը վկայէ:

«Հանգուցեալ Խորէն կաթոզիկոսի մասին արտասահմանի մէջ
լսեցիմք շատ գրոյցներ: Ամենէն յուրջ մարդոց մօտ ցոյց տուած հետա-
քերթութեանս իրեն պատասխան բոլորն ալ կը վկայեն (Հայաստանի
մէջ. — Գ.), որ ան վախճանած է սրտի կարուածի մը հետեւանմով:
Իսկ ինչ կը վերաբերի իր յուզարկաւորութեան, Երեւանի մէջ ամեն
մարդ կը վկայէ, որ ան կատարուած է շատ փառաւոր կերպով եւ «Իժ
բազմութեան մը ներկայութեան»:

Իր խօսքը շարունակելով՝ Սրբազան Հայրը կը յայտարարէ.

«Անոր դամբարանը կը գտնուի Էջմիածնի մէջ եւ ծածկուած
է միաեղուր մարմարիոնով: «Հագուց Հանգուցելոց» մը արտասանեցի
ոճոր շիրմին վրայ: Երբմիկ յուշարձանին վրայ տակաւին գիր գրուած
չէ. որովհետեւ, ըսաւ ինձ Տեղակալ Սրբազանը (Գեորգ արքեպ. Զե-

*րէքեան) — «Մեր, բայց շատ վարպետ փորագրիչ մը կար, մեռաւ, կը
փնտռեմ ուրիշ մը, բայց կ'ուզեմ, որ անիկա վարպետ ըլլայ եւ աղուոր
բան մը գրէ» («ՌՒՂԵԿՈՐՈՒԹԻՒՆ ԴԷՊՐ ՀԱՅԱՍՏԱՆ», «Արեւ», 31
Յուլիս 1941):*

*Նոյն համաժողովէն վերադարձող ռամկավար պարագլուխնե-
րէն Ա. Թէրզիպաշեան հետեւեալը կը պատմէ.*

«Որպիսի՜ առասպելներ անոր յանկարծակի մահուան պարագա-
ներուն շուրջ: Ինձի, որպէս մօտ բարեկամի, անձանօք չէր հանգուցեալ
կաթոզիկոսին սրտի տկարութեան հետ անոր դէպի այդ տկարութիւնը
կաթոզիկոսին սրտի տկարութեան հետ անոր դէպի այդ տկարութիւնը
ունեցած անհոգութիւնը, որուն գլխաւոր փաստերն էին անոր ծխամա-
լութիւնը եւ սրճամալութիւնը, եւ որուն՝ իր ասեմին եւ արձագանգ
եղած եմ մամուլին մէջ: Այժմ գազանիք չէ, որ եթէ յանցաւոր մը կայ
իր վաղածամ մահուան մէջ, ասիկա եղած է իր գործածած ծախիսն եւ
սուրբին չափազանցութիւնը, որ, օր մը. եկած է յանկարծ գաղթեցնելու
անոր սրտին զարկը»:

Իսկ դամբարանին գալով, Ա. Թէրզիպաշեան կ'ըսէ.

«Ամենավերջին կաթոզիկոսին՝ Խորէն Ա. ի մարմինը քաղուած
է ԳԱՅԵԱՆԵՆՆԵՎ ԱՆԻՔԻՆ ԳԱՆՔԻՆ ՄԷՋ, միւս կաթոզիկոսներու շարքին,
եւ առաջին տեղը» («ՏԵՂԵԿՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ Ե. ՀԱՅԱՍՏԱՆԷՆ», «Արեւ»,
23 Փետր. 1942):

*Մինչդեռ, ըստ Խաչ սրբազանին, Խորէն Ա. ի մարմինը քաղ-
ուած էր էջմիածնի մէջ...:*

*Խաչ սրբազան եւ Ա. Թէրզիպաշեան Սուտի Աշխարհէն մեղք կը
բերէին ինչ որ իրենց հրահանգուած էր, եւ այս անգամ ծիծաղելի զառ-
նալու աստիճան հակասական:*

1955ին վազգէն Ա. կաթողիկոսի ընտրութենէն վերադարձող
Լոնտոնի հայ համայնքի պատուիրակ պ. Ս. Քիւրքեան, բազմա-
բիւր ունկնդիրներու ներկայութեան, «Յուսարբօ» թատրոնին մէջ,
պատասխանելով իրեն ուղղուած հարցումին, յայտարարեց.

«1945ին, երբ եւ իջմիածնէն Գանիքէ եկայ, այցելեցի «Յու-
սարբօ» եւ խմբագրութեան ըսի. որ Ամենայն Հայոց կաթոզիկոս Խորէն
Ա. սպաննած. խեղդամահ ըրած եմ. նոյնը կը կրկնեմ նաեւ այսօր —
մեր կաթոզիկոսը՝ Խորէն Ա.՝ խեղդամահ ըրած եմ: Սակայն էիմ ձեռք-
ներու շուրջ տեւաբար պէտք չէ խօսիլ: Յայտնի կառավարութեան մը
գործած ձեռքին համար նոր կառավարութիւն մը պէտք չէ պատասխա-
նատու ընել» («Յուս», 9 Յունուար 1956):

*Նոյն հարցումին պատասխանը ռամկավար օրգանի «ՀԱՅ ներկայ»
մը» արձանագրած է հետեւեալ ձևով.*

«Այդ հարցումին պատասխանը տուած եմ արդէն 1945ին՝ պ.

Քուրզէն Միխայիլովն, տեսակցութեան մը ընթացքին: Խորէն Կարօ-
զիկոս խեղդամահ մեռած է: Բայց ինչո՞ւ անցեալին գործուած սխալ մը
ներկայ կառավարութեան ռեսուրս վրայ բեռնել: Արդա՞ր է որ տարին
տասնեւերկու ամիս անցեալին պատկանող սխալներ ի յայտ բերենք եւ
ծեծենք» («Արեւ», 13 Յունուար 1936):

Աւելցնենք, որ Ս. Գիւրջեանի այս մերկացումը այլեւս նկա-
տուեցաւ վերջնական եւ ոչ մէկ պատուիրակ չյանդգնեցաւ հերքել իր
յայտարարութիւնը:

Գալով այն կէտին, թէ «նախկին կառավարութեան մը գործած
ոգիրին համար նոր կառավարութիւն մը պէտք չէ պատասխանատու
բռնել» հիմնովին սխալ է, որովհետեւ այդ ոգիրները գործուած են Կոմ-
կուսի կողմէ, որ այսօր ալ իշխանութեան գլուխն է եւ երբեք դատա-
պարտած չէ գործուած անթիւ ոգիրները:

Գ. Մ Ա Ս

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

ԻՐԱՉՊԷՍ ՍԿՍԱԻ Բ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1939 թ. Օգոստ. 19ին, երկար բանակցութիւններէ յետոյ,
Պորճը. Միութեան եւ Նացի Գերմանիոյ միջեւ ստորագրուեցաւ առեւ-
տըրական դաշնագիր մը, որով Գերմանիա 200 միլիոն մարքի վարկ կը
բանար Պորճը. Միութեան, վճարելի 7 տարիէն, 5%ով, երկու տար-
ուայ ընթացքին վերմանական ապրանքներ գնելու համար: Գերմանիա,
իբ հերթին, կը պարտաւորուէր 180 միլիոն մարքի խորհրդային ապ-
րանքներ գնել նոյն ժամանակի ընթացքին:

Չորս օր յետոյ, Օգոստ. 23ին, երբ դեռ Անգլիոյ եւ Ֆրանսայի
դիւրութեան առաքելութիւնները Մոսկուա բանակցութիւններու մէջ
էին Պորճրդային կառավարութեան հետ, Պորճը. Միութեան արտա-
քին գործավար Վ. Մոլոտով եւ Նացի Գերմանիոյ արտաքին գործոց նա-
խարար Ե. Ռիպենթրոփ, Գրեմլիկի մէջ, Ստալինի ներկայութեամբ,
հանդիսաւոր կերպով ստորագրեցին սովետ-գերմանական ոչ-յարձակ-
ման դաշնագիր մը, որ կը բաղկանար հետեւեալ 7 կէտերէ.

«1.— Երկու դաշնագիր կողմերը կը պարտաւորուին հետու կե-
նալ որեւէ բռնութենէ, որեւէ յարձակողական քայլէ եւ որեւէ յարձա-
կումէ մէկը միւսի դէմ՝ թէ՛ անհատաբար եւ թէ՛ ուրիշ պետութիւննե-
րու հետ միասին:

2.— Այն պարագային, եթէ դաշնագիր կողմերէն մէկը պատե-
րազմական գործողութեան առարկայ դառնայ երրորդ պետութեան մը
կողմէ, միւս դաշնագիր կողմը պէտք չէ աջակցի այդ պետութեան որեւէ
ձեռով:

3.— Երկու դաշնագիր կողմերու կառավարութիւնները ապա-
գային յարաբերութիւն պէտք է պահեն խորհրդակցելու եւ փոխադար-
ձաբար իրազեկ պահելու համար միմեանց՝ իրենց հասարակաց շահե-
րուն վերաբերող խնդիրներու մասին:

4.— Դաշնագիր կազմերէն որեւէ մէկը պէտք չէ մասնակցի պետութիւններու որեւէ խմբակցութեամբ, որ ուղղակի կամ անուղղակի կերպով ուղղուած է դաշնագիր միւս կողմի դէմ:

5.— Այն պարագային, երբ վէճ կամ բախում ծագի դաշնագիր կազմերու միջեւ որեւէ խմբակցութեամբ, երկու կողմերը պէտք է այդ վէճերը կամ բախումները լուծեն բացառապէս խաղաղ մասնապարհով՝ կարծիքներու բարեկամական փոխանակութեամբ, կամ, եւրոպայական պարագային, յամձմախումբ մը կազմելով բախումը կարգադրելու համար:

6.— Սոյն դաշնագիրը կնքուած է ատար տարի ժամանակամիջոցով. եթէ դաշնագիր կազմերէն մէկը չեղեալ չհամարէ ժամանակամիջոցին վերջնական մէկ տարի առաջ, դաշնագրին ժամանակամիջոցը մեքենայօրէն կ'երկարաձգուի յաջորդ հինգ տարուայ համար եւս:

7.— Սոյն դաշնագիրը ենթակայ է վաւերացման ամենակարճ ժամանակամիջոցի մէջ: Վաւերացման քուղտերու փոխանակութիւն տեղի պիտի ունենայ Պերլինի մէջ:

Դաշնագիրը ուժի մէջ կը մտնէ ստորագրուելէ անմիջապէս ետքը:

Օգոստ. 31ին Պորհրդ. Միութեան Գերագոյն Պորհուրդը միաձայնութեամբ վաւերացուց Մոլոտով-Ռիպենթրոփ դաշնագիրը, իսկ յաջորդ օրը, Սեպտ. 1ին, Գերմանիա յարձակեցաւ Լեհաստանի վրայ, եւ սկսաւ Երկրորդ Համաշխարհային Պատերազմը:

Սեպտ. 28ին, «Բարեկամութեան եւ սահմանալուծման» նոր դաշնագիր մը ստորագրուեցաւ Մոլոտովի եւ Ռիպենթրոփի միջեւ, դարձեալ Մոսկուայի մէջ: Այս դաշնագրով Լեհաստանը «վերջնականապէս» կը բաժնուէր Գերմանիոյ եւ Պորհրդ. Միութեան միջեւ:

Գերմանիոյ Համաձայնութեամբ Պորհրդ. Միութիւնը գրաւեց Էստոնիան, Լատուիան, Լիտուանիան, Պետրապիան, Հիւս. Պուլճարիան եւ Ֆինլանտիոյ որոշ մասերը:

1941 թ. Յունուար 10ին, վերանորոգուեցաւ գերման-պորհրդային առեւտրական դաշնագիրը, որով Պորհրդային Միութիւնը յանձն առաւ աւելի մեծ քանակութեամբ հում նիւթեր, քարիւղ, ուտելիք, ի մասնաւորի, հացահատիկ հասցնել Գերմանիոյ: Վերջինս ու՛ր ճարտարարուեստական ապրանքներ:

Հակառակ այս բոլորին, 1941 թ. Յունիսի 22ին, Նացի Գերմանիան, առանց պատերազմի յայտարարութեան յարձակեցաւ Պորհրդ. Միութեան վրայ:

Եւ Պորհրդային Միութիւնը, Հիթլերի կամքով, անցաւ Միացեալ Ազգերու կողմը:

Բ. Համաշխարհային Պատերազմով ուղղակի շահագրգռուած չէր Հայաստան: Առաջին շրջանին Սովետները բարեկամ էին Նացի Գերմանիոյ: 1941 Յունիս 22ին երբ յարձակումի ենթարկուեցաւ Ս. Միութիւնը, անոր օգնութեան հասան արեւմտեան պետութիւնները:

Ս. Միութիւնը անաւար կորուստներ ունեցաւ կարենալ ազատուելու համար վերջնական քայլաշրջանէ, միւս կողմէն՝ պարտութեան մատնելու Գերմանիան:

Հետ 1950ի Պորհրդային Համայնագիտարանին, «196 հայ մարտիկներ Սովետ Միութեան հերոսի տիտղոս ստացան. օգուշու Կելտն Ստեփանեան, որ երկու անգամ Սովետ. Միութեան հերոսի տիտղոս ստացաւ, 250է աւելի թոննայով մասնակցեցաւ Լեհիզգրատի; Մոսկուայի, Օտեսայի եւ Սեւաստապոլի կոնիներում: Աւելի քան 50 հայ զորավարներ կոնուեցան զինեալ ուժերու շարքերում մէջ: Ասոնց մէջ բանակի զօրավար Յ. Բաղրամեան, Սովետ. Միութեան հերոս, Յաւատարմիզի ծովակալ Ի. Իսահակով եւ 42.000 հայ մարտիկ զինուորական շեմշեմներ ստացան կառավարութենէն: ... Իսկ թիկունքի անձնուէր աշխատանքի համար 380 հազար աշխատուոր ստացաւ Սովետ. Միութեան շեմշեմներ եւ մետաղները:

Նուէր Սաֆարեանի հրամանատարութեան տակ գործող հայկական զօրաբաժինը շատ մեծ զոհեր տուաւ Թամանի (Պրիմի) կոնիներու ընթացքին: Նոյն զօրաբաժինը հետագային մասնակցեցաւ Պերլինի զրպման:

Հայերու կորուստը Բ. Համաշխարհային Պատերազմին 90 հազար կը հաշուեն: 1946ին մօտաւորապէս նոյն թիւով հայերու թոյլ աբրուեցաւ ներգաղթել Հայաստան:

Հայերու նման փոքր ժողովուրդի մը պարտադրուեցաւ այսքան մեծ կորուստ, որպէսզի ոռուս բոլշեւիկեան բռնակալութիւնը փոխարինէր գերման Նացիական բռնակալութիւնը...

Փոխարէն այդ զոհողութիւններուն՝ Ս. Միութիւնը ոչ մէկ գոհացում տուաւ Հայաստանի հողային պահանջներուն: Ընդհակառակն, ներդալթողներէն մեծ թիւ մը հեռացուեցաւ Հայաստանէն, իսկ ՄԱԿի մարտի մէջ թուրք ներկայացուցիչին հետ վէճի ընթացքին սովետ ներկայացուցիչ Վիշինսկիյ յայտարարեց, թէ Կարսը վրացական հող է եւ անոր պէտք է վերադարձուի: Զարամտութիւն թէ տղիտութիւն, երկու պարսպային ու պայտոյց է, որ սովետները ստնուագն անտարբեր են Հայաստանի պահանջներու նկատմամբ:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԶՈՂԵՐԸ

Բ. Համաշխարհային Պատերազմի ամբողջ տեւողութեան եւ մինչեւ 1947, շուրջ ութ տարի, Դաշնակցութիւնը դադարեցուց իր պայքարը Պ. Միութեան դէմ:

Դաշնակցական մամուլը տեւապէս արձագանցելու էր Պ. Միութեան մղած պատերազմին նացի Գերմանիոյ դէմ, մանաւանդ որ Ռուսաստան մաս կը կազմէր արեւմտեան պետութիւններու կազմած ճակատին: Հաւատացած էինք որ ընդհանուր յաղթանակէն ետք, Պ. Միութիւնը պիտի պաշտպանէր Հայաստանի անիրաւուած դատը:

Հակառակ այս դրական վերաբերմունքին, սովետները երբեք չփոխեցին իրենց բացասական վերաբերմունքը դէպի Դաշնակցութիւնը՝ հայ ժողովուրդի քաղաքական միակ կազմակերպութիւնը:

Պատերազմի աւարտումին պարզուեցաւ, որ վերագրուած երկիրներէն բանտարկուած եւ աքսորուած են բազմաթիւ դաշնակցականներ: Հարիւրի մօտ ընկերներ դէպի Սիպերիա զրկուեցան Ռուսներէն եւ Պուլկարիայէն: Տասը տարուան աքսորէ ետք վերադարձան մէկ քանինք չդիմացան տառապանքներու եւ մեռան հետո իրենց սիրելիներէն:

Իրանի մէջ կանուխէն ձերբակալուեցան եւ քանի մը ամիս բանտ մնացին տասնեակ մը ընկերներ: Իրանի իշխանութիւններու պահանջով անոնք ի վերջոյ ազատ արձակուեցան: Չեկայի գործակալներուն կողմէ 1941ի վերջերը, Թեհրանէն առեւանգուեցաւ մեր յայտնի ընկերներէն Վարոս Բաբայեանը:

Ճրտագոյն վերագրուած ատեն, համայնավարները հոն դաշնակցականներ կ'որոսային ամէն կողմ: Բանտարկուեցան ընկերներ Ալ. Խատիսեան, Աբր. Գիւլիանդանեան, Գեր. Բալայեան, Բենո Նալաճեան եւ ուրիշներ: Առաջին երկուքը մեծապէս ճնշուեցան եւ հազիւ ազատ արձակուած էին բանտէն, երկու ամիս ետք զիրենք կորսնցուցինք:

Ամենէն աղէտալին եղաւ Յունաստան, ուր քաղաքացիական կռիւներու ընթացքին, դաւադրաբար ձերբակալեցին ընկերներ Միհրան Փափազեան, Իր. կինը՝ Արշալոյս, զաւակը՝ Սերիօ, բանաստեղծ Մանուկ Մանուկեան, չորսը միասին վատարար զնդակահարեցին: Պատերազմի ընթացքին Միհրան Փափազեան գերմաններու ձեռքէն ազատած էր քանի մը հայ համայնավարներ, կը վկայէ ամբողջ յունահայ զաղուծը: Նոյնպէս սպաննուեցաւ Մակեդոնիոյ մէջ Բժ. Յ. Ալըզեան:

Գերմանիոյ մէջ հայ զաղուծը կարեւոր թիւ մը չէր կազմեր: Բայց հոն կային Կարմիր բանակի քանի մը հազար հայ զերիները, որոնց

մեծ աղէտ մը կը սպասէր, եթէ ամերիկացիները զիրենք չառնէին իրենց պաշտպանութեան տակ. յետոյ, զանոնք փոխադրեցին Ամերիկա:

Ահա այսպէս վերաբերուեցան բոլշեւիկները դէպի Դաշնակցութիւնը, որովհետեւ Մոլոտով — Միսլինի ծառան — յայտարարած էր. «ՈՐՈՒԻ ՀԱՄԱՐ ԱՅԺՄ ՊԱՐԶ ԶԷ ԹԷ ՈՎ ՈՐ ԴԵՌ ԻՆՔՁԻՆՔ ԴԱՇՆԱԿ ԿԱՆՈՒԱՆԷ, ԶԻ ԿՐՆԱՐ ՈՐԵՒԷ ԱՅԼ ԴԵՐ ԽԱՂԱԼ, ԲԱՑԻ ՍՈՎԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՆԱՄԻԻ ԴԵՐԷՆ(*)»:

Լենինի նշանաբանն է. «Մեզի հետ, կամ մեզի դէմ»: Ովքեր կոմկուսին չեն ծառայեր, միշտ պիտի նկատուին հայրենիքի թշնամի: Այս է ըմբռնումը ռուս-թաթարական արիւնարբու բռնակալութեան:

ՀԱՅԱՍՏԱՆ ՊԵՏԻ ՈՒՆԵՆԱՐ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Բ. Համաշխարհային Պատերազմը դեռ վերջացած չէր, երբ 1944 Փետրուար 1ին, Պ. Միութեան արտաքին գործերու նախարար Մոլոտով, Գերազոյն Պորտուգի նիստին ներկայացուց օրինադիմ մը որ միաձայնութեամբ քուէարկուեցաւ:

Համաձայն այս օրինադիմին Պ. Միութեան անդամ հանրապետութիւններ, ինչպէս Հայաստան, պիտի ունենային արտաքին գործերու եւ ազգային պաշտպանութեան նախարարութիւններ:

Այս առթիւ, Մոլոտով իր զեկոյցին մէջ կ'ըսէր.

«Ազգ. պաշտպանութեան եւ արտաքին յարաբերութիւններու մարզին մէջ առաջարկուած այս վերակազմութիւնը, որ դաշնակցային հանրապետութիւններուն կուտայ աւելի լայն գործունէութեան դաշտ, պէտք է նոր փաստ մը ըլլայ Սովիէթ Միութեան ուժերուն անմահ եւ ամրացման:

Մեծ ուժգնութեամբ է որ ի յայտ կուգայ այս վստահութիւնը. քանի որ վերակազմութիւնը կ'առաջարկենք պատերազմի մը ընթացքին. երբ հայրենիքի պաշտպանութեան համար լարուած են մեր ժողովուրդներուն ամբողջ ուժերը: Այսպիսի ժամանակ ուրիշ որեւէ պետութիւն պիտի չորոշէր նման կարեւոր փոփոխութիւն մը:

(*) Այս մէջբերումը առած ենք Կիպրոսի մէջ հրատարակուած «Նոր Արագ» շաբաթաթերթի 1947 Յունուար 11ի թիւէն:

Օրէնքին նախագիծը կ'առաջարկէ որ դաշնակցային հանրապետութիւնները կազմակերպեն իրենց զինուորական խմբաւորումները: Կարմիր Բանակին մէջ արդէն գոյութիւն ունին զինուորական ազգային խմբաւորումներ: Մեր բանակին մէջ կան լիթուանական, լեթոնական, էսթոնական, վրացական, ազրպէյճանական, հայկական, ֆոզաֆ եւ կարգ մը ուրիշ զինուորական խմբաւորումներ: Զինուորական այս միաւորներուն մի քանիսն ստեղծուեցան հայրենական պատերազմի ընթացքին:

Ինչպէս յայտնի է ցարական Ռուսիոյ մէջ կարգ մը ազգութիւններ գէնքի չէին կոչուեր: Օրինակի համար ուզպէ՛մները, ֆոզաֆները, տանիկիստանցիները, բուրքմէները, քըբքըները, այսինքն մեծամասնութիւնը Հիւս. Կովկասի ժողովուրդներուն: Բնականաբար ցարական տերութիւնը վստահութիւն չունէր այդ ժողովուրդներուն վրայ, գորգաբային եւ կիսագաղթային վիճակի մէջ կը պահէր: Սովիէթ վարչաձեւին տակ արմատականօրէն փոխուած է կացութիւնը:

Բաւարար պայմաններ ստեղծուած են դաշնակցային հանրապետութեան զինուորական խմբակցութեանց համար: Բոլոր հանրապետութիւնները ունին ոչ միայն պարզ մարտիկներու գորամասեր, այլ նաեւ սպաներու անձնակազմ, որոնք կրնան հրամայել զինուորական համապատասխան միաւորներու: Որով, ներկայիս կարելի է ձեռնարկել դաշնակցային հանրապետութեանց մէջ այս գին. խմբաւորումներուն կազմակերպումին: Եւ սակայն այս գործը զուլս համելու համար, պէտք է ունենալ հանրապետական ժողովրդային գործավարութիւններ: Պէտք է ուրեմն Սովիէթ Միութեան պաշտպանութեան ժողովրդային գործավարութիւնը վերակազմել որպէս դաշնակցային հանրապետական գործավարութիւն»:

Պատերազմի տարիներուն տրուած այս խոստումները չյարգուեցան: Ընդհակառակն, Մոսկուա աւելի կաշկանդեց հանրապետութիւններու գործունէութիւնը եւ բռնակալ Սթալին լեզուազրիտութեամբ ալ սկսաւ զբաղել, ինչպէս Ներոն որ կը կարծէր թէ արուեստագէտ ալ ծնած էր...:

Ամէն պարագայի, Հայաստան չունեցաւ ոչ արտաքին գործերու եւ ոչ ալ ազգային պաշտպանութեան նախարարութիւն:

Պատերազմի շրջանին զուտ հայերէ կազմուած գորբաժինը նոյնպէս ցրուեցին:

1955 Փետր. 12ին, ԹԱՍ գործակալութիւնը, քարոզութեան նպատակով, կրկին տուաւ այս լուրը. «Խորհրդային 16 հանրապետութիւններէն իւրաքանչիւրը պիտի ունենայ իր արտաքին գործոց եւ ազգ. պաշտպանութեան նախարարութիւնները»:

ԷԶՄԻԱԾԻՆԻ ԱԶԳ. ԵԿԵՂ. ԺՈՂՈՎԻ ԴԻՄՈՒՄԸ ՍԹԱԼԻՆԻՆ

1945 Յունիսի էջժիածինի կաթողիկոսի (Գէորգ Արք. Զէօրէք ճեան) ընտրութեան առթիւ, Ազգ. Եկեղ. Ժողովը Հայկական պահանջները յանձնեց Սթալինի նկատառութեան: Այս պարագան Հետեւալ կերպով արձանագրուած է Ազգ. Եկեղ. Ժողովի 1945 Յունիս 7ի նիստին մէջ.

«Փրոֆ. Արարատ Ղարիպեան կարգաց նաեւ այն «դեկլարացիա»ն որ պիտի մատուցուի Սովետ Միութեան հանճարեղ առաջնորդ Մեծն Սթալինին, Ազգ. Եկեղ. Ժողովի փակման առիթով: Սոյն «դեկլարացիա»յին վերջնական խմբագրութիւնը խնդրուած էր գոյգ վեհ. հայրապետներէն:

Հետեւեալն է պատճէնը դեկլարացիայի.
«Ժողովրդական Կոմիսարների Սովետի Նախագահ Իոսիֆ Վիսարիանովիչ Սթալինին.

«Հայաստանեայց Եկեղեցու Համագային Ժողովի պատգամաւորներս աւարտելով մեր աշխատանքները, հաճոյքն ու պատիւն ունեցանք յայտնելու ձեզ մեր սրտագին երախտագիտութիւնը: Սովետ Միութեան մեզ տուած դիւրութիւններով մենք հնարաւորութիւն ունեցանք կատարել համերաշխութեամբ եւ միաձայնութեամբ ընտրելու Ամենայն Հայոց Պատրիարք Կաթողիկոս Տէր Ամեն. Գ. Զէօրէքեան:

«Հայրենասիրական զգացմունքով եւ գիտակցութեամբ մեր անկեղծ ուրախութիւնն ենք յայտնում, տեսնելով մեր հայրենիքի կուլտուրական եւ տնտեսական վերելքը որ վեր է բոլոր ակնկալութիւններէն:

Զնայելով վերջին տարիների ահաւոր պատերազմին որ բնականաբար երկրի ոյժերը պիտի լարէր պատերազմական պահանջներին գոհացում տալու համար, տեսնում ենք որ Հայաստան ընթացել է ու ընթանում է յարաճուն զարգացման ֆանապարհով: Մենք տեսնում ենք Հայաստանում արտադրական, գիտական, կուլտուրական, գեղարուեստական եւ այլ հաստատութիւններ ու հիմնարկներ, մենք տեսնում ենք երբեմնի անապատ հողերն այժմ ծաղկած ու մշակած ոռոգման մեծ աշխատանքներով եւ անհուն է մեր երկուամեկն ու հիացումը մեր ժողովրդին եւ պետական կեանքի վերելքը տեսնելով: Մենք խորապէս գիտակցած ենք որ այս բոլորը հնարաւոր է այն պատճառով որ մեր երկիրըն էլ մեծ բարեբախտութիւնը ունի Սովետ Մեծ Միութեան մէկ անդամը լինելու. վայելելով ձեր հայրական խնամքն ու բարեացակամ ուշադրութիւնը:

Մեճ ԿՅԺ յոյս ունենճ որ Սովետ. Միութեան պետական եւ Գաղափարական իմաստութիւնը կը գտնէ նաեւ միջոց ու ճանապարհ վերացնելու այն անարդարութիւնը որին ենթարկուեց մեր ժողովուրդը, առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին»:

Էջմիածինի Ազգ. Եկեղ. Ժողովը 1946 Յունիս 26ին փակուելէ անմիջապէս ետք, անտարակոյս խորհրդային էշխանութեան թելադրութեամբ, «Հայրենասիրական մեծ հաւաքի մը մէջ» Սթալինի ուղղուած նամակ մը ստորագրեցին պատգամաւորները: «Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը, Երուսաղէմի Պատրիարքը կը զլիաւորէին ստորագրողները»:

Կուտանք նամակին կարեւոր մասը եւ ստորագրողներու անունները, առնելով Հիւս. Ամերիկայի «Լրատւ»-ն (1946 Փետր. 16):

Մեծ Ստալին, փառապանծ Կարմիր Բանակի եւ Դաշնակից զէնֆերու յաղթանակի այս պայծառ օրերուն, մէկ ու կէս միլիոն հայերը իրենց հայրենակարօս աչքերը ուղղած են դէպի լուսաշող Սովետական Հայաստանը, եւ անհամբեր կը սպասեն այն ցանկալի օրուան, երբ օտարի լուծի տակ հեծող հայկական հողամասերը պիտի կցուին սիրելի Հայկական Սովետական Հանրապետութեան: Աշխարհի չորս կողմերէն մեզ ուղարկելով Սովետական Հայաստան, մեր համայնքները լիագործած են մեզ դիմել ձեզ հայ ժողովրդի հողային պահանջի կարգադրման եւ Սփիւռքի հայութեան մայր երկիրը վերադարձի խնդրանքով:

Հայ ժողովուրդը շատ իրաւացիօրէն կը սպասէ եւ կ'ակնկալէ, որ արդարութեան եւ ազգերու իրաւունքներու անուճով երդուող Միացեալ Ազգերը պաշտպան կը կանգնին Թրքահայաստանի հողերու Սովետական Հայաստանին կցման պահանջին եւ իր ազգային իրաւունքներուն:

Հայ ժողովուրդը հաստատապէս համոզուած եւ հաւատացած է, սակայն, որ ռուս մեծ ժողովուրդը անպայման կ'իրագործէ հայերու իրենց հայրենական ժառանգութեան վերատիրանալու հայրենասիրական եւ մարդկային պահանջը:

Մեծ Ստալին, դուն պողպատէ վճռականութեամբ իրագործեցիր ուրբանացիներու, բելոռուսներու, մոլդավացիներու եւ բալտիկ ժողովուրդներու ազգային ամբողջացումը, դուն նաեւ թշնամի անարգ լուծէն ազատեցիր լեհերը, չեխոսլովացիները, աւստրիացիները, բուլղարները եւ եուկոսլաւները՝ իրաւամբ նուաճելով համայն ազատասէր մարդկութեան սիրտը եւ ժՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ԱԶԱՍԱՐԱՐԻ կոչումը:

Մեծ Ստալին, մենք եւս ճայնակցելով Ամերիկահայ Ազգային Խորհուրդի դեկլարացիային՝ ուղղուած Սան Ֆրանսիսկոյի պատգամաւորներուն եւ մամուլին, մէկ ու կէս միլիոն դժբախտ եւ հայրենագուրկ

հայերու անուճով կը դիմենք ձեզ — նոյնպէս իրագործել հայ ժողովրդի ազգային ամբողջացումը, կցելով Թրքահայաստանի հողերը Սովետական Հայաստանի երկրամասին եւ կարգադրելով աստանդակաւ հայերու վերադարձը իրենց մայր երկիրը:

Փա՛ռք ու պատի՛ւ ռուս մեծ ժողովրդին, յաղթական Կարմիր Բանակին եւ մեր բարեկամ Մեծ Մարշալ Ստալինին:

ՍԹԱԼԻՆԻՆ ՏՐՈՒԱԾ ԴԱՄԱԿԸ ԱՏՈՐԱԳՐԱԾ ԵՆ

ԳԷՈՐԳ Զ. Կաթողիկոս Ամենայն Հայոց

Գաբրիէն Ա. Կաթողիկոս Կիլիկիոյ

ԿԻՒՐԵՂ Բ. Պատրիարք Երուսաղէմի, ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊ. ՄԱԶԼՈՒՄԵԱՆ, Մաշնորդ Յունաստանի, ԱՐՏԱՒԱԶԻ ԱՐՔԵՊ. ՍԻՒՐՄԷԱՆ, Առաջնորդ Եւրոպայի Քեմի, ՄԱՄԲՐԷ ԵՊԻՍ. ԳԱԼՏԱՅԵԱՆ, Առաջնորդ Գալիֆօրնիայի, ՄԱՄԲՐԷ ԵՊԻՍ. ՍԻՐՈՒՆԵԱՆ, Առաջնորդ Եգիպտոսի, ՏԻՐԱՆ Մ. ՎՐԴ. ՆԵՐՍՈՅԵԱՆ, Առաջնորդ Հայոց Ամերիկայի, ՎԱԶԳԷՆ ՎՐԴ. ՊԱԼՃԵԱՆ, Առաջնորդ Ռումանիայի, ՎԱԶԱՆ Մ. ՎՐԴ. ԿՈՍՏԱՆԵԱՆ, Առաջնորդ Իրանահայկական Քեմի, ԳՐԻԳՈՐԻՍ Մ. ՎՐԴ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Առաջնորդ Պուլկարիայի, ԿԱՐԱՊԵՏ ԱՒԱԿ ՔԱԶԱՆԱՅ, Առաջնորդական Տեղակալ Ասրպատականի, ՍԻՌՆ Մ. ՎՐԴ. ՄԱՆՈՒԿԵԱՆ, պատգամաւոր Ամերիկայի Հայոց, ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ՏԵՐ ԵՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ, ԵԶԵԻԿ ՎՐԴ., ՄԻԽԱՆ Ս. ԷՋՄԻՃՅԷ, ՄԱՍԹԷՆՍ ՎՐԴ., ՄԻԽԱՆ Ս. ԷՋՄԻՃՅԷ, ԿԱՐԱՊԵՏ ՔԶՆՅ. ԳԱԼՏԱՅԵԱՆ, պատգամաւոր Քալիֆօրնիայի Քեմի, ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ, ՀՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Իսկական անդամ, ԱՏԵՓԱՆ ՄԱԼԽԱՍԵԱՆ, ՀՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Իսկական անդամ, ՊԱՏՐԻԿ ՍԵԼԵԱՆ, խմբագիր Վերաբեքի եւ փոխ-ձեռագրի Ամերիկայի Ազգային Խորհրդի, ԳԱՐԵԳՐԵ ԼԵՒՈՆԵԱՆ, արուեստի վտարակաւոր զործիչ, ՄԵՍՐՈՊ ԱՍՏՈՒՐԵԱՆ, Տրանսայի Ազգային ձեռագրի ընդհ. ցարտուղար, ԵՂ. ՍՈՍԻՅ, զբոյլ եւ արուեստի զործիչ, ԼԵՒՈՆ ԶՈՐՄԻՎԵԱՆ, խմբագիր Վերաբեքի շաբաթաթերթի, Փաբրիկէ, ՎԱՐԳԻՍՆ ՔԶՆՅ. ԳՐԻԳՈՐԵԱՆ, ներկայացուցիչ Պառուի Քեմի, ԳԵՂԱՄ ՃԵՆԵՐՃԵԱՆ, խմբագիր Վաղարշապատի Քեմի եւ անդամ Տրանսայի ձեռագրի կեդրոնական վարչութեան, ՌՈՒԲԷՆ Մ. ՎՐԴ., Առաջնորդ Շիրակի, ՌՈՄԱՆ ԻՍԱՅԵՒ, Ինժիներ, առետարական եւ արդիւնաբերող, ներկայացուցիչ Իրանի 50-000 հայերի, ԱՐՄԷՆ ԱՐՄԷՆԵԱՆ, ՀՍՍՌ Ժողովրդական արտիստ, ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐԵԱՆ, Ժողովրդական նկարիչ, ԲԺԻՇԿ ԲԱԳՐԱՏ ԱՒԱԿԵԱՆ, ԹԻՀՐԱՆԻ ներկայացուցիչ, ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻԲԵԱՆ, փրօֆ. ՀՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Լեզուի Ինստ. Գրեկաւոր, ԲԺԻՇԿ Ն. ԿԱԶԿԱԶԵԱՆ, Վրաստանի ներկ., ԱՇՈՏ ԱՐՄԱՀԱՄԵԱՆ, Պեւստատուարանի Հայոց Պատմութեան ամբիոյնի վարիչ, ՄԵՐԻ Հ. ՄԱՐՄԱՐԵԱՆ, Տրանսայի

Ազգային ձեռնարկի նախագահ, **ԳԵՏՐՈՍ ԹԷՐԶԵԱՆ**, Ամերիկահայ Ազգային Խորհրդի նախագահ, **ՃԷՍՄ ՉԱՆԳԱԼԵԱՆ**, Հայ Լեզվաբանների Միութեան տնօրեն, ներկայացուցիչ **Ամերիկայի Հայոց, առեւտրական Լ. Բ. Ը. Միութեան Ամերիկայի Յանձնաժողովի, ՎԱՀԱՆ ՔՀՆՅ. ԴԱԻԹԲԷԿԵԱՆ**, ներկայացուցիչ **Հիսթորիայի Կովկասի, ԲԱՐԳԷՆ ԴՈՐՈՒՂՋԵԱՆ**, Իրանի Ատրպատականի պատգամաւոր, ներկայացուցիչ **25 000 Հայերի, ՄՈՒՇԵՂ ՄԿՐՏԻՉԵԱՆ**, ներկայացուցիչ **Ռուսաստանի Հայ բանուորների, ՀԱՄԱԶԱՄՊ ՅԱԿՈԲԵԱՆ**, ներկայացուցիչ **Կիւլաքուսի շրջանից, ՀԱՄԱԶԱՄՊ ՔՀՆՅ. ԴԱՐԻԲԵԱՆ**, ներկայացուցիչ **Արժաւիքի, ԼԵՒՈՆ Գ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ**, ներկայացուցիչ **Սպանիայի 40 000 Հայերի, ՀԱՅԿ ԳԱՎՈՒԳՃԵԱՆ**, առեւտրական **Միացեալ Նահանգներին եւ Բ. նախագահ Հայկական Բարեգործական Ընդհ. Միութեան, ՍԱՄՍՈՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ**, ներկայացուցիչ **Լեւոնային Ղարաբաղի, ԱՐՇԱԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ**, ներկայացուցիչ **Բաղուրի, ԱՌԱԲԵԼ ԱՒԱԳԵԱՆ**, մանկավարժ, ներկ. **Թրիլիսի, ԲԺԻՇԿ ԳՐԻԳՈՐ**, ներկ. **Թրիլիսի, ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՌԱՍԵԱՆ**, ներկ. **Թրիլիսի, ԳՐԻՇԿ ՏԷՐ ԱՍՐԳՍԵԱՆ**, ներկ. **Թրիլիսի, Ս. ԴՈՎԼԱՏԵԱՆ**, ներկ. **Թրիլիսի, Ի. ԵԼԵՆԿՈՒՅԻՍ**, գրականագետ, ներկ. **Թրիլիսի, ԵՓՐԵՄ ԷԼԷՉԵԱՆ**, ինժեներ, ներկայացուցիչ **Լիբանանի Հայոց, ԳԵՆՆՈՆ ՃԼՈՒԵԱՆ**, ներկ. **Գաղեստիների Հայերի, ԴՈԿՏՈՐ Ա. ՏԻՐԱՅԵԱՆ**, Ռուսաստանի Հայաստանեան ձեռնարկի ներկայացուցիչ, **ԳԷՈՐԳ ԳԱՊՈՅԵԱՆ**, ներկ. **Սուրբային, ՎԱՀԱՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ**, նախագահ **Ռուսաստանի Հայաստանեան ձեռնարկի, ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ**, քարտուղար **Ռուսաստանի Հայ Երիտասարդական Միութեան, ԱՐՏԱՇ ԱԷՖԷՐԵԱՆ**, ներկայացուցիչ **Ռուսաստանի Հայ Փաշարկադորների, ՄԵՍԻԱ ԽԱՉԵՐԵԱՆ**, ներկայացուցիչ **Ռուսաստանի Հայ բանուորների, ԿԻՐԱԿ ՍԱԳՉԼԵԱՆ**, երգիչ, ներկ. **Ռուսաստանի, Գ. Մ. ՄԷՔՏՈՒՊՃԵԱՆ**, ներկայացուցիչ **Բուլղարիայի Ազգային ձեռնարկի, ԳԵՏՐՈՍ Ե. ԹՈՓԱՔԱՉԵԱՆ**, առեւտրական, ներկ. **Բուլղարիայի Ազգային ձեռնարկի, ՄԿՐՏԻՉ ԴԱԻԹԻ ՄՍՐԼԵԱՆ**, առեւտրական, ներկ. **Լիբանանի Հայութեան, ՍԱՐԳՍԻ ՔԻՐՈՔՃԵԱՆ**, առեւտրական, **Լոնդոն, ԴՈԿՏՈՐ ՀԱՅԿՈՒՆԻ ԻԹԻՐԻՃԵԱՆ**, Անգլիայի Հայերի ներկայացուցիչ, **Ե. ԱՅՎԱՃԵԱՆ**, Ռուսաստանի Հայ բանուորների ներկայացուցիչ, **ՍԵՐՈՖ ԱՅՈՅԵԱՆ**, Լեւոնականի պատգամաւոր, **ՆԻԿՈՒԱ ԽԱՉԵՐԵԱՆ**, Պաշուրի թեմի պատգամաւոր, **ԱՐՇԱԿ ՆԱԶԱՐԵԱՆ**, Ռուսաստանի Հայաստանեան ձեռնարկի ներկայացուցիչ, **ԼԵՒՈՆ ՄԵԼՔՈՆԵԱՆ**, ներկայացուցիչ **Լեւոնականի, ՄԵԼԻՔ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ**, ՓԱՇԱ, Վրաստանի թեմի պատգամաւոր, **ԴՈԿՏՈՐ ՎԱՌՎԱՌԵԱՆ**, Հ. ներկ. **յուճահայ, ՄԱՐԳԱՐԻՏ ՀԱՄԲԱՐԵԱՆ**, ճարտարապետ, Վրաստանի թեմի պատգամաւոր, **ԱՐՇԱԿ ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ**, ներկ. **Լիբանանի, ԳՐԻԳՈՐ ԲԱՐԱՂԱՄԵԱՆ**, ներկ. **Յունաստանի, ԴՈՒՐԵԱՆ-ԱՐՄԷՆԵԱՆ**, վաստակաւոր գերասանուհի, **Մ. ՄԱԼՈՒՄԵԱՆ**, ներկ. **Ճրանսայի Հայերու Ազգային ձեռնարկի, ՍԵՐԱԿ ՉԱՔԱՐԵԱՆ**, մանկավարժ, **Կիրովոպոլս, ՍԱՀԱԿ ՔՀՆՅ. ՍԱՀԱԿԵԱՆ**, Վրաստանի թեմի Առաջնորդական փոխանորդ, **Գ. ՍՐՈՒԱՆՉԷՆ**, ինժեներ-քիմիկոս, **Թրիլիսի պատգամաւոր, Ե. ՇԱՀԱՉԻՉ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ**, Ֆիլոլոգիական Գիտութիւնների դոկտոր, **ԼԵՒՈՆ ՄԻՐՉՈՅԵԱՆ**, ներկ. Վրաստանի Ախալցխայի շրջանի, Երեսների պատգամաւոր, **ԵԿԱՏԵՐԻՆԷ ԱԼԵՔՍԵՅԵՆԱ ԲՈՏԱԼԱՇԻՒԼԻ**, ներկ. Վրաստանի, **Տուրքիէ, Գ.**

ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ, պատմաբան, պատգամաւոր Վրաստանի, **ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐԵԱՆ**, մասնակցութեամբ ունեցող, Վրաստանի Արաբաբաշի շրջանին, **ԱՄՈ ԱՄԻՐԻՍԵԱՆԵԱՆ**, Կիրովոպոլս, Ալբերձանի պատգամաւոր, **ԳԷՈՐԳ ՄԵՆԱՅԵԱՆ**, երկարամեայ ուսուցիչ **ԼԷՎՈՆԱՆԻ**, **ՅԱԿՈԲ ԱՐԱՄԵԱՆ**, խմբագիր **Վերքիսի, Եգիպտոս, ԽՈՐԷՆ ՎՐԻՒՅԷԼԻՍԵԱՆ**, միտքային էմբասանի, **ԵՐՈՒՆԵՂ ՄՈՐԼԵԱՆ**, խմբագիր **Վաստանագիտի, Եգիպտոս, Մ. ՄԵՆԱՅԵԱՆ**, գրասիրտ երեսանդ, **ՄԿՐՏԻՉ ՔՀՆՅ. ՉՈՐՉՈՓԵԱՆ**, Առաջնորդական փոխանորդ **Նոր Նախիջևանի, ՄԵՔԱՅԷԼ ԵԼՇՏՈՒԵԱՆ**, երեսփոխան **Նոր Նախիջևանի, ՄԵՔԱՅԷԼ ԳԵՂԵՂԵԱՆ**, ներկ. **Ռուսաստանի քաղաքին, ԵՐՈՒՆ ԽՈՒՄԱՄԱՆԵԱՆ**, անգամ ծխական խորհրդի **Նոր Նախիջևանի, ԽՈՐԷՆ ԱՌԱՒ ՔՀՆՅ. ՇՈՒՇԱՆԵԱՆ**, էջմիածնին, **ՀԱՄԱԶԱՄՊ Տ. ՅԱԿՈԲԵԱՆ**, ներկ. **Սուրբաղայի շրջանին, ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԷԼԱՅԵԱՆ**, Գաղեստիների ներկ. **ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՈՐԾԱԿԱԼԵԱՆ**, Հայաստան, **Լեւոնականի ներկայացուցիչ, ՎԱՐԳԱՆ ՍԱՐԳՍԵԱՆ**, անտեսակց, ներկ. **Արևմտեան Նիւթպոլս, ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԵԼԻՔ ԱՌԻՐԱՐԵԱՆ**, բժիշկ, **Թրիլիսին, ՅՈՎ. ՔՀՆՅ. ՏԷՐ ԱՍՐԳՍԵԱՆ**, ներկ. **Լեւոնականի, ՀՄԱՅԵԱՆ**, ներկայացուցիչ **Լեւոնականի, Ե. ՇԻՇՄԱՆԵԱՆ**, անգամ **Նոր Նախիջևանի Թեմական Խորհրդի, ԻՎԵԱՏՐՈՍ ՔՀՆՅ.**, ներկ. **Ստեփանի, ԳԷՈՐԳ ԱՅՈՒԵԱՆ**, անգամ **Նոր Նախիջևանի ծխական խորհրդի, ԳԱՐԵԳՐԵՆ ԳԱՌՈՍԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ**, ներկ. **Երեսների, ԱՍՏՂԻԿ ՍԵՐՈՖԵԱՆ**, նախագահ **Կրասնոսարի Եկեղեցւոյ, ԱՌԱՒԻՄՈՎ**, ներկ. **Պաշուրի, ԲԱՐՈՒ**, ներկ. **Պաշուրի, ներկայացուցիչ Թուրքիստանի:**

Աւելի ուշ, Հայկական պահանջներու արձագանդ եղաւ Մոսկուայի պաշտօնաթերթ **«Փրատա»**-ն, հետեւեալ ձևով.

«Արաստահմանի մէկուկէս միլիոն հայութիւնը կը միանային Հայոց Կարողիկոսի եւ ապա Հայաստանի կառավարութեան միջոցով պիտի մկր կատարէ. որպէսզի իր արդար իրաւունքն եղող ծննդավայր կայրենիքը՝ Վան, Պիքիս եւ Կարին կցուին Սովետ Հայաստանին: Կաակած չկայ. որ Սովետ Հայաստանի ժողովուրդն ու կառավարութիւնը չէին կրնար տարբեր կեցումով ցոյց տալ արտասահմանի իրենց եղբայրներուն հանդէպ, եթէ ոչ անոնց աչքն լայն բանալ հայրենիքի դռները... Մեծ անարդարութիւն մըն է հոյնկէս Ռուսական Կովկասի մաս կազմող Սուրբաղուի, Կարսի եւ Արտահանի նահանգներուն՝ բուրքերուն ձգուիլը... ԿՈՎԿԱՍԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԻՆ ԵՍՈՒՐՄԱԼՈՒ, ԿԱՐՍ ՈՒ ԱՐՏԱՀԱՆ, ԻՍԿ ԹՐԲԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԻՆ ԵՎԱՆ, ՊԻԹԼԻՍ ՈՒ ԿԱՐԻՆ ՎԻԼԱՅԷԹՆԵՐԸ»:

(«Հայրենիք» 1946 Յուլիս 13)

Այս դիմումներուն արդիւնքը այն եղաւ, որ Ռ. Միութեան արտաքին գործերու նախարար Մոլոտով 1953 Մայիս 30ին յուշագրով յայտնեց Անգարայի կառավարութեան, թէ Հայաստան կը հրաժարի իր հողային պահանջներէն...:

ԷԶՄԻԱԾԻՆԻ «ԵԼՈՅԹ»Ը ՎԱՏԻԿԱՆԻ ԴԵՍ

1945 Յունիս 16ին էլմիածնի մէջ բացուեցաւ Եկեղեցական Համագումարը եւ Յունիս 22ին 113 պատգամաւորներու մասնակցութեամբ կաթողիկոս ընտրուեցաւ Գէորգ Արք. Չէօրէքճեան: Յունիս 24ին կատարուեցաւ կաթողիկոսի օծումը:

Ազգային-Եկեղեցական ժողովի անունով 15 բարձրաստիճան եկեղեցականներ քրիստոնեայ աշխարհին ուղղուած դիմում մը ըրին ընդդէմ Վատիկանի:

Նոյնանման դիմում մըն ալ, դարձեալ ուղղուած «քրիստոնեայ աշխարհին», կատարուած էր աւելի սոսաջ Մոսկուայի մէջ գումարուած ժողովի կողմէն, որ հաւաքուած էր Ս. Միութեան Պատրիարքը ընտրելու համար:

Նշանակալից է, որ Ազգ. Եկեղեցական ժողովի անունով կատարուած այս դիմումը յիշատակուած չէ ժողովի արձանագրութիւններուն մէջ, զորս հրատարակած էր «էլմիածին» պարբերականը: Այս դիմումը լոյս տեսաւ արտասահմանի քանի մը թերթերուն մէջ եւ ստորագրող եկեղեցականներէն զոնէ մէկը խոստովանեցաւ, որ էլմիածնի մէջ պարտադրանքի տակ ստորագրած են այս դիմումնադիրը... (*):

«Ազգային-Եկեղեցական ժողովը՝ գումարուած Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք-կաթողիկոս ընտրելու նպատակով» իր երախտադիտութիւնը կը յայտնէ առ Աստուած, «միացեալ ազգերի փառապանծ յաղթանակին» համար:

«Քրիստոնէական կրօնն ու եկեղեցիները արտաճոյ կարգի դեր ունին կատարելիք», մինչդեռ «բազմակամ միտումնաւոր աշխատանքները քրիստոնէական եկեղեցիների մէջ՝ յիշեալ նպատակների իրականացման միայն խոչընդոտ կը լինեն: Նոքա նոր եւ ահաւոր պատերազմի ուղին կը հարթեն միլիոնաւոր մարդկանց կորստեան, մարդկային մշակութային ստեղծագործութեան ոչնչացման պատճառ կը հանդիսանաւ եւ մարդկութեան համար նոր տառապանքների դռներ կը բանան:

«Տարաբայտաբար հոռմէական եկեղեցին գլխաւորապէս Վատիկանը միջնուած է բազմակամ նպատակների մէջ՝ արգելի հանդիմանալով քրիստոնէական բարձրագոյն նպատակների իրագործմանը եւ պաշտպանելով գերմանական աշխարհաւեր ոյժը. որ յանուն մարդկութեան տառապանքների ազդիւր է հանդիսացել: Ուստի Ազգային-Եկեղեցական

(*) Ամբողջութեւնը հրատարակուած է «Յուսարբ»-ի 1945 Յունիս 10ի թիւին մէջ:

ցական ժողովը Վատիկանի բռնած այս դիրքը, որ անյարիր է քրիստոնէական վսեմ գաղափարներին, համարում է դատապարտելի»:

«Ազգային-Եկեղեցական ժողովի յանձնարարութեամբ» ստորագրած են դիմումը՝ էլմիածնի, Կիլիկիոյ կաթողիկոսները, Երուսաղէմի Պատրիարք Կիրիլ Բ., Եպիսկոպոսներ՝ Մամբրէ Սիրունեան, Վահան Կոստանեան, Տիրան Ներսոյեան, Մամբրէ Գալֆայեան, Կարապետ Մաղլըմեան, Գրիգոր Կարապետեան եւ Հայաստանի եկեղեցականներէն Ներսէս Եպս. Աբրահամեան, Եզնիկ վարդապետ, Սուրէն Եպիսկ., Կարապետ Եպիսկ.:

Այսպէս, Մոսկուան պարտադրեց 15 բարձրաստիճան եկեղեցականներուն անտեղի եւ մնասակար ելոյթ մը ունենալ Վատիկանին դէմ:

Մինչդեռ նոյն եկեղեցականները դեռ բառ մը չարտասանեցին ընդդէմ այն բռնաւոր ուժին, որ տասնեակ հազարաւոր եկեղեցիներ փակեց եւ տասնեակ հազարաւոր եկեղեցականներ բանտարկեց ու աքորեց Ս. Միութեան սահմաններուն մէջ:

ՆԵՐԳԱՂԹԸ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ

1946ին ղէպի Հայաստան տեղի ունեցած ներգաղթի ատեն, Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Զ. կոնդակով մը հրահանգներ տուաւ արտասահմանի իր նուիրակներուն եւ թեմակալ Առաջնորդներուն:

Կոնդակը, շեշտելէ ետք ներգաղթի կարեւորութիւնը եւ խորհրդային իշխանութեան որոշումը, կուտայ կարգ մը հրահանգներ: Ստորեւ կը ներկայացնենք Եւրոպայի կաթող. պատուիրակ Արտաւազդ արք. Սիրմէեանին ղրկուած Յունիս 1 թուակիր (թիւ 240) կոնդակի վերջին մասը («Յառաջ», 1946 Նոյեմբեր):

Մեր առաջարկն է շտապ կարգով, տեղական պայմանների համաձայն, կազմակերպել նիւթական աջակցութեան հարցը եւ գործի անցնել, եւ ձեր ձեռնարկների եւ նոցա ելքի մասին պարբերաբար իրազեկ անել մեզ ի գիտութիւն, ի միամտութիւն եւ յաջակցութիւն: Մեր կողմից կ'առաջարկենք ի գործադրութիւն հետեւեալ միջոցները:

1.— Տեղիդ բազմակամ իշխանութեան գիտութեամբ քեմիդ երեսփ. ժողովն ու կեդրոնական վարչութիւնը ձեր նախագահութեամբ կարգոււ եմք հնամասն ԱՌԻԹԻՆ. որ ժամանակաւորապէս ի պահ ըն-

դունէ գաղթող ընտանիքների անվաճառ մնացած անշարժ կալուածները, որպէսզի այդ հանգամանքը արգելի չհանդիսանայ ներգաղթի յապաւում, եւ ի հաշիւ ինամակալութեանդ յանձնուած վաճառելի կալուածի հնարարութեան չափով ԱԻԱՆՍԱԻՈՐԵԼ նոցա, ապագայում վաճառելի կալուածի դրամից գանձելու պայմանով:

2.— Աւան տալու համար քեմիդ բոլոր եկեղեցիների կանխիկ դրամը ժամանակաւորապէս գործածել, վաճառուելի կալուածների հաշուին գանձելու պայմանով:

3.— Տեղիդ հարուստներից կազմակերպել յանձնաժողով, իրենց ներքին համաձայնութեամբ պատկառելի դրամագումար գոյացնելու համար, որի նպատակը կը լինի աւանաւորել գաղթողներին, ապագայում նոցա կալուածների վաճառումից գոյացած դրամից յետ ստանալու պայմանով:

4.— Լայն հանգանակութիւն կազմակերպել, որից գոյացած դրամը անվերադարձ նպաստ տալ բացարձակ կարիքաւորներին:

Աւարտելով խօսքս, մաղթում եմ Փրկչին՝ նեղեալների, վըշտացեալների եւ հալածեալների միակ նշարիտ բարեկամին, ի սէր այս սուրբ գործի յաջողութեան, ոյժ եւ եռանդ պարգեւէ ձեզ եւ ձեր պալիցներին յաջողութեամբ պսակելու այս մեծ եւ ազնիւ գործը:

Մաղթում եմ Բարձրեալին, որ շարժէ մեր բոլորիս գութը, յուզէ մեր հոգու ազնիւ զգացումները, արձագանգ տալու այս սուրբ գործին:

Մաղթում եմ Տիրոջը, որ իր հովանին տարածէ գաղթող ժողովըդի վրայ եւ ներգաղթը յաջողութեամբ պսակէ:

Մաղթում եմ Բարձրեալին, որ գաղթականութիւն հանդ պետութիւնների տրամադրութիւնը ի բարին ուղղէ, որպէսզի հայ պատմական ժողովրդի դարաւոր ստոպանքները գոնէ մասամբ բուժուին:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ԼԱՅՈՑ ԳԵՈՐԳ Զ.

Սփիւռքի հայութիւնը սովէն կերպ ընդառաջեց ներգաղթի կոչին:

Լիբանանէն, Սուրիայէն, Յունաստանէն եւ Ֆրանսայէն Հայաստան դաղթեցին մօտ 90 հազար հայեր: Սովետ իշխանութիւնները չկարողացան գլուխ հանել զետեղման գործը եւ արիթ տուին զժողովրդի ներգաղթողներու մօտ:

1955ի էջմիածինի համադումարէն վերադարձող պատուիրակներ յայտնեցին, թէ ներգաղթողներէն 15 հազար հօգի աջօրուած են Սիպիւրիա եւ հօն առանձին դաղուի մը կազմած են:

Բ. Համաշխարհային Պատերազմի վերջաւորութեան Ռուսաստան դարձեալ փորձեց տաք ջուրերը իջնելու իր քաղաքականութիւնը, նեղուցնելու մէջ կայաններ պահանջելով:

Այս առթիւ Թրքական մամուլը սկսաւ պարզարանել ռուսական թաքուն ծրագրերը: Կ. Պոլսոյ «Միլլէթ» թերթը դրայացունց լուր մը հրատարակեց 1947 Հոկտեմբերին, ըստ որու Սովետները ծրագրած էին Թուրքիան բաժնել խորհրդային հինգ հանրապետութիւններու:

Մոսկուայի ձայնասփիւռը թէեւ հերքեց այս տեղեկութիւնը, բայց «Միլլէթ» պնդեց, հրատարակութեան տալով ռուսերէն քարտէս մը, որ պատրաստուած է եղեր 1939ի վերջերը. «Մեր տրամադրութեան տակ կը գտնուին անունները այն յանձնաժողովին եւ տպարանին, որոնք պատրաստած եւ տպագրած են ռուսերէն քարտէսը, որուն վրայ գրուած է.— Թուրքիոյ բաժանումը եինգ սովետ հանրապետութեանց՝ համաձայն պատմական եւ ցեղագրական տուեալներու», գրեց «Միլլէթ» թերթը: Հրատարակութեան տրուած քարտէսին վրայ հետեւեալ հանրապետութիւնները կ'երեւին. «Սեւ ծովեան խորհրդային հանրապետութիւն, երկրորդը՝ արեւելեան նահանգները կը պարփակէ եւ կը կաշուի «հայկական խորհրդային հանրապետութիւն», երրորդը՝ «Մարմարայի խորհրդային հանրապետութիւն», չորրորդը՝ «Եգեականի խորհրդային հանրապետութիւն», հինգերորդը՝ «Գարամանի խորհրդային հանրապետութիւն»: Ասոնցմէ գատ կ'երեւին վեցերորդ՝ արարական եւ եօթներորդ՝ քրտական հանրապետութիւնները:

«Միլլէթ» հաստատեց, որ այս ծրագրերը պատրաստուած էին ռուսեկերման գործակցութեան շրջանին:

ՍՈՎԵՏՆԵՐԸ ԿԸ ԶՆՁԵՆ ԽՐԻՄԻ ԵՒ ԶԵԶԵՆԻ ԼԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԿԸ ՏԵՂԱՀԱՆՆԵՆ ՄԷԿՈՒԿԷՍ ՄԻԼԻՈՆ ՀՈԳԻ

Սովետները միշտ անբարեացակամ վերաբերում ունեցած են զԼպի ազգային փոքրամասնութիւնները: Ռուսեկերման պատերազմի ընթացքին մաս մը թաթարներ ու չեչէներ, գերմաններուն ծառայած ըլլալու ամբաստանութեամբ, 1946 Յունիս 26ին Մոսկուա պաշտօնապէս հաստատեց Խրիմի ու Զեչէնի հանրապետութիւններուն ջնջումը: Մէկուկէս միլիոնի հասնող թաթարներ, չեչէներ, քալմուքներ, պալ-

բարձր, զբաղմունքներ եւ վուկայի գերմանները տեղահանուեցան իրենց երկիրներէն եւ դրկուեցան Միպերիա, բացարձակ զաղտնապահութեամբ:

Այդ հալածանքը փաստող միակ վաւերագիրը լոյս տեսաւ «Իգլիստի» 1946 Յունիս 26ի թիւին մէջ, որ հետեւեալն է.

«Խրիմի Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան եւ Չեչէն ինքնավար Հանրապետութեան ջնջումը եւ վերածումը Խրիմեան Միութեան:

Հայրենական մեծ պատերազմի օրերուն, երբ Սովետ. Սոցիալիստ. Հանրապետ. ժողովուրդները հերոսաբար կը պաշտպանէին պատիւն ու անկախութիւնը իրենց հայրենիքին, ճակատելով գերմանո-ֆաշիստ ներխուժողներու դէմ, բազմաթիւ չեչէններ եւ խրիմի թաթարներ գերմաններու ծառայութեան մէջ մտած էին. կամաւորական գունդեր կազմուեցան գերման ղեկավարներով եւ գերման բանակայիններու հետ միասնաբար զինեալ ուժերով կռուեցան Կարմիր Բանակի վաշտերուն դէմ: Գարձնալ անոնք, գերմաններու հրամանով, բազմաթիւ անարեկչական խմբակներ կազմեցին, կռուելու համար սովետ իշխանութեանց թիկունքին վրայ: Այդ շրջանին, Չեչէն եւ Խրիմի Հանրապետութիւնները միջոցներ ձեռք չառին հայրենիքի այս դաւաճաններուն դէմ:

Վերայիշեալ պատճառներով, չեչէններն ու Խրիմի թաթարները տեղաւորուեցան Խորհրդային Միութեան տարբեր շրջաններուն մէջ. այդ ժողովուրդներուն հող տրամադրուեցաւ, եւ անոնց անմիջական կարիքները հոգացուեցան կառավարութեան կողմէ: Գերագոյն Սովետի նախագահութեան առաջարկով էր, որ Չեչէն եւ Խրիմի Հանրապետութիւնները ջնջուեցան, վերածուելու համար ԽՍՀՄՍՄՄՄ Միութեան:

1.) Սովետ. Ռուսիոյ հանրապետական խորհուրդը կը հաստատէ Չեչէն Հանրապետութեան ջնջումը. ինչպէս նաեւ Խրիմի Հանրապետութեան փոփոխումը՝ Խրիմեան Միութեան:

2.) Կատարել անհրաժեշտ սրբազրուութիւնները եւ յաւելումները սահմանադրութեան 14րդ յօդուածին վրայ:

Նախագահ Սովետ. Գեր. Խորհուրդի՝ Խ. Վ.Լ.Ա.Ս.Ս.Ս.Ս. Գեր. Խորհուրդի ֆարտուղարութիւն՝ Բ. ՊԱՄՄԱՐՈՎ,

Մոսկուա, Բրեժնեւ, Յունիս 26, 1946

• • •

Սթալինի եւ Բերիայի մահերէն ետք, Բրեժնեւի վարիչները ներքին ղեկընտնէր ստորագրելուն եւ որոշ թիւով աքաղաղականներ վերադարձան:

Ահա այս քաղաքականութեան հետեւանքով, 1957 Յունուար 12ին Մոսկուայէն հեռագիր մը կը յայտնէր հետեւեալը.

ՄՈՍԿՈՒԱ, 12 (ԱՅՓ).— Յունուար 9 թուակիր եւ ցարդ չեքատարակուած ու երկուշաբթի Գերագոյն Սովետի կողմէն վաւերացուած հրամանագիր մը կը վերահաստատէ «ՔԱՊԱՐԴԻՆՊ-ՊԱԼՔԱՐ» եւ «ՉԵՉԵՆՆՈ-ԻՆԳՈՒՆ» նախկին ինքնավար հանրապետութիւններն ու «ՉԵՆՔԵՉՈ-ՔԱՐԱՉԱՍ» ինքնավար շրջանը կովկասի մէջ, ինչպէս նաեւ ԿԱԼՄՈՒՔՆԵՐՈՒ ինքնավար շրջանը վարի Վոլգայի վրայ:

Այդ հանրապետութիւններն ու շրջանները 1943-44ին ջնջուած էին եւ իրենց արողջ բնակչութիւնը Գագակիստան աֆտարուած էր, գերմանացիներու հետ գործակցելու յանցանքով:

Տեղահանման այդ որոշումը այժմ Գերագոյն Սովետի Նախագահութեան ֆարտուղար Պ. Գորկիւնի կողմէ «ազգութեանց լեհիմեան ֆազակականութեան թիրտ բռնաբարում» որակուեցաւ:

Նախապատերազմեան սովետ համայնագիտարանի համաձայն, տեղահանուած ժողովրդի թիւը 600.000ի կը հասնէր:

Մասնաւոր մարմիններ պիտի գրազուին հայրենադարձի գործով, որ պիտի երկարաձգուի մինչեւ 1960, որպէսզի բնակարանի ու գործի հարցերը կարգադրուին եւ հայրենիք վերադարձողներու այժմեայ բնակավայրերու տնտեսութիւնը չվնասուի:

Այդ հանրապետութիւնները պիտի հաստատուին իրենց նախկին սահմաններուն մէջ եւ պիտի կցուին ռուսական դաշնակցութեան: ՊԱՏԵՐԱՉՄԻ ԸՆԹԱՑՔԻՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԱԾ ՎՈՂԳԱՏԻ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԻՆ ՈՒ ԽՐԻՄԻ ԹԱԹԱՐՆԵՐԸ ՆՈՐ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՆ ՊԻՏԻ ՉՕԳՏՈՒՆ:

ԱՆԳԼԻՈՑ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԸ

Ս. Միութեան կողմէ երբ յուշագիրներով արժարձուեցաւ Նեղուցներու խնդիրը եւ միւս կողմէ Հայաստանի, Վրաստանի անոճնով հողային պահանջներ արժարձուեցան, այս անգամ անզլիական մամուլը եւ պետութիւնը սկսան մտահոգութիւններ յայտնել ու բացասական դիրք բռնել:

Մեծն Բրիտանիոյ արտաքին նախարար պ. Է. Պեւի, 1946 Փետր.ին, Համայնքներու Տան մէջ ակնարկելով Հայաստանի հողային պահանջներուն՝ ըսաւ.

«Երկու նահանգներու պարագային, ինչպէս եւ կ'ըմբռնեմ իմ

կարգացածը, Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջեւ սահմանագլուխը հաստատուած էր ոչ թէ յազարկանի: Կառ յազարուածի կողմէ, այլ պարտուած Թուրքիոյ եւ տարաբախտ Ռուսիոյ կողմէ, որ անցեալին պատերազմէն ելած էր ոչ շատ լաւ, առանց որ ինքը այդ բանի մէջ յանցանք մը ունենար: Հետեւաբար, կարիւրի չէ բսել, թէ պարտադրուած սահմանագլուխ մըն է այս: Կայ այդ նահանգներու մէջ տարոյ ժողովուրդի տեսակէտը եւս, սակայն որքան ես կրցած եմ ուսումնասիրել՝ քննչույի տան այնպիսի տեղափոխութիւն եղած է, որ ազգութեան խնդիր այլեւս մնացած չէ: Հետեւաբար, բանի որ սահմանագլուխը գծուած էր կարծեմ նոյնիմէն Սպարապետին կողմէ, ցաւալի է, որ ան այժմ նիւթ կը դառնայ հակամարտութեան եւ ջիզերու պատերազմի»:

Իսկ ծանօթ «The Economist» շաբաթաթերթը, իր 1945 Յունուարի Թիւին մէջ, «Ռուսիա եւ Միջին Արեւելք» խորագրին տակ, նոյնպէս կը յայտնէ Անգլիոյ մտահոգութիւնները: Իրանի մէջ ուստերու ձեռք ձգած ազդեցութեան անդրադառնալէ ետք, կ'ըսէր.

«Օրթոտոքս եկեղեցւոյ վերագարքնուիւր անիթ քննադատ է Ռուսիոյ արեւելիքի ներկայացուցիչներուն որ անգամ մը եւս զանազան օրթոտոքս վանկերու պաշտպան կանգնին: Նոյնպէս ալ Պարսկաստանի մէջ, Սովետ բանակներ հիւսիսային շրջաններ մտնելով վերստատատեցին հայ փոքրամասնութեանց կրօնական եւ մշակութային անկախութիւնը: Ռուսիոյ Մահմետական կրօնական համայնքին մէջ եւս վերագարքնուի մը առաջ եկած է: Մահմետական Սովետ հանրապետութիւններ կրնան հասարակաց լեզուով մը խօսիլ իրենց մահմետական եղբայրներուն հետ:

Նոյն ատեն, քաղաքական գետնի վրայ Ռուսիա տակաւին կ'օգտուի իր յեղափոխական արանգութեանէն: Սովետ, կառավարութիւնը Անգլիոյ եւ Ֆրանսայի պէս չէ որ Միջին - Արեւելքի մէջ ունենայ քաղաքական պարտքեր: Ո՛չ ալ աներիկացիներուն նման որ անցեալին հետապնդած ըլլայ քարիւղի կայսերապաշտութիւն: Մէկ խօսքով Ռուսիոյ քաղաքական արձանագրութիւնը «մաքուր» է: Թէեւ վերջին տարիներու ռուսական բրոքականտը քաղաքացիական պատերազմէն ետք յիշեն այն սպաիցուութիւնը գոր քանական եւ երեսունական քուականներուն ստացան տեղական համայնքավար խմբակներէն: Յատկանշական է որ իրենց անկախութեան նոր տիրացող Սուրիան եւ Լիբանան ինքզինքին Ռուսիայէն որ դիւանագիտական յարաբերութիւն հաստատէ իրենց հետ, ինքզինք մը որուն անմիջական գոհացում տուաւ սովետ կառավարութիւնը: Լիբանանեան ինքզինքը յատկապէս ակնարկեց Ռուսիոյ բոլոր ազգութեանց հանդէպ ցոյց տուած վեհանձն վերաբերումին եւ այն դերին գոր սովետ:

տական ռէժիմը խաղացած է որպէս յեղափոխական ախոյեանը ճնշուած ազգութեանց:

«... Այսպիսի միջամտութեան մը սահմանային սովետ սահման հանրապետութիւններն են ամենայնպէս գործիքներ — Հայաստան, Ազրպէյճան, Տանիկիստան, Քրկաստան եւ հազարատան:

«... Վերջապէս, Սովետական Հայաստան կրնայ 1921ին Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջեւ կնքուած կարսի դաշնագրին վերաբնութիւնը պահանջել, համաձայն որոս հայկական քաղաքներ եղող էրզրում եւ Տրապիզոն մնացին Թուրքիոյ: Ներկայիս շատ քիչ քիւով հայեր կան Թուրքիոյ արեւելեան նահանգներուն մէջ, քայց այս շրջանին մէջ առնուելիք սովետական քայլ մը կրնայ Համաքուրանականութեան դէմ պաշտպանութեան մը ձեւը առնել:

«... Պատերազմէն յետոյ ապահովաբար ուստեր կը ծրագրեն Միջին Արեւելքի մէջ կիրարկել միայն խաղաղ ազդեցութիւն, ինչ որ իրենց ուժն ու մերձադուրութիւնը անխուսափելի կը դարձնեն»:

Նոյն ձեւի մտեցում ունեցաւ անգլիական մամուլը առհասարակ: Ահա նաեւ Ռանտոլֆ Չըրչիլի մէկ արտայայտութիւնը: Պէրուրի «ՇՐԻԱՆ» Թերթի 1946 Յունուար 16ի Թիւին մէջ լոյս տեսաւ անոր մէկ յօդուածը «Իրանի Իրլանտան» խորագրին տակ, ուր, անդրադառնալով իրանեան Ատրպատականի հայերուն, կը գրէ.

«... Ատրպէյճանի հարցը կանգ չառնել ստուարաբախտ գաղութները կը բնակին հիւսիսային Ատրպէյճանի մէջ, Ճուլփա, Արտապիլ եւ Երեւան: Այս քրիստոնեայ համայնքը, որ ցեղայնօրէն կը տարբերի Թուրքերէն, իրանցիներէն եւ Քիւրտերէն, ունի անցեալ մը լեցուն կեդրեանի դարերով, որոնք գայն կը վերածեն նոյնպէս իրանի համայնքի մը»:

ՀԱՅՏԵՐՈՒ «ՄԵՄ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ»

Ձի բուեր որ Խորհրդային Հայաստանի մէջ, բունութեան ու սարսափի տակ, մարդիկ ստիպուած են վատարանել Սթալինը եւ իր շքախումբը, ասոնք քրտոսահմանի մէջ եւս կը գտնեն ինկարկուներ, իրրեւ նմայէ ներկայացնէր Նիւ Եորքի «Լըաբոր» Թերթի (1946 Նոյեմբեր 9) մէկ գրութիւնը:

«Հոկտեմբերեան մեծ յեղափոխութեան 29րդ տարեդարձին առ-

թիւ՝ պատմական ընդունելութիւն մը կատարուեցաւ Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութեան նիւ Ետրֆի հիւպատոսարանին մէջ :

«Ընդունելութիւնը իրօք պատմական էր: Պատմական էր յատկապէս անով, որ արտաքին գործոց մինիստր Վիաչեսլաւ Մոլոթովն անձամբ ընդունեց հրաւիրեալները, անակնկալ մը, որ յանկարծակիի բերաւ բոլորը եւ համակեց գանձի անօրինակ յազումով մը:

«Մոլոթովին ձեռքը սեղմելու ի վեր կը կարծեմ թէ ոտքերս գետին չեն կոխեր», կ'ըսէր գեղանի օրիորդ մը, արտայայտելով բոլոր հրաւիրեալներու հոգեկան ապրումները:

«...Նոյեմբեր 6ի երեկոյեան մեր ապրումներու գերագոյն պահն հանդիսացաւ մեր տեսակցութիւնը Վիաչեսլաւ Մոլոթովի հետ:

«Տեսնելով այնքան մեծ «պատգամաւորութիւն» մը իր առջեւ, Մոլոթով անմիջապէս նկատեց.

«Դուք մեծ կազմակերպութիւն մը ունիք»:

«Մեծ կազմակերպութիւն ունինք, պատասխանեց Քեփթըն Զանգալեանը, որովհետեւ մեծ գործ մը ունինք կատարելիք»:

«Մեր դիմագրաւած գործը մեծ է, յարեց բժիշկ Բնակունին, բայց մեծ ունինք նաեւ մեծ բարեկամ մը յանձին Սովետական Միութեան»:

«... Սովետական մեծ ներկայացուցիչը շատ յուզուեցաւ երբ ընկեր Սեյեանը յայտնեց հետեւեալը ներգաղթի կապակցութեամբ.

«Ամերիկահայերը կ'օգնեն Սովետական Հայաստանին: Այժմ արդէն մեծ գրազած ենք ներգաղթի համար մէկ միլիոն տուրք հանգանակելով, եւ սկսած ենք կազմակերպել արդիւնաբերական արտելներ, որոնց դրամագլուխը մինչեւ հիմա կը հասնի մէկ երկու հարիւր հազար տուարի»:

«... Մեր խօսակցութիւնը իր գեներիթիմ հասաւ, երբ պ. Մոլոթովը ըսաւ.

«Դուք Մոսկուայի մէջ ունիք մեծ բարեկամ մը, յանձին Անաստաս Միկոյեանի, որ իմ լաւ ընկերս եւ բարեկամս է»:

«Մեր մեծ բարեկամներն են նաեւ, աւելցուցինք մեծ, ժողով Սթալինը եւ Վիաչեսլաւ Մոլոթովը»:

«Այս երեք անուններու յիշատակութեան կապակցութեամբ, Մոլոթով յարեց, որ Միկոյեան եւ Մոլոթով բլուրներ են, իսկ Սթալինը՝ Արարատ մը»:

Արարատ որակուած Սթալինը երբ խորհրդաւոր պայմաններու տակ 1953 Մարտ 5ին մեռաւ, սարսափի երկրին մէջ լեզուները բացուե-

ցան եւ առաջին ելոյթը, խորհրդեւէն ետք, ունեցաւ Միկոյեան, դառնալով կատարեալ Փրուտոս մը:

Հայերու երրորդ «Մեծ բարեկամ»ը Վիաչեսլաւ Մոլոթով, Թուրքիոյ ուղղուած անպատիւ յուշագրով մը պիտի ուրանար Հայաստանի հողային իրաւունքները:

Այս ուրացումներուն նկատմամբ, աղատ երկիրներու մէջ դըտըրած մեր ստրուկները՝ նախընտրեցին պահել պապանձուած Զարբիայի...:

ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Սովետները ինչպէս հայերուն, նաեւ Վրացիներուն թելադրեցին հողային պահանջներ ներկայացնել Թուրքիային:

Վրացի երկու ակադեմիկաններ՝ Ս. Ճանաչիա եւ Ն. Պերենիշ՝ վիլի նամակ մը հրատարակեցին Թիֆլիսի Համայնավար պաշտօնաթերթ «Կոմունիստ»ի մէջ (1945 Դեկտ. 14) հետեւեալ խորագրին տակ. «Թուրքիոյ նկատմամբ ունեցած մեր օրինական պահանջներու մասին»:

Այս նոյն նամակը «Կոմունիստ»էն առնելով՝ Համաժողովեան կան կոմկուսի պաշտօնաթերթը՝ «Պրաւդա»՝ ամբողջական թարգմանութեամբ հրատարակած է իր 1945 Դեկտ. 20 թիւով, դրակելով թերթի երկրորդ էջի առաջին հինգ սիւնակները:

Վրացի գիտունները իրենց հողային պահանջները Թուրքիային հիմնաւորելու համար՝ չուրջ չորս հազարամեակ դէպի ետ կ'երթան, մինչեւ Հիթլերներու եւ Սուպարիներու շրջանը — երկրորդ հազարամեակի մէջ նախաքրիստոնէական շրջանի — եւ մեծ հանգրուաններով իրենց պատմութեան դարաշրջանները քննութեան առնելով՝ կը հասնին մինչեւ մեր օրերը:

Արդարութեան տուրք տալով՝ պիտի ըսենք, որ վրացի գիտունները կարսր վրացական հող այդ նամակին մէջ երբեք չեն հուշակեր եւ անոր միակցումը Վրաստանի այդ նամակով երբեք չեն պահանջել:

Ո՛չ թէ կարսր վրացական հողակելով՝ անկէ մեծահոգօրէն կը հրատարին, այլ գոյն իսպառ, երբեք եւ բնաւ վրացական չեն նկատեր: Հողային իրենց օրինական պահանջները հիմնաւորելով Թուր-

քիսյան — պատմական, ազգագրական, քաղաքական եւ բոլոր այլ տրւեալներով — վրացի գիտունները կ'եղբարակեն.

— «ՎՐԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՏ ՊԷՏՔ Է ՍՏԱՆԱՅ ԻՐ ՀՈՂԵՐԸ, ՈՐՈՆՑՄԷ ԱՆ ԵՐԲԵՔ ՀՐԱԺԱՐԱՄ ՉԷ ԵՒ ՉԻ ԱԼ ԿՐԵԱՐ ՀՐԱԺԱՐԻԼ: ՄԵՆՔ ՆԿԱՍԻ ՌԵՆԻՆՔ ԱՐՏԱՀԱՆԻ, ԱՐՏՈՒՆԻ, ՕԼԹԻԻ, ԹՈՐԹՈՒՄԻ, ՍՊԵՐԻ, ԲԱԲԵՐԴԻ, ԿԻՒՄԻՒՇՈՒՆԷՒ ԵՒ ԱՐԵՒԷԼԵԱՆ ԼԱԶԻՍՏԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐԸ, ԱՅՍԻՆՔՆ ՄԻԱՅՆ ՄԷՎ ՄԱՍԸ ՎՐԱՍՏԱՆԷՆ ԽՐԼՈՒՄ ՀՈՂԵՐՈՒ»:

ԿԱՐՍԸ ՎՐԱՑԱԿԱՆ ՀՈՂ Է, ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ Ա. ՎԸԻՇԻՆՍԿԻՑ

Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Քաղաքական Կոմիտէի նիստին մէջ, Խ. Միւսթեան պատուիրակ Ա. Վըիշինսկիյ, պատասխանելով թուրք պատուիրակ Սելիմ Սարպերի, յայտարարեց թէ Կարս վրացական հող է եւ արդար է, որ վերադարձուի Վրաստանի: 1947 Հոկտ. 24-ի նիստին մէջ կատարուած այս յայտարարութիւնը լոյս տեսած է Մոսկուայի «Իզվեստիա» եւ «Պրաւդա» թերթերուն Հոկտ. 28-ի թիւին մէջ: «Յոսուարեր»-ի Դեկտ. 9-ի թիւէն առնելով կու տանք այդ յայտարարութիւնը.

«Պ. Սարպեր, ի միջի այլոց, կը յայտարարէ, որ Խ. Միւսթեան մղած հակաթուրք ֆարոզութեան մէջ որոշ տեղ կը գրաւէ Թուրքիայէն աճող հողերու մէկ մասին անջատման ֆարոզութիւնը եւս. պ. Սարպեր նկատի ունի Կարսը եւ Արտահանը, եւ առ այդ կը յիշատակէ Մոսկուայի մամուլին մէջ հրապարակուած նամակը վրացի երկու ակադեմականներու, որոնք կ'ապացուցանեն, թէ սիշդ այդ հողերը, որոնց յիշատակութիւնն ըրաւ հոս թուրք պատուիրակը, վազուց անտի վրացական հողեր էին:

«Այս ամէնը ապացուցուած է այնքան համոզիչ կերպով, որ ես կրկին անգամ խորհուրդ պիտի տայի պ. Սարպերի կարգալ այդ նամակը վրացի ակադեմականներու — երկուքն ալ. թէ՛ ձանաշիա եւ թէ Պերժենիշվիլի. իսկական անդամներ վրացական Գիտութեանց Կահառի — որոնք կ'ապացուցանեն, թէ անգամ այն շրջանին, երբ Թուրքիա գրաւած էր այդ հողերը, այդ շրջանին իսկ ան պահած էր անոնց հին վրացական անուանումները: 1595-ին փաստաթուղթ մը հրատարակուեցաւ որ կը պահուի այսօր վրացական Գիտութեանց Կահառին մէջ՝ «Ընդարձակ

Մատեանը վրացական Վիլայէթի» ուր, ի թիւս այլ շրջաններու, կը յիշատակուին եւ այնպիսիք, ինչպիսիք են, օրինակ, Փանեափ (Պանա), Չըլտըրի, Փոցխովի, Արտահան այս շրջաններուն մէջ միայն վրացիներ կ'ապրին եւ հոս թուրքերու քանակը կ'ա՛մ շատ չնչին է եւ կամ թուրքեր բնաւ չկան»:

Եզրափակելով իր խօսքը՝ Ա. Վըիշինսկիյ հեղինակաւորապէս

— այս անգամ արդէն իր իսկ անունէն — կը վկայէ.

«Այսպէս, այդ նամակին հեղինակները, խաղաղօրէն, ինչպէս եւ վայել է ակադեմականներուն, որոնք իրենց գրադուսով իսկ չափազանց խաղաղ մարդիկ են արդէն, կ'արտայայտուին, ինչպէս յայտնի է ձեզի, այն իմաստով, որ ԱՅԴ ՀՈՂԵՐԸ ՊԷՏՔ Է ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՆ ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ, ՎՐԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ, ԹԷ՛ ՊԱՏՄԱԿԱՆ. ԹԷ՛ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԹԷ՛ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ԲՈՒՈՐ ԱՅԼ ՀԻՄՆԵՐՈՎ: ԱՍԻԿԱ ԱՐԴԱՐ Է ԱՅՆ ՊԱՏՃԱՌՈՎ. ՈՐՈՎՀԵՏԵՒ ՎՐԱՑԱԿԱՆ ԵՆ ԱՅԴ ՀՈՂԵՐԸ»:

Ա. Վըիշինսկիի այս յայտարարութիւնը իր ատենին մեծ վրդովում յառաջ բերաւ հայկական շրջանակներու մէջ: Եւ Ա. Վըիշինսկի ստիպուեցաւ, Նոյեմբեր 25-ին, Նիւ Եորքի սովետ. հիւպատոսարանին մէջ կազմակերպուած բացառիկ ընդունելութեան մը ընթացքին հետեւեալ երկդիմի յայտարարութիւնը ընել... ի բուժումն գայթակղեալ մտքերու:

«Դաշնակ «Հայրենիք» թերթը խեղաթիւրած է Միացեալ Ազգերու Ժողովին մէջ արտասանած իմ նաղը: Ես ըսած էի թէ վրացի գիտնականներ յայտնած են որ Կարսն ու Արտահանը 1500 թուականներէն ի վեր կը պատկանին Վրաստանին:

«ԵՍ ՉԸՍԻ ԹԷ՛ ԿԱՐՍՆ ՈՒ ԱՐՏԱՀԱՆԸ ԿԸ ՊԱՏԿԱՆԻՆ ՎՐԱՑԱՆԻ. ՉԸՍԻ ՆԱԵՒ ԹԷ՛ ԿԸ ՊԱՏԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»:

«ԵՍ ԸՍԻ ՈՐ ԽՈՐՀՐԴ. ՄԻՈՒԹԻՒՆԸ պիտի առնէ ԿԱՐՍՆ ու ԱՐՏԱՀԱՆԸ եւ ՊԻՏԻ ՏԱՅ ԱՆՈՐ ՈՐՈՒՆ ԿԸ ՊԱՏԿԱՆԻ: Պետք է ի մտի ունենալ նաեւ որ Խորհրդ. Միութիւնը իրեն մաս կազմող Միւսթեանը եւ ոչ մէկը ՏԻՉԸ կը ձգէ. (ՏԻՉ՝ փոս բառը արտայայտելով շատկապէս անպիւրէն):

«Հայրենիք» օրաթերթը իր 1947 Դեկտ. 13-ի թիւին մէջ վերի յայտարարութեան հետ միասին հրատարակեց ՄԱԿի պաշտօնական լրատուին մէջ սպուած Վըիշինսկիի ճառին Կարսի վերաբերեալ հատուածը, որ հետեւեալն է.

«Պատասխանելով Թուրքիոյ ներկայացուցիչ պր. Սարփերին. պր. Վըիշինսկի ըսաւ որ՝ սովետ մամուլէն եւ ըլտիոյէն պր. Սարփերի նաղին մէջ յիշատակուած մէջբերումներէն ո՛չ մէկին մէջ կայ պատե-

բազմ բանը: ինչ կը վերաբերի հորհրդային վրաստանի գիտնականներու յիշատակագրին՝ խորհրդային երկիրներու սահմանակից Թուրքիոյ մէջ գտնուող կարսի եւ Արտահանի շրջաններու վՐԱՑԱԿԱՆ նկարագրի մասին, յիշատակուած պր. Սարփեբի կողմէ, պր. Վըրջինսկի յայտնելէ յետոյ թէ սովետ գիտնականներու հիմնադրումները անվիճելի են, յայտարարեց. - Թերեւս լաւ պիտի ըլլար սկսիլ վիճարանութիւններ ԱՆԿԱՍԿԱՍԵՆԼԻՕՐԷՆ ՎՐԱՑԱԿԱՆ ԱՅՍ ՇՐՋԱՆՆԵՐԸ ԵՈՐՀՐԳԱՅԻՆ ՎՐԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱԳԱՐՁՆԵԼՈՒ մասին»:

ԳԱՀԻՐԷԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆԸ

1947 Յունուարին, Նիւ Եորք հաւաքոյթի մը մէջ խօսած է Գաբրէի ամերիկեան համալսարանին նախկին նախագահ Ճան Ս. Պատո եւ ի միջի այլոց բաժն է:

«Տասը տարուան մէջ Միջին Արեւելքը ուսակամ ազդեցութեան տակ պիտի իյնայ, եթէ ներկայ ճգնաժամները չարգիլուին» ու կ'եզրակացնէ «Ռուսական գործունէութիւնը Միջին Արեւելքի մէջ երեք ձեւեր կ'առնէ: Ատիկա կը մշակէ փոքրամասնական խումբեր, որոնք կ'ստանան են Ռուսաստանի, ինչպէս ՀԱՅԿԱԿԱՆ եւ Յունական Օրթոտոքս եկեղեցիները: Զգուշանք բարեացակամութիւն մը կ'արտայայտէ Միջին Արեւելեան ժողովուրդներու համար, անոնց Արեւմուտքի հետ ունեցած պայքարին մէջ, ինչպէս այժմու անկլո-եգիպտական բանակցութեանց ընթացքին: Ատիկա բրտականտայի աշխատանք կը կատարէ Ռուսաստանը «ծախելու» համար Միջին Արեւելքի մտաւորականութեան»:

Այս պր. Պատո կ'ըսէ թէ Միջին Արեւելքը իր հաւատքը կորսնցնուած է Մեծն Բրիտանիոյ եւ Ամերիկայի հանդէպ:

Տասը տարի առաջ «Պայքար» օրաթերթը (1947 Յունուար 23) այս բարոյաժողով տալու ատեն, իր կողմէ կ'ըսէ որ Պատո «փարսախներով հեռացած է ճշմարտութիւններէն եւ իրրեւ իրողութիւն ունկնդիրներուն բաժն է խօսքեր, որոնք շատ հեռու են իրականութիւնները ներկայացրնելէ»...:

ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ «ՕՐԻԱՆԹԱՑԻԱՆ»

«Հայ Սահմանադրական - Ռամկավար կուսակցութիւն»ը կազմը մընցաւ 18/31 Հոկտ. 1908ին, օսմանեան սահմանադրութեան հոչակումէն անմիջապէս ետք: Ան իր առաջին ծրագրին մէջ կ'ըսէր.

«Հայ Սահմանադրական - Ռամկավար կուսակցութեան կազմին մէջ վերջնականապէս ձուլուած միախառնուած են՝ արդէն մախապէս իրարու մէջ միութիւն կնքած հետեւեալ մարմինները - ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ (իր Ազգ թերթով) եւ Գաղափարակցական Միութիւն (նախկին ԱՐՄԵՆԱԿԱՆ եւ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ կազմակերպութիւններ)»:

Մրագիրը կը շեշտէ «Ժողովուրդի գերիշխանութիւնը», կը մերժէ «օսմանեան ազգութիւններուն թէ միաձուլումի եւ թէ՛ ԱՆՋԱՏՈՂՈՒԹԵԱՆ ոգին, ինչպէս նաեւ ազգայնամոլ եւ այլամերժ ո՛րեւէ ճգնաժամ: Իր ազգային բնաբանն է — Հայութիւնը Օսմանցիութեան հետ»:

«... Մնալով հեռու եւ անկախ՝ ընկերային վիճելի վարդապետութիւններէ, կ'որդեգրէ, գործնականի մէջ, Գրամագլուխի, Աշխատութեան եւ Տաղանդի կամաւոր ընկերակցութիւն»:

Այս սկզբունքներուն հետեւելով Ռամկավար կուսակցութիւնը բուն պայքար մղեց ընկերվար գաղափարներուն դէմ: Մինչեւ Հայաստանի խորհրդայնացումը, ան դէմ էր նաեւ «ռուսահայ» մտաւորականութեան որ կը զբաղի «Թրքահայերու գործերով»:

Այդ թուականէն ետք աստիճանաբար փոխուեցաւ Ռամկավարներու ծրագիրը եւ թէ գործելակերպը, հետեւելու համար ամբողջովին «ռուսական օրինակացի»-ի, որուն անցեալին հիմնովին դէմ եղած էր:

Այդ փոփոխութիւնը որոշապէս կը նկատուի 1922ին, 1926ին, 1932ին, 1948ին հրատարակուած ծրագիրներու մէջ կատարուած յապաւումներուն եւ յաւելումներուն մէջ:

1922ի ծրագրին մէջ այլեւ չկան 1908ի ծրագրին միտքերը, բայց եւ այնպէս դեռ կը պահուի կուսակցութեան հիմնական դաւանանքը որ պարզուած էր Հայաստանի անկախութեան առթիւ:

1922ի ծրագրին մէջ, «նպատակ» գլուխին տակ, կ'ըսուի. «Ռամկավար կուսակցութեան նպատակն է՝ ապահովել եւ պահպանել ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ, պաշտպանել Հայ Ազգին քաղաքական, տնտեսական եւ քաղաքական - մշակութային շահերը, ու աշխատիլ անոնց բարգաւաճման»:

Յաջորդ գլուխներուն մէջ ծրագիրը կը յիշատակէ որ «բանակը

տառապանութիւնով չի գրադիր, որով կ'արգիւտին այդ նպատակով բրորակամանան»։ «Ազատութիւն խօսքի, մամուլի, խնդրանքի (pétition), հանրագրութեան, հաւաքումներու, ընկերակցութեան եւ նամբորդութեան»։ «Ազատութիւն խղճի, կրօնի եւ պաշտամունքի»։ «Կուսակցութիւնը կը նանչնայ հողային սեփականութեան իրաւունք» և.և. և.և.:

Վերելի յօդուածներէն «Հայաստանի անկախութիւնը», «բարեկարգ քաղաքականութեամբ չի գրադիր» եւ «հողային սեփականութեան իրաւունքը» բոլորովին հանուած են 1926ի ծրագրէն:

1932ի ծրագրի նպատակին մէջ աւելցած է «Հայաստանի պետութեան զարգացումը եւ բարգաւաճումը», առանց յիշատակելու անկախութեան գաղափարը կամ պահանջը:

Իսկ 1948ի ծրագրէն (տպագրուած Պէյրութ) բոլորովին հանուած են նախկիններու մէջ գոյութիւն ունեցող հետեւեալ յօդուածները.

«Ազատութիւն խօսքի, մամուլի, խնդրանքի, հանրագրութեան, հաւաքումներու, ընկերակցութեան եւ նամբորդութեան»։ «Ազատութիւն խղճի, կրօնի եւ պաշտամունքի»:

Միւս կողմէ աւելցած է նպատակին մէջ. «Հետապնդել Թուրքիոյ բռնագրաւման տակ գտնուող հայոց պատմական հողերուն ազատագրումը եւ կցումը մայր հայրենիք՝ ՍՈՎԵՏ (ընդգծուած մեր կողմէ Գ. Լ.) Հայաստանին»:

Արդարեւ 1945էն սկսած ասորեան մը աւելի կերպարանափոխուեցաւ Ռամկավար կուսակցութիւնը եւ փաստօրէն լծուեցաւ Սովետներու քաղաքականութեան, անոր յաջողութեան մէջ յտնելով Հայ Դատի լուծումը:

. . .

Հետեւիք նաեւ Ռամկավար կուսակցութեան մամուլի արտայայտութիւններուն, տեսնելու համար քաղաքական ուղղութեան մէջ կատարուած հիմնական փոփոխութիւնը:

1920 Մայիս 28ին, Ատանայի մէջ, Հայաստանի անկախութեան երկրորդ տարեդարձին, Ռամկավար իտորը Միհրան Տամատեան իր խօսած ճառին մէջ կ'ըսէր.

«... Երկրորդ տարեդարձը պատմական մեծ դէպքի մը — ՀՐԱՇՔՆԵՐՈՒ ՀՐԱՇՔԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ: Յարութիւն այն Հայաստանին, որ աշխարհ մեռած կը կարծէր. բոլորովին մեռած և ընդմիջտ անյայտացած եւ որ ընդոստ վերածնած՝ բեմին վրայ կը վերերելի, աւելի քան երբեք երիտասարդ եւ աւելի քան գեղեցիկ»։ («Պայքար», 1950 Յունիս 9):

Իսկ Վահան Թէքէեան խորհրդային իշխանութեան մասին նրպաստաւոր արտայայտութիւն ունենալը «լրճնաչուրթն փոտարանու

թիւն» անուանելէ ետք, 1922ին «Արեւ»ի մէջ եռագոյնի վէճի անձնակազմով կը գրէր.

«... Որքան ռամկավարը, նոյնքան դաշնակցականը, որքան պահպանողականը, նոյնքան ազատականը, որքան հայաստանահայը, նոյնքան զաղթահայը, Մէկ ԽՕՍԳՈՎ ԱՄԲՈՂԶ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՌԱԿ Ե ԱՅԴ ՌԷՃԻՄԻՆ»:

Հայաստանի անկախութեան շրջանին, 1920 Մայիսի բռնկելու ներս ապստամբութիւնը ճղմելու ատեն կողմնակից գտնուած է գաղափարական կառավարութեան առած քայլերուն (տես «Ժողովուրդ» թերթ, Երևան, 1920 Մայիս 16, հայ ժողովրդական կուսակցութեան պաշտօնաթերթ):

Դեռ աւելին: Պոսթընի «Պահակ» թերթը, 1920 Նոյեմբեր 2ի թիւով, «Ատինքնող խայծը» խորագրին տակ կը պահանջէ մերժել բոլոր շեղիկներու առաջարկութիւնը եւ կը գրէ.

«... Թուրք ռնրագործութեան հետ դաշնակցած Սովետ Ռուսիան Հայաստանը պիտի չազատէ բնաջնջումէ եւ քրքակամ յարձակումներէ, եթէ մինչեւ անգամ հայ կառավարութիւնը, հայրենիքը պաշտպանելու հոգեկան կամ ֆիզիկական սկզբունքները մէջ ընթացիկ Վարպազն ու Զանգեզուրը փոխանակել էրգրոււմի, վաճի եւ Պիշիսի հետ:

«... Բոլշեիկներու ներկայ փորձող առաջարկը չի տարբերք Յագկերտի առաջարկէն, որ, ի փոխարէն կրօնափոխութեան, Հայոց կը խոստանար մարմնական ամէն համգիստ եւ կեանքի ապահովութիւն»:

Ռամկավար կուսակցութիւնը տարիներու ընթացքին մեղադրած է Դաշնակցութիւնը որ իր ծրագրով ընկերավարական է, ապա ուրեմն չի կրնար վայելի վստահութիւնը արեւմտեան պետութիւններուն որոնք դրամատիրական կարգերուն պաշտպաններ են:

Ռամկավարները այս մեղադրանքը յաճախ ծայրայեղութեան հասցուցին Հայաստանի Հանրապետութեան շրջանին, երբ կառավարութիւնը կազմուած էր դաշնակցականներէ:

1919ին Փարիզի մէջ տեղի ունենալիք Ազգային Համագումարի ընտրական պայքարի ընթացքին Ռամկավար պաշտօնաթերթ «Աղղ», իր քանի մը յաջորդական թիւերու մէջ, տառաջին էջին վրայ, խոշոր գիրքով հրատարակեց հետեւեալը.

«Զգուշացէ՛ք, հայր՛ք. Հայկական Դատը վտանգի մէջ է, եթէ չընտրէք Յովհ. Խան Մասեհեանը, Երուանդ Պէյ Ազաթօնը, Միհրան Տամատեանը, փրօք. Կ. Թումայեանը:

«Գիտէ՛ք ինչու համար — որովհետեւ Ամերիկայի կառավարութիւնը այս պահուս սաստիկ կը յսրուչի ընկերավարական ծայրայեղու-

Թիւններէ եւ մեր վրայ աննպաստ աչոյժ պիտի մայի, եթէ ընտրեմք այնպիսի մարդիկ, որ սոսկ «բանուարական» շահերու անուամբ մերկայացնելու են Ամերիկայի ամբողջ հայութիւնը: Ատիկա ենթադրել կուտայ դասակարգային խտրութիւն, գոր ամերիկացիները կը մկատեն իրեն որոշ ԶԳՏՈՒՄ ԴԵՊԻ ՊՈԼՇԵՒԻԿՈՒԹԻՒՆ: ԵՒ ԶՄՈՌՆԱՆՔ, ՈՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼԱՅՆԵՐԻ ԹԵՐԹԵՐԸ ԼԻՄԱ ԱՄԷՆ ՕՐ ԿԸ ԹԱՐԳՄԱՆՈՒՆ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՄԵՋ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԱՅԱՅՈՒՅԻՑ ԿԱՄԱՐ: («Ազգ», Ուրբաթ, Յունուար 31, 1919, թիւ 15 — 1170):

Որպէս զի Ուաշինկթընի մէջ Հայերէն թերթերը թարգմանողներուն համար որոշ ըլլայ, թէ որոնք են «դէպի պոլշեիկութիւն ձգտում ունեցող» Հայերը, «Ազգ» 1919 Փետրուարի խմբագրականով կը լուսարանէ:

«ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՊՈԼՇԵՒԻԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԶՈՒՋԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ, ՀԵՏԵՒԱՐԱՐ ԿԸ ՄԵՐԺԷ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԼԱՏՏՈՐՄԸ»:

Կար ժամանակ, երբ ռամկավարները կը բողոքէին, որ Համայնավար տարրը կը միջամտէ մեր ազգային գործերուն:

«Նկատի առնելով որ համայնավար հայերը ազգային կուսակցութիւն մը չեն եւ պէտք չէ որ մասնակցին մեր ազգային ներքին հարցերուն, մկատի առնելով մասնաւանդ որ՝ անոնք իրենց սազութեան ու գործունէութեան հրահանգները կը ստանան Ամերիկեան Ուրբէքս Փարթիէն, որուն մէկ հատուածն են, եւ որ կամուկիտ կազմակերպութիւն մըն է, Ռամկ. Ազատ. կուսակցութեան Ամեր. Երջ. վարչութիւնը կը յայտարարէ թէ՛ համայնավար հայերու կազմակերպել փորձած Համագաղութային կեդր. Յանձնախումբի ձեռնարկը վնասակար կը գտնէ Դուրեան Սրբազանի դատին, որուն միակ տէրն է Ազգին ու Եկեղեցիին պաշտպան հայ ժողովուրդը» («Պայքար», 1934, Մարտ 11):

Խորհրդային ազդեցութիւնը տարածելու պաշտօն ունեցող տիրաւորչակ Հօկերը ի վերջոյ դժգոհութիւն ստեղծեցին նոյնիսկ ռամկավարներու մէջ:

«Անոնց (Հօկերու) առաջնորդները մեր ընկերներն էին, մինչեւ որ համազուեցան, թէ Հօկերը տարբեր չեն կամուկիտ բլիզներէն: Նոյնը պատահեցաւ Պետ. կարմիր խաչին. ատիկա ալ օգտակարապէս կը ծառայէր գրութեան գործին, մինչեւ որ դարձաւ համայնավարութեան պրապագանդիստը» («Պայքար», 1933, Ապրիլ 21):

Ռամկավարները նախ դադարեցուցին որեւէ քննադատութիւն դէպի խորհրդային իշխանութիւնը:

«Մեր ազգին խաղաղութիւնը խորագրին ներքեւ, «Արեւ» (Գա-

հրէ) 1936 Մարտ 6ի թիւով այսպէս բանաձեւեց իրենց քաղաքականութիւնը:

«Արդ, եթէ կարելի ըլլար հանրաժողով մը զազութահայութեան կարծիքն հասկնալ, ՎՍՏԱՀ ԵՆՔ թէ ամիկա անուագն 90% համամասութեամբ պիտի ըսէր, թէ ՊԱՅՔԱՐԸ Խ. Հայաստանի դէմ յիմարութիւն, Խ. Միութեան դէմ անտրամաբանութիւն, եւ ԹՈՒՐԿԻՈՅ ԴԵՄ ՏՂԱՅՈՒԹԻՒՆ Է»:

Խորհրդային իշխանութիւնը երբ յաջողեցաւ իր ազդեցութիւնը տարածել արտասահմանի մէջ, ռամկավար մամուլը աստիճանաբար փոխեց իր այս ուղղութիւնը, եւ ի վերջոյ մէկ բեւեռէն ցատկեց միւս բեւեռը:

Անս անոր բոլորովին ներհակ միտքերուն եւ հետեւած ուղղութեան մասին քանի մը նմոյշներ:

«Եթէ խորհրդային իշխանութիւնը խտրութեամբ կը վարուի քաղաքական խոռվարաններու եւ քշմամբներու հետ, ՄԵՂԱԴՐԵԼԻՆ ԻՆՔԸ ԶԷ, ԱՅԼ ԱՅՆ ՀԱԿԱՆՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԱԿԻՐՆԵՐՆԵՐ ԵՆ ՈՐՈՒՔ ԻՐ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ ԿԸ ԲԱՂՁԱՆ ԵՒ ԱՏՈՐ ՀԱՄԱՐ ԱԼ ՅԱՅՏՆԻ ՈՒ ԳԱՂՏՆԻ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԸ ԳՈՐԾԱԾԵՆ» («Պայքար» 1935, Մարտ 15):

«Պայքար» (Պոսթըն) 1936 Մարտ 19. «ՄԵՆՔ ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱԿԱՌԱԿ ԶԵՆՔ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՐԱԿԱՎԱՐԳԻՆ ԽՈՐԻՊԱՅԻՆ ՌԱՅԻՆ ԵՒ Հայաստանի մէջ, այլ կ'ընդունինք այդ դրութեան մեր հայրենիքին եւ անոր դրացի բոլոր ազգերուն բերած եղբայրական համագործակցութեան. խաղաղութեան, հաշտութեան եւ շինարարական ու մշակութային գարգացման փրկարար ու տեւաշէն բարիքները»:

«Եփրատ» (Հալեպ), 1946, Յուլիս 11. «Ներկայ արեւաշող Ասիական Հայաստանով արդէն իրագործուած է Ռամկավար Ազատական կուսակցութեան իտէպը»:

«Պայքար» (Պոսթըն) 1948, Փետր. 21. «...Հայ պատմութիւնը ուշադիր վերծանողներ կ'ընդունին, թէ Հայաստան, իրբու պետութիւն, դարբու ընթացքին այնքան ազատ եղած չէ, որքան Ի ներկայիս»:

«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՄԲՈՂՋ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՍԻՐԵԼԻ ԴԱՐՁՆՈՂԸ ՆԵՐԿԱՅ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆ Է» («Պայքար» 1934, Մարտ 17):

Թէն ռամկավարները այսքան բարեացակամ գտնուած են զէպի խորհրդային իշխանութիւնը եւ խորհրդային իրաւակարգը, բայց իրենց այն արեւելեան խորամանկութիւնը դրական արդիւնք մը տուած չէ: Հայ զաղութներու մէջ տեղաւորուած համայնավարները մէկն

Հանք թափած են տկարացնելու, քայքայելու իրենց զործակից Ռամկավար կուսակցութիւնը:

Այս խորթ խնամիրութեան հետեւանքով, ռամկավար մամուլը գոնէ Հիւս. Ամերիկայի մէջ դէմ արտայայտուած է «Յառաջդիմական»-ներուն, առանց վախնալու հակասութիւններէ:

«Ամերիկեան Գոմուսիզմի հայկական հատուածը գոնէ թոյլ իմաստութիւնն ունենայ իր ձեռքը քաշելու մեր ազգային կեանքէն ու գործունէութենէն»: («Պայքար», 1936, Հոկտեմբեր 4):

«Երկար ամիսներ նոր ծպտումի միջոց մը փնտռել է վերջ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳՈՄՍԻԶՄԻՍ ՎՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՏՈՒԱԾԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ Հօկեան տարրեր... ՈՐՈՇԵՐ ԵՆ ՀՐԱՊԱՐԱԿ ԳԱԼ «ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ» անուան տակ»: («Պայքար», 1938, Մայիս 17):

Կրկին անգրադառնալով Ամերիկայի Հայ Համայնավարներու այդ ծպտումին, «Պայքար» կը գրէ.

«Անա այս ծպտումն ու անպարարութիւնն է, որ նարտար ուզմավարութիւն կը կոչեն Ամերիկայի հայ բաշտիկները, բայց երբ դիմակնիւ վար կ'առնենք, պարոնները կը նեղանան եւ ճգնաւորի վերարկու կ'առնեն իրենց վրայ»: («Պայքար», 1937, Փետրուար 25):

1939 Նոյեմբեր 24, 25 եւ 26ին, յաջորդական երեք խմբադրականներով «Պայքար» կը յարձակի «Նացիզմի Հայ Պաշտպան» «Լրարբեր»-ի վրայ:

«...Նիւ Եորքի մէջ հայերէն թերթ մը կը հրատարակուի, «Լրարբեր» անունով, որուն «ԼԵՂԻՆ ԿԸ ՊԱՏՈՒ» ԵԹԷ ԸՍՈՒԻ ԹԷ ՀԱՄԱՅՆԱՎԱՐ ԹԵՐԹ Է, բայց գմայլիլի քաջարտութիւն եւ ՅԱՆԴԳՆՈՒԹԻՒՆ ՑՈՑԵ ԿՈՒՏԱՅ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՆԱՅԻԶՄԸ այն օրէն որ Համայնավար Պրատուրները Նացիզմը առին իրենց պաշտպանութեան տակ նայնիսկ իրենց երկրի շահերուն եւ ամերիկեան ժողովուրդի զգացումներուն դէմ» («Պայքար» 1939 Նոյեմբեր 24):

Յաջորդ օրը, Նոյեմբեր 25ին «Պայքար» կրկին գրոհի կը դիմէ «Լրարբեր»-ին դէմ.

«...«Լրարբեր»ները շատ լաւ կրնան զգալ թէ ի՞նչ բան կայ այդ տողերուն մէջ, շատ լաւ կը զգան թէ ի՞նչ տեսակ անակնկալ է ՄԻԱՅՆ որ կրթայ այս կուսակցութիւնը մղել գահաբերութեան, ԲԱՅՑ ԱՑԻԿԱ ԱՐԳԷՆ ԿԸ ԴՊՁԻ ԻՐԵՆՑ ՍՐՏԻ ԵՐԿՐՈՐԻ ԶԳԱՑՈՒՆ ԿԵՏԻՆ. ԻՐԵՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԵՆ ՆԱՅԻԶՄԸ ԵՒ ԹՈՒՐԳԵՐԸ ԵՒ ՊԵՏԳ ԶԷ ԱՆՈՆՑ ՄՕՏԵՆԱԼ...»:

«Թագուն եւ անխոստովանիլի շարժառիթներն՝ որոնք Յառաջդիմականներու խմբակը մղեցին, ծրագրուած դիտումով, բաժանում յառաջ բերելու «Սասունցի Դաւիթ» հրասայլի հանգանակութեան ձեռնարկին մէջ, Հայաստանի շուրջ ազգային միասնակամութիւն բազմաթիւ ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ԿԵՂՄԻՔԸ ՓԱՐԱՏԵՑԻՆ ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ԱՆՈՆՑ ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ, ԶՈՐ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԸ ՊԵՏԻ ԶՄՈՒՆԱՅ: Այս կերպով ստեղծուեցաւ յստակ կացութիւն մը, ԴԻՐՔԵՐԸ ՈՐՈՇՈՒՅՑԱՆ ԵՒ ՀԱՍՏԱՏՈՒՅՑԱԻ ՄԻԱՆԳԱՄ ԸՆԴ ՄԻՇՏ: ԹԷ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է ԱԶԳԱՅԻՆ ԶԱՆԳՈՒԱԾԻՆ ԵՒ ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆԻՆ ՄԻՋԵԻ, որովհետեւ ազգային զանգուածը պարզապէս Հայրենիքին կ'ուզէ ծառայել, իսկ Յառաջդիմական խմբակը Հայաստանի շուրջ ստեղծուած գործակցութիւնը ՄԻՇՏ ԿԸ ՇԱՀԱԳՈՐԾԷ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՓՐՈՓԱԿԱՆՏՆ ՈՒ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ ԺՈՂՈՎՈՒՐԻՆ ՄԷՋ ՏԱՐԱՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ: («Պայքար», 1943 Մայիս 11):

1936էն մինչեւ 1945, մօտաւորապէս տասը տարի Ռամկավար կուսակցութիւնը կը պահէր իր անկախութիւնը եւ ժամանակ առ ժամանակ ելոյթներ կ'ունենար համայնավարներու սփիւռքի մէջ ունեցած զործունէութեան դէմ:

Բայց 1945ի էջմիածինի կաթողիկոսական ընտրութիւնէն առդին Ռամկավար կուսակցութիւնը եւ իր մամուլը բոլորովին գարձան համակիր Թ. Միութեան վարած ներքին եւ արտաքին քաղաքականութեան:

Երբ ուսւ բոլշեւիկները զբաւեցին Հայաստանը, այս անգամ Ռամկավար կուսակցութիւնը մոռցաւ իր թշնամութիւնը ընկերվարութեան դէմ:

Հնչակեաններու ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

«Հնչակեան» պիտակին տակ, փոքրաթիւ խմբակի մը կատարած սիրուր արարքները Լիբանանի մէջ հանրածանօթ են: Կը բաւէ կարգալի կ'իտուրի ստորագրութեամբ հետեւեալ խոստովանութիւնը, սեւով ճերմակի վրայ գրուած, Պէյրութի «Արարատ» թերթուկի 1947 Ապրիլ 11ի թիւին մէջ.

Այս ձեւով է որ հին եւ նոր շարժումները մէկ շրջալի գնացած ուղիները կը կազմեն:

Ծրր 1018ին գաւաճած ուժերը Անդրկովկասը անջատեցին Պուլշեիկացած Ռուսաստանէն, Քիֆլիսի Հնչակեան Կեդրոնը՝ ուր այն ստան կը գործէին Լազո, Արշակ Բարեան, Տաշիր եւ ուրիշներ, բողոքի թուացիկ մը հանեցին դատապարտելով այդ ազգը, եւ համերաշխութիւն յայտնեցին Ռուսական մեծամասնական շարժման:

Հայաստանի Հանրապետութեան օրերուն՝ որքան ալ դէմ վարչակազմին, բայց յանուն հայ ժողովուրդի եւ Տաճկահայ դազթականութեան փրկութեան, Հնչակեան շարժերը եւ գործիչները գործէն փախած չին, օգնած եւ լծուած են գործին:

1920ի ՄԱՅԻՍԻԱՆ ապստամբութեան ստան, Հնչակեան ուժերը մասնակցած են Համայնավար ցոյցերուն եւ իրենցմէ շատերը բանա նետուած են:

Հայաստանի ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ նախորեակին, Հնչակեան Կուսակցութիւնը կը հրատարակէր «Գործաւոր» թերթը՝ Քիֆլիսի մէջ, ուր ան միշտ կանգնած էր Համայնավարներու կողքին:

Հայաստանի խորհրդայնացումէն 18 օր առաջ Քիֆլիսի մէջ Հնչ. Կեդրոնը կը կազմէ կուսակցական բոլորեան մը, ուր կ'որոշէ շատապէս Հայաստանի կուսակցութիւնը եւ զայն փոխարինել բանուորա - գիւղացիական իշխանութեամբ:

Հայաստանի խորհրդայնացումէն ետքը Քիֆլիսէն Հնչ. Կեդրոնը Նոյեմբեր 7ին, 1922, թիւ 569 պաշտօնադրով կը գրէ Ամերիկայի շրջանին «Հնչակեան Կուսակցութիւնը Հայաստանում եւ Վրաստանում պաշտօնապէս ճանաչուած է կառավարութիւնների կողմից, լեզուիկացիայի ենթարկուած է եւ ազատ գործելու համար հարկ եզան զբաւոյն արտօնաթուղթերը արուած»:

Այս կը նշանակէ թէ Կոմունիստ երկու կառավարութիւնները համոզուած էին Հնչակեաններու անկեղծութեան վրայ:

Այս փոքր փաստերը կուզան ապացուցանելու թէ Հնչակեան մասան եւ կուսակցական կեդրոնները միշտ հաւատարիմ մնացած են իրենց մարքսիստական սկզբունքներուն:

Իսկ եթէ դանուած են սոյթաբողներ, հերետիկոսներ, այդ պատահած է ամէն կուսակցութեան մէջ:

Հնչ. Կուսակցութեան Մարքսավայել գործունէութեան ամենամեծ փաստը Կոմիտէներէ Գործադիր Կոմիտէի նախագահութեան (Օ. Վ. Կուսիսիէր) 5 Փետրուար 1923ին իրեն սուած պաշտօնական գրութիւնն է, ուր ըսած է -

Ա.— Ս. Գ. Հնչ. Կուսակցութիւնը Հայ սոցիալ-դեմոկրատիայի հետ զոյն զեղբայրի մէջն է:

Բ.— Ս. Գ. Հնչ. Կուսակցութիւնը Հայկ. պրոլետարիատի բացառիկ ներկայացուցիչ ըլլալու իրաւունքը ունի Ռուսաստանի եւ արտասահմանի մէջ:

Գ.— Ս. Գ. Հնչ. Կուսակցութիւնը համարուած է Կոմունիստ կուսակցութեան համակրող:

Ծրր 1924ին Ծրբորդ Միջազգայնականի Գործադիր Կոմիտէն արտօնութիւն ուղարկեց ուր Հնչ. Միջկարը իր Հնչակեան Մարտիսի Ծրր Պատգմ. ժողովին կողմէն

Մոսկուա երթայ, եւ այդ արտօնութիւնը արուելով՝ ընկերը Մոսկուա գնաց, ստով իսկ ապացուցուեցաւ մեր անկեղծ կապը Մարքսիստական ամենավերջին շարժման հետ եւ թէ Կոմիտէներէ նպաստաւոր վերաբերմունքը մեզի հանդէպ:

...Ներգաղթի այս սրբազան օրերուն Հնչակեան հաւատարիմ գործիչներն են որ Համայնավար եւ Ռուսկավար ընկերակիցներուն հետ թեւ ու թիկունք կը դառնան ներգաղթողներուն:

Հնչակեան մամուլը՝ իր Արդոսեան ուղեորով կը պրպտէ այն բոլոր անկեղծները, ուր թուգնուած են դաւադիրներու խօսքերը:

...60ամեայ Մարքսիստ Մարտական Հնչակեանը երբ կը տեսնէ իր վերջին գինուորի մեռելն ընկեր Մացակ Պապեանի ստորագրած Հպատակութեան թուղթը՝ այն ստան սսկեայ տուփի մը մէջ դրած իր կարծիք դրօշն ու դաւոյնը կը դրէ ընկեր Նիկոլայ Կուզնեցովին, որ զայն պահէ «Մտալիսեան Մալոն» մէջ, ուր հասակուած են բոլոր ազգերու նուիրական մասունքները՝ իրք նուէր դեկուած Մարքսիստ յեղափոխութեան հայր պահապան Մտալիսին:

Ա. ԿԻՏՈՒՐ

«ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԿՈՄՈՒՆԻՍՏԵՐՈՒ ՊԻՒՌՈ»

Կոմունիստական կուսակցութիւնը պաշտօնապէս ազգային բաժանում չի ճանչնար, երկրէ երկիր կը կազմակերպուի, բայց կ'ունենայ ազգային բաժանումներ հոն, ուր կան փոքրամասնութիւններ: Պարագան այսպէս է Լիբանանի եւ Սուրիոյ համար, ուր կարեւոր թիւով հայեր կ'ապրին եւ որոնք բացառիկ ուշադրութեան առարկայ դարձած են կոմունիստներու կողմէ:

1941—1947 անոնք լայն ասպարէզ գտած էին Լիբանանի մէջ: Հետեւեալ գրգռիչ յայտարարութիւնը եւ շինծու վերագրումները Դաշնակցութեան մօտին, կ'ապացուցանեն կոմունիստներու հակահայ գործունէութիւնը:

Կոչը լոյս տեսած է Պէյրութի «Ժողովուրդի Զայն»-ին եւ Փարիզի «Ժողովուրդ» թերթին մէջ (1947 Փետր. 25):

Յայտարարութիւնը երկարօրէն կը շեշտէ «Ճաւալապաշտ» պետութիւններու «Արեւելեան պրոք»ի ծրագրերը, որուն գործադրութեան համար կ'ըսէ, թէ Թուրքիա կ'աշխատի Ամմանի մէջ ի վնաս Սուրիոյ եւ կ'աւելցնէ:

Ժողովը նկատեց թէ «Արեւելեան Պոք»ի կամ այլ խօսքով անգլո-թուրք պոքի իրագործումը, ուղղակի սպառնալիք մըն է ոչ միայն անկախութեանը Սուրիոյ եւ Լիբանանի, ուր կ'ապրի հայ ժողովուրդի

մէկ ստուար գամգուածը, այլ եւ վտանգ մըն է ընդդէմ ապահովութեան Սովետական Միութեան հարաւային սահմաններուն. ուր կը գտնուի Սովետական Հայաստանը:

«Արեւելեան Պօֆ»-ի իրագործումը պիտի նշանակէ օսմանեան տիրապետութեան վերահաստատումը Սուրիոյ եւ Լիբանանի վրայ. ինչ որ լրջօրէն պիտի վտանգէ սոյն երկիրներուն մէջ ապրող հայութեան կացութիւնը: Հայ ժողովուրդը որ աւելի քան որիւրէ ուրիշ ժողովուրդ. ենթարկուած է օսմանեան լուծի ամենազաւթան յստիգութիւններու, շատ լուրջ սլատնառներ ունի մտահոգութելու իր եղեսկէն հազիւ ճողոպրած եւ հազարամէկ տառապանքներով հասակ քաշած իր ծագիկ երկտասարդութեան ապագայով:

Ժողովը որոշեց խստօրէն դատաւարտել այս հայավնաս ծրագրին ի նպաստ հայ իրականութեան մէջ կատարուող որեւէ ուղղակի կամ անուղղակի արտայայտութիւն: Այս առթիւ յիշուեցաւ ԱԶԳԱԿ շարքաութեան 6 եւ 13 Գեկտեմբերի բիւերուն մէջ Դաշնակցութեան սկանաւոր գործիչներէն Ռուբէն Տէր Մինասեանի «ԻՌԻՐՔԻԱ ԵՒ ԻՐՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ» վերտառութեամբ յօդուածաշարքը. ուր յօդուածագիրը Հայաստանը Սովետական Միութեան անջատելու եւ գայն «Արեւելեան Պօֆ»ին կցելու միտքն է որ կը զարգացնէր: Ժողովը նկատեց, որ նման հակահայ միտք մը, անկասկած չի բաժնէր ոչ մէկ հայ. չեն բաժնէր եւ շատ մը դաշնակ հայրենասէրներ, քանի որ ատիկա գործնականին մէջ նպաստուար է միայն Թաւրիոյ եւ անոր բարեկամներու շահերուն:

Այս անհիմն, գրգռիչ եւ չնական վերագրումներէն ետք, «Ժողովը կոչ կ'ընէ հայ ժողովուրդի բոլոր հասանքներուն եւ խաւերուն. առանց գաղափարական եւ դաւանական խտրութեան», որպէսզի պայքար մղուի «հակաարար եւ հակահայ «Արեւելեան Պօֆ»-ի ծրագրին»: Ստորագրութիւն՝ «Լիբանանի եւսյ կոմունիստական Պիւս»:

Իսկ 1947 Դեկտ. 30ին Պէյրութի մէջ հրատարակուեցաւ ընդարձակ «Պաշտօնական Յայտարարութիւն» մը, յանուն «Սուրիոյ եւ Լիբանանի կոմունիստ կուսակցութեանց Հայկական Ինքնուրոյն Հատուած»-ներուն:

Այդ յայտարարութիւնը կ'ըսէր.

«Գիւրացնելու համար հայ ժողովուրդի ազգային բոլոր ուժերուն լայն համախմբումը Մայր Հայրենիքին շուրջ» եւ «վառ պահելու համար Հոյ-Արար բարեկամութիւնը՝ ԿՈՐՈՏՈՒԻ ԼՈՒԾԵԼ ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ՀԱՏՈՒԱԾՐՈՅՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐԸ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ «ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ» («Արարատ», Պէյրութ, 4 Յունուար 1947):

Ինչպէս անցեալին՝ կոմիւնիստները լուծուեցաւ. բայց համայնաւար քարոզչութիւնը շարունակուեցաւ «հակաֆաշիստ» պիտակի տակ, այս անգամ ալ «հայրենասիրական միութիւնը» այդ առաջնութիւնը պիտի ստանձնէր...:

Եւ ժանաւանդ կոմունիստները ի վիճակի պիտի ըլլային ըսելու բարեմիտ հայերուն. «Մէկ համայնավար ցոյց տային եւ տեսնէինք...»:

«ՀԱՄԱՇԵԱՐ ՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՔՈՆԿՐԵՍ»

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Սովետները Հայաստանի հողային պահանջներու քարոզչութիւնը կազմակերպեցին մասնաւորապէս Հիւս. Ամերիկայի մէջ:

Եւ տարօրինակ կերպով ամերիկեան էլիտանութիւնները ամէն դիւրութիւն ընծայեցին այդ քարոզչութեան:

Այդպէս, 1947 Ապրիլ 30էն Մայիս 4, Նիւ Եորքի Ուաշտոնթ Ասթորիոս պանդոկին մէջ, «Աղբային Խորհուրդ»-ի հրաւերով, տեղի ունեցաւ «Համաշխարհային Հայկական Քոնկրես» մը, որուն մասնակցեցան 22 երկիրներէ եկած 705 պատգամաւորներ: Ասոնցմէ 26 պատգամաւորներ կ'կան Հին ուղղակի արտասահմանէն, 36 պատգամաւորներ նշանակուած էին արտասահմանէն: Մնացեալները եկած էին Մ. Նահանգներու 76 տարբեր քաղաքներէ:

Քոնկրեսը «Յուշագրով մը դիմեց Միացեալ Ազգքուն, առաջարկելով ազատագրել եւ Հայկական Սովետական Հայաստանին վերադարձնել Ուիլսոնի սահմանագծած հայապատկան հողամասը: Յուշագիրը պատրաստուած է հայերէն եւ անգլերէն. երկու բնագիրներն ալ ընդունուեցան միաձայնութեամբ եւ երկարատեւ ովսանանքով»:

Յուշագիրը կ'ըսէ.

«Հանրաձայնօք եւ անվիճելի իրողութիւն է, որ Հայկական Հարցը միջազգայնօրէն նանչուեցաւ Պերլինի վեհաժողովէն (1878ին) եւ վերջնականապէս վնասուեցաւ Սեփի ԳԱՇՆԱԳՐՈՎ (1920ին) ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԸ ՍՏԵՎԵՄԱՆ ՈՐՈՇՄԱՄԸ (ընդգծումները մեր կողմէ. Գ. Լ.), որուն սահմանները ճշդուեցան եւ գծուեցան երջանկային շատակ նախագահ Ուուսոք Ուիլսոնի կողմէ. Դաշնակցի Գերագոյն Խորհուրդի ինդրամիով. եւ Հայոց այս իրաւունքները աւելի զօրացան Այդանտեան Հրովարտակի հռչակած վստմ սկզբունքներով»:

Թուրքերու գործադրած Հալածանքները եւ Զարգերը Թուելէ
ետք, յուշագիրը կ'եզրակացնէ .

«Հետեւաբար, հիմնուած վերեւ հակիրճ կերպով մերկայա-
ցուած տուեալներուն վրայ, որոնք վաւերացուած են պատմական փաս-
տաթուղթերով եւ հանդիսաւոր դաշնագրերով, Համաշխարհային Հայ-
կական Քոնկրետը, յանուց աշխարհի բոլոր հայերուն, յարգանքով կը
խնդրէ Գերագոյն մարմնէն հայոց հոգային պահանջները դնել Միացեալ
Ազգերու օրակարգին վրայ եւ այդպէս ու հաստատակամ վնասով մը՝ ա-
զատագրել տակաւին թրքական լուծին տակ գտնուող Ռիլտընի սահմա-
նագծած հայապատկան երկրամասը, եւ վերադարձնել զայն իր օրինա-
ւոր տիրոջ՝ Հայկական Հանրապետութեան :

Մարդկութիւնը եւ արդարութիւնը կը պահանջեն այս իրաւացի
պահանջի իրագործումը ձեր վսեմ ատեանէն» :

Աւելցնենք, թէ Ազգային Խորհուրդները այս Համազումարէն
ետք, աստիճանաբար մոռացութեան տուին Հայաստանի հողային պա-
հանջները : Այդ եղաւ անտարակոյս սովետական իշխանութեան թելա-
դրանքով :

ՌՈՒՍՅԵԹՈՒՐՔ ԳՐԳՌՈՒՄՆԵՐ ՀԱՅԵՐՈՒՆ ԴԵՄ

1920ի ռուսեթուրք զինական գործողութիւններու հետեւան-
քով խեղդուեցաւ Հայաստանի հանրապետութիւնը : Աւելի ետք ռուսերը
օգնեցին քեմալական Թուրքիոյ, որ կրցաւ հեռացնել դաշնակից բա-
նակները ամբողջ Անատոլուէն : Սերի փոխարէն, Լոզանի դաշինքը եկաւ
ճանչնալու յաղթական Թուրքիան :

Արեւմտահայ 300 հազար վերապրողներ, որոնք 1919-1922 վե-
րադարձան մասնաւորապէս Կիլիկիոյ եւ Թուրքիոյ արեւմտեան շրջան-
ները, կրկին տեղահան եղան, ապաստանելով մասնաւորապէս Թուր-
քիոյ հարաւը՝ արաբական երկիրները :

Արաբները բախտակից եղած էին հայերուն եւ գիտցան գնահա-
տել մեր աշխատասիրութիւնը ու ամէն դիւրութիւն ընծայեցին, որ-
պէսզի հայերը տնտեսապէս, մշակոյթով զարգանան եւ ունենան իրենց
համայնքային կեանքը :

Այս յաջողութիւնները անհանդուրժելի նկատուեցան Հայաս-
տանի թշնամի ուժերուն համար, որոնք սկսան նոր դաւադրութիւններ,

զրգուաներ կազմակերպել արաբական երկիրներու մէջ հիւրասիրուած
հայերուն դէմ :

Թուրքերը 1919ին արդէն յաջողած էին Հալեպի եւ Գահիթէի
մէջ թշնամական տարր մը ներկայացնել հայերը : Բայց արաբ վարիչ-
ներ գիտցան պարզել Թիւրքմացութիւններ եւ բուլղոզիէն բարեացակամ
քաղաքականութիւն մը որդեգրել հայերու հանդէպ :

Միջին Արեւելքի հայ տարրի զարգացումը անհանգիստ ըբաւ
Թուրքերը եւ ռուսերը հաւասարապէս : Ասոնք բազմաթիւ փորձեր ըրին
խանգարելու հայերու խաղաղ կեանքը, բայց ի զուր :

Կատարուած դաւերէն մէկն էր 1932ին Ա. Նիկոլ ստորագրու-
թեամբ «Սուրիա եւ մեմէ» հայերէն եւ ապա արաբերէն լեզուով գրքոյ-
կին զաղտնի տպագրութիւնը եւ տարածումը : Թուրքիոյ Գըսմը Սիւ-
սիւ եւ ռուսական Ձեկան մասնագէտներ էին նմանօրինակ գործերու :
Այդ գրքոյկը իբրեւ թէ հայ յեղափոխական կուսակցութիւն մը պատ-
րաստած էր եւ իր ազգակիցներուն կը յանձնարարէր . «ԱՅՈ՛, ՄԵՆՔ
ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ ԿԸ ՏԵՂԱԻՌՈՒԻՒՆՔ : ԲԱՅՑ Ո՛Ձ ԹԷ ՀԻՒՐԻ ՄԸ ՊԷՍ,
ԱՅԼ ՏԱՆ ՏԵՐԸ ՄՆՈՒՑԱՆՈՂ ԵՒ ՀԱՐՍԱՑՆՈՂ ՏԱՐՐԻ ՄԸ ՊԷՍ : ԵԸՆ-
ԴԻՐԸ ԱՅԼԵՒԻ ՎՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՁԵԻՆ ԱԻԵԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴՐԻ ՄԸ
ՎԻՃԱԿԻՆ ՄԷՋ ՄՏԱՄ Է : ...ՎԱՂԸ ԵԹԷ ՍՈՒՐԻՈՅ ՎՐԱՅԻՆ ՖՐԱՆ-
ՍԱԿԱՆ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ՎԵՐՆԱՅ, ՄԵՁԻ ՀԱՄԱՐ ՎՏԱՆԳԸ ԳԼՈՒԽ
ՑՅԱՄ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ : ...ԱՅՍ ՆՊԱՏԱԿԻՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՅՄԱՆՆ Է ՖՐԱՆ-
ՍԱՅԻ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԱԻԵԼԻ ԶՕՐԱԻՌ ԵՒ ԱԻԵԼԻ ԱԶԴՈՒ ԿԵՐ-
ՊՈՎ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ ՄՆԱԼՆ ՈՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄԸ :

ԱՅՈ՛, ՅԱՐԳԵԼԻ ՍՈՒՐԻԱՅԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ, ՖՐԱՆՍԱՅԻ-
ՆԵՐԸ ՁԵՐ ԳԼԵՈՒՆ ՎԵՐԵԻ ԵՒ ՀԱՅԵՐԸ ՁԵՐ ԹԵԻԸ ՄՏՆԵԼՈՎ ՁԵՁ
ԲԱՐՁՐԱՑՆՈՂ ԵՐԿՈՒ ՈՒԹԵՐ ԵՂԱՄ ԵՆ» :

Այս զրգուաներու ընթացքին, գրքոյկը կը յիշատակէ նաեւ
հետեւեալը .

«Դաշնակ կուսակցութիւնը աշխարհի ամէն կողմը մպատի
կազմակերպութիւններ ստեղծեց : Բարեգործական Միութիւնը եւ Պօզոս
Նուպար փաշայի մտեմ յետոյ 1930ին անոր տեղը անցնող արդի մայրա-
գահը՝ յարգելի միլիոնատէր Գալուստ կիլիկեցիական ալ մեծ ծառայու-
թիւններ մատուցած են : ԵՐՐ 10 ՀԱԶԱՐ ՀՈԳԻԷ ԲԱՂՎԱՅԵԱԼ ՓՈՔՐԱ-
ՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆԳԱՄ ԻՐ ԵՆՑ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍՏԱՑԱՄ
ԵՆ, 200.000 ՀՈԳԻԷ ԲԱՂՎԱՅԵԱԼ ՀԱՅԵՐՈՒՆ ԱՏԿԷ ԶՐԿՈՒՄՄ ՄՆԱ-
ԼԸ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐՈՒՆ ԶԻ
ՊԱՏԱՃԻՐ» :

«Յուսարբք» օրաթերթին մէջ, հանդուցեալ ընկ. Վահան Նա-
ւասարդեան ճիշդ ատենին յաջողեցաւ մերկայցնել այս դաւը, որուն գի-

տակից թէ անգիտակից մեղուակիցը դարձած էր կոյր հակադաշնակցական խմբադիր մը: Բացատրութիւններ, լուսարանութիւններ արուեցան արարական մամուլին, որ, պատիւ իրեն, զիտցաւ թշնամիներու ծուղակը շինյալ:

Տարիներու ընթացքին թուրքերը եւ Սովետները ի դուր փորձեցին կասկածելի դարձնել հայ տարրը, օգտագործելով ամէն լիզուով հրատարակուած անպատասխանատու թերթեր: Ամենէն վերջինը ու ծիծաղելին այն եղաւ, որ Պէյրութի արարելէն թերթի մը մէջ գրեցին, թէ Գահիրէի 1952ի հրդեհին մէջ բաժին ունեցած էր... Դաշնակցութիւնը եւ անցեալին ան սպաննած էր Սարգսրը...: «Ջարթօնք» այս վրան բաց ու գրդուիչ զրպարտութիւնները թարգմանարար հրատարակելով բացատրութիւն պահանջեց Դաշնակցութեանը...:

**ԷԶՄԻԱԾԻՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԴԻՄՈՒՄԸ
«ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ, ԵՐՈՒՍԱԿԷՄԻ
ՊԱՏՐԻԱՐԳԻՆ ԵՒ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ
ԱՌԱՋՆՈՐԳՆԵՐՈՒՆ»**

Ատլանտեանի Ուխտի կազմութեան առթիւ, Սովետներու կողմէ զօրաւոր քարոզչութիւն մը սկսաւ այդ Ուխտին դէմ:

Այս քարոզչութեան իրենց մասնակցութիւնը բերին «խաղաղասէր» համաժողովներ եւ էջմիածինի Ամենայն Հայոց Կաթողիկոսը հարկադրեցին իր բողոքի ձայնը բարձրացնել:

Գէորգ Զ. իր 1949 Ապր. 7 գրութիւնը ուղղելով Փարիզի մէջ խմբուած «խաղաղասէր» հրձիգներուն եւ իր այդ գրութեանը մէջ ուժգնորէն բողոքելով «անգլօ-ամերիկեան ռէակցիոն շրջան»ներու, «աշխարհի մի քանի մեծ պետութիւնների ղեկավարներու (անգլօ-ամերիկեան) եւ «Ատլանտեան Պակտ»երու դէմ, միաժամանակ պահանջելով գործադրութիւնը թեքանի՛, Եսաթայի՛, եւ Փոցտամի՛ խորհրդատուներու որոշումներուն կաթողիկոսը կը գրէ.

«ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՅԱՏՈՒԿ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆՈՎ ՄԵՆՔ ԴԻՄՈՒՄ ԵՆՔ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ, ԵՐՈՒՍԱԿԷՄԻ ՊԱՏՐԻԱՐԳԻՆ ԵՒ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԳՆԵՐՈՒՆ, ԿՈՉ ԱՆՆԵԼՈՎԸ ՍՏԱՄԵՆԱՅՆԻ ԶՕՐԱՎԻԳ ԼԻՆԵԼ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԿՐԵՍԻՆ, ՀՆՁՅՑՆԵԼ ԻՐԵՆՑ ԶԱՅՆԸ ԲՈԼՈՐ ՆԸ-

ՐԱՆՑ ԴԵՄ, ՈՐՈՆՔ ԶԳՏՈՒՄ ԵՆ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ ՀՐԱՀՐԵԼ, ԵՒ ՄԻԱՑՆԵԼ ԻՐԵՆՑ ԶԱՅՆԸ ԲՈԼՈՐ ՆՐԱՆՑ ԶԱՅՆԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ԻՐԵՆՑ ԱՍՏՈՒԱԾԱՀԱՃՈՅ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ԶԳՏՈՒՄ ԵՆ ԿԱՍԵՑՆԵԼ ՄԱՐԿՈՒԹԵԱՆ ԳԼԽԻՆ ԿԱՆՈՒԱԾ ՆՈՐ ԱՐՀԱԻՐՔԸ» (էջմիածին», 1949, Մարտ-Ապր.):

«Հոկտեմբերեան Սոցիալիստական Մեծ Ռեւոլյուցիայ»-ի 31րդ տարեդարձի առիթով, Մայր Աթոռի պաշտօնաթերթը՝ «ԷԶՄԻԱԾԻՆ»-ի ր առաջնորդող յօդուածի սիւնակներէն կ'ազդարարէր.

«Այսօր, երբ սովետական ժառանգները, որոնց բուռն եւ հայ ժողովուրդը, խաղաղ եւ ստեղծագործ աշխատանքով են գրազուած, ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՆԳԼՕ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԸՐ-ՁԻԳՆԵՐԸ դաւեր են լարում մեր անձայրածիր հայրենիքի դէմ ու տեմ-ՁԻԳՆԵՐԸ պատերազմի նախապատրաստում: Այս իրադրութեամբ թեւատրուած, վերջերս հայկական մի քանի գաղութներում նկատելի աշխուշ, ժուրիւն են սկսել ցուցաբերել հակահայաստանեան տարրերը, որոնք նպատակադրել են գաղութահայ եկեղեցիներու ներգրաւել իրենց հայրենադաւ գործունէութեան շրջանակի մէջ»:

«Գաղութահայ հայրենասէր հողեւորականութիւնը պայքարի կոչելով այս «հրձիգ»ներու եւ «հակահայաստանեան տարր»երու դէմ՝ պաշտօնաթերթը, յանուն Մայր Աթոռի, կը յայտարարէր.

«Մենք լիովին վստահ ու հաւատացած ենք, որ ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, որը սրբազան պարտականութիւն ունի յանուն Հայ Հայրենիքի եւ Հայ Եկեղեցու թշնամիների դէմ, արժանի հակահայրուածը կը տայ հայրենադաւների այս նեղամիտ փորձերին եւ գաղութահայ հայաստանեան կազմակերպութիւնների հետ ձեռք-ձեռքի տուած անդուլ կերպով կ'աշխատի Հայ ժողովուրդի, Հայ Հայրենիքի ու Հայ Եկեղեցու թշնամիներին ՔՈՂԱԶՅՐԾ անել, ԶՐԿՆԵԼ, նրանց իրենց սոսքի տակի հոգից, ԶԷԶՈՔԱՑՆԵԼ ու ՄԵԿՈՒՍԱՑՆԵԼ» (էջմիածին», 1948 Հոկտ. 2-7-ին կտ.):

էջմիածինի անունով հետապնդուած այս «բարձր դիւանագիտութիւնը» արդարացնելու համար, «Ձայն Փարիզի» համայնալար օր-դանը 1949 Մարտ 2ի խմբագրականով կը գրէր.

«Եւրոպայի համրապետական թէ միապետական շուրք «դիւանագրատ» կարծուած երկիրներու եկեղեցիները իրենց վարած ֆալսափալսու-նութիւնը կը ներդաշնակեն իրենց կառավարութեան ֆալսափալսու-թեան հետ»:

ԷՋՄԻԱԾԻՆ ԵՒ ՔՈՐԷԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Անտարակուսելի է, որ խորհրդային իշխանութիւնը կը պահէ էջմիածինը ո՛չ թէ յօղուտ Հայ եկեղեցիին, այլ անոր միջոցով քաղաքական էնթրիկներ կատարելու համար Սփիւռքի հայութեան մէջ:

1950 Օգոստ. 5ին, նախաձեռնութեամբը Մոսկուայի եւ Համայն Ռուսոյ Գատրիարք Ալեքսի, Քիֆլիսի մէջ խմբուեցան երեք եկեղեցիներու՝ ուսական, վրացական եւ հայկական պետերը — ինքը Ալեքսին, Համայն Վրաց Կաթողիկոս-Գատրիարք Կալիստրատը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Զ. — եւ աշխարհի քրիստոնեաներուն «խաղաղասիրական» կողմը ուղղեցին:

Այս «կողմի» իմաստը պարզաբանելով՝ «ԷՋՄԻԱԾԻՆ», առաջնորդող յօդուածի մը մէջ, «ԵՐԵՎ ՀՈՎՈՒԱՊԵՏՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ» խորագրին տակ, կը գրէ («էջմիածին», 1950 Յուլիս-Օգոստ.) .

Մարդկութիւնը նորից տագնապալից ժամանակներ է ապրում: Աշխարհի վրայ նորից սկսել է սաւառնել նոր պատերազմի սեւ ուրուականը: Աշխատաւոր մարդկութեան արիւն քրտինքով յղիւցած մի խումբ գաղութարարներ, նոր երկրներ տիրելու եւ նոր ժողովուրդներ ստրկացնելու իրենց հրէշային ծրագրերի յետեւից ընկած, ուզում են մարդկութեանը մի նոր եւ ահաւոր սպանդի մէջ փաշել: Նրանք գործառւարտի են ենթարկում աշխարհի բոլոր յետադէմ ուժերը, գէնք են բաժանում: Ռազմական բազաներ ստեղծում եւ ամէն տեսակի նենգ միջոցներով հրահրում համաշխարհային նոր հրդեհը:

...Քնած չէ սակայն աշխատաւոր մարդկութիւնը: Նախորդ համաշխարհային երկու աշխարհաւեր պատերազմներին տասնեակ միլիոնների թափած արիւնը սթափեցրել է մարդկութեան խիզղը: Այլեւս ո՛չ ոք չի կամենում շահագործողների խեղկատակ գործիքը լինել եւ արիւն թափել պորտաբոյծների համար: Աշխարհի բոլոր առաջաւոր մարդիկ այժմ միաւորում են խաղաղութեան համար պայքարող կազմակերպութիւնների մէջ, իջեւ պաշտպան ունենալով խաղաղութեան յուսալի յենարան Սովետական մեծ Միութիւնը: Նրանք համարձակ պայքարում են պատերազմի հրահրողների դէմ ու մերկացնում ռազմամուկների ստոր միտումները:

...Ողջ աշխարհն այժմ փաստօրէն բաժանուած է երկու գլխաւոր մակատների՝ աշխատաւորութեան մակատի, որը խաղաղութիւն է ուզում, եւ շահագործողների մակատի, որը պատերազմ է պատրաստում:

Հակոտնեայ մակատներից իւրաքանչիւրն ունի իր սեփական գաղափարախօսութիւնը եւ շահը: Ի՞նչ է ուզում աշխատաւորութիւնը.

ազատ լինել շահագործումից եւ ապրել եզրայրական խաղաղութեան մէջ: Ի՞նչ են ուզում շահագործողները. ստրկութեան մէջ պահել իրենց գերիշխան երկրների աշխատաւորներին եւ աշխատել նոր երկրներ տիրել, մարդկային նոր ուժեր ստրկացնել ու միլիոնների արեան եւ արցունքի գնով, աւելի մեծացնել իրենց շահոյքը:

...Ամերիկեան ռազմամուկները վերջին ժամանակներս առանձնապէս զագագել են այն պատճառով, որ որոշ երկրներում գիտակցութեան եկած աշխատաւորները իրենց ձեռքն են վերցնում իրենց երկրների իշխանութիւնը եւ ձգտում են ազատութեան: Նրանք ցանկանում են բնութեամբ, գէնքի ուժով աշխատաւորութեանը պահել ստրկական վիճակում: Աշխարհն այժմ տեսնում է այն զագամութիւնները, որ կատարում են ազատատէր կորէացիների նկատմամբ:

Պատերազմի հրահրողները ստեղծել են պատերազմի անխուսափելիութեան իրենց նողկալի «փիլիսոփայութիւն»ը, որի էությունը կայանում է նրանում, որ պատերազմը ցանկալի մի երեւոյթ է, որովհետեւ նա գալիս է պակսեցնելու մարդկութեան օր աւուր անող թիւը եւ հաւասարակշռութիւն ստեղծում մարդկանց քանակի եւ բնութեան ընձեռած բարիքների հնարաւորութիւնների միջեւ:

...Ինչպիսի՞նք պիտի լինի քրիստոնեայ եկեղեցիների դիրքը հակադիր գաղափարներով եւ հակադիր ցանկութիւններով դէմ առ դէմ կանգնած այս երկու շակատների նկատմամբ. որի՞նք պիտի յարեն նրանք — խաղաղութեան կողմնակիցների՞նք, թէ պատերազմի հրահրողներին: Այս հարցը ծառայել է աշխարհի բոլոր տեսակի կազմակերպութիւնների, որոնց թւում եւ քրիստոնեայ եկեղեցիների առաջ: Ոչ ոք չի կարող եւ չպիտի խուսափի կողմնորոշումից:

էջմիածինի «Ամենայն Հայոց Կաթողիկոսը», վեր առնելով, յեշտելով պատերազմական երկու ճակատներու գոյութիւնը, կը յայտարարէ բարձրադասակ իր «հօտ»ին .

«Ոչ ոք չի կարող եւ չպիտի խուսափի կողմնորոշումից» . . .

Քիֆլիսի հաւաքոյթէն ետք, էջմիածինի Կաթողիկոս Գէորգ Զ. «ցանկութիւն է յայտնել ներկայ գտնուելու» 1950 Հոկտեմբեր 16ին Մոսկուայի մէջ գումարուած «Պաղատութեան կողմնակիցների Համամիութենական երկրորդ կոնֆերանսին»: Կաթողիկոսը Մոսկուայի խորհրդածողովին մէջ արտասանած իր ճառին մէջ կ'ըսէ («էջմիածին», 1950, Սկստ. - Հոկտ. էջ 26) .

«...Հայ ժողովուրդը անկարող է անտարբեր մնալ տեսնելով Կորիայի խաղաղատէր բնաւորութեան տէր եւ հին կալուստրա ունեցող մի ժողովուրդի կրած անկարագրելի տանջանքները քրիստոնեայ Ամերիկայի անբոյլատրելի եւ զագամարոյ ոմբակոծումների երեսից,

որի հետևանքով երկիրն անբարկների կոչում է դարձել: Եւ այս բոլորը կատարում է միայն նրա համար, որ Կորիայի ժողովուրդը իր գալիս-բերելն պայքարում է իր իրաւունքների պաշտպանութեան համար եւ ազգովին միանալու եւ անկախ ու ազատ պետութիւն դառնալու նպատակով: Նոյն վիճակը տիրում է նաեւ Ինժոնեքիայում, Չինաստանում, Աֆրիկայում եւ այլ վայրերում:

Հայ ժողովուրդը աշխարհի բոլոր ազնիւ մարդկանց նման՝ լըցուած է ատելութեամբ եւ գայրոյթով եւ իր հոգու ամբողջ գորութեամբ բողոքում է Ամերիկայի եւ արեւմտեան եւրոպական պետութիւնների անթոյլատրելի վայրագ վերաբերմունքին դէմ»:

Հետագային այս իմաստով եւ «կողմնորոշում»ի պահանջով, Կաթողիկոսը կոնդակներ զրկեց արտասահմանի թեմերուն, որոնք կը գտնուին արեւմտեան պետութիւններու գոտիին մէջ...:

Ներքին» է խորհիւ, թէ այս կոնդակները ուղարկողը Հայոց Եկեղեցիի պետն է եւ ոչ թէ խորհրդային իշխանութիւնը:

Ահա այս «կոնդակներու ներշնչումով է, որ գտնուեցան հակախորհրդային երկիրներու մէջ հայ Եկեղեցականներ, որոնք «քաջաբար» Մուրճ-Մանգաղը գովարանեցին:

Քալիֆորնիոյ քահանաներէն Կարապետ Գալֆայեան (հնչակեան գործիչ Արիս Գալֆայեանն է, որ իր վրայ սքեմ առած է...) եւ էջմիածին ալ զնաց, «Լրաբեր»ի 1948 Նոյ.ի թիւին մէջ կը գրէ.

«Հոգիս մատաղ իմ եղբայրներուս եւ քոյրերուս, որոնք էլլան գը ձեռքերին նոր Աշխարհ կը կերտեն: Փլունգ ըսի, բայց պիտի սիրեմ ըսել մամաւանդ Մոհիճ ու ՄԱՆԳԱՂ, թող օրինակ ըլլան զանոնք վերցնող բազուկները:

«Յումաստանէն բարեկամս կը գրէ, որ ի մտոյ Կեռիւններու պետը՝ Մարգոս պիտի բազմի արքայական վարչապետի կողքին եւ Յումաստան պիտի խաղաղի:

«Հրնուեցայ օրհնեցի Կեռիւնները...»:

Այն կեռիւնները, որոնք Յունաստանի մէջ «պրոլետարական դիկտատուրա» հաստատելու համար քանի մը տասնեակ հազար յոյն դիւղացի ջարդեցին... կ'օրհնուին Կարապետ քահանաներու կողմէ, ի փառս Քրեմլինի:

Ինչպէս կը տեսնենք, մեր կարգ մը Եկեղեցականները քողաքականութեամբ չեն զբաղիր... Եւ քրիստոնէութիւն կը քարոզեն:

. . .

Մեր կաթողիկոսները միշտ չեն ննթարկուած ուս կտաւարութեան հրահանգներուն: Արտասահմանի մեր բարձրաստիճան եկեղեցականները մասնաւորապէս թող կարգան եւ իմանան հետեւեալ զէպ-

ըը, որու մասին կը գրէ Գ. Տօնայեան.

Երբ 1877ի ռուս-թրքական պատերազմը յայտարարուեցաւ, Կովկասեան բանակի հրահանգը հայ գորավարներ Լորիս Մելիքով, Լազարի եւ Տէր Գուկասով, որոս կառավարութեան որահանգով, գնացին Էջմիածին եւ խնդրեցին Գէորգ Գ. Կաթողիկոսէն, որ հրատարակէր մի կոնդակ ուղղեալ իր հայ ժողովրդեան, մասնաւորապէս Թուրքիոյ հայ ժողովրդեան, հրաւիրելով նոցա աջակցութիւնն եւ ծառայութիւնը ռուսական բանակին:

Հայ ժողովրդեան Հայրապետ պատասխանեց

ԻՆՉՊՆՄ ԻՄ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆՍ Է ԽՈՐՀԻԼ ՌՈՒՍԻՈՑ ՀԱՅ ՀՕՏԻՍ ՀԱՄԱՐ. ՆՈՅՆՔԱՆ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆՍ Է ԽՈՐՀԻԼ ՎԵՏԱՆԳԻ ԶԵՆՈՒՐԿԵԼՈՒ ՍՈՒԼԹԱՆԵ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԱՊՐՈՂ ԺՈՂՈՎՐԿԵԱՆՍ ԿԵԱՆՔԸ: ԱՅԳՊԻՍԻ ՄԻ ԿՈՆԳԱԿ ԱՆՊԱՏՃԱՐ ԶԱՅՐՈՑԹՈՎ ՊԻՏԻ ԼԵՑՆԷ ՍՈՒԼԹԱՆՆ ԵՒ ԻՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԱՌԻԹ ՊԻՏԻ ՍՏԵՂԾԷ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԾԱՆՔԻ ԵՒ ԿՈՏՈՐԱԾԻ. ՈՒՍՏԻ, ԻՐԻԵԻ ԸՆԴԷՂԱՆՈՒՐ ՀԱՅ ԱՋԳԻ ՀՈԳԵԻՈՐ ՀԱՅՐ, ԵՍ ԶԵՄ ԿԱՐՈՂ ԹՈՅԸ ՏԱԼ ԻՆՍԻ ԱՂԷՏ ԲԵՐԵԼ ԹՈՒՐԿԻՈՑ ՀԱՅՈՑ ՎՐԱՅ ԱՅՍՊԻՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԽԱՌՆՈՒԵԼՈՎ:

Այս դէպքի առթիւ կ'արժէ յիշատակել, թէ Գէորգ Կաթողիկոս տհաճելի դարձաւ յայն ուս կառավարութեան: Եւ որովհետեւ Կաթողիկոսներն ըստ Պալոմենիայի մի տեսակ գերիներ էին եւ Էջմիածնայ գաւառէն դուրս ուրիշ ֆազաբ այցելելու իրաւունք չունէին առանց կայսերական արտօնութեան, Գէորգ Կաթողիկոս այնուհետեւ, մինչեւ իր մահն, Էջմիածնէն դուրս ոտք չկոխեց՝ չուզելով իւր Ամենայն Հայոց Հայրապետական անձի կաշկանդեալ ազատութեան համար ցարի կամբէն կախուած զգալ («Չայն Փարիզի», 1949 Յունուար 4):

ՀԱՄԱԾԱՆՔ ԱԿԱԳԵՄԱԿԱՆՆԵՐ ՈՃԱՌԵԱՆԵ ԵՒ ՂԱՓԱՆՑԵԱՆԻ ԴԵՄ

Ճար Նելիսոյի, Սուլթան Համիտի հետ կարելի չէ բազմաաւելունակալ Մթալիներ, որ մեր ակադեմիականներուն լեզուապիտութիւն ալ կը սորվեցնէր...:

Երեսնի Գիտութեանց Ակադեմիային մէջ 1949 Հոկտ. 1ին, Կովկասի հրահանգով պրոֆ. է. Աղայեան կը կարգայ ղեկուցում մը՝ պատասխարտելով բազմապատասակ հայ ուսուցչապետները որոնք չեն հե-

տեւած Մասի ստանդին եւ Հայերէնը նկատած են Տեղեւորական լե-
զու :

«Պրոֆ. Անտանանը մինչեւ այժմ էլ կանգնած է բուրժուական, հնդերոպարանութեան կեղծ գիտութեան դիրքերում եւ յամաօրէն ֆարգում է նրա ռեակցիոն սկզբունքները: Բուրժուական լեզուաբան Մէյէի մման, որը գտնու էր, որ իտալական, ֆրանսական, սպանիա-
կան լեզուները հանդիսանում են լատիներէնի փոփոխուած ձեւեր, իսկ լատիններէնը «հնդերոպական նախալեզու» փոփոխուած ձեւեր, պրոֆ. Անտանանը հայերէնը նայնպէս համարում է «հնդերոպական նախալե-
զու» ձեւափոխութիւնը: Իսկ այդպիսի տեսակէտը, ինչպէս յայտնի է, հանդիսանում է ժամանակակից անգլեւամերիկեան ռեակցիոն ուսուցա-
կան լեզուաբանութեան հիմքը, որը ծառայում է իմպերիալիստական գաղութարարական ֆազալականութեան շահերին:

Հայաստանի Կ (բ) Պ կենտ. Կոմիտէի որոշման մէջ յստակօրէն բնութագրուած է նաեւ պրոֆ. Գ. Ղափանցեանի գործունէութիւնը: Այդ ուղղութեամբ հակամարտականը հանդէս էր գալիս իբր թէ մարքսիս-
տական. լենինեան լեզուաբանութեան դիրքերից, իսկ ըստ էութեան փորձում էր հերքել սովետական լեզուաբանութեան կարեւորագոյն ըս-
կերգումները:

— Մեր Ռեսպուբլիկայի մարքսիստ լեզուաբանները, — ասում է ընկեր Է. Աղայեանը, — կը կատարեն Հայաստանի բուլշեւիկների կենտ-
րոմիտէի կողմից իրենց վրայ դրուած պատասխանատու խնդիրները:

Իր սխալների ընդունմամբ միտում հանդէս եկաւ պրոֆ. Ա. Ղարիպեանը: Նա վճռականօրէն դատապարտեց այն հաշտուողական վերաբերմունքը, որ նա ցուցաբերել է պրոֆ. Ղափանցեանի աշխատու-
թիւնների նկատմամբ:

Միանշունքեամբ կը քուէարկուի բանաձեւ մը՝ «Հայաստանի Գործնական Պարտիայի Կեդր. Կոմիտէի» որոշումը «անշեղօրէն» կատարելու համար:

ՍՈՎԵՏՆԵՐՈՒ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐԿԻՈՅ

Ասլանտեանի Ռեյտին Թուրքիոյ մասնակցութեան մասին եղած Տրուկերն առթիւ, սովետական կառավարութիւնը բրաւ հետեւեալ ազ-
գարարութիւնը, որ լոյս տեսաւ «Սովետական Հայաստան»ի 1951 Նո-
յեմբեր 6ի թիւին մէջ:

Նոյեմբեր 3ին Թիւրքիայում ՍՍՍՄ Գեապան Ա. Ա. Կարիշչեւը այցելեց Թիւրքիայի վիցէ-պրեմիէր ու Արտաֆին Գործերի Մինիստրի պարտականութիւնների ժամանակաւոր պաշտօնակատար Ազադյուլիս Ե. Սովետական կառավարութեան յանձնարարութեամբ նրան արեց հե-
տեւեալ յայտարարութիւնը:

«Այսպէս կաշուած հիւսիս-ատլանտեան դաշինքի խորհրդի որոշ-
ման մասին, որով Թիւրքիան հրաւիրում է դառնալ այդ դաշինքի ան-
դամ, ինչպէս նաեւ Թիւրքական կառավարութեան՝ այդ հրաւերը ըն-
դունելու մտադրութեան մասին մամուլի հաղորդումների կապակցու-
թեամբ ՍՍՍՄ կառավարութիւնը անհրաժեշտ է համարում Թիւրքա-
կան Ռեսպուբլիկայի կառավարութեանը յայտարարել հետեւեալը:

Սովետական կառավարութիւնը իր պաշտօնական փաստաթղթ-
քերում արդէն մատնացոյց է արել, որ հիւսիս-ատլանտեան բլոկը ընդ-
հանուր ոչինչ չունի այդ բլոկի մասնակից պետութիւնների ինքնա-
պաշտպանութեան նպատակների հետ, որոնց վրայ, ինչպէս յայտնի է, ոչ ոք յարձակուել չի պարտաւստում, որ այդ բլոկը, ընդհակառակը, հետապնդում է ագրեսիւ նպատակներ եւ, այդպիսով, չի կարող ծառա-
յել խաղաղութեան ու միջազգային անվտանգութեան ամրապնդման գործին:

Ատլանտեան բլոկի կազմուելու ժամանակուանից ի վեր տեղի ունեցած իրադարձութիւնները, այն է՝ այդ բլոկի մասնակից երկրների միացեալ բանակ ստեղծելու, Արեւմտեան Գերմանիայի վերադառնալա-
նացման եւ այդ միացեալ բանակի կազմի մէջ հիւլերեան գեներալների գլխաւորութեամբ Արեւմտեան Գերմանիայի կազմուող կառնուար բա-
նակը մտցնելու միջոցառումները, սպառազինութիւնների ուժեղացող մրցակազմը, ուրիշ պետութիւնների տերիտորիաներում ամերիկեան ուղղակի բազաների ստեղծումն ու բնդլայնումը եւ մի շարք այլ ուղղ-
մական միջոցառումներ, ոչ մի կասկած չեն բողոքում, որ Ատլանտեան բլոկը հանդիսանում է Ամերիկայի Միացեալ Նահանգների գլխաւորութեամբ իմպերիալիստական պետութիւնների ագրեսիւ ֆազալականու-
թեան գործիքը:

Եղած բազմաթիւ տուեալների համաձայն, Թիւրքական տերի-
տորիայում ստեղծուած են ուղղակի-օղային եւ ուղղակի-ծովային բազա-

ներ՝ ԱՄՆի մասնագետների հրամանատարութեան ղեկավարութեամբ ու օգնութեամբ, ընդ որում կատարում է Սովետական Միութեան սահմաններին ամենից աւելի մօտ գտնուող ռազմական օդանավայանների լայն շինարարութիւն:

Այդ պայմաններում միանգամայն ակնհայտ է, որ Ատլանտեան բլուզի մէջ Թիւրքիային հրաւիրելը, որը ընդամին ոչ մի առնչութիւն չունի Ատլանտիկայի հետ, չի կարող նշանակել որեւէ այլ բան, բացի իմպերիալիստական պետութիւնների ձգտումը՝ քիւրքական տերիտորիան օգտագործել Սովետական Միութեան սահմանների մօտ ագրեսիւ նպատակներով ռազմական բազաներ ստեղծելու համար:

Սովետական կառավարութիւնը սպասում է Թիւրքական կառավարութեան բացատրութիւններին վերը շոշափուած հարցերի վերաբերեալ, նկատի ունենալով, որ ՍՍՌՄ-ն հանդիսանում է Թիւրքիային հարեւան պետութիւն եւ, բնականաբար, չի կարող անտարբեր մնալ դէպի այդպիսի փաստերը:

Սովետական կառավարութիւնը անհրաժեշտ է համարում նաեւ Թիւրքական կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրել այն պատասխանատուութեան վրայ, որ իր վրայ է վերցնում Թիւրքիայի կառավարութիւնը, մտնելով ագրեսիւ Ատլանտեան բլուզի մէջ եւ քայլ տալով, որ քիւրքական տերիտորիան օգտագործուի Սովետական Միութեան սահմանների մօտ օտարերկրեայ ռազմական բազաներ ստեղծելու համար:

**ՍՈՎԵՏՆԵՐԸ ԿԸ ՀՐԱԺԱՐԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԷՆ
(ԱՄՕԹԱԼԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ)**

Ս. Միութիւնը բազմաթիւ առիթներով քաջալերեց էջմիածինի Ազգ. Եկեղ. Փառովը, արտասահմանի Ազգային Ռորհուրդները եւ այլ կազմակերպութիւններ՝ արծարծելու Հայաստանի հողային պահանջները Թուրքիայէն: Այդ ուղղութեամբ բոլոր հայ զաղութիւններէն 1943էն սկսած շատ մը դիմումներ, հետադիրներ զրկուեցան Միացեալ Ազգերու կազմակերպութեան եւ Էրեք մեծ պետութիւններու նախագահներուն:

Այս դիմումները ոչ մէկ նպատակի ծառայեցին, քանի որ Ս. Միութիւնը տէր չկանգնեցաւ այդ պահանջներուն: Իսկ Թուրքիան աս-

տիճանարար աւելի մօտեցաւ արեւմտեան պետութիւններուն: զառնալով անոնց զինակէցը:

Ս. Միութիւնը պաշտօնապէս արծարծեր էր Նեղուցներու խընդիրը:

1946 Օգոստոս Տին, Ս. Միութեան ներկայացուցիչը էնկիւրիի մէջ, արտաքին նախարար Հասան Սաքալին յանձնեց յուշագիր մը (*), որով անբաւարար կը դոնէր Նեղուցներու մասին կնքուած Մոնթրէօյի դաշնագիրը: Յուշագիրը կը յիշատակէր, թէ անցած պատերազմին զերմանները ինչպէս օգտուեցան Նեղուցներէն եւ հինգ կէտերով պահանջ կը դէնէր, որ «Թուրքիոյ եւ Սեւ ծովի եզերքներուն վրայ գտնուող միւս պետութեանց ենթակայ պէտք է ըլլայ նշդումը վարչաձեւին նեղուցներու, որ Սեւ ծով մտնելու եւ Սեւ ծովէն ելլելու համար ջուրի բնական նամբայ մըն է»:

Թուրքիա երբեք ընթացք չտուաւ վերաքննութեան այս առաջարկին:

Գալով Հայաստանի հողային պահանջներուն, անոնցմէ հրաժարեցաւ Ս. Միութիւնը «անկախ» Հայաստանի անունով: Արտաքին գործերու նախարար Մոլոթով յանձն առաւ կատարել այդ ուրացումը, որուն դէմ բողոքեց ազատ աշխարհի հայութիւնը: Իսկ խորհրդային իշխանութեան բարեկամները նախընտրեցին մինչեւ այսօր լուռ մնալ:

Հայ ժողովուրդի հողային պահանջներու վաճառման այդ ամօթալի փաստաթուղթը լոյս տեսած է «Սովետական Հայաստան» պաշտօնաթերթի 1953 Յուլիս 19ի թիւին մէջ. կուտանք նոյնութեամբ:

ՍՈՎԵՏ-ԹՒՒՐԿԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Առջն թուի Մայիս 30ին ՍՍՌՄ Արտաքին գործերի մինիստր Վ. Մ. Մալոտովը Թիւրքական Ռեսպուբլիկայի դեսպան պրն. Խոզարին արեց յայտարարութիւն հետեւեալ բովանդակութեամբ.

«Սովետական կառավարութիւնը վերջին ժամանակներս զբաղուելով հարեւան պետութիւնների հետ ՍՍՌՄի յարաբերութիւնների հարցերով, այլ հարցերի թում ուշադրութիւն դարձրեց նաեւ սովետ-թիւրքական յարաբերութիւնների դրութեան վրայ:

«Ինչպէս յայտնի է, 1925 թուականի սովետ-թիւրքական պայմանագրի ժամկէտը լրանալու կապակցութեամբ, սովետ-թիւրքական յարաբերութիւնների կարգաւորման հարցը շոշափուել է մի քանի տարի

(* Յուշագիրը ամբողջութեամբ լոյս տեսած է «Յուսարբ»ի 1946 Օգոստ. 20ի թիւին մէջ:

սրամից առաջ(*) երկու պետութիւնների պաշտօնակում գրոյցներում: ԱՅՏ ԶՐՈՅՏՆԵՐՈՒՄ ՇՕՇԱՓԻՈՒՄ ԴԻՆ ԼԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԵՒ ՎՐԱ-ՑԱԿԱՆ ՍՍՈՒ ՈՐՈՇ ՏԵՐԻՏՏՐՈՒԱԿ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԹԻՒՐԿԻԱՅԻ ՆԿԱՏ-ԻՄԱՐ, ինչպէս նաեւ սովետ. կառավարութեան նկատմամբ Սե-ծովեան նեղուցների կողմից ՍՍՈՒՄ անվտանգութիւնը հնարաւոր սպառ. նախիքի վերացման վերաբերեալ: Թիւրքիայի կառավարական շրջանակ-ների կողմից այդ բանն ընդունուեց իրանցողիկ կերպով. մի բան, որ չէր կարող որոշ չափով չանդադարուի սովետ-թիւրքական յարաբե-րութիւնների վրայ:

ՅԱՆՈՒՆ ԲԱՐԻ ԳՐԱՑԻԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՀ-ՊԱՆՄԱՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՊՆՈՒՄԱՆ. ԼԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԼՆԱՐԱՒՈՐ ԼԱՄԱՐԵՑԻՆ, ԼՐԱՎԱՐՈՒԵԼ ԹԻՒՐԿԻԱՅԻ ՆԿԱՏԻՄԱՐ ԻՐԵՆՑ ՏԵՐԻ-ՏՈՐԻԱԿ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՑ: Իսկ ինչ վերաբերում է նեղուցների հարցին, ապա Սովետական կառավարութիւնը վերանայեց այդ հարցի վերա-բերեալ իր նախկին կարծիքը եւ նեղուցների կողմից ՍՍՈՒՄ անվտան-գութեան ապահովումը հնարաւոր է համարում ինչպէս ՍՍՈՒՄ այնպէս էլ Թիւրքիայի համար միատեսակ ընդունելի պայմաններով:

ԱՅՍՊԻՍՈՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏԱՐԱ-ՐՈՒՄ Է.ՈՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՈՉ ՄԻ ՏԵՐԻՏՈՐԻԱԿ ՊԱՀԱՆՁ ԶՈՒՆԻ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ:

Սոյն բուի Յուլիս 18ին թիւրքական դեսպան պրն. Խոզալը այ-ցելեց ՍՍՈՒՄ Արտաքին գործերի մինիստր Վ. Մ. Մոլոտովին եւ թիւր-քական կառավարութեան անունից նրան արեց հետեւեալ յայտարարու-թիւնը.

«Թիւրքական ռեսպուբլիկայի կառավարութիւնը ծանօթացաւ այն յայտարարութեան տեխտին, որ 1953 թուականի Մայիս 30ին Սո-վետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միութեան Արտաքին գործերի մինիստր նորին գերագոյնութիւն պրն. Մոլոտովը կարդաց եւ Մոսկուայում Թիւրքիայի դեսպանին յանձնեց, որը ասում է հետեւ-եալը. (այնուհետեւ լիովին վերարտադրում է Սովետական կառավա-րութեան վերոյիշեալ յայտարարութիւնը):

Ապա Թիւրքիայի կառավարութեան յայտարարութեան մէջ աս-ւում է.

«Թիւրքական Ռեսպուբլիկայի կառավարութիւնը գտնուեցաւ

(*) Այսինքն ութ տարի ասոջ, այն է՝ 1945ի Մարտին, երբ դատարարը դեռ աւարտած չէր, եւ Քրեմլը պահանջում էր վերականգնել 1914ի կողմաբ սահմա-նները եւ Ս. Հայաստանին ու Վրաստանին վերադարձնել բռնազբաւում հողածափը:

թեամբ ընդունում է ի գիտութիւն այն յայտարարութիւնը, որով ՍՍՈՒՄ կառավարութիւնը յայտարարում է, որ ՍՍՈՒՄ ոչ մի տերիտորիալ պա-հանջ չունի Թիւրքիայի նկատմամբ:

Թիւրքական Ռեսպ. կառավարութիւնը յայտարարում է, որ հո-գատարութիւնը բարի դրացիական յարաբերութիւնների պահպանման եւ իրազգութեան ու անվտանգութեան ամրապնդման մասին, որի նը-կատմամբ վկայակոչում է արւում այդ յայտարարութեան մէջ, ամ-բողջովին համապատասխանում է այն հոգատարութեանը, որ միշտ ցուցաբերել է եւ կը ցուցաբերի Թիւրքիան:

Ռեսպուբլիկայի կառավարութիւնը անհրաժեշտ է համարում այդ կապակցութեամբ ընդգծել, որ Սեծովեան նեղուցների հարցը, ինչպէս ի դէպ, այդ յայտնի է սովետական կառավարութեանը, կար-գաւորում է Մոնթրէի կոնվենցիայի դրոյթներով:

Իսկ Օզոստ. 5ին, Գերագոյն Խորհուրդի Գ. զումարումի Երդ — Եւ վերջին — նստաշրջանին, վարչապետ Կ. Մալենկով կը յայտարա-րէր.

«Ձեր բոլորիդ յիշողութեան մէջ է այն յայտարարութիւնը, զոր Խորհրդային կառավարութիւնը կատարեց թուրք կառավարութեան: Այդ յայտարարութիւնը էական նախապայմաններ կը ստեղծէ բարի-դրացիական յարաբերութեանց զարգացումի համար, եթէ, ի հարկէ, նաեւ Թուրքիա, իր հերթին, անհրաժեշտ ջանքեր ի յայտ բերէ այդ ուղղութեամբ: Յարաբերութեանց բարելաւումը Թուրքիայ եւ Ս. Միու-թեան միջեւ պիտի ծառայէր, անպայմանօրէն, երկու կողմի օգտին ալ եւ կարեւոր մուծանք մը պիտի հանդիսանար ապահովութեան գործի ամրապնդման համար Սեւ ծովի շրջանին մէջ»:

Մոսկուայի կողմէ Թուրքիոյ բարեկամութիւնը փնտռելու քա-ղաքականութիւնը շարունակուեցաւ 1953 Մայիս 30էն սողին:

Հայաստանի Գերագոյն Խորհուրդի նախագահութեան նախա-գահ՝ Շմաւոն Առուշանեան Մոսկուայի մէջ մասնակցեցաւ Սով. Միու-թեան Կեդրոնական Կոմիտէի պլենումին, որ զումարուեցաւ 1955 Յու-լիս 4-12, նաեւ Խորհրդ. Միութեան այն նստաշրջանին, որ զումար-ուած էր Օզոստ. 4ին՝ լսելու համար Պուլկանինի զեկուցումը՝ Փշնեկ խորհրդակցութեան արդիւնքներու մասին:

Շմ. Առուշանեան Սով. Միութեան Գերագոյն Սովետի Օզոստ. 5ի նիստին ելոյթ ունեցած եւ խօսած է սովետեւերանեան յարաբերու-թեանց եւ ապա Թուրքիոյ մասին յայտարարած է հետեւեալը.

«Անհրաժեշտ եմ համարում յայտարարել, որ մենք ցանկանում ենք, որ մեր հարեան թուրք ժողովրդի հետ հաստատուեն լաւ, բարի-

դրացիական յարաբերութիւններ: Սովետական Միութիւնը բազմիցս իր նախաձեռնութիւնն է ցուցաբերել այդ ուղղութեամբ: Մենք սպասում ենք, որ այդ բարի նախաձեռնութիւնը բարեացակամ արձագանգ գտնի նաև թուրքական կողմից» («Սովետ - Հայաստան», 7 Օգոստ. 1955):

ԽՐՈՒՇՉԵՒԻ ԿՐ ԿՐԿՆԷ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԷ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ

Մոլոտով, Մալենկով և Խրուշչև — Սթալինի յաջորդը — կը յայտարարեն, թէ Խ. Միութիւնը հողային որևէ պահանջ չունի Թուրքիայէն: Մոսկուայէն 1956 Նոյեմբեր 4ին տրուած հեռագիրը կ'ըսէ.

ԽՐՈՍԿՈՒԱ. — Պանտոնկի խորհրդաժողովին մասնակցող պետութեանց դիւանագետներուն կողմէ ի պատիւ Պիրմանիոյ վարչապետ Ու Նուի տրուած հացկերոյթի ընթացքին, Համայնավար կուսակցութեան Կ. Կոմիտէի առաջին փարտուղար Նիկիտա Խրուշչև, Մոսկուայի թուրք դեսպան Սէյֆալլահ Էզնի բացատրելով թուրքեւխորհրդային յարաբերութեանց մէջ սուսբեկած բարդութիւններու պատճառները երկու անգամ հաստատեց. թէ «յանցաւորը Բերիան էր»:

Պ. ԽՐՈՒՇՉԵՒԻ ՇԵՇՏԵՑ ՅԱՏԿԱՊԷՍ. Թէ և ՄԻՈՒԹԻՒՆԸ ՀՈՂԱՅԻՆ ՈՐՇԷԷՆ ՊԱՀԱՆՋ ԶՈՒՆԻ ԹՈՒՐԿԻԱՅԷՆ: Թուրք դեսպանը երբ յիշատակեց և Վրաստանի պահանջները. պ. Խրուշչև անմիջապէս պատասխանեց. «ՅԱՆՑԱՒՈՐԸ ԲԵՐԻԱՆ ԷՐ»:

Երբ պ. Խրուշչև մեղադրեց Թուրքիան, թէ հետամուտ չէ և Միութեան բարեկամութեան, թուրք դեսպանը պատասխանեց, թէ Թուրքիան չէր. որ իզոյց թուրքեւխորհրդային բարեկամութիւնը: «Յանցաւորը Բերիան էր», յայտարարեց կրկին պ. Խրուշչև և հաւաստեց խորհրդային կառավարութեան լաւագոյն զգացումները Թուրքիոյ հանդէպ:

Այս առթիւ Մոսկուայի դիւանագիտական շրջանակները դիտել կուտան, թէ պ. Խրուշչև ույն իմաստով ամբաստանութիւններ ըրաւ Բերիայի դէմ, երբ Պելլրատ հասաւ մարաշախտ Թիքոյի հետ հաշտուելու համար:

«ԷԶՄԻԱՄԻՆ»Ը ԿԻԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Բ. Համաշխարհային Պատերազմի երկրորդ տարին, 1941, Դաշնակիցները յաջողեցան իրենց հետ ունենալ Ռուսաստանը, որ ենթարկուած էր գերման արշաւանքին:

Շահելու համար Խ. Միութեան բարեկամութիւնը, Դաշնակիցները պատերազմի ընթացքին թոյլ տուին, որ սովետ պատուիրակութիւններ, մշակութային և եկեղեցական քողին տակ, այցելեն ու տեղաւորուին Միջին Արևելք, մինչև Եթովպիա:

Առաջին անգամ նման պատուիրակութիւն մը էջմիածնէն՝ Արսէն Կար. Ղլըճեան և Հ. Առաքելեան, Պէյրութ հասան 1941 Դեկտեմբերին: Ռուսական «օրհանթացիա» յի առաջին տուրքը կը վճարուէր, թոյլ տալով որ էջմիածնէն երկու պատուիրակներ մասնակցին Կիլիկիոյ կաթողիկոսի ընտրութեան:

Երկու պատուիրակներուն ստաբելութիւնը եղաւ «վեթօ» դնել և թոյլ չտալ, որ թէկնածու Գարեգին Կարսիկ. Տրապիզոնի կաթողիկոս ընտրուի: Պատգամաւորական ժողովը ցրուեցաւ, որովհետեւ Կիլիկիոյ միաբանները ենթարկուեցան Ղլըճեան-Առաքելեանի հրամանին:

Այդ թուականներուն, Դաշնակիցներու և Ռուսաստանի ռազմական, քաղաքական գործակցութիւնը աւելի սերտացաւ, որուն արտայայտութիւնը կը տեսնենք նաև հայ կեանքին մէջ տրուած արտօնութիւններով:

Այդ մթնոլորտին մէջ էր, որ 1945 Մայիս 10ին, Անթիլիասի մէջ կաթողիկոս կ'ընտրուէր Հրա. Ամերիկայի «Հայաստանեան Թեմ»ի Առաջնորդ Գարեգին Արք. Յովսէփեան: «Լրագր» համայնավար օրգանը կեղտոտ պալքար մը սկսաւ անոր դէմ և միայն երկու տարի ետք, 1945 Մարտ 23ին թոյլ տրուեցաւ Գարեգին Արք.ի՝ Լիբանան գալ: Անոր պարտադրուեցաւ՝ երեք ամիս ետք երթալ էջմիածին, Յունիս 16ին նախաբանել Ազգ. Եկեղեցական Ժողովին և Կիլիկիոյ Աթոռին հպատակութիւնը յայտնել էջմիածնին:

Մօտ եօթը տարի դահալայելի ետք Գարեգին Արք. վախճանեցաւ 1952 Յունիս 21ին: Ըստ կանոնադրի՝ մինչև վեց ամիս ընտրուութիւն տեղի պէտք է ունենար, բայց ընտրութիւնը ձգձկուեցաւ ամբողջ շորս տարի:

Կիլիկիոյ Թափուր Աթոռին թեկնածու կը ներկայանային Գարեգին Արք. Տրապիզոնի, Պաղ Արք. Աջապահեան և Դերենիկ Եպիս. Փոլատեան: Ասոնք 1941էն ասդին տեսած էին, թէ ինչ ուժի վրայ յենելով կարելի էր կաթողիկոս կամ պատրիարք ընտրուի:

Բայց Միջին Արևելքի մէջ կացութիւնը փոխուած էր և արա-

բական պետութիւնները Ֆրանսական ու անգլիական ազդեցութիւններէ, ճնշումներէ ձերբազատուելէ ետք, տրամադրութիւն չունէին անոնց տեղ բերելու սովետականը:

Լիբանանի եւ Սուրիոյ ազգային իշխանութիւնները կազմուած էին այն տարրերէն, որոնք կ'ըմբռնէին այդ փոփոխութիւնը եւ չէին ուզեր ենթարկուիլ արտաքին քաղաքական որեւէ ազդեցութեան:

Ահա այդ մարմիններու գլխաւորութեամբ, հայ զանդուածները քաջութիւնը ունեցան ազատելու Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը արտաքին ազդեցութիւններէ:

Կիլիկիոյ կաթողիկոսութեան տեղապահ ընտրուած էր Խորէն Եսլիսկ. Բարոյեան եւ որոշուած էր 1956 Փետր. 14ին ընտրել Գահակալը. առ այդ հրաւիրուած էին երեք թեմերու — Լիբանան, Սուրիա, Կիպրոս — պատգամաւորները:

Ահա այդ ատեն է, որ հայ եկեղեցական պատմութեան մէջ նախընթաց չունեցող ղէպք մը պատահեցաւ: Էջմիածինի նորընտիր Վազգէն կաթողիկոս (նախապէս Ռուստանիոյ Առաջնորդ), հազիւ քանի մը ամիսէ ի վեր ընտրուած եւ դեռ Կովկասի, Ռուսաստանի թեմերը չարցելած, բերուեցաւ Լիբանան, որպէսզի Կիլիկիոյ կաթողիկոս ընտրուի այն եկեղեցականը, որ կ'ենթարկուի ծանօթ քաղաքական ազդեցութեան:

Վազգէն կաթողիկոս, Փարիզի ճամբով, 1956 Փետր. 12ին, հասաւ Պէյրութի օդակայանը: Ազգային իշխանութիւնները կազմակերպած էին համաժողովրդական ընդունելութիւն:

Երկու օր ետք, Փետր. 14ին, Անթիլիասի մէջ գումարուեցաւ Պատգամաւորական Ժողովը: Կաթողիկոսը առաջարկեց, որ յետաձգուի այդ ժողովը եւ ժամանակ տրուի կողմերուն՝ թեկնածուի շուրջ բանակցելու:

Պատգամաւորական Ժողովը որոշեց նախ իր ղեւանը կազմել, օրինականացնել ժողովը եւ ապա յետաձգել նիստը: Անտարակոյս չխորհրդականանքներու թելադրանքով, դո՛հ չմնաց կաթողիկոսը եւ չմասնակցեցաւ ժողովին:

Այսուհանդերձ, Պատգմ. Ժողովը շարաթ մը յետաձգեց իր նիստը, բայց արդեւք մը չտուաւ: Որովհետեւ Վազգէն կաթողիկոս Փետր. 20ի առաւօտ կանուխ, նոյնքան անապարանքով մեկնեցաւ Լիբանանէն Գահիրէ, երթալու համար Երուսաղէմ, ուր պիտի գումարէր հպիսկոպոսական ժողովը:

Վազգէն կաթողիկոսի մեկնած օրը տեղի կ'ունենային երկու ամօթալի ղէպքեր: Հայ կիներ ղրկուած էին գրաւելու Անթիլիասի եկեղեցին, որպէսզի հոն տեղի չունենայ կաթողիկոսական ընտրութիւն:

Իսկ օդակայան Վազգէն կաթողիկոսին ողջերթի դացող Խորէն եւ Տասաւ եպիսկոպոսները կ'ենթարկուէին անարգ յարձակումի...:

Պատգամաւորական Ժողովը անտեսեց այդ գրգռումները, Գահիրէի սպօրէն «եպիսկոպոսական» ժողովի միջամտութիւնը եւ Փետր. 20ին ընտրեց, 36 պատգամաւորներու մասնակցութեամբ եւ 32 ձայնով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Զարեհ Եպիսկ. Փայասլեանը:

14414 ն մինչեւ այդ թուականը, Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը 515 տարիներու ընթացքին ունեցած էր 40 զահակալներ, վերջինը՝ Գարեգին արք. Յովսէփեան:

Մեծի չենք անդրադառնար մանրամասնութիւններուն ամօթալի այն պայքարին, որ դեռ կը շարունակուի Կիլիկիոյ կաթողիկոսութեան ղէմ: Կը գոհանանք յիշատակելով Պէյրութի «էն Նահար» թերթի 1956 Փետր. 22ի թիւով տրուած հետեւեալ յատկանշական տեղեկութիւնը.

«Մեծի Տանն Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոս Տ. Զարեհ Եպս. ընկերակցութեամբ եպիսկոպոսներու եւ երկու հայ երեսփոխաններու՝ պ. պ. Մովսէս Տէր Գալուստեանի եւ Տիգրան Թոսպաթի, այցելեց Համբարձումութեան Նախագահին:

Նորին Սրբազնութիւնը արժանացաւ պաշտօնական ընդունելութեան: Հանրապետութեան Նախագահը շնորհաւորեց Նորին Սրբազնութիւնը իր ընտրութեան առիթով եւ Հայ. Եկեղեցիին մագթեց բարօրութիւն եւ բարգաւաճում:

...Երկուշաբթի առաւօտ Լիբանանի ոռու դեսպանը կ'այցելէ պատ. գործոց նախարար պ. Սեյիմ Լահուտի, որուն հետ կ'ունենայ երկար տեսակցութիւն մը:

Դեսպանը տեղեկութիւններ ուզած է Կաթողիկոսի ընտրութեան զանազան փուլերու մասին: Կ'ըսուի թէ ան իր ՏԱԻԸ ՏԱՅՏՆԱՄ Է ԱՅՆ ԸՄԱՍԻՆ, ՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԷՆ Ա. ՉԱԽՈՂԵՑԱԻ ԻՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՄԷՁ:

Յետոյ խօսակցութիւնը դարձաւ Միջին Արեւելիքի քաղաքական կացութեան շուրջ, քանի մը օր առաջ պ. Մալոթովի ըրած յայտարարութեանց լոյսին տակ: Դեսպանը յայտնեց, թէ իր կառավարութիւնը կ'ուզէ սերտացնել այն բարեկամական կապերը, որոնք գոյութիւն ունին Խ. Միութեան եւ արաբական երկիրներու միջեւ:

Դիւանագիտական շրջանակները շահագրգռուած են Ռուսիոյ միջամտութեամբ Կիլիկիոյ Կաթողիկոսի ընտրութեան խնդրին մէջ:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՍ ՎԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1956 Յուլիս 22ին, Երևանի ռատիոկայանը տուաւ Վազգէն Ա. Կաթողիկոսի քարոզը, ուր ան կ'ըսէ.

«Մեծ ուրախութեամբ, իր կարգին կ'անտեմ ձեզ, թէ մինչեւ Սեպտեմբերի վերջերը կը վերաքաջուին տասը-տասնեւից մօտ եկեղեցիներ Հայաստանի մէջ, իսկ մինչեւ այս տարուան վերջը քանի մը տասնընեակ հայ եկեղեցիներ եւ շարք վանքեր եւ իրենց սուրբ դռները պիտի բանամ հաւատացեալներու առջեւ Վրաստանի, Ատրպէյճանի, Ղարաբաղի, Նախիջեւանի եւ անդրկասպեան երկիրներու մէջ»:

Անտարակոյս, Վեհափառին ինչ որ խոստացած են, այդ խոստումին արձագանգը կ'ըլլայ ան, ճիշդ ինչպէս որ Սթալին, իր ներկայութեան ընդունելով Զէօրէքճեան Կաթողիկոսը, անոր խոստացաւ թրքահայաստանի հողերը...

Ոչ միայն մեր հողերը եւ չուղեցին, այլեւ Հայաստանի անունով յուշակիր տուին, թէ որեւէ հողային պահանջ չունին թուրքիայէն: Իսկ մեր Վեհափառին բաժին մնաց լուել, քանի որ բողոքելու իրաւունքէն ալ զրկուած էր:

Անճիշդ են խորհրդային երկրէն ձայնափոռուած այն տեղեկութիւնները, թէ Հայ. Եկեղեցին ազատ է եւ թէ բան մը փոխուած է այդ մարզին մէջ:

Անհերքելի փաստեր կը բերկայացնենք ոչ թէ հին օրերէն, այլ այսօրուան դժբախտ իրականութենէն, զրի առնուած «էջմիածնասէր» Դերենիկ եպիսկոպոսի կողմէ:

1956ին լոյս տեսաւ անոր «Յերկիր հայրենի» հատորը, 290 էջ, տպագր. Անթիլիաս, պատկերազարդ:

Դերենիկ եպիսկ. 1945ին, 1953ին, 1954ին եւ 1955ին, չորս անգամ այցելած է էջմիածին: Իր այս հատորին մէջ կը ներկայացնէ վերջին տարիներուն կատարած այցելութիւնները Հայ եկեղեցիներու, վանքերու, պատմական վայրերու: Շատ ընդարձակ տեղ տուած է պատմական տեղեկութիւններու, զորս քաղած է Ալիշանի գործերէն: Հրատարակուած նկարները մեծ մասամբ հին են ու բազմաթիւ անգամներ տպագրուած վեհափառ Հրատարակութիւններու եւ Թորամանեանի ճարտարապետութեան երկու հատորներուն մէջ:

Ինչ որ խիստ արժէքաւոր է եւ կամաւոր կոյրերու աչքերը կըրնայ բանալ, տող ընդ մէջ արձանագրուած դառնութիւններն են:

ԳՕՇԱՎԱՆՔ

Դերենիկ եպիսկ. կ'այցելէ Դիլիջանի շրջանը, ուրկէ 10—12 քիլոմէթր հեռուն կը գտնուի Մխիթար Գօշի կողմէ կառուցուած Գօշավանքը. «Ներկայիս գաւիթն ու եկեղեցին լեցուած են ցորենով եւ այլ արմտիկով: Բայց ի՞նչպէս կ'ըլլայ այսպիսի սրբավայրի մը մէջ ցորեն ու արմտիկ կը մթերուի, կ'ըսեմ: — Գիւղացիներէն մին կը յարէ. «Իրանմէ ժամանակաւոր կարգադրութիւններ են» (էջ 64):

ԴԷՊԻ ՂԱՐԱԲԻԼԻՍԷ

Դէպի Կիրովական (Ղարաքիլիսէ) երթալու ատեն կը հանդիպի Համգէղիման Հայ գիւղը: Գիւղացիներ կը բողոքուին իր շուրջը.

— Եկեղեցի ունի՞ք, կը հարցնեմ:

— Այո՛, կը պատասխանեն, բայց գործօն չի:

— Ի՞նչ է անունը:

— Անունը, քա, չգիտենք, մեզմէ մեծերին հարցրէք:

— Սակայն դուք ալ տարիքով փոքր չէք, կ'ըսեմ, եւ կը յառաջանանք դէպի եկեղեցի:

Հարցումներս կը շարունակեմ.

— Ժամ, պատարագ կ'անէ՞ք:

— Չենք անում, ջնջուել են: Իսկ ժամը կոյսոգի պահեստի է վերածուել» (էջ 120):

ՍԱՆԱՀԻՆ

Սանահինի ճամբուն վրայ Դերենիկ եպիսկ. կը հանդիպի խումբ մը կիներու, կը հարցաքննէ զանոնք եւ կ'իմանայ, թէ ուխտի կ'երթան. «Շա՛տ հեռուն, Արցախ գաւառը»: «Բայց ինչո՞ւ էդքան հեռունները կը գնաք»: «Ի՞նչ անեմք, ժամ չունենք, քահանայ չունենք». «Հոգիս կը փոթորկի...» (էջ 129):

Սանահինի հոչակաւոր Հաղբատի մենաստանը «յցելելու առթիւ՝ կը տեսնէ դիւղին դպրոցը.

«Աշակերտները դրօսանքի կ'ելլեն եւ շուտով կը շրջապատեն մեզ. սեւ զրեւատով ու վեղարով բողոքովին տարօրինակ արարած մը կը թուի իրենց ու շատ չ'անցնիր, իրենց տարօրէն հետաքրքրութիւնը զուարճութեամբ կը փոխուի:

Ու այս տեսարանը Հաղբատի վանքին մէջ...:

Յուզումս արցունք կ'ըլլայ...» (էջ 147):

Հաղթատի վանքը, իր շրջակայքով, շատ հարուստ է պատմական յուշարձաններով:

Այդ վայրերէն հեռանալու ատեն, Դպրեվանքի նախկին տեսուչը կ'արձանագրէ. «Մօտ երեսուն տարի, ոչ ժամերգութիւն կատարուած եւ ոչ այ պատարագ մատուցուած է երբեմնի այս մեծապսակ գրգռատան ու սրբատեղիին մէջ: Ու վշտաբեկ, գլխիկար եւ ամօքահար կը նետուիմ իմքնաշարժին մէջ...» (էջ 161):

Աշակերտի շրջանին մէջ կ'երթան տեսնելու համբուսւոր Օձուների եկեղեցին, որ կառուցուած է 735 թուին: «Այս հնատարբ տաճարն այ քահանայ չունի. մթերանոցի վերածուած է: Գաւթին եւ տոտանին մէջ կէս մէթր բարձրութեամբ պատեր շինուած են եւ մթերուած են բերքը — ցորեն, լուբիս, խաղող եւ այլն — իրարմէ զատելու համար»: Ապիկոպոսը կը հարցնէ իրեն ընկերացող գիւղացիներուն. «Ժամ, պատարագ ունի՞ք: Ձեր երախաները մկրտել կուտա՞ք»: Կտրուկ պատասխան մը.

— «Մեզանում էդ բաները վերացել են» (էջ 167):

ՍԻՆՆԱՑ ԱՇԽԱՐՀԸ

Դերենիկ Լպիսկ. պատեհութիւն կ'ունենայ այցելելու նաեւ Չանգեղուր՝ Միւնեաց աշխարհը: Անոր մայրաքաղաք Գորիսի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, որ դեռ կը մնայ մթերանոց՝ գործածութեան մէջ: Եկեղեցին կողպ է» (էջ 186):

Եւ ահա հոչակաւոր Տաթևի վանքը. «Կը համբուրեմ պարիսպի դրան քարերը ու դարպասէն ներս կը մտնենք. կը յառաջանանք. գեղեկոտ են մեր քայլերը...»:

«Ո՛չ զանգահարութիւն եւ ոչ շարական, ո՛չ բուրվառ եւ ոչ կերոններ, ո՛չ խաչ եւ ոչ աւետարան, ո՛չ վարդապետներ. եւ ոչ ժողովուրդներ, ո՛չ ուխտաւոր եւ ոչ ժողովուրդ... կատարեալ աւերածութիւն եւ ամայութիւն...» (էջ 192):

Այստեղ յիշենք, թէ ճամբորդական շատ մը դժուարութիւններ ցոյց տրուած էին, որպէսզի Դերենիկ Լպիսկ. հրամարի Տաթև այցելելու զաղափարէն, բայց ան յամառօրէն պնդելով եւ յոգնութիւն յանձն առնելով հօն կը հասնի:

ԼՆՆԻՆԱԿԱՆ

Դերենիկ Լպիսկ. 1954ին Քաղաքի հետ կ'այցելէ Հայաստանի երկրորդ մեծ քաղաքը՝ Լենինական, նախկին Ալեքսանդրապոլը, հայ-

կական Շիրակը: Այս մեծ քաղաքին մէջ կան եղեր չորս հայ եկեղեցիներ. «ստոնցմէ միայն Ս. Աստուածածինը «գործօն» է» (էջ 216): Ապա կ'երթան Արթիկի շրջանը եւ Հառիճի վանքը, ուր կաթողիկոսներ օգափոխութեան կ'երթային. «Հառիճավանքը 1915էն ասդին վանահայր ունեցած չէ, եւ տարիներէ ի վեր իբրեւ պահեստարան կը գործածուի» (էջ 222):

Ինքնաշարժով կ'երթան սահմանամերձ Մաստարա գիւղը, որ 420 բնտանիք ունի. «Հինաւուրց տաճարը կառուցուած է է. դարուն. զեռ քսան տարի առաջ իրբեւ ծխական եկեղեցի գործածուեք է: Ներկայիս պահեստարանի վերածուած է. կոլխոզներու բերքերը հոս կը պահուին: Գիւղացիները կը խնդրեն. «Մի ժամ, մի պատարագ արէ՞ք մեզ համար»: «Կը մտնենք հնօրեայ հոյաչէն սրբավայրէն ներս. սակայն խունկի ու կնդրուկի անոյշ բուրումին տեղ, մթերուած արմտիքներում անախտը հոտը կուգայ մեր ռուզներում: Քաղ սրբազան յօնքերը կը պստէ. զէմքը խտուր կը խոժոռի. մինչ կը սպասենք իր գոռ ձայնի պտթկումին՝ ան արդէն դուրսն է, հեռացած տաճարէն» (էջ 273):

ԹԻՖԼԻՍ

Եւ ահա վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսը. «Նախապէս ունեցել է 28 հայ եկեղեցի, որոնցմէ միայն երկուքն՝ Ս. Գէորգ եւ Էջմիածնեցոյ Ս. Գէորգ բաց են ներկայիս» (էջ 277): Իսկ այնքան փառաւոր անցելու ունեցող ներսիսեան վարժարանը դադարած է գոյութիւն ունենալէ, գաղթականներ գետեղուած են. «Այդ գաղթականներէն ոմանք դեռ հուն կ'ապրին» (էջ 281): Անցեալին կառուցուած հայկական մեծ թատրոնը «գրաւուած է պետութեան» (էջ 286):

ՄՈՍԿՈՒԱՆ

Վերջապէս Մոսկուան. «Ներկայիս Մոսկուայի 65·000 հայերը չունին ո՛չ իւրնայտուկ եկեղեցի, ո՛չ դպրոց եւ ոչ այ որքեւ մշակութային հաստատութիւն: Նոյնիսկ հաւաքաւայր մը, ուր կարճեցայիմք ազգակիցներու հանդիպիլ» (էջ 259):

Կը բուռն այս քաղաքները՝ բնութեամբ համար այն աւերը, որ գործեր են ու դեռ կը գործեն ոտակերը: Ոչ միայն Լիրանանի, Սուրբոյ, Խրաքի, Իրանի եւ Եգիպտոսի մէջ հայերը ունին բազմաթիւ նուազեւն եկեղեցիներ ու ակումբներ, այլեւ հեռաւոր, օտար երկրներու մէջ կան նոր կառուցուած փառաւոր հայ եկեղեցիներ եւ ակումբներ:

Եթէ միամիտներ կան, որ կը հաւատան, թէ Ք. Միութեան

մէջ նոր եկեղեցիներ սկսած են բացուիլ, ինչո՛ւ արտասահման կը մնան իսպ, Շաւարչ եպիսկոսներ, Շահէ եւ Գնէլ վարդապետներ: Փոխանակ Լիբանանի հայութեան մէջ պատակուած սերմանելու, թող անմիջապէս մեկնին իւ. Հայաստան: Վազգէն Ա. Կաթողիկոս արտասահմանի մէջ յայտարարեց. «Եթէ այժմ հարիւր քահանայ ունենանք, կրնանք անմիջապէս տեղադրել գահոնք Հայաստանի մէջ» («Չմաստէր», Գէյրուսթ, 1956 թիւ 9, էջ 256):

Այս խօսքերը օգին մէջ կը ցնդին, Երբ գործեր չեն յաջողեր անոնց. քանի որ մթերանոցները չուտով պիտի պարպուին եւ Հայաստան «տասար-տասանքիմզ» եկեղեցի պիտի ունենայ, հոն պէտք է հրաւիրել Սփիւռքի այն եկեղեցականները, որոնք իւ. Միութեան թշնամիներու շարքին մէջ դատուած չեն եւ որոնց այնքան մեծ պահանջ կայ իւ. Հայաստանի մէջ...

ՀԱՅ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

ԸՍՏ «ԵՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԵԾ ՀԱՄԱՅՆԱԳԻՏԱՐԱՆ»Ի

(1950ի ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ)

Ներկայացուցինք «Հայկական հարցը բոտ Խորհրդ. ՄԼԾ Համայնագիտարանի» (էջ 225-228), առնելով 1926ի տպագրութենէն:

1950ի Բ. տպագրութեան մէջ յատկանշական փոփոխութիւն մը կայ, այլևս ոչ մէկ ակնարկութիւն զարական Ռուսաստանի աննպաստ դիրքի մասին հանդէպ Հայաստանի: Իսկ հայկական ջարդերուն մէջ պատասխանատուութիւնը կը բեռնուի հայ կուսակցութիւններուն վրայ:

«19րդ դարի ՏՕական քուականներու վերջերը եւ 90ական քուականներու սկիզբը հրապարակ եկան հայ բուրժուա-ազգայնական կուսակցութիւնները՝ Հնչակեան եւ Գաշնակցական, որոնք ոչ միայն չնրպատակեցին հայկական հարցի լուծումին, այլևս իրենց արկածախնդիր եւ անարեւելական գործունէութեամբ արիւնահեղ անշուքների ստիպումին Ապտիւր Համիտին: Թրքական կառավարութիւնը Հնչակ եւ Գաշնակ կուսակցութիւնների դէմ պայքարելու պատրուակով կազմեց հայկական հարցը «լուծելու» իր արիւնուշու ծրագիրը, հայերի ամբողջական բնաջնջումով»:

1926ի Համայնագիտարանը կը գրէր. «ԱՌԱՆՑ ԴԱՇՆԱԿՆԵՐՈՒ ՏԷՏԱՅԱԿԱՆ ԵՐԹՄԱՆ ԻՍԿ՝ ՀԱԼԱՄԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԵՐՈՒ ԴԷՄ, ԱՅՆՈՒԱՐԵՆԱՅՆԻՒ, ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅԻՆ»:

1950ի հրատարակութեան մէջ (Գ. հատոր). «Կույսերական Գերմանիան եւ Անգլիան պաշտպանեցին արիւնուշու Սուլթանը»: Ոչ մէկ ակնարկութիւն Ռուսաստանի մեղակցութեան:

Եւ աւելի ծիծաղելի. «ՀԱՅ ԲՈՒՐՃՈՒԱԶԻԱՆ ԵՒ ԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ «ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ» ՑԱՐԻՋՄԻ ՀԵՏ ՉՅՈՒՔ ՉԵՈՒՔԻ ՏՈՒԱԾ ՓՈՐՉՈՒՄ ԷՒՆ ԽԵՂԿԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԹՈՒՄԸ»:

«Նոյեալ ղէպերու շուրջ այս քաղուածքները բաւական համարելով, առ՛իք Համայնագիտարանի ծանօթութիւնները Արգի Հայաստանի մասին»:

Հայոց բնդհանուր թիւը մօտ 3,6 միլիոն է, որից 2,4 միլիոնը ապրում է Սովետ. Միութեան սահմաններում: Հայկական Ս. Ս. Հանրապետութեան մէջ ապրող հայերի թիւն է 1.067 հազար, (այս թուի վրայ 1946ին աւելցան 100.000 հայրենադարձ հայեր), Վրացական Ս. Ս. Հանրապետութեան մէջ՝ 383.000, Ադրբէջանի Ս. Ս. Հանրապետութեան մէջ՝ 355.000: Սովետական սահմաններից դուրս ապրող հայերի թիւն է — Իրանում՝ մօտ 130.000, Թուրքիայում՝ մօտ 125.000, Իրաքում եւ Պաղեստինում՝ 30.000, Սիրիայում եւ Լիբանանում՝ 150 հազար, Մերձուոր Արեւելքի միւս երկրներում՝ մօտ 120.000. Ժողովրդական Հանրապետութիւնների երկրներում՝ մօտ 80.000, Ֆրանսիայում՝ մօտ 120 հազար եւ Միացեալ Նահանգներում՝ մօտ 180.000: Սովետ. Միութեան սահմաններից դուրս ապրող հայերի բնդհանուր թիւն է մօտ 1,2 միլիոն:

Գաւտարարատի եւ մշակոյթի տեսակետից հայերը ներկայացնում են չորս գլխաւոր խմբաւորում — 1) Արարատեան դաշտի հայերը, որոնց բարբառը իմք ծառայեց ներկայ գրական լեզուին, 2) Արեւելեան գաւառների հայերը (Չանգեզուր, Լեռնային Արարաթ, Լոռի, Վազախ), 3) Արեւմտեան գաւառների հայերը (Բարձր Հայք, Փոփր Հայք), 4) Հարաւային եւ հարաւ-արեւմտեան գաւառների հայերը (Վրացական, Տարսի, Սասուն, Զեյթուն, Կիլիկիա):

...Հայաստանը հուսական կայսրութեան մէջ մտնելուց յետոյ հայ լուսաւորչական եկեղեցին ծառայեց հայ աւատապետական խաւերի եւ յետադէմ բուրժուազիւայի շահերին: Հայ եկեղեցին պայքարեց յեզուփոխական շարժման դէմ եւ ջանաց գանգաւածները պտեկ գոյաթիւն ունեցող կարգերի անվերապահ հնազանդութեան մէջ:

Մոցիլիզմի տարած յաղթանակը Սովետ. Միութեան մէջ զգալիորէն նսեմացրեց հայ եկեղեցու ազդեցութիւնը աշխատաւոր զանգուածների վրայ Սովետ. Հայաստանում: Ժողովրդական զանգուածների ննջման տակ հայ եկեղեցին ստիպուեց օրինապահ դիրք բռնել հանդէպ սովետական իշխանութեան: Հայրենական մեծ պատերազմի շրջանին նա ձեռք առաւ մի շարք հայրենասիրական գործեր: Հայ կաթողիկոսների աթոռակիստ վայրն է Էջմիածնայ վանքը, նրեւանից 18 ֆլում. հեռու: Ինչպէս Սովետ. Միութեան մէջ ապրող, նոյնպէս եւ այդ Միութիւնից դուրս գտնուող բոլոր հայերը ենթարկուում են Էջմիածնայ կաթողիկոսի կրօնական իշխանութեան:

Հայաստանի Ս. Ս. Հանրապետութիւնը դաշնակցային հանրապետութիւն է: Նա տարածուում է Անդրկովկասի հարաւային մասում, Սովետական պետական սահմանների վրայ եւ սահմանակից է Թուրքիոյ եւ Իրանի: Հայաստանի Ս. Ս. Հանրապետութիւնը հիւսիսից սահմանակից է Վրաստանի Ս. Ս. Հանրապետութեան եւ արեւելից Ադրբեջանի Ս. Ս. Հանրապետութեան: Նա բռնում է 29.800 քառ. ֆլումետր տարածութիւն, որ բաժանուած է 36 շրջանի: Ազգաբնակչութեան ընդհանուր թիւն է 1.281.600 շունչ (վիճակագրութիւն 1939ի) եւ մայրաքաղաքն է Երեւան:

Համաձայն 1926ի վիճակագրութեան, հանրապետութեան ազգաբնակչութեան թիւը եղել է 881.300 շունչ, իսկ 1939ի վիճակագրութեան համաձայն այդ թիւը հասել է 1.281.600ի, որ նշանակուում է 45.4 առ հարիւր յաւելում: Ազգաբնակչութեան խտութիւնը, որ շատ տարբեր է մէկ շրջանից միւրը, միջին հաշուով 45 մնձ է իւրաքանչիւր քառակուսի ֆլումետրի վրայ:

Ճարտարարուեստի զարգացման հետեւանձնով բարձրացաւ քաղաքների թիւը եւ նրանց յառաջդիմութիւնը: 1926ին քաղաքների ազգաբնակչութեան թիւն էր 167.100 շունչ (այսինքն՝ 19% ընդհանուր ազգաբնակչութեան), 1939-ին՝ 366,400 (28.6%): 1926-ից մինչեւ 1939-ը՝ քաղաքների ազգաբնակչութիւնը աճել է 119.3%-ով: 1949ին Հայաստանում արդէն կար 11 քաղաք եւ 14 քաղաքային տիպի աւան: Այս քաղաքների մեծ մասը ծախման կամ գոյութիւն չունէր եւ կամ թէ աննշան աւաններ էին: Հայաստանի մեծ քաղաքներն են՝ Երեւան (աւելի քան երկու հարիւր հազար բնակիչ, բայց 1939ի վիճակագրութեան եւ կենդանական): Միւս կարեւոր քաղաքներն են — Երևանի վանքը, Ալավերդի, Ստեփանաւան, Ղափան, Արթիկ, Գոյախ:

Հայերը կազմում են ընդհանուր ազգաբնակչութեան 82.8%ը, Ադրբեջանցիք 10.2%ը, Ռուսներ եւ Ուկրաինացիք՝ 4.4%ը, զանազաններ, 2.6%ը (վիճակագրութիւն 1939ի):

Համայնագիտարանին մէջ՝ Հայաստանի Ս. Ս. Հանրապետութիւն, պետական կազմ, աշխարհագրութիւն, ազգաբնակչութիւն, պատմական սկիզբ, Հայաստանի կոմունիստ(ք) կուսակցութիւնը, կամսմայ, արհմիութիւններ, Ժողովրդական տնտեսութիւն, հանրային տնտեսականութիւն, Ժողովրդական լուսաւորութիւն, դիտութիւն, փիլիսոփայութիւն, գրականութիւն, կերպարուեստ եւ ճարտարապետութիւն, թատրոն եւ սինեմա գլոսիւններուն տակ կան ընդարձակ ծանօթութիւններ:

Աւելցնենք, որ նոր յամանակներու վերաբերեալ տեղեկութիւնները միակողմանի են: Արեւմտահայ գրականութեան գրեթէ անց արուած չէ, յիշուած են միայն քանի մը անուններ: Իսկ արեւելահայ գրականութեան բաժնին մէջ կան Վրթանէս Փալիտայանի, Նար-Դոսի, Շ. Կարպիւնեանի, Նայրիի Չարեանի անունները, բայց բոլորէնէն չարածտութեամբ յիշատակուած չեն Ա. Ահարոնեանի, Լ. Շանթի, Ն. Աղբալեանի, Կ. Զարեանի, Եղիշէ Չարեանցի, Բակունցի, Գ. Մահարիի նման տաղանդաւոր գրողները:

ՎԻՃԵԼԻ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

Կարսի գաղնադրով Հայաստանէն անջատուեցաւ եւ Թուրքիոյ նուէր տրուեցաւ Կարսի ընդարձակ նահանգը եւ Սուրմալուի շրջանը:

Անդրկովկասի հանրապետութիւններու ստեղծման շրջանին, կրր 1936ի Սթալինեան սահմանադրութեամբ վերջնականապէս ճշտուեցան կրեք հանրապետութիւններու եւ ինքնավար շրջաններու սահմանները, գործնաւոր անիրաւութիւնները դարձուեցան մեր հայրենիքին հանդէպ:

Անդրկովկասի հանրապետութիւններու ստեղծման շրջանին, սպրով յայտնիները քանակաւ մօտաւորապէս հաւասար են: Բայց հողերու բաշխումի ընթացքին, հայրենակ յայրեր ձգուած են Վրաստանին եւ Ազրբեջանին: Ասոր հետեւանքով ալ Անդրկովկասի 187,740.6 քառ. ֆլումետր տարածութեանէն բաժին ինկած է.

Հայաստանին՝ 30,247.6 ֆ. ֆ. = 16.4 %

Վրաստանին՝ 69,525 ֆ. ֆ. = 37.3 %

Ազրբեջանին՝ 87,968 ֆ. ֆ. = 46.3 %

Մինչդեռ բնակչութեան տեսակետէն, Անդրկովկասի ընդհանուր բնակչութեան՝ 24.6 %ը հայեր, 25.6 %ը վրացիներ, 22.1 %ը թաթարներ են. մնացեալը զանազան ազգեր:

Ահա այն հողամասերը, որոնք, Հայաստանի պատկանելով հանդերձ, Ռուսաստան նուիրած է Ազրբէյջանի եւ Վրաստանի:

Շարուր նախիջեւան — Արարտեան դաշտի շարունակութիւնն է, որ միշտ պատկանած է Հայաստանի: Դեռ 1905ի հայթաթարական կոֆեներուն ատեն, չուն հոծ հայ բնակչութիւն կար եւ մեր հայուկները ուժգին հարուած տուին համաթուրանական ծրարներուն: Հայաստանի Հանրապետութիւնը 1919ին գրաւեց Շարուր նախիջեւանը: Հոնկ ստիպուեցանք աւելի ետ քաշուիլ, որովհետեւ այդ հողամասով Ռուսաստան ուզեց կապուիլ Տաճկաստանի, եւ Մոսկուայի (1921 Մարտ 16) ու Կարսի (1921 Հոկտ. 13) զաշնագրերով նախիջեւանը, նախկրայ անունով դարձուց ինքնավար շրջան, ենթակայ՝ Ազրպէյջանի: Մինչդեռ քարտէսին վրայ երբ նայինք, կը տեսնենք որ այդ երկուքին մէջտեղ կայ Զանգուրը: Նախիջեւանը միացած չէ Ազրպէյջանին: Անարդարութիւն մը գործուած է եւ ստեղծուած է անբնական վիճակ:

Նախկրայի տարածութիւնն է 5355 քառ. քիլ. բնակչութիւնը 1926ին 104,960 էր, որոնցմէ 11,276ր հայեր: Համաշխարային պատերազմէն առաջ հայերու թիւը 53,378 էր: Ասոնք գրուած են Անդրկովկասի զանազան վայրերը:

Լեռնային Ղարաբաղ — Հայ մելիքներու այս երկիրը դեռ այսօր ալ բացարձակ մեծամասնութեամբ հայաբնակ է: Նախկին Գանձակ նահանգի մէկ մասն է, 4200 ք. քիլ. տարածութիւն եւ 153,900 բնակիչներով (ըստ 1939ի վիճակագրութեամբ):

1920ին, երբ Ազրպէյջան խորհրդայնացաւ, Կարմիր բանակը Ղարաբաղ անցնելէ ետք մտաւ նախիջեւանի շրջանը եւ պաշարեց Հայաստանը:

Հայաբնակ այս շրջանը, որ մօտ է Հայաստանին, ուստերը կայծ չզարձուցին ինքնավար շրջան մեր հայրենիքին համար, այլ զայն ենթարկեցին Ազրպէյջանին: Այդ սրտուժը տրուեցաւ 1923 Յունիս 7ին Ազրպէյջանի Կեդր. Գործադիր Կոմիտէի կողմէ, նախաձեռնութեամբ Գ. Կ. Օրժանիկիմէի եւ Յ. Մ. Կիրովի:

Ախալքալակ եւ Լոռի — Պատմական Զուռախն է Ախալքալակը, իսկ Գուգարքի գաւառն է Լոռին: Երկուքն ալ տրուած են Վրաստանի: Մօտ են աւելի Ալեքսանդրապոլի, քան թէ Թիֆլիսի:

Ռուսերը առաջին անգամ 1831ին վիճակագրութիւն կազմեցին. Ախալքալակի, Ախալցխայի բացարձակ մեծամասնութիւնը հայեր էին:

1898ին Լինչ, Հայաստան այցելելու ատեն, կը գրէր իր երկհատոր գրքին մէջ, Ախալքալակի գաւառը ունէր 66 հազար բնակիչ, 58,000ը հայ: Ախալցխա քաղաքը նոյն թուականին ունէր 15 հազար բնակիչ, 12,495ը հայ:

1918ի հայ-թրքական պատերազմի շրջանին, երբ Հայաստան կ'ենթարկուէր արշաւանքի, վրացիները մտան Ախալքալակ եւ Լոռիի շրջանը:

Լոռին Հայաստանի պատմական այն մասն է, որ հիւսիսի արշաւանքները միշտ զիմացրուած է: Հոն կը գտնուին Հաղարատի ու Սանահինի նշանաւոր վանքերը:

1913ի կովկասեան տարեգիրքը այս գաւառի բնակիչներու թիւը ցոյց կուտայ 155,900, վրացիները՝ 7533, իսկ հայերը՝ 63,148, մը մնացեալը զանազան ազգեր՝ յոյն, սիւննի, ռուս եւն.:

Լոռիի շրջանէն միայն Արահվերտին միացուած է Հայաստանի, իսկ երեք գաւառակներ ձղուած են Վրաստանի:

Վիճելի հողամասերը եթէ միացուին Հայաստանի, ան պիտի ունենայ 47,764 ք. ք. տարածութիւն: Իսկ Ազրպէյջան եւ Վրաստան զարձեւալ պիտի մնան հողային տարածութեամբ աւելի ընդարձակ՝ առաջինը 70,772 ք. ք. իսկ երկրորդը 67,025 ք. ք. տարածութեամբ:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՔՈՆԿՐԵՍԻ ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԻ ՄԸ ԿԸ ՀԱՍՏԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

1954 Հոկտ. 13ի առաւօտեան, Նիւ Եորքի Պետական Դատարանին մէջ, Ամերիկեան Քոնկրեսի «Համայնավար Գրաւումներու Քննիչ Յանձնախումբ»ը, հրապարակային նիստի մը ընթացքին, քննեց Հայաստանի խորհրդայնացման պայմանները:

Վկայութեան կանչուած էին Դրօ, Ռ. Դարբիեան, Վ. Ահարոնեան եւ Բ. Նաւասարդեան:

Առաջին հերթին կանչուեցաւ Բ. Նաւասարդեան, որ ըրաւ պատմականը հայ ժողովուրդի ազատագրական շարժումին, Հայաստանի Ազատ ու Անկախ Հանրապետութեան հաստատման եւ համայնավարներու զաւաղրութեան, թուրքերու հետ միասին, տապալելու համար Հայաստանի անկախ հանրապետութիւնը:

Ռ. Դարբիեան տուաւ մանրամասնութիւններ համայնավար գործելակերպի մասին, յիշատակելով, թէ անոնց «թեքնիք»ը մնացած է

նոյնը մինչեւ այսօր: Հայաստանի պարագային ալ Մոսկուան ձեւացուց բարեկամ ըլլալ, բանակցութիւններ վարեց Շանիի առաջելութեան հետ Մոսկուայի մէջ, մինչ կը սրատրաստէր զինուորական յարձակում մը Հայաստանի դէմ թուրքերու եւ կարմիր բանակներու կողմէ:

Դրօ տուաւ զինուորական այն ուժերը, որոնք հարաւէն թէ հիտիւնէն յարձակում կատարեցին Հայաստանի Հանրապետութեան վերայ: Նշելով Գեկտ. 2, 1920ի դաշնագրի պայմանները, առ պատմեց, թէ ինչպէս համայնավարները ստնտկոխ ըրին այդ դաշնագրի բոլոր յանձնարարութիւնները, հայ վարիչները բանտարկելով, հայ սպայութիւնը տքստրելով եւ Հայաստանի հողերը թուրքին եւ այլոց բաշխելով:

Վ. Ահարոնեան նկարագրեց Հանրապետութեան վերելքը, պետական կեանքի բոլոր մարդերէն ներս: Նեց Սեւրի դաշնագիրը եւ այն հանդամանքը, որ նախագահ Ռիւբըն պիտի գծէր Հայաստանի սահմանները: Ան տուաւ նաեւ հետաքրքրական տեղեկութիւններ, թէ ինչպէս 600 տարուայ մէջ առաջին անգամ ըլլալով՝ Հայաստանը կազմակերպեց իր դատարանները՝ երգուեալ ատենակալներու գրութիւնը հաստատելով, մինչ ցարական Ռուսաստանի տիրապետութեան տակ եղած ժամանակ, Հայաստանի բնակիչները կը դատուէին Ռուսաստանէն զրկուած դատարաններու կողմէ:

Յանձնարարութիւնները, քննկրեմէն Փէյսոն, քննկրեմէն Մարքովիչ, իրաւական խորհրդատու Մքթայկ եւ Յանձնարարութիւն վարչական կազմի նախագահ Օքոնոր ջերմ շնորհակալութիւն յայտնեցին վկաներուն, որոնք հնարաւոր դարձուցին պաշտօնական հաստատումը այն պայմաններու, որոնց ներքեւ համայնավարները, դաւադրութեամբ, խորհուրթեամբ եւ զինուորական միջամտութեամբ, վերջ տուած էին Հայաստանի Անկախ Հանրապետութեան:

«Յունայթըա Փրես»ի, «Ատոշիէթըա Փրես»ի եւ Նիւ Եորքի բուրձր դիւտար թերթերու ներկայացուցիչները խմբուեցան վկաներու շարք՝ յսկեխալ մանրամասնութիւններ ու տեղեկութիւններ ստանալու համար:

Քննութեան բովանդակ արձանագրութիւնը կազմուած է Յանձնարարութիւն պաշտօնական քարտուպարութեան կողմէ եւ շուտով հրատարակութեան կը տրուի, մտաշէլի դատնալով լայն հատարակութեան:

Միաժամանակ Քննիչ Յանձնարարութիւնը պիտի կազմէ իր պաշտօնական ղեկուցումը Հայաստանի խորհրդայնացման պայմաններու մասին: («Յուսարեք» 1954 Հոկտ. 19):

Ինչպէս թուրքերը արեւմտահայ մտաւորականները, հանրային գործիչները, եկեղեցականները դէպի սպանդ առաջնորդեցին 1915 Ապրիլ 11/24ին, նոյնպէս Ռուսաստանի համայնավար վարչաձեւը ահաւոր հարուած մը տուաւ արեւելահայ մտաւորականութեան, պետական եւ զուսակցական դէմքերու:

Կատարեալ ջարդ մըն է, որ տեղի ունեցաւ մասնաւորապէս 1937 Հոկտեմբերէն 1938 Յունուարի վերջերը: Էնկապէտէի զազանարարայ պետ Եթով զեկավարեց «մաքրագործում»ը ամբողջ Ռուսաստանի մէջ եւ ձերբակալութիւնները, աքսորը եւ զնդակահարութիւնները ամբողջ չորս ամիս տեղի ունեցան Հայաստանի մէջ:

Բ. Համաշխարհային պատերազմին, Գերմանիոյ մէջ մնացած հայ զերիներ, ռուսական բանտէն ականատեսի ստոյգ տեղեկութիւններ բերին ազատ աշխարհին, հաղորդելով Հայաստանի մէջ կատարուած սպանդի մանրամասնութիւնները:

Հայաստանի տարագիրներէն Հայկ-Աքամ Եիբակեան կազմած է ցանկ մը, որ սահմոկեցուցիչ է: Այդ օրերուն առ դառնուած է Երեւան, իբրեւ պետական համալսարանի ուսանող եւ Հայաստանի կոմբրիտմիութեան պաշտօնաթերթ «Աւանգարդ»ի աշխատակից, մօտէն ծանօթ է այդ դաժան մաքրագործումներուն: Հեղինակը կը խոստովանի, թէ կազմուած այս ցանկին մէջ «մտնում եմ միայն հանրածանօթ եւ անուանի գոնեքը, այն էլ երբեք լրիւ ձեւով, քանզի դժուար է թէկուզ անուանիներին մի առ մի յիշել ու բուել, իսկ բալորին՝ մեր պայմաններում կատարելապէս անհետարին է»:

Ահա մեծ սպանդի զոհերը.

1. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿԾՈՒԹԵԱՆ ԿԵՆՏ-ԿՈՄԻ ԲԱՐՏՈՒՂԱՐՆԵՐ՝

Հայկազ Կոստանեան, Ազատ Կանչեան, Հ. Ամատունի, Գեորգի Գեորգեան, Սեդրակ Օտեան, Ստ. Ակոպով, Գ. Սարգսեան, Վարդանով:

2. ԿՈՒՍԱԿԾԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՄԱՏԻՃԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ՝

Ադո Արոյան, Յովսէփ Կարախանեան, Նազար Արոյան, Վաղարշակ Սո-
բիկեան, Սամսոն Փիլոյան, Կիրակոս Յարութիւնեան, Ազիկ Յարութիւնեան:

3. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐ՝

Սարգիս Կասեան, Արմենակ Անանեան, Բաղդատ Յարութիւնեան, Գևորգ
Համբարձում:

4. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԿՈՄԻ ԵՐԿԱՐԱՄԵԱՅ ԳԼԽԱՌՔ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Թուրքն Դաշտոյան:

5. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՎՈՐԾՈՐ ՀԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐ՝

Ս. Համբարձումեան, Սահակ Տէր—Գարբիլեան (պատուանից զորս
նկառած, Երևանի էնկոմիզլի բանաւած) Ա. Գուրոյան, Լ. Յովսէփեան:

6. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԿԱՎԷԴԻՅԻ ՊԵՏԵՐ ԵՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
ԼՒԱԶՈՐԵՐ՝

Մարտի Դուրգարեան, Մելիք—Յովսէփեան, Եսայր Ամբիսեան,
Մուղղաբի, Վիկտոր Խորոսեան (Խորոստով), Արուշեան, Արամ Մատուրեան,
Գևորգ Մատուրով, Ա. Տէր—Քաղնեան, Ս. Մակարեան, Զախմաստազեան,
Արեւշատեան, Խաչիկ Պաշիկեան, Վահան Գևորգեան, Փիլոս Փիլոյան:

7. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂՎՈՐԾՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ՝

Դուժեղի, Միշա Ենդիրբեան, Վարդան Մամիկոնեան, Մարջանեան, Կարօ
Գրիգորեան, Արսէն Եսայեան:

8. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՌՈՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ՝

Առջեակ Մուսեան (յետմահու զոգովորդի Բլեմիք, այժմ՝ վերա-
կանդեաւած), Լեւոն Արիսեան, Զարմայր Աչրաֆեան, Ներսիկ Ստեփանեան, Արտօ
Եղիազարեան (խելագարուած Մոսկուայի բանաւած), Արամ Վարդուպեան, Դրաս-
տամատ Տէր Միմնեան, Յովհաննէս Պողոսեան:

9. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՌՈՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱ-
ԿԱՆԵՐ՝

Սուսանայ Շահերգեան, Ս. Պալեան, Սուսանայ Իշխանեան, Անդր. Իսա-
հակեան, Սերիկ Դաթեան:

10. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԴԱՏԱԽԱՋՆԵՐ՝

Ա. Յովսէփեան, Պետիկ Թորոսեան, Մարտիրոս:

11. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԻՆՈՅԻ ՏՆՕՐԷՆԵՐ՝

Դանիէլ Դեմուրի, Հ. Համուրի:

12. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԶՐԱՍԻ ՏՆՕՐԷՆԵՐ՝

Սո. Խանոյան, Հայկ Դանոյան, Եգ. Զոփուրեան:

13. ԿՐԹԱԿԱՆ ՈԱՐՁՐԱԿՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴԵԿԱՎԱՐՆԵՐ՝

Վնամ Կոստանեան (Երևանի Պետական Համալսարանի ուսուցիչ), Անու-

շաւան Արզումանեան (Նոյն Համալսարանի ուսուցիչ), Տիգրան Մուշեղեան (բժշկական
ինստիտուտի ուսուցիչ, Թուրքաբուստ), Մուշեղ Սանթրոսեան (Երևանի մանկավար-
ժական ինստիտուտի ուսուցիչ), Սամուէլ Պետրոսեան (Երևանի մանկավարժական
ինստիտուտի ուսուցիչ), Սամսոն Գարբիլեան (Հեռակայ մանկավարժական ինստի-
տուտի ուսուցիչ), Սամսոն Գարբիլեան (Հեռակայ մանկավարժական ինստիտուտի
ուսուցիչ), Միշա Մազմանեան (Տարտարապետ, Հայաստանի դիտութիւններէ Այս-
դիմիայի տնօրէն):

14. ՀԳ ԿԵՆՏՐՈՆԿՈՄԻ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ՎՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱ-
ՌՔ ՍՈՒՂԱՐՆԵՐ՝

Ընծակ Տէր—Վանեան, Եղիա Զուրաբ, Մարգարեան Լեւոնէլ Մարու-
թեան:

15. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԵՐՍԻՍԻՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԿՈՄԻ ՔԱՐ-
ՏՈՒՂԱՐՆԵՐ՝

Լիպարիտ Բարեղեան, Մոկացեան:

16. ԱՅԼ ԱՆՈՒԱՆԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ՝

Ս. ԱՄԱՏՈՒՆԻ (անդրկոմիտեան երկաթուղու պետ), Եղիազարով (Աղբը-
րէջանի դիպտոստեութեան նախարար), Արամեան (Աղբըրէջանի անդադրիչնախարարու-
թեան նախարար), Համօ Սարգսեան (Հայաստանի Պետրոսիկի նախագահ), Սարգիսով
(Դոնրաթի մարզկոմի քարտուզար), Լ. Կարախան (ԽՍՀՄ-ի արտաքին գործերի նա-
խարարի տեղակալ), Վահան Տէր—Վանեանեան (Ընծակ Տէր—Վանեանեանի եղբայրը,
գործիչ Կրեմլում), Լ. Միրզոյան (Պաշտպանութեան կուսկենտկոմի քարտուզար),
Թուրքն (Աղբըրէջանի կուսկենտկոմի քարտուզար), Ս. Սարգսեան (Հայաստանի ԲԳՏ-ի
նախագահ), Վ. Սիբուրեան (Նոր Բայազետի զաւգործկոմի նախագահ), Դանուշ Շահ-
վերդեան (Ներքաղթի պատուիրակ), Դաւիթ Քոչարեան (Դարալազեակի զաւգործկոմի
նախագահ), Զարոյան (Դարալազեակի զաւգործկոմի նախագահ), Լազր Խանֆեր-
եան (Դարալազեակի զաւգործկոմի նախագահ), Գալոյան (Հայաստանի կուսկց. վե-
րահիլիչ յանձնաժողովի նախագահ), Հ. Համիլեան (Միկոյանի շրջկուսկոմի պա-
տասխանատու գործիչ), Ա. Այլիկեան (Գաւգործկոմի նախագահ), Լեւոն Շահերգե-
ան (Հայաստանի դիպտոստեութեան միւնիստրի տեղակալ), Աւետիք Գեորգեան,
Զուլախ Ա. (Լենինականի զաւգործկոմի նախագահ), Արամ Կոստանեան (Հայաստա-
նի ԹԻՔԻՆ արդիւնաբերութեան միւնիստր), Արամայիս Երզնկեան (Հայաստանի ժող-
կոմիտէի նախագահի տեղակալ), Գ. Հոնրի (Կուսկցական տեսարան, Երևանի պե-
տական Համալսարանի դիմատի դասախոս), Գ. Դեմիրճոյիան (նախարար), Ս.
տեղ տրուած չէ, յիշուած են միայն քանի մը անուններ: Իսկ արեւելա-
Մարդուսեան (Գաւգործկոմի նախագահ), Բերբերեան (զաւգործկոմի նախագահ), Յ.
Յովսէփեան (երկրատար կուսկցական զեկավար գործիչ), Վ. Մարտեան կուսկ-
ցական տեսարան, զբականազէտ, Ս. Պետեան (Հայաստանի Լուսաւորութեան նա-

խարարութեան բարձրագոյն պաշտօնեայ), Բակունց (գրող Բակունցի եղբայրը, անուանիչ գործիչ), Գարեգին Մատուռով (Երևան ջաղաքի կուսակցական ղեկավարներէն), Ռոպ Գինդրուր (Հայաստանի կուսակնտիկոմի ասպիին շարտուղար Ազատի Կանչեանի այրին), Ս. Թուման (կուսակցական բարձրագոյն ղեկավարներէն), Գրիգոր Վարդանեան (ներգաղթի գործիչ), Հ. Թեխեան (կուսակցական բարձրագոյն պաշտօնեայ), Պօղոս Մակինցեան (դիւանապետ, Պետհրատի ղեկավար), Ալիկ Յովհաննիսեան (յայտնի կին գործիչ), Շաւարշ Վարդունի (Ազգրկնտի յասարարութեան մեմբեր), Յար. Վարդանեան (նախարար), Դաւուտնց (Պարսկաստանի ղեկավար), Ալիկ Յովհաննիսեան (կուսակցական ղեկավար), Մարտին Մարտիրոսեան (Հիւսիսային Կովկասի մարզկոմի շարտուղար), Արշակ Մարտիրոսեան (խոշորագոյն անտեսական գործիչ), Դանգաղազեան (միլիցիայի ղեկավար), Հերսիկ (սկիւնուոր կին ղեկավար), Մարտիրոս Մարտիրոսեան (կուսակցական ղեկավար), Մովսէսեան (Հայաստանի կոմերիտիկոմեան կենտրոնի առաջին շարտուղար Մովսէսեանի եղբայրը), Ա. Շուշանեան (Լուսաւորութեան միւսիսարութեան բարձրագոյն պաշտօնեայ), Ա. Գապարեան (Ֆինանսական նախարարութեան պաշտօնեայ), Տօշեան (գիւղատնտեսական միւսիսարութեան պատասխանատու պաշտօնեայ), Սարգիս Կարապետեան (Երթեւեկութեան միջոցների ղեկավար), Երանոս Զարչեան (գիւղատնտեսութեան միւսիսարութեան բարձրագոյն պաշտօնեայ), Նահապետ Կարգինեան (կուսակցական բարձրագոյն գործիչ), Սարոխանեան (Բաղուի շարտուղարի նախագահ), Համո Իսրահէլեան (լինարարութեան միւսիսար), Մելիք-Հայկազեան (Բաղուի նախագահի որդեւարեութեան նախարարութեան պատասխանատու պաշտօնեայ, ճարտարապետ Բաղուի համալսարանի դասախօս) :

17. ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐ ԵՒ ԿՈՄԻՍԱՐՆԵՐ(1)

Աթոյեան (հայկական կարմիր բանակային ռազմաուժերի գերագոյն հրամանատար), Ասոյեան (հայկական կարմիր բանակային ռազմաուժերի հրամանատար), Խորէն Արբահամեան (հայկական կարմիր բանակային ռազմաուժերի կոմիսար), Վարդանով (հայկական կարմիր բանակային ռազմաուժերի կոմիսար), Մկրտիչ Գլորգեան (գնդի հրամանատար), Յովսէփեան (գնդի հրամանատար), Սարէն Գլորգեան (գնդի հրամանատար) :

(1) Մինչեւ 1930 թուականը ազգային հանրապետութիւններն ունէին իրենց կարմիր բանակային ռազմաուժերը, որոնք կը գտնուէին իրենց հանրապետութիւններու մէջ : Հետագային լուծարքի ենթարկուեցան : Պատերազմի ընթացքին Ստալինը նպատակադարձաբար գտաւ կրկին կազմակերպել ազգային դիւիզիաներ : Հայկական դիւիզիան, պարզապէս Զաքեանի հրամանատարութեամբ, գրեթէ ամբողջութեամբ ոչնչացաւ Կուրան եւ Էրիմ մղուած մարտերի ընթացքին : Զոհուեցան նաեւ Զաքեանը : Պատերազմէն ետք ազգային այլ դիւիզիաները վերստին մտնողաբար համարուեցին եւ լուծարքի ենթարկուեցան :

18. ԳՐՈՂՆԵՐ ԵՒ ԲԱՆԱՏՅԱՆՆԵՐ(2)

Եղիշ Զարեց (նահատակուած Երեւանի էնկավիզի բանտում՝ 1937 թուականի գեկտեմբերին), Ալիկ Բակունց (նահատակուած), Վահան Թոթովնց (նահատակուած), Մկրտիչ Զանոն (Թատերադիր, նահատակուած), Զապէլ Եսայեան (նահատակուած), Մ. Գարբինեան, Մամիկոն Վարդանեան (գիւղագիրներ), Ս. Թաբեան, Փարտիզուղ-Միտ, Հ. Արապոյ, Լեւ-Կամար, Վ. Բոնուի, Ան. Ղարեբեան, Յարութիւն ճաղարեան (գիւղագիր), Արշալիր Ղարաչիլեան (Թատերադիր), Վահան Ատաբեկեան (Մ. Տոլստոյի «Աննա Բարեկիս» վէպի թարգմանիչը), Ա. Գառնակեբեան, Խոշիկ Հրաչեան, Վահան Արամունի, Մ. Մերուսան, Խորէն Ռադիս, Ա. Միմեռեան, Ե. Լուսնց, Գահար Աւագան, Ան. Սահեան, Գրիգոր Արսունի, Հ. Պօղոսեան, Վահան Միրաբեան (լուծ ու հալածմամբ հեղած), Ատաբեկ (սովմամբ արուած Լենինականում) :

19. ԳՐԱՔՆԱԿԱՆՆԵՐ, ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԼՈՒՍԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԲՆԱԿԻՆԻՍԻՒՆԵՐ(3)

Յ. Սուրբաթեան (գրականագետ-բրոֆեսոր), Դամբարեան (բրոֆեսոր-բնակապետ), Դամբարեան (նրա եղբայրը, զոյցեան), Նաւակասիկեան (բրոֆեսոր), Բեգլեան (բրոֆեսոր), Ս. Մարտիրոսեան (բրոֆեսոր), Թաղեան Արալըկեան (բրոֆեսոր), Խոշ. Արալըկեան (նրա եղբայրը), Խորէն Տէր-Աւագեան (բրոֆեսոր), Վ. Յակոբեան (պրոֆեսոր-թէլագոյետ), Հմայեակ Տէր-Աւագեան (զոյցեան), Հայրէկ-Տէր-Աւագեան (զոյցեան), Արալ Տէր-Աւագեան (թէլագոյետ), Շաւարշ Տէր-Աւագեան (զոյցեան), Հ. Էլիբեկեան (բրոֆեսոր), Հ. Յովհաննիսեան (բրոֆեսոր), Գորգէն Էղիշեան (հոգեբան-բրոֆեսոր), Ասկարեան (հոգեբան-բրոֆեսոր), Անտոն Անտոնեան (բնագետ), Նիկ. Սարգսեան (բնագետ-թարգմանիչ), Իւզարչեան (դարմանագետ), Նշան Ալուկեան (լիզուոյէտ), Սահ. Թորոսեան (մանկագիր-գիտնական), Սեթ Յարու-

(2) Այս ցանկին մէջ չի ընդգրկուած անունները այնպիսի գրողներու եւ լուսնակներու, որոնք տարիներ շարունակ, սկսած 1937 թուականէն մինչեւ վերջին ժամանակներու, տառապեցան իրենց լուսնակներու մէջ եւ համակենտրոնացման ճամբարներու մէջ եւ միայն վերջերս ազատուեցան ու վերադարձան հայրենիք :

Ասոնք են՝ Գորգէն Մահարի, Վաղարշակ Նորեց, Վահրամ Արապան, Մրկրտիչ Արմէն, Լիւիս Թարգիւ (վախճանուէր 1956 թուին), Ազատի Վարդանեան, Պահար :

(3) Այս բանին մէջ չկան այն բանասիրուած, աքտորուած ու հալածանքի ենթարկուած գիտնականներու, գրաբնագետներու, յասարարութեան գործիչներու անունները, որոնք հետագային ազատուեցան : Ասոնք են՝ Սիմոն Յակոբեան, Նորայր Դարազեան (վախճանուած 1955 թուին), Արմուր, Վահան Ռշտունի, Յակոբ Զօրեան, Թուրքի Թերլեմեզեան (վախճանուած) :

Քիւնեան (ժանկավարժ-գիտնական), Փոթիկեան (լեզուաբան), Գորգէն Վանունդէրի (շորհարի, անուն հանած երիտասարդ գրականագէտ-քննադատ, նահատակուած էնկավիզէի բանուած, Երևանի մէջ), Գարեգին Մանուկեան (գոցեհետ), Յուլիա Կանգան (գոցեհետ) Արշալիր Մելիքեան (փիլիսոփայ), Արամայիս Քաջազնունի (Հայաստանի Հանրապետութեան առաջին վարչապետ Յովհաննէս Քաջազնունու եղբայրը, ականաւոր զիւղատեսես), Մ. Մուրազեան (ժանկավարժ), Մկրտիչ Խաչատրեան (Լեւինականոն ջազաչի յայտնի ժանկավարժ), Նալբանդեան (ժանկավարժ), Միքայէլ Մելիք-Օհանջանեան (տնտեսագէտ), Ա. Մելիք-Օհանջանեան (տնտեսագէտ), Գ. Քոչար (ճարտարագէտ), Հ. Տէր-Աստուածարեան (ճարտարագէտ), Մ. Միքայէլեան (ժանկավարժ), Հ. Միքեան (կենդանաբան), Թ. Գարբէշեան (բնագէտ), Տարազրոս (արուեստագէտ), Աշխարհբէկ Քալանթար (պրոֆեսոր-հնագէտ, Արեւելի պատմութեան ժանագէտ), Ս. Արովեան (հնագէտ), Խոզարաշեան (բժշկագետ), Սաթիկ Սարգսեան (ժանկավարժ), Գ. Կուլոզեան (գրականագէտ), Արմենակ Տէր-Գրիգորեան (ժանկավարժ), Արշալիր Տէր-Աւագեան (ժանկավարժ), Հայկազ Գրիգորեան (ժանկավարժ), Գառնիկ Մանուկեան (ժանկավարժ), Կիրակոսեան (Լեւինական ջազաչի ականաւոր ժանկավարժ), Պարսեան (ժանկավարժ-ուսուցիչ), Մարտիրոս Պետեան (ժանկավարժ), Վ. Դարեան (ժանկավարժ), Արմենակ Իւանովիչ Բարայեան (ժանկավարժ, ականաւոր ջիմպազէտ), Ստամբուլցեան (ժանկավարժ-Թարգմանիչ Շիլլերի), Լ. Կանգան (կենդանաբան), Մ. Մանուչարեան (երկրաբան), Ա. Շաւարշեան (պրոֆեսոր), Ա. Տէր-Ղեւնդեան (պրոֆեսոր), Գ. Աստուր (ժենանուն Թարգմանիչ), Խոստիկեան (լեզուաբան-գրականագէտ) :

20. ԻՐԱՒԱԳԷՏՆԵՐ՝

Մերական Տիգրանեան (Երևանի մատենադարանի գիտական աշխատող, Հայկական իրաւարանութեան ժխկ գիտնական-իրաւարանը), Գ. Զուբար, Հ. Զալուեան, Հախումեան :

ԱՅԼ ԿԱՐԳԻ ՄՏԱԿՈՐԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՁՆԵՐ՝

Յովհաննէս Քաջազնունի (Հայաստանի Հանրապետութեան առաջին վարչապետ, նահատակուած), Կորիւն Ղազարեան (ականաւոր հրապարակաչիք, Թիֆլիսի հայկական «ԱՇԽԱՍԱԽՈՐ» թերթի խմբագիր), Կամարական (ականաւոր բժիշկ), Ե. Յովհաննիսեան (նկարիչ), Կավրոշ, — Երուանդ Թալալեան (երգիծարան եւ դերասան), Լ. Յարութ (յայտնի դերասան), Ե. Սողոմոնեան (յայտնի դերասան), Գառնիկեան (ականաւոր զիւղատեսես-գիտնական), Գէորգ Եազուրեան (երաժշտավար), Ա. Փրոսեմեան (զօրավար Փրոսեմեանի եղբորորդին, մասնագիտութեամբ՝ բժիշկ), Հ. Բողոյեան (բժիշկ), Տարոն Տարոնեան (բժիշկ), Սոֆիկ Եսայեան (յայտնի զրոյ Զապէլ Եսայեանի դուստրը, ուսուցչուհի), Տիգրան (յայտնի ճարտարապետ, Զապէլ Եսայեանի փեսան), Ստ. Ստեփանեան (կրթական-ժանկավարժական զօրծիչ), Գէորգ Մովսէսեան (ճարտարապետ, ճեմարանի զօրծիչի վարիչ), Մ. Կարապետեան (ժանկա-

յարժ), Ղ. Աղարեկեան (ժանկավարժ), Կ. Խանամիրեան (դատաւոր), Իրեզալեան (դատաւոր), Մ. Մարգարեան (անասնաբոյժ), Մ. Յովհաննիսեան (խմբագիր), Արթուր Արմէն (զրոյ Մկրտիչ Արմէնի կրտսեր եղբայրը, բանաստեղծ) :

• • •

Ինչպէս մեր աշխատակիցը կը յայտնէ, կարելի չէ լրիւ նկատել այս ցանկը : Մանաւանդ կը պակսին խորհրդային վարչաձեւի Հաստատման առաջին սերունդի ներկայացուցիչները, որոնք Զինովիւնի, Պոխարինի, Կամենեւի հետ մաքրագործուեցան :

Յիշենք մոռցուած անուններէն՝ Կասեան, Լուկաշին, Դաւթեան (դեկապան Վիեննայի եւ Աթէնքի մէջ՝ Բէլգրատեան (Հայաստանի առաջին արտաքին գործավարը), սոցիալ-դեմոկրատ Դաւիթ Անանուն :

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻԱ
(ԷՄԵՆԱԿԱՆ ՕՐԷՆՔ) (*)**

Գ Լ Ո Ւ Խ Ա .

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԸ

ՅՕԴՈՒԱԾ 1. Հայկական Սովետական Սոցիալիստական Ռևոլյուցիոնար Կուսակցությանը և դիկտայինների սոցիալիստական պետությունն է:

ՅՕԴՈՒԱԾ 2. Հայկական ՍՍՌ-ի Քաղաքական Հիմքն են կազմում աշխատավորների դեպրոտատների Սովետները, որոնք աճել ու ամրապնդուել են կուլտամտալիզմի ու կապիտալիստների իշխանությունը տապալելու, հայ ժողովուրդը ցարիզմի և բուսական իմպերիալիստական բուրժուազիայի սպառնալիքից ճանաչելու, զաշնակցական նացիոնալիստական կոնտրոլուցիան ջախջախելու և պրոլետարիատի դիկտատուրան նուսճելու հետեւանքով:

ՅՕԴՈՒԱԾ 3. Հայկական ՍՍՌ-ում ամբողջ իշխանությունը պատկանում է քաղաքի և գիւղի աշխատավորներին՝ յանձինն աշխատավորների դեպրոտատների Սովետներին:

ՅՕԴՈՒԱԾ 4. Հայկական ՍՍՌ-ի տնտեսական հիմքն են կազմում տնտեսության սոցիալիստական սխտեմը և արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը, որոնք հաստատուել են տնտեսության կապիտալիստական սխտեմի լիկիդացիայի, արտադրության գործիքների ու միջոցների մասնա-

(*) Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի կողմէ 1947 թ. ընդունուած փոփոխութիւններով, իսկ 47, 53, 54 յօդուածները փոփոխութեան ենթարկուած են 1954 Մայիս 18ի հրամանագրով:

Կը ներկայացնենք «Կոնստիտուցիայի» (Սահմանադրութեան) կարեւոր չորս գլուխները, զազափար մը կազմելու համար այն իրատակարարի մասին, որ պարտադրուած է մեր հայրենիքին:

Յօդուած 15ա, 30 (ժ, Ի), 44 (Է), 47, 53 րէն տրամադրութիւններ ունին արտաքին գործերու նախարարութեան մասին, թայց ասոնք մեռեալ տուա են. քանի որ Հայաստան ոչ մէկ երկրի մէջ դիւանագիտական ներկայացուցիչ չունի: Հայաստան տէր չէ նաեւ ազգային բանակի:

ւոր սեփականութեան վերացման և մարդու կողմից մարդու շահագործումը ոչնչացնելու հետեւանքով:

ՅՕԴՈՒԱԾ 5. Հայկական ՍՍՌ-ում սոցիալիստական սեփականությունն ունի կամ պետական սեփականությունն են (համաժողովրդական ունեցումը), կամ կուպերատիվ-կոլտոզային սեփականությունն են (առանձին կոլտոզների սեփականություն, կուպերատի միասուրմների սեփականություն):

ՅՕԴՈՒԱԾ 6. Հողը, նրա ընդերքը, ջրերը, անտառները, զսրծարանները, ֆաբրիկաները, հանքահորերը, հանքերը, երկաթուղային, ջրային ու օդային տրանսպորտը, բանկերը, կապի միջոցները, պետության կազմակերպած դիկտատնտեսական խոշոր մենարկությունները (սովխոզները, մեքենատրակտորային կայանները և այլն), ինչպէս նաեւ կոմունալ մենարկությունները և բնակարանային հիմնական ֆունդը քաղաքներում ու արդիւնաբերական վայրերում, պետական սեփականություն են, այսինքն՝ համաժողովրդական ունեցումը:

ՅՕԴՈՒԱԾ 7. Կոլխոզների ու կուպերատի կազմակերպությունների հանրային մենարկություններն իրենց կենդանի ու մեռուլ ինտեսարով, կոլխոզների և կուպերատի կազմակերպությունների արտադրած արտադրանքը, ինչպէս նաեւ նրանց հանրային շինությունները, կազմում են կոլխոզների ու կուպերատի կազմակերպությունների հանրային, սոցիալիստական սեփականությունը:

Իւրաքանչիւր կոլխոզիկի տնտեսություն, բայց կոլխոզային հանրային տնտեսությունից ստացած հիմնական եկամտից, անձնական օգտագործման համար ունի տնամերձ ոչ-մեծ հողամաս և որպէս տնձնական սեփականություն՝ օժանդակ տնտեսություն տնամերձ հողամասում՝ բնակելի տուն, մթերատու անասուններ, թռչուններ և պրոլետարիստական մանր ինտեսար՝ դիկտատնտեսական արտելի կոնսուպրութեան համաձայն:

ՅՕԴՈՒԱԾ 8. Կոլխոզների գրողները հողն ամբացում է նրանց՝ անվճար և անմասկոտ օգտագործման համար, այսինքն՝ առյաւել:

ՅՕԴՈՒԱԾ 9. Տնտեսության սոցիալիստական սխտեմի հետ միասին, որը տնտեսության արեւակառոզ է ևն է Հայկական ՍՍՌ-ում, օրէնքով թրջատուրում է մենտանտես պրոլոցիների ու անաշնագործների մանր մասնաւոր տնտեսություն, որը հիմնուում է անձնական աշխատանքի վրայ և բացառում է որեւի աշխատանքի շահագործումը:

ՅՕԴՈՒԱԾ 10. Քաղաքայինների անձնական սեփականության իրաւունքը աշխատանքային եկամտուների ու խնայուքությունների, բնակելի տան և տնային ֆոնդի պակ տնտեսութեան, անային տնտեսութեան և տարեկան գործածութեան տարեկանը, տնձնական սպորտան ու յարմարութեան տարեկանների նկատմամբ, ինչպէս նաեւ քաղաքայինների անձնական սեփականությունը ժառանգելու իրաւունքը, պահպանուում են օրէնքով:

ՅՕԴՈՒԱԾ 11. Հայկական ՍՍՌ-ի տնտեսական կենտրոն որոշում և նրան օգտութիւն է ապրիս պետական ժողովրդատնտեսական պլանը՝ հանրային հարստու-

Քրիստոսի առաքելությունը աշխատանքներ ենթարկված ու կուլտուրական մակարդակն անընդունաբեր է բարձրացնելու, սոցիալիստական պետության անկախությունն ամրացնելու և նրա պաշտպանունակությունն ուժեղացնելու նպատակով:

ՅՈՒՌԱԿԱՆ 12. Հայկական ՍՍՌ-ում աշխատանքի ընդունակ իրաքանչիւր քաղաքացու պարտականությունը է պատուի գործն է՝ համաձայն չով չի աշխատում, նա չի ուսումնասիրում սկզբունքներ:

Հայկական ՍՍՌ-ում իրազորման է սոցիալիզմի սկզբունքը՝ «իրաքանչիւր էրէջ՝ ըստ նրա ընդունակության, իրաքանչիւրին՝ ըստ նրա աշխատանքի»:

Գ Լ ՈՒ Խ Ք.

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԸ

ՅՈՒՌԱԿԱՆ 13. Տնտեսական և քաղաքական, ինչպէս նաև պաշտպանության գծով փոխադարձ օգնությունն իրազորման նպատակով Հայկական Սովետական Սոցիալիստական Բնակարանային կամուրջ կերպով միաւորուել է իրաւահարաւոր հետևանքով Սովետական Սոցիալիստական Բնակարանային Քաղաքացիական Պաշտպանության ՍՍՌ, Բնակարանային ՍՍՌ, Ուղղակիական ՍՍՌ, Ղազարական ՍՍՌ, Վրացական ՍՍՌ, Աղբրեղանական ՍՍՌ, Լիւսիական ՍՍՌ, Մուղղական ՍՍՌ, Լատիական ՍՍՌ, Կիբրիզական ՍՍՌ, Տալիկական ՍՍՌ, Բուրգանական ՍՍՌ, Էստոնական ՍՍՌ, Կարելի-Ֆիննական ՍՍՌ հետ որպէս մի միութենական պետություն՝ Սովետական Սոցիալիստական Բնակարանային Միութիւն:

Նշելով զրանից, Հայկական ՍՍՌն պահանջում է ՍՍՌ Միութեն համար՝ յանձնել նրա իշխանութեան բարձրագոյն օրգանները և պետական կառավարման օրգանները՝ ՍՍՌ Վերականգնողական Կոմիտեի 14րդ յօդուածով որոշուած իրաւունքները:

ՍՍՌ Վերականգնողական Կոմիտեի 14րդ յօդուածի սահմաններէջ գուրս Հայկական ՍՍՌն պետական իշխանութիւնն իրազորման է ինքնուրոյն կերպով, լիովին պահպանելով իր սուզներն իրաւունքները:

ՅՈՒՌԱԿԱՆ 14. Հայկական ՍՍՌն պահանջում է Սովետական Սոցիալիստական Բնակարանային Միութիւնից ազատ կերպով գուրս գալու իրաւունքը:

ՅՈՒՌԱԿԱՆ 15. Հայկական ՍՍՌի տերիտորիան չի կարող փոփոխուել առանց Հայկական ՍՍՌի համաձայնութեան:

ՅՈՒՌԱԿԱՆ 15ա. Հայկական ՍՍՌ իրաւունք ունի անմիջական յարաբերութիւններ մէջ մտնելու օտարերկրային պետութիւնների հետ, նրանց հետ համաձայնագրեր կնքելու և գիտնագիտական ու հիւպատոսական ներկայացուցիչներ փոխանակելու:

ՅՈՒՌԱԿԱՆ 15բ. Հայկական ՍՍՌն ունի իր օկուպիրիկական զօրային կազմաւորումները:

ՅՈՒՌԱԿԱՆ 16. Սովետական Սոցիալիստական Բնակարանային Միութեն օրէնքները պարտադիր են Հայկական ՍՍՌի տերիտորիայում:

ՅՈՒՌԱԿԱՆ 17. Հայկական ՍՍՌի իւրաքանչիւր քաղաքացի հանդիսանում է ՍՍՌ Քաղաքացի:

Հայկական ՍՍՌի տերիտորիայում միութենական միւս բոլոր օկուպիրիկաների քաղաքացիների օգտուած են Հայկական ՍՍՌի քաղաքացիների բոլոր իրաւունքներէջ:

ՅՈՒՌԱԿԱՆ 18. Հայկական ՍՍՌի իրաւասութեանը, յանձնել նրա պետական իշխանութեան և պետական կառավարման բարձրագոյն օրգանները, ենթակայ են՝

- ա) Հայկական ՍՍՌի Կոնստիտուցիայի սահմանումը և նրա օրհանգումները:
- բ) Հայկական ՍՍՌի շրջանային բաժանման և շրջանների սահմանների որոշումը:
- գ) զիւղական, անանային և քաղաքային սովետների կազմումը և նրանց սահմանների որոշումը:
- դ) Հայկական ՍՍՌի օրէնքների հրատարակումը:
- ե) պետական կարգի և քաղաքացիների իրաւունքների պահպանութիւնը:
- զ) Հայկական ՍՍՌի տոլուարանտեսական պլանի հաստատումը:
- է) Հայկական ՍՍՌի պետական բիւջէի և նրա կառուրման հաշուետւութեան հաստատումը:
- ը) պետական և տեղական հարկերի, տուրքերի և ոչ-հարկային եկամուտների սահմանումը ՍՍՌ օրէնքութեան համապատասխան:
- թ) Հայկական ՍՍՌի շրջանների և քաղաքների տեղական բիւջէների իրաւորման ղեկավարումը:
- ժ) պահանջարկային և խնայողական գործի ղեկավարումը:
- ի) օկուպիրիկական ենթակայութեան բանկերի, արդիւնաբերական, գիտնատեսական և տնտեսական ձեռնարկութիւնների ու կազմակերպութիւնների կառուարումը, ինչպէս նաև տեղական արդիւնաբերութեան ղեկավարումը:
- լ) միութենական ենթակայութեան ձեռնարկութիւնների վիճակի և կառուարման վերահսկումն ու հետևումը:
- կ) Տղից, բնիքերից, անտաններից ու ջրերից օգտուելու կարգի սահմանումը:
- ճ) բնակարանային և կոմունալ տնտեսութեան, բնակարանային շինարարութեան և քաղաքների ու այլ բնակավայրերի բարեկարգութեան ղեկավարումը:
- դ) անտնայարհային շինարարութիւնը, տեղական տրանսպորտի և կապի ղեկավարումը:
- է) աշխատանքային օրէնքութիւնը:
- զ) առողջապահական գործի ղեկավարումը:

- դ) սոցիալական ապահովության գործի ղեկավարումը.
- ե) տարրական, միջնակարգ և բարձրագույն կրթության գործի ղեկավարումը.
- զ) Հայկական ՍՍՌի կուլտուր-լուսատեղական և դիտական կազմակերպությունների ու հիմնարկների ղեկավարումը և սեպտուբրիական նշանակություն ունեցող կուլտուր-լուսատեղական կազմակերպությունների ու հիմնարկների կառավարումը.
- յ) Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի գործի ղեկավարումն ու կազմակերպումը.
- ն) Հայկական ՍՍՌի դատական օրգանների կազմակերպումը.
- չ) Հայկական ՍՍՌի քաղաքացիության իրաունք ստաց.
- ս) օրենսդրության ամուսնություն և ընտանիքի մասին.
- շ) Հայկական ՍՍՌի դատական օրգանների կազմակերպության գաղաքացիներին ամենօրյա և ներսման շնորհակալ.
- պ) միջազգային յարաբերություններում Հայկական ՍՍՌի ներկայացուցչության սահմանումը.
- ը) Հայկական ՍՍՌի գործային կազմաօրոճներ ստեղծելու կարգի սահմանումը.

807-ՈՒՈՒՅ 19. Հայկական ՍՍՌ-ն բաղկացած է՝ Ազիզբեկովի, Ալազեազի, Ալափեղզու, Ախուսի, Ախուրեանի, Ազիզի, Ամասիայի, Աշտարակի, Ալյուրանի, Արթիկի, Արտաշատի, Բասարգեչարի, Բերիայի, Գորիսի, Գիլիջանի, Զանգրատարի, Էջմիածնի, Քալինի, Իջևանի, Կալինինոյի, Կիրովականի, Կոտայքի, Կրասնոսելյակի, Հսկանդրեանի, Ղարաբաղյանի, Ղափանի, Ղուկասանի, Մարտունու, Մեղրու, Միկոյանի, Նոյեմբերյանի, Նոր Բայազետի, Շամշուղի, Սեւանի, Սիսիանի, Սյուխանի, Ստեփաննայանի, Վեդու շրջանների և շրջանների կազմի մեջ՝ շամշուղ և Սիսիան ու Լենինական քաղաքներից, որոնք առանձնացրած են որպես ինքնուրույն վարչական միություններ և անմիջականորեն ենթարկում են սեպտուբրիական օրգաններին:

Գ Լ Ո Ւ Խ Գ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊԱԲԼԻԿԱՆԻ

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՕՐԳԱՆՆԵՐԸ

- 807-ՈՒՈՒՅ 20.** Հայկական ՍՍՌի պետական իշխանության բարձրագույն օրգանը Հայկական ՍՍՌի Գերագույն Սովետն է:
- 807-ՈՒՈՒՅ 21.** Հայկական ՍՍՌի Գերագույն Սովետն ընտրում է Հայկական ՍՍՌի քաղաքացիների կազմից բաղ ընտրական օկրուգների, չորս տարի ժամանակով, 5000 բնակչից մեկ պատգամավոր նախաձեռնում:

807-ՈՒՈՒՅ 22. Հայկական ՍՍՌի Գերագույն Սովետն իրազեկում է Հայկական ՍՍՌի Կոնստիտուցիայի 13րդ և 18րդ յօդուածներով Հայկական ՍՍՌի վերականգնում և Վերականգնված Հայկական ՍՍՌի կազմակերպության մասին, պահանջները, ինչ չափով որ պահանջ, կոնստիտուցիայի համաձայն, չեն մտնում Հայկական ՍՍՌի Գերագույն Սովետին հաշուետու օրգանների՝ Հայկական ՍՍՌի Գերագույն Սովետի Նախագահության, Հայկական ՍՍՌի Մինիստրների Սովետի և Հայկական ՍՍՌի Մինիստրների իրաւասութեան մէջ:

807-ՈՒՈՒՅ 23. Հայկական ՍՍՌի Գերագույն Սովետը Հայկական ՍՍՌի միակ օրենսդիր օրգանն է:

807-ՈՒՈՒՅ 24. Օրենքը հաստատուած է համարում, եթէ այն ընդունուած է Հայկական ՍՍՌի Գերագույն Սովետի կազմից ձայների պարզ մեծամասնութեամբ:

807-ՈՒՈՒՅ 25. Հայկական ՍՍՌի Գերագույն Սովետի ընդունած օրենքները հրատարակում են Հայկական ՍՍՌի Գերագույն Սովետի Նախագահության Նախագահի և Գաղափարի ստորագրութեամբ:

807-ՈՒՈՒՅ 26. Հայկական ՍՍՌի Գերագույն Սովետն ընտրում է Հայկական ՍՍՌի Գերագույն Սովետի Նախագահ և նրա երկու տեղակալ:

807-ՈՒՈՒՅ 27. Հայկական ՍՍՌի Գերագույն Սովետի Նախագահը ղեկավարում է Գերագույն Սովետի նիստերը և տնօրինում է նրա ներքին կարգը:

807-ՈՒՈՒՅ 28. Հայկական ՍՍՌի Գերագույն Սովետն ընտրում է Գերագույն Սովետի Նախագահություն՝ բաղկացած Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահից, նրա երկու տեղակալից, Նախագահության Գաղափարից և Նախագահության Գաղափարից:

807-ՈՒՈՒՅ 29. Հայկական ՍՍՌի Գերագույն Սովետի առաջ իր ամբողջ գործունեութեան հաշուետու է Հայկական ՍՍՌի Գերագույն Սովետի Նախագահութեանը՝

- 807-ՈՒՈՒՅ 30.** Հայկական ՍՍՌի Գերագույն Սովետի Նախագահութեանը՝
 - ա) գումարում է Հայկական ՍՍՌի Գերագույն Սովետի սեփականը.
 - բ) հրատարակում է հրամանագրեր.
 - գ) մեկնարանում է Հայկական ՍՍՌի գործող օրենքները.
 - դ) կատարում է համաժողովրդական հարցում (ոնֆերենցում).
 - ե) վերացնում է Հայկական ՍՍՌի Մինիստրների Սովետի որոշումներն ու կարգադրությունները՝ օրենքին անհամապատասխան լինելու դեպքում.
 - զ) Հայկական ՍՍՌի Գերագույն Սովետի սեփականների միջև ընկած ժամանակաշրջանում Հայկական ՍՍՌի Մինիստրների Սովետի Նախագահն առաջադրում պաշտոնից ազատում և նշանակում է Հայկական ՍՍՌի առանձին Մինիստրներին, հետապնդում ներկայացնելով Հայկական ՍՍՌի Գերագույն Սովետին ի հաստատութեան.
 - է) պարզեցանում է պատուգրով և չորսում է Հայկական ՍՍՌի պատուաւոր կոչումներ.
 - զ) տալիս է Հայկական ՍՍՌի քաղաքացիութեան իրաւունք.

Ք) իրազորմամ է Հայկական ՍՍՌի դատական օրգանները կողմից դատապարտում քաղաքացիներին ներումն չնորհելու իրաւունքը:

Ճ) նշանակում է Հայկական ՍՍՌի դիւանագիտական ներկայացուցիչներ օտարերկրեայ պետութիւններում եւ յետ է կանչում նրանց:

Ի) բնչունում է օտարերկրեայ պետութիւնների իրեն կից լիազօրազրուած դիւանագիտական ներկայացուցիչների հաւատարմազրերն ու յետկանչման դրերը:

ՅՕԴՈՒԱՄ 31. Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետի սեփակաները գումարում է Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետի նախագահութիւնը՝ տարեկան երկու անգամ:

Հերթից դուրս սեփակաները գումարում է Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետի նախագահութիւնն իր հայեցողութեամբ կամ Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետի ղեկուսատեաների մէկ երկրորդի պահանջով:

ՅՕԴՈՒԱՄ 32. Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետն ընտրում է Մանդատային յանձնաժողով, որն ստուգում է Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետի ղեկուսատեաների լիազօրութիւնները:

Մանդատային յանձնաժողովի առաջադրմամբ Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետը որոշում է կամ ընդունել առանձին ղեկուսատեաների լիազօրութիւնները, կամ բեկանել նրանց ընտրութիւնները:

ՅՕԴՈՒԱՄ 33. Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետը, երբ անհրաժեշտ է դանում, նշանակում է քննիչ ու վերստուգիչ յանձնաժողովներ ամէն մի հարցի վերաբերմամբ:

Բուրբ հիմնարկներն ու պաշտօնատար անձերը պարտուոր են կատարել այդ յանձնաժողովների պահանջները եւ նրանց ներկայացնել անհրաժեշտ նիթեր եւ փաստաթղթեր:

ՅՕԴՈՒԱՄ 34. Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետի ղեկուստար չի կարող դատական պատասխանատուութեան կանչուել կամ ձերբակալուել առանց Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետի համաձայնութեան, իսկ Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետի սեփակաների միջեւ ընկած ժամանակաշրջանում՝ առանց Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետի նախագահութեան համաձայնութեան:

ՅՕԴՈՒԱՄ 35. Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետի լիազօրութիւնները լրանալուց յետոյ Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետի նախագահութիւնը նշանակում է նոր ընտրութիւններ Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետի լիազօրութիւնները լրանալուց յետոյ ամենուոր երկու ամսուայ ընթացքում:

ՅՕԴՈՒԱՄ 36. Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետի լիազօրութիւնները լրանալուց յետոյ Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետի նախագահութիւնը պահպանում է իր լիազօրութիւնները մինչեւ Հայկական ՍՍՌի նորընտիր Գերագոյն Սովետը կողմի Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետի նոր նախագահութիւն:

ՅՕԴՈՒԱՄ 37. Հայկական ՍՍՌի նորընտիր Գերագոյն Սովետը գումարում է Հայկական ՍՍՌի նախկին գումարման Գերագոյն Սովետի նախագահութեան կողմից ամենուոր ընտրութիւններից երեք ամիս յետոյ:

ՅՕԴՈՒԱՄ 38. Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետը կողմում է Հայկական ՍՍՌի կառավարութեան՝ Հայկական ՍՍՌի Մինիստրները Սովետ:

ՅՕԴՈՒԱՄ 39. Հայկական ՍՍՌի օրէնքները, ինչպէս նաեւ Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետի նախագահութեան հրամանադրերն ու ձեկնարարութիւնները, Հայկական ՍՍՌի Մինիստրները Սովետի որոշումներն ու կարգադրութիւնները հրատարակում են հայերէն, ռուսերէն եւ աղբրջաներէն լեզուներով:

Գ Լ Ո Ւ Խ Գ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԸ

ՅՕԴՈՒԱՄ 40. Հայկական ՍՍՌի պետական իւրանութեան բարձրագոյն զործադիր եւ կարգադրիչ օրգանը Հայկական ՍՍՌի Մինիստրները Սովետն է:

ՅՕԴՈՒԱՄ 41. Հայկական ՍՍՌի Մինիստրները Սովետը պատասխանատու է Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետի առաջ եւ հաշուետու է նրան, իսկ Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետի սեփակաների միջեւ ընկած ժամանակամիջոցում՝ Հայկական ՍՍՌի Գերագոյն Սովետի նախագահութեան առաջ, որին հաշուետու է:

ՅՕԴՈՒԱՄ 42. Հայկական ՍՍՌի Մինիստրները Սովետը ՍՍՌՄ եւ Հայկական ՍՍՌի օրէնքների, ՍՍՌՄ Մինիստրները Սովետի որոշումների ու կարգադրութիւնների հիման վրայ եւ ի կատարումն այդ օրէնքների, որոշումների ու կարգադրութիւնների՝ հրատարակում է որոշումներ ու կարգադրութիւններ եւ ստուգում է նրանց կատարումը:

ՅՕԴՈՒԱՄ 43. Հայկական ՍՍՌի Մինիստրները Սովետի որոշումների ու կարգադրութիւնների կատարումը պարտադիր է Հայկական ՍՍՌի ամբողջ տերիտորիում:

ՅՕԴՈՒԱՄ 44. Հայկական ՍՍՌի Մինիստրները Սովետը՝ ա) ժխտում է ուղղութիւն է տալիս Հայկական ՍՍՌի Մինիստրութիւնները եւ իր դերատեսչութեանը ենթակայ տնտեսական ու կուլտուրական այլ հիմնարկների աշխատանքին, ժխտում է ստուգում է համաժողովների կողմից լիազօրների աշխատանքը:

բ) միջոցներ է ձեռք առնում ժողովրդատնտեսական պլանն իրադրծելու:

գ) միջոցներ է ձեռք առնում Հայկական ՍՍՌի պետական եւ տեղական բիւջէներն իրազործելու:

դ) միջոցներ է ձեռք առնում հասարակական կարգն պահպանելու, պետութեան շահերը պաշտպանելու եւ քաղաքացիների իրաւունքները պահպանելու:

ե) ղեկավարում է ստուգում է աշխատատեաների ղեկուսատեաների քաղաքային եւ շրջանային Սովետների զործադիր կամիտները աշխատանքը:

դ) անհրաժեշտ դեպքերում կազմում է Հայկական ՍՍՌ-ի Մինիստրների Սովետին կից անտեսական և կուլտուրական շինարարության գործերի յատուկ կոմիտեներ և Գլխավոր վարչություններ:

կ) իրականացնում է զեկափարութիւնն ստարերկրայ պետութիւնների հետ Հայկական ՍՍՌ-ի յարաբերութիւնների ասպարկում, էյնիլով միութենական ռեսպուբլիկաների և օտարերկրայ պետութիւնների փոխյարաբերութիւնների վերաբերեալ ՍՍՌ-ի Միութեան սահմանած ընդհանուր կարգից:

ը) զեկափարում է Հայկական ՍՍՌ-ի գորային կազմաւորումների ստեղծումը:
ՅՕԴՈՒԱՄ 45: Հայկական ՍՍՌ-ի Մինիստրների Սովետն իրատուք ունի կասեցնելու աշխատանքների զեկուտատների բաղաբային և չըբնային Սովետների որոշումներն ու կարգադրութիւնները, վերացնելու աշխատանքների զեկուտատների բաղաբային և չըբնային Սովետների գործադիր կոմիտեների որոշումներն ու կարգադրութիւնները:

Մինիստրների Սովետն իրատուք ունի վերացնելու Հայկական ՍՍՌ-ի Մինիստրների հրամաններն ու հրահանգները:

ՅՕԴՈՒԱՄ 46: Հայկական ՍՍՌ-ի կառավարութիւնը կամ այն Մինիստրը, որոնց ուղղում է Հայկական ՍՍՌ-ի Գերագոյն Սովետի զեկուտատի հարցապնդումը, պարտաւոր են երեք օրից ոչ ուշ բանուր կամ զբաւոր պատասխան ապ Հայկական ՍՍՌ-ի Գերագոյն Սովետում:

ՅՕԴՈՒԱՄ 47: Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը կազմում է Հայկական ՍՍՌ Գերագոյն Սովետի կողմից՝ հետեւեալ կազմով:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ:

Մինիստրների Սովետի նախագահի տաջին տեղակալներ:

Մինիստրների Սովետի նախագահի տեղակալներ:

Հայկական ՍՍՌ մինիստրներ՝

Անտառային արդիւնաբերութեան, Առողջապահութեան, Առևտրի, Աստամորիային տրանսպորտի և խճուղային ճանապարհների, Արդարադատութեան, Արտաշին գործերի, Բնակարան-բաղաբայիական շինարարութեան, Գիւլտունտեսութեան, Լայն սպասման արդիւնաբերական սպրանքների, Լուսաւորութեան, Կոմունայ անտեսութեան, Կուլտուրայի, Մտեղէնի և կաթնեղէնի արդիւնաբերութեան, Ներքին գործերի, Շինանիւթերի արդիւնաբերութեան, Պաշտպանութեան, Պարենային սպրանքների արդիւնաբերութեան, Պետական վերահսկողութեան, Զրային տնտեսութեան, Սոցիալական սպահովութեան, Տեղական արդիւնաբերութեան, Ֆինանսների, Պետական պրանային յանձնառողմի նախագահ, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական անվտանգութեան կոմիտէի նախագահ:

ՅՕԴՈՒԱՄ 48: Հայկական ՍՍՌ-ի Մինիստրները զեկափարում են պետական կառավարման այն հիւղերը, որոնք մանում են Հայկական ՍՍՌ-ի իրատասութեան մէջ:

ՅՕԴՈՒԱՄ 49: Հայկական ՍՍՌ-ի Մինիստրները համապատասխան Մինիստրութիւնների իրատասութեան սահմաններում՝ ՍՍՌԻ և Հայկական ՍՍՌ-ի սրէն-

ների, ՍՍՌԻ և Հայկական ՍՍՌ-ի Մինիստրների Սովետի որոշումներն ու կարգադրումներն և միութենական-ռեսպուբլիկական Մինիստրութիւնների հրամաններն ու հրահանգներն հիման վրայ և ի կատարումն այլ օրէնքների, որոշումների, կարգադրութիւնների, հրամանների ու հրահանգների՝ հրատարակում են հրամաններ ու հրահանգներ և ստուգում են նրանց կատարումը:

ՅՕԴՈՒԱՄ 50: Հայկական ՍՍՌ-ի Մինիստրութիւնները լինում են միութենական-ռեսպուբլիկական կամ ռեսպուբլիկական:

ՅՕԴՈՒԱՄ 51: Հայկական ՍՍՌ-ի միութենական-ռեսպուբլիկական Մինիստրութիւնները զեկափարում են Հայկական ՍՍՌ-ի պետական կառավարման իրենց յանձնարարումը հիւղերը, ենթարկուելով ինչպէս Հայկական ՍՍՌ-ի Մինիստրների Սովետին, այնպէս էլ ՍՍՌԻ համապատասխան միութենական-ռեսպուբլիկական Մինիստրութիւններին:

ՅՕԴՈՒԱՄ 52: Հայկական ՍՍՌ-ի ռեսպուբլիկական Մինիստրութիւնները զեկափարում են պետական կառավարման իրենց յանձնարարումը հիւղերը, անմիջականորէն ենթարկուելով Հայկական ՍՍՌ-ի Մինիստրների Սովետին:

ՅՕԴՈՒԱՄ 53: Հայկական ՍՍՌ միութենական-ռեսպուբլիկական մինիստրութիւնների թուին են պատկանում Հայկական ՍՍՌ հետեւեալ մինիստրութիւնները:

Անտառային արդիւնաբերութեան, Առողջապահութեան, Առևտրի, Աստամորիային տրանսպորտի և խճուղային ճանապարհների, Արդարադատութեան, Արտաշին գործերի, Գիւլտունտեսութեան, Լայն սպասման արդիւնաբերական սպրանքների, Կուլտուրայի, Մտեղէնի և կաթնեղէնի արդիւնաբերութեան, Ներքին գործերի, Շինանիւթերի արդիւնաբերութեան, Պաշտպանութեան, Պարենային սպրանքների արդիւնաբերութեան, Պետական վերահսկողութեան, Ֆինանսների:

ՅՕԴՈՒԱՄ 54: Հայկական ՍՍՌ ռեսպուբլիկական մինիստրութիւնները թուին են պատկանում Հայկական ՍՍՌ հետեւեալ մինիստրութիւնները:

Բնակարան-բաղաբայիական շինարարութեան, Լուսաւորութեան, Կոմունայ անտեսութեան, Զրային տնտեսութեան, Սոցիալական սպահովութեան, Տեղական արդիւնաբերութեան:

Իսկ Ե.-ԺԱ. գլուխները ունին հետեւեալ խորադիրները:

Գ Լ Ո Ւ Ե Ե.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՑԻ
ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԸ

Գ Լ Ո Ւ Ե Զ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՑԻ
Բ Ի Ի Տ Զ Է Ն

Գ Լ Ո Ւ Ե Է.
ԴԱՏԱՐԱՆ ԵՒ ԴԱՏԱԵԱԶՈՒԹԻՒՆ

Գ Լ Ո Ւ Ե Ը.
ԲԱՂԱՔԱՑԻՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ
Պ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ը

Գ Լ Ո Ւ Ե Թ.
Ը Ն Տ Ր Ա Կ Ա Ն Ս Ի Ս Տ Ե Մ Ը
ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ, ԳԵՐՐԸ, ԴՐՕՇԱԿԸ ԵՒ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

Գ Լ Ո Ւ Ե ԺԱ.
ԿՈՆՍՏԻՏՈՒՑՈՒԱՆ ՓՈՓՈԽԵՆԵԼՈՒ ԿԱՐԴԸ

Վ Ի Ջ Ա Ն Ա Չ Ր Ո Ւ Ր Թ Ի Ն Վ Ե Ց Ն Ա Ն Ա Ց Ն Ե Ր Ո Ւ
ԵՆ Կ Լ Լ Կ Ո Յ Բ Ն Ա Չ Ր Ո Ւ Թ Ե Ն, 1914-ԻՆ

Գ Ն Ա Մ Ա Ն Ա Ր	Կ Ա Ն Կ Ա Մ	
	Պ Ո Ւ Ն Ա Ր	Գ Ո Ւ Ն Ա Ր
Երկիր	1,016,000	1,403,000
Նվազանքներ, Յարկեր	302,000	40,000
Եր. Բնակարանային, Գյուղային	124,000	41,000
Քաղաքային	865,000	78,000
Նվազանքներ, Գյուղային	424,000	58,000
Նվազանքներ, Գյուղային	180,000	20,000
Պաշտպանական	255,000	48,000
Նվազանքներ, Երկրային	3,598,000	490,000
		3,788,000

ՐՈՒՐ ԹՈՅ ԻՆՑ ԲՆԱՉՐՈՒԹԵՆ ԱՐՐՈՉԱԿԱՆ ԹՈՒՆ
1914-ԻՆ

Պրոստիտուցիաների վճարումներ 1,403,000
Արտադրության արտադրության վճարումներ 440,000
Պրոստիտուցիաների արտադրության վճարումներ 183,000
Գյուղային և քաղաքային 2,026,000
Գումարներ 2,026,000 հայեր

Վ Ի Ջ Ա Ն Ա Չ Ր Ո Ւ Ր Թ Ի Ն Ո Ւ Ն Ա Ն Ա Ն Ա Ց Ն Ե Ր Ո Ւ
ԲՆ Ա Չ Ր Ո Ւ Թ Ե Ն, 1914-ԻՆ

Կ Ն Ր Ո Ւ Ն Ա Ր	Կ Ա Ն Ա Ր		Պ Ո Ւ Ն Ա Ր
	Կ Ա Ն Ա Ր	Կ Ա Ն Ա Ր	
Երկիր	648,000	376,000	28,000
Նվազանքներ, Գյուղային	15,000	9,000	28,000
Նվազանքներ, Գյուղային	8,000	3,000	20,000
Նվազանքներ, Գյուղային	365,000	238,000	19,000
Նվազանքներ, Գյուղային	34,000	-	41,000
Նվազանքներ, Գյուղային	17,000	-	21,000
	1,088,000	526,000	210,000
			1,877,000
			1,946,000
			65,000
			61,000
			29,000
			73,000
			58,000
			1,919,000

ԲԱՐՈՒԻ ԿՈՎՎԱՍԻ ԻՆՑ ԲՆԱՉՐՈՒԹԻՆԸ
Երկրային 669,871
Գյուղային 418,857
Պրոստիտուցիաների 118,217
Պրոստիտուցիաների 417,147
Նվազանքներ, Գյուղային 120,857
Նվազանքներ, Գյուղային 20,245
Նվազանքներ, Գյուղային 18,061
Նվազանքներ, Գյուղային 15,182
Նվազանքներ, Գյուղային 4,152
Նվազանքներ, Գյուղային 2,598
Նվազանքներ, Գյուղային 2,598
Գումարներ 1,280,663 հայեր

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ ԵՒ ԻՐ ՊԱՏԳԱՄԸ

Կարծէք պատմութեան մէկ հեղանակը ըլլաք, ինչպէս որ Արմաշէն սկսեալ քանի՜ մատուրականներ, հանրային գործիչներ, եկեղեցականներ ու հայ պետական մարդիկ ուսերուն եւ Բոլշեւիզմին հաստատորէն ծառայելով հանդերձ, վարձատրութիւնը եղաւ բանտ, աքսոր կամ զնդակահարութիւն:

Մինչև այսօր դադունի կը պահուի, թէ ո՞ր թուականին, ո՞ր եւ ի՞նչպէս մեռաւ հայոց մեծաբոյն բանաստեղծներէն Եղիշէ Չարենց, որուն տաղանդը ի յայտ բերաւ Հայաստանի Հանրապետութեան կըրթական նախարար Նիկոլ Աղբալեան:

«Չարենցնամէ» ընդարձակ բանաստեղծութեան մէջ, գրուած Մոսկուա, 1922 թուականին, տաղանդաւոր երգիչը կը խոստովանի.

«Էլ ինչո՞ւ ծիծաղէր հոգիս.
Երբ Նիկոլ Աղբալեան, մի օր,
Սարսելով դառնիք ու փոշէն --
Աւետեց ամբողջ աշխարհին
Որ ծնուել է -- մեծ մի պոետ...
Որ ծնուել է երգիչ մի վառ
Ու բերել է երգեր հրէ.
Յճծա՛, Նաիրեան աշխարհ --
Յճծա՛... Եղիշէ Չարենց...»:

1938էն մինչև 1954, ամբողջ 16 տարի արգիլուած էր այնև խօսիլ կամ գրել Չարենցի մասին, կարծէք այդ անունով հայ բանաստեղծ գոյութիւն ունեցած չըլլաք:

Սփիւռքի ազատատենչ հայութիւնը, մասնաւորապէս դաշնակցական մամուլը եւ դաշնակցական մտաւորականներ տէր կանոնեցան անմահն երգիչին, տեւապէս արծաթեղով անոր մահուան պարագան եւ ուշադիր դնահատանքի եւ վերլուծումի ենթարկելով Չարենցի դրականութիւնը:

Արտասահմանի սովետասէր բարեկամներ չքաշուեցան անբարոյական անասելի մեղքեր վերադրել մէկու մը, որ ինքզինք պաշտպանելու հնարաւորութենէ զրկուած էր:

Բանաստեղծին Փիլիթական մահը, եթէ յաջողած էին գործարել դահիճները, սակայն կատարելապէս ձախողղան ու խալտուակուեցան, երբ վարձեցին նաև բարոյապէս սպաննել Չարենցը:

ԱՄԲՈՂՔ ԼԱՅԱՍԱՆԻ ԲՈՒՅՈՒՄԻՔԻՆԸ 1914-ԻՆ

	Քրտաստեղծ պատանիներ	Գումար	
Հարկեր	1 618 000	2 699 000	3 214 000
Յնկարգից Եւրոպայից և Թուրքիոյ	457 000	45 000	512 000
Թուրքիոյ	241 000	61 000	1 005 000
Քրտաստեղծ Բուրձնի և Թուրքիոյ	542 000	217 000	2 308 000
Հարկ-Յնկարգից Եւրոպայից և Թուրքիոյ	210 000	350 000	210 000
Գնորդներ/Բուրձնի/Բուրձնի	385 000	341 000	341 000
	3 788 000	2 072 000	5 860 000

ՀԱՅ ԲՈՒՅՈՒՄԻՔԻՆԸ ԱՄԲՈՂՔԱՎԱՆ ԹԻՒՐ. 1914-ԻՆ

Հայաստանի մէջ	1 603 000	2 699 000
Քրտաստեղծ մէջ	1 396 000	
Կովկաս-Հայաստանի մէջ	440 000	
Հայաստանի Արևելք- շրջաններ	508 000	1 004 000
Արևելք- Թուրքիոյ ցիւս շահերուն մէջ	140 000	
Կովկասից մեծ շահերուն մէջ		
Քրտաստեղծ մէջ	181 000	
Արևելք- Եւրոպայից շրջաններ	250 000	631 000
Գումար և Եւրոպայից Թուրքիոյ	150 000	
Քրտաստեղծ և Գումար Կովկաս	130 000	
Յնկարգից Եւրոպայից և Թուրքիոյ		
Արևելք		4 470 000

ԲԱՐՅՈՒՄԱՎԱՆ ԴԵՃԱՎԱՐԳԻՔԻՆԸ ՊՈՒԼՎԱՐԴՐՈՅ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԻՍՏՈՆԵԱՑ ՌԻ ԲՈՒՄՍ ԲՈՒՅՈՒՄԻՔԻՆԸ ԵՒ ԵՂԻՇԷ ԱՍԼԱՄԻՔԻՆԸ 1914-ԻՆ

Քրտաստեղծ Եւրոպայից և Թուրքիոյ	1 300 000	1 018 000
Թուրքիոյ	12 000	43 000
Հարկեր	2 300	157 000
Վարկեր և արժէքներ	65 000	130 000
Գնորդներ և արժէքներ		77 000
Գումար Բրիտանիան և Եւրոպայից	1 309 500	31 000
Քրտաստեղծ (Գնում)	12 000	
Հրէաներ	19 000	
Գումար		1 377 000

Քրտաստեղծ	1 331 500	608 000
Եւրոպայից և Թուրքիոյ	714 000	431 000
Ներդրած Թուրքիոյ	110 000	
Գնորդներ/ Եւրոպայից	35 000	88 000
Քրտաստեղծ	500 000	
Գումար	1 119 000	1 173 000
Կոլովակներ/Եւրոպայից		
Գումար		2 072 000

Եւ երբ բուլշեւիկները անդրադարձան, որ անմահ է հայոց մեծ
բանաստեղծը, Անաստաս Միկոյեանի գլխաւորութեամբ վերահաստատ-
ուեցաւ Չարենցը իր պատուանդանին վրայ, 1954 Մարտ 11ին: Երևանի
«Ստալինեան ընտրական օկրուգի ընտրողների ժողով»ին մէջ Միկոյեան
կը յայտարարէր:

«ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՆԱԿԿԻՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՍԽԱԼ ՎԵ-
ՐԱԲԵՐՄՈՒՆՔ Է ՈՒՆԵՑԵԼ ՆԱԵՒ ԴԷՊԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ-
ՇԸՐՋԱՆԻ ՀԱՅ ՏԱՂԱՆԴԱՒՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑԻ ԺԱ-
ՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ...»:

Այս յայտարարութեանէն անմիջապէս ետք, յաջորդական երկու
մեծ հատորներով Երևանի Պետհրատը լոյս ընծայեց Չարենցի «հատ-
ընտիրներ»ը, բայց երբեք՝ ամբողջական գործը:

Յորչափ գոյութիւն ունի բուլշեւիկեան բռնակալութիւնը, Հա-
յաստանի ժողովուրդին համար արգիլուած պիտի մնայ մանաւանդ բա-
նաստեղծին «ՊԱՏԳԱՄ»ը որուն իւրաքանչիւր տողի երկրորդ տառերով
կտակ մը կ'ընէր իր սիրած ու պաշտած ժողովուրդին՝ գրելով. «ՈՎ,
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՔՈ ՄԻԱԿ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ ՔՈ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՈՅԺԻ
ՄԵՋ Է»:

Հայ Դատի վաւերագրերը, Հայ Դատի պատմութիւնը մեզի նոյն
ճշմարտութիւնը կ'ուսուցանեն, եւ այս հատորը կը վերջացնենք Չա-
րենցի Պատգամով:

Պ Ա Տ Գ Ա Մ

Նծոյգների վրայ յեց՝
Նար աշխարհին ու մարդուն
Յզում է լոյս զուարթուն:
Նար աշխարհին ու մարդուն
Ո՞վ բերեց լոյսն այս արթուն,
Ո՞վ, ո՞ւմ ձեռքով վառեց, ո՞ւմ
Հրակարմիր, հրավարս,
Աղամանդեայ լոյսը այս՝
Նոր լոյս ծագեց աշխարհին.
Ո՞վ այդ արեւը բերեց՝
Անա ոսկեայ մի արեւ՝
Ճառագումով իր հրէ՝
Այգաբացի պուրպուրէ

Կէսձ կեանքի բեռի տակ,
Պար գիտութեան ընդերքում,
Իմաստութեան մի գետակ
Յիմարութեան համերգում —
Քանի՛ տարի, քանի՛ դար
Վկայեցիր անհերքում...

Ափերին այն խաւարչտին,
Ուր հայրենիքն էր մեր հին, —
Զկա՞ր արդեօք դետ մի յորդ,
Որ գերութեան անհաղորդ՝
Լուրթ՝ հոսելով դարից-դար՝
Մքութեան մէջ այն յամառ
Այս այգաբացն այս հեռու՝
Հնուց պահած իր ջրում
Օ՞ր, ըղձական այս հեռուն...
Կէսձ կեանքի բեռի տակ՝
Ոգի՛ անկոր, հո՞ւր գետակ...

Անա վառում է մեր նոր
Յաղթանակի լոյսը բորբ.
Լուանում է նա հիմա
Վառվող ոգին մեր անմահ,
Զքնաղ արեւն այդ արի,
Վառուած հրով աշխարհի...
Զկա՛ ուրիշ արեւ է՛լ.
Նա՛ է միայն, որ դարեր
Ամմար՝ պիտի արեւէ...

Լոյսով վառուած սակայն այդ՝
Նծարներէց հիմա մենք
Յիմարութեամբ չթափենք
Իմաստութիւնն այն արար —
Մեր անցեալի խորամիտ
Էջն այն արդար ու ռամիկ՝
Մեծահանճար ու վարար...

ՅԱՆԿ ՆԻՒԹԵՐՈՒ

Ա. Մ Ա Ս

ՌՈՒՍԵՐՈՒ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏ ՄՈՒՏՔԷՆ ՄԻՆՁԵՒ

Ա. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

	Էջ.
1. Երկու խօսք	
2. Հայաստանի գրաւումը ռուսերու կողմէ (1827)	1
3. Կողակնե՞ր թէ հայեր գետեղել	3
4. Հայկական մարզը («Արմեանսու Օպլասք»)	5
5. Հալածանք՝ Աշտարակեցիի դէմ	6
6. Պոլսեցի (1836)	9
7. Հիւսիսեայ Իսկուլիսի (1833) համաձայնութիւնը եւ Գազազ Ամիրա	12
8. Խ. Արսլանի հիասքափ՝ «հաշապաշտ» Ռուսաստանէն	13
9. Միքայէլ Նալբանդեանի ախարը եւ մահը	17
10. Հայելուս դաւանական վէճ	20
11. Երուսաղէմի սուրբ վայրերու խնդիր, Խրիմի պատերազմ, Փարիզի դաշնագիր	25
12. Կաթողիկոսի պատուիրակը	26
13. 1877-78ի ռուսերուրք պատերազմի նախօրէին	28
14. Սան Սքեֆանոյէն Պերլին	29
15. Ստեփան Փափագեանի օրագիրը (բաղուած էր)	31
16. Նուպար փաշայի ծրագիրը	42
17. Ներսէս Վարժապետեանի բաղաձայնական մտածողութիւնը	48
18. Անգլիոյ վերապահութիւնը	51
19. Դժգոհութիւններ Էջմիածնի դէմ	52
20. Ռուսաստանի շահագրգռութիւնը Էջմիածնի կարողիկոսի ընտրութեան մէջ. գաղտնի տեղեկագիր մը	54
21. Կ. Պալատյ ազգ. եղբայր. ժողովի ընդդիմութիւնը	62
22. «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն» առաջին կոչը (1890)	65
23. «Դրօշակ»ի բողոքիկ թերթ	68

24. Սոց. Դեմ. Հնչակ. Կուսակցութեան կեդրոնական Օրգան «Հնչակ»ի առաջին թիւի խմբագրականը	72
25. Բանակցութիւններ հայկական բարեփոխումներու շուրջ	76
26. «Դրօշակ»ի մերկացումները	86
27. Ռուսական բաղաձայնութիւնը սուլթան Համիտի շրջանին. դեպքան Գանադնի կարծիք	88
28. Իշխան Գոլիցինի հակահայ բաղաձայնութիւնը	90
29. Լինչի տալաուրութիւնները Հայաստանէն	96
30. Հայկական հարցը խաղաղութեան համաժողովին մէջ (1900)	104
31. Հայկական հարցը ընկերակարական միջազգային համագումարին (1900)	106
32. Ա. Չոլանեանի կարծիքը Ամերիկայի մասին	107
33. Գեպի երկիր	108
34. Ռուսերը դէմ էին հայ յեղափոխական շարժման Թուրքիոյ մէջ	113
35. Յարի կառավարութիւնը հայ գաղթականութեան հանդէպ (1901 Փետր. 1)	115
36. Ռուսերը կը հալածեն Թուրքիոյ դէմ գործող հայ յեղափոխական խումբերը (1903 Ապրիլ 4)	117
37. Ռուսահայ ազգային կալուածներու գրաւումը (1903 Յունիս 12)	121
38. Կալուածներու գրաւման առթիւ Դաշնակցութեան կոչը արտասահմանի հայերուն	124
39. Ազգաբարոյսիւն Հ. Յ. Դաշնակցութեան	127
40. Կալուածներու վերադարձը	129
41. Յեղափոխականներու դաշն ցարիզմի դէմ (1904)	131
42. Ռուսաստան կը հրահրէ հայ-բաթարական կռիւները	134
43. Իշխ. Նակաշիցէի ահաբեկումը (1905)	136
44. Ռուսական ինքնակալութեան բաղաձայնութիւնը Անդրկովկասի մէջ	137
45. Մահափորձ սուլթան Համիտի դէմ (1905)	140
46. 1905ի յեղափոխութիւնը. փորձ՝ պառակտելու Դաշնակցութիւնը	142
47. Հասարակ խաղաղութեան Բ. համաժողովը եւ Հայ Դատը	144
48. Գոլիցինեակի ընկերակար համագումարը. Դաշնակցութեան նախաձեռնութեամբ միջ-կուսակցական խորհրդաժողով 1910	146
49. Վարսեցազ-Դաշնակով եւ հայերը	150
50. Ռուսաստան եւ հայկ. բարեփոխումներու վերջին փուլը (1912-1914)	154
51. «Դրօշակ»ի վերապահութիւնը եւ մտահոգութիւնը	166

Էջ
431

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄ

1. Կաթողիկոսին դիմումը՝ ազատելու համար դատապարտեալները	170
2. Կովկասի փոխարքային երանգները հայոց կաթողիկոսին	174
3. Վկայութիւններ կամաւորական շարժումի մասին	175
4. Ռուսական նահանգը եւ Տարօնի եղեռնը	181
5. Տեղահանութիւնները եւ համաձայնականներու ազդարարութիւնը	182
6. Ռուս գաղթականներուն համար կը գրուէին էրզրումը, Վանը եւ Պիթլիսը	184
7. Կաթողիկոսի եւ Ազգ. Բիւրոյի բողոքները	186
8. Ռուսաստանի անբարեացակամութիւնը (Բժ. Զարիբի բանակցութիւնները)	189
9. Հայաստանի նակատագրական կոիւր	193
10. Դաշնակցութիւնը եւ Բոլշեւիկները Բագուի պաշտպանութեան մէջ	195
11. Սթալինի գիշումներ կը պարտադրէ Հայաստանին, յուսալով Թուրքիոյ ապագայ խորհրդայնացումը	196
12. Հնչակեան եւ Ռամկավար համաձայնութիւն մը -- ինքնավար Հայաստան եւ Կիլիկիա	198
13. Ռամկավարները ամերիկացիներէն կը պահանջեն ծովէ ծով Հայաստան	202
14. Մայիսեան ազատամբողիւնը	206
15. Սեւրի դաշնագիրը	210
16. Հայաստանը Ռիւզընեան սահմաններով	213
17. Նախագահ Ռիւզընի վճիռը	215
18. Հայկական հարցը ըստ խորհրդային մեծ համայնագիտարանի (1926)	225
19. «Պէտք է ընդարձակել Հայաստանի սահմանները»	228
20. Հայաստանի հանրապետութիւն	229
21. Հ. Հանրապետութեան եւ Խ. Ռուսաստանի բանակցութիւնները (Լ. Շանթ - Հ. Տէրտէրեան առաջիկայի մասին)	231

22. Ռուսերէնը գործակցութիւն ընդդէմ Հայաստանի. Մոսկուայի բարձր դեսպան գոր. Ալի Ֆուատի յուշերը	241
23. Հայաստանի վրայ յարձակումը պատրաստող ռուսերէնը դաշնագիր	255
24. Լրկուանի ստորագրած, բայց չգործադրուած համաձայնագիրը	259
25. Ինչպէ՞ս բարոյալեցին հայ զինուորը ու գիւղացին	261
26. Հայաստանի խորհրդայնացումը 1920 Գեկտ. Չին եւ ոչ թէ Նոյեմբեր 29ին	263
27. Հայաստանի խորհրդայնացման առաջին ամիսները	266
28. Դրոյի յոգնածը	269
29. Կարմիր զորամասերու Հայաստան մուտքը կը կրէ ժամանակաւոր բնոյթ. Կ'ըսէ Օրժոնիկիձէ	272
30. Զանգեզուր եւ Ղարաբաղ անբաժան մաս Հայաստանի, կը յայտարարէ Խ. Հայաստանի ռազմական կոմիսարը	272
31. Դաւիթ Անանուն Ամերիկայի մասին	273
32. Ռուսերը կը ձեռքառնեն եւ կ'ախարհեն հայկական բանակի բոլոր սպանները	276
33. Լեհինի նամակը	279
34. Լոնտոնի խորհրդաժողովը (1921 Փետր. 21 - Մարտ 13)	282
35. Խորհրդային Ռուսաստան եւ Տանկաստան - Մոսկուայի դաշնագիր	284
36. Սթալինի մեկնաբանումը Հայաստանի խորհրդայնացման առթիւ: Դրժում տրուած խոստումներու	286
37. Կարսի դաշնագիրը -- 1921 Հոկտ. 13	289
38. Անդրկովկասեան Խորհրդային Հանրապետութիւն - 1922 Գեկտ. 13	293
39. Խորհրդ. Միութեան Սահմանադրութիւնը (1923)	295
40. Զիչերին ուզեց Գուպան փոխադրել հայերը	297
41. Ա. Ախարոնեան կը պաշտպանէ Հայկ. Դատը Լօզանի մէջ	300
42. Լօզանի դաշնագիր (1923 Յուլիս 24)	304
43. Զիչերինի յայտարարութիւնը Լօզանի մէջ Նեղուցներու մասին	305
44. Ռաֆայելի դաշնագիրը եւ Խորհրդ. Հանրապետութիւնները (1922 Նոյեմբեր 5)	307
45. Խ. Միութիւն եւ Տանկաստան -- Փարիզի դաշնագիր (1925 Գեկտեմբեր 17)	307
46. «Պէտք է վերջ տալ հայութեան հաւաքման Հայաստանում եւ 300 հազար արեւմտահայ գաղթականներ ցրուել Ռուսաստանում»	308

	ԷԶ
47. Վերջին փորձը - Բիկայի բանակցությունները	310
48. Հայերու ջարդարարները կը պատժուին	311
49. Դաշնակցութեան «հաշուեյարդարը» 1923ին	313
50. Հայ եկեղեցիի ֆայֆայուրը և Միութեան մէջ	315
51. Հայ համայնավարները եւ Ամերիկահայ գաղութը	317
52. Ձերբակալութիւնները Հայաստանի մէջ	319
53. Հօկ եւ Պոփ	322
54. Ձեկայի փորձը պառակտելու Դաշնակցութիւնը	324
55. Կը մեղադրուի Դաշնակցութիւնը, որ կը պահանջէ հողերու ընդարձակում	326
56. Կովկասեան Միութիւն «Պրոմիթէ»	328
57. Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան ղեկավարը Ազգերու Դաշնակցութեան	329
58. Հայեւկալական Միութիւն	331
59. Գարախան կը շնորհաւորէ Թուրքիոյ յաջողութիւնը Մոնթրէոյի մէջ	334
60. «Հայագի» Գարախանը հայութեան մասին	335
61. Աղասի հանջեանի եղբորական վախճանը	336
62. Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորէն Ա. Մուրատեգեան՝ խեղդարահ	338

Գ. Մ Ա Ս

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

	ԷԶ
1. Ի՞նչպէս սկսաւ Բ. Համաշխարհային պատերազմը	343
2. Հայաստան Բ. Համաշխարհային պատերազմին	345
3. Դաշնակցութեան գոհերը	346
4. Հայաստան պիտի ունենայ արտաքին գործերու եւ պաշտպանութեան նախարար	347
5. Էջմիածնի Ազգ. եկեղ. Ժողովի ղեկավարը Սքալինին	349
6. Էջմիածնի «Ելոյթ» վատիկանի դէմ	351
7. Ներգաղթը եւ Կաթողիկոսի հրահանգները	355
8. Թուրքիան խորհրդայնացնելու ծրագի՞ր	357
9. Սովետները կը ջնջեն Խրիմի եւ Չեչենի Հանրապետութիւնները	357
10. Անգլիոյ ընդդիմութիւնը	359
11. Հայերու «մեծ բարեկամները»	361

	ԷԶ
12. Վրացական պահանջներ	363
13. Կարսը վրացական հող է, կը յայտարարէ Ա. Վըշինսկիյ	364
14. Գահիրէի Ամերիկեան Համալսարանի նախագահին նախատեսութիւնը	366
15. Ռամկավար կուսակցութեան ռուսական «օրիւնթագիւտ»	367
16. Հնչակեաններու խոստովանութիւնը	373
17. «Լիբանանի Հայ Կոմունիստներու Պիւոս»	375
18. «Համաշխարհային Հայկական Քոնկրէս» Ամերիկայի մէջ	377
19. Ռուսերու գրգռումներ հայերու դէմ	378
20. Էջմիածնի Կաթողիկոսին ղեկավարը «Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի պատրիարքին եւ բոլոր բիւսակալ առաջնորդներուն»	381
21. Էջմիածին եւ Քորէայի պատերազմը	382
22. Հալաժանք ակադեմիականներ Անտանի եւ Ղափանցեանի դէմ	385
23. Սովետներու ազդեցութիւնը Թուրքիոյ	387
24. Սովետները կը հրաժարին Հայաստանի հողային պահանջներէն — ամօթալի փաստաթուղթը	388
25. Էջմիածինը կիլիկիոյ Կաթողիկոսութեան դէմ	393
26. Հայ եկեղեցիներու ներկայ վիճակը և Հայաստանի մէջ	396
27. Հայ եւ Հայաստան բոս «հորհրդային Մեծ Համայնագիտարանի», 1950	400
28. Վիեննի հողամասեր Անդրկովկասի մէջ	403
29. Ամերիկեան Քոնկրէսի քննիչ յանձնախումբը	405
30. Համայնավար սպանդի գոհերը Հայաստանի մէջ	407
31. Սովետական Հայաստանի Սահմանադրութիւնը	414
32. Եղիշէ Չարեկց եւ իր պատգամը	427

«Աղանա» հրատարակչություն
Տնօրեն՝ Ռ. Բարսեղյան
Խմբագիր՝ Ռ. Մնացականյան

Հանձնված է արտագրության 12.08.92 թ.: Չափեր 60x841/16՝ Թուղթ՝ օֆսեթ:
Ճապարկություն՝ օֆսեթ: Տպ. 28 մամուլ: Տպաքանակ 10 000: Պատվեր 436: Գինը՝
սլայմանագրային:

ՀԿԿ Կենտկոմի հրատարակչության տպարանը: Երևան, Օրջոնիկիձե՛ր պողոտա 2: